

Ա. Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՆԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ՆԱՅ ԲՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ե Ր Ե Վ Ա Ն

Ա. Ք. ՔՈՎՄԱՍՅԱՆ

ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
Հ Ա Յ
ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

404

(ԱՌԱՆՁԻՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ)



ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1977

Մենագրության մեջ յուսարժեքում է հայ իրավական հուշարձանների (Հայոց կանոնագրեր, Մխիթար Գաշի և Ամբաս Սպարապետի դատաստանագրեր), կիրիկյան հույական և այլ օրենքների երմեհում հայաստեղծած հանցագործարյունների համակարգ և ջոյց է աղծում, որ այդ հուշարձաններն ամբողջական գծեղծ հասանելում են պետական, կրեհական, գոյեային, գինգուական, աննի գեմ ուղղված և մյտա հանցագործարյունների հանցակազմերը, բացանայտվում է նեաաղաղուղ օրենքների դասակարգոյին բեաոյրե ու կոյրոյեը: Իրավեհորմերը կենտրոյան են առնվում այն նյութական-անեաեակայն և հասարակեան-հաղաբական գործոնների ու պայմանների ֆոնի վրա, որոնք աեեղծվել ու պայմանաղծուել կեն դրանց գոյրոյանը:

Աշխատարյունը շարեղղված է պատմա-համեմատական մերողղղ: Հայ իրավեհում հայաստեղծած երեական-իրավական ինստիտուտներ և հասկացարյունները համեմատվում են այլ պետարյունների իրավունների համարատապայան ինստիտուտների ու հասկացարյունների հետ՝ բացանայտելով այն առանեանամասերը, ինչու աշխ է բնեհում հայ երեական իրավեղներ՝ իր պատմական զարգացման քնքացում:

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Այս աշխատությունը շարունակությունն է 1962 թ. հրատարակած մեր նույնանուն ուսումնասիրության, որի մեջ հանգամանորեն շարաղղել ենք հին և միջնադարյան հայ քրեական իրավունքի աղբյուրների տեսությունը և տվել իրավաբանական երկու հիմնական հասկացությունների՝ հանցագործության և պատժի մասին ընդհանրական ուսմունքը: Հանցագործության և պատժի մասին ուսմունքը, բեականբարը, պետք է ընդգրկեր նաև քրեական-իրավական այն բուրք ինստիտուտները և սղբրունքները, որոնք այս կամ այն շափուղ կապված են հանցագործության և պատժի՝ որպես քրեական իրավունքի հիմնական հասկացությունների հետ: Այնտեղ մենք հանգամանորեն յուսարանել ենք հանցագործության բեորղուման, դրա պատճառներին, հանցագործության սուրբեկտին, մեղավորությանը (մեղքին), արարքի հասարակական-գասակարգային վտանգավորությունն ու պատժելիութունը բացառող հանգամանքներին, հանցակցությանը, հանցագործության կատարման փուղբին, առանեին պատժատեակեղբերի բեութարգմունքը, ներմաեը և այլ պրորբմեղբերին վերաբերող հարցերը:

Մատնանշված աշխատության մեջ հին և միջնադարյան հայ քրեական օրենքներում նախատեղծած հանցագործությունների համակարգում շի կատարված, շեն բացահայտված հանցագործության տեսակների տարբերիղ առանմանատկությունները, շի տրված դրանց հանցակազմերի տեսական վերլուծությունը, ինչպես նաև շեն մատնանշված դրանց տարածվածության կոնկրետ գլտեհաններն ու պայմանները: Հանցագործությունների բաղկացությունները նախատեսող իրավեհորմերը բեության են առնված միայն այն շափուղ, ինչ շափուղ զա անհրաժեղա է համարվել հին և միջնադարյան հայ քրեական իրավունքի բեղհանուր մասի ինստիտուտների, սղբրունքների և հասկացությունների կությունն ու բուղանեղակությունը բացահայտելու համար:

11001-12
704(02)-77

22-76



Երևանի համալսարանի
հրատարակչություն, 1977

Товмасян Аршак Товмасович

ДРЕВНЕЕ И СРЕДНЕВЕКОВОЕ АРМЯНСКОЕ
УГОЛОВНОЕ ПРАВО

(Отдельные преступления)
(На армянском языке)

Издательство Ереванского университета
Ереван — 1977

Վերահիշելու շուտոված հարցերն էլ կողմում են սույն ուսումնասիրության օրենիտները:

Այդ հարցերը գիտականորեն և ամբողջական գծերով լուսարանելու շահը պահանջում է հստակ կերպով պատկերացնել որոշ ելակետային սկզբունքներ: Ամենից առաջ պետք է հիմք ընդունել և կենդ նրանից, որ ինչպես հին և միջնադարյան շատ երկրների, այնպես էլ հին և միջնադարյան հայ քրեական օրենքները պատժելի են համարել միայն այն արարքները, որոնք պատժական անցած-գնացած այդ ժամանակներում իրենցից որոշակի վտանգավորություն են ներկայացրել տիրապետող հասարակական խավերի համար: Այս նշանակում է, որ այդ օրենքները դասակարգալին բովանդակություն ունեն և կյանքի էին կոչված տիրապետող հասարակական խավերի ամենակենսապան շահերը հանցավոր ոտընծություններից պաշտպանելու համար:

Նշովի ուսումնասիրության ժամանակ մեր ելակետային սկզբունքներից մեկն էլ այն է, որ ինչպես այլ երկրներում, այնպես էլ պատմական Հայաստանում հանցավոր արարքների շրջանակը մեկնեղմիշտ սրված և անվտիտիս չի եղել: Այդ շրջանակը մեր ընդլայնվել և մերթ սեղմվել է, կենելով այն հանգամանքից, թե պատմական որոշակի պայմաններում ու կոնկրետ իրադրության մեջ ինչպիսի արարքներ են համարվել հանցավոր:

Այդ վերաբերում է բոլոր տեսակի հանցագործություններին, սկսած կրոնական հանցագործություններից, որոնք պատմությանը ընթացքում համարյա միշտ էլ դրսևտվել են իրենց հարափոփոխ, հաճախ անորոշ բնույթով, և վերջացրած անձի կամ գույքի գեմ ուղղված հանցագործություններով, որոնք առաջին հայեցրից սրվում է, թե դարերի ընթացքում անվտիտիս ձևով դրսևտվող արարքներ են հանդիսացել, քայց իրականում, մյուս բոլոր հանցագործությունների նման դրանք ևս փոփոխուն բնույթ են ունեցել, այսինքն ժամանակի ընթացքում իրենց բովանդակությունն ու բաղկացությունը փոփոխել են:

Առաջանալով այն դարաշրջանում, երբ մարդկային հասարակությունը կամաց-կամաց, քայց հաստատուն քայլերով բաժանվում է հակամարտ դասակարգերի, հանցագործության քրեական-իրավական ընդհանուր հասկացություններ և առանձին հանցագործությունների որոշակի հասկացությունները, այնուհետև, սպրել են իրենց դարգացման և փոխակերպման պրոցեսը: Ունենալով դասակարգային-դասային բովանդակություն, դրանք, անտեսական կյանքի զարգացմանը դուզընթաց և ժամանակի ոգուն համասպա-

տասխան, փոփոխվել են այնպես, որ հաճախ միմյանց ուղղակի կերպով հակասել են: Այսպես, կրոնական հանցագործությունները այլ բովանդակություն ունենին հեթանոսական Հայաստանում և բուրյովին այլ քրեատեսության շրջանում: Անգամ այնպիսի հանցավոր արարքներ, ինչպիսիք են սպանությունը, գույքի հափշտակման առանձին ձևերը, կուսապղծությունը և այլն, միշտ ու բոլոր մողովորդների մոտ չէ, որ հանցավոր արարքներ են համարվել, այլ դիտվել են որպես շքար համ շքարի: Վերջին դեպքում դրանք համարվել են թույլատրվող արարքներ: Նման շքարիս ու շքարս արարքները ժամանակաշրջանից ժամանակաշրջան անցնելով, իրենց բնույթով, հանցավոր լինել-չլինելու իրենց հատկությամբ փոխվել ու փոխակերպվել են:

Որոշակի զմլարություն է ներկայացնում հին և միջնադարյան հայ օրենսդրական-իրավական հուշարձաններում նախատեսված հանցավոր արարքների համակարգման հարցը: Այդ հուշարձանները առանձին հանցավոր արարքներին վերաբերող իրավաօրոմները նախապես սահմանված կարգով չեն դասակարգել, դրանք չեն բաժանվել ըստ զույնների կամ մասերի: Հաճախ պետական այս կամ այն հանցագործությունները նախատեսող իրավաօրոմների կողքին մեզ գտած իրավաօրոմում խոսվում է զանազան այնպիսի հանցավոր արարքների, ասենք, օրինակ, աստվածահայնություն, սպանություն, գույքի հափշտակման և այլնի մասին, որոնք քրեական իրավական իմաստով առանձին առևտյուն կամ կապ չունեն պետական այդ հանցագործությունների հետ: Այս հանգամանքը, սակայն, հանցագործությունների գիտական սխտեմավորման գործում հաղթահարելի զմլարություն է, թեկուզ չենց այն պատճառով, որ հանցավոր ճանաչված ամենարագավար արարքներն օրենսդրությամբ այնուամենայնիվ նախատեսվում են:

Իսկ ի՞նչ սկզբունքից ենելով ենք կատարել գիտական այդ սխտեմավորումը, ի՞նչն էլ դրա համար չափանիշ ու հիմք հանդիսացել: Մեր համոզմամբ այդ բանը կարելի էր կատարել, և մենք այդ կատարել ենք, ելակետ ու չափանիշ ունենալով հանցագործության ընդհանուր օրենկուր բաղկացուցիչ մասը հանդիսացող կամ, ավելի ճիշտ կլինի ասել, այդ օրենկուր բոտող հանցակազմի տեսակային կամ հատուկ օրենկուրները, այսինքն իրենց անտեսական, քաղաքական, քարոյական և այլ բնույթով համասեռ, միմյանց սերտորեն առնչվող հասարակական հարաբերությունների ու դասային-դասակարգային շահերի որոշակի խմբերը: Այս և միայն այս սկզբունքներից ենելով կարելի է խոսել տվյալ երկրում, տվյալ

կրնկրետ պատմական պայմաններում գործող օրենսգրոթիվամբ նախատեսված պետական, կրոնական, անձի զեմ ուղղված, բարոյակախութիան սահմանված նորմեր խախտել, գույքային, զինվորական և այլ հանցագործությունների, որպես հանցագործությունների առանձին խմբերի մասին:

Տեսականորեն սխալ կլիներ այդ սխտեմավորման հիմքում դնել ուսումնասիրվող առանձին հանցագործությունների վտանգավորության աստիճանը կամ զրանց պատժելիության խստության, կամ, ընդհակառակը, մեղսության աստիճանը և այլ նման շփանչելներ, քանի որ այդ զեպլում բրեական իրավունքի պատմությունում ու տեսությամբ զբաղվող զետեականները հաճախ հարկազրված կլինեին լրեսություն կամ հակապետական ապստամբության հանցակազմից անմիջապես ճետո ուսումնասիրել, ասեեր, զետավորայլ սպանության կամ ավազակության, կամ սուտ երգման, կամ սրբազոդության, կամ մեկ այլ հանցագործության հանցակազմը՝ ճննց միայն այն պատճառաբանությամբ, որ զրանք՝ այդ արարքները, կարող էին պատժելի հայտարարված լինել և պատժվել նույն այն պատիժներով, ինչ պատիժներով որ պատրվում էին լրեսությունը, հակապետական ապստամբությունը և նշված մյուս արարքները:

Հին աշխարհի և միջնադարի մյուս բոլոր բրեական օրենքների նման հին և միջնադարյան հայ բրեական օրենքները նույնպես առանձին, այսինքն որոշակի հանցագործությունների պատժելիություն մասին իրավանորմեր սահմանելիս, իրենց զիսպողիցիանեություն, որպես ընդհանուր կանոն, լին տալիս նախատեսված հանցագործությունների նկարագրական, ընդհանրական բետորումները: Այդ զիսպողիցիաների բացարձակ մեծամասնությունը նկարագրական բնույթ լուծի: Գրանք նման լին այն զիսպողիցիաներին, որոնք բրեական օրենսգրոթիվան կազմավորման տեխնիկայում երևան նկան ճետագա զարերում, և որոնք որպես կանոն կապված էին բուրժուական օրինակախության ազդաբարման, ամբապղզման ու արմատավորման գործի ճետ: Գրանք ավելի շուտ այնպիսի զիսպողիցիաներ են, որոնց մեջ հանցավոր արարքների անվանումները արվում են ներառմանոթ բառերով կամ որոշ հանցահայտ տերմիններով: Այս նշանակում է, որ հին և միջնադարյան հայ բրեական օրենքներով նախատեսված առանձին հանցագործությունների (օրինակ, զավճանություն, սրբազոդության, անհավատության, ավազակության և այլն) էությունը պարզելու համար, այդ օրենքների տեսության հարցերով զբաղվող զետեականը

պետք է դիմի նաև հայագիտություն տարբեր բնագավառների ու ասանակապես հայոց լեզվի տեսության օգնությունը և պարզարանի այդ բառերի կամ տերմինների էությունն ու բովանդակությունը, այսինքն այն, թե ինչ են հասկացել հին և միջնադարյան հայերը այդ բառերի կամ տերմինների տակ:

Հննց այդպես էլ վարվել ենք մենք այս աշխատության մեջ: առանձին հանցագործությունների իրավաբանական բետորումները տալիս աշխատել ենք ամենից առաջ պարզել զրանց էությունը արտահայտող տերմինների ու բառերի լեզվա-գործածական ժամանակակից իմաստը և միայն զրանից ճետո զատողություններ արել այն մասին, թե հին և միջնադարյան հայ բրեական օրենքներում ինչպես է զրվել ու լուծվել զրանք, այսինքն այդ հանցագործությունների պատժելիության հարցը:

Աշխատության մեջ մեծ տեղ ենք հատկացրել հայ բրեական օրենքների սանկիցիաների լուրահատուկ կատուցվածքի հարցին: Օրենքների բնագրերում սանկիցիաները, որպես կանոն, բերվում կամ զրանցում մատենանշվում են կրնկրետ պատժատեսակակները (օրինակ, մահապատիժ, մարմնական պատիժները, բանտարկությունը, աքսորը, զուլքի բռնազրավումը, սուգանքը, ապաշխարությունը և այլն), բայց պատժապիբերի հարցում նկատվում է մեծ տարրեթացություն: Երբեմն օրենքները տալիս են այդ լափերը, մարմեն էլ՝ լուծելով զրանք մասին, հարցը զետում են շատ ընդհանուր ձևով, նշելով միայն, որ այս կամ այն արարքը, որպես հանցավոր արարք, պետք է պատժվի: Այս վերջին զեպլում օրենքները, ինչպես այդ կարելի է նկատել, նախանշում են, այսպես կոչված, անորոշ սանկիցիաներ, որոնք ֆեդալական բրեական իրավունքին ընդհանրապես հատուկ սանկիցիաներ են եղել պատմական անցած-գնացած ժամանակներում:

Զափագանց կարելու է առաջին հայացքից երկրորդական թվացող այն հարցը, թե որոնք են այն օրգաններն ու պաշտոնատար անձինք, ովքեր՝ զեկավարվելով զործող օրենքներով կամ սովորույթական իրավունքի նորմերով, հին և միջնադարյան Հայաստանում հետապնդել ու պատժել են հանցագործներին: Այս հարցը միակ ճիշտ պատասխանը, մեր կարծիքով, հետևյալն է. պատմական այն ժամանակներում, երբ հանգամանքների բերումով կազմավորվում կամ վերականգնվում է հայ սովորեն պետությունը, ինչպես, օրինակ, Արշակունիները, Բագրատունիները և Ռուբինյանների տիրապետության ժամանակաշրջաններում այդ ֆունկցիան, որպես կանոն, կատարում են աշխարհիկ և մասամբ նաև

եկեղեցական դատական հաստատությունները, իսկ երբ հայ ժողովուրդը, կորցնելով իր քաղաքական անկախությունը, ընկնում է այս կամ այն նվաճող տերության կրեկի տակ, նման զեպսերում գրությունը հիմնովին փոխվում է. պետական և ընդհանրապես ժանր հանցագործությունների պատժելիության հարցով այս անձամբ արգեն առաջին հերթին զբաղվում են իրենք՝ նվաճողները, որոնց պետական, վարչական ու դատական հաստատություններն են հետապնդում հանցագործություններ կատարողներին և պատժում:

Հայկական ազգային հաստատությունները և կրոնական կազմակերպությունները կամ քաղաքական, կրոնական և այլ կարգի գործիչները նման զեպսերում համարյա անելիք չունեն: Սրանք զբաղվում են ոչ թե դատական քաղաքականության հարցերով, ընդհարմապես, այլ՝ համեմատաբար երկրորդական բնույթի հանցագործությունների, մեծ մասամբ գույքային, ընտանեկան, բարոյականության և քրիստոնեական կրոնի քնազավառնելիքի վերաբերող հանցագործությունների պատժելիության հարցերով:

Այս տեսակետից ժամանակակիցներին համար լիովին հասկանալի է հայ ժողովրդի քաղաքական անկախության կորստի պայմաններում Մխիթար Գոշի գրած այն խոսքերը, թե այնքան ժամանակ, քանի զեռ հայ ժողովուրդը չունի իր ազգային սուվերեն պետությունը, դատի, այսինքն փաստորեն նաև քրեական արդարագատության իրականացման ամբողջ գործը տրվում է եպիսկոպոսներին «յաւանդ»։ «Եւ արդ՝ մեզ այսպէս լիցի. զի ի տեղուդ յորում լիցի քրիստոնէայ թագաւոր կամ իշխան-նորազաշխարհի դատաստանս հոգայցնել աստեախ և իրաւամբ: Իսկ զեկեղեցւոյ դատաստանս եպիսկոպոսն հոգասցէ վարդապետական վարժմամբ եւ երկու կամ երեք կատարելալ արամբք ընդ նմա՛ զպատաստելո: Եւ ի տեղուդ, ուր ոչ իցնել թագաւոր կամ իշխանք, պարտ է յեպիսկոպոսն տալ զայս յաւանդ (ընդգծումը մերն է, Ա. Թ.)՝ զի զամենայն դատաստանս նորա հոգասցնե» (Պատաստանագիրք հայոց, Նախագրություն, Ե զլուխ):

Այս մեղքերումը ապացուցում է, որ Գոշը սկզբունքորեն ընդունում է, որ քրեական գործերը ընելու, հանցագործությունների ու մեղքերի համար մարդկանց պատժելու իրավունքը հավասարապես պետք է պատկանի և՛ հոգևոր, և՛ աշխարհիկ դատարաններին: Աշխարհիկ դատարանները դրանք պետական իշխանության օրգաններն են ու որպես այդպիսիք գտնվում են այն քրիստոնեյա թագավորների և իշխանների իրավասության ներքո, ովքեր մի երկիր

կամ ընդհանրապես որոշակի տերիտորիալ ամբողջականությունը ներկայացնող վայր են կառավարում: Աշխարհիկ կամ, որ ետյան է, պետական դատարանների քաղաքականության զեպսում, այսինքն այն ժամանակ, երբ երկիրը իր քրիստոնեյա բնակչությանը հանդիման ընկնում է օտար պետությունների, ասենք մահմեդական այս կամ այն նվաճողների իշխանության տակ, աշխարհիկ գործերով դատ ու դատաստանի իրավունքը, ըստ Գոշի, պետք է հանձնվի բարձրագույն հոգևորականությանը, որը ետյան Գոշի մտա մարմնավորվել է «եպիսկոպոս» հասկացության մեջ, «յաւանդ», այսինքն՝ ի պահ այնքան ժամանակ, քանի զեռ քրիստոնեյա թագավորի կամ իշխանի իշխանությունը, կամ, այլ կերպ ասած, հայրական ինքնուրույն ու անկախ պետության սուվերենությունը վերականգնված չէ:

Այս նշանակում է, որ այն դժգոհ ժամանակներում անզգամ Գոշը բոլորովին չէր կորցնում Հայաստանի քաղաքական անկախության վերականգնման հույսը: Նա իր Պատաստանագրքի մեջ միանգամայն գիտակցաբար մտցրեց այնպիսի իրավանդոմներ, որոնց կիրառումը հնարավոր էր միայն հայկական սուվերեն պետության գոյության պայմաններում: Հայաստանում ոչ հայ թագավոր և ոչ էլ միանական պետական իշխանություն կար, բայց Պատաստանագրքի մեջ մենք կարգում ենք մի ամբողջ շարք հոդվածներ այն մասին, թե ինչ իրավունքներ, պարտականություններ ու ֆունկցիաներ ունի թագավորը, ինչ կարգով և ինչպես պետք է ժառանգաբար փոխանցվի արքայական զահճ, ովքեր իրավունք ունեն թագաժառանգներ լինել, ինչպես և ու՛մ կողմից պետք է հայկական պետության պայմաններում պատժվեն պետական և մյուս հանցագործությունները, հանցագործներից բռնագրավված զույրը ինչպես ու ինչու պետք է մտնի պետության զանձարկղը և այլն: Անշուշտ, Գոշը պարզ կերպով հասկանում էր, որ այդ հոդվածները կամ ալվելի ճիշտ կլինի անէ՛լ իրավանդոմները դրամժան ժամանակ կիրառման համար հասարակական-քաղաքական համապատասխան հող չունեին, բայց նա միաժամանակ հասկանում էր, որ հասարակական կյանքում հաճախ փոփոխություններ են կատարվում և կարող է զուլ ու կգա մի այնպիսի ժամանակ, երբ հայկական պետականությունը կվերականգնվի և զրանով իսկ այդ օրերների կիրառման համար օբյեկտիվ պայմաններ կստեղծվեն: Եթե մատնանշվածին ավելացնենք այն, որ Գոշն իր Պատաստանագրքի

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՆՑԱԳՈՐԾՈՒՓՅՈՒՆՆԵՐ

թական եղանակի, շահերի ու պահանջմունքների արտահայտությունը հանդիսանա: Ահա այս Code Napoleon-ը, շարունակում է Մարքսը, որ ես բռնել եմ իմ ձեռքը, ինքը չի ստեղծել ժամանակակից բուրժուական հասարակությունը: Ընդհակառակը, բուրժուական հասարակությունը, որն առաջացել է XVIII դարում և շարունակում է զարգանալ XIX դարում, այդ օրենսդրում միայն իր իրավաբանական արտահայտությունն է գտնում: Ընեց որ օրենսդիրը զազարի համապատասխանել հասարակական հարաբերություններին, այն պարզապես կվերածվի թղթի մի հասարակ կայտցի: Մարդիկ չեն կարող հին օրենքները դարձնել նոր հասարակության զարգացման հիմք, ճիշտ այնպես, ինչպես և այդ հին օրենքները չեն կարող ստեղծել հին հասարակական հարաբերությունները:

Իրավունքի տեսության ու պատմության մասին գաղափարություններ անելիս՝ իրավագետը պետք է ելնի իրավունքի մարքսիստական պատմագրության նաև վերոհիշյալ սկզբունքներից և հենվի դրանց, որպես միակ ճշմարիտ ու օրենկտիվ սկզբունքների վրա: Այդպես էլ վարվել ենք մենք այս աշխատությունը շարադրելիս:

Պատմական ակնարկ: Քրեական իրավունքի պատմության մեջ պետական հանցագործություններ են կոչվել այն հանցագործությունները, որոնք ուղղվել են տիրապետող դասակարգերի կողմից սահմանված և այդ նույն դասակարգերի համար ձեռնտու ու օգտակար պետական կարգի կամ հասարակական հարաբերությունների սխտամի դուրսյան հիմքերի, այլ բաներով սասծ պետության, որպես քաղաքական ամբողջականության դեմ: Մյուս բոլոր հանցագործությունների համեմատ, այդ հանցագործությունները, սովյալ կոնկրետ պատմաշրջանում, տիրապետող դասակարգային-հասարակական խավերի շահերի տեսակետից միշտ էլ հանդիսացել են ամենից ծանր, ուրեմն և ամենից վտանգավոր, խստորեն պատժելի հանցագործություններ, քանի որ դրանց կատարմամբ հետապնդվել է դուրսյուն ունեցող պետական կարգերի կամ հասարակական հարաբերությունների սխտամների ամենակենսական շահերի դեմ ոտնձգելու, այդ կարգերը կամ հարաբերությունների սխտամները քայքայելու, թուլացնելու և նույնիսկ տալալելու նպատակը: Սխալված չենք լինի, եթե սանք, որ ի տարբերություն մյուս քրեական հանցագործությունների, այս հանցագործությունների դասակարգային բնույթն ու բովանդակությունը պատմության մեջ դրսևվորվել են առավել ցայտուն և առավել ամբողջական գծերով:

Պետական հանցագործությունները նախատեսող քրեական օրենքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք, այդ օրենքները ևս մարդկային հասարակության պատմության ընթացքում ամենից շատ և ամենից շուտ փոփոխվող օրենքներ են եղել: Դրա հիմնական պատճառներից մեկն այն է, որ պետական իշխանության ղեկը մի տեսակ հերթափոխի կարգով իրենց ձեռք վերցրած դասակարգերը, զստեր և նույնիսկ մարդկանց առանձին խմբերը իրենք են իրենց կամահայեցողությամբ սահմանորոշել այդ հանցագործությունների ընդհանուր հակացությունն ու շրջանակը

և պատժելիության խտտության ու մեղսության աստիճանը: Քաղաքական կյանքի պատմությանը հաջանի է, որ մեկն անզույժ, երբ հասարակության պատմական զարգացման հետևանքով անդի են ունեցել հեղափոխական թռիչքներ, կամ երբ առաջադիմական կամ հետադիմական կարգի պետական հեղաշրջումներ ու տեղաշարժեր են կատարվել, այդ երևույթներին զուգընթաց և այդ հարաբերությունների ֆոնի վրա հաճախ արմատապես փոխվել կամ, համեմատյալ զեպս, էական գծերով փոփոխվել են պետական հանցագործությունները նախատեսող օրենքները: Երբեք պետական հանցագործություն չհանդիսացող շատ արարքներ հանցամասերների ու իրադրությունների բերումով ազդարարվել են որպես պետական հանցագործություններ և, ընդհակառակը, երբեմնի պետական հանցագործություններ ճանաչված շատ արարքներ էլ հայտարարվել են իբրև քրեականորեն անտարբեր, այսինքն վերջին հաշվով ոչ պատժելի արարքներ:

Պետական հանցագործությունները, ինչպես ասացինք, միշտ էլ պատժվել են և պատժվում են խիստ ու անողոր պատիժներով, բայց միշտ չէ, որ հին և միջնադարյան պետությունների քրեական օրենսդրություններում դրանց հանցակազմերը նախատեսված են եղել: Լին Բարլոնի քրեական օրենքներում պետական հանցագործությունների ու դրանց պատժելիության մասին հիշատակումներ անզույժ չկան, ընայնով որ պատմական բազմաթիվ ավյալներ անհերքելի կերպով ապացուցում են, որ այդ նույն օրենքների հայանի հեղինակ Համաուրաի թագավորը շտեմնված խիստ քրեական ու պրեսիանների միջոցով հետապնդում և պատժում էր այդ կարգի հանցավոր արարքներ կատարած բոլոր անձանց, անկախ նրանց դեմքին ու զիրքին նայելու: Մովսիսական օրենքներում նույնպես պետական հանցագործություններ նախատեսող առանձին իրավաբանական չկային: Նման իրավաբաններ զրեթև քաջակայում էին նվիրույալի վաղ ֆեոդալիզմի շրջանի պետությունների և այդ թվում ռուսական իրավունքի վաղ շրջանի օրենսդրական-իրավական հուշարձաններում, սկսած Օնգլի և Իզորի պայմանագրերի և Ռեուսական պրավալախ՝ ժամանակներից մինչև, ասենք, Պսկովի և Նովոգորոդի դատական հրովարտակներն ընկած ժամանակաշրջանը ներառյալ, թեև հասկանալի է, որ մատենաչիված երկրներում նույնպես պետական հանցագործություններ իրենց ժամանակին հետապնդվում ու պատժվում էին, ինչպես այդ մասին վկայում են ժամանակակից

տարրերը և լիովին արժանահավատ պատմական այլ աղբյուրներն ու նյութերը:

Հռոմեական քրեական իրավունքում, ի տարբերություն հին աշխարհի ստրկատիրական մուտ պետությունների և վաղ ֆեոդալական պետությունների քրեական իրավունքների, պետական հանցագործությունների պատկերացումը ամենից առաջ զրեուրվեց «perduellio» հասկացության մեջ, որը բառացի նշանակում էր էր «խարդախ կռիվ», «ծանր հանցագործություն», «զավաճանություն»: Այդ իրավունքում պետական հանցագործությունը զա հասարակության անվտանգության հանցավոր խախտում էր, անկախ այն բանից, թե ինչպես էր արտահայտվում այդ խախտումը՝ զավաճանությամբ, ժողովրդական պաշտամունքի առարկաները կամ օրենքները վիրավորելով, թե մեկ այլ ձևով, «Perduellio» հասկացությունը երբեմն շփոթվում էր «proditio» հասկացության հետ, որի տակ նույնպես հռոմեացիները հասկանում էին ժողովրդի ու հասարակության ընդհանուր զործի մատուցություն կամ զրանց դեմ զղյություն ունեցող ու կատարվող զավաղություն, բայց որը համեմատաբար պակաս վտանգավորություն ներկայացնող հանցավոր զործունեություն լինելով, կատարվում էր առանց հակապետական զիտավորության:

Պետական քաղաքական իշխանության ամրապնդման և հզորության աճին զուգընթաց, սկսած Մուլլայի ժամանակներից, հին Հռոմի քրեական իրավունքում իրեն զգացնել է տալիս մեկ այլ հասկացություն ևս. զա «crimen majestatis» հասկացությունն էր, որը, ըստ Ուլպիանոսի, հռոմեական ամբողջ ժողովրդի կամ նրա անվտանգության ու ապահովության դեմ ուղղված հանցագործություն էր նշանակում: Սկզբում զա իր մեջ ամփոփում էր միայն «perduellio» և «proditio» խմբի հանցագործությունները, բայց հետագայում այն ընդլայնվեց ևս մեկ հանցակազմով, այսպես կոչված նորին «մեծություն» վիրավորելու հանցակազմով, ընդ որում, «մեծություն» անելով հռոմեացիները զրա տակ հասկանում էին թե՛ ժողովրդին և թե՛ կայսրին որպես հռոմեական պետությունը մարմնավորող ուժի:

Լին Հռոմի օրենսդրական-իրավական հուշարձաններում պետական բոլոր հանցագործությունները սպառիչ կերպով ընդ նախատեսված: Հռոմեական կայսրերը հաճախ իրենք էին որոշում, թե այս կամ այն հանցավոր արարքները պետական հանցագործություններ էին, թե՛ այլ քրեական հանցագործություններ, և պատմության համար զաղտնիք չէ, որ այդ հարցը լուծելիս նրանց մերկ

կամայականությունը երբեմն իր գործը տեսնում էր: Այդ կամայականությունն իրեն զգացնել էր տալիս մանավանդ այն ժամանակ, երբ իրականացվում էր զատական բազաբաղանությունը: Բազմաթիվ պետական գործիչներ կամ ազդեցիկ բազաբաղաններ կայսերի կամ նրանց ցուցումով զանազան աստիճանավորներին ու կատարողներին կողմից ամենաանողոր պատիժների էին դատապարտվում, անկախ այն բանից, թե նրանք ինչ հանցագործություններ էին կատարում կամ ընդհանրապես առարկա կայանում իրենց ինչպես էին զբոսնում: Այդ գործիչները և մանավանդ ազդեցիկ, կայսերի աչքում իրենց գործունեությամբ պետական վտանգավորություն են երկայացնող բազաբաղաններ ենթարկվում էին մահապատժի կամ արտրվում էին հեռավոր ու անմարդարանկ վայրեր, որտեղ նրանք, ինչպես ստում են, զուրկվում մահով մեռնում էին: Նրանց զույր որպես կանոն բռնադատվում էր և մտնելով արբուսի գանձարան՝ նյութական բազա էր դառնում նույն այդ կայսերի ցոփ ու անառակ կյանքի համար:

Այդպիսին են եղել պետական հանցագործությունները զատակարարային առաջին հասարակության պատմության ընթացքում:

Հին հայ կանոնական իրավունքի հուշարձաններում կամ, այլ բառերով ասած, Հայոց կանոնագրքի զանազան պատժում պետական հանցագործություններն նախատեսող իրավաբաններ համարյա թե չկան: Պետք է ենթադրել, որ այդ արարքների պատժելիության հարցը պատմական Հայաստանում լուծվել է կամ աշխարհիկ, այսինքն վերջին հաշվով պետական օրենքներով, որոնք մեզ չեն հասել, և կամ սովորութային իրավունքի նորմերով, որն ավելի հավանական է: Ինչ վերաբերում է դրանց՝ այդ հանցագործությունների փաստական պատժելիության հարցին, ապա կապակցել վեր է, որ դրանք խտտորեն պատժվել են: Դրանց պատժվել են ոչ միայն պաշտոնական զատական հաստատությունների կողմից, որոնց զույլությունը փաստ է, և որոնց գործունեության մասին մեր հին պատմագիրներն ամենաառաքելի ափսոսանքով հիշատակում են, այլև պատժվել են թագավորների կամ սրանց լիազորած անձանց, օրինակ, բարձրաստիճան զինվորական գործիչների, առանձին հրամաններ կամ հատուկ կարգադրություններ կատարողների, թագավորների զավակների և այլոց կողմից, որոնց նման գործունեություն մասին նույնպես մեր պատմագիրները, առանձնապես Փեղատոս Բուզանդի ու Մովսես Խորենացին, շատ հետաքրքիր փաստեր են հաղորդում:


Միջնադարյան հայ իրավունքի օրենսդրական-իրավաբան-

կան հուշարձաններում, այն է Գավիթ Ալավիա որդու Կանոններում, Մխիթար Գոշի և Մմբատ Սպարապետի զատաստանագրքերում, ի տարբերություն Հայոց կանոնագրքի, պետական հանցագործությունների հրմանական հանցակազմներ արդեն նախատեսվել են: Դրանք ոչ միայն նախատեսվել են, այլև իրենց պրակտիկ կիրառումն են գտել ամեն անգամ, երբ այդ բանի համար նյութական նախադրյալներ են ստեղծվել, այսինքն երբ հայ ժողովուրդն իր ինքնուրույն կենտրոնական պետականությունն է ստեղծել իր հարազատ հողի այս կամ այն կտորի կամ հատվածի վրա:

Ինչ վերաբերում է պետական անկախության ամբողջական կորստի ժամանակներին, ապա այստեղ հավանական պետություն և հայտնի իմաստով պետականություն բացակայության փաստը հետևանքով, նման հանցագործություններ մասին, ինչպես ակնարկվել ենք, խոսք չենել չի կարող: Եթե այդպիսիները՝ կատարվելով հայ հողի վրա, ուղղվում էին նվաճող պետությունների կամ նրանց կողմից սահմանված ռեժիմների դեմ, այդ դեպքում պատժվում էին հենց այդ պետությունների օրենքներով: Պարսիկ բռնակալները, հռոմեացիները, արաբները, մոնղոլները, թուրքերը և մյուս նվաճողները Հայաստանում քիչ մարդկանց, այդ թվում քիչ հայերի լուստոժներն որպես պետական հանցագործություններ կատարողներին Ապացույց: Հայ և օտար առանկա պատմիչների համապատասխան հաղորդումները սկսած մեր թվարկությունից առաջ IV դարից մինչև մեր թվարկության XIX դարը ներառյալ:

Հին և միջնադարյան հայ օրենսդրական հուշարձաններում նախատեսված և պատմական այդ ժամանակներում Հայաստանում կատարվող պետական հանցագործությունների էությունը հստակ կերպով պատկերացնելու համար անհրաժեշտ է մասնանշել, որ այդ հուշարձաններում նշված արարքները որոշակի համակարգով չեն բերված: Դրանք նախատեսված են այդ հուշարձանների առանձին հողամասերի ընդգրկել հատուկ նախադրումներում: Կան նաև այդ կարգի որոշ հանցագործություններ, որոնց մասին համապատասխան օրենսդրական-իրավաբանական նորմեր պարզապես բացակայում են: Այս տեսանկյան տակ հարցը զննելով, պետք է ասել, որ հին և միջնադարյան հայ իրավունքին ժամոթ են լրանստության, զավաճանության, քաղաքական ապստամբության, արքայապետության, հակապետական բանավոր էությունից, զրամաննեությունից, քաղաքական կոտորածից հանցագործությունները:

Ուշագործյան արժանի է այն, որ մեր միջնադարյան իրավուն-



քի հիմնական հուշարձանի՝ Մխիթար Գոշի Գատաստանազգրքի բռնոր այն իրավանորմները, որ նախատեսում են առանձին պետական հանցագործությունները, այդ թվում դավաճանություն, ազատամբուրջան, մեծությունը վերավերելու և այլ հանցակազմեր, արտահայտված են հայկական գաղութիների բուրդ այն գատաստանազգրքում, որոնք ժամանակի ընթացքում կազմվել էին հայերի կողմից և հյուրընկալող երկրների պետական իշխանություն համապատասխան օրգանների կամ իշխանավորների սանկցիայով կիրառվում էին այդ երկրներում:

Այս փաստը ուշագրավ է այն խմատով, որ օտարազիր հայերը կարծես թե իրենք իրենց պատմավորեցնում էին սուրբ երկրներում հետո մնալ հակապետական գործունեությունների, որք վնասից և ավելորդ անխորժովություններից բացի, բացարձակապես ոչ մի օգուտ չէր կարող բերել: Լեմբերգի Հայտոց գատաստանազգրքի 1-ին հոդվածը, օրինակ, պահպանելով Մխիթար Գոշի Գատաստանազգրքի երկրորդ մասի 2-րդ հոդվածի սկզբունքները, խոսում է այն մասին, որ նրանք որևէ մեկը կզանցատի թագավորի կամ իր տիրոջ իրավունքը և զուրա կզա ընդդեմ արքայական մեծության կամ ընդդեմ յուր տիրոջ, այդպիսին մահվան է գատաստարտվում, իսկ նրա որդիք և եղբայրները չպետք է պատասխանատվության կանչվեն իրենց հոր կատարած հանցագործությունների համար: Բայց նրանք սրգիները կամ եղբայրները մասնակից լինեն հիշյալ հանցագործությանը, ապա նրանցից յուրաքանչյուրի կր կատարածի համեմատ պետք է պատժվի, այսինքն պետք է որպես հանցակից քրեական պատասխանատվության կանչվի: Նույն Լեմբերգի Գատաստանազգրքի 14-րդ հոդվածը կրկնելով Մխիթար Գոշի Գատաստանազգրքի երկրորդ մասի 18-րդ հոդվածի օրինադրությունները և որոշ լրացումներ կատարելով, նշում է, թե նա, ով թագավորի կամ պետության այլ մեծամեծների պարտավում, այսինքն վատարանում է, ենթակա է նզովքի ու այսպիսի արանքի, իսկ նրան հանցագործող հողատրական է, կարգալուծ է արվում, քանի որ «նորին թագավորական մեծությունը աստվածային իշխանության ներկայացուցիչն է» երկրի վրա:

Այսպիսին են եղել հայ միջնադարյան այն քրեական օրենքները, որոնք նախատեսել են պետական հանցագործությունների առանձին հանցակազմերը:

Այժմ փորձենք հանգամանորեն կանգ առնել այդ հանցագործություններից յուրաքանչյուրի վրա՝ հիմք ընդունելով ինչպես օրենսդրական-իրավաբանական, այնպես էլ պատմական-ազգագրական համապատասխան նյութերը: Վերջիններս, հավանաբար է

այն շահով, ինչ շահով դրանք կապվում են նշված հանցագործությունների հետ:

Լրանալույն: Իրրև ինքնուրույն հանցավոր արարք լրտեսությունն իր վրա է հրավիրել օրենսդիր օրգանների և պետական պատմական օրգանների ուշագրվումը զոհուն անհիշելի ժամանակներից: Պատմական գիտությունն անհերքելի փաստերով ապացուցել է, որ ստրկատիրական, ֆեոդալական և բուրժուական հասարակությունների բազմաթիվ կանքի պատմությունը, այդ ֆորմացիաների պետությունների բազմաթիվ հազարամյա պատմությունը միաժամանակ արունոտ պատերազմների ու զերվարումների պատմություն է եղել: Այդ պատերազմների ընթացքում, ինչպես նաև խաղաղ ժամանակներում միջմասն նկատմամբ թշնամաբար տրամադրված պետությունների բազմաթիվ շղջ շանք շնն գործադրել իրար լրտեսելու, իրենց համար անհրաժեշտ պետական ու ուղղմական զազտիքներ հավաքելու և զրանով իսկ իրենց հակառակորդների կրքերը թուլացնելու կամ նրանց նկատմամբ ուղղակի օսպմական հաղթանակ ստանելու նկատառումներով: Չնայելով լրտեսության այս յուրահատուկ բարձր վտանգավորությանը, հին և միջնադարյան պետությունների օրենսդրական հուշարձաններում նրա պատժելիությունը մասին շատ քիչ հիշատակումներ կան: Դա բացատրվում է նրանով, որ լրտեսների ամենանոցր պատիժներով պատժելու սկզբունքը մի տեսակ սրբագործված սովորույթ է եղել, մի տեսակ անվիճելի ճշմարտություն և այդ մասին օրենքների մեջ առանձին իրավանորմներ մտցնելու կարիքն անգամ, որպես կանոն, չի զգացվել:

Լրտեսության դեպքերը համարյա միշտ էլ պատժվել են, առանց ժամանակակից հասկացողությամբ՝ դատի ու դատաստանի. անհատներին, մեծ մասամբ միահեծան թագավորներին, փոխարաններին, բարձրաստիճան գորավարների կամ աշխարհիկ, կամ հոգևոր իշխանավորների կամքով ու ցուցումներով և սրանք իրենց գործունեության այդ քնազավտի շրջանակը սահմանափակող իրավանորմների կարիքը հաճախ շնն զգացել կամ, ավելին ճիշտ, այդ բանը պարզապես ավելորդ ու աննպատակահարմար են համարել:

Հին և միջնադարյան Հայաստանում լրտեսության, որպես բարձր վտանգավորություն ներկայացնող հանցագործության, և զրա պատժելիության մասին անաչին հաղորդումներ մենք դանում ենք հայ և օտարազգի պատմագիրների աշխատությունների մեջ: Քսենոֆոնը իր «Կիրակյոյի» աշխատության մեջ բերում է պարսից թագավոր Կյուրոսի և հայ թագավորներից մեկի՝ Տրգրանի երկախությունը, որից երևում է, որ սուկավին խաղաղները լրտեսու-

Յուրեր զարծել էին զենք ու միջոց հայերի զեմ պայքարելու, նրանց երկիրը ասպատակելու և մարդկանց զերկարելու համար: Բերենք այդ երկախոսութիան համապատասխան հատվածը ակզամիկոս Հակոբ Մանանդյանի թարգմանությանը. «...նա (Կյուրոսը) հարցրեց Տիգրանին. թե որո՞նք են այն լեռները, որտեղից խալդայեները ցած են արշավում և կողոպտում: Տիգրանն այդ լեռները ցույց տվեց. եվ նա հարցրեց նորից. այդ լեռների այժմ անմարդաբնա՞կ են»: «Հարկավ ոչ,— ասաց Տիգրանը,— այլ միշտ անտեղ են նրանց լրտեսները, որոնք մյուսաներին ազդանշանով իմաց են տալիս ինչ-որ տեսում են»: «Եվ ի՞նչ են անում դրանք,— ասաց Կյուրոսը.— երբ տեղեկանում են»: «Օգնություն են զարկիս,— ասաց Տիգրանը,— զեպի զագաթները՝ ամեն մեկն ըստ իր ուժերի»⁴: Այսպեսիվ վտանգավորություն ներկայացնող արարքը, հասկանալի է, պատմական Հայաստանում չէր կարող շահեապնդվել ու շարժառնվել. հենց միայն սովորութային իրավունքի նորմերի ուժով հայերը բռնված լրտեսներին արդարացի կերպով պատժել են, և դա ընդհանուր հավանություն է գտել բովանդակ երկրում ու ամբողջ ժողովրդի մեջ:

Հայերի ու Հայաստանի նկատմամբ տածած իրենց անանական ատելությամբ հին և միջնադարյան պատմության ընթացքում միշտ էլ պարսիկները աչքի են բնկել: Նրանք ամեն զեմով աշխատել են բնաջնջել կամ ասիմիլացիայի ենթարկել այն ժողովրդին: Հայերի զեմ վարած իրենց արշուճող պատերազմներում նրանք, իբրև պայքարի միջոց, չեն անտեսել նաև լրտեսությունը: «Եկպ զորաժողով լինել թագաւորն Պարսից Շապուհ՝, և լրտեսն արձակելը, զիտու զարքանց Հալոց զԱրշակ», ասում է Փավստոս Բուզանդը⁵: Եվ հայերն էլ այն լրտեսների զեմ պայքարում էին ամենահետևողական և ամենաանողոր կերպով: Նրանք զեկավարվելով սովորութային իրավունքի նորմերով, քարկոծելով կամ մահապատժի իրականացման այլ միջոցներով մահվան էին դատապարտում աուաքված լրտեսներին ու նրանց գործակիցներին: Ընդ որում, լրտեսների այդ կերպ պատժելու մասին ուղղակի և անուղղակի առանձին ակնարկներ նույնպես կարելի է գտնել մեր պատմագիրների մոտ սկսած մ. թ. V դարից:

Լրտեսների և սրանց գործակիցների նկատմամբ հայերի կողմից կիրառվող այս ոնպրեսիվ, երբեմն դատական, իսկ ավելի հա-

⁴ Չ. Մանանդյան, Բնական ատելություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, 1944, էջ 406:

⁵ «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», էջ 145:

ճախ արտադատական միջոցները ժամանակակից քրեական իրավունքի գիտության հակադրությամբ կարծեր թե քրեական պատժերն չէին, քանի որ դրանք ավելի համախ կիրառվում էին ոչ թե դատարանների, այլ հենց իրեն՝ ժողովրդի կամ սրա ներկայացուցիչների կողմից: Չնայելով այդ հանցածանքին, դրանք՝ ռեպրեսիվ այդ միջոցները իսկական պատժի, հանցագործության համար կիրառվող պետական հարկադրանքի բովանդակություն ու բնույթ ունեին: Դրանք իսկական պատժներ էին նույնիսկ քրեական իրավունքի ասպնկողով: Նշանակում է հին և միջնադարյան հայ սովորութական իրավունքում վերջին հաշվով լրտեսությունը համարվել է իբրև ծանրագույն հանցագործություն, ուրեմն և իբրև քրեականորեն պատժելի արարք:

Հայ մի քանի պատմագիրներ մանրամասն կերպով պատմում են անգամ այն մասին, թե ինչպես լրտեսները կարողանում էին հասնել իրենց նպատակին: Նրանց պատմածներից պարզ կերպով երևում է, որ լրտեսությունը արտահայտվում էր ամենից առաջ պաշտպանական նշանակություն ունեցող ռազմական տեղեկություններ հավաքելու ձևով: Որպես օրինակ բերենք հայերին զավթանաձև և պարսիկներին կողմն անցած Մերուծան Արծրունու լրտեսական գործունեության բնութագիրը Փավստոս Բուզանդի նկարագրությամբ: Նշված պատմագրի հաղորդման համաձայն, Մերուծան Արծրունին լրտեսներ էր ուղարկում հայոց բանակը: Այս լրտեսները «...դաշին հասանէին և զիտէին զՄանուէլ, զի էր բանակ նոցա 5 Բագրավանդ զաւառի ի Բագրուան աւաի, որ է յօտ յաներական Զարեհաւանդ քաղաքի: Եկին զիտեցին զէտքն զբանակն Մանուէլի, և զերեսակն ձիոց բանակին լորում վարչի կայսր և յոցան տարան զրոյց նմա (Մերուծան Արծրունու): Եւ-խորհրեցաւ նա աննու զեւրամակ բանակին»⁶:

Բերենք նաև պարսից Միհրեքեսեհ՝ զորավարի լրտեսական գործունեության նկարագրությունը Եղիշի բառերով: Միհրեքեսեհը «...հարցանէր և ստուգէր՝ թէ քանի՞ ար կայ ի Հայոց աշխարհին ի զեղին Կարդախայ ընդ ամենայն բազմութիւնն: Իբրև լուաւ ի նմանէ՝ թէ ավել քան զվաթսուն հազար են, խնդրել և տեղեկութիւն վասն իրաքանչիւր անձին քաջութեան, և կամ քանի այն որ իցեն՝ որ սպառազէնքն իցեն, և կամ քանի այն որ իցեն՝ որ մերկ առանց զինու աքեղաւորք իցեն. սոյնպէս և վասն վահանաւոր հետեակացն: Եւ իբրև լուաւ զթիւ համարոյ բազմութեանն, առաւել

⁶ «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», էջ 259:

ևս փութացավ ուսանել՝ թէ քանիք իցին պարագլուխք քաջ նահատակացն, զի երիս ընդ միոյ պատրաստեցել առ մի մի ի նոցանէ, թող զայն ամենայն: Այլ և զորոշեց անգամ իւրաքանչիւր տեղեկանայար ի նմանէ. և թէ քանի զօրեղ զգօրսն բաժանիցեն, և որ ոք ի նոցանէ ազգար լինիցին, և որ զպարագլուխք յոթով կողմանէ յազգմ մտանիցէ, և զինչ անուանք իւրաքանչիւր համարագացն իցեն, և քանի փողահարք ի մէջ զնոյն ձայնիցեն: Ահի՛ղ զործիցեն արզիւք, էբէ՛լ արձակ բանակեցին, ճակատ առ ճակատ զործիցեն, էբէ՛լ համարուց ընդ մի տեղի զբրիցեն, Մ ոք ի նոցանէ կերթայս կայցէ, և կամո որ ի նոցանէ զանձն ի մահ՝ զնելով զուն զործիցէ՞: Այսպէս է պատկերացված պարսիկների կողմից հայերի զեմ ուղղված լրտեսական զործունելությունը մեր հին պատմագրերին՝ Իուզանդի ու Նդիշի մոտ, և պարսիկների այդ լրտեսական զործունելությունը ոչ թե մտացածին հասկացություն է, այլ պատմական ճշմարտություն:

Պատմագիրներից կատարված վերոհիշյալ մեջբերումներից պարզ կենթով երևում է, որ զեռնս այդ հեռավոր ժամանակներում, մեր թվարկության IV և V դարերում, լրտեսությունը պարսիկների ու նրանց զործակալների ձեռքին մի միջոց է եղել հայերի ռազմական հզորությունը թուլացնելու, նրանց ազգային-պատասզգրական ողին ընկճելու, անկախ և ինքնուրույն պետություն ունենալու նրանց կամքն առմիշտ կտարելու զործում: Մասամբ նաև սրանով պետք է բացատրել պարսիկների նկատմամբ ստամբոլդ առևտրական անցին ողին, որ մեր հին ու միջնադարյան պատմագիրները ժամանակի ընթացքում զրատել են իրենց աշխատությունների էջերում, մի ոգի, որ դարեր շարունակ իրեն զգացնել է ավել մոզովորական մասսաների մեջ: Գաղտնիք չէ, որ այդ մասսաները հնագույն ժամանակներից սկսած միշտ էլ բացահայտ կամ զբաղունի ատուրություն են տաձել զեպի պարսկական միշտ ռխակալ, միշտ անողորք և միշտ անարդարացի տիրապետությունը, զեպի այն ամենը, ինչ կապված է եղել պարսիկ նվաճողի՝ որպես պետականություն ունեցող ուժի հետ:

Գիտական առանձին արժեք շնորհյալացնող, բայց տվյալ զեզրում հետաքրքիր է Փավստոս Բուզանդի հաղորդումն այն մասին, թե ինչ եղանակով էին զործում լրտեսները՝ իրենց նպատակին հասնելու համար: Նրանք ոչ միայն հեռից հետևում էին թշնամու շարժումներին, այլև ծպտյալ կերպով թշնամու թիկունքն էին անցնում

և հավաքում պահանջվող, իրենց համար անհրաժեշտ տեղեկություններ: Բուզանդի հաղորդում վերաբերում է հունաց թագավորի լրտեսական զործունելությանը պարսիկների դեմ, բայց բացառված չէ, որ լրտեսները նույնանման մեթոդներով զործում էին նաև Հայաստանում հենց հայերի դեմ: Հունաց թագավորը, պատմում է Բուզանդը, «...ինքն ընտրեաց իւր արս երկուս զյխատուս, արս իմաստունս Հայաստան բանակն, այսինքն զԱրշավիրն և զԱնդովին զի աքս արք էին, որ չղպան առ նա զեսպանութեամբ յառաջնում նուազին: Եւ այսպէս հանդերձ նորք ինքն իսկ կայսրն շինականութեան կերպարանս, ի կազմաբալաճախօ օրինի, մտանէր ի բանակն Պարսից: Բորն էր նա բանակեալ ի զավտոնի Բասենոյ, ի գիւղի՝ որ անուանեալ կոչէ Ոսխա, եկին մտին ի բանակն արքային Պարսից, զիտեցին, քննեցին զլափ առին զնոցա զորութիւն զօրացն: Եւ անտի զարձան յիւրացն բանակն, կազմեցան պատրաստեցան. զայսին հասանէին զտանէին զբանակն արքային Պարսից ի նմին տեղուք բանակեալ ի պղերզութեան յանհոզովեան յանկասկած խազաղութեան: Ապա հասեալ ի տունչեան ժամուն, անկանէին ի վերայ թագաւորին Պարսից. ընդ սուր զամենայն բանակն հանէին, և ոչ զմի ոչ ապրեցուցանէին: Եւ առին զկապուս զաւար բանակին, և զկանայս թագաւորին և զբամբիշն, և զգրանկան ընդ նոսին, և զինչս զստուացուածս նոցին ընդ նմին ի գերութիւն վարէին, զկասեալս նոցա և զզանձս և զզնանս և զկապովմ նոցա: Բայց միայն թագաւորն պրծեալ մաղապտուր. պլչապովմ մի սուրհանդակ առաչել, պրծեալ ելանէր փախտական. հազիւ ուրեմն կարէր անկանել հասանել յաշխարհ՝ իւր: Իսկ կայսրն մեծաւ շքեղութեամբ անուամի պերճացեալ ի մէջ բանակին երևեալ. զայր ի շափ հասեալ առ հասարակ կատրէին, և զայլ ամենայն ի գերութիւն վարէին յերկիրն Յունաց»:

Պատմագիրների մոտ առանձին, թեև ոչ իրովին պարզ տեղեկություններ կան այն մասին, որ լրտեսությունը երբեմն առատ կերպով վրձարտվել կամ հատուցվել է նրանց կողմից, որոնց օգտին կամ որոնց կամքով այն կատարված է եղել: Խորհնացին պատմում է, թե ինչպես հայոց Արտաշես թագավորը մի հրովարտելով նախարարական տոհմերի հետնորդներ համարեց «տասնեհինգ» պատանիների, բայց, ինչպես նկատում է պատմագիրը, ոչ թե որևէ քաջարի զործի համար. այլ նրանց հոր լրտեսության համար, որը կատարվում էր պարսիկ նրվանդ թագավորի տնից հայոց

գործավոր Սմբատին տեղեկություններ ուղարկելով՝ Խորենացու աչա Շաղրզորունը և հայ ու օտար այլ պատմագիրների նման հաղորդումները միանգամայն հասկանալի են: Այո, հնադույն ժամանակներից սկսած լրտեսությունը և լրտեսները վարձատրվել են և այդ կատարվել է նաև հայ հողի վրա, այսինքն պատմական ու միջնադարյան Հայաստանում:

Գավառները: Գավառներություն որպես առանձին հանցավոր արարքի հասկացությունը քրեական իրավունքի պատմության մեջ ամենափոփոխուն հասկացություններից մեկն է եղել: Տոհմական կարգերի օրոք տոհմի կյանքի նորմալ ընթացքի դեմ ուղղված ամեն մի վտանգավոր արարք կամ վարքագիծ համարվում էր դավաճանություն: Հին հունական, հռոմեական, գերմանական, կելտական տոհմերում, ամերիկյան հնդիկների, օրինակ, իրոնգվեների տոհմերում, աֆրիկյան ժողովուրդների ցեղային միավորումներում, կովկասյան լեռնաբնակ ժողովուրդների մոտ և այլն, հավատարապես դավաճանություն էր համարվում թե՛ տոհմայիններից սպանելը, թե՛ տոհմի ներքին կյանքի կարգն ու կանոնը խախտելը և թե՛ սեփական տոհմը լրելով այլ տոհմ փախելը:

Տոհմական կարգերից ղեկի պետական կարգերն անցնելու շրջանում, մանավանդ պետությունների, որպես աշխարհազարկյան որոշակի տերիտորիաների վրա կազմավորված հասարակական քաղաքական միավորումների շրջանում, դավաճանություն հասկացության մեջ սկզբունքային փոփոխություն է մտնում: Արդեն դավաճանություն ասելով սովորության իրավունքում, գրի առնված օրենքներում և քրեական արդարադատության իրականացման պրակտիկայում հասկացվում է միայն ամբողջականությունը այն արարքների, որոնք ուղղվում են ավյալ պետության գոյության հիմքերի դեմ կամ որոնցով ամենատարբեր ձևերով խախտվում է այդ պետության արտաքին անվտանգությունը կամ նրա ներքին ապահովությունը: Գավառներություն հասկացությունը կոնկրետառնում է և իր մեջ ամփոփում է այս նախած արդեն այնպիսի արարքներ, ինչպիսիք են սուվերեն պետական իշխանության կամ այն կողմի դեմ կազմակերպվող դավադրությունը, ապստամբությունը, իշխանությունը բռնախլելու նպատակով կատարվող գործողությունները, հակապետական նկատառումներով թշնամի պետությունների կողմն անցնելը, լրտեսությունը, արբայասպանությունը և այլն:

Հին աշխարհի ստրկատիրական պետությունների, վաղ և միջնադարյան ֆեոդալիզմի մանրատված պետությունների օրենսդրական-իրավաբանական հուշարձաններում դավաճանության, որպես ինքնուրույն հանցակազմ առաջացնող արարքի մասին իրավաճանությունի և համապատասխան օրինակային մեքեր քիչ ենք հանդիպում, թեև այդ արարքը փաստորեն պատժելի լինելու և դավաճաններից պատժելու մասին պատմական հազարավոր փաստեր կան: Այդ դարաշրջանների պատմագիրները տարբեր առիթներով հիշատակում են այն մասին, որ հռոմեական կայսրերը, ֆեոդալական զանազան մանրատված պետությունների թագավորներն ու իշխանները ամենաանողոր կերպով պատժել են բոլոր նրանց, ովքեր մերկացրել են նույնիսկ կառածվել են զեբադույն պետական իշխանություն կամ սրա կրողի նկատմամբ դրսևորվող դավաճանության մեջ:

Օրենսգրություն մեջ իրավաճանությունը արմատապես փոխվում են զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պետություններում: Այստեղ արդեն հրատարակվում են համապետական օրենսդրական ակտեր, այդ թվում զատատեսանագրքեր ու օրենսգրքեր, որոնց մեջ պետական դավաճանությունը, որպես ինքնուրույն հանցավոր արարք, հատուկ իրավաճանությունում ամենուրեք նախատեսվում է և ամենախիստ պատիժների սպառնալիքով պատժելի է հայտարարվում:

Հին և միջնադարյան Հայաստանում պետական դավաճանության զաղափարը և այդ արարքը քրեական կամ վարչական ծանր պատիժներով արգելող օրենքներ եղել են: Այդ արարքի և զրա կատարողների դեմ պայքար է տարվել նաև սովորության իրավունքի նորմերի ուժով: Ընչպես ֆեոդալական ճյուղ պետություններում, այնպես էլ Հայաստանում թագավորը հաճախ համարվում էր «տեր» և այդ թվում հողի բացարձակ սեփականատեր, իսկ մյուս մարդիկ ու զրանք թվում ամեն կարգի նախարարները կամ, այլ բանով առած, ֆեոդալ իշխանները համարվում էին «ծառաներ»: Սառաների ստրկական հավատարմությունն իրենց տիրոջը սրբազորված ամենամեծ առաքինությունն էր: Գավառներությունը համապատասխան իրավաճանություն ուժով ոչ միայն ենթակա էր անարգանքի, այլև խստագույն քրեական օրենքներով պատժվում էր: Քրիստոնեական եկեղեցին էլ իր հերթին սրբազործել էր այդ իրավաճանությունը իբրև աստվածային ու անսասան պատիժի: Նա ղեկավարվում էր. «Մատանը պետք է հնազանդ լինեն իրենց տերերին» ավանարանական սկզբունքով և այդ ոչ թե ամբողջ հասա-

9 Տե՛ս «Մովսիսի Խորենացու Պատմության Հայտ», Տփղիս, 1913, էջ 174:

բուհությունն ու պետությունն, այլ նախ և առաջ իր մերկ նյութական և շահերից ելնելով: Հոգևորականներն էլ իրենց հերթին, սկսած շարքային զուղակակն բաժանանալով մինչև կապիտալիստներն ու կաթողիկոսները, մի-մի «տերեր» էին, մի-մի հոգևոր իշխաններ: Դավաճանների հողերը և այլ արժեքներ, նվաճողները չէր զրավում, արվում էին թագավորի հավատարմներին, որոնց թվում նաև եկեղեցուն, այսինքն՝ հոգևորականներին: Մեզ համար լիովին հասկանալի է, թե ինչու հայոց թագավոր Խոսրով Կոտակի, վախճանալով դավաճանությունից, օրենքի ուժ ունեցող հրաման էր արձակել, որի համաձայն «Մեծամեծ ավագանին, նախարարն, աշխարհակալը, աշխարհատեսերը՝ որ էին բխրաւորը և հազարաւորը կացան առ արքային, և ընդ նաւ շրջեցին, և մի ոք երթին ի նոցանով ընդ զօրս արքունի: Զի երկնչէր նա յերկմտութենէ նոցա, զի զուցէ զնոյն գործ Դատարենայն զորոյցն, և ապստամբ լինիցին ի նմանէ»¹⁰:

Հասկանալի է նաև այն, թե ինչու հայոց թագավորները զավորների նկատմամբ զործադրում էին կարուկ միջոցներ: Երանց ապստամբներին և առհասարակ կասկածելի վարքագիծ ունեցող հայ մեծ ու փոքր իշխաններին համարում էին դավաճաններ և ամեն առիթից օգտվելով աճարկում ու ֆիզիկապես ոչնչացնում էին ոչ միայն այդ իշխաններին, այլև բնաջնջում էին նրանց տո՛ւմբը այն նպատակով, որպեսզի նրանք այլևս ոչ մի հնարավորություն չունենան նոր դավաճաններ ու ապստամբներ սերել կամ դատարարակել:

Որպես ապացույց բերենք, օրինակ, Բզունի իշխանի և նրա տո՛ւմի սղերդական պատմությունը: Բզունի իշխանը, որին հայոց Աբշակ թագավորը զորքով ուղարկել էր պարսիկների հարձակման դեմ առնելու, դավաճանում, անցնում է թշնամու կարգը՝ նա սեփական զորքը դիտավորյալ կերպով կոտորել է տալիս և պատրաստվում է հարձակվելու հայոց թագավորի վրա: Թագավորի հովատարիմները ի վերջո հաղթում են և իշխանին կալանավորելով՝ հանձնում են թագավորին: Կատարվում է դատաստանը. նրան քարկոծությունը մահապատժի են դատապարտում «իրեն զայր, որ աշխարհի և զնզի և զօրաց տեսուն իւրոյ զավճան լեալ իցի»: Կոտորում, բնաջնջ են առնում նաև նրա տո՛ւմը:

Ահա և բոլորի Բակուրի ճակատագիրը. ինչպես հաջորդում է Բուզաղըր, սա Աղձնյաց մեծ իշխանն էր և հայ արքունական սեզա-

¹⁰ «Փաստաթի Բուզաղացոյ Պատմութիւն Հայոց», էջ 20:

նի շորս բարձրագույն սյունիքից մեկն էր հանդիսանում: Չնայելով դրան, վճախան պահին նա ձեռք է մեկնում պարսից թագավորի և նրան է մատնում արքունի տունը, որն իր կալվածքին կից էր: Բակուրի այս արարքը իսկական զավճանություն էր: Եվ այ՛ն, պարսիկների դեմ մղվող զածան ճակատամարտը հաջողությամբ ավարտելուց հետո, հայերը բռնում են Բակուրին ու իր կատարած ճանցագործության համար նրան դատապարտում են մահապատժի: Պատմագիրը հաջորդում է, որ հայերը մահապատժի ենթարկված Բակուրի զուխը ու նրա միակ աղջկան բերում, ներկայացնում են թագավորին: Եվ որովհետև նրա տո՛ւմից ուրիշ ոչ ոք չէր մնացել, թագավորը այդ աղջկան կնուծվան է տալիս իր սիրելի Վաղինակ Մյունիին և դատապարտյալի կալվածքներն ու ամբողջ զույգը բռնագրավում է հօգուտ արքունի գանձարանի¹¹:

Բերենք վերջապես Ղազար Փարպեցու հետաքրքիր հաղորդումը. հայերը նախապարտաւորում են զառնագրական պատերազմի ելնելը պարսկական բռնակալ լծի դեմ: Հենց այդ ժամանակ հանդես են գալիս առանձին դավաճաններ, որոնք անողորմարար պատժվում են նույն այդ հայերի կողմից: Պատմագիրը խոսում է նրանցից մեկի մասին. «Մի ոմն յՈստանայ տանէն, որում անուն Զանդարայ, սերմ ժակո, որդի անօրէնութեն, որ բազում և անապաշխար շար գործեալ էր ի կեանս իւրում՝ լսեք յոճանց զխորհեալսն Հայոց և երթալ վաղվազակի զուշակէր նմանելոյն իւրում Վասակայ: Որոյ բանից իրազեւած եղեալ նեկզարտ քստիին աւաջ նախարարին Հայոց՝ կախել զնա ի դոճոց որ կոչի Աւձա՛մ՝ տարեալ կապելցին ի միտնում ես ի զեօզ յանուանեալ Բերդիկունս, ի նմին Բազրկանոյ զաւտի. զոր և ոչ յետ բազում աւուրց ըստ արժանի գործոց իւրոց անօրէնութեանց քարկոծեալ սատկացեցին»¹²:

Այսպես էր պատժվում դավաճանությունը հին Հայաստանում, ճշմարտությունը պահանջում էր ասել, որ դա և բնդհանրապես նման ժանր պետական հանցագործությունները խիստ պատժելիքով պատժելի լինելը պատճառական այդ ժամանակներում ուղղակի անհրաժեշտություն էր, որովհետև խոսքը վերաբերում էր այն բանին, թե Հայաստանը պետք է շարունակեր իր անկախ գոյությունը, թե պիտի բնկնեիր պարսիկ նվաճողի անողորմ կրկնի տակ ու դառնար Պարսկաստանի ժայռամայակի մարզերից մեկը. մի բան, որ ճակատագրական

¹¹ Տե՛ս «Փաստաթի Բուզաղացոյ Պատմութիւն Հայոց», էջ 21:

¹² «Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Բուզից առ Վահան Մամիկանեան», Տփղիս, 1912, էջ 61:

կիկեր հայ ժողովրդի համար (ժողովրդի ասիմիլացիայի, լեզվի և գավառների կորուստ, ազգային ամեն ինչ մոռացում և այլն):

Անցնելով այն հարցին, թե ինչպե՞ս էր գավառաճանուխյունը բնորոշվում ու նրա պատժելիությունը հարցը լուծվում էին և միջնադարյան հայ օրենսդրական հուշարձաններում, պետք է ասել հետևյալը. եկեղեցական ժողովներում դարերի ընթացքում բնորոշված և Հայոց կառնեղաբերում տեղ գտած կանոններում գավառաճանուխյան և ընդհանրապես պետական հանցագործությունների մասին իրավանքների մենք գրեթե չենք հանդիպում: Պետական հանցագործությունների դեմ տարվող պայքարն ըստ երևույթին համարվում էր աշխարհիկ իշխանություններին և աշխարհիկ գաղափարներին դրժմը:

Ինչ վերաբերում է մեր միջնադարյան ազգային գաղափարաբանությանը, ապա սրանց մեջ այդ աստիճան ուղղակի, երբեմն նաև անուղղակի կերպով հիշատակվում է Ալյուսե, Մխիթար Գոշի Գաղափարաբանության երկրորդ մասի առաջին հոդվածում խոսվում է այն մասին, որ քաղաքները և բերքերը թշնամու ձեռքը մատուցենք, եթե հաստատվում է մատնությունը, այսինքն վերջին հաշիվով գավառաճանուխյան բուն փաստը, և եթե իրենք՝ գավառաճանուխյան (մահաճակատներ) են, ենթակա են մահապատժի. եթե հանցագործը ի վիճակի է փրկագնել իրեն, ապա նրա կնոջն ու երեխաներին, համենայն դեպս, պետք է վաճառել հօգուտ արքունիքի: Հանցագործի գույքը պետք է բռնագրավել և նրան պատժել՝ աչքերը հանելով: Եթե հանցագործությունն ավարտվում է հանցագործը բնովում է, ապա նրան պետք է մահվան դատապարտել. եթե գավառաճանուխյուն կատարողը քրիստոնյա է և նախապատրաստվում է քաղաք կամ բերքը հանձնել այլազգիներին (մահաճակատներին) կամ թեկուզ և քրիստոնյաներին, ապա նա ևս այլազգիների նման պետք է մահվան դատապարտվի կամ, բոլոր դեպքերում, ենթարկվի այնպիսի ծանր մարմնական պատիժների, ինչպիսիք են աչքեր հանելը, ձեռքերը, մարմնի այլ անդամները հատելը և այլն: Այստեղ նորից ուժով կրճատման քրիստոնյան կենդանի է թողնվում միայն մի սրբատաղավ, որ պետք է վիճակի լինի ծանր ապաշխարանքություն կրել՝ իր կատարած հանցանքի և մեղքի համար:

Բերենք Գոշի Գաղափարաբանության մատնանշված հոդվածի համապատասխան պարբերության դրարար տեքստը. «Ջրաղբաբառուրս և գրեղաբառուրս, եթե ճշմարիտ իցել և չալլազգեսց, մատնիցել մահու, ապա թէ բառական իցել փրկելը գանձն, զկին և զմանկունս չարքունիս կաշուսլ վաճառիցել և տարազիր ի ժառանգութիւնէ արասցէ իրատեալ շառս: Ապա թէ ի զուրս չարս եւանիցել և ընդ ձեռասը գայցել, մի՛ ապ-

րեսցուցցէ: Իսկ եթե քրիստոնեայ և հանդերձեալ իցել յալլազգի մատնել և թէ ի քրիստոնեայս, նոյն դատաստան մահու է և այլոց. բայց վասն մարդասիրութեան մեր օրինակ իրատեի յառ կամ մի՞ ձեռս, կամ յալլս, զի ապաշխարանքեան հասանիցել և մի՛ կորիցել չարին յանգ ոչ կելուցո:

Հատկանշական է, որ Գաղափարաբանության այլ ձևագիր տարբերակներում, օրինակ, N № 489 և 657 ձևադրերում գավառաճանուխյան բնութագիրը բերվում է էլ ավելի ճշտորոշ խմբագրությամբ: Այնտեղ խոսվում է այն մասին, որ քաղաքների և բերքերի մատնիչները, այլ կերպ ասած՝ գավառաճանուխյան, եթե նույնիսկ հանցագործություն հայտնաբերվում է չարքի իրականացումից, այսինքն հանցագործությունը ավարտելուց առաջ, պետք է մահվան դատապարտվեն. բայց եթե հանցագործն իր կյանքը կիրկապնի, նույնիսկ զբանից հետո էլ նրա աչքերը պետք է հանել, կնոջը և երեխաներին պետք է ստրկացնել ու դարձնել արքունի ստրուկներ, իսկ հանցագործին մերկ և անդի պետք է օտար երկիր արտաքսել. նշված ձևագրերում ավելի ցայտուն գծերով միաժամանակ այն միտքն է զարգացվում, որ քրիստոնյա գավառաճանուխյան նկատմամբ մահապատժի փոխարինումը այլ պատիժներով հիմնավորվում է քրիստոնեական կրոնի մարդասիրական բնույթով՝ ի տարբերություն մովսեսական և մահամեղական օրենքների, որոնք իբրև թե իրենց մեջ մարդասիրական ուղին չեն պարունակում և կանգնած են պատիժ-հատուցման նյութական թախիճի տեսակետին:

Գոշի Գաղափարաբանությանը կա ևս մի հոդված, որի մեջ ընդհանուր դժբով մատնացույց է արվում, որ իշխանների կամ թագավորական ընտանիքի անդամների կողմից թագավորի դեմ կամ վասալների կողմից իրենց սուլուներների դեմ կատարվող հանցավոր արարքները նույնպես ըստ լուծյան գավառաճանուխյանը հավասարազոր պետական հանցագործություններ են: Այդ հոդվածում սկզբունքորեն լուծվում են երկու հարց. նախ այն հարցը, որ գավառաճանուխյան մեջ մեղավորների անպայման պետք է պատժվեն և ապա այն հարցը, որ նրանց զավակներն ու եղբայրները, եթե նրանք հանդես չեն գալիս որպես հանցակիցներ, չպետք է պատժվեն:

Մենք այստեղ նկատի ունենք այդ Գաղափարաբանության երկրորդ մասի 2-րդ հոդվածը, որտեղ ասված է հետևյալը. «Եթե իշխանը և այլք ի թագաւորական տանէ յանցաւորք թագաւորի լիցին, և կամ այլ նոտատք իշխանի, ըստ դատաստանի է զկնի յանցաւորանց մահու զորդիս և զեղբարս ի ժառանգութիւն նոցա կացուցանել, և մի՛

պատճառաւ հարց որդիք զրկելիքն կէլէ համարարոյր նոցա իցցեն, զի իւրաքանչիւր ի մեզս իւր մեղսք ըստ տւրումնական հրամանի: Այս մեղքերումից պարզ կերպով երևում է, որ Գոշը փորձել է զազմաճանառութեան բնորոշման հարցում ավելի ընդհանուր զույլի առաջ քաշել: Նա զավճանանութիւնը համարում է ոչ միայն բրդերէր կամ քաղաքները դիտարկելու կերպով թշնամուն հանձնելը, այլ ընդհանրապէս ամեն մի հանցավոր արարք, որն իշխանների և ալլոց կողմից ուղղվում է թագավորի՝ որպէս պետութեան սուվերեննութիւնը մարմնավորող անձի, զեմ կամ կատարվում է վառալ ֆեոդալի կողմից՝ իր սյուզերեն ֆեոդալի ընդհանուր շահերի զեմ:

Գաղաճանութեան բնութագրման ու պատմալիութեան մասին օրինակազույլներն իրենց արտահայտութիւնը գտել են նաև Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում, ընդ որում, այդ օրինակազույլներն իրենց վրա կրում են Մխիթար Գոշի Դատաստանագրքի համապատասխան հոդվածի՝ երկրորդ մասի 1-ին հոդվածի ուղղակի ազդեցութիւնը: Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 1-ին հոդվածը, շոշափելով մեզ հետաքրքրող հարցը, ասում է. «Զբրդոտուն և զայնպիսիքն անհար պիտի սպանեն և զկիսն ու զորդիքն ծառայ տալ ի զարդասան և կարէ ծախել: Բայց թէ զտուրովելն կատարեալ լինի որ շմեռնի, նա զաշն հանէ: Բայց թէ զտուրովելն կատարեալ լինի սայրել, անհար մեռնի: Եւ թէ որ զքիբիտտունէ տուրովել լինի ի թուրք: Ըմեռնի կամ իւրատվի ի յաջն կամ յարկու ձեռքն և ապաշխարէ»: Այս նշանակում է, որ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքը նույնպէս պաշտպանում է այն տեսակետը, որ բրդեր մատնողները և նրանց նմանները, այլ կերպ ասած ամեն կարգի զավճանները անպայման պետք է պատժեն մահապատժով, որ այդպիսիների կանայք ու երեխաները պետք է դատարանի գատա՛նքը ձողով ստրկացվեն ու որպէս ստրուկների հանձնվեն պալատին՝ ի սեփականութիւն, որ զավճանութիւն (ստրուտութիւն)՝ կատարողների նկատմամբ պատիժ սահմանելիս պետք է նկատի ունենալ նրանց ազգային պատկանելիութիւնն ու զավճաններ և քրիստոնեայաների նկատմամբ մահապատիժը պետք է փոխարինել մարմնական ծանր պատիժներով, այն հաշվով, որ նրանք հնարավորութիւն ունենան եկեղեցիներում ապաշխարանք կրելով բավել իրենց մեղքերը, ըստ երևույթին սվերքին թաշակին»՝ արժանանալու նկատառումներով, ինչպէս ասվում է մեր կանոնական իրավունքի մի քանի հուշարձաններում:

Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 2-րդ հոդվածն իր հիմքում գնելով Մխիթար Գոշի Դատաստանագրքի երկրորդ մասի

2-րդ հոդվածի բովանդակութիւնը, իր հերթին հաստի կերպով այն օրենսդրական սկզբունքն է առաջ քաշում ու պաշտպանում, որ զավճանութիւնը դա պետական իշխանութեան կամ դրա գերագույն կողմի զեմ ուղղվում և դիտարկութեամբ կատարվող հանցավոր ստնձգութիւն է, մի ստնձգութիւն, որով հետապնդվում է այդ իշխանութեան նկատմամբ ինչ-որ դատապարտելի բան կատարելու, օրինակ, նրան պետականորեն թուլացնելու նպատակը: Հողվածում, ինչպէս պարզ կերպով երևում է, միաժամանակ այն միտքն է անցկացվում, որ պետական զավճանութեան զիպքում պետք է պատրժվեն անմիջական մեղավորները, այլ ոչ թէ նրանք, ովքեր թեև հանցագործի մերձավոր բարեկամներն են, օրինակ, նրա եղբայրնեւոր կամ զավճակները, բայց որեւէ անանկեցութիւն չեն ունեցել կատարված հանցագործութեանը: Ահա այդ հոդվածը. «Եթէ իշխան կամ ալլոք՝ որ ի թագաւորի ծառայութիւն և ի հնապանգութիւն լինի և իրք պատճառք այնէ թագաւորին, հայնց որ մեռնի իրանաբ, նա եղբայրն և որդիքն՝ որ յառայազուն լն լինի՝ նա վասն հարսն մեղապան չլինեն զրկանք ի հայրենեցն ի ծառանգութեանէ: Եւ թէ վասն անհատութեանն չլինի մեռն հայրն ի պարտութեանէ, ապա լուկ վասն իրաց բարկութեան կամ ալլց ցնդ մեղանաց, նա ոչ ալլ ի հետ ծնած որդիքն չկորսնեն: Հայնց լինի դատաստան և ընդ իւրաքանչիւր պարտնայնց ու անհատարակ և ընդ իրենց ճորտերն»: Մեր կարծիքով միանգամայն իրավացի է կարտաբ, երբ մեկնաբանելով այս հոդվածի բովանդակութիւնը, այն միտքն է հայտնում, թէ դրա այդ հոդվածի (պարագրաֆի), ջրեական-իրական օրինադրույթը (Bestimmung) իր ողջ ուժը տարածում է միայն այն հանցագործութիւնների վրա, որոնք զավճանութեան հանցակազմով լող հանցագործութիւններ են հանգրիանում¹³:

Այսպիսով, ինչ լինի լինէ թէև սանք, որ միջնադարյան հայ օրենսդրական-իրավաբանական հուշարձաններում կամ, ավելի կոնկրետ ասած, Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերում պետական զավճանութեան հանցակազմը իր տարբեր ձևերով նախատեսված էր: Այդ դատաստանագրքերի համաձայն, զավճանութիւնը համարվում էր ամենամանր հանցագործութիւններից մեկը: Դա պետութեան զեմ ուղղված ստնձգութիւն էր, որով հետապնդվում էր այդ պետութեան մեջ պետական իշխանութիւնը տապալելու կամ այդ իշխանութիւնը թուլացնելու,

¹³ Skw J. Karst, Sempadscher Kodex aus dem XIII Jahrhundert, B. 2, Straesburg, 1905, էջ 17:

կամ նրա դուրսը կանգնած անձանցից իշխանություն բռնազրկելու նպատակը:

Ապստամբություն: Քրիստոսի իրավունքի պատմության մեջ ապստամբությունը միշտ էլ համարվել է ամենամարմար և ամենավտանգավոր հանցագործություններից մեկը: Դրա պատճառը հասկանալի է. այդ հանցագործության կատարմամբ հետապնդվել է բազաբազանապես տիրապետող սոցիալական շերտերից պետական իշխանությունը բռնախլելու կամ թեզդություն ունեցող հանրակարգն ու իրավակարգը տապալելու, կամ զրանց հիմնովին փոխելու նպատակը:

Հիկեևով ժանր ու վտանգավոր հանցագործություն, այդ արարքը միշտ էլ խտորեն պատժվել է, անկասկա երանցք. թե ավել պետության օրենսդրության մեջ համապատասխան իրավանքներ եղել են թե ոչ: Իբրև ինքնուրույն հանցավոր արարք, ապստամբությունը, օրինակ, ամենանյան անողորմության մեջ հետապնդվում էր ինչպես հին աշխարհի ստրկատիրական պետություններում, այնպես էլ ֆեոդալական, մանավանդ զարգացած ֆեոդալիզմի շրջանի պետություններում, Որպես ապացույց կարող ենք հիշատակել Արիստոտելի և Սպարտակի ապստամբությունները՝ հին Հուսում, Ռայա Քայսլերի, Թոմաս Մլոնցերի, Ֆան Հուսի, Բոլտոնիկովի, Ռազինի, Պուգաչովի և բազմաթիվ այլ ապստամբություններ ֆեոդալական նվաճողական և Ռուսաստանում, ապստամբություններ, որոնք խնդրվում էին արյան մեջ, և որոնց ղեկավարներն ու ընդհանրապես կենդանի մնացած մասնակիցները, որպես պետական դավաճաններ, ենթարկվում էին որակյալ մահապատիժների, ցմահ տաժառակություն կամ մասսայաբար արտոլվում էին զեպի անմարգարեական վայրեր:

Պատմական միանգամայն արժանահավատ փաստերով ապացուցված է, որ հին և միջնադարյան Հայաստանում ևս ապստամբություններ տեղի են ունեցել, և այդ ապստամբությունները զենքի ուժով կամ այլ ինտելեկտուալ մեղքերով հետո, մասնակիցները ենթարկվել են խոտազույն ռեպրեսիաների ու այդ թվում ժանրպետայն բրեհական պատիժների: Այդ ապստամբությունները մեծ մասամբ դասակարգային կամ սոցիալիստ-ազատագրական ընդհանրության են ունեցել: Դրանք հետապնդվել են կամ Հայաստանի տերիտորիան նվաճած և երկրի պետական բազաբազան զեպի իրենց ձեռքը կենտրոնացրած ուժերի, այլ կերպ սասած բռնակալ պետությունների կողմից, երբ ապստամբություններն ուղղված են եղել նրանց դեմ, և կամ հայ շահագործող զասերի ու դասակար-

գների կողմից, երբ ապստամբություններն ուղղվել են վերջիններս դեմ:

Ինքնիշխան արձանագրությունը, որը զրված է մեր թվարկություններից առաջ VI դարում և ակադեմիկոս Ն. Մանանդյանի կարծիքով հանրասանում է հայ ժողովրդի հնագույն պատմության կարևորագույն աղբյուրներից մեկը, մեզ հետաքրքրող հարցի տեսակետից իր մեջ շատ բնորոշ օրինագրություն է պարունակում: Այդ արձանագրության հեղինակը՝ պարսից Դարեհ Մառզին թագավորը, զրա մեջ ի միջի այլոց գրում է հետևյալը. «Ապստամբից Արախա անունով մի մարդ՝ արմեն (հայ)... այս Արախան, որ սան էր. «Ես նարտրուդուրուսն եմ», ձերբակալվեց իր զավանակիցների հետ միասին: Նրանք ինձ մոտ բերվեցին: Այնուհետև ես այսպես վճեցի՝ Արախան և զըլ-խավոր իր զորածնիցները պետք է Բարեյունի մեջ ցից հանվեն: Ահա այսպես մեռան»¹⁴: Այս մեջբերումից պարզ կերպով երևում է, որ այդ ժամանակ պարսիկները հայերի՝ իրենց դեմ ուղղված բողոքի ամեն մի ցույց, ամեն մի բազաբազան ելույթ զիտում էին որպես ապստամբություն և պատժում ոչ պակաս, ոչ ավելի, քան որակյալ մահապատժով՝ ցցահանումով:

Պարսիկ նվաճողների այս բազաբազանությունը կիրառվել է նաև հետագա դարերում. նրանց աչքում Պարսկաստանի դեմ ուղղված ապստամբություն էր անգամ Վարդանանց ամբողջ պատերազմը, և այդ պատերազմում հայերի հերոսական պարտությունից հետո, նրանք՝ ախինքն պարսիկները, քիչ շահք շղորձազրեցին այդ ազգի անվանի զորավարներին ու կրոնական զործիչներին անմարդկային պատիժների՝ մահապատժի, տաժառակություն, աքսորի և այլն, ենթարկելու զործում:

Ինչպես և նման բազմաթիվ այլ փաստեր, որոնց մասին պատմում են Բուզանդը, Խորենացին, Մելիշեն, Սերեոսը, Ղևոնդ Երեցը, Կաղանկատպացին, Դրասխանակերտցին և ուրիշները, ստում և ապացուցում են, որ հայերը երբեք էլ ստրկամիտ ու հնազուղ չեն եղել իրենց նվաճողների նկատմամբ, այլ ամեն առիթով նրանք ապրաստամբել ու պայքարել են իրենց նվաճողների պետական-բազաբազան տիրապետության դեմ, ապստամբություններ ու պայքար, որոնք հաճախ պակավել են հաջողությամբ, բայց երբեմն էլ ճնշվել են զենքի ու ռեպրեսիաների, այդ թվում անողորմ բրեհական պատիժների միջոցով:

¹⁴ Մելիշենը կատարված է ըստ ակադ. Ն. Մանանդյանի թարգմանության: Տե՛ս նրա «Թեևնական տետրալոն հայ ժողովրդի պատմության», հ. Ա, Երևան, 1944, էջ 51:

Այս կապուցեցութիւնը շնոր կարող չընել, որ պատմական Հար-
յուրավոր փաստեր անեղծօր կերպով Հերքում են բուրժուական
արևմտաբի այն գիտնականների հաճախ միտումնաւոր կարծիքը,
բայտ որի իրերն թէ իրենց ճնշող բռնակալների նկատմամբ արեւելքի
ժողովուրդները, այդ թվում հայերը, միշտ էլ չլու, պատիվ ու հնա-
զանջ ենթարկվողներ են եղել, զուրկ հատուտ իրենց անկախութեան
սկտիվ էություններ կազմակերպելու ընդունակութունները:

Բուրժուական պատմագրութեան այս տեսակետը քաջաբճակա-
պես սխալ է: Նորագոյն հետազոտութունները հանձնի սովետական
գիտնականներ՝ ակադեմիկոս Բարտոլոյի, ակադեմիկոսներ՝ Հ. Մա-
նանդյանի և Ա. Հովհաննիսյանի, պրոֆեսորներ՝ Ն. Յակոբովսկու,
Ս. Պոդոյանի, Ս. Երեմյանի, Ս. Մելիք-Բախչյանի և բազմաթիվ
ուրիշների աշխատութունների, փայլուն կերպով ապացուցում են,
որ ժողովրդական պրոպերնիվ շարժումներ ու քաղաքական ապրա-
տամբութուններ կամ էություններ պարբերաբար տեղի են ունեցել
ևսև հին ու միջնադարյան Հայաստանում: Գրանք իրենց զգալի
են տվել սեփաճ հին Պարսկաստանի տիրապետութեան ժամանակ-
ներից և վերջացած մոնղոլ-թաթարական, արաբական ու փուր-
թական տիրապետութեան դաժան ժամանակներով:

Պատմական շատ փաստեր ապացուցում են, որ հայ շահագոր-
ծող զասակարգներն ու դասերը նույնպես անտարբեր չեն եղել ապրա-
տամբութունները բարձրացրած անձանց նկատմամբ: Նրանք իրենց
քաղաքական տիրապետութունը օգտագործում էին հրի ու սրի մի-
ջոցով արմատախիլ անելու այդ ապստամբութունները, պատժելու
զրանց մասնակիցներին և առաջին հերթին զրանց զեկալարներին
ու կազմակերպողներին, անկախ այն բանից, թէ վերջիններս զա-
սակարգային-դասային, թէ անձնական հակառակորդներն էին:

Ինչպես հայտնի է, պատմական Հայաստանում հայ նախարար-
ները, այսինքն խոշոր ֆեոդալական իշխանները քաղաքական որո-
շակի կախում ունեին իրենց թագավորներից: Այդ կախումը մերթ
թույլ էր և մերթ էլ ուժեղ՝ կոնկրետ պատմական իրադրութուններից
էնչեղով և արտահայտվում էր նրանում, որ նախարարները թագա-
վորներին զորք էին տալիս, նրա զանձարանի համար հարկեր էին
վճարում և զանազան տոնախմբութունների տախիվ, օրինակ, թա-
գավորների ամուսնութեան, գահ բարձրանալու, պատերազմների
հաղթական ավարտման ու այլ առիթներով նրանք ընձաներ էին
մատուցում:

Այստեղ մեզ հետաքրքրող հարցի տեսակետից կարևորն այն
է, որ այդ և նման պարտականութունների ամեն մի զանցառութուն

համարվում էր քաղաքական ապստամբութուն, այսինքն ծանրա-
պույն քրեական հանցագործութուն, և թագավորները շատ անգամ
զենքով, կրքեմն նաև քրեական պատիժների սպառնալիքով ու զը-
քով կերտմամբ ստիպում էին նախարարներին լուրջայն կա-
տարելու իրենց պարտականութունները: Հանցագործութուննե-
րի և այդ թվում պետական հանցագործութունների համար պատ-
ժելը հին Հայաստանում կատարվում էր մեծ մասամբ սովորութա-
յին իրավունքի ուժով: Հենց այդ իրավունքի համաձայն էր, որ թա-
գավորները խտուրթամբ պատժում էին իրենց անհնազանջ նախա-
րարներին ու մյուս զավաղիրներին, իսկ նախարարներն իրենց հեր-
թին պատժում էին իրենց վասալներին, վերջիններս էլ՝ շինականե-
րին և այլն:

Մեր ասածը հավաստելու համար որոշ փաստեր բերենք հենց
պատմագիրներից: Բուզանդը պատմում է, որ Մանավազյան նախա-
րարական տոճը ապստամբում է հայոց Խոսրով թագավորի դեմ,
Այդ ապստամբութունը ջախջախվում է, և Խոսրովը զոսմաներն
պատժում է ապստամբ տոճին: Նա այդ տոճի անդամների մեծ
մասին կոտորում, մահապատժի է ենթարկում և, բացի այդ, եկե-
ղեցուն է նվիրում զգաւանն և զրուն զահոյցից զիրուն նահապետին
մանառազնից... զՄանաւազազկերտ ամենայն սահմանօքն և զաւա-
ռական հանգերձ՝ որ շուրջ զնորք էր¹⁵, Նույն պատմագրի, ինչ-
պես նաև Մովսես Խորենացու հաջորդման համաձայն հայոց թա-
գավորների, օրինակ, Տրդատի և Արշակի դեմ ապստամբում են
Սիւրենյաց, Կորզվաց, Մարաց, Արցախայ, Վանապետաց և բազ-
մաթիվ այլ տոճներ: Արդյունքն այն է լինում, որ նրանք էլ պարտ-
վում են և իրեն ապստամբների, նրանց տոճերին նույնպես խրա-
տորեն պատժում են: Այդ տոճերի անդամներին թնաջելում են,
իսկ նրանց զուրի մեծ մասը թնաջարկվում է հօգուտ արքունի
զանձարանի:

Հայոց պատմութեանը հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ նա-
խարարներն ապստամբել են նաև քաղաքական նկատառումներով,
այսինքն հայ պետականութունը բռնի կերպով տապալելու և Հա-
յաստանը Շարք երկրի կցորդ դարձնելու նկատառումներով: Գրան-
ցից մեկն էր Արծրունյաց տոճի նախարարներից Միբուսանը:
Վերջինս ապստամբեց հայոց Արշակ թագավորի դեմ, գնաց ներ-
կայացալ պարսից Շապուհ թագավորին և երզումով հավաստեց,
որ ամբիշտ նրա հպատակը կլինի: Ինչպես հաջորդում է Բուզանդը,

¹⁵ «Փաստոսի Բուզանդացու Պատմութեան Հայոց», էջ 10:

Մերումանք որդացավ... Ի կինացն իրոց, զոր յաստուածն ունէր: Էին ճնող զորէն քրիստոնէութեան, և խոստովան հզգ վասն անձին իրոց՝ թէ չեմ քրիստոնեայ, և կալաւ զորէն մաղղկեացն, այսինքն զմոռոցն, կապլ երկիր արեգական և կրակի, և խոստովան հզգ՝ թէ աստուածք այն են, զոր թաղարան Պարսից պաշտէ: Եւ ուխտ ընդ Շապուհոյ արքային Պարսից յայնձեռեալ. թէ իցէ և կարասցէ յաղթել Շապուհոյ Հայոց, և ունել զաշխարհն, և ինձ գարձ լիցի յիմ աշխարհն և յիմ ստունն, նախ նս՝ ասէ՝ շինեցից ապրուշան իմում ասան սեպ-հակասին, այսինքն սույն կրակին պաշտելոյ¹⁶:

Իր պատմութեան մեջ խորհնացին խոսում է այն մասին, թէ ինչպե՞սն հայոց նայաբարները զայլացած Արշակ թագավորի վրա, որը հայտնի էր հիմնել Արշակավան դատակերտը, մոռովվելով «... զիմեցին ի վերայ արքունական ձեռակերտին Արշակուանի, և հարին զնա սրով սուսերի յանձ միեշև ցկին, բայց ի տղայոց ստեղծիացաց. բանդի դատնացեալք էին իւրաքանչիւր ի վերայ ծառայից իրեանց և յանցաւորաց»¹⁷: Այս բոլորն ըստ էության բաղաբանական պատմաբովանդակում զիմոված եւույթներ էին հին Հայաստանում և զրանք ու զրանց մասնակիցները ամենամոտոզը կերպով պատմվում էին թագավորի պարզ կամահայեցողութեամբ, թագավորի, որն այդ հարցը լուծելիս իր հերթին, ըստ երևույթին, զնկավարվում էր զարերի ընթացքում կազմված սովորութային իրավունքի նորմերով:

Բացահայտ դասակարգային-քաղաքական հող ունեցող ապրատմութայուններ և եւույթներ իրենց զգացնել են տալիս առանձնապես միջնադարյան Հայաստանում, երբ ճարտ գոյազգիներ շահագործումը դնալով ումեղանում է, երբ այդ գոյազգիների վզին երկար ժամանակ զրվում է երկակի լուծ՝ օտար նվաճողների անողոր լուծը և հայ շահագործող դասակարգի լուծը: Մեր միջնադարյան պատմագիրներն ու հասարակական-քաղաքական գործիչները իրենց աշխատություններին մեջ բազմաթիվ անհարկներ են անում այն մասին, որ միջին դարերում ինչպե՞ս օտար նվաճողների իշխանութայունները, այնպես էլ հայ ֆեոդալներն ու հողերն իշխանութայուններ իրենք ամենամոտոզը ռեպրեսիաներով հետապնդում ու պատմում էին այսպատմներին ու ընդհանրապես քաղաքական այս կամ այն եւույթների մասնակիցներին:

Հարչուրամյակների ընթացքում խստորեն հետապնդում էին

ամեն կարգի աղանձավորները, որոնք, վերջին հաշիվով, հասարակական-քաղաքական որոշակի զարգացման խոստովանութուն քարոզող հասանքներ էին: Դաժան միջոցներով ու մեթոդներով հայտնվել են պավլիկյաններն ու ֆրոնդակիցները: Արտագրասական և գաղութական պատիժների ուժով ընաշնչվել են բորբորիտներն ու մաղղկեականները: X դարի մեր պատմագիրներից Դրասխանակերտցին իր Պատմության մեջ բազմաթիվ փաստեր է բերում այն մասին, թէ ինչպե՞ս այդ նույն դարում Հայաստանում ծայր են առնում ապստամբությունները: Այդ ապստամբություններն ուղղվում էին արար նվաճողների, իսկ երբեմն նաև հայ ֆեոդալների ու քրիստոնեական եկեղեցու դեմ և ամեն անգամ խնդրվում էին արտադատական ու դատական պատիժների միջոցներով: Նույնպիսի փաստեր կարելի է գտնել կաստիվերցու Պատմության մեջ: Նա պատմում է այն անուր հալածանքների ու պատիժների մասին, որոնք կիրառում էին ֆրոնդակիցների նկատմամբ օտարներից նվաճողներն ու հայ շահագործողները: Այժմ արդեն սպառնացված փաստ է, որ ֆրոնդակյան շարժման նշման գործում մասնակցել են անգամ բյուզանդացի դատավորները: Գրիգոր Մաղխարոսը վկայում է, որ այդ պատմաշրջանում օրենքներ կալին, որոնք շահագործողների քաղաքական տիրապետության դեմ ուղղված եւույթներ (ֆրոնդակիցիների եւույթը) պատմում էին մահապատժով «... Յօթնսն հրամայել զվերջին պատուհան կրել նոցա», բառացիորեն ասում է նա իր հայտանքի թղթերում:

Անհետաքրքիր չեն Ստեփանոս Օրբելյանի վկայություններն այն մասին, թէ ինչպե՞ս միջնադարյան Հայաստանում ծայր էին առել քաղաքական ապստամբությունները և ինչպե՞ս զրանք խնդրվում էր զրանց մասնակիցները պատմում էին: Ահա որոշ զարգացման նրա պատմությունից. «Ե ժամանակ Ամբաստայ՝ որդոյ Աշոտոյ, Մինեաց գահնրեց իշխանս, և յեկիսկոպոսութեան Տեանն Յովհաննիսի... քաղում և մեծամեծ վիշտս հասուցանէին սուր յուստին Տաթևոյ ընակիչը Յուրոյ բերդին, որը էին անաստուածք, ժպիրհք և եւուզակք: Եւ յաւուր միում եկեալ ի գիշերի յնգալարծ ժամու, սկսան կողոպտել զեկեղեցին և զգործատներն և զյարգան կրոնավորաց. և խնդրին զեպիսկոպոսն զի սպանցեն, և ոչ գտին. սպա զոմանս ի ծերոցն սրով նարին և զայլսն փախըստական արարին... տարան և արծաթի սափորով զմեռոնն և վայրժեցին ընդ քարն»¹⁸: Յուրաբերզգիները այս եւույթը մի իսկա-

¹⁸ Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Արարական, Թիֆլիս, 1910, էջ 247:

¹⁶ Նույն տեղը, էջ 144:

¹⁷ Մովսէսի Խորենացու Պատմութիւն Հայոց, էջ 289:

կան քաղաքական ասպատամբություն էր, որի աճից սարսափահար փախչում են բարձրարժեքի կրոնավորները և այդ թվում եպիսկոպոսները:

Այդ ասպատամբությունը խնդրելու և նրա մասնակիցներին պատժելու համար սկսում են գործել աշխարհական իշխանները. սկզբ լինի սպա այս փաստորեն իշխանին Սմբատայ, և յարուցելու այլովք սպառօքն զնաց զկնի եպիսկոպոսին և սուրբ խաչին և բազում թախանձանք էած անցրեն ի սեղի իր՝ ի մեծ Հայրապետարանին Տաթև. և Հայառնական արարելու զսեղծակ ընակիչս Յուրայ բարին, զոմանս ի մեծամեծ պատիժս և պատուհաս արկաներ, և առ հասարակ ջնջնալ հետացոյց յաշխարհէս. և զտեղին իր սահմանոնն նա ի սեփական ժառանգութիւն եկեղեցոյն: և առանգեան ի ձեռս Տեր Յովհաննիս. և հրամայեաց զրել վճիռ ահագին նշովիսք և կնքել և զնել ի սուրբ եկեղեցոյն զի մի որ յանդիցնեցի շինել զնա...»¹⁹, Այդ վճիռը, որի մասին հիշատակում է պատմագիրը, մի հետաքրքիր փաստաթուղթ է, որի մեջ սարսափելի անեծքներ են թափվում բոլոր նրանց զխին, ովքեր այսպէս զայում նույնպես կարող էին հանդիպել հանդես զալ սահմանված կարգերի ու եկեղեցու զեմ:

Այսպիսով, տիրողների պատժող ձեռք հենց իրենց օրենքների ուժով գործում էր թե՛ անմիջականորեն և թե՛ ապագային նկատմամբ: Պատժվում էին ոչ միայն նրանք, ովքեր որոշակի հանցագործություններ էին կատարում, տվյալ դեպքում ապրտամբում էին, այլև պատմի սպանուախորով սաստվում էին նրանք, ովքեր այսպէս յալ կարող էին նման արարքներ կատարել:

Օրբնչյանը խոսում է ըստ էության քաղաքական հող ունեցող ևս մեկ երևույթի մասին. առում ենք քաղաքական հող ունեցող, որովհետև այդ շարժումը, նրա բառերով սասած, «... յուրով նեղութիւնս հասուցանէին եղբարացն և այլ շրջակայ սահմանացն»: Դրա մասնակիցները նորնույն անպատիժ չեն մնում. «... զարձեալ յայնմ ժամանակի առաջականոցն, որ հանդէպ վանիցն կայր ի վերայ ուսոյն որ Ավելաբաշտն կոչեն... լի էր ելուզակ մարդովք որք բազում ոճիրս գործէին և յուրով նեղութիւնս հասուցանէին եղբարացն և այլ շրջակայ սահմանացն. յայնմամ խնդրէ եպիսկոպոսն յիշխանացն Սիւնեաց. և հրաման առեալ՝ հայաժական արար զարսն. և քանզեալ աւերեաց զասպատամբանոց նոցին և

հիմնախի արար. և զտեղին սահմանովն սեպհականաց եկեղեցոյն և մեծամեծ և ահագին նշովիսք փակեաց զի մի որ այն իշխանաց անդ ընակիչ կամ շինութիւն առնելը»²⁰:

Վերահիշյալ փաստերն առանձին-առանձին և իրենց ամբողջությամբ վերքրած սասում են, որ հին և միջնադարյան Հայաստանում սահմանված հասարակական և պետական կարգերի զեմ ուղղվող ելույթներն ու ասպատամբությունները խստությամբ պատժվում էին: Եթե հնում այդ պատժն իրականացվում էր սովորույթի ուժով կամ թագավորների կամահայեցողությամբ, ապա միջնադարում դրանց՝ այդ արարքների պատժելիությունը հաջք կարգավորվում էր անցած զբաղը օրենքներով:

Միխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի գոտատանազրքերի մի բանի հողմաններում մողղակի և անուղղակի երկրով հիշատակվում է ապատամբության պատժելիության մասին: Այսպես, օրինակ, նրանցից առաջինի՝ Միխիթար Գոշի Դատաստանագրքի երրորդ մասի 2-րդ հոդվածում և դրան համապատասխանող Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 2-րդ հոդվածում այլ կեզերներ են հետ միասին այն սկզբունքն է հավաստվում, թե մահապատժով պետք է պատժվեն բոլոր նրանք, ովքեր թագավորի կամ պետության զեմ խոռովություն կամ զավաղություն են բարձրացնում, այսինքն ապատամբություն են կազմակերպում: Ընդ որում հարցին մոտենում Ա. Գ. Գալստյանը: Մեկնարանելով Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի վերահիշյալ հոդվածը, նա մատնանշում է, թե այդ հոդվածով «... մահապատիժ է նախատեսվում նաև թագավորի կամ պետության զեմ զավաղություն կազմակերպելու, խոռովություն բարձրացնելու համար»²¹: Դավաղություն կամ, որ նույնն է, ապատամբության պատժելիության անհրաժեշտությունը զազգափարս իր արտահայտությունը գտնում է Գոշի Դատաստանագրքի երկրորդ մասի նաև 1-ին հոդվածում և դրան համապատասխանող Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 1-ին հոդվածում:

Գոշը գրում է. «եթէ պատահի պատերազմել ընդ այլազգին հարկաւորաբար, յորժամ սուրն վերասցի՝ մի՛ տացէ առնել սպանումն, բայց եթէ որ պատճառ պատերազմին իցէ յայլազգեացն: Եւ եթէ զքաղաք պաշարիցէ ալլազգեաց, նախ ի խաղաղութիւն զնուս կոչիցէ մի անգամ և երկիցս և երկրորդ, և եթէ ոչ կամիցին զալ հւ բոնարար առցէ զընդդիմացնայնս սպանելու հայնս

¹⁹ Նույն տեղը, էջ 248:

²⁰ Նույն տեղը, էջ 257—258:

²¹ Ա. Գ. Գալստյան, Սմբատ Սպարապետ, Հայպետհրատ, Երևան, 1961, էջ 156:

ընդ հարկիւ կայցի. ապա թէ անձնատուրք լինիցիւն-յայլսն հարկիցիւն, այլ մի՛ ի պոլսանս»:

Գրոշի այս օրինադրույթները որոշ, բայց կարևոր խմբագրական փոփոխութեան ենթարկելով, մերայս Ապարապետը գրում է. «Եւ ի կռիվ ուր թագաւորն ուրից՝ նա երբ սուրբ վերնա նա չէ պատե՛հ այլ մարդ սպաննել. քաւէլ թէ հանց մարդիք լինին յայլադ-գեանցն, որ այն շեռուոյն պատճառք լինին լիւ: Եւ թէ քաղաք լինի սը-ղարել և ի յառ սձին, նա էրնք հետ պատե՛հ է որ ձենել տայ՝ թէ եկիք ի հնադանդութիւն. թէ գան, նա զամենն հնազանդութեամբ բերէ և յառայ սպաննել. և թէ շղան, նա զմեղապարտքն մէն տայ սպաննել. և զայնոր որ ի մեղայն գան և մեղացոր լինին, նա սվերէ գերեկնց զաղվածքն և շապովննէ»:

Այս վերջին մեքերութենքն ուղղակի կերպով ասում են, թէ այն զկարեւրում, երբ պարտեմք օտարերկրացիները դիմադրութեան, այսինքն խռովութեան կամ ապստամբութեան փորձ են անում, նրանք ենթակա են խիստ պատիժների, այդ թիվում՝ մահուսպատի, իսկ երբ այդ բանը չի լինում, ապա նրանք սվիրոզ օկուպիստներին շն ենթարկվում, եթէ նրանք շունենանց պատերազմում վերցված գերիներին նկատմամբ կիրաււոյող օկուպիստները, որոնք քրեական պատիժների հետ որոշ անշուքիւմ ունեցող հարկադրանքի ձևեր են, բայց ոչ քրեական պատիժները:

Կեւայապանութիւն: Ստրկապարական պետութիւններում և մասնավանջ ֆեոդալական պետութիւններում, սկսած զարգացած ֆեոդալիզմի զարաշրջանից, թագավորը հանգիստնում էր ամենահզօր ու ամենահարուստ իշխանավորը: Վաստակաւ-գրասային հի-բրոսիսիայի սանդուղքում նա կանգնած էր ամենավերին աստի-ճանի վրա: Ստորագաս ֆեոդալները տնտեսապէս և քաղաքակա-նապէս ենթարկվում էին նրան: Նրանք նրա նկատմամբ որոշակի պարտականութիւններ և որոշ իրավունքներ ունեին: Բայց հարցը դրանով չէր վերջանում: Այդ պետութիւններում թագավորը միա-ժամանակ երկրի քաղաքական իշխանութեան գերագույն ներկա-յացուցիչն էր: Իր դոյուքիւմն նա մարմնավորում էր պետութեան գերակայութիւնն ու սուվերենութիւնը: Պետութեան սուվերեն իշ-խանութիւնը, որն իր բովանդակութեամբ զասակարգային էր, յուր իրականացումն ստանում է թագավորի պետական գործունեու-թեան մեջ և նրա կողմից: Պատմական այն ժամանակներում, երբ այս կամ այն երկրներում եկեղեցու բարձր ու միջին սպասավորնե-

րի շահերը սերտաճում են թագավորի ու ֆեոդալների շահերի հետ, թագավորն ու նրա քաղաքական իշխանութիւնը ձեռք են բերում մի սպիտակ շատագով ևս: Դա կրունն էր՝ ապաստարների իր հիերար-խիկ դասով, որն ամենաբնք թագավորին ներկայացնում էր այս անգամ արդեն որպէս ամենակարող իշխանավոր», որպէս «սասա-ծու ստվեր երկրի վրա», որպէս «մարդկանց գերագույն պահա-պան» և այլն:

Նման իրադրութեան պայմաններում, միանգամայն հասկա-նալի պատճառով թագավորի անձնավորութիւնը կամաց-կամաց պիտի սրբազործվեր և իրօք սրբազործվում էր նա զաստում էր երկամային սրբերի դասին, և ուժ որ ձեռք էր բարձրացնում նրա վրա, համարվում էր մի մարդ, որ իբրև թէ ձեռք է բարձրացնում ամե-նասուրբ էակի վրա: Թագավորի կամ նրա տան անդամների գեմ կատարվող ամենափոքր ու աննշան ստեղծութիւնը շահագործող-ներն սկսում են դիտել որպէս ամենածանր պետական հանցագոր-ծութիւն, իսկ արքայասպանութիւնը կամ այդ ուղղութեամբ կա-տարվող ամեն մի գործնական բայլ նրանք հայտարարում են որ-պէս մահապատժով պատժող արարք, ընդ որում նման զիպե-րով պատասխանատուութեան էին կանչվում ոչ միայն իրենք՝ ան-միջեական հանցագործները, այլև նրանց մերձավոր, անգամ հեռա-վոր ազգականներն ու բարեկամները:

Չնայելով վերոհիշյալին, ստրկատիրական շատ պետութիւն-ներին, ինչպէս նաև վաղ ֆեոդալիզմի ու զարգացած ֆեոդալիզմի պետութիւնների օրենսդրական հուշարձաններում արքայասպա-նութեան պատժելիութեան վերաբերյալ իրավանորմերը գրեթէ բա-ցակալում են: Այդ հուշարձաններում կարելի է գտնել բազմաթիւ հողատիրների, որոնց մեջ նշված են նաև հանցագործի պատժելիու-թեան աստիճանները՝ հաշվի առնելով նրանց պատային-դասակար-գային պատկանելութիւնը: Սրբան բարձր էր լինում տուժողի դա-տային-դատակարգային պատկանելութեան աստիճանը, որքան պատասխանատու էր լինում նրա կատարած աշխարհիկ կամ հօգևոր գործը, այնքան խիստ էր նրա գեմ ոտնձգողի պատիժը և ընդհակառակը: Այսպէս էր դրութիւնը և չնայելով դրան մատնա-նշված հուշարձաններում արքայասպանութեան վերաբերող իրա-վանորմեր, նորից կրկնենք, գրեթէ չկային: Դրա պատճառն այն էր, որ արքայասպանութիւնը, որպէս ծանր հանցագործութիւն, պա-տրվում էր բացառապէս մեկ պատժով՝ մահապատժով, որը և պատմական այդ ժամանակներում ընդունվում էր որպէս ապա-ցուցման կարիք շղգացող ճշմարտութիւն: Ով ձեռք էր բարձրաց-

նում թագավորի կյանքի զեմ, նա առանց սալեակալության պետք է գաղտնագործվեր մահապատժի, և տիրող հասարակական խավերը, առաջին հերթին թագավորներն ու մեծամեծ ֆեոդալներն ու ազնվականները կարելի էր չունեն իրենց այս բացարձակ արտոնությունն ու իրավունքը կարգավորման ենթարկել քրեական օրենքներով:

Այս նույնը տեսնում ենք Հին և միջնադարյան Հայաստանում. Պատմական գրականությունից, առանձնապես հայ պատմագիրների աշխատություններից հայտնի են մի շարք զեպյեր, երբ Հին Հայաստանում նույնպես տեղի են ունեցել արքայապանություն և արքայապանություն փոքրեր: Նման փոքրեր տեղի են ունեցել նաև կիլիկյան հայ թագավորության մեջ. Բագրատունիների զինանորհան անգամ այս տեսակետի երջանիկ բացատրություն չի կազմել: Տիրան Երկրորդի զեմ դավեր է լարել և մահափորձ կատարել Կեռպատարալից ծնված նրա մեծ որդին՝ Զարենը: Կերթես, միանալով մի քանի հայ իշխանների հետ, ցանկանում էր իր հորը զահենկեց անել և սպանել: Տիրանի մահով, ինչպես հայտնի է, շահագրգռված էր նաև նույն Կեռպատարալից ծնված նրա միջնակ որդին, որի անունը պատմության մեջ չի պահպանվել, շահագրգռված էր վերջապես պարթևների թագավոր Հրատատ Գ-ն:

Խորհեացին պատմում է, որ հայոց շատ թագավորներ ոչ առանց հիմքի կասկածամիտ են եղել. նրանց անընդհատ թվացել է, թե իրենց հետապնդում են և թե իրենց անխուսափելի մահ է բռնապատում: Նա, օրինակ, բերում է Արտաշես թագավորի՝ Արգամի մոտ ճաշի հրավիրվելու ժամանակ տեղի ունեցած զեպյալը. երբ Արտաշեսը ճաշի է դնում Արգամի մոտ, ինչ-որ կասկած է ծագում, թե իբր դիտավորություն ունեն թագավորին զավելու: Ուստի թագավորի որդիները ազմուկ են բարձրացնում և հենց ճաշի ժամանակ քաշում են Արգամի աչքը մազերը՝ այն բանի համար, որ նա հանդգնել էր դավել լաբելու իրենց հոր զեմ: Խորհեացին մի այլ առիթով մատնացույց է անում մարդկանց խստությունը, ամբարտաճանությունը, մեծամտությունը, կամակորությունը, անօրինությունն ու անբարոյականությունը, որոնց վերջին արգյունքը լինում է նույնիսկ այնպիսի ծանրագույն հանցագործություն, ինչպիսին արքայապանությունն է: Պատմագիրը հիշատակում է այն մասին, որ երբ հայոց Տրդատ թագավորը կնոսաբարոյական նկատառումներով վճատված ու հուսախար փորձում է հրամարվել իր զահից ու հեռանալ, նրա հետևից մարդ են ուղարկում, ետ կանչելու թագավորական զահին, խոստանալով նրա

կամքով վարվել: Իսկ երբ թագավորը չի համաձայնվում, նրան թուլանքով ընկնիք են տալիս, սպանում, ինչպես նրան ավանդաբնորը Սոկրատին տվին մալախիտ: XIV դարում այդուհի ներսես Պալինեցու ժամանակագրական հատվածներում և այլ աղբյուրներում նույնպես հանդիպում ենք կիլիկյան թագավորների և մյուս պետական գործիչների զեմ ուղղված դավադրությունների:

Հանցագործների հետապնդել և պատժել են իրենք՝ մահափորձի ենթարկվող թագավորները, իսկ նրանց մահվան դեպքում նրանց մեթափորձները, առանձնապես զավակները՝ զեկավարվելով սովորութային իրավունքով և իրենց մերկ կամահանցողությունը: Պատմությունից վերջված և վերևում բերված օրինակների մեջ ճիշդան Երկրորդ թագավորին ինքն է կարգադրում մահապատժի ենթարկել իր անբարոյացակամ ու զավակի որդուն: Արտաշես թագավորն ինքն է հրամայում իր Մաման որդուն՝ պատժելու մտաբացյալ ցեղին, այլևիս Արգամի ապարանին ու նրա հարձին բերելու իրեն՝ իբրև հարև: Ինչ վերաբերում է կիլիկյան հայ թագավորության պատմության ցանկանալի անհարկված զեպյին, սպա այդ մասին նույն Պալինեցին պատմում է. «Եւ, շէթում կրօնատարն և Թարսն տալին զթագաւորութիւնն յնորայրն յիւրանց Սմպատն և ինքեանք զնացին ի Կաստանդնուպոլսոյ: Իսկ Սմպատն առնու թագ և օրհնութիւն և թագաւորեաց ամն Գ: Եւ կացեալք նորա ի դուրս՝ իբր թէ ամ մի դարձան և կամէին թաթարով ձգել զՍմպատն և առնուլ զպարսեւութիւնն և նայ նախիմա զեղալ: Կալալ զնստա և եղ ի քանդի: Եւ զրդութեամբ շար իշխանաց հրամայաց սպանանել զԹերայրն իւր: Այլ որ զնաց սպանանել զԹարսն ետ լարին խեղդեց զնա, իսկ որ զնաց սպանանել զշէթումն, զի ոչ էին ի մի տեղի, ոչ ենպան, այլ կուրացույց զաշս»²²:

Այսպիսով, Հին և միջնադարյան հայ օրենսդրական-իրավաբանական հուշարձաններում արքայապանություն՝ որպես ինքնուրույն հանցագործության և զրա պատժելիության մասին իրավաբանական հուշարձանները պատժվել են առանց համապատասխան զրավոր օրենքների՝ սովորությունով: Նման նորմեր մենք չենք գտնում ոչ կանոնական իրավունքի հուշարձաններում, ոչ թարգմանված ու Հայաստանում կիրառված օտար օրենքներում և ոչ էլ մեր աշխարհիկ գաղտնախոսարբերում, հանձնին Գավթի կալվածա թրդու Կանոնների և Մխիթար Գոշի ու Մարտո Սպառապե-

²² Մամար ժամանակագրություններ XIII—XVII դդ., հ. 2-րդ, կազմեց Վ. Ա. Հովորյանը, Չուխակա ՍՄՇ զիտությունների պատմության հրատարակչություն, 1956, էջ 183:

որ դատաստանագրքերի: Արքայապանութիւնը համարվել է բացառիկ վտանգավորութիւն ներկայացնող հանցագործութիւն ե մահապատժով պատժելի լինելը ախբան ընդունելի ու անվիճելի են եղել, որ օրենսդիր օրգանները կամ զրանց զերը կատարող անհատ անձինք ավելորդ են համարել այդ մասին օրենսդրական ինչ-որ նորմներով սահմանափակվել կամ, ավելի ճիշտ կլինի ասել, կարգավորման ենթարկել իրենց գործունեութիւնը:

Հակապետական եւոյք: Հակապետական բանավոր եւոյքներ կամ, ինչպէս հին ե միջնադարյան որոշ պետութիւնների օրենքներում էր ասվում, վեհախառութիւնը վերաժողերը, որպէս ինքնուրուի հանցակազմ համարվող արարք, բարձր վտանգավորութիւն են ներկայացրել: Այս կարգի արարքն կատարելով հանցագործները փաստորեն գրգռիչներն ու զրդիչներն զեր են կատարել, օգնել են այն բանին, որ շահագործողների պետութիւն կամ երազ զգուցը կանգնած թագավորի հեղինակութիւնը սասանվի ամբողջ հասարակութեան աչքում: Պատահական չէ, որ զեռնա հին հռոմեական իրավունքի աղբյուրներից մեկում, հայտնի «Տասներկու տախտակներում», այն միտքն էր անցկացված, թէ նա, ով մարդկանց շրջանում շարաժիտ բովանդակութիւններ էր արտաբերում, հասարակութեանը հրապարակով հասցված անարգանքի համար պատժվում է մտրակահատութիւնով: Ըստ Յիցերոսի, նույն «Տասներկու տախտակները» մահապատժի էին նախատեսում ոչ մեծ թվով հանցավոր արարքների համար ե այդ թվում հարկ էին համարում այդ պատժը կիրառել նաև այն դեպքում, երբ որևէ մեկը կհրեցրել կամ մեղաբար մեկ ուրիշի հասցնին, այդ թվում հասարակութեան կամ պետական իշխանութեան հասցնին զրպարտչական հերյուրանքներ ե անարգանք բովանդակող երգեր:

Վեհախառութիւնը (արքայական մեծութիւնը) վիրավորող ե բնշահարսպան պետութիւն զիմ ուղղվող եւոյքների պատժելութեան մասին առանձին իրավանքներ մեծը գտնում ենք նաև վաղ Ֆեոդալիզմի շրջանի մանրաբովանդակ Ֆեոդալական պետութիւնների օրենսդրական հուշարձաններում, թէև ճշմարտութիւնը պահանջում է ասել, որ այդ նորմերը իրենց համակողմանի զարգացումը չեն ստացել ե բուն արարքն էլ խիստ պատիժներով չի պատժվել: Այդ երևութի պատճառը մասամբ կենտրոնական պետական իշխանութիւնների բացակայութիւնը կամ, համեմատ դեպս, երա թուլութիւնն էր, մասամբ էլ մատնանշված արարքի քիչ տարածված լինելու, օրեմն ե պակաս վտանգավորութիւն ներկայացնելու հանգամանքը:

Ինչ վերաբերում է զարգացած Ֆեոդալիզմի շրջանի պետութիւններին, այսպէս ասեղ, ինչպէս նաև ստրակատիրական ե Ֆեոդալական միահեծան պետութիւններում պետական իշխանութիւնը հրամցվում էր որպէս ասովաժայն կատեզորիա, իսկ թագավորը որպէս ոչ պակաս, ոչ ավելի, քան աստծո տեղակալ երկրի վրա, այս պատճառով էլ զրանց՝ այդ պետութիւնների, օրենսդրութիւնների մեջ մատնանշված արարքի պատժելիութեան վերաբերող իրավանքները իրենց բարձր զարգացումն էին ստացել, ե բուն արարքն էլ պրակտիկ կանչում ամենախիստ պատիժներով էր պատժվում: Էին Բարեղեռում, Պարսկաստանում, կայսերական Հռոմում, Բյուզանդիայում ե այլուր երկրի պետականութեան հասցնին, ինչպէս նաև հնց իրենց՝ թագավորների ու կայսերի հասցնին ուղղվող ամեն մի վիրավորական ե բնշահարսպան ամեն մի անպատեհ խոսքի համար օրինազանցները դատասպարտվում էին մահապատժի, տաժանակրութեան, արտրի ե նման անողոր պատժանքների:

Էին ե միջնադարյան հայ իրավունքի պատմութեան մեջ վեհախառութիւնը (արքայական մեծութիւնը) վերաժորաք հասցնելու մասին համապատասխան հիշատակում մեծը գտնում ենք «Համառոտ ժողովումն օրինաց վերստին» իրավաբանական հուշարձանում, որը օտարերկրյա օրենքներից կատարված մի ժողովածու էր ե որի հիմքը՝ «Քաղաքացիական օրենքը» լույս էր տեսնել կիրիկյան Հայաստանում (ամբողջական ամենաակտիվ նախաձեռնութիւնը ու մատնակցութիւնը)²⁵. Օրենքի ուժ ունեցող այդ պակար օրինադրութիւններից մեկը պարտավորեցնում էր շրամբասել, զրպարտել սեփական աստծուն ե ժողովրդի իշխանին շանարգել: Այս նշանակում է՝ օրենքը հովասար մակարդակի վրա էր դնում ե նուշանուն մեծութիւններ էր համարում աստծուն ու իշխանին (այսինքն՝ թագավորին) ե սրանց զեմ ուղղված բամբասանքն ու անարգանքը հայտարարում էր իբրև դատասպարտելի կամ, այլ կերպ ասած, իբրև պատժելի արարք, թէև զրանց՝ այդ բամբասանքի ու անարգանքի համար կոնկրետ ե որոշակի սանկցիաներ չէր նախատեսում:

Միտիմար Գոշի Գատաստանադիրը մեջ հետաքրքրող հարցը լուծում է ավելի ամբողջական ե ավելի բնշահունոր դժերով. հիմք ընդունելով կղեմի առարելական կողմից կանոնների 78-րդ կանոն-

²⁵ Սեանթ. Գ. Պատմայանի վկայութիւնը այդ ժողովածուի խնկարը զտնջվում է Փարիզի ազգային մատենադարանում Suppl. Arm. M 103-ի տակ (տե՛ս երա հոգվածը «Ճակագան օրենք կիրիկեցոց», «Բանասեր», հ. 9-րդ, Փարիզ, 1907)։

նը, Գոշի իր Գատաստանագրքի երկրորդ մասի 18-րդ հոդվածում մատանանշում է, որ «եթև որ թշնամանեցէ զՅազատորս և զԻշխանս անիրաւարար, պատուհաս կրեց-եթև ժառանգաւոր է լուսնցի, եթև ժողովրդական՝ որոշեցան»: Նշանակում է Գոշը այդ Հանցագործութեան կատարման զեպքում պարտավորեցնում էր Հանցագործի պատժելիութեան հարցը լուծել որոշակի: Տողերական լինելը Հանցագործը, թե՛ աշխարհական, պետք է պատժվեր («պատուհաս կրեցէ»), ընդ որում Տողերականը կարգաւորւմ էր արվում («լուսնցի»), իսկ աշխարհականը վտարվում էր եկեղեցուց: Այս կապակցութեամբ խիստ ուշադրով է միեւնոյն հոդվածի մեջ Գոշի զարգացրած միտքը այն մասին, թե նման Հանցագործութեաններին վերաբերյալ գործերը ենթակա են նպիկոպութեան և վարդապետների ըննութեանը, քանի որ «...պատկեր են նստուծոյ թաղաւորք և իշխանք»:

Գոշի ժամանակ Արևելյան Հայաստանում թագավորները չկային, բայց կային հայ իշխաններ, որոնք ակտիվորեն գործում էին հայկական ստվերներ պետութեան վերականգնման ուղղութեամբ: Գոշը ներքնապես համոզված էր, որ վաղ թե ուշ, բայց անխուսափելի կերպով հայ ժողովուրդը կունենա իր անկախ պետությունը թագավորի զիջավորութեամբ և զուցե այդ համոզումն էր պատճառը, որ նրա Գատաստանագրքում տեղ են գտել իրավանորմեր, այդ թվում վերևում մատանանշված 18-րդ հոդվածը, որոնց կիրառումը իրավաբանորեն հնարավոր էր միայն այնպիսի անկախ պետութեան մեջ, որի զուրկ կանգնած լինելը ինքը՝ իշխաններով շրջապատված թագավորը:

Անսպասելիորեն վիրավորելու հանցակազմը նախատեսված է նաև Սմբատ Սպարապետի Գատաստանագրքում: Այստեղ այդ հանցագործությունը բնորոշվում է մտավորապես նաև ոգով, ինչ մենք տեսանք Մխիթար Գոշի մոտ: Գատաստանագրքի 19-րդ հոդվածը խոսում է այն մասին, որ «եթև որ վասն թագաւորի անպատեհ կամ անարժան խաւք ասէ՛ և կամ մեկն իշխանի՛՝ կամ մրտուէ, նա պատեհ է յառաջ ի եկեղեցին զատասնից, նա թէ չգալ լավցնէ զիր խալատն, նա թէ կարգաւոր լինի՛՝ նա ձգուի ի կարգէն և վարուի յամէն յերկրէն, և թէ աշխարհական լինի՛՝ նա հանուովէն (մեկ այլ վարխետում՝ «հարկանեցնեն») զինք և բանադրած վարեն. ու թէ բանն մեծ լինի՛՝ նա սաղայ տան ի վերայ իրացն»:

Կրիկկան Հայաստանում այս հոդվածի կիրառման համար իրավաբանական հիմքեր կարող էին առաջանալ ավելի ուշ կերպով:

Կամ: Այդ պետութեան ունեւ իր թագավորը, իր ավագանին, որի կազմում տեղ էին գտնում մեծամեծ իշխաններ և այլ ազնվականներ: Հնուեպոստալ կար դատակարգային պայքար, կային սոցիալական հակասութեաններ, որոնք չէին կարող առանձին անհատների շրջել անպատեհ և անարժան խոսք ասելու թագավորների կամ իշխանների հասցեին, այսինքն կատարելու Գատաստանագրքի 19-րդ հոդվածում նախատեսված հանցագործությունը: Նման հանցագործություններ իրականում կատարվում էին, և հանցագործները, որպես պետութեան ներքին անվտանգութեան ու անպահովութեան զեմ կոնկրետ սոսնձութեան կատարողներ, խստութեամբ պատժում էին: Նրանք ենթարկվում էին մարմնական պատժմաներ, ամսմանակութեան և նույնիսկ մահապատժի, ինչպես այդ մասին վկայում են եվրոպացի առանձին ճանապարհորդներն ու գործիչները, որոնք հանդամաններին բերումով XIII դարում ի պաշտոն են եղել են կրիկկան հայ պետութեան մեջ կամ անցել են նրա տերիտորիայով:

Հիմք ընդունելով Մխիթար Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի 18-րդ հոդվածը և Սմբատ Սպարապետի Գատաստանագրքի 19-րդ հոդվածը, որոնց մեջ ուղղակի կերպով նախատեսվում է թագավորին և իշխաններին վիրավորելու, նրանց հեղինակութունը զցելու հանցակազմը, ոչ մի դեպքում չի կարելի համաձայնվել կարտուի հետ, որն իր «Sempadscher Kodex»-ի երկրորդ հատում (հավելված, 4-րդ զտուի, 3-րդ պարագր., 4-րդ կետ) այն միտքն է զարգացնում, թե վեհաժողովութեանը վիրավորելու հանցակազմը հայ ազգային իրավունքում որպես ինքնուրույն իրավախախտում իր արտահայտությունը գտել է միայն կանոնական իրավունքի կամ բյուզանդական իրավունքի ազդեցութեամբ:

Հայ ազգային դատաստանագրքերում տեղ գտած վերոհիշյալ հոդվածների զտությունը մեր կաթմիքով ճիշտ հակառակն է ասում, իսկ այն հանգամանքը, որ այդ հոդվածները, հանձինս կանոնական օրենսդրական-իրավաբանական հուշարձանների, ունեցել են իրենց իրավաբանական աղբյուրները և իրենց վրա կրում են բյուզանդական օրենքների մասնակի ազդեցությունը, ինքնուրույն ինքնուրույն ուղին չի ասում, մանավանդ մեզ հետաքրքրող հարցում հակառակը չի սպացուցում:

Գրամանեցութիւն: Հնագույն ժամանակներից սկսած գրամանեցությունը, այսինքն շահադատական նպատակներով նոր գրամաներ կամ փողանիշեր պատրաստելը, ինչպես նաև զրանց իրացնելը համարվել է ծանրագույն պետական հանցագործություն:

ներից մեկը: Գրա պատճառն այն է, որ այդ արարքը ուղղվում է պետություն տնտեսական կյանքի հիմքերի զեմ և լուրջ, երբեմն անուղղելի վնաս հասցնելով պետությանը, վտանգի տակ է դնում երկրի ներքին ու արտաքին առևտուրը, ինչպես նաև խախտում է երկրի դրամական շրջանառության գործը: Մարդիկ սկսում են անվատահույսություն ցուցաբերել զույգի դրամն ու փողը, մի երևույթ, որն, ինքնբարենպաստ վերցրած, հանգեցնում է կամ կարող է հանգեցնել էլ ավելի ծանր հետևանքների:

Շահագործողական պետություններում դրամանենգությունը զեպում մեծամեծ նյութական վնասներ են ստանում նախ և առաջ իրենք՝ պետության ղեկավարման զործն իրենց ձեռքը վերցրած շահագործող դասակարգերն ու դասերը, այդ թվում առևտրականները: Սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ քրեական իրավունքի և քրեական արդարադատության իրականացման պատճառով մեզ դրամանենգությունը և բողոհանքային պետական արժենիշի կեղծումը խստորեն պատժվել է: Այդ արարքի պատճառով մասին անողոր րովանդակություն ունեցող իրավանորմների մեկն հանդիպում ենք շահագործողական բոլոր պետությունների օրենքներում:

Հին աշխարհում և միջին դարերում դրամանենգությունը պատժվում էր մահապատժի սրակշիվ ձևերով և միայն քիչ զեպներում՝ աքսորարևակեցմամբ կամ ծանր մայրամահան ու այլ նման պատիժներով: Գատական պողպատիկալում սովորություն էր դարձել դրամանենգներին մահապատժի ենթարկել իրենց իսկ կեցածած մետաղյա դրամի հալոցքը նրանց կոկորդը լցնելու միջոցով: Գրամամանեկների կուրացնելը նրանց ձեռքերը կամ ոտքերը կարելի էր նույնպես բնորոշված և մասսայական կերպով կիրառվող պատժատեսակներ էին: Անղլիայում բանկոտներ կեղծողներին, որոնք ծանրագույն ոճրագործություններ կատարողներին, այլում էին խարուկները վրա կամ կախում:

Հին հայ օրենսդրական-իրավաբանական հուշարձաններում, այսինքն առանձին հայ թագավորների զանազան հրովադրականություն և կանոնական իրավունքի հիշատակարաններում դրամանենգությունը պատժվելու մասին վերաբերյալ իրավանորմներ մենք չենք հանդիպում: Այդ ամենեկին էլ չի նշանակում, որ դա քրեականորեն հետապնդելի արարք չէր: Գատական այն ժամանակներում, նրբ Հայաստանն ինքնուրույն և անկախ պետություն էր, նրբ հայ թագավորները, օրինակ, Տիրացու Երեզրուրը, Աբշակ Մեծը և ուրիշները իրենց անունով դրամ էին հատում և շրջանառության մեջ դնում,

միամտություն կլինեք կարծել, թե նրանք՝ այդ թագավորները կամ քրեական արդարադատությունն իրականացնող նրանց համապատասխան օրգաններն ու պաշտոնատար անձինք անարբերություն էին անցնում դրամանենգների կողքով և նրանց ռեպրեսիաներ էին ենթարկում: Այլնի ճիշտ կլինի նմիազրել, որ այդ ժամանակներում բազմաթիվ ուրիշ հանցագործությունների նման, դրամանենգությունը նույնպես հետապնդվել ու պատժվել է սովորական իրավունքի ուժով կամ թագավորների ցուցումներով: Կասկածից զուրս է նաև այն, որ արարքը պատժվել է անողոր պատիժներին, օրինակ, մահապատժի կամ ծանր մարմնական պատիժների սպառնալիքով: Հայաստանն օտարերկրյա նվաճողների լծի տակ ընկնելու ժամանակաշրջանում, ինչպես բազմաթիվ այլ հանցագործությունների, այնպես էլ դրամանենգության նման ստրվող քրեական-իրավական պայթրի գործը իրենց ձեռք են վերցնում հենց իրենք՝ այդ նվաճողները: Հին պարսիկները, հռոմեացիները, բյուզանդացիները, թուրքերը և մյուս նվաճողները, հասկանալի պատճառով, պետք է պատժեն նաև դրամանենգներին, որովհետև սրանց կատարած արարքը ուղղված էր նախ և առաջ իրենց՝ այդ նվաճողների դասակարգային շահերի դեմ:

Միջնագրում Արևելյան Հայաստանում անկախ հայկական պետության ստեղծման հույսը, որն այնպես փափալվում էր Մխիթար Գոշի, առաջավոր հայ իշխանների, օրինակ, Քուրդ իշխանի, Խյանն և Զաքարյն իշխանների կողմից, ինչպես նաև կլիկիկյան հայկական ինքնուրույն թագավորության գոյության փաստը, ինքնուրույնության վերցրած, հիմք տվին Գոշին և Մմբատ Սպարապետին իրենց դատաստանագրքերում մտցնելու իրավանորմներ, որոնց կիրառման համար օրջեկտիվ պայմաններ կարող էին առաջանալ սովորեն պետության առկայության պայմաններում: Այդ նորմերի թվում պետք է հիշատակել երկու դատաստանագրքերում էլ տեղ գտած այն քրեական-իրավական նորմը, որով պատժելի են հայտարարվում դրամանենգությունն ու այլ արժենիշերի կեղծումը:

Մխիթար Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի 123-րդ հոդվածը, հանգամանորեն խոսելով առևտրի բնագավառում կատարվող մի քանի հանցավոր շարաշահումների մասին, միաժամանակ մտանցույց է անում, թե ... զահեկանատարից և դրամանկոփից զծնուն հատանել հրամանատա իշխանացու: Նշանակում է, Գոշի Գատաստանագրքը փաստորեն պատժելի է հայտարարում իրար հետ սերտորեն առնվող, իրար նմանվող երկու հանցագործություններ. ա) դրամանենգությունը, որը Գոշի մոտ օդադարձվում

ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

է «գահեկան» բառի արմատ ունեցող «գահեկանահատութիւն» տերմինով և բ) արժեթղթերի կեղծման առհասարակ, որը Գոշի մտ կարգում ենք «գրամակոփութիւն» տերմինով («գահեկանահատ» և «գրամակոփ» բառացի կերպով ասում է Գոշն իր Դատատեսնազրքի՝ մեր կողմից արդեն հիշատակված հոգվածից բերված պարբերութիւն մեջ): Գոշը այդ երկու արարքների համար նախատեսում է խստագույն մարմնական պատիժներից մեկը՝ ձեռքեր հատուլը և այդ պատիժն ի կատար ածելու իրավունքը, ինչպես տեսանք, վերապահում է իշխաններին: Այն իրականացվում է «Շրամանաւ իշխանաց», ասում է մեր մեծանուն իրավագետը:

Պետական կարևորութիւն ներկայացնող արժեներշերի և այդ թվում զրամի և փողի կեղծման հանցակազմեր նախատեսող իրավանորմը իր օրենսդրական վավերացումն է գտել նաև Մմբատ Սպարապետի Դատաստանագրքի 112-րդ հոդվածում: Այդ հոդվածն առանձին-առանձին նախատեսելով իրենց տեսակներով միմյանց անջվող մի քանի գույքային հանցագործութիւններ, միաժամանակ մատնանշում է. «Եւ զայնոք, որ զրամ քշտեն կամ զրամ հարթեն անխեղճ առ պարոնութիւն զձեռք կտրեն ի պակասն»: Ենթե նկատի ունենանք, որ «զրամ քշտել» և «զրամ հարթել» հասկացութիւնները կիրիկյան հայ բարբառով միմյանցից տարբերվող հասկացութիւններ են և երկուսը միասին փաստորեն տալիս են պետական նշանակութիւն ունեցող արժեթղթերի կամ ավելի ճիշտ կիրիս ասել արժեներշերի (զրամ, փող և այլն) կեղծման քրեական-իրավական զաղափարն ընդհանրապես, ապա ճիշտ վարված կլինենք միաժամանակ մատնացրույց անելով, որ Կիրիկյան Հայաստանի այդ պաշտօնական օրենսդիրը նույնպես, Մխիթար Գոշի Դատաստանագրքի նման, նախատեսում էր մի կողմից զրամանեն-գութիւն և մյուս կողմից առհասարակ արժեներշերի կեղծման հանցակազմերը:

Պատմական ակնարկ: Եահագործող զատակարգների զաղափարակոնները թղթի կույտեր են մրտանել ու մրտանում են այն մասին, թե իբր կրունն ու պաշտամունքը ապաքինում ու ազնվացնում են մարդկանց, բարերար ազդեցութիւն են թողնում նրանց վարքագծի վրա և որանով իսկ նրանց հետո են պահում արտատվող, առանձնապես հանցավոր արարքներից: Նրանք փորձում են կրունն ու պաշտամունքի գործը զգեստավորել ամենզգեղեցիկ պատմաձանձաններով և դրութիւնը պատկերացնել այնպես, որ իբրև թե առանց դրանց մարդկութիւնը կզրոյգի ամեն կարգի արատների հորձանուտի մեջ, և աեխուսափելի կզառնան, անգամ, հասարակութիւնն զրոյթիւնն սպանանցող հանցագործութիւնները: Այս զաղափարախոսութիւնը հիմնովին կեղծ է և հակազիտական: Այն բխում է շահագործողների նպատակներից և լրովին համապատասխանում է նրանց շահերին:

Հանգուս զալով որպես հասարակական գիտակցութիւն յուրահատուկ ձև, որպես մարդկանց գիտակցութիւն մեջ բնական ու հասարակական երևութիւնների ազնաւոված, ֆանտաստիկ արտացոլում, որպես գերբնական ուժերի, զանազան աստվածների ու սղիների զոյթիւնն նկատմամբ գրեթեբոլոր յուրահատուկ հավատք, կրոնը նախորդն ժամանակներից մինչև մեր օրերը փաստորեն կատարել է միայն մի սև գործ: Դրանով թունավորվել է աշխատավոր մասսաների գիտակցութիւնը և փորձ է արվել այդ մասսաների շրջանում արմատավորել այն համոզումը, թե հասարակութիւնն մեջ մարդու կողմից մարդու շահագործումը, ուրեմն և հարստութիւնն ու աղքատութիւնն բնեռացումը բնական են և անհրաժեշտ: Մարքսը մատնանշում է, որ կրոնը՝ զա ճնշված արարածի հոռուչանքն է, անսիրտ աշխարհի սիրտը, այնպես, ինչպես նա անհոգի կարգերի օրին է: Կրոնը ժողովրդի օպիումն է՝ Հավատացյալները կրոնի և պաշտամունքի մեջ իրենց երևակայական երբանկութիւնն են փնտրում, որը նրանց իրական երբանկութիւնն պահանջն է²⁴, Վ. Ի. Լենինը

²⁴ Տե՛ս Կ. Մարքս և Փ. Էնգելս, Օ բուլետեն, Մ., 1955, էջ 63:

գրում է, որ «Մամանակակից բոլոր կրոններն ու եկեղեցիները, բոլոր և ամեն տեսակի կրոնական կազմակերպությունները մարքսիզմը միշտ էլ դիտում է իրրն քրիստոնական սեակցիայի օրգաններ, որոնք ծառայում են բանվոր պատկարիչ շահագործման ու թմրեցուցումը պաշտպանելուն»²⁵։ Այլ առիթներով Վ. Ի. Լենինը ցույց է տալիս, որ ասածու իդեան միշտ էլ «...ճնշված դասակարգերին կաշկանդել է այն հավատով, թե ճնշողները ասավածային են»²⁶, որ «միլիոնավոր մեղքեր, ստորություններ, բռնություններ ու ֆիզիկական վարակներ անհամեմատ հեշտ են բացահայտվում բազմության կողմից, ուստի և համեմատաբար պակաս վտանգավոր են, քան նուրբ, հոգևոր, ամենաշքեղ «իդեական» կոստյումներով զգեստավորված աստվածի իդեան»²⁷։

Այսպիսին է եղել կրոնը իր հազարամյա պատմության մեջ և զրանով պետք է բացատրել այն հանցամանքը, որ շահագործողներն իրենց տրամադրության տակ զանվող բոլոր միջոցների զեղով աշխատել են պաշտպանել ու հավերժացնել զրա գոյությունը։ Այդ պաշտպանությունը, ի թիվս բազմաթիվ այլ միջոցների, իրականացվել է նաև քրեական դատան պատիժների օգնությամբ։ Նրանց այս գործունեությունն ըստ էության ոչ թե հասարակության համար վտանգավոր արարքներ կատարած անձանց պատժել է նշանակել, այլ՝ բազմահազար անմեղ մարդկանց նկատմամբ ամենածանրագույն հանցագործությունների կատարում։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլոր կրոններին, այդ թվում՝ քրիստոնեության պատմության ճանապարհների սուպակի օճրագործություններ են կատարվել ամեն անգամ, երբ խոսքը վերաբերվել է շահագործողների ու ճնշողների տնտեսական և հասարակական-քաղաքական շահերի պաշտպանությանը։

Գարեբի ընթացքում եկեղեցու գործիչների դրդմամբ ու մասնակցությամբ, այդ շահերի պաշտպանության համար կրոնի թույնով թունալորված զանազան խառնամբուխներ միլիոնավոր մարդկանց են բնաջնջել երկրի երեսից։ Նրանց արյունոտ արշավանքների հետևանքով ամբողջ ցեղախմբեր, քաղվորներն և նույնիսկ պետություններ են անհետացել պատմության բեմից, դիտության և կուլտուրայի անկրկների հուշարձաններ են հիմնակործան արվել։ Չկան այնպիսի կեղտոտություններ, որոնց ձեռք չեն մեկնել շահագործող-

ներն ու պաշտամունքի սպասավորները՝ կրոնն ու պաշտամունքը պաշտպանելու և պահպանելու պատրվակով։

Քրեական իրավունքի պատմության մեջ կրոնական հանցագործությունները ամենից հաճախ նախատեսվել են կանոնական իրավունքի ակտերում և պատժվել են այսպես կոչված հոգևոր դատարանների կամ բարձրաստիճան հոգևորականների կողմից։ Բայց պաշտամունքի սպասավորների և աշխարհիկ շահագործողների շահերի սերտագման փաստը պատմական դերը շրջանում համարյա բոլոր երկրներում հիմք է տվել այն բանին, որ այդ հանցագործությունների պատժելիության մասին համապատասխան քրեական-իրավական նորմեր, նույնիսկ առանձին դատիներ մտցվել են նաև քրեականոր, քաղաքացիական կշիռի հատար գրված օրենսգրքերի մեջ։ Մինչև հիմա էլ բուրժուական շատ պետությունների քրեական օրենսգրքերի հատուկ մասերում առանձին դատիներ կան, որոնք նախատեսում են «կրոնական», «պաշտամունքի դեմ ուղղված», «կրոնական զղոցմունքների դեմ սոսնճող» և նման հանցագործություններ։

Շահագործողական հասարակությունների պատմության ընթացքում կրոնը միաժամանակ հզոր միջոց է եղել շահագործվող մասսաների զստակազային պետակցությունը թթացնելու՝ նրանց աղգային-ազատագրական, ընդհանրապես քաղաքական պայքարի, սոցիալական անարգարություններ տեսնելու կամ դիտակցելու հնարավորություններից հեռու պահելու համար։ Դրանով պետք է բացատրել, որ տիրապետող բոլոր դասակարգերն էլ անհիշելի մամանակներից կրոնի զեմ զրսերով ուղ մարդկային ամեն մի աննշան վարքազիմ կամ արարք հանցագործություն են հայտարարել, այլ կերպ ասած, նորանոր հանցակազմեր են ստեղծել։ Ընկալ, խոսելով կաթողիկոս հոգևորականության մասին, մասուննելում է, որ միջին դարերում այդ «...հոգևորականությունը մարդկային բնության նկատմամբ իր ունեցած մտայլ հայացքի ուժով, մի հայացք, որ նա իր պաղեցության շնորհիվ մտքերն էր քրեական օրենսդրության մեջ, ստեղծել էր մեծ քանակությամբ հանցագործություններ, որով թաշտում էր մեղքերը»²⁸, այսինքն մարդկանց դատանաբար հետապնդում ու պատժում էր։

Պատմական փաստերն անհերքելի կերպով հաստատում են, որ էնզելսի այս միտքը իր ճշտությունը պահպանում է բոլոր երեք հումաշխարհային կրոնների՝ քրիստոնեության, բուդդայականության,

25 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 501:
26 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 125:
27 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 119:

Պ. К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XI, ч. II, стр. 246.

մասնագիտականության (խոյամ) և բոլոր, այսպես կոչված, ենթաուղղությունների՝ ազանդների նկատմամբ:

Անդրազանալով քննարկվող հարցին Վ. Բ. Լենինը, իր հերթին, գրեթե 1905 թ. մերկացնում է նման հանցակազմեր բովանդակող օրենսդրության սեպտեմբեր, հակամարդկային էությունը: Նա ընդհանրապես դատապարտում է այն ժամանակների քրեական արարադատության դաժանությունը, երբ գոյություն ունեին ու կիրառվում էին միջնադարյան ինկվիզիտորական օրենքները, որոնք սակայն գտնվում նախահեղափոխական Ռուսաստանի քրեական օրենսդրքերում ու կանոնադրություններում, «հետագայում էին հավատի կամ անհավատության համար, քունանում էին մարդու խղճի վրա, արքունական պաշտոններն ու արքունական եկամուտները կասում էին պետական-եկեղեցական այս կամ այն օգու բաշխման հետ»²⁰:

Այսպիսի բնույթ ունեին կրոնական հանցագործությունները: Այսպիսին էր զրանց անտեսական և հասարակական-քաղաքական բովանդակությունը:

Ընդհարումները սովորաբար տեղի էին ունենում տոնախմբությունների ժամանակ, երբ Հեթանոսության հավատքի պաշտպաններն ավելի խոր կերպով էին ապուրմ իրենց կրոնական զգացմունքների ոտնահարումը: Քրիստոնեությունը, որպես նոր կրոն, արհամարհվում էր նույնիսկ ոչ հեռուդական քրիստոնյա մարդկանց կողմից: Այս տեսակետից ուշադրով է հետևյալ դեպքը, որ Բուզանքը մեջ է բերում. Հուսիկ կաթողիկոսի օրդիները Պապը և Աթանազիոսը, բյուրովիև հակում առնենալով կրոնական գաղափար, դարձել էին դիմադրականներ և սպրում էին Հեթանոսների պես. մի օր նրանք գնում են Աշտիշաար, սր իրենց հոր պատի՛ Քրիզոստոսի օրդինը, նախաձեռնությունը շինելի էր առաջին եկեղեցին և սկսում են ծաղրել այն: Դրանից հետո նրանք մտնում են այնտեղի հայսկողպտանոցը և քրմայէին անդ զինի բողոք և վարձակօր և կուսանօր և կատակօր, զտուրք և զնտիրական տեղօրն բամահելա, կտխան անէլին: Եթե նոր կրոնի նկատմամբ այսպես էին հոխորտացել Պապն ու Աթանազիոսը՝ լուսավորիչ այս ժառանգները, ապա հասկանալի է, թե ինչ վերաբերմունք կարող էր ցույց տալ Հեթանոսական ամբողջը դեպի իր կրոնը, որ դարձրե շարունակի նրա համար հոգևոր սնունդ էր հանդիսացել: Եվ պատահական չէ, որ Հին կրոնը հարմար առիթի դեպքում վերականգնում էր իր իրավունքները և նոր կրոնին ու նրա սպասավորներին ասպարեզից զուրս հանում: Այսպես, հայտնի է, որ ներսեսի մահից հետո շատ անվանի հայեր նորից նախկին կրոնի կողմն անցան, նրանք կուսեր կանգնեցրին և սկսեցին ազատորեն պաշտել իրենց նախնիների դավանած զորությունները: Նրանք այդ անում էին որոշ հայ թագավորների զաղտնի կամ րացահայտ թողալովության պայմաններում³⁴:

Ահա սա էր այն սոցիալական հոգը, որ պայմանավորում էր Հեթանոսության դեմ քրիստոնեության բորբոքած դարավոր հալածանքը, մի հալածանք, որի օգրին զործում էին կանոնական-քրեական օրենքները այս բառի ժամանակակից իմաստով: Այդ օրենքները ժամանակի ընթացքում իրենց արտահայտությունը գտան Հայոց կանոնադրում: Դրանք նախատեսում էին ծանր պատիժներ և քրիստոնեական եկեղեցու հոգևոր հայրերն ու զատարանները այդ պատվանքով պայքարում էին Հեթանոսական հակումները զրսերող և նոր պաշտամունքի տեսակետից վտանգավորություն ներկայացնող արարքներ կատարող մարդկանց դեմ՝ ապահովելով քրիստոնեության տարածման ու արմատավորման գործի հաջողությունը:

Աղանդավորություն: Աղանդավորները հնագույն մարդկանց այն խմբերն էին, որոնք, առանձնահալով պաշտոնական կրոնից, կազմում էին սեփական, կրոնական զուլտեցներն ու ուղղություններն՝ նման աղանդներ հայտնի են բոլոր երեք համաշխարհային կրոններին՝ քրիստոնեությունը, մահմեդականությունը և բուդդայականությունը: Աղանդավորների խմբավորումների մեջ ընդգրկվում էին որպես կանոն, մարդկանց այն խավերը, որոնք օգտվ էին իրենց առեռնական վիճակից, տիրապետող հասարակական հարաբերություններից և սահմանված պետական-քաղաքական ուժիմից:

Կրոնական ուսմունքների պատմությունը ցույց է տալիս, որ աղանդավորների այդ խմբերը հասնախ ծայրահեղ թշնամանքով էին վերաբերվում իրենց զաղափարական-քաղաքական հակառակորդների նկատմամբ: Այդ թշնամանքը միշտ չէ, որ պայմանավորված էր հավատքի նկատմամբ սամվոզ սոխոսանդության աստիճանով: Դրա պատճառները վերջին հաշվով նյութա-տնտեսական Հիմք և հասարակական-քաղաքական բնույթ ունեին:

Աղանդներով առանձնապես հարուստ է եղել քրիստոնեությունը: Տակավին վաղ շրջանի հռոմեական կայսրության օրոք դրանք լուրջ կերպով իրենց զգացնել էին տալիս: Այստեղ լայն տարածում էին ստացել արիականությունն ու նեստորականությունը, որոնց հարում էին զուլտեցիները, արհեստավորները և անզամ պրովինցիաները հարուստ բնակչության օպորտիստ խավերը: Տեղաբնակյա կարգերի պայմաններում աղանդները ոչ միայն շվերացվեցին, այլ, ընդհակառակը, ավելի բուզմացան և, որը կարևորն է, ավելի ընդարձակեցին իրենց զործնունդության շրջանակը: Այստեղ հասարակական-քաղաքական համարյա բոլոր ուսմունքների հետեղները կա-

³⁴ Տե՛ս Մ. Մ. Ազգադրական նիթեր Փաստաք Բուզանքուցու Հայոց պատմության մեջ (Ազգադրական հանդես, Հ. 25, 2-րդ գիրք, Քիֆիս, 1914), էջ 6-7:

դատարարիցին դանազան ազանդներին ձևով՝ վաղ միջնադարում Հայաստանում հանդես եկան պավլիկյանները, բորբորիտները և ամենատարբեր անուններ կրող զանազան այլ աղանդներ: Մյուսը իրենց գոյությունը շարունակեցին ընդհուպ մինչև ֆեոդալական կարգերի բաշխման և բուրժուական հասարակություն կազմավորման ժամանակները: Հայ հողի վրա շատ երկար ժամանակ իրենց զգացնել էին տալիս թուրքահեթանոսները:

Քրիստոնեական եկեղեցին սկզբից եկե՛ք թշնամաբար տրամադրվեց օպոզիցիոն ազանդների նկատմամբ: Նա պրոպրիետար բուրժուական հարաբերություններին պաշտոնապես հերետիկոսներ անվանեց և բռնեց սրանց ֆիզիկական ունչազցան գիծը: Այդ սև գործի մեջ նրան մեծ շահով օգնում էին ֆեոդալական պետությունների աշխարհիկ իշխանավորները: Պատճառն այն էր, որ ֆեոդալիզմի դեմ ուղղված հեղափոխական օպոզիցիան, ինչպես նկատում է Էգգեյսը, այդ շրջանում մերթ ընդ մերթ զրևեղում էր նաև բացորոշ հերետիկոսությունյան ձևով: Հերետիկոսների, այսինքն՝ ազանդավորների դեմ անողոր սրերները հրատարակվեցին: Մերկ բռնությունը և իրավունքը այն զենքերն էին, որոնք պատմական այդ շրջանում հավասար դորությունը կիրառվում էին նրանց դեմ:

Եվրոպայում հարյուրավոր քաղաքներ և գաղափար այլ բնակավայրեր հիմնակործան արվեցին այն պատճառով, որ նրանցում իբրև թե բնակվում էին հերետիկոսներ: Ըննց միայն Բեռլի քաղաքի զրավման ժամանակ եռադափառ քրիստոնեականության որպես հերետիկոսների սրի քաշեցին համարյա 20.000 մարդ: Ե... Բեռլի քաղաքը վերցվեց. ընդ որում մերոնք շինակների կոտորվողների ոչ պատվաստիճանը, ոչ հասակը, ոչ սեռը, մեր սրից ընկան համարյա 20.000 մարդ: Մեծ էր թշնամիների կոտորումը, ամբողջ քաղաքը կողոպտվեց և այրվեց, զա ասավածային ահաբեկ պատժի մի հրաշալի վկայություն էր³⁵, այսպես էր ղեկիցում նշված քաղաքի կոտորածի մասին շոտի Ինոկենտիոս 3-րդ պապին՝ զեպրեբին մասնակից լեզատներից մեկը:

Այսպիսով, սկսած XII դարի առաջին կեսերից մինչև XVIII դարի կեսերը կաթոլիկ եկեղեցու հողերը գատարանները, ինչպես նաև աշխարհիկ (պետական) գատարան հաստատությունները հարչուր հաղարավոր մարդկանց դատապարտեցին մահվան և այրեցին խորովիների վրա՝ այն մեղադրանքով, թե նրանք բուրժուական հերետիկոսներ են:

Աղանդավորներն ու նրանց կազմակերպությունները վտանգավոր էին նաև հայ եկեղեցու և հայ ֆեոդալների դասակարգապետական շահերի համար: Քաղաքացիական Հայաստան, իսկ երբեմն էլ կազմավորվելով հայ հողի վրա, նրանք ու նրանց հիմախները հանդես էին գալիս եկեղեցու դեմ, ժխտում էին քրիստոնեական կրոնի սկզբունքները, բողոքում, իսկ հաճախ էլ բացահայտ գիտված երույթներ էին կազմակերպում՝ տիրող սոցիալական անարդարացի կարգերը տապալելու նպատակով: Այս պատճառով էլ նրանց դեմ հանդես էին գալիս հայոց եկեղեցին և հայ հոգևորականությունը: Այդ պայքարում, որպես կանոն, վերջիններիս կողմն էին կանգնում հայ ֆեոդալներն իրենք: Մեր պատմիչների մտքացածքով փաստեր են բերվում այն մասին, թե ինչպես եկեղեցու հողերը սպասավորները ֆեոդալներին, իսկ որոշ զեպրեբում էլ օտարերկրյա ղեկաված ուժերի ու պաշտոնատար անձանց ամենապակտիվ մասնակցությունը հետապնդում և պատժում էին տարբեր ծագում ունեցող և զանազան նպատակներ հետապնդող ազանդավորական շարժումների մասնակիցներին: Այսպես, ազանդավորների, առանձնապես պավլիկյանների, մանիքեցիների և թուրքահեթանոսների նկատմամբ հարկ եղած զեպրում կիրառվում էին քրեական խիստ պատիժներ, պատիժներ, որոնք նախատեսված էին նախ և առաջ հայ եկեղեցական-կանոնական իրավունքի համապատասխան ակադեմիայում: Դվինի 554 թ. երկրորդ ժողովում ընդունված կանոններից մեկը հավաստեցանքներին ուղղակի կերպով պատասխանեցում էր ազանդավորներին բնակության սեղ լուսու և հետապնդողն էլ ու հարածն էր նրանց: Դվինի 719 թ. 5-րդ ժողովում ընդունված կանոնների մեջ, որոնք նվիրված էին եկեղեցու գործերի բարեկարգության հարցերին, և առաջ պես խոսվում էր ազանդավորներին, այդ թվում նախ և առաջ պավլիկյաններին հետապնդելու, հարկ եղած զեպրում նրանց ու նրանց հետ շփվողներին խոտորեն պատժելու անհրաժեշտություն մասին. «Մի՛ բնականալի տեղից շարաղանդից պողիկյանց, մի՛ ազոթիլ անդ և մի՛ ընդանենալ առ նոսա, և մի՛ խոսակից լինել ընդ նոսա, այլ ամենակին հեռանալ և զարշել ի նոցանէ, զի որդիք սատանայի են նորա, և լուցիկք հափտեանական հրոյն, և էթը որ յարեացի ի նոսա կամ բարեկամացի, խոշտանդանք և ծանր պատժով պատուհասեցի, մինչև զդատուացի, և էթէ վերտախ յարեացի ի նոսա, հատիք իբրև ժանտախտ յանդամոց եկեղեցույն Քրիստոսի»: Եթե ընդունենք պատմական նշմարիտ փաստը, որ նշված ժողովը գումարվեց այն ժամանակ, երբ հունական կրոնական զանա-

³⁵ Н. Ш. Грацианский и С. Д. Сказкин, Хрестоматия по истории средних веков, т. 2, ч. 1, М., 1938, стр. 255.

գան ծանր ու արարողություններ էին մտաբ գործել Հայաստան, երբ պավլիկյանները անկարգություններ էին հրահրում երկրում, էլ ավելի հասկանալի կզատանս վերջո՛րշյալ և նման կանոնների, այսինքն՝ վերջին հաշվով քրեական օրենքների երևան գալու գասակարգային-բազարական պատճառները:

Երբ հայ հողի վրա կազմավորվեց ու լայնորեն տարածվեց թեղաբնակչությունների շարժումը, այդ շարժանը հարողների դեմ նույնպես կատարի հալածանք սկսվեց: Ապաստմանը դեմ այստեղ ևս հավասար շահագրգռվածությամբ հանդես եկան հողեր և աշխարհիկ իշխանավորները: Մրանք իրենց տրամադրության տակ պաշարքի մի շարք միջոցներ ունեին և այդ միջոցների թվում իր հատուկ տեղն էր զբաղում նաև քրեական պաշտիժը. Օրենքները և զրանց կիրառող զատական օրգաններն ու բարձրաստիճան հոգեվորականները անխնա էին թեղաբնակչությունների նկատմամբ: Վերջիններս մասսայաբար արտարվեցին ընդհի սահմաններից, ենթարկվեցին մարմնական պատիժների և նույնիսկ մահապատժի: Ենդեղեցական մի բանի ժողովներ զբաղվեցին թեղաբնակյան այդ «կույրերի» դեմ տարվող պաշարքի մեթոդների մշակման հարցով: Երանց դեմ զանազան լրացուցիչ օրենքներ ընդունվեցին, օրենքներ, որոնք հնարավորություն էին տալիս «մեղավորներին» խորանել ազվեսագրողով, մի պատիժ, որ նույնիսկ եպիսկոպոսները սառնասրբությունյաբ կիրառում էին: Պատմական աղբյուրները վկայում են, որ թեղաբնակյան շարժմանը հարող հոգեորականներն անզամ կարգալույծ էին արվում ու որպես կրոնական ծանրագույն հանցագործություն կատարած անձինք խատարեն պատժվում էին:

Անմարդկայնորեն զաժան էին Քեղոցուտպոլիսի (Կարին, էրզրում) եկեղեցական ժողովներում նետտորականներին և քաղկեզոնականներին հարողների դեմ ընդունված կանոնները: Այդ կանոններից մեկը աղջարարում և միաժամանակ պարտավորեցնում էր ստեղ ու պատժել նման հերձվածողներին. «...աւանդեմ կանոնականս սահմանադրութեամբս հանար ժառանգաւորաց սբոյշ եկեղեցւոյ և սպասաւորաց խորհրդական սեղանոյ. զի լուսբ լուր սարսափելի և ծանրագոյն. թէ ի տեղիս տեղիս յառաջնորդաց եկեղեցւոյ ոմանք խմորեալ ի նետտրականսց և ի քաղկեզոնականսց. ապականեն զուտրք խորհուրդն խառնմամբ արեւմտեւ և շրոյ: Արգ, յայսմհետ եթէ եպիսկոպոս կամ երեց վոցի, որ այսպիսի շար տուրութեամբ աւանդեցել զուտրք խորհուրդն, լուծցի յամենայն բահանայական պատուոյն, և ի սուրբ ժողովոյս նդովնայ եղիցի: Ապա թէ տղիտութեամբ որ արարեալ խոտտման լիցի, ընկալիցի զայն-

պիսին սուր եկեղեցի Գ ամաց ապաշխարութեամբ, իսկ եթէ ժողորդական որ հաղորդեցի տղիտութեամբ, այնպիսին հերձուածողական սպականեալ օրինաց, յարտաբոյ եկեղեցւոյ ապաշխարլ ամս թ իսկ կամօք և գիտութեամբ արարողքն զամս Զ արտաբոլ եկեղեցւոյ լիցի մեծաւ զղջմամբ. և մտազպանս հայելով ի բերմագոյն արտատուն, արժանաւորեցել խորհրդոյն: Ապա թէ որ ոչ ապաշխարեցել և արհամարեցել զպատուիրեայս ի մէջը, ի Սուրբ ժողովոյն նզովեալ եղիցի»: Լինելով բոս էություն քրեականիրական նորմ, այս կանոնը արարքի պատմելիության հարցը լուծելիս վճռական նշանակություն էր տալիս ոչ միայն զրա կատարման ժամանակ զբերողված մեղքի ձևին («տղիտութեամբ որ արարեալ», «կամօք և գիտութեամբ արարողք»), այլև՝ հանցագործի կողմից զղջալու բուն փաստին: Վերջինս համարվում էր քրեական պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Որ ազանդավորները հետապնդվել ու ենթարկվել են խտագույն քրեական և եկեղեցական-կանոնական պատիժների, այդ մասին անուղղակի կերպով վկայում են նաև այն բազմաթիվ ասույթները, որոնցով հարուստ են մեր միջնադարյան հոգևոր և աշխարհիկ գործիչների ու մտածողների աշխատությունները: Այդ ասույթների մեջ նկատվում է մի սեսակ անսքող առեղծված ուղղված ազանդավորների, նրանց հարողների, ինչպես նաև նրանց հայացքներով սպրողների, այդ հայացքներն ընդհանրապես տարածողների դեմ: Եթե նկատ ունենանք, որ այդ գործիչների ու մտածողների բերանով շատ հաճախ խոսել է սիրող սոցիալական իսպիբի՝ ազանդավորների նկատմամբ պատմականորեն զբերված պաշտոնական վերաբերմունքը, ապա է՛լ ավելի հավաստի կդառնա մեր գրույթի ճշտությունը:

Ահա մի բանի մեջբերումներ, որոնցում նման ասույթները իրենց ուղղակի արտահայտությունն են գտել: Արդիստ եպիսկոպոսի թիլում մենք կարգում ենք, թե ինչպես եկեղեցու հոգևոր հայրեր... «...ժողովեցան ի սրբոյ Էջուլոյն և լիբրանց ժամանակի հայածեցին զմուղրեցուցիչս (այսինքն նետտորականներին և մյուս աղանդավորներին, Ա. Ք.) որպէս զայս սպականիչս ի հատկ Բիբոտոսի, և զի նահատակեան հատով, և նզովեցին զամենայն հերձուածողս: Ահա զրեւս են անուանք նոցա ի գիրս կենդանութեան, և մեք որդիք և ժառանգք հաւատոյ նոցա քանզի նախանձաւորք նոցա ենք. և զաւրանամք հաւատով, նզովեմք զհերձուածողս պատաշինս և զմիջինս և զվերջինս...»³⁶: Մեկ այլ թիլում

հիշատակվում է, որ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների բարձրաստիճան գործիչները հավաքվում են և որոշում անողորմաբար հանդես գալ բոլոր նրանց դեմ, ովքեր պատկանում են ազանգավորների այս կամ այն խմբերին, կամ ովքեր ընդհանրապես սայլաբուսում են դեպի ազանգավորությունը... Եստի՞մաննեցաք ըստ հրամանի սուրբ առաքելոցն, և երանելի ուղղափառ վարդապետաց, ամենևինք մի վիճել ընդ նոսա (ազանգավորների) հակառակարժնությունամբ, այլ հեռանալ ի նոցանեն՝ աղտերս որպէս ի թշնամեաց Քրիստոսի Աստուծոյ և մեզ կալ ի նմին ուխտի հաստատուն որպէս արարաք և գործեցաք հանդերձ Աստուծոյ... Ապա թէ իցէ որ որ սայլաբոցից է ի մէջ կամ ի դուակէ և կամ զուակեց զաւակէ մերմէ մանն յափտեան, և կամ իցի թիբիս և որանայ յուխտէ հասարակաց. և խորհիցի առնել ինչ ընդդիմադրութիւն կամակոր մտաք, բանի կամ գործով. հաւանեալ երբեք՝ մյուս անգամ շինութիւն քանդման ավերեցելոյն միաբանեալ նետաորիկանուց, և հեռանալ ի մէջ այսու մասամբ՝ և առեալ զանման յետս կալով ի մեծ խորհորոյց քրիստոնէութեան: Նողովեսցի հոգով, նողովեսցի մարմնով և ամենայն կենցաղի իրով ի սուրբ երրորդութիւնն. և սրշուալ լիցի հասլածանաք, և արտաքս ընկեցեալ լիցի յամենայն ուղղափառաց, ի ժամանակի դիպեցելոյ նովին անիծիք, եթէ ի կաթողիկոսաց որ իցէ, եթէ յեպիսկոպոսաց, եթէ քահանայից, եթէ յիշխանաց, եթէ յալ՝ ժողովրդականաց: Եւ արարաք զայս հաստատութիւն պատուիրանի մեզ և որդւոյ, և որդւոյ որդւոց մերոյ, մինչև ի կատարումն ժամանակաց, եւ կնքեցաք առաջին սրտիք մերովք յուսովն Քրիստոսի Աստուծոյ մերոյ և ապա մատանեաք մերովք³⁷: Այսպիսի էր ազանգավորների նկատմամբ տիրող մտայնությունը հարյուրամյակների շարունակ:

Հետազոտվող հարցի տեսակետից անշափ ուշադրավ են Գրիգոր Մագիստրոսի թղթերում տեղ գտած բազմաթիվ դատողություններն ու մտքերը: Մագիստրոսը ոչ միայն բացահայտ առեկոթյամբ է խոսում թուրքականների շարժման և նրա ղեկավար գործիչների հասցեին, այլև մի ամբողջ շարք սրբակտիկ միջոցառումների է դիմում այդ շարժումը շախշախելու, նրա ղեկավարներին ու առաջնորդներին ֆիզիկապես ունչացնելու կամ խեղձացումելու համար: Այդ նպատակով նա օգտագործում է օտարերկրյա զինված ուժերը և նույնիսկ դատական հաստատությունները: Սուրբ, հուրը, դատական ու վարչական պատիժները, ինչպես նաև զրկարություններն ու ասարեկումը այն հիմնական զենքերն էին,

որոնց օգնությամբ միջնադարյան այդ գործիչը հանդես եկավ թուրքականիցների դեմ և իր զազրելի զիջը կատարեց նրանց ունչացնելու, Հայաստանի սահմաններից վտարելու և ընդհանրապես, այս բաղի լայն առումով, նրանց անողորմաբար պատժելու գործում: Խոսելով թուրքականիցների շարժման և այդ շարժման ղեկավար դեմքերից մեկի՝ Սմբատի մասին, նա բարբառում է. «Սմբատս այն և որ զկնի նորա շուք և զալքը առանց քահանայութեան կերպի: Եստի՞մանայի, եկեալ ի գաւառեղ Մաղկոսնէ ի գեղըէ Զարհուտաւանէ, եկեալ քեակեցաւ ի Թուրքակա և ուսուցանել սկսաւ զամենայն շարիս բոլոր, զոր ինչ ի կենցաղումս մտածութիւն կրէ. որ ըստ գործոց, և որ ըստ հաւատոց թերութեանց. Եւ քարոզիք զբոլոր քահանայական ներգործութիւնս ունչացուցանել. մանաւանդ եթէ անտի վարկանել. և նստէր բազրազատօք իրբն զքահանայապետ. և ոչ իշխել յայտնի եպիսկոպոսոսն իւր ձեռնադրել կամ քահանայս կամ սարկաւազուսն կամ օրհնութիւնս իւշոց, այլ ասէր ոչ այլ ինչ էլ այլ, քայց վասն խաբելոյ ժողովրդեանն... Սապէս ոչ երբէք զողջդ այդ նշանակեալ յայտնեն զդարան կորստեանն իւրեանց. այլ յորժամ հարցանէ որ. այլուր նշանակեն մուրեցուցանելով ի շաղագջ իրեանց. յով՞ մուրեքաք են և աւանդեցին զչար ասանդութիւն իւրեանց այսպէս յայտնի խոստովանել և հոգով ոչ հաւատալ. և յորժամ ձեռն արկանեն քրիստոնեանցն զանիծեալս զՍմբատ և որ զկնի նորա այսոքիկ Թողոս, Անանաս, Աբրայ, Սարգիս, Կիրիղ, Յեսու, այսոքիկ են, որ նորին ազանգով կացին աւելի քան զձ և զՀ ամ մինչև ցայս, անիծեալ զնոսա բոլոր Հայաստանեաց և Աղուսանից քահանայապետացն, զգոշացուցին ոչ մերձեալս իսկ առ նոսա և ոչ ճաշակէ և ոչ զրուցել և ոչ յարկս նոցա մտանել³⁸: Այսպիսին են թուրքականիցները Գրիգոր Մագիստրոսի պատկերացմամբ:

Մագիստրոսը շարունակում է իր վարկարկելի խոսքերը թուրքականիցների մասին. «Այսպես ոչ եթէ հերձուած զոցա միոյ պատճառի է կամ երկուց կամ երից այլ յամենայն շարափառացն ի կիւտոյ, ի դիթիվեանէ, ի հմայից, ի կախարհութեանց, յանհաւատութեանց, յամենեցունց զվրոնչ շարութեան ի մարջ ժողովեալ հերձուածս, հաւանեացն այնժ աստուածամարտ և ցանկապատառ դիւմուղի անորինի Սմբատայ օրենսդնէ, որպէս վերագոյնս գրեալ է, զուսաշարից թողեալ ձանապարհ, հետեցեան կուրաշախիդ կուպարական կորստեան ուղեգնացութեան...»³⁹:

38 Կ. Խոստանեան, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ազգերանդարպուլ, 1910, էջ 154:

39 Նույն անգը, էջ 160:

Մի քանի ամիսներով նա պարծենում էր, թե ինչպես հանդիպելով Թևոդորակեցիներին, հայածել ու բրևական պատմիներով պատմել է նրանց, Ե... հանդիպեցայ տարուհանին Թևոդորակաց, յորում Թևոդայ կայր խմորն Սաղուկեցւոց և բորբորէր Թևոդայ ամբնեն շարութեան, զոր զօրութեամբ Աստուծոյ ի ազօթիք մերոյ սուրբ շահանայականին և Լուսավորչին և նախաժօրն հրաման ընկալնալ ի Տեանէլ յատուս մերոյ սուրբ բրիտանասպանակալ ինքնակալ արքային Կոստանդայ Մանսմախին մարտնցի զամենայն օրումն շարութեան և պղծութեան»⁴⁰։ «Եւ քնակեալք էին Շնախանն այն արք հաներծիք կրօնաւորաց և կանանց բազմութիւնն բողոք, որց հրամայեցաք տապալել զհիմունն յարկան և ճրճից ասեմն և զինքնան հանել ի սահմանաց մերոց, այլ ոչ զոր վնասեցաք մարմնական պատուհասիք, թեպէտ և յօրէնսն հրամայէ զվերջին պատուհասն կրել նոցա. որպէս և նախքան զմեզ բազում զօրավարք և պետք ի սուր սուսերի մատենցին զնոսա և անողորմաբոր ոչ խնայեցին ի ձերս և ի մանկունս, որպէս արժան էր, նաև մեր քահանայականոց ի կիզումն դիմաց և ի դրոշմ աղունակերպ, քանզի իբրև զաղուէսս զողս ապականիչս ալոցաց... և զմանց հրամայեցին փորել զաշս. կոր, առ, էր մտօք առ իմանալիսն, ի զպալեացս ևս պարտ է ձեզ զազարնի»...⁴¹։ «Եվ եկեալ ի Միջագետն, հանդիպեցայ մահարբն և մրրկեալ պղտորեալ վտակաց, որ հոսեր մահացու արտաթորեալ յանիժելոյն Սմբատայ որ ի Քոնդրակաց։ Եւ մարքեալ զայնոսիկ, իտրպից չու արարեալ մինչև յակն յորում բունեալ էր իժն և քարին և վիշտիկ շարութեանս Եւ խնայ զնոսա տապալեցի զորորեակ հաւն իմ զԱշտիշատն, և անուանցի զղբղբոջման վկայարանն սրբոյն Փեղզեայ, որ զրեան էր ի շանէն Սմբատայ մինչ»⁴²։

Ահա այսպես էին հետապնդում ու պատժում ազնուզավորական շարժումները հին և միջնադարյան Հայաստանում։ Տիրապետող հասարակական խավերը անողոր էին բոլոր նրանց նկատմամբ, ովքեր հորում էին այդ շարժումներին։ Ազանդավորները ենթարկվում էին ամեն կարգի պետական հարկադրական միջոցների և այդ միջոցների թվում կարեւոր տեղերից մեկը բունում էին քրեական-դատական պատիժները։ Այն հանգամանքը, որ պատմական նշված ժամանակաշրջանում Հայաստանում կենտրոնական պետականություն չի եղել, չի ժխտում պետական հարկա-

դրանքի, հետեւար և քրեական պատիժների կիրառման հնարավորությունը պատմական նույն շրջանում։

Կենսակն սուտ երգում և սուտ վկայություն։ Սուտ երգման հասկացությունն իր սկզբնական ձևով սերտորեն կապված է զերրնական ուժերի նկատմամբ մարդկանց կողմից տածվող հավատի հետ։ Հավատացնելով նման ուժերի գոյությունն ու այն բանին, որ դրանք իբրև թե ի վիճակի են պատժել օրինազանցներին, հոգևոր սպասավորները հարչուրմայակների ընթացքում մարդկանց զատիարակել են այն օգով, թե իբր կրօնական ճիշտ երգումը հանելի է աստծուն, իսկ սուտ երգումը, իբր՝ հակառակը, զօգհոյություն է առաջացնում նրա մեջ, թե իբր բոլոր սուտ երգում տվողները, որպես դատապարտելի արար կատարողներ, ենթակա են աստծու պատժին ու մարդկանց արգահատանին։ Ահա այն սերունքը, որն ընկած էր ստրկատիրական և Ֆեոդալական հասարակությունների իրավունքի ու բարոյախոսության հիմքում։

Բուրժուական հասարակության առաջացմամբ և բուրժուական իրավունքի ու բարոյախոսության կազմավորմամբ «երգում» սուտ երգում» հասկացությունները բուրժուական նոր իմաստ և նոր ըմբանցակություն են ստանում։ Այստեղ սուտ երգում հասկացությունը փաստորեն նույնանում է զիտավորությամբ սուտ ցուցմունք կամ վկայություն տալու հասկացության հետ։ այսինքն՝ օրբ բանի հետ, երբ մեկը դատարանին կամ դրան հավասարազոր արգանին սուտ երգման միջոցով կեզծ ցուցմունք է տալիս, այլ կերպ ասած, երբ նա կատարում է քրեականորեն հետապնդելի և օրենքով նախատեսված որոշակի հանցավոր արարք։

Որպես ինքնուրույն հանցակազմ պարունակող արարքներ, սուտ երգումն ու սուտ ցուցմունքն ունեցել են իրենց պատմությունը։ Դրանց պատժելիություն մասին իրավական նորմերի առաջին անգամ մեկը հանդիպում ենք Համաբարբի օրենսդրում։ Այդ հուշարձանի 3-րդ հոդվածում, օրինակ, խոսված է սուտ վկայության մասին։ Սուտ վկայության պատժելիության հարցը չի անտեսվել մոսկիտական օրենքներում։ Երկրորդ օրենսցում մի ամբողջ շարք նորմեր կան, որոնց մեջ ուղղակի կերպով մատնանշվում է այդ արարքի պատժելիությունը (ԺԲ 15—19, ԺԼ 6—7, ԻԲ 19 և այլն)։

Ինչ վերաբերում է սուտ երգմանը, ապա այդ արարքի հանցակազմը նույնպես հայտնի է բոլոր ժողովուրդներին օրենքներին՝ զեռնա զարգացման սկզբնական փուլերից։ Մովսիսական օրենքները «թեյաբող» ԵՆովա անողոր աստվածը պատվիրում է հավատաց-

⁴⁰ Նույն տեղը, էջ 158։

⁴¹ Նույն տեղը, էջ 162։

⁴² Նույն տեղը, էջ 167։

լայնեերի «մի՛ երզնուցուք սուտ յսուտ յան իմ, և մի՛ պղծիցեք զանուն Տևան Աստուծոյ ձերոյ» (Ղևտացոց, ԺԹ 12): Սաղմոսի մեջ Մալի-բը զովմով է այն զրույթուցը, երբ մեկը «ծըրղուտ ընկերի իրում», և ոչ սոսէ» (Սաղմոս, ԺԳ 4): Բազմաթիվ այլ առիթներով նույն Սաղմոսի մեջ միմյանց են հավասարեցվում սպանությունը, զողութիւնը, անհավատությունը, խոսովությունը և երզմնաստությունը, երկմտիան բարբառում է. «Եւ զողանայցէք և սպանանիցէք, և շնայցէք, և երզուցուք սուտ...» (Նրեմիա, է 9), զրանով իսկ հավասարության նշան զննելով զողութիւն, սպանութիւն, անառակություն և սուտ երզման միջև:

Մովսիսական օրենքները սուտ երզման համար նույնիսկ մահապատիժ էին նախատեսում և դա միանգամայն հասկանալի պատճառով. սուտ երզումով ոտնձգվում էր «ամենաբարձրայից» զեմ, ոտնձգվում էր այն էություն զեմ, որն իբրև թե ստեղծել է ամեն բան:

Հոռմեական իրավունքը, ինչպես զարգացման վաղ շրջաններում, այնպես էլ կայսրության օրոք, երզումը ինքնուրույն Հանցագործություն չէր համարում, բացառությամբ այն զեպրերի, երբ դա զատուում էր զըպարտություն և միջոց՝ կայսրի պահանջանքին վատարանելու կամ ուրիշի զույրը հափշտակելու համար:

Այսպես էր լուծվում սուտ երզման պատժելիության հարցը: Ինչ վերաբերում է սուտ վկայությանը, այպա դա նույն այդ իրավունքին հայտնի էր շատ վաղ ժամանակներից. այն նախատեսված էր տակավին «Տասներկու տասնակներում»: Հետագայում, Սուլլայի ժամանակներից սկսած, զրա էությունը բացահայտող բնորոշումների մի ամբողջ սխտեմ է ստեղծվում: Այսպես, Կոնստանտին օրենքը սուտ վկայությունը համարում էր խարդախության հավասարազոր հանցագործություն և նրա համար նախատեսում էր դաժան պատիժ՝ հանցագործին զրկել շրից և ապաստանից (aquaе et ignis interdictio):

Սուտ երզումը և սուտ վկայությունը որպես հանցավոր արարքներ նախատեսված էին նաև միջնադարյան կանոնական իրավունքի հուշարձաններում: Սուրբկեղիվ-կրոնական սկզբունքից էլնելով սուտ երզումը համարվում էր հանցագործություն, որովհետև զրանով իբր վիրավորում կամ անարգում էին աստվածային ուժերին: Ինչ վերաբերում է երկրորդին՝ սուտ վկայությանը, այպա դրա տակ հոռմեական իրավունքը հասկանում էր զատարան կանչված մարդկանց կողմից իրենց հայտնի փաստերի ու հանգա-

մանքների անհնայտ սխալ շարաբան և միտումնավոր մեկնաբանում:

Միջնադարյան քրեական օրենքներն այդ արարքների համար դաժան պատիժներ էին նախատեսում: Կարոլինյան սուտ երզման համար նախատեսում էր պատվազրկում՝ զուզորդված ձեռքի մատների ձեռատման հետ: Ռուսական իրավունքը, տակավին Իվան Ահեդի զատաստանագրքի ժամանակներից, այդ նույն արարքը պատժում էր որպես ծանրագույն կրոնական հանցագործություն: Դատաստանագրքի լրացուցիչ հոդվածներում սահմանվում էր, որ եթև ուս զերին թախարհի անգաղ երզում տա, թե զերութունից լի փախի, բայց այդ երզումը թախարհի, այպա նույնիսկ զրա համար նա պետք է ենթարկվի տանանայա ապաշխարանքի ու ծանր նզովքի: Այսպես էր Ռուսաստանում պատժվում կրոնական սուտ երզումը: Ինչ վերաբերում է սուտ վկայությանը, այպա սա ամենուրեք և բոլոր զեպրերում պատժվում էր ամէլի զոժան պատիժներով:

Սուտ երզման և սուտ վկայության հասկացություններին ծանոթ էին նաև հին և միջնադարյան հայերը: Տակավին հիմնախոսության շրջանում նրանք երզվում էին իրենց աստվածների՝ արևի, լուսնի, աստղերի անունով: Քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո էլ այդ սովորույթը երկար ժամանակ մնացել էր: Հայոց լեզվում առ այսօր զոյություն ունեն արտահայտություններ, որոնց վրա նկատվում է հին պաշտամունքների կնիքը: Երզման առիթները բազմաթիվ են: Բոլոր զեպրերում էլ զրա հիմքերը, զոնև առերևույթ կերպով լուրջ լինելով, վերաբերում էին նախ և առաջ կենցաղային հարցերին: Այն բոլոր վեճերը, որոնք կարող էին զատարանի քննարկման հարց զանալ, հաճախ լուծվում էին երզումով, երզում, որ զատարանը՝ ինքը զատվողներից պահանջում էր:

Մանդակունին հաստատում է սուտ երզման հնարավորությունը նման զեպրերում: «Ոչ նեղիլ զոր և զրկիլ, և ոչ Բակառակութամբ երզունս աստանայական կատարել», ասում է նա իր ճաներից մեկում:

Այնուհետև երզվում էին քրեական ծանր հանցագործությունների ժամանակ: Միտիար Գուշ թվարկում է մի քանի նման հանցագործություններ (սպանություն, ավազակություն, զողություն, անստակություն և այլն), որոնց զեպրում, երբ վկաներ չէին լինում, պարտադր էր զանուն զատվողների երզումը: Վերահիշյալ զեպրերից բացի, երզվում էին կրոնի նկատմամբ հայատարեթմ մեայլու նկատառումներով: Երբ Միհրենեսը Հազկեղոսի զրզմամբ նամակ

է գրում հայերին, պահանջելով, որ նրանք հրաժարվեն քրիստոնեոսությունից և ընդունեն զբազաշտական կրոնը, հայերը դրան պատասխանում են մի ընդարձակ նամակով, որով շատագոյում են քրիստոնեությունը, գրանցել իսկ հաստատում երկնց նվիրվածությունը այդ կրոնին: Եվ որովհետև նրանց մեջ հնարավոր էին դավանանության գնացրեր, ուստի նրանք, տվյալ զնպատակ նրանց անվանի Տոգեկորականներն ու նահարարները, նորից թառերով ասած. «Անտուա երդմամբ երկն վկայութիւն՝ կեննք և մահու ի նմին կալ հաստատուն»: Սա երդում էր, որին, ինչպես հայոց պատմությանը հայտնի է, հավատարիմ մնացին հայ հոգևոր հայրերը անգամ Հայկերոսի ճանկն ընկնելուց հետո և ընդունեցին իրենց մահն առանց դժգոհելու: Երգումը տրվում էր նաև այն ժամանակ, երբ անդի էր ունենում մեծամեծ գործիչների կամ շարքային ընդդիմաց խմբավորում հանուն մի որևէ որոշակի նպատակի, երբ խորք վերաբերում էր ենթակազմության ու ճակատագրությանը, երբ նոր թագավորներ էին զահ բարձրանում և այլն: Հայ հին և միջնադարյան պատմագիրների աշխատություններից նման բազմամիվ՛ օրինակներ կարելի է բերել:

Հին և միջնադարյան հայ քրեական իրավունքում երգման ինստիտուտը գրեկորվում է որպես ապացույցի մի տեսակ: Մխիթար Գոշն այդ առումով երգմանը մեծ նշանակություն է տալիս: Նա երգում տալու և սման երգումն ընդունելի համարելու համար վիճամանակ որոշ պայմաններ է սահմանում. երգվողը անվագն 25 տարեկան պետք է լինի, երեխաները, ծերունիները և հիվանդները իրավունք չունեն երգվել այն պատճառով, որ դրանցից առաջինները ի վիճակի չեն հասկանալու երգման էությունը, իսկ երկրորդները և երրորդները կարող են հանկարծամահ լինել և զրանով իսկ իրենց հոգու վրա մեղք վերցրած, առանց ապաշխարության գերելման մտնել, եթե, իհարկե, բուն երգումը սուտ լիներ: Բացի այդ, բոտ նրա, երգվելու իրավունք չունեն հոգի կանայք, ապաշխարողներն ու այսպես կոչված ամբարիշտ անձինք՝ հանձնել մաքսաՎորներին, հարբեցողներին և նմաններին: Սրանց բոլորի փոխարեն կարող են երգվել նրանց բարեկամները, ազգականները և ընդհանրապես նրանց մերձավորները:

Մանդակունին գրում է, որ իր համոզմամբ երգման իրավունքը պետք է պատկանի մեղադրող կողմին: Վերջինս մեղադրում էր և երգվում իր մեղադրանքի ճշտության մեջ: «Բնատախազն,— ասում է նա,— դատախազ է և երկուն»: Այսպես էր Մանդակունու մտու: Երգման իրավունքի հարցում, ի տարբերություն Մանդակու-

նու, Գոշը մտածում է յուրովի: Սովորական հանցագործությունների համար երգվելու պարտականությունը նա զնում է ամբաստանյալի վրա, ինչ վերաբերում է ամբաստանողին, այսպ ցրան թույլատրվում էր երգվել քիչ զնպատակում միայն:

Գարեթը շարունակ Հայաստանում երգման վայրերը հանդիսանում էին կենդանի, գատարանը և հանդամանքների բերումով պանազան իր վայրեր: Մարդիկ երգվում էին ավետարանի վրա, երգվում էին իրենց աղերսագրին հայացքը երկինք հասած, երգվում էին կանչնած կամ ծնկաչոք այս կամ այն նպատակով և բոլոր զնպերում էլ բրեական և քաղաքացիական գործերով նրանց այդ երգմանը ապացույցի նշանակություն էր տրվում:

Հին և միջնադարյան հայ քրեական իրավունքում սուտ երգումն ու սուտ վկայությունը համարվում էին երկու տարբեր հանցագործություններ: Մեղ հասած «Հաճախատում ճառք» անունը կրող աշխատությունից հայտնի է, որ սուտ երգում տվողները զատապարտվում էին բանտարկության, շղթայակալվում ու տանջահարվում էին և այդ բոլորը հավանաբար սովորության իրավունքի նորմերին համաձայն: Այստեղ պատմի խտությունը պայմանավորված էր երկու մոմենտներով՝ սուտ երգման փաստով և դրանից առաջացած վնասի մեծությամբ կամ կարեորությանը: Անգամ Գոշի մոտ սուտ երգումը պատժում էր բավականին խիստ կերպով. «Եթե ստույթներ իցել երգումն,— ասում է նա իր Գատաստանագրում,— հինգ և մտ ապաշխարեցէլ»:

Ընդհանրապես ասած, հին և միջնադարյան հայ քրեական իրավունքում հաճախ է զրգվել սուտ երգման պատժելիության հարցը: Այդ մասին խոսվում են Աթանասի կանոններում և հայ կենդանական տարբեր ժողովներում ընդունված կանոններում: Մրանք բուրն էլ նշված արարքի համար նախատեսում էին ապաշխարանք, որը կենդանական-կանոնական պատժ լինելով, այն ժամանակվա հասկացողությանը, զատվում էր քրեական ծանրագույն պատժների թվին:

Այդ արարքի պատժելիության հարցը չի անտեսել Գավթի Ավագ կա որդին: Իր Կանոններից մեկում՝ 82-րդ կանոնում, նա ասում է. «Իսկ երգումն իրու և անխոր ոչ ունիք հրաման ի Տեսուճ, զի ասաց թէ ամենեկին մի երկուցուր, զի առաջնոցն ասացա Մի երկուցուս սուտ, այսինքն՝ բնա հրաժարեցույց ի երգմանէն... իսկ սուտն և իրան, առուևութիւն և պակասութիւն միայն այս՝ տեսանի զկարգ ապաշխարութեանն: Բայց ոմանք սովորեալ ի խազ և ի կատակս, յարբեցուքիւն, և ի հակառակութիւն,

և ի խոսվելին, պահապան և զպատկանելի անուանու Աստուծոյ ուրացու-
թեանք յշնն, միշտ ի բերան ունին: Այնպիսիք թէ զստեան սովոր-
ութենէ իրեանց, մինչև զվասխան ջերմտեսնոն ապաշխարեցնն և
յետին թաշակիէն թէ լիցին արժանի, ապա թէ ի հոյն շար սովորու-
թեան բարբառն մեռասիցին անզոց, զրկեցսցին ի հաղորդութենէն: Այսպես էր լուծվում սուտ երգման պատժելիութեան հարցը Գալիթի
Ալամկա որդու կանոններում:

Անցնենք սուտ վկայութեան պրորէմին: Մեր օրենսդրական-
իրաւարանական հուշարձաններում հարյուրամյակներ շարունակ
պատժելի է հայտարարվել նաև այն արարքը՝ սուտ վկայութեանը: Դրա
պատժելիութեան մասին մի շարք հիշատակումներ կան եկե-
ղեցական-կանոնական իրավունքի ակտերում, սակայն հարցի
ամբողջական լուծումը տրվել է Գոշի Գատաստանագրքում: Վեր-
ջինիս երկրորդ մասի 67-րդ և 101-րդ հոդվածներում ուղղակի կեր-
պով լուծվում է մի կողմից քրեական արդարացատութեան իրական-
նացման ժամանակ վկայի զերի ու նրա տված վկայութեան հարցը և
մյուս կողմից՝ այն հարցը, թե ինչպիսի պատիժներով պետք է
պատժվեն սուտ վկայութեան տվող անձերը: 67-րդ հոդվածում
նշված է, որ մեկ վկայի ցուցմունքը բավարար սպացույց չէ այս
կամ այն մարդուն այս կամ այն հանցագործութեան մեջ մեղավոր
ճանաչելու և նրան պատժելու համար: Գոշը գտնում է, որ անհրա-
ժեշտ են երկու կամ ավելի անձանց վկայութիւնները: Հարցը այս-
պես դնելով նա միաժամանակ պահանջում է խստագույն պատիժ-
ների ներմարելը սուտ վկայութեան տվողներին: Գատավորները
պետք է հասնեն ճշմարտութեանը, ասում է նա, և եթև վկան սուտ
է ասում, ապա պետք է նրա նկատմամբ անել այն, ինչ իր սուտ
ցուցմունքով նա կամենում էր անել ուրիշին: Հողվածից այնուհե-
տև Երևում է, որ Գոշը սուտ վկայութեանը պատժելի է հայտարար-
ում, երբ դա կատարվում է շարժառնութեամբ, իսկ վկայի բարե-
խիղճ մտորութեան նետանքով ոչ միշտ ցուցմունք տալը, ըստ Գո-
շի, չի հետապնդվում և չի պատժվում: Մեր գիտնականն այս երկու
հասկացութիւնները՝ վկայի բարեխիղճ մտորութեանը և գիտա-
վորյալ սուտ վկայութեանը հետակ կերպով տարբերում և սահմանա-
գծում է միմյանցից:

Գատաստանագրքի 101-րդ հոդվածում Գոշը մի փոքր այլ
կերպ է դնում վկայի քրեական պատասխանատվութեան հարցը,
թեև սկզբունքի մեջ, այսինքն այն հարցում, որ սուտ վկան անպայ-
ման պետք է պատասխանատվութեան կանչվի ու պատժվի, նա
պահպանում է իր հետեղականութիւնը: Այստեղ Գոշը ասում է,

որ եթև որեւ մեկը սուտ վկայութեան է տալիս և զրանով մեկ այլ
մարդ գատասպարտվում է մահապատժի կամ մարմնական պատ-
ժի, նման վկան պետք է ապաշխարի 5 տարի զրսում, 1 տարի
եկեղեցու ներսում և տուրք առ հօրստ աղբատների: Երբ սուտ վկա-
յութեամբ զրպարտվածը գատասպարտված չի լինում մահապատժի
կամ ազատվում է՝ սուզանք վճարելով, ապա այս զնպարտ նույն-
պես սուտ վկան պետք է քրեական պատասխանատվութեան կանչվի
և դատվի ու գատասպարտվի:

Մխիթար Գոշի Գատաստանագրքի վերահիշյալ՝ 67-րդ և 101-րդ
հոդվածները կազմված են հինք բնդունելով մովսիսական օրենքի
մի քանի դրույթները (Երկրորդ օրինաց, ԺԹ 15—19, ԻԹ 19), սուրբ
Բարսեղին (Կեսարացուն) վերագրվող կանոնները, ավետարա-
նական առանձին իրատեսերը և այլն: Բայց այդ հանգամանքը
որևէ նպակ նշանակութեան չունի և չի նսմանցնում զրանց (67-րդ
և 101-րդ հոդվածների) քրեական-իրավական զերն ու նշանակու-
թեանը՝ միջնադարյան Հայաստանում արդարացատութեան իրա-
կանացման և որոշ իմաստով օրինականութեան պահպանման գոր-
ծում: Բերում են Գատաստանագրքի վերահիշյալ հոդվածների
զարարք տեքստերը այնպիսի կրճատումներով, որոնք շնն աղբնչ-
վում քննարկվող հարցի հետ. «Ոչ հատաստիցի մի վկայ վկայել
զմարդոյ ըստ ամենայն աղիրատութեան և ըստ ամենայն յանցա-
նաց... զոր մեղանչիցէ. Ի բերանոյ երկոց և երից վկայից հատաս-
տեսից ամենայն բան, եւ եթև կացցէ յառջ սուտ վկայ զմարդոյ և
շարախօսիցէ զմանէ մմբարչտութիւն ինչ, կացցեն երկոցից արքն՝
որոց իցէ հակառակութիւն՝ առաշի Տեսոն և առաշի քահանայիցն
և առաշի գատարօացն, որ իցեն յավորսն յաշտօսիկ: Եւ քննեսցեն
գատարօքն ճշմարտութեամբ: Եւ աս՝ վկայ անիրաւ վկայեաց
զանիրաւութիւն, եկաց հակառակ երօր իրում: Արասշիք նմա
որպէս խորհեցաւ շար ասնել երօր իւրոյ և բարձջիք զպրն ի մի-
շոյ ձերմէն (հոդ. 67): «Եթև որ երթալ սուտ վկայէ և բնկնեա զոր
չորդայթ մահու կամ զանի, հինգ ամ ընդ ունկեղիրսն կացցէ և մի
ամ ընդ ձեռամբ՝ տքօք տնանկաց... Գատաստանս այս եղաւ ըստ
օրինացն (ակնարկվում է 67-րդ հոդվածը) այլ կանոնական այժմ
երկրորդի: Յորդայթ մահու և զանի ասէ. այլ որ ոչ մեռանի՝ կամ
սուզանօք ազատի— և այսոցիկ գատաստան լիցի՝ որքան վնասանցն
հատուացէ, ըստ այնմ թէ՛ որպես խորհեցաւ ասնել՝ եղիցի նմա. և
կամ թէ՛ իջցէ բաւական— ըստ հրամանի կանոնացոյ ապաշխարես-
ցոյ (հոդ. 101): Այսպես է լուծվում սուտ վկայութեան պատժելիու-
թեան հարցը ըստ Մխիթար Գոշի Գատաստանագրքի:

Այդ հարցը անուշադրության չի մատնվել նաև Սմբատ Սյա-
րապետի մտա: Նրա Դատաստանագրքում նույնպես ազգարարվում
է, թե օրենքը չի թուլատրում հավատարմ օրեն մեկի զեմ ուղղում
միշտ մեկ վկայի ցուցմունքներին, այլ զործի զբաղյունը պարզա-
յու համար պահանջում է երկու կամ երեք վկաների ցուցմունքներ
Իսկ նմե մեկն ու մեկի զեմ օրեն անձ սուտ վկայի զերում է հան-
ղես գալիս, այդ զեպրում հրամայում է սուտ վկային ենթար-
կել նյայպիսի պատժի, որին պետ է ենթարկվեր նրա վկայության
հիման վրա դատապարտվողը, լինի դա մահապատիժ, մարմնա-
կան պատժ, թե դրամական տուգանք: Սակայն թե մեղավորը
խոստովանության, այսինքն զղջման է դիմում, ապա թուլատրվում
է, որ նա պատժիի ապաշխարանքով՝ հինգ տարի եկեղեցի շմտնե-
լով և դրսում ազոթելով: Դատաստանագրքում այս հարցն իր իրա-
վարանական լուծումն է ստացել 160-րդ հոդվածի վերջին պարե-
րության մեջ, որը և բերում են ամբողջությանը. «Եւ չէ ի հրաման
արեւնք որ մէկ վկայի ավտան ի վերայ մարդոյ ստացած իրաց-
դի չերկուց և չերեց վկայից սակ հաստատել զբանն: Եւ թէ ուղղի
սուտ վկայ ի վերայ մարդոյ՝ նա կու հրամանէ արեւնք, որ՝ զինչ
այն սուտ վկայութեամբն անմեղն պիտի որ տանջուի, նա զինք
տանջեն թէ մահու էր՝ թէ խրատելոյ՝ և թէ տուգնելոյ: Եւ թէ ի
խոստովանութիւն երթալ՝ նա կանոնքս կու հրամէ որ Ե տարի
եկեղեցի շմտնէ, ապա ի գորտ ազաթէ, և ողորմութիւն տայ ազբա-
տաց, և ապա կարէ հաղորդի, բայց ի վերայ մեղացն չափուն տան
և զապաշխարանք ըմպել: Հեշտութեամբ կարելի է նկատել, որ
Սմբատ Սյարապետի Դատաստանագրքի 160-րդ հոդվածի այս
իրավանորմի համար աղբյուր են հանդիսացել Մխիթար Քոչի
Դատաստանագրքի երկրորդ մասի 67-րդ և 101-րդ հոդվածները,
հոգվածներ, որոնց տեքստերը վերևում բերվեցին:

Ներկայացնում եմ: Հին և միջնադարյան Հայաստանում հն-
տապեղծում ու պատժում էր սուտ երդման և սուտ վկայության
հետ անշվող մի արքայ, կա երդմանպանությունն էր: Սրա
էությունն այն էր, որ քրիստոնյան իր երդումը չէր պահում և զա-
նազան առիթներով խախտում կամ զրծում էր այն: Երդմանպա-
նությունը կամ, ինչպես մեր պատմագիրներն են երբեմն ասում,
ուխտադրությունը լայնորեն տարածված էր այն պատմաշրջա-
նում, երբ իրազրությունների բերումով Հայաստանը, կորցնելով իր
կենտրոնական պետական-բաղաբական անկախությունը, բնկնում
էր այս կամ այն նվաճողների լծի տակ:

Այդ նվաճողների հնարավոր բռնություններից և սպառնալիք-

ներից անարեկված հայ մարդը հաճախ ստիպված էր ոչ միտն
երդմանազանց, այլև հավատախոխ լինել: Երդմանազանց էին
լինում ոչ միայն շարքային, լավիկ մարդիկ, այլև հոգևորա-
կաններն ու նախարարները: Հայտնի «Քուրդի բնդանբախանում»
Շնորհալին մեծ ցատումով է խոսում իր ժամանակաշրջանի աշ-
խարհիկ և հոգևոր իշխանավորների երդմանազանցությունների
մասին: Նա պարտավորեցնում է, որ այդ իշխանավորներն ամեն
առիթով շերտվեն, իսկ երզվելու զեպրում «Քուրդի բնդանբախանում»
չլինեն, որքանով որ երդմանազանցությամբ նրանք խախտում են
քրիստոնեության նկատմամբ մարդկանց ունեցած հավատքի հիմ-
քեր: Այդ հետավոր ժամանակներում երդմանազանցությունը որոշ
զեպեհերում ավելի խիտ էր հետապնդվում, քան մահվան սպառ-
նալիքի տակ կատարված հավատուրացությունը:

Շնորհալին քրիստոնյաներին, այսինքն հայերին պարտավո-
րեցնում է երդմանպահ լինել, այսինքն իրենց պատան հավատա-
րիմ մնալ ոչ միայն այն ժամանակ, երբ զիմացի կողմը քրիստոն-
յա է, այլև այն ժամանակ, երբ այդ կողմն ալլաերուն է, այսինքն
մահմեդական: Այս զեպրում էլ ավելի հաստատուն դիրք պետք է
բանել, որպեսզի այդ օտարազգիները չհայտնեն հայերի կրոնին,
այսինքն շանարզեն քրիստոնեությունը: Մարդկանց այն առարկու-
թյանը, թե ալլաերունները մեր նկատմամբ երդում տալով
փաստորեն ստում են, ուրեմն մենք էլ նույնը պետք է անենք,
Շնորհալին պատասխանում է. «Չէ մերս երդումն և նոցայն հա-
ւասար. զի մերս առ ճշմարտութիւնն է և նոցայն ոչ նոյնպիսիս»: Այսպեհ է հարցը լուծվում «Քուրդի բնդանբախանում», որը հայ
եկեղեցական-կանոնական իրավունքում փաստորեն օրենքի ուժ
ունեցող մի հուշարձան էր իրենից ներկայացնում:

Հայոց կանոնագրքում անդ գտած իրավանորմերը նույնպես
խիտ պատիժներ են նախատեսում երդմանազանցության համար՝
30-րդ կանոնում, ուղղակի կերպով մասնանշված է. «Եթէ որ երդ-
մախոր գտանիցի, տասն ամ առանց հաղորդութեան կացցի. հինգ
ամ տալով և արտասուք, շորս ամ առաջի անկանել ժողովրդեանն,
չտարի մի ընդ այլն կացցէ և ապա հաղորդեսցի»: Նույն Բարեղի
կանոններից մեկ ուրիշի մեջ այն միտքն է անցկացվում, թե անզոմ
հեթանոսներին կամ անհավատացյալներին երդումով տրված խա-
ղաղության զաշնի օրեն կարգի խախտումները կամ, ավելի ճիշտ
կլինի ասել, նման հարցի շուրջ տրված երդման ամեն կարգի
զրծումները հավասարազոր են այն զեպեհերին, երբ մարդիկ սրա-

նունն են քրիստոնեությունն ու սրա պատվիրանները: Նման արարք-
ներ կատարելիս մեղավորները դատվում ու դատապարտվում էին
ցմա՜հ ապաշխարանքի:

Ո՞րն երգմնազանցները զանազան պատճառներով եկեղեցա-
կան կամ աշխարհիկ դատարանների կողմից չլին պատժվում,
միևնույն է, պատիժ-հատուցման աստվածաբանական սկզբունքի
համաձայն, այլ կերպ ասած՝ նյութական թալիսի սկզբունքի հա-
մաձայն, նրանք վերջին հաշիվով խտորեն պատժվում էին: Վեր-
ջերենք հայոց Արշակ Թագավորի՝ Շապուհի նկատմամբ ունեցած
վերաբերմունքի պատմությունը: Արշակը հավատարմության եր-
զում է տալիս Շապուհին, սակայն հետագայում խախտելով իր եր-
զումը, փախչում է: Բայց նա անպատիժ չի մնում, նախախնամու-
թյան կամքով, «ենց միայն այն պատճառով, որ ուխտագրությունն է
կատարված լինում, նա խտորեն պատժվում է և նորից է բնկնում
Շապուհի ծուգակը: Վերջինիս կողմից, իր «մեղքը» քաջելու համար,
նա բանաստրկվում է Խուժաստանի Անհուշ բերդում, ինչպես այդ
մասին հանգամանորեն պատմում են Փավստոս Բուզանդը, Մով-
սես Խորենացին և հետագա պատմագիրները:

Ահա մի օրինակ է: Շատ նախարարներ զրոժում են Արշակ
Թագավորին աված իրենց հանգիստավոր երգումը և զավաճանելով
նրան, անցնում են պարսիկների կողմը: Սրանք նույնպես անպա-
տիժ չեն մնում, դատապարտվում են անողոր ռեպրեսիաների՝ Ար-
շակին հավատարիմ մնացած նախարարների ու զինվորականների
կողմից: Վերջիններս հարձակվում են դրանցից շատերի ամբողջնե-
րի վրա, քարուքանդ անում այդ ամբողջները և կոտորում «մեղա-
վոր» ընտանիքներին ու տունները:

Սուտ երդման և սուտ վկայության նման երգմնազանցությունը
նույնպես պատմականորեն պատժելի է հայտարարվել անխտոր
բուրդ ժողովուրդների հին և միջնադարյան օրենքներով: Հավատքի
նկատմամբ տածված երկչույն է պայմանավորել նման գրու-
թյունը: Երգմնազանցության մեջ առանձնապես խիստ էին մովսի-
սական օրենքները: Այդ օրենքները պարտավորեցնում էին հարզել
տված երգումը (Թուոց, 14): Երգվելու պահին հին հրեաները դուռ-
բանը երկու մասի էին բաժանում և անցնում այդ մասերի միջով
(Երեմիա, ԼԳ 18): Սա սպառնալիք ու նախազգուշացում էր, թե
երգմնազանցները նույն կարգով պետք է մահվան դատապարտվեն
(Ա թագ., ԺԱ 7): Մավուղը մարտերից մեկի ժամանակ զինվորնե-
րին երգվեցնում է, թե մինչև երեկո ոչ որ յարեք և ճաշ ուտի: Եր-

դում խախտվում է հենց սեփական որդու կողմից: Հայրը պատ-
րաստվում էր մահապատժի դատապարտել նրան, բայց այդ բանը
չի անում, որովհետև ժողովուրդը կանխում և խափանում է նրա
արարքը (Ա թագ., ԺԳ 44—45): Այսպես էր հարցը լուծվում մով-
սիսական օրենքներում: Մասնանշված արարքը խտորեն դատա-
պարտվում ու պատժվում էր:

Երգմնազանցության և զրա պատժելիության մասին հետա-
քրքիր դրույթներ են պարունակում միջնադարյան մահճադական
օրենքները, հանձնիս Դուրանի քափղները: Այդ օրենքները երգմ-
նազանցների նկատմամբ մերթ անորոք են և մերթ ներողամիտ: Մի
ղեկավոր զրանք պարտավորեցնում են տրված երգումը լիսխտել
և այն նենդության կամ խաբուսության միջոց շարժենել, պատճա-
ռարանելով, թե դա հակասաստվածային, ուրբմն և աստծու ու մար-
դու կողմից խտորեն պատժելի արարք է հանդիսանում, իսկ մյուս
կողմից նույն այդ օրենքներում կարգում ենք, թե իբր ասաված
հավատացյալներիս թույլատրում է երգմնազանց լինել, երբ դա
բխում է որոշակի պատճառներից ու իրադրությունից: Մի ղեկավոր
զրանք մարդկանց իրավունք են տալիս հարձակվել և ինքնազա-
սաստանի կարգով նույնիսկ պատժել, մահապատժի դատապար-
տել երգմնազանց, անհավատ իշխաններին ու նրանց ենթակա ժո-
ղովուրդներին, իսկ մյուս ղեկավորմ քարբառում են այն մասին, որ
աստված հավատացյալներին չի պատժում իրենց երգումներից
հետ կանգնելու համար, այլ պատժում է՝ նաչելով նրանց սրտին:
Որ երգմնազանցության պատժելիության հարցում Դուրանի մեջ
տարամտություններ ու հակասություններ կան, զրանում համոզ-
վելու համար բավական է աչքի անցկացնել նրա ԺՁ—Գ4, ԺՁ—Գ7,
ԿԼ—10, Բ—12—14, ԿՁ—2, Բ—225, Ե—9 քափղները: Այդ տա-
րամտություններն ու հակասությունները մահճադական ժողո-
վուրդների շահագործող խավերը և հոգևոր քրմերը զարհր շարու-
նակ օգտագործել ու այժմ էլ օգտագործում են աշխատավորների
հետանց խավերին միմյանց դեմ լարելու և կրոնական թույնի
ազդեցության տակ մասսայական կոտորածներ կազմակերպելու
համար:

Եկեղեցակապտություն: Քրեական իրավունքի հազարամյա
պատմության մեջ եկեղեցակապտությունը զրտերով է որպես զա-
նազան սրբավայրերին կամ կրոնական խմբերին պատկանող և ո-
րոշակի նյութական արժեք ներկայացնող իրերի հափշտակում:
Իրեր այդպիսին, այդ արարքը կոնկրետ իրողության պայմաննե-
րում՝ կոնկրետ բովանդակություն է ունեցել և համարվել է մերթ

որպես կրոնական օրինախախտում և մերթ էլ որպես գույքային հանցագործություն: Եկեղեցակապտությունը միշտ էլ խտտությունը պատժվել է, որքանով որ դրա կատարումով ոտնահարվել են ինչպես մասնավոր սեփականությունն անձնանվիրության սկզբունքը, այնպես էլ շահագործողական հասարակությունների հաստատություններից մեկի՝ եկեղեցու և դրանով իսկ կրոնի ու հավատքի հիմքերը:

Գեոևս բարեկեցական օրենքները նախատեսում էին արարքներ, որոնք բառ էություն եկեղեցակապտության սարսափներ էին: Համաժողովրդի օրենսգրքի 6-րդ հոդվածը սուրբ իբրիկ հափըջտակման համար մահապատիժ էր նախատեսում: Այդ հոդվածը իրավաբանորեն միայն չէր հավաստեցնում տաճարների ու պալատների պատկանող գույքերն և հենց որպես հափըջտակման համար էլ նախատեսվում էր մահապատիժ: Մահապատիժ էին դատապարտվում նաև նրանք, ովքեր հանցագործների ձեռքը ընդունում էին այդ կարգի գույքերը, այլ կերպ ասած՝ ովքեր հանցանք էին գալիս որպես անշահակցներ կամ հանցակիցներ: Նույն օրենսգրքի 8-րդ հոդվածը տաճարների կամ պալատին պատկանող եղան, ոչխարի, բեռնակիր անասունների, խոզերի կամ նավակների գողությունը պատժում էր հափըջտակվածի արժեքի երեսնապատիկի հատուցմամբ և նույնպես, երբ անհատներին պատկանող նույնանման գույքերի հափըջտակումը պատժվում էր հափըջտակվածի արժեքի տասնապատիկ հատուցմամբ, այսինքն՝ երեք անգամ մեղով պատժով:

Հռոմեական քրեական իրավունքում սրբապղծության կամ եկեղեցակապտության հասկացությունը ուներ և նեղ, և լայն նշանակություն: Առաջին իմաստով դա նշանակում էր սուրբ իբրիկ հափըջտակում անկախ հափըջտակման վարքից, այսինքն անիական այն բանից, թե հափըջտակումը կատարվում էր այսպես կոչված սրբավարներից, թե այլ վարքերից: Երկրորդ իմաստով նշանակում էր առհասարակ ոտնձգությունը քաղաքացիների կրոնական գրացումների դեմ, այդ զգացումների ոտնահարում ընդհանրապես: Երկու դեպքում էլ արարքը պատժվում էր ամենայն խտտությամբ, նույնիսկ՝ մահապատժով:

Միջնադարյան եկեղեցական-կրոնական հաստատությունները, գործնով կանոնական իրավունքի նորմերով, ընդարձակեցին եկեղեցակապտության հասկացությունը և այն ժայռահեղ շափերի շարքին, Պետք է ասել, որ եկեղեցակապտության այս խիստ լայն հասկացությունը հետադառյալ անցավ աշխարհի քրեական

օրենսդրության մեջ և պահպանվեց ընդհուպ մինչև XVIII դարի վերջը և XIX դարի սկիզբը, այսինքն և մինչև բուրժուական քրեական օրենսդրության երևան գալը, երբ ընդհանրապես սկսվեց եկեղեցակապտության հույսը աստիճանական սահմանափակումը, այլ բառերով ասած, երբ այդ արարքը սկսվեց դիտվել իբրև սովորական գույքային հանցագործություն և ուրիշ ոչինչ:՝

Հայ եկեղեցական-կանոնական օրենքները եկեղեցակապտության և դրա պատժելիության հարցին անդրադառնում են մեկից ավելի անգամ, ընդ որում եկեղեցակապտության հասկացության տակ այդ օրենքները մտցնում են ինչպես այն դեպքեր, երբ ուղեղափոխ օրյակտը հանդիսանում է եկեղեցական գույքը (վերջինս արժեքային իմաստով), այնպես էլ այն դեպքեր, երբ հանցավոր արարքներից տուժում է ամբողջում են այնպիսի միտոիկ հասկացություններ, ինչպիսիք են «սրբավայր», «մատուհի», «ժամացություն», «եկեղեցական արարողության աստվածալիկ կարգ» և նման հասկացություններ:

Եկեղեցակապտության պատժելիության վերաբերյալ առանձին իրավաբանական նորմեր գրավել են դեռևս քրիստոնեությունն առաջին դարերի եկեղեցական ժողովներում ընդունված կանոններում: Այդ կանոնները հոգեք հայրերին և ընդհանրապես եկեղեցու սպասավորներին պարտավորեցնում էին պահպանել ու պաշտպանել եկեղեցու սեփականությունը, շնորհակալել, շտապել և շվատնել այն: Գրանք օրինազանգեների սպառնում էին կանոնական պատիժներով և այդ թվում նախ և առաջ երկաթյա անպաշխարանքով: Վարդարապատի եկեղեցական առաջին ժողովներում ընդունված կանոնները, օրինակ, հենց այդպես էլ հարցը դնում էին. մատուցույց անելով եպիսկոպոսին որպես եկեղեցական գույքի պահպանիչ, միաժամանակ նույն եպիսկոպոսին խորատում էին ազնվություն ունենալ և ոչ միայն շարաշահումներ չկատարել, այլ և ընդհանրապես կանխել ու խախտել նման երկվությունները:

Նույն ոգով էր հարցը դրվում նաև Սահակ Հայրապետին վերաբերող կանոններում: Գիմելով եպիսկոպոսին որպես հոգեք սպասավորի, նշված կանոններից 53-րդ կանոնը վերամարտը տուժով ազդարարում է. «Առաքելական պատուով եղիք արժանի, պարտիս և վաղուց նոցա նմանի, որպես և զերբ գործոցն առաքելոց վկայեն, բաշխելն ամենեցուն, ում զիարգ պիտոյ ինչ լինել, զի դանձ աստուածային, որում տեսուչ և մատակարար կազմեցար, նեղելոց և որբոց և այրեաց սուսա յապախնութիւն. և թէ միանգա-

մասն ինչ յաշխարհի վտանգ հասանկից, բայց յայլ իրս ամեններն չէ իշխանութիւն ծախել, զի յաղագս հոգոյ փրկութեան տուան գունձը: Արդ, եթէ որ յայլանպակս ծախիցէ, ընդ սեղանակապտուտ տացէ զատ յաւուրն դատաստանի, և պատմէ բարձրի ի նըրձակէ, սի թէ ճառանգապար թագաւորաց գործակալք յանբրախ ծախելով զարքունիս՝ պատժան կրեն և ի պատուոյ ի բաց անկանին, որչափ ևս առանկ, որ պատաստածայննս վատիցեն յանուղղաց, կրեսցեն պատժան աստ, և ի հանդերձելումն: Եւ թէ որ աշտնայց անպիտանացն թոյլ տալով, կցորդ եղիցի գործոց նոցա»: Այսպիսով, եկեղեցակապտութունը կամ, այլ բառերով ասած, եկեղեցական գույրի հափշտակում կատարողները պատժում էին: Հետասպիզում էին ոչ միայն բուն հանցագործություն կատարողները, այլև նրանց հանցակիցները կամ «կցորդները», ինչպես ասված է կանոնում:

Եկեղեցակապտություն զրեական-իրավական պատժելիության հարցը կարգավորվում է նաև Կղեմնոսի կողմից սահմանված կանոններով: Այդ հարցին վերաբերող իրավանորմ՝ 67-րդ կանոնը, խմբագրված է այնպես, որ միանգամայն դուրսբերունկի ձևակերպումներով մատնացույց է արվում զիսպղոցիան ու սանկցիան: Անմիջապես նկատվում է, որ խոսքը վերաբերում է որոշակի գույրի գողության, և որ դրանում մեղավորները, նախևառաջ հանցամասններին ու պայմաններին, պատժվում են հափշտակված արժեքի հնգապատիկ հատուցմամբ կամ ավելի խիստ պատժներով. «Եթե որ ծառանգաւոր կամ ժողովրդական զոգաւցէ ի սուրբ եկեղեցոյ մտնէ՝ ղէն կամ ձէթ, որոշեսցի, հնգապատիկ տուժեսցի հանդերձ նորա որ առն. օճնալ անոթ սուկղէն արժաքնղէն մի՝ որ յիս պէտտ ատասցի. օրինականցութիւն է այս. եթէ որ ի սմին գտցի, պատուհասի որոշեսցի»:

Հայ եկեղեցական-կանոնական իրավունքի բերված նորմերը աղբյուր են հանդիսացել նաև բոլոր նրանց համար, ովքեր փորձել են ստեղծել աշխարհիկ օրենքներ և ստեղծել են: Այստեղ մենք նշեցաւ օճնակ Դավիթ Ալալիկան որդուն, Մխիթար Գոշին և Սմբատ Սպարապետին:

Դավիթ Ալալիկա որդու կանոններում եկեղեցակապտության և ընդհանրապես եկեղեցական գույրի հափշտակման պատժելիության մասին խոսվում է 80-րդ հոդվածում, որը նման ղեկագրերում հիբրավի դժման պատժներ է նախատեսում: Ահա թե ինչպես է սպանում այդ հոդվածը. «Այլ որ ի սրբութիւն Աստուծոյ ձեռն արկանեն, նորա սեղանակապտութիւն և անտուժամառք, ընդ չեն-

թանոն եղիցին նորա, և թէ զզրացիցի՝ ի խորք և ի մոխիր մինչև ցմահ ապաշխարեսցեն: Այլ ի գողունաց անտի մի որ իշխեսցէ յեկեղեցի ընծայել և մի որ ի քահանայիցն առնուցու պահելու: Եթէ որ յանդերձեալ առնու ծամուց կամ այլ նուիրական ընծայ յեկեղեցի, արհամարհեալ պարէկս Աստուծոյ, խոտնեալ և անարգեալ եղիցէ քահանութիւն նոցա, թե կացցեն ի յամաստեանս: Նոյնպէս և որ զգերեզմանս կողոպտեն մինչև ի մահ ապաշխարեսցին մեծացան զզրմամբ»: Այստեղ միաժամանակ ուշադրով է այն, որ այսպես կոչված սուրբ իրերի հափշտակումը հավասարեցվում է զերեկոյնական կապտությանը, որը քրիստոնեական-ֆեոդալական միջնադարում իր հերթին համարվում էր ամենամանր հանցագործություններից մեկը:

Մխիթար Գոշի Դատաստանագրքում եկեղեցական գույրի հափշտակության և ընդհանրապես եկեղեցակապտության հարցի մասին երեք հոդվածներ կան: Դրանք այդ Դատաստանագրքի առաջին մասի 28-րդ, 35-րդ և 37-րդ հոդվածներն են: Այդ հոդվածներից առաջինը՝ 28-րդ հոդվածը, վերաբերում է այն ղեկագրին, երբ հոգևորականը կամ աշխարհիկ մարդը հափշտակում էր եկեղեցուն պատկանող մոմեղներ կամ ձուլքը: Այս արարքը պատժվում էր հափշտակվածի արժեքի հնգապատիկ հատուցմամբ: Նույն հոդվածի մեջ, բացի այդ, եկեղեցակապտությունը պատժելի է հայտարարվում առհասարակ՝ մոտավորապես այնպես, ինչպես այդ տեսանք Կղեմնի կանոններում. «Եթե որ ծառանգաւոր կամ ժողովրդական անցէ ի սուրբ եկեղեցոյ մտնղէն և կամ ձէթ, որոշեսցի և հնգապատիկ տուժեսցի, որով առն անօթով սակղինաւ կամ արծաթեղինաւ սրբեսցելով: Եւ մի որ ի պէտտ զոգացեալ, զի օրինազանցութիւն է. ապա թէ որ ըմբռնեսցի, պատուհասեալ որոշեսցի»: Դատաստանագրքի մյուս՝ 35-րդ հոդվածը, որի աղբյուրը մոլոխիսական օրենքն է (Եւրեյ, ԻԲ 1—4), նախատեսում է եկեղեցական գույրի գողության կամ այլ բառերով ասած հափշտակության ներքին ամբողջական հանցակալքը. նման գույրը հափշտակողը այդ հոդվածի համաձայն պարտավոր էր հատուցել զոգացվածի արժեքի հնգապատիկը, եթե հափշտակված իրերը չէին գտնվում կամ վաճառված էին լինում այնպես, որ անհնարին էր դատունը դրանց նստ վերցնելը: Բոկ եթե հափշտակված իրերը կամ արժեքները գտնվում էին, ապա հատուցվում էր արժեքի կրկնապատիկը: Գոշը միաժամանակ պահանջում է, որ նման արարքների մեջ մեղավորները ապաշխարանք կրեն առանց զրա համար որոշակի ժամկետ սահմանելու. «Ձեկեղեցոյս զոգացեալ և կրտուսեալ, և կամ վաճառեալ որ ոչ իցէ դարձ-հինգերորդ հա-

տուսել և զօշ կորուսեալսն՝ կրկին: Եւ զպաշարութիւն ենցոյց կանոնքն»:

Վերջապէս, Գատատանազրքի 37-րդ հոգվածը, որի աղբյուրը դարձնալ մովսինական օրէնքն է (Ղևառացոց, ԻԲ 14—16), նախատեսում է եկեղեցուն ըստ երևույթին իրեն հարկ տրված կենսամեթոքներն և մյուս եկամտունների յուրացումը, երբ բուն արարքն ինքը կատարված էր լինում սխալմամբ կամ, ավելի ճիշտ կլինի ստել, անզոջուցմամբ (սյանգէտս)»: Այս հոգվածում Գողը հարմարեցնելով մովսինական օրէնքն իր Գատատանազրքի սկզբունքներին, ասում է. «Եւ մարդ որ յանգէտս կերթցէ զարբութիւնսն, յանելցէ ի նոյն զհինգերորդ մասն և տացէ զարբութիւնն ցրահանայն: Եւ մի պղծուցնն զարբութիւն սրբութեանն Իսրայէլի, զոր զատուցինն նոքա Տեանն, և ամիցնն և վերայ իրեանց անօրէնութիւն յանցանաց ուսուցումն իրեանց զարբութիւն սրբութեանցն, գի ես նմ Տէր, որ սրբեմ զեօտս: Աստուածային զատատանս նշանակ անփոփոխ մեզ կացցէ յեկեղեցի»:

Բերված հոգվածների գոյութիւնն ինքնբարեխնայն վերցրած՝ աներկմիտ կերպով պայացուցում է, որ Գողն իր Գատատանազրքում փաստորեն նախատեսում է եկեղեցական գույրի հափշտակման հանցակազմների համարյա բոլոր հիմնական ձևերը՝ զոգութիւններ, յուրացումը, անզոջուցարար նման գույր վերցնելը և այլն:

Եկեղեցակապտութիւնն պատժելիութիւնն հարցը չի անտուգել Եմբար Սպարապետի կողմից: Իր Գատատանազրքում նա այդ արարքը հայտարարում է որպէս ծանրագույն հանցագործութիւն և պարտավորեցնում, որ կատարողները պատժվեն ոչ միայն հողեր, այլ նախ և առաջ աշխարհիկ, այսինքն պետական զատարանների նշանակումը պատժենքով: Նրա աչքում եկեղեցակապտութիւնը հասարակական շատ բարձր վտանգավորութիւն է ներկայացնում, ուստի նա անհրաժեշտ է համարում արարքի մեջ կասկածողներին անգամ ենթարկել քրեական պատասխանատւութիւն: Նշված հանցագործութիւն մեջ կասկածողը հողերն սպասավորները պատժում էին կարգալուծութիւնմբ և հափշտակման վտանգին ենթակա արժեքների հնգապատիկ հատուցմամբ, իսկ ընված, այսինքն մեթակցված հանցագործները, որպէս զողերի ու անհավատներին, ենթարկում էին մարմնական պատժներ իր կայանքի, այսինքն քանտարկութիւն: Եկեղեցական գույրի հափշտակութիւնը նախատեսված էր Գատատանազրքի 13-րդ հոգվածում, որտեղ ասված էր. «Եթ որ ի յեկեղեցոյ ձիթէ՛ կամ յանալիթց՛ կամ ի զօրեսուց՛ կամ ի մօսանեղնե՛ կամ մայլ իրաց զողնայ, նա զկարգն կորսնէ և հինգ տուպ

վճարէ զիրքն, և այս յանձնած լինի՛ որ կարծեալ կեցցնվի ի վերայն: Ապա թէ ի զողութիւնն բռնվի՛ նա զկարքն առնուն ու զարպտուն նամուտովն իր խրատ ու սաղայ յաննն՝ զից զողոյ ու անհատարեմ: Այս հոգվածը Միխիմար Գողի Գատատանազրքի համապատասխան հոգվածների համեմատութեամբ այն ստանձնահատուկութիւնն ուներ, որ կարծեք թէ ավելի ընդհանուր և ամբողջական ձևով էր կարգավորվում եկեղեցական գույրի հափշտակման, այդ թվում եկեղեցակապտութիւնն զիմ տարվող պայքարի հարցը:

Հին և միջնադարյան հայ եկեղեցական կանոններում և աշխարհիկ օրենքներում վերոհիշյալ քրեական-իրավական նորմերի գոյութիւնը չի կարելի պատահականութիւն համարել: Դրանց գոյութիւնն ուղղակի սպացոյց է ինչ բանի, որ այդ ժամանակներում եկեղեցակապտութիւնը և նման արարքներն ըստ երևույթին յանրեն տարածված են եղել: Դրանց տարածված լինելու բուն պատճառները մի բանիսն են: Ամենից առաջ մարդկանց կարթքը միայն կարող էր ստիպել հին և միջին դարերում ապրող և կրոնի ու հավատքի նկատմամբ արտակարգ երկուդատութիւն ունեցող հավատացյալ հային ոտնձգել նյութական արժեք ներկայացնող եկեղեցական կամ վանքապատկան գույրի դեմ: Բայց սա հարցի միակողմանի, ուստի և թերի լուծումը կլիներ: Դրանից բացի եկեղեցակապտութիւնն ձևեր հանդիսացող կրեանական այն հանցագործութիւնների պատճառը, որոնց անմիջական նպատակը նյութական արժեքների ձեռք բերումը չէր, բացատրվում է մարդկանց՝ կրոնի և հավատքի նկատմամբ ամածած առելութեամբ: Համոզվելով, որ կրոնական ամբողջ զարգացարարութիւնն ըստ էութեան հասարակութիւնը խարխուլ և աշխատավոր մասսաներին շահագործելու ու կողպտելու միջոցներից մեկն է, մարդիկ կատարում էին այդ հանցագործութիւնները, զրանով իսկ դրսևորելով իրենց առելութիւնն ու արհամարհանքը ինչպէս տիրապետող հասարակական կարգերի, այնպէս էլ սահմանված իրավագաբորի նկատմամբ: Չենք կարող չընշել, որ նրանց այդ արարքներն ըստ էութեան զսասկարգային-քաղաքական պայքարի արտահայտութիւններ էին: Վերջապէս եկեղեցակապտութիւնն և դրան առնչվող հանցավոր արարքների պատճառները մեկն էլ պետք է համարել հիմնադրական պաշտամունքի ու հավատալիքների տարածված լինելը հին և միջնադարյան Հայաստանում: Հեթանոսութիւնը հարող մարդիկ թշնամաբար արամազրված լինելով քրիստոնեութիւնն նկատմամբ, պարզապէս կատարում էին արարքներ, որոնցից մի բանիսն էլ քրիստոնեական եկե-

զցելու կանոնների համաձայն եկեղեցակապտությունն տարածներ էին համարվում:

Որ հին և միջնադարյան Հայաստանում եկեղեցակապտություններ տարածված արարք է եղել, դրա սպառնալիցներից մեկն էլ մեր վիճագիր արձանագրություններն են: Նշված արձանագրությունների մեջ մարդիկ շատ հաճախ իրենց ջերմ ցանկությունն են արտահայտում և պահանջ ներկայացնում այն մասին, որ եկեղեցիներին ու վանքերին իրենց աված ծանրարժեք նվերները (կալվածքը, այրիք, ջրաղացը, անտառամասը և այլն) առմիշտ մնան դրանց սեփականություն և ոչ որի կողմից շարժացվեն, չհամարակվեն և ընդհանրապես զանազան շարաշահումներից, օրինակ, կեղծարարության, կաշառքի կամ նման այլ միջոցներով դուրս չլուսավորեն: «Ձեզ ծուխ առանց կրակի», սուսււ է ժողովրդական առածը: Եթե նման շարաշահումներ ու համարակումներ չլինեին, չէին լինի նաև հիշատակված վիճազրույթությունները, այսինքն վիճագիր արձանագրությունները:

Սիմոնկանություն: Հին և միջնադարյան Հայաստանում սիմոնկանությունը մեծ վտանգավորություն ներկայացնող կրոնական հանցադրություն է համարվել: Իրա պատժելիության վերաբերյալ կանոնական իրավունքի համապատասխան նորմերը ժամանակի ընթացքում մտցվել են նաև հայ աշխարհիկ օրենքներում: Նշված նորմերի համաձայն սիմոնկանությունը դրսևորվել է զանազան ձևերով: Սիմոնկաններ էին համարվում, օրինակ, այն քահանաները, ովքեր կաշառքով ձեռնադրություն էին անում, ինչպես նաև այն քահանաները, ովքեր վարձով մեռելներ էին թաղում կամ զերեզմանատեղի համար հատուցում, այսպես կոչված հողադրամ էին վերցնում: Չնայելով սիմոնկանության դեմ ուղղված խիստ օրենքներին, այդ արարքը քրիստոնեության առաջին տարիներից սկսած Հայաստանում լայնորեն տարածված մի նրևույթ է դառնում: Հողերը հայրերը, շարաշահելով իրենց հողերի կույտը, շահագրտական ընույթի բազմապիսի հանցադրություններ, այդ թվում սիմոնկանություն էին կատարում: Հայ եկեղեցական-կանոնական օրենքները սիմոնկան հողերտականներին համարում էին հուղաներ և նրանց կարգալույծ անելով, դատապարտում էին նրկարաձյա ու ծանր սպախարություն:

Գալիթ Ալավկա որդու կանոնների մեջ մատնանշված հանցագործության և դրան առնչվող որոշ արարքերի պատժելիության հարցի մասին մի ամբողջ իրավաբանորմ կար: Մենք նկատու ունենք 35-րդ հոդվածը, որտեղ ասված էր թե՛ «... քահանայ, վանական

կամ աշխարհական, որք մանկունս վարձու անուն յուսումն, վաճառ և զին զնեն Աստուծոյ շնորհաց, կամ վարձու թաղեն զմեռնայս կամ ժամ մի՛ թողացուցանեն, զմեռնու ոչ թաղել, սակուղ՝ թէ ոչ տայք զվարձն իմ, չթաղան, այնպիսի քահանայցն, որ անարդեցին դիտրհուրդն Աստուծոյ և արհամարհեցին զհրաման նորա՝ թէ Զրի տանք և Զրի տուք, լուծցին ի կարգն և նզովեսցին ի մահ և ի կենանք»:

Այսպիսով, Գալիթ Ալավկա որդու պատկերացմամբ սիմոնկանությունը դրսևորվում էր նրանով, որ քահանան, վանականը կամ աշխարհականը՝ ա) մանուկներին ուսման էին վերցնում (վարձով կամ ք) մեռելներին նյութական հատուցմամբ էին թաղում, կամ զ) հրամարվում էին մեռել թաղելուց այն պատճառաբանությամբ, թե իրենք դրա համար չեն վարձաարվում, կամ զ) նույն այդ պատճառաբանությամբ արգելում էին թաղելուց առայ մեռելն եկեղեցում զնել: Այս արարքներ կատարողները կարգալույծ էին արվում և դատապարտվում էին կնտ հնզովքի:

Մխիթար Գոշը սիմոնկանության առանձին ձևերի քրեական-իրավական գնահատման հարցը շոշափում է իր Դատաստանագրքի առաջին մասի 117-րդ հոդվածում: Այստեղ դատապարտելով այդ արարքը, նա, սակայն, օրինազանցների նկատմամբ կոնկրետ սանկցիաներ չի նախատեսում, թեև ընդհանուր ձևով հայտարարում է բուն արարքի հանցավոր, ուրեմն և պատժելի լինելու: Ահա այդ հոդվածի համապատասխան հատվածը. «Շնորհարանց այժմ անուանեալ ո՛չ է ի կանոնական հրամանաց, զի կանոնք զանկողին և զայլ ինչ այսպիսիս զոր ունի յիշատակէ (Գոշը սկիսարկում է Սահակ Պարթևի 40-րդ կանոնը, որը սահմանում էր, թե մարդու մահից հետո նրա շորերը, գուրին, սանկողինը, մահճակալը, արթուր, միշն անգամ կերակրապակեր և զգալը պետք է տրվեն վանքերին): Արդ՝ յայտ է թէ՛ զրամից հողոյ ի կապալուստք քահանայց զնեզ վաճառել զզերեզմանս, մինչ զի և հողորդի անույ զրամ և անտարանի, Բայց քրիստոնեացն ըստ յուսոյ տան զդրամն հողոյ, այնորցիք ո՛չ շատանան, այլ բունադատեն և զայլակղեցուցանեն, որում համար տալուց են, կամ զի այլոց քահանայից ըստ կարի տալ կահեցան, յայնմանէ ուսան և իրքն պահանջել»: Այս մեռելներումից երևում է, որ Գոշը հողադրամ վերցնելը, այսինքն մեռած մարդուն զերեզմանատեղ տալու համար զրամ կամ այլ զույլ վերցնելը դատապարտելի արարք է համարում: Իրա հետ միասին նա դատապարտելի արարք է համարում զանազան ժրտակատարությունների, օրինակ, զերեզմանօրհներթի, պատարագի և այլն համար

գրասեղան կամ ուրիշ կարգի հատուցում ստանալը: Մրանք էլ Հենց այն արարքներն էին, որոնք իրենց ժամանակին, ինչպես տեսանք, սիմոնիականություն էին անվանվում:

Այլ և նման արարքների պատճեկիության հարցը իր ավելի բնցհանուր լուծումն է ստանում միմտա Սպարապետի Գատաստանագրքում: Այսանդ ոչ միայն մասնացույց են արվում բուն արարքները, այլև նախանշվում են այն կոնկրետ պատժները, որոնք կիրառվում են դրանց սուրբկականների նկատմամբ: Գատաստանագրքի 47-րդ հոդվածն ասում է. «Չկայ ամենեկին հրամանք յարինացն՝ բնա հողադրամ անուղ ի մեծելոց թաղումն: Ապա պատեհ տեսար գրել՝ թէ ուտի ընկա տիպան ալա: Եւ գիտացիք որ յանհատա իրիցնոյ, որ գհող գերեզմանին էլ կու ծախեն, հայնք, որ ի կապալ հանեն կպիսկոպոսաց թուլութեամբ՝ որ շեն այնոնք զէզ աստանայապաշար ի յալին: Եւ չէ զնս այա մեն, ապա զհնարոցն և զպատարագն ալ կու ծախեն: Զոր կու հրամայէ արևելքս զայնպիսիսքն հրով ալրել և քարիսով, զէզ անհատա. զի մուս ու անիրտ տիպոն գրիին: Եւ չէ ալ իրաւութ, որ տալ մեռելն՝ քան զիր հալան ու զպատկիկիթն. և այլ նոր զիր է և նոր սահման՝ որ ոչ է յառաջնոցն ու անզկա ժողովուրդն հանել ին տգիտութեան: Եւ այա բանի մեղքն, ի յառաջնորդաց շիխքն է: Թող աղէկ գիտենան, որ կու համբերեն զի յկայ ամենեկին հրամանք, որ երէց ի յալ իրիցու ծխին մասն երթալ, քաւլ թէ ստղոյն երէցն մեծիք»: Եւսյն Գատաստանագրքի 48-րդ հոդվածն ասում է. «Եւս հրամայէ արևելքս և կու պնդէ, որ բնա ոչ մասուց անուս քահանայն և ոչ հողագրամ: Եւ ալ կու պնդէ զեկեղեցույ առաջնորդքն և զաշխարհի գատաւորքն, որ ուր էրէց գտնու՝ որ անուս, նա զկարոն անուսն, և թագաւոր կամ պարոն պիտք ալրել: Եւ պիշ որ ունի նա անուս իր հալալ, զի յալ զարպտուն է քան անհատսին որդեցն»: Այս երկու հոդվածներին կազդ կերպով երևում է, որ օրենքը քրեական հանցագործություններ է համարում՝ ա) թաղման համար դրամ վերցնելը, բ) գերեզմանառեղ վահանելը, գ) հողորդելու և պատարագի համար պարիսպար հատուցում ստանալը, դ) մեռածի որոշ գույքը սպորինաբար վերցնելը, բացառությամբ հագրատից և անկողնուց, որ թույլատրվում էր: Այս արարքներն էլ Հենց այսպես կոչված սիմոնիականության դրսևորման մեկն էին, որոնք համար որպես պատժ յայտնվում էին և ոչ միայն օրինազանց հոգևորականներին կարգալուծ անելը, այլև որոշ դեպքերում նրանց մահապատժի էին դատապարտում, բռնազրավում ամբողջ գույքը: Ընդ որում, մահապատժի իրականացման մեկը երկուսն էին՝ քարիծումը և այրելը:

Այսպես էր լուծվում սիմոնիականության պատճեկության հարցը հին և միջնադարյան հայ քրեական իրավունքում: Սիմոնիականությունը պատժվում էր իրեն կաշառակերություն քողարկված մե: Ինքոված կանոնների և աշխարհի օրենքների դրամությունն ինքնքստիքյան վերցրած միաժամանակ պերճախոս կերպով վկայում է այն մասին, որ հին և միջնադարյան հայ հոգևորականները «Քրիստոսի ազնիվ հովիվ» լինելուց համառ շատ հեռու կանգնած մարդիկ են եղել, մարդիկ, որոնք հարկ եղած զնայցերում շեն զլացել անգամ իրենց հոգևոր գիրքը շարաշահել և դրանով մարդկանց, ստանձնապես աղքատ հավատացյալներին, բացահայտ կերպով կողոպտել:

Գեներալն բանալը և այն կողպտելը: Հին աշխարհում և միջնադարում ինքնազուտի կերպով գերեզման բանալը ծանրագույն քրեական հանցագործություն էր համարվում: Այլ արարքն առանձին զաժանությունը պատժվում էր մանավանդ այն ժամանակ, երբ զուգորդվում էր մեռածների հետ թաղված զանազան արժեքների հախճապման կամ, ինչպես ասում են, դիակապտության հետ:

Որպես միմյանց հետ սերտորեն անելվող հանցագործություններ, գերեզման բանալն ու դիակապտությունը պատժվում էին զնուս անհիշելի ժամանակներից ու բոլոր ժողովուրդների մոտ: Ստրկատիրական և ֆեոդալական սկտությունների պատմության հազարամյա զեպքեր են հայտնի, երբ հանցավոր տարրերը համառն յուրական մերկ կարիքից, իսկ երբեմն էլ ազահությունից զզված ոտնձգություններ են կատարել թագավորների, բարձրաստիճան կրոնավորների և հարուստ իշխանավորների զամբարանների, գերեզմանատների կամ հուշարձանների դեմ, առանց նույնիսկ ամենափոքր շափով վախենալու, որ իրենց այդ արարքների, իրենց «հանցանքի ու մեղքի» համար նրանց հանցեթմալ կլանքում ժառանգապիսի զաժանությունը կպատժվեն և այն էլ կպատժվեն աստվածային դատաստանի կարգով:

Սեդիպտոսի փարավուններից մեկի՝ Թուլանհամոնի զամբարանի պիզումների զեկավար պրոֆ. Գ. Կարտերը իր «Թուլանհամոնի զամբարանը» աշխատության մեջ զալին է այն երդակցություն, որ այդ զամբարանն իր որդյության հենց առաջին շրջանում անհայտ հանցագործների կողմից կողոպտվել կամ կողոպտուտի փորձ է ենթարկվել: Բանից զուրք է դալիս, որ հանցագործները շեն երկնելն նույնիսկ հին Սեդիպտոսում աստված համարվող փարավունի գերեզմանը կողոպտելուց: Նույնպիսի երևույթներ կան նաև

մյուս ժողովուրդների մոտ, և ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև այդ երևույթների սուրբկեանները վախճցել են, ապա նրանք վախճցել են նախ և առաջ աշխարհիկ պատիժներից, վախճցել են մահապատժի դատապարտվելուց, բայց ոչ երբևր աստվածային պատիժներից:

Գերեզման բանալու և այն կողդպտելու պատժելիություն վերաբերյալ իրավանքներ մենք գտնում ենք Հին և միջնադարյան պետությունների թե՛ աշխարհիկ և թե՛ կանոնական բազմաթիվ օրենսդրական-իրավաբանական ակտերում: Այդ մասին ուղղակի հիշատակումներ կան նաև Հայոց կանոնադրում և հայ աշխարհիկ օրենքներում: Վաղարշապատի եկեղեցական առաջին ժողովում բնորոշված «կանոնը սրբույն Գրիգորի Պարթևի՝ հանդուժմն նիկիականին» ակտում կար առանձին հոդված, որովհ ժառանցուցը էր արվում, թե նա, ով ինքնազույս կերպով գերեզման է բաց անում, դատապարտվում է բռնառյալ ապաշխարարների կանոնի մեջ ոչինչ չէր սովորում այն մասին, թե գերեզման բաց անելը պետք է արդար զուգորդվի դիակապտության հետ, թե ոչ: Եվ որովհետև այդ մասին որևէ հիշատակում չկար, ապա պետք է ենթադրել, որ գերեզմանը բաց անելը ինքնբարեխրիստական վերցրած հետապնդելի և դատապարտելի արարք էր համարվում, իսկ երբ այն զուգորդվում էր դիակապտության հետ, հանցագործը պատժվում էր առավել խստությամբ այն պարզ պատժառում, որ նրա կողմից կատարվում էին երկու տարբեր հանցագործություններ: Բարեզր Մեծին վերագրվող կանոններից մեկը, օրինակ, դիակապտության համար նախատեսվում էր 16-ամյա ապաշխարանք, իսկ այսպես կոչված Հեռավոր սուրբ հայրերի կանոնները, հիմք ընդունելով մովսինական իրավունքի համապատասխան օրինադրությւն, ուղղակի կերպով սղղաբարում էին, թե դիակ կողդպտող մարդիկ պետք է մահվան դատապարտվեն:

Գերեզման բանալու և դիակապտությունը որպես ծանրագույն հանցագործություններ պատժվում էին նաև մեր աշխարհիկ օրենքներով: Գավիթ Այսվկա որդու կանոններից մեկը՝ Տ1-րդ կանոնը, կորականապես արգելում էր գերեզման բանալու, առանց արտքի շարժանիքներին որևէ նշանակություն տալու. «Այլ որ առ անձուկ՝ զոր ունին ծնողք առ ծնեալն, կամ եղբայր առ եղբայր, կամ կին առ ան, ոչ զոչով մեքծ թ մամանակի մահույն, առ փափազ սիրոյ, բռնան զգերեզմանն, մի՛ որ իշխեսցն զայս աննն, զի ընդ անիծիք է և եթէ յանդգնի որ և բացցէ և լնտոյ զղճանայ, ծանր վատանկաւ Եւ մա՛ ապաշխարեսցէ», ասված էր այդ կանոնում: Կանոնից երևում

է, որ նույնիսկ բարի նկատառումներով գերեզման բանալու Գավիթ Այսվկա որդու մամանակ պարզապես արգելված էր և արգելված էր կանոնական իրավունքի, այսինքն ըստ էության քրեական պատժի սպառնալիքով:

Մխիթար Գոշի Գառաստանագրքին իր հերթին դիակապտության հարցին առնձինջ նորմ է հատկացնում: Գա Գառաստանագրքի երկրորդ մասի՝ այսպես կոչված աշխարհիկ օրենքների 89-րդ հոդվածն է: Այստեղ Գոշը ամենից առաջ որոշ փոփոխությամբ բերում է Հետևող հայրերին վերագրվող կանոններից 17-րդ կանոնը և դրան համապատասխան մատնանշում է, թե «Ղզիակողդպտեթէ ըմբռնեսցի և ապա կամօք խոտառմանեալ— ոչ մեռցի, իսկ եթէ որ ոչ սպանցէ, քննեսցէ, զնա սուրբ եկեղեցի և մինչև ի մահ որոշեսցի, բանդի տեղի ապաշխարաթեան նորա չիք»: Այսպես հարցը դեկտվ, նա այնուհետև սահմանում է իր իրավանքը, որը բացառում է դիակապտության ղեկավարում մահապատժի կիրառումը և մահապատժի փոխարեն այդ արարքի համար նախատեսում է արյան գին հատուցում: Գոշի մոտ այստեղ փաստորեն այնպիսի դրություն է առաջանում, որ դիակապտություն իր իրավաբանական հետևանքներով նույնանում է զիտալորշալ սպանության հետ: Գոշը քրեական արդարագրության իրականացման հարցում այս երկու հանցագործությունների միջև հավասարություն նշում է զնույն: «Յայտ է յասացելոցս,— ասում է նա,— եթե՛ անըղջիցն մահ որոշեսցա, այլ այնպիսեաց արեան լիցի զին ըստ ցուցնելոյ օրինակն» (այսինքն այնպես, ինչպես Գառաստանագրքում նախատեսված սպանությունների ղեկավար, Ա. Ք.) դարձնալ և ապաշխարություն պատշաճելու: Եւ այդ լիցի դատաստան այդոցնի իրաւացիս: Իր իսկ սկզբունքին հավատարիմ մնալով Գոշը, ինչպես տեսնում ենք, կանոնական իրավունքի համեմատ հայտնի սահմաններում մեղմացնում է նաև դիակապտության պատժելիությունը:

Դիակապտության պատժելիության հարցը չի անտեսվում կիրժկյան պետության դատաստանագրքում: Մմբատ Սպարապետն այդ արդքը նախատեսում է նշված Գառաստանագրքի 134-րդ հոդվածում, որը, ինչպես պարզ կիրպով կարելի է նկատել, խմբագրված է հայ եկեղեցական կանոնների և առաջին հերթին Մխիթար Գոշի Գառաստանագրքի երկրորդ մասի վերահիշյալ՝ 89-րդ հոդվածի սկզբունքների որով: Հոդվածում ամենից առաջ խոսվում է այսպես կոչված անհայտ մարդկանց մասին, ովքեր դիակապտությամբ են զբաղվում: Հենվելով կանոնական իրավունքի վրա, Գառաստանագրքը մատնանշում է, որ եթե այդ հանցագործները հան-

ցագործութեան վարում բռնական և խոտովանեն իրենց կատարած արարքը, նրանք մահապատժի շնն ենթարկվի, բայց եթե շտապում վանեն, ապա նրանց նկատմամբ որևէ զիջում կամ ներողամտութեան լինել չի կարող: Նրանք պետք է իրենց կատարածի դիմաց արյան գնի համեմատ հատուցեն, այսինքն հատուցեն որպես սպանություն կատարողներ: Բացի այդ, նույն հողովածում ասած է, որ այդ անձինք պետք է նախազուշացվեն, թե կրկին անգամ դեակայություն կատարելու դեպքում նրանք կենթարկվեն մահապատժի՝ կամ կենդանի-կենդանի կվաղվեն, կամ թե կենթարկվեն ցմա՞ քանտարկություն:

Այսպիսով, կրիսթիան օրենքը հայ թրեական իրավունքում մտնում էր դիակայություն որպես կրկնակի վտանգավոր հանցագործություն հասկացությունը ու այն դեպքում խոտացնում էր պատմելությունը, որին մենք շնքը հանդիպում ոչ կանոնական իրավունքում և ոչ էլ Մխիթար Գոշի Դատաստանագրքում: Բերում են 134-րդ հոդովածի կրնտեքստը ըստ Կարտու: Եվսան այն ազգ անհատացն՝ որ զմեռեալ կողպտեն՝ կու հրամայլ արէջքս որ երբ բռնեն զինք, ու մէնակ ի խուստ զայ վասն այն մեռելին՝ նա շմեռնի. ապա այնոր բնաւ ոչ ապաշխարութիւն կայ և ոչ թողութիւն, ոչ եկեղեցւոյ և ոչ ի դարպսէ, քանզի զնէ ինք զինք, զէզ որ գրեալ կայ յարեան զինք: Ու զնեն ի լինք նշան, որ թե՛ այլ այնէ նա մեռնի, և կամ զինք կենդանի թաղեն, ու կամ ի զընդանն կենայ ու մեռնի»: Այսպես էր պատժվում դիակայությունը Կրիսթիան Հայաստանում: Ինչպես բաղամթիվ այլ հանցագործությունների դեպքում, այնպես էլ այստեղ պատժիք անհամեմատ խոտանում է և դրա կիրառումն էլ փաստորեն պետության իրավասութեանն էր անցնում, որովհետև միայն պետությունն էր լիակազմի իր համապատասխան օրգանների միջոցով ծանր հանցագործություններ կատարած մարդկանց դատապարտել ցմա՞ քանտարկություն, մահապատժի կամ նման այլ խիստ պատիժների:

Այլազգի Լեւիտաներին մկրտելը: Քրիստոնեական եկեղեցին որոշ շրջանում չէր հանդուրժում այնպիսի զնպքեր, երբ նրա հոգեվոր սպասավորներն այլազավաններին, այդ թվում նրանց երեխաներին մկրտում կամ համապատասխան ծիսակատարությանը կրկնում էին: Դա համարվում էր կրոնական ծանր հանցագործություն: Եվ մենք տեսնում ենք, որ Դավիթ Այվկա որդին իր Կանոններում նշում է, որ ոչ մի կրոնավոր նման քայլի չպետք է դիմի, և օրինազանցները կենթարկվեն ռեպրեսիաների, որոնք իրենց բնույթով բոտ էլուիան քրեական պատիժներ էին հանդիսանում:

Այլազգա որդին նախատեսում է վերահիշյալ օրինախախտման երկու տեսակներ. ա) երբ արարքը կատարվում էր դիտավորությանը, այսինքն մկրտողի դիտակցական ցանկությանը, և բ) երբ այն կատարվում էր անզուշուցությամբ, այսինքն «անհոգաբար» կամ «սգիտությամբ», ինչպես ասվում է կանոնի մեջ, երկու դեպքումն էլ օրինազանքը պատժվում էր երկարամյա և ծանր ապաշխարանքով: Որոշ կրճատումներով բերենք Այվկա որդու 21-րդ կանոնը, որտեղ խոսվում է այլազգիների մկրտության անթույլատրելի լինելու և կատարվելու դեպքում նրա հնդիսակներին պատժելու հիմունքներին ու սահմաններին մասին: Ինչպես քանիցս մատնանշել ենք «այլազգի» հասկացություն տակ Այվկա որդին հասկանում էր բացառապես մահողականներին. «... այլ բոլորովին որ զկարգ մկրտութեան կատարէ ի վերայ նոցա (այսինքն այլազգականներին նկատմամբ) ըստ մեզ, լուծել ի քահանայութեան կարգէն և մի պատարագեցել զՔրիստոս, Եւ թէ մի անգամ որ արարեալ Եւ ամ արտաքոյ կացցէ և երկու ի ներքս և ապա հաղորդեսցի արիւնացն, այլ ոչ պատարագին: Ապա եթէ անհոգաբար արարեալ ի նոյն, մինչև ցմա՞ ապաշխարեսցէ և հաղորդեսցի արիւնացն... Բայց ամենեւին ամենայն խորհրդով պարտ է հրաժարել ի կնքահանրութեան այլազգեաց: Զի զի՞նչ բաժին է հաւատացելոյն ընդ անհաւատին և կամ Քրիստոսի ընդ Բիլիարայ: Եւ թէ մի անգամ արարեալ որ տղիտութեամբ, մեծաշան սպաշխարեսցէ, որպէս կամի քահանայն ողորմութիւն արասցէ: Ապա եթէ արձամարտէ և անփոյթ անէ զայս, նզովի ի կենսու և ի մահո՞: Այսպես էր այլազգականների երեխաների մկրտության պատժելիության հարցը լուծվում Դավիթ Այվկա որդու Կանոններում:

Սրանք էին այն կրոնական հանցագործությունները, որոնք նախատեսված էին հին և միջնադարյան հայ թրեական օրենքներում:

**ԱՆՁԻ ԳԵՄ ՈՒՂՎԱԾ
ՀԱՆՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Անձի զեմ ուղղված հանցագործությունները մարդու կյանքի, առողջության, սեռական անձնուձիխիության, ազատության, պատվի և արժանապատվության զեմ ուղղված հանցագործություններն են: Դրանք այն հանցագործություններն են, որոնք մասանշված և նախատեսված լինելով քրեական օրենքներով, մյուս հանցագործությունների նման հետապնդում են մեղավորների նկատմամբ պետական հարկադրանքի յուրահատուկ միջոցների գործադրմամբ, այսինքն քրեական պատիժների կիրառումով և կամ դրանց կիրառման սպառնալիքով:

Քրեական արդարադատության իրականացման հազարամյա պատմության մեջ անձի զեմ ուղղված հանցագործությունները, առանձնապես տարրեր նպատակներով ու շարժառիթներով կատարվող սպանությունները իրենց վրա են սեռել ոչ միայն այն օրգանների ու պատճառատար անձանց ուշադրությունը, որոնք ըզրազվել են օրենքների ընդունման ու շրտպարսիման գործով, այլև աշխարհահռչակ փիլիսոփաների, պատմաբանների, գրողների և արվեստագետների ուշադրությունը: Բարձր վասնկլավորություն ներկայացնող այդ հանցագործությունների հասարակական-դասակարգային էությունը, դրանց սուբյեկտների հոգեբանության վերլուծությունը կարելի է գտնել հին աշխարհի, միջնադարի և նոր ժամանակների այնպիսի հանձարեղ գրողների ու արվեստագետների ստեղծագործություններում, ինչպիսիք են Համիտոսը, էսքիլևսը, Շեքսպիրը, Սեղվանոսը, Հյուգոն, Տոլստոյը, Գոտտեկին, Ռեպինը և ուրիշներ: Դժվար է գտնել ժամանակակից հասակացույցայր որևէ պատմագիր, որն իր աշխատություններում անդառ-

դարձած շինի դասային-դասակարգային, քաղաքական, կրոնական կամ կենցաղային հողի վրա կատարված սպանություններին: Այդ պատմագիրների շարքին առաջին հերթին պետք է դասել նաև հին ու միջնադարյան բազմաթիվ հայ պատմիչներին, այդ թվում՝ Աղաթանգեղոսին, Բուզանդին, Եղիշին, Խորենացուն, Գանձակեցուն, Լատիվերցուն, Գրասխանակերտցուն և ուրիշներին:

Սպանության էությունը և դրա պատժելիության պրոբլեմը այս կամ այն չափով շոշափվել է համարյա բոլոր ժողովուրդների զավանաբանական-կրոնական գրականության մեջ, տարեգրքերում և սոցալային էպոսներում: Աստվածաշնչի ու Ղուբանի պատմությունները ինչ են ամենատարրեր բնույթի սպանությունների վերաբերյալ գաղտնիություններով: Դրանցից ամենավաղ երկրորդը բացահայտ և աներկիտ կերպով կոչ էր անում սպանել կամ խեղանումս անել «այլազգավաններին», «անհավատներին», «անօրեններին» և ընդհանրապես բոլոր նրանց, ովքեր ոտնձգում են մասնիցականության, որպես սմիակ ճշմարիտ» համաշխարհային կրոնի հիմունքների զեմ:

Հին և միջին դարերի հազարավոր տարեգրքեր մի տեսակ սպառնազարգված են թագավորների և ընդհանրապես իշխանավորների, բարձրաստիճան հոգևորականների, զանազան աղանդների հարած մարդկանց, գյուղացիական հեղափոխական գործիչների, ինչպես նաև ռամիկ մարդկանց սպանության, նրանց խեղանդամ դարձնելու մասին աշուտոտ պատմություններով: Բազմաթիվ ազգային էպոսներ և այդ թվում մեր Սասունցի Գավիթը, վերջապես են նրանով, որ զրանց հերոսներից շատերը իրենց հակառակորդների կողմից սպանվում կամ վնասազերծվում են:

Շահագործողական հասարակությունների պատմություններին մեջ անձի զեմ ուղղված հանցագործությունները թերևս ըստ երեւելույթին ամենից տարածված հանցագործություններն են եղել: Մեր կարծիքով դրանով պետք է բացատրել այն, որ քրեական օրենսդրության առաջին իսկ հուշարձաններում դրանց վերաբերող իրավանորմերը գերակշիռ տեղ են զբաղում: Այդ բանում համոզվելու համար բավական է թեկուզ թուօցիկ կերպով ծանոթանալ Համալսարանի օրենքներին, մովսիսական օրենսդրությանը, Մանուի կրոնա-իրավաբանական գրքերին, բարբարոսական պրավաճներին, հին և միջնադարյան ռուսական օրենսդրության հիշատակարաններին: Հայոց կանոնագրի բազմաթիվ նորմեր, ինչպես նաև Գավիթ Ալավկա որդու Կանոնների, Մխիթար Գոշի և Սմբատ

Սպարապետի զատաստանագրքերի տասնյակ հոդվածներ նույնպես վերաբերում են անձի դեմ ուղղված հանցագործություններին:

Ինչպես բրեհկան օրենսդրությունն իր ամբողջությամբ վերցրած, այնպես էլ անձի՝ նրա կյանքի, առողջության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված արարքները հետապնդող ու պատժող օրենքները հին և միջին դարերում բացաճաշա դասային-դասակարգային բովանդակություն ունեցող օրենքներ են եղել Պրոֆ. Մ. Գ. Շարգորոզյուր քառերով ասած, բրեհկան իրավունքի պատմության զարգացումը, անձի դեմ ուղղված հանցագործությունների մասին օրենսդրության պատմության վերլուծությունը ցույց են տալիս, որ մարդու անձնվիճերստիքային վերցրած իրերը չի պաշտպանվել: Քրեական իրավունքի ամբողջ պատմությունը ապացուցել է, որ հազարամյակներ շարունակ պաշտպանվել է ոչ թե ընդհանրապես մարդի՝ նրա կանքը, ազատությունը կամ սեռական անձնոճխելիությունը, այլ պաշտպանվել է որոշակի ու կոնկրետ մարդը, պաշտպանվել է „муж“-ը, „franc“-ը, „Homo liberum“-ը: Այդ նույն պատմությունն ապացուցում է, որ մարդը պաշտպանվել է՝ նախով նրա դասային-դասակարգային պատկանելիությանը, ինչպես նաև եղևով նրա ազգային կամ կրոնական պատկանելիությունից, հիմք ընդունելով նրա գույքային և պաշտոնական դիրքը⁴³:

Ստրկատիրական և ֆեոդալական պետությունների բրեհկան օրենքները, բացորոշ կերպով իրենց պաշտպանության տակ չէին առնում մարդկանց վիճիարի զանգվածների իրավունքներն ու շահերը: Հին Հունաստանում, Պարսկաստանում, կարթագներում, Հռոմում և այլուր ստրուկները հենց պետական օրենքների ուժով համարվում էին արժեքային իրեր կամ ստրկային: Սպանոսյան մասին հռոմեական օրենքը, լիոսելով արդեն մարդու արժանապատվությունը պաշտպանող մյուս օրենքների մասին, ստրուկներին չէր վերաբերում: Այդ օրենքը պաշտպանում էր բացառապես ստրկատերերին որպես միակ լիիրավ ճանաչված քաղաքացիների: Ստրուկի սպանության կամ նրա նկատմամբ բռնությունը հանցագործություններ չէին համարվում:

Միջնադարյան ֆեոդալական պետությունների օրենքներով ճորտերին սպանելը թեև ձևակապորեն արգելված էր որպես բրեհկան հանցագործություն, բայց նրանց վաճառելը կամ գնելը մի-

անգամայն օրինականացված արարքներ էին, էլ չենք խոսում նրանց պատվի ու արժանապատվության դեմ ուղղված, ազատություն և սեռական անձնոճխելիություն խախտող աշարքների մասին, որոնց պատժելիության վերաբերյալ խոսք իսկ լինել չէր կարող: Ճորտատերեր իրենց զուգահեռների նկատմամբ ամենաաշխանդակ ռեազործություններ, անգամ բռնաբարություն էին կատարում և պետական օրենքները նրանց այդ ռեազործություններին համար կամ բողոքովն չէին պատժում, կամ պատժում էին ամենաթեթև տուժերով, օրինակ, տուգանքով, ապաշխարանքով, վնասի հատուցմամբ և այլն: Չուրանք կնոջ դավաճանության համար մահապատիժ էր նախատեսում, բայց ֆեոդալ մահմեդականի կենսադրությունը իր ստրկության, օրինակ, հափշտակված քրտոսության կնոջ հետ զիտվում էր որպես օրինաչափ արարք: Այս և նման փաստերն ասում են, որ անգամ անձի դեմ ուղղված հանցագործ արարքները նախատեսող օրենքներն ըստ էության դասակարգային բովանդակություն ունեցող օրենքներ են եղել իրենց գոյության ամբողջ պատմաշրջանում:

Եթե նախնադարյան տոհմատիրական կարգերում, որտեղ դասակարգեր չկային, հասարակական հարկադրանքի իրականացման ձևերը հավասարապես կիրառվում էին բոլոր մտրդական նրկատմամբ, եթե այնտեղ արյան վրեժի ու աշխարհազրկման ինստիտուտների կիրառմամբ ամենամեղքը կերպով հետապնդվում էին բոլոր նրանք, ովքեր ոսնձգում էին տվյալ տոհմի ներքին ու արտաքին անվտանգության կամ տահմայինների որպես անհատների դեմ, ապա հակամարտ հասարակության կազմավորմամբ կյանքի կոչված օրենքները ժամանակի ընթացքում վերացնում են հասարակական շարունակ շարունակ սահմանված ու արտասովորված այդ կարգը և զրա փոխարեն մտցնում են դասակարգային արշարադատության սկզբունքը:

Սպանության, մարմնական վնասվածքների, սեռական հանցագործությունների, պատվի ու արժանապատվության դեմ ուղղված և անձի դեմ կատարվող մյուս բոլոր հանցագործությունների համար հին և միջնադարյան օրենսդրական հուշարձանները խիստ պատիժներ էին նախատեսում, բայց այդ օրենքների հովանավորությունը օգտվում էին միայն արտոնյալ դեպքեր ու դասակարգերը: Այդ դասերի ու դասակարգերի հազարավոր հոգիացած կայսրերը, պետական գործիչները և հոգևոր քրմերը հաճախ անպատիժ կերպով ծանրագույն հանցագործություններ էին կատարում: Հռոմի, Բյուզանդիայի, հին Հայաստանի, ֆեոդալական Ռուսաս-

⁴³ См. М. Д. Шаргородский, Преступления против жизни и здоровья, М., 1948, էջ 5-6.

տանի և հին ու միջնադարյան մյուս երկրների թագավորների, իշխանների, բարձրաստիճան հոգևոր սպասավորների ձևորեն ներկված են իրենց բազմաճաղար զոհերի արյունով, թեև այդ ամենի համար նրանցից և ոչ մեկը դատական կամ վարչական պատասխանատվության չկանչվեց և չպատժվեց:

Առաջին քրիստոնյաների մասսայական ուշնչացումը, զանազան ազնվավորների դեմ կիրառվող զստան բռնությունները, իրենց մարդկային իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար բմբուսացած աշխատավորների ֆիզիկական քնչնչումը, ֆեոդալների կողմից սեփական ճորտերի նկատմամբ կիրառված մանրագույն ասորիությունները՝ սկսած սովորական ծաղր ու ծանախից կամ վիրավորանքից մինչև ֆիզիկական խոշտանգումներն ու սպանությունները, փաստորեն, ահավոր հանցագործություններն էին, որոնց սուրյակները, օրենքից վեր կանգնած լինելով, չէին պատժվում: Այսպիսի դասակարգային բնույթ ունեին քրեական օրենքները հին աշխարհում, բովանդակ միջնադարում, ինչպես նաև արևմուտից մի շրջանի ֆեոդալական պետություններում:

Ռուսմասիությունը ցույց է տալիս, որ հնագույն ժամանակներից սկսած անձի դեմ ուղղվող բոլոր հիմնական հանցագործությունները ավելի կամ պակաս լրիվությամբ օրենքով նախատեսված են եղել: Այդ հանցագործությունները, ի տարբերություն մի քանի այլ խմբերի մեջ մտնող հանցագործությունների, միմյանցից հեշտությամբ տարբերվում ու սահմանազատվում են: Քրեական իրավունքի ժամանակակից գիտության տեսանկյունից հարցին մոտենալով դրանց կարելի է դասակարգել հետևյալ կերպ. սպանություններ, մարմնական վնասվածքներ, սեռական հանցագործություններ, մարդու բնական ազատության դեմ կատարվող հանցագործություններ, կյանքի ու առողջության համար վտանգ ներկայացնող հանցագործությունները և անձի պատվի ու արժանատվության դեմ ուղղված հանցագործություններ:

Հին և միջնադարյան պետությունների քրեական օրենքներով, այդ թվում հին և միջնադարյան հայ քրեական օրենքներով նախատեսված՝ անձի դեմ ուղղված հանցագործություններին վերաբերող իրավանքների իմաստը կարելի էր շարադրել նաև այլ սխեսմով կամ դասակարգել այլ կերպ, բայց մեր կարծիքով մասնանշված դասակարգումը գիտականորեն միանգամայն հիմնավորված դասակարգում է:

Հին և միջնադարյան բոլոր երկրների քրեական օրենսդրությունների մեջ սպանությունները, առանձնապես գիտավորյալ բազմաթիվները, ամենից հաճախ նախատեսվող հանցագործությունն է հանդիսացել: Գա միաթամանակ այն հանցագործությունն է եղել, որի վրա քրեական իրավունքի պատմության և պատմական սեսություն մեջ հատուկ ուշադրություն է դարձվել: Իրեն ինքնատիպ հանցագործություն, սպանությունը աչքի է ընկել հանցակազմի բոլոր տարրերի էություն առավել ցայտուն դրսևորմամբ: Հանցագործության օրյակտ, հանցակազմի օրյակտիվ կողմ, հանցագործությունն սուրյակտ և հանցակազմի սուրյակտիվ կողմ հասկացությունները որպես իրավաբանական հասկացություններ կազմավորվել են նախ և առաջ այդ հանցագործության էության իրավաբանական-գիտական գեահատման որոցեսում:

Աշխարհի բազմաթիվ անվանի քրեագիտներ միանգամայն գիպուկ կերպով մասնացույց են անում, որ քրեական իրավունքի ընդհանուր մասի համարյա բոլոր ինստիտուտները, սկզբունքները և հասկացությունները սկզբնավորվել ու զարգացել են այդ հանցագործության դեմ մղված քրեա-իրավական պայքարի ընթացքում:

Նախահեղափոխական Ռուսաստանի անվանի քրեագետ Ն. Ս. Տագանցը ցույց է տալիս, որ Ալեքսեյ Միխայլովիչ 1649 թ. օրենսդրում, Պետրոս Առաջինի գիվորական կանոնագրում, Կառլինայում, Ֆրանսիական թագավորների օրգոնաններում, անգամ XVI և XVII դարերի դոկտորնայում քրեական իրավունքի բոլոր այսպես կոչված ընդհանուր մասի հարցերը քննարկվում էին համարյա բացառապես սպանության վերաբերյալ ուսմունքը շարադրելիս⁴⁴: Գերմանացի քրեագետ Ֆ. Լիստը նշում է, որ քրեական իրավունքի ընդհանուր մասի համարյա ամբողջ ուսմունքը զարգացել է սպանությանը վերաբերող օրենսդրությունից և գիտական դատողություններից⁴⁵: Կուլիշերը ոչ առանց հիմքի այն միաթե է զարգացնում, որ քրեական իրավունքի ընդհանուր մասի հարցերի մեծամասնությունը մեկնաբանվել է այդ հարցերը սպանության վերաբերմամբ կիրառելով⁴⁶: Սովետական տաղանդավոր քրեագետ

⁴⁴ Տճ՝ Н. С. Таганцев, О преступлениях против жизни, т. 1, СПб. 1870, էջ 12:

⁴⁵ Տճ՝ F. List, Tötung und Lebensgefährdung, Vergl. Darst. Besonderer Teil, B. V, էջ 11:

⁴⁶ Տճ՝ В. М. Кулишер, Посягательство на жизнь и здоровье с точки зрения сравнительного законодательства. «Право», 1912, էջ 247:

Մ. Գ. Շարդորդսիկին այն միտքն է հայտնում, որ հանցակազմի սուբյեկտիվ կողմի հարցը, պատճառական կապի հարցը, հանցակցության, հանցագործության նախապատրաստության և հանցափորձի հարցերը նշանակալից շարժվել են կենդան հանցագործության, այսինքն՝ սպանության գործերի կապակցությամբ⁴⁷։ Այսպիսին են եղել սպանությունը և այդ հանցագործությունը պատժելի հայտարարող օրենքները իրենց պատմության ընթացքում, այդ պատմության զարգացման մեջ։

Մի այլ աշխատության մեջ մենք ցույց ենք տվել, որ հին և միջնադարյան հայ քրեական իրավունքում տեղ գտած ընդհանուր մասի ինստիտուտները, սկզբունքները և հասկացությունները կամ, ա՛վելի որոշակի ասած, հանցագործության հասկացությունը, մեղքը, նրա ձևերն ու տեսակները, պատճառական կապը, մեղադանությունը և անմեղությունկության ըմբռնումները, անհրաժեշտ պաշտպանությունը, ծառահող անհրաժեշտությունը, հանցագործության կատարման փուլերը, հանցակցությունը, պատժի խնդիրները և նպատակների զեահատումը, պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները ու այլ նման ըմբռնումները նույնպես կազմավորվել ու զարգացել են անձի զեմ ուղղված հանցագործություններ, առանձնապես սպանության տարրեր ձևեր նախատեսող օրենսդրական-իրավական նորմերում⁴⁸։

Քրեական իրավունքի համաշխարհային պատմության մեջ սպանությունը, հասկանալի է, նախ և առաջ դիտավորյալ սպանությունը միշտ էլ նախատեսվել ու անողորքաբար պատժվել է։ Կեռ հին եգիպտական օրենքներով այն պատժում էր հանցագործին տարկացնելով, իսկ ա՛վելի համախ նրան մահապատժի դատապարտելով։ Համմուրաբիի օրենսդիրը նախատեսում էր սպանության մի քանի տեսակներ և բոլոր զեպետում էլ զրանց կատարողների նկատմամբ կհրապճող պատժը համարում էր մահապատժի։ Մովսիսական օրենքներն այս տեսակներից բացառություն են կազմել։ Դրանք մարդասպանների նկատմամբ թույլատրում էին արյան վրիժառություն, իսկ ա՛վելի ուշ շրջանում՝ մահապատժի։ Ըստ թալիտի օրենքի մահապատժի իրականացման հիմնական ձևը բարկոծումն էր։ Հին կտակարանի շատ բաժիններ ու դուրսեր լեցուն են հանցագործներին բարկոծելու մա-

սին օրինադրույթներով։ Մահապատժով էին պատժվում սպանության բոլոր տեսակները, բացառությամբ այն զեպերի, էրբ բուսանությունը կատարվել էր ֆիզիկական ու հոգեկան բռնության գործարման սպանալիքի պահջությունը։ Անզուլությունը կատարված սպանությունների զեպում, նույն իրավունքի համաձայն, մեղավորները արտաքում էին։ Արտաքումաները կարող էին ապաստանել այսպես կոչված սպաստան բազարներում, որտեղ նրանց հետապնդումը զազարեցվում էր։

Սպանության մասին իրավանքների զարգացումը առանձին հետաքրքրություն է իրենից ներկայացնում հռոմեական իրավունքում։ Այստեղ անձի զեմ ուղղված հանցագործությունների թվում առաջին անգը բռնում էր դիտավորյալ սպանությունը։ Կա կարծիք, որ հռոմեական ազատ բաղաբացու սպանությունը նրանց պիտիվել է որպես պետական ծանր հանցագործություն և զատվել է պետական հանցագործությունների թվին։ Այն հետապնդվել է պետական իշխանության համապատասխան օրգանների կողմից և պատժվել է մահապատժով։ Ճիշտ է, սկզբնական շրջանում այդ իրավունքը միմյանցից էր տարբերում դիտավորյալ ու անզուլյալ սպանությունները, անզամ պատասխան սպանությունը, բայց ժամանակի ընթացքում մենք տեսնում ենք, որ այդ իրավունքի բաժանակն-իրավական նորմերը բավականին հատկ կերպով միմյանցից զանազանում են սպանության բոլոր տեսակները՝ սահմանազեմելով զրանց բոտ հանցակազմի սուբյեկտիվ կողմի, աշինջըն բոտ մեղքի (մեղավորության) ձևերի։ Հռոմեական իրավունքը պատժում էր ոչ միայն ավարված սպանությունը, այլև սպանությունը նախապատրաստությունը, անգամ հանցափորձը։ Պատրժվում էին սպանության նկատառումներով կատարվող բոլոր արարքներն ու գործողությունները, այդ թվում սպանության կատարման նպատակով արտահայտված մտահղացումը։

Սպանության և նրա տեսակների մասին իրավանորմերով հարուստ են բարբարոսական պրավզաները և ռուսական իրավունքի հին ու միջնադարյան հիշատակարանները։

Բարբարոսական պրավզաները սպանության տարրեր տեսակների համար տարրեր պատժներ էին նախատեսում։ Պլյազեի հատուցումը, աշխարհագրվումը և մահապատժը այն հիմնական պատժաձևերն էին, որ կիրառվում էին տարրեր նկատառումներով կատարված դիտավորյալ սպանության զեպում։ XII դարից սկսած դիտավորյալ սպանության ծանր տեսակները պատժվում էին բացառապես որակյալ մահապատժներով, իսկ ոչ ծանր տե-

⁴⁷ Steu M. D. Шаргородский. Преступления против жизни и здоровья. М., 1948, էջ 37։

⁴⁸ Ա. Ք. Քովմայան, Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Երևան, 1962 թ.։

սակները, օրինակ, անհրաժեշտ պաշտպանության սահմանները ունեցելու հետևանքով կատարված սպանությունը, ծայրահեղ անհրաժեշտության վիճակում մարդուն մահ պատճառելը, ինչպես նաև անզուրուքյամբ և պատահաբար տեղի ունեցած սպանությունները պատժվում էին ղլխագին հատուցմամբ, իսկ որոշ ղեկավարներ արգեն բանտարկությունը, որն իրեն ինքնուրույն պատժառեանակ, իր արդի հասկացողությամբ նոր էր սկսել կիրառվել:

Ռուսական իրավունքի հիշատակարաններում սպանության համար բրեհական պատասխանատվություն սահմանող նորմեր մենք գտնում ենք դեռևս իշխան Օլեգի և իշխան Իգորի՝ հուլյների հետ կնքված 911 թ. և 945 թ. պայմանագրերում: Այդ պայմանագրերից առաջինի 4-րդ հոդվածում ասված էր, որ եթե ուսուր (ру-сич) սպանում է քրիստոնյային կամ, ընդհակառակը, քրիստոնյան է սպանում ուսուին, ապա հանցագործը մահվան է դատապարտվում այն վայրում, որտեղ նա կատարել է սպանությունը: Եթե սպանողը փախչում է, այդ զեպրում սպանվածի մերձավոր բարեկամը իրավունք ունի տիրանալ նրա գույքին: Եթե սպանություն կատարողը և փախչողը սեփականություն չունեն, նրանք քննության տակ են մնում մինչև հայտնաբերվելը, որից հետո դատապարտվում են մահապատժի: Ըստ էության նույն կերպ էր հարցը լուծվում իշխան Իգորի պայմանագրի 13-րդ հոդվածում:

Սպանության պատժելիության վերաբերյալ իրավանորմեր կային նաև բուլոս այն պայմանագրերում, որ կնքել էին Նովգորոդի, Սմոլենսկի, Գվինի և քուսական մյուս քաղաքների սլավոնական ֆեոդալական իշխանությունները գերմանական և այլ իշխանությունների հետ: Ինչ վերաբերում է սերուսական պրավդային», ապա նրա բուլոս հրատարակությունները սկսվում են սպանության մասին հոդվածներով: XI դարի կեսերին լույս տեսած այսպես կոչված Յարուսլավի պրավդան այդ հանցագործության համար դեռևս թույլատրում էր արյան վրեժի կիրառում: Վրեժը նյութական հատուցմամբ փոխարինելու հարցում (սպանվածի հարազատների համաձայնության զեպրում) «Պրավդան», դատակարգային որոշակի մոտեցում ցուցաբերելով, սահմանում էր հատուցման կոնկրետ չափերը: Արատ մարդու կյանքն այդ ժամանակ հենց օրենքի ուժով ավելի բարձր էր դիտարկվում, քան ժառանգաբնիկը: Սպանության զեպրում մասնավոր վրեժի իրավունքը վերացվում է միայն հետագայում Յարուսլավի ժառանգների կող-

մից և դրա պատճաններից մեկն էլ մեր կարծիքով պետական իշխանության ուժեղացումն էր: Վերջինս այդ հանցագործության համար արգեն պետական բովանդակություն ունեցող պատիժ էր նախատեսում՝ սկզբում տուգանքների ձևով, որ անցնում էր իշխանին, իսկ ավելի ուշ ժամանակներում նաև այլ պատիժների ձևով: XIII դարի պրավդաների մեջ հանցագործի կողմից իր կատարած սպանության համար տված հատուցումն քաժանվում էր կրկն մասի, մի մասն անցնում էր իշխանին, զա կոչվում էր «ВНРА», իսկ մյուսը արվում էր տուժողի հարազատներին, սա էլ կոչվում էր «ГОЛОВНИЧЕСТВО»: Ֆեուդով ժամանակի ընթացքում «ВНРА»-ն «ГОЛОВНИЧЕСТВО»-ի համեմատությամբ միշտ ավելի ու ավելի զերպղչիտ տեղ էր բռնում: Բացի այդ՝ «ВНРА»-ն դանձվում էր ազատ մարդու սպանության զեպրում: Ընդդեմ և ստրուկի համար սահմանվում էր արժեքների պարզ հատուցում, որ արվում էր նրանց տներին: Այս նշանակում է օրենքի աչքում նրանք փաստորեն մարդ չէին համարվում, այլ համարվում էին նյութական ինչ-որ արժեքներ և ուրիշ ոչինչ:

Գաղատասանագրերի հրատարակման ժամանակաշրջանում, այսինքն XV դարի վերջերից սկսած, Ռուսաստանում պետական կենտրոնական իշխանությունն այնքան է հզորանում, որ ծանրագույն հանցագործությունների, այդ թվում նախ և առաջ զիտավորյալ սպանության դեմ տարվող բրեհական-իրավական պայքարի ամբողջ գործը կենտրոնացնում էր ինձ ձեռքում: Իժման Երրորդի 1497 թ. գաղատասանագրի 4-րդ հոդվածը, Իժման Վասիլեի թագավորի 1550 թ. գաղատասանագրի 59-րդ հոդվածը, ինչպես նաև Ֆեոդոր Իվանովիչի 1599 թ. գաղատասանագրի նախագծի 113-րդ հոդվածը, ինչպես այդ նկատելի պրոֆ. Ս. Գ. Եարգորդսկիին, դիտավորյալ սպանության համար մահապատիժ էին նախատեսում, էլ չէին խոսում Ալեքսեյ Միխայլովիչի 1649 թ. օրենսգրքի և հետագա շրջանի գաղատասանագրերի և կանոնագրերի մասին, որոնց մեջ ոչ միայն սպանության, այլ և անձի դեմ ուղղված մյուս մի շարք այլ հանցագործությունների համար նյութական հաճախ նախատեսվում էր այդ պատիժը:

Այսպես է հետապնդվել ու պատժվել սպանությունը հին աշխարհի և միջնադարի ստրակտիսական և ֆեոդալական պետություններում:

Անձի նկատմամբ կատարվող այդ ծանր հանցագործության դեմ տարվող դատական-իրավական պայքարի հարցը չի անտեսվել նաև բուլոս նրանց կողմից, սվեբը դարերի ընթացքում դանա-

զան առիթներով զբաղվել են հայ կանոնական և աշխարհիկ օր-
բերները կազմելու, այդ օրերները կողմիկիցացիայի կամ ինկոր-
պորացիայի ենթարկվելու գործով: Նախքան նշված օրերներին
տեսական վերլուծության անցնելը ասենք, որ հնազույն ժամա-
նակներում կամ, ավելի որոշակի ասած, սոսնձական կարգերից
զեպի դասակարգային հասարակության անցնելու շրջանում,
Հայաստանում նույնպես սպանությունը հաճախ համարվում էր
մարդկանց մասնավոր կյանքին վերաբերող գործ, էլ չենք խոսում
սոսնձական կարգերի ժամանակաշրջանի մասին, որտեղ սպանու-
թյունը հետապնդվում էր սոսնձական արյան վրեժով կամ նման
հարկադրանքի այլ միջոցներով:

Հայ իրավունքի պատմության մեջ սպանության և զրա պատ-
ժեխության վերաբերյալ որոշակի իրավաբանական արժեք ենը-
կայացնող առաջին տեղեկությունը տալիս է ստորի պատմագիր
Քարգառան Եղեկացին: Նրա պատմածից երևում է, որ պարթևնե-
րի և հայերի մեջ մարդասպանները դատապարտվում էին երբեմն
տուժողների հորազատներին, երբեմն էլ դատախոհների կողմից: Եվ
եթև մեկն ու մեկը սպանում էր չոր կնոջը կամ իր անօրդի եղբո-
րը, կամ անամուսին քրոջը, կամ սեփական աղչկան, նա ոչ որի
կողմից չէր մեղադրվում և չէր պատժվում: Եղևնացու վկայություն-
ներ վերաբերում է այն շրջանին, երբ հայ հողի վրա բոտ երևույթին
նոր էր պետականություն կազմավորվում, երբ նոր էր ստեղծվում
այն ուժը, որը հետագայում բուրժուական ինքնուրույն կերպով պետք
է պայքարեր հանցագործությունների, հետևաբար և մարդասպա-
նությունների դեմ: Այդ այն շրջանն էր, երբ միաժամանակ կարող
ում էր հանդիսանում ինքը՝ սոսնձը: Գրանով է բացատրվում, որ
սպանությունը հետապնդվում էր երկու ուղղությամբ՝ դասական
կարգով, այսինքն պետական իշխանության կամքով և մասնավոր
վրեժի կարգով:

Հայ և օտար պատմիչների երկերի, որպես քրեական իրավուն-
քի իրավահայտ աղբյուրների, ուսումնասիրությունը ցույց է տա-
լիս, որ անձի դեմ ուղղված հանցագործությունները, այդ թվում
սպանությունը, պատմական և միջնադարյան Հայաստանում բա-
վականին տարածված երևույթներ են եղել: Ազաթանզադաք, Բու-
զանջը, Եղիշեն, Խորենացին, Սերոբու, Գանձակեցին և ուրիշնե-
րը բազմաթիվ փաստեր են բերում այն մասին, թե ինչպես կրո-
նական պաշտամունքի քողի տակ, շինականությունից և վրեժից
զղված, շահագրտական և նման նկատառումներով երկուսում բա-
պանություններ էին կատարվում, այն էլ հաճախ թագավորների և

հողեր ու աշխարհական իշխանավորների կողմից կամ նրանց
ակտիվ մասնակցությամբ: Տրդատ թագավորը սպանում էր մարդ-
կանց այն միակ մեղադրանքով, թե նրանք քրիստոնյաներ են:
Մամիկոնյան սոսնձից Մամուկն անունով մեկը, ինչպես վկայում է
Թուզանջը, սպանում է իր զավածան հորն ու Որմիզզադա մորը, ու-
րովհետև նրանք զավածանելով քրիստոնեական կրոնին փորձում
էին Հայաստանում տարածել ու արմատավորել պարսկական մազ-
դեզական կրոնը, Արշակ թագավորը սպանել է իտախ Գնեյին՝ նրա
կնոջը տիրանալու և հետը ամուսնանալու համար: Նախարարների
միջև տեղի ունեցող ընդհարումների ժամանակ հազվողները հա-
ճախ քնաչեղում կամ որձակոտոր էին սնում պարսկաձաներին: Օ-
տար բունակալների տիրապետության ժամանակներում և այդ թվում
նախ և առաջ պարսիկների, արաբների, սելջուկների, մոն-
ղոլների, թուրքերի արշավոտ տիրապետության զարերում երկ-
րում մարդասպանությունը սովորական երևույթ էր դարձել: Մար-
դիկ սպանվում, խեղճաբանվում, առևանգվում էին, և հանցագործ-
ները փաստորեն ու իրավաբանորեն անպատիվ էին մնում: Այս-
պես էլ դրուվյունը:

Եթե երկրում սպանությունները տարածված չլինեին, ներսև
Ենորհալին իր «Թուղթ ընդհանրականում» մարդկանց չէր պարտա-
վորեցին հեռու մեռլ գինոց «որ է մայր պոռնկություն և ամենայն
պղծություն և անիրաւութեան և վիճման և աղտեղի բանից անար-
գանաց, յորմէ և սպանութիւնք լինին...»: Ահա այսպիսի տարածում
ունէր սպանությունը հին և միջնադարյան Հայաստանում:

Սպանության, նրա տեսակների ու ձևերի, նրա պատժելու-
թյան մասին բազմաթիվ հիշատակումներ, նույնիսկ ամբողջական
իրավանորմեր կան հայ եկեղեցա-կանոնական իրավունքի հուշար-
ձաններում, ինչպես նաև օտար ծագում ունեցող այն կանոնական
հուշարձաններում, որոնք թարգմանվելով հայերեն, դարձրի ըն-
կացքում գործել են ինքնուրույնաբար կամ թե մտցվել են Հայոց
կանոնագրքի մեջ՝ կազմելով սրա բաղկացուցիչ մասերի բովանդա-
կությունը: Հայաստանում նախալուսավորիչ համարվող Թադեոս
Առաքյալին վերագրվող կանոններում արդեն խոսվում էր դիտա-
վորյալ սպանության մասին և ազգաբարձում, թե այդ արարք կա-
տարողները ենթակա են 15-ամյա ծան ապաշխարանքի: Բար-
սեղ Մեծի կանոններում, որոնց ծագումը մասամբ հունական էր,
բայց որոնք հայերեն թարգմանվել ու կիրառվում էին Հայաստա-
նում, մասնացույց էին արվում սպանության դիտավորյալ և անբաղ-
գույշ տեսակները: Ներսես Հայրապետի կանոններից մեկում՝

2-րդ կանոնում խոսվում էր այն մարդկանց մասին, որոնք շնահատիկով մանկասպանություն էին կատարում: Այդ արարքի համար 12-ամյա ապաշխարանք էր նախատեսվում, իսկ 9-րդ, 29-րդ և 39-րդ կանոններում հաջորդաբար նախատեսվում էին դիտավորյալ և անզգույշ սպանությունների այլ տեսակները: Ընդ որում, միանգամայն դիտակցաբար այն սկզբունքն էր անցկացվում, որ առաջիններն ավելի խիստ պետք է պատժվեն, քան երկրորդները: 46-ի դիտավորյալ սպանության համար կանոնները նախատեսում էին 10 տարուց մինչև 15 տարի ժամանակով ապաշխարանք, ապա անզգույշ սպանության դեպքում առավելագույն պատժապարհ 5-ամյա ապաշխարանքն էր: Վերահիշյալ սկզբունքների ռզով խմբագրված էին կանոնագրերում տեղ գտած և սպանության պատժ-ժելիտության հարցի կարգավորմանը նվիրված նաև մյուս կանոնները, որոնք ըստ էության քրեական-իրավական նորմեր էին:

Սպանության պատժելիտության մասին հիշատակումներ կան նաև օտարազգի այն օրենսդրական հիշատակարաններում, որոնք միջին դարերում Բարդանիվելով հայերեն, իբրև ազգային օրենքներ կիրառվել են Հայաստանում: Անտոխի օրենքներում նրան հիշատակումներն անշնչա են: Այնտեղ համապատասխան իրավունքներ չկան, թեև մի քանի նորմերից անուղղակի կերպով երևում է նշված արարքի պատժելիտության բուն գաղափարը: Այլ է դրությունը ասորա-հռոմեական գաղտասանագրերում: Այստեղ կան երկու հոդվածներ, որոնցով կորսակասպան արցելվում է մի ղեպքում սեփական ծառային սպանելը և մյուս ղեպքում այս կամ այն հանցագործության մեջ մերկացված մարդուն իրենազդու լինի կերպով սպանելը կամ, ավելի ճիշտ, նրան իրենազատաստանի ենթարկելը: Գրանք 28-րդ և 29-րդ հոդվածներն են, որոնք հաջորդաբար ազդարարում են. «Յ՜ւ տայ հրաման արէնքս ումէք սպանանել զժառայ իւր ձեռօք իւրով, իսկ եթէ արար ծառայն արժանի ինչ մահու տան զնա ի ձեռս զատարոյն և նա առնա զըրէժ անարժան զորոյնք»: Նման մտքով որ ոչ ունի հրաման ի Թագաւորէն կամ ի զատարոյն և սպանանել զօր կամ զզոզ կամ զմարդասպան կամ զմահապարտ ծառայ ինքն մեռանի յարհանցեա»: Այս երկու հոդվածներն, ինչպես տեսնում ենք, նախատեսելով դիտավորյալ սպանության որոշ տեսակներ, արանց պատժելիտության իրավունքը վերապահում են պետությանը՝ հանձնին գատական օրդաններին: Այս հարցում մասնավոր վրիժառուության ինստիտուտը վերացված է, մասնավոր վրիժառուություն չի թուլատրվում:

Հայ աշխարհիկ օրենսդրական-իրավաբանական հուշարձան-

ներում սպանության, նրա տեսակների և դրանց պատժելիտության մասին այնքան շատ և այնքան բազմաբովանդակ իրավաբաններ կան, որ հնարավորություն են տալիս այդ հանցագործությունները, որոշ սկզբունքով ղեկավարելով, դիտականոնին զատակարգել: Դասակարգման հիմքում կարելի է ղեռն անձր (մեղավորության) ձևը և տեսակը, այս ղեպքում դրանց կարելի է բաժանել դիտավորյալ սպանությունների, խառը մեղքով կատարված սպանությունների, անզգույշ սպանությունների և պատահական սպանությունների: Գրան հիմքում կարելի է ղեռն սպանվածի անձը, ով ինչ մարդ լինելու հանգամանքը: Գրան համապատասխան օրենքները միմյանցից տարբերում են հայրասպանության, մայրասպանության, որդեսպանության, քրիստոնյային սպանելու, սալազատանին սպանելու, ընդ հայրնապետ մտրդող սպանության և նման այլ հանցակազմերի գաղափարները: Վերջապես դրա հիմքում կարելի է ղեռն սպանության համար նախատեսվող պատիժների խտությունն առիժանք, և այս ղեպքում սպանությունները կբաժանվեն մահապատժով, բանտարկությանը, ծանր ապաշխարանքով և մարանական պատիժներով պատժվող սպանություններին:

Մեր համոզմամբ հարցի շարագրման դիտական կողմն առավել չափավոր սպահովված կլինի, եթե սպանությունների զատակարգում կատարվի՝ հիմք ընդունելով մեղքի (մեղավորության) քննության ու լիցիտյունը, այսինքն մեղքի ձևն ու տեսակը: Այս առումով հայ աշխարհիկ օրենքներում նախատեսված սպանությունները, ինչպես անխորհիցիներ, հանդիսանում են հետևյալները.

Գիտավորյալ սպանություն: Օրենքներն այսպես են անվանում այն սպանությունները, որոնք կատարվում են հանցագործի ազատ կամքով ու ցանկությամբ: Նման սպանության առանձին տեսակների մասին խոսվում է նախ և առաջ Գովիթ Խլավիկա որդու կանոններում: Այս հուշարձանի 48-րդ հոդվածը նախատեսում է երկու հանցակազմ. ընդհանրապես դիտավորյալ սպանության հանցակազմը և մանկասպանություն կամ, ավելի ճիշտ կլինի ասել, սեփական զավակին սպանելու հանցակազմը: Հետաքրքիրն այն է, որ հոդվածում միանգամայն որոշակի կերպով միաժամանակ մատնացույց է արվում սպանության հանցակիցներին և պահանջվում է, որ նրանք նույնպես պատժվեն այն էլ կատարողների հետ համահավասար կերպով: Եթէլ որ մարդ լինի սպանեալ, կամ մատնեալ, կամ այրեցողութիւն խորհեալ, կամ կին զտղայն ի փորին սպանանէ զհեզով, կամ կորիւնով, կամ զորոժով անկանելով և այլ որ յարանց կամ ի կանանց մերձ կացցէ և սպանանողին այն-

միկ խորհրդով կամ բանիկ կցորդէ կամ կարող էր ազնեւոյ զրկել յոյն, կամ յանձնէ կամ այլոց ազդ առնելով և անփոյթ արար, հարդրէ է սպանութեան նորա՝ Ենչպէս արեւելոսն և սպանողին զմանուկն: Հողվածը, ինչպիսի տեսակը, նախատեսուած է այն կոնկրետ պատիժները, որ պետք է կիրառվեն նման դեպքերում:

57-րդ հոդվածում Գալիթի Ալգովկա որդին նախատեսուած է դիտաւորչալ սպանութեան մի բանի ալլ տեսակները ևս: Նա աչա անգամ արդեն որոշակիութեան է մտցնում որանցից ամեն մեկի պատժելիութեան հարցում: Ասանկարձակ կանայք, ստվում է այն տեղ, որ եղմանուկս սպանանեն, ցար մահուան ապաշխարեցէն, իսկ ծնաւոր խրատել զմանկունս իրեանց, կամ այլ զկին: Եթէ խնամով խրատեցէ և պատահէ մահ Ե մտ արտաքոյ կացցէ է սորոթենէ Թ ի ներքս և ապա հարդրեցի: Իսկ ևթէ անխնայ, զազանաբար արեան պարտ է: Ապա թէ կամսու սպանանցէ զնորով, կամ քինու կամ նախանձու սորա ամենեքին մինչև ցմահ ապաշխարեցին, ի խորջ է ի մոխրի: և յետին թաշաղէն մի զրկեցուցին: Պարզ կերպով կարելի է նկատել, որ ինչքան իր բնութեով սպանութեանը ծանր ու վատանգավոր է լինում, այնքան Ալգովկա որդին խստացնում է զրա պատժելիութեան և ընդհակառակը: Դեղով կամ ալլ կերպ ասած, թունավորամբ սպանելը, ինչպես ամեն քինականորութեամբ կամ նախանձամտութեամբ, այսինքն՝ խանդի հողի վրա կատարված սպանութեանը պատժում է քցմահ ապաշխարանքով, իսկ ծնողի կողմից երեխային կամ ամուսնու կողմից սեփական կնոջը թնթն ձեռով խրատելու զնպատակ ունեցած սպանութեանը, որն ըստ էության անզուլջ սպանութեան է, պատժվում է կարճատև ապաշխարանքով:

Գիտաւորչալ սպանութեան մասին ավելի համապարփակ և ամբողջական իրաւաւեղորդի կան Մխիթար Գոշի և Մմբատ Սպարապետի զատաստանագրքերում: Այն ակտերում նախատեսվում են կոնկրետ հանցակազմեր և կոնկրետ պատիժներ: Պատիժներն էին՝ արչան զեի հատուցումը, տանջահարդ պատիժները, որոնք զրակործում էին մարմնական զնախան պատիժների կողմ, մահապարտութիւնը իր մի բանի ձեռքով և եկեղեցական-կանոնական պատիժները: Վերջիններք կիրառվում էին կամ ինքնուրուշնաբար և կամ միացումում էին մշուաներին որպես լրացուցիչ պատիժներ: Առաջին զեպրերում, մանավանդ Կիլիկիան Հայաստանում, մարդասպանները զատասպարտվում էին բանտարկութեան կամ հրկիթ սահմաններից արտաքովում էին: Բանտարկութեան և արտրի ժամկետները, զբրանց նվազագույն և առավելագույն սահմանները օրենքը չէր որ-

ոշում, բայց հարցն ըստ երևութիւն լուծվում էր զատական պրակտիկայում՝ կոնկրետ դեպքերից ենկելով:

Սպանութեանների պատժելիութեան ժամանակ զրակործված մեղքի ձևը և տեսակը երկու զատաստանագրքերում էլ վճռական նշանակիւթեան էին ստանում ընդհանրապես: Սա մի սկզբունք էր, որը, մանավանդ այդ գործերով, ընկած էր քրեական արդարագատութեան իրականացման հիմքում:

Մեզ արդեն հայտնի Կարսոյ այդ մասին հետևյալ ճիշտ միտքն է զարգացնում. մեղքի աստիճանին նայելով հանցագործութեան պատժելիութեան քրեա-իրավական սկզբունքը, որը կանոնական իրավունքի օրինակով զեռու Մխիթար Գոշի Դատաստանագրքում նախատեսված էր, Մմբատ Սպարապետի Դատաստանագրքում իր հետագա ձևակերպումն ու կազմավորումն է ստանում: Հանցավոր իրավախախտման ժամանակ զրակործված մեղքի ձևերը երկու զատաստանագրքում էլ երեքն են. երբ արարքը կատարվում էր կամահայնցողութեամբ, այսինքն՝ զիտաւորչութեամբ, երբ այն կատարվում էր առանց կամահայնցողութեան զրակործման, այսինքն անզուլջութեամբ, և երբ այն կատարվում էր խտր կամ անորոշ մեղքով: Դրա հետ միասին անզուլջութեամբ կատարվող հանցագործութեաները, տվյալ դեպքում սպանութեանները իրենց հերթին երկու խմբի էին բաժանվում. ա) երբ արարքը տեղի էր ունենում կուպիտանզուլջութեամբ և բ) երբ այն կատարվում էր կիսականային զործունեութեամբ, այսինքն հանցավոր անտարբերութեամբ կամ անհոգութեամբ⁴⁰:

Դատաստանագրքերում նախատեսված դիտաւորչալ սպանութեաններն էլ իրենց երանցները կամ ձևերն ունեն: Նախքան այդ ձևերի իրավաբանական-տեսական վերլուծութեան ամենիցը, մատչելիք է, որ երկու զատաստանագրքերում էլ առանձին հոդվածներում փորձ է արվում ավելի ընդհանուր պատկերացում առաջ աչն մասին, թե ինչ բան է դիտաւորչալ սպանութեան ընդհանրապես, թեև ճշմարտութեանը պահանջում է միաժամանակ սակ, որ զրանք բնութագրված են ոչ թե արտարահման այնպիսի բնորոշումներով, որոնք հատուկ են ավելի ուշ ժամանակների քրեական օրենսդրութեաներին, այլ տրված են կոնկրետ ու որոշակի օրինակներ վկայակոչելով: Այդ կոնկրետ, բայց պարկիթ մեծ արժեք ներկայացնող օրինակների միջոցով զրանք հետապնդում են մի հիմնական նպատակ. օրենքները կիրառողներին, այլ կերպ ասած զատարաններին,

⁴⁰ 84 = J. Karst, Sempadscher Kodex, B. 11. Strassburg, 1905, էջ 319.

Հատկորեն և Հնարավորության չափով անթերի պատկերացում տալ այն մասին, թե պրակտիկայում տեղի ունեցած ինչ կարգի սպանությունների պետք է որակվեն ու դասակեն որպես դիտավորյալ սպանություններ: Մենք այստեղ նկատի ունենք Մխիթար Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի 117-րդ և Սմբատ Սպարապետի Գատաստանագրքի 151 bis և 151 tris հոդվածները, բոս Կարսիի Համարակառույթյան:

Մխիթար Գոշի Գատաստանագրքի վերոհիշյալ հոդվածում, որի աղբյուրը հանդիսանում է Բարսեղ Մեծի կանոնների 5-րդ կանոնը, որպես դիտավորյալ սպանության տեսակներ հիշատակվում են հետևյալ սպանությունները. «... եթե որ հարկանել խեղճ գաւազանալ զմտոյր, կարծելով յուղոյթիւն ածել զշարագործն, մինչև հանել արին, յորմէ և մնացի նոյնպէս եթէ ըսրիւն և կամ փաշախի գոր հարեալ առաւել շարշարիցջ քան զկարն, ընդ այնոսիկ համարեալ է որ սրով սպանցել, կամ այլ ինչ յայտարիսնաց: նոյնպէս և որ փայտահատ ինչ ձգիցէ և ի ծանրութենէ երկաթոյն և ի սրայն իով և ի ձեռացն երկի հարուածն. ի բազմապատիկ դիմաց հարուածոյն, որ ի վերայ են, զուշակէ զեղիւսն: նոյն օրինակաւ առանց երկք հարկանելոյ կամուտը շարիք, որ յաւազակաց գործին: Իսկ կանայք զիցա արրուցեալ արեանք՝ սովոր են սպանանել, նոյնպէս և որ առ նախանձն, զիցա տայ մերձակորի, ընդ մահապարտս համարեալ է»: Թվարկելով սպանության այս տեսակները, Գոշը նրանց մի ընդհանուր տեղիքնով անվանում է սպանություն, այսինքն ժամանակակից անբմիջարանությունը, փաստորեն դիտավորությունը կատարվող հանցագործությունները:

Նման սպանությունների զեպրում կնոչ և տղամարդու համար համար պատասխանատվություն սահմանելով, Գոշը միաթամանակ ցույց է տալիս, թե ընդհանրապես ինչպիսի պատմությունով պետք է պատժվեն հանցագործները, ի՞նչ նրանք քրիստոնյաներ կամ այլ զաղկիներ, այսինքն մահամեղականներ են: «Իսկ քրիստոնէի զքրիստոնէայ սպանեալ— կամուտը է: Եւ է կամուտը՝ յորժամ վասն նախանձու կնոչ, և կամ յաղագս ինչից, և փրոսց վասն, և կամ բոս այլ պատճառի սպանցել. լիով, որպէս արեալն է, դատեսցի: Եւ թէ զայլազգի սպանցել. բոս որում անդ զրեցալ դատեսցի», ասում է Գոշը, անկարկելով իր Գատաստանագրքի երկրորդ մասի 1-ին հոդվածը, որտեղ նախատեսում է դիտավորյալ սպանության համար որոշակի պատժատեսակ և պատճառաբ, ինչպես այն զեպրերում, երբ հանցագործների զերում հանգես են գալիս քրիստոնյա կամ

մահամեղական, այնպես էլ այն զեպրերում, երբ, ընդհանրապես, ասումովների զերում են հանգես գալիս այդ նույն կրոններին՝ քրիստոնեությունը և մահամեղականությունը հարող անձինք:

Սմբատ Սպարապետի Գատաստանագրքի 151 tris հոդվածում դիտավորյալ սպանության նույնպես, նրա տեսակներն, ինչպես նաև զրա պատժելիության հարցը լուծվում է մոտավորապես այնպես, ինչպես այդ մենք տեսնելք Մխիթար Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի վերոհիշյալ հոդվածում. «Եւ կամուտըն այն է, որ տայ բրովն և զմեկայլն ի վայր զիւն ու սպանել, կամ քսով ըըշտէ՝ նա այն հայնց է զէջ, երբ թրով կզարկ ու նսպան: Եւ այս ազգի ազգի սպանմունքս շատ են. քայց յայս շրտցս կարէ որ զայլն իմանալ: Եւ է այլ որ մահոցնով սպանեն: Եւ են որ վասն սիրոյ զից տան և սպանեն, և այտոք այլ ընդ մահապարտք են համարած՝ թէ այլ լինի և թէ կին, և մահու վճար առնուն: Եւ այտոք են կամուտըն... սպանութեներն... Եւ թէ ի դատաստան ընկին նա զինչ թագաւորքն են սահմանել՝ նա այս է. որ թէ այլազգի կամ քրիստոնէ զքրիստոնէ սպանել, ու շխաշմարէի, քանց ուրախեալ ընդ սպանելն լինչ ազգ պատճառանաց վերայ ու լինի՝ նա կամուտը սպանութիւն է համարած, և սպանութեան իրաւունքն այս է որ և ինքն սպանալի: նոյնպէս և թէ յոչ կամայ լինի և շարկամ չլինի, և որ խնդայ՝ նա զիս ու այն կամուտը է համարած, և երբ խիտա ողորմութիւն այն են իր՝ նա զինն սուտի, և թէ սպկիկ յոչ կամայ լինի՝ նա կնոն է: Անհրաժեշտ է նկատել, որ Սմբատ Սպարապետի Գատաստանագրքի այս հոդվածում մեկ անգամ ևս ուղղակի կերպով ասվում է, թե դիտավորյալ սպանությունը պատժվում է մահապարտով, այլ ոչ թե արշան քիի հատուցմամբ, մասնավանդ, երբ սպանությունը կատարվում է թունավորելու միջոցով կամ խանդից զրգով: «Եւ է այլ որ մահոցնով սպանեն: Եւ են որ վասն սիրոյ զից տան և սպանեն, և այտոք այլ ընդ մահապարտ են համարած...», ասված է այդ օրենքում:

Մենք վերևում ասացինք, որ Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերը նախատեսում էին դիտավորյալ սպանության կոնկրետ զրեկորմներ կամ ձևեր: Գատաստանագրքերի համապատասխան հոդվածների ուսումնասիրությունը մեզ հանգեցրեց այն կարևակացության, որ այդ զրեկորմները կամ ձևերը հիմնականում հետևյալներն էին.

Մահկապաւանությունը պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներում: Այս սպանությունը նախատեսված է Մխիթար Գոշի Գատաստանագրքի առաջին մասի 33-րդ և Սմբատ Սպարա-

պետի Գառաւստանագրքի 133-րդ հոդովմենհերում: Գոշի Գառաւստանագրքի 33-րդ հոդվածը իբրև աղբյուրներ օգտագործելով մովսէր-սական իրավունքի որոշ օրինագրութիւններ (Քուրց, ՂԻ 11—15) և Հե-տեղ հայրերի կանոնները (1-ին կանոն), ազդարարում է, որ «Եթէ հեղձուցանէ որ զտղայ իբրև զինգ, կամ ի շնուրման, կամ մա զայն արարակա՛ փոխանակ ինքն մնաց, զի որպէս ոչ է ճնար ի վեր կա-ցուցանել, նոյնպէս և ոչ ապաշխարել: Եւ զի ըստ օրինացն ահամա-յիցն և ոչ կամատրացն եղև յապացաստի քաղաքան ապրել, և զի ըստ օրինացն յաղագս հատապատկ շրէիցն վարի, ուստի և յետոյ՝՝ ալ զմ տուա պաշխարութիւն, և աղբյուրի կամատր խոս-տովանողացն է ապաշխարութիւն, զի անզեղիցն՝ արեան զատաս-տան: Այսպիսով, մանկասպանութեան այս ծանր տեսակը փաս-տօրեն պատժվում էր մահապատժով և միայն կամավոր զղջանքի դեպքում էր թուլատրվում մեղք պարժմանի կիրառում:

Նույն ոգով է հարցը զրգում նաև Սմբատ Սպարապետի Գա-տաստանագրքի 133-րդ հոդվածում. «Եթէ որ զտղայ որ վասն բո-ղութեան կամ վասն այլ ցեղ պիղ զործոյ խնդղ կամ սպանանէ՛ կու հրամայէ արէնք որ զէթ այլ ինչնդանցանել չկար զիք, նա յայնց և ոչ քափի. ապա ինքն յայն ցեղ մահով մեռնի զէղ այն տը-րպան, թէ այլ և թէ կին՝ և թէ երկուք: Բայց ահամայ պատահելոյն ապաշխարութիւն է զինչ նպիհպուուն և վարդապետք զինչ նոցա»: Այստեղ, ինչպես կարելի է նկատել, էլ ավելի որոշակի կերպով է հասկացնել տրվում, որ նման մանկասպանութիւնը պատժվում է նախ և առաջ մահապատժով:

Ամուսնու կողմից կնոջ և կնոջ կողմից ամուսնու սպանույունը: Այս արարքների պատժելիութեան հարցը կարգավորվում է գառա-տանագրքերի մի քանի հոդվածներում: Այդ հոդվածներում Մխիթար Գոշի ու Սմբատ Սպարապետը մատնացույց են առնում ինչպես հան-ցազործութեան շարժառիթները, այնպես էլ պատիժը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները: Գոշի Գառաւստանագրքի առա-ջին մասի 18-րդ հոդվածն ասում է. «Եթէ այր զկին սպանել յաղագս պոռնկութեան, արեան զատաստան լիցի բովանդակ, զի ի Տեանն արձակել հրամայեցաւ և ոչ սպանանել: Եւ եթէ ըստ այլ պատճառի ի շարուրմէ բարոց, կրկին տուժեցել: Իսկ եթէ կին զայր զեղօք և կամ այլ օրինակաւ, նոյն լիցի զատաստան: Եւ ապաշխարութիւն յաղագս տուգանին թէթև լիցի: Բայց մի որ զապաշխարութիւն հայ-ցիթ է զիքս Գառաւստանի, զի այդ կանոնաց է և է ողբոց, իսկ սա մարմնոյ. և զի ո՛չ անպատշաճ կարծեմ երբեմն և զոգտոյ զնել զա-տաստան, որպէս և նա զմարմնոյ: Հոդվածից երևում է, որ նման սպանութեան շարժառիթներից մեկը հանդիսանում է կնոջ կողմից

կատարված անբարոյակնությունը, որը խանգ է առաջացնում: Մյուս շարժառիթը՝ հանցազորի քննվորության շարտիթունն է կամ այլ կերպ ասած նրա դատնությունը: Հանցազործութեան կատար-ման եղանակներից հիշատակվում են թունավորումը, զաշունահա-րումը, քրահնդումը և այլն:

Նույն սկզբունքները մենք տեսնում ենք Սմբատ Սպարապետի Գառաւստանագրքում, որի հոդվածներից մեկում՝ 72-րդ հոդվածի 14-րդ մասում, ասվում է. «Եթէ որ վասն բողութեան զիք կնիկն սպանեն՝ նա սպանենին շէ հրամայած, այլ թողուի, և պատահէ է խոստովանահարն, որ զպայանալոյ տեսնուի՝ նոյնպէս և զպպահ-նածն, և իմանայ զիրենց կնկնք. և թէ վասն անհաստատութեանն կամ ավայտութեան, կամ թէ այլն բողած էր ու պղծ և նա վասն այնոր բողցաւ՝ նա նուպն զիքը. նա զէղ մեծ մարգասպան է պատահէ որ զիքը տուժն և զիր կարգն զնեն ու վճարվին զայրինն. ապա թէ ոչ, նա զիքն աղէկ ունէր՝ ու անկարթ կայր՝ և զինչ ունէր նա յիր ձեռն կայր՝ և ինք սպիկի էր ի բողծութիւնն, ու նա կու բողնայր և զիր տուն ու զհամալն այլոց կու վասնէր՝ նա այտոր զատաստանն և քաւութիւնն այլազգ է ու այլ թէթևա: Բայց զինչ ցեղ և է՝ արեան պարտական է, և սահմանել պիտի որ քաւէ.— Եւ սա հոգեւոր զա-տաստան է»: Այստեղ, ինչպես տեսնում ենք, պատասխանատու-թիւնը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանք է համարվում հանցազործի և տուժողի այն վարքագիծը, որ նրանք դրսևորած են եղել իրենց համատեղ կայնքի քննացրում՝ սպանութիւնից առաջ:

Այդ նույն հոդվածի մեկ այլ՝ 16-րդ մասում Սմբատ Սպարա-պետը քննութեան է առնում այն դեպքերը, թի ինչպես պեժք է պա-տըմի իր ամուսնուն մահազոհող, կախարդութեամբ կամ մեկ այլ եղանակով սպանած կինը: Այդ արարքի համար նա համապատաս-խան պատիժ է սահմանում և միաժամանակ հիմնավորում, որ զա-սահրածեղտութիւն է և ուրիշների համար խրատական մեծ զոս կա-րող է հանդիսանալ. «Ապա թէ կինն զայրիկն սպանել՝ մահազոհող կամ կախարդութեամբ կամ զինչ ցեղ ու լինի, և կամ թէ ցու տայ սպանենէ՛ նա սուր եկեղեցին ի հատ խնամաթ է զնացել ու կամատք քաւութիւն է զրել՝ հայնց զէղ երբ կինն զայրն սպանան ու զէղ երբ այլն զկինն: Եւ այդ տեղը հասնի, որ կեղեցին միտպես խնա-մաթ զաւել. բայց քաւարոցս և աշխարհաւոր արիւնարոց չէ պատեն՝ զայտ այտցեղ թուցնել. վասն զի թէ զայտ թուրութիւնդ ուն-նան կանինն (կնիկինն)՝ նա շատք մեռնի ի կանեղ ձեռաց. ու ա-ռաւել հնձելորքն՝ որ ուննան զզրարդին ահն ու զարկմուն, ու երբ յայնոր ազտին, և ի յիրենց տունն զան ի հանգչիլ՝ նա իր կինն

զինք և յիր անհոգութիւնն սպաննէ ի յայտ տեղս նամական հայնց կու հրամայէ՝ թէ մենք եկեղեցականքս հոգոց դատաստան և խնամք ենք գրել աստ. և զվարմնաորն զոր գիտացիք որ գատաւորք եք երկրի: Եւ այն է գատաւորացն սահմանն՝ կին՝ որ զիր այնք որք նք գրելու է շանայ սպանանել վասն իր բողոքութեանն՝ նա պարտ է զինք շարաշար մահուամբ սատակել, վասն զի թէ մարդ զոք մի ատար ատանց գատախազութեան սպաննէ՝ նա զինք նորս փոխան շարամահ կու այնին՝ Մովսէսի և ալլ նախնի դատաւորացն արիւնաբն: ասպ այն որ զիր այնք սպաննէ՝ ալլ կ'ընէ կրէ բան սեփական զշարաշար մահն արդար իրաւամբք»: Այսպէս էր հետապնդեցվում ու պատմվում ամուսնունս սպանող կինը:

Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը պատժից բոլորովին ազատում էր այն ամուսնունս, որն իր կնոջը սպանում էր զավանճաւորի վան ժամանակ բռնելիս: Դատաստանագիրքը նման վիճակը հաշտարարում էր մի տեսակ հոգեկան աֆեկտիով վիճակ ու զոր համար էլ ամուսնուն չէր պատժում: Եման վիճակը համարվում էր պատասխանատուութիւնը բացառող հանցանքներ և Սմբատ Սպարապետը ապիս էր զրա բավականին յուրահատուկ և օրիգինալ հիմնավորումը. «... թէ որ զկինն և զցուլն ի յիր տունն խլել իրար վնասու ու սպաննէ՝ նա անզատապարտ է ի զարդուէ. վասն զի զիր զխոյնութիւն ունի, որ հան կայր ի խնչ: Այսպ թէ զմէկն սպաննէ ու զմէկն թողու՝ նա զէջ մարդասպան գատեն զինք. վասն զի կարէ որ առել զմարդ, և բարուրք այնի որ խարէ զինք իր կինն՝ ու բերէ յիր տունն սով, և սպաննէ զինք. և կամ թէ զիր կինն առէ օք, և յիր սիրելեցն հոգի ի խլչն տայ երբայլ, ու զկինն սպաննէ անմեղ զէջ մեղկան, և թողու զմէկայն: Եւ ահա մեղք ու վնաս: Եւ այսոր բանիւ է սահմանած, որ երկուքին սպաննելն իրաւունք է՝ ազատ ի դաւալս: Բայց զինչ ցեղ ու է զեկեղեցունք քաութիւնն անուղ պիտի, վասն զի արդեն հեղութիւն էր»: Այսպիս էր հարցը լուծվում Դատաստանագրքի 72-րդ հոդվածի մասերից մեկում՝ 15-րդ մասում: Խիստ ուշագրավ է, որ նման իրավանքում մենք չենք գտնում ոչ մեր կանոնադրում տեղ գտած օրենսդրական իրավաբանական հուշարձաններում և ոչ էլ Մխիթար Գոշի Դատաստանագրքում:

Սպարապետ անմեղութեան վիճակում գտնվող անձի կողմից: Երկու դատաստանագրքերում էլ ամենայն որոշակիութամբ այն սկզբունքն է պաշտպանվում, որ ընդհանրապես հոգեկան հիվանդաների կողմից կատարված սպանութիւնը քրեականորեն պատժելի արարք չի հանդիսանում: Դատաստանագրքերն իրենց այդ սկզբունքը հիմնավորում են նրանով, թէ իբր նման զեպերում մարդը գոր-

ծում է սատանայական կամքով, խելագարութեան մոլուցքի ազդեցությամբ, հետևաբար չի գիտակցում իր արարքի բնույթն ու էությունը, ուստի և նա քրեական-դատական պատժի շպեօք է ենթարկվի: Մխիթար Գոշի Դատաստանագրքի առաջին մասի 80-րդ հոդվածում հարց է տրվում. «Եթէ ուրբք ի դիւհարիլ իւրում մարդ սպանելալ առ անզգայութեան իւրում, յորմամ սրբեսցի ի զինն իբրն սպանող պարտ է սպաշխարել, թէ որդէս», և բերված հարցին տրվում է միանգամայն խելացի, իրավաբանորեն ճիշտ պատասխան. «Ասկալ ինչ, զի շարէն է գործն: Սույն լիցի և յազգաս ալլ մըտախարարաց: Բայց ըստ հոգեւոր դատաստանի՝ եթէ ինքնաց վնասեցն և թէ ալլօք, առանց սպաշխարելու թէ լիցի նստալղբն: Այլ ըստ մարմնոյ դատաւորաց աստ գործ ո՛չ է»: Այսպիսով, եման սպանութեան զեպում նրա սուրյակտների նկատմամբ կիրառվում էր միայն եկեղեցական սպաշխարարք, բայց ոչ աշխարհիկ դատաստանների կողմից կիրառվող դատական պատժի: Արարքը, փաստորեն, քրեական հանցագործություն չէր համարվում և դատական կարգով չէր պատմվում:

Նույնարվանդակ իրավանքում մենք գտնում ենք Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում հանձինք զրա 169-րդ հոդվածի: Հոդվածում աներկմիտ կերպով այն միտքն է անցկացվում, որ եթէ զիւհահարը, այսինքն անմեղութեան մարդը սատանայի միջամտութեամբ և օգնութեամբ մարդ է սպանում, նա անգամ առողջանալուց հետո, ենթարկվում է սուկ միայն եկեղեցական սպաշխարարքի, բայց ոչ երբեք քրեական պատժի, որովհետև արարքը տեղի է ունենում ոչ թէ նրա, այլ սատանայի կամքով: Հոդվածի համաձայն բոլոր այն արարքները, որոնց պատճառը զիվական-սատանայական ուժերն էին, պատժելիությունը վերապահվում էր եկեղեցուն, բայց ոչ աշխարհիկ արդարադատությունն իրականացնող օրգաններին: Բերեցք այդ հոդվածի բնագիր կոնսերստը. «Եթէ որ ընդ դիւհարարութիւն ի ներք անխելի և ի դիւսն միշնապութեամբ մարդ սպաննէ՝ նա պատժ է աշխի ստուգել, որ վտանհի հայնց է ու առանց դիւհարեան նա այն կանոնացն է հասել, և ոչ դատաստանի, որ թէ լանալ՝ նա իր շար մի կարք զինն ըստ ուժոյն, զի յորմէ չէր, այլ ի շարէն, նոյնպէս և ամէն իբր որ դիւական լիւի ստոյգ նա կանոնացն է գործ և ոչ դատաստանաց»:

Անկարող լինելով ըստ էութեան ըմբռնել հոգեկան հիվանդությունների բուն պատճառները, թէ՛ Մխիթար Գոշը և թէ Սմբատ Սպարապետը զրանց զղոյթվումը բացատրում էին ժամանակակիցներիս համար անընդունելի հիմնավորմամբ, բայց միանգամայն խե-

լարիքներ պահանջում է պարտավորեցնում էին, որ հոգեկան հիվանդագրի վիճակում գործած հանցագործություններ, ավյալ զեկուրում սպանություններ կատարած անձանց նկատմամբ քրեական պատիժներ չկիրառվեն: Նրանք մոլի կերպով կարենք բմբռնում էին, որ հոգեկան հիվանդություններ խափանում են մարդու ազատ կամային գործունեությունը, ուստի և վերացնում են քրեական պատժի կիրառման իրավաբանական հիմքն ու նախադրյալները:

Այլադավանի կողմից Բրիտանյայի և Բրիտանյայի կողմից Բրիտանյայի կամ այլազավանի սպանությունը: Այս կարգի սպանությունները միջնադարում լայնորեն տարածված երևույթներ են եղել և դրանց զրգացատեաներից մեկն էլ բուս երևույթին հանդիսանում էր կրեանական մոլեռանդությունը: Նման սպանությունները խրախուսվում էին մահմեդական տիրապետողների, իսկ երբեմն էլ նրանց քրմապետների կողմից այն պարզ պատճառով, որ դրանց ատիվ էին հանդիսանում միմյանց դեմ զրոգուելու քրեատեանյա և մահճեռական աշխատավորների և դրանով իսկ նրանց ուշադրությունը հետո պահելու ինչպես զատակարգային-բազաբական պայքարից, այնպես էլ տիրող սոցիալական անարդարությունից: Այսպիսի արքաները, հայ հողի վրա տարածված լինելու պատճառով, իրենցից որոշակի վտանգավորություն էին ներկայացնում, և մեքք տեսնում էին, որ Երկու դատաստանագրքերում էլ զրանք քրեականորեն պատժելի արարքներ էին հայտարարված:

Մխիթար Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի հենց 1-ին հոդվածում նախանշվում է զրանց հանցակազմերը. այնտեղ ասվում է, որ եթե այլազավանը կամ այլազգին դիտավորյալ կերպով սպանի քրիստոնյային, զրա համար նա պետք է սպանվի, այսինքն դատավարավի մահապատժի, իսկ եթե քրիստոնյան դիտավորյալաբ սպանի այլազավանին, ապա այդ արարքի համար նրանից պետք է դանձվի արյան դիրճ՝ 122 դահեկան. «Եսկ եթե սպանանիցէ այլազգի քրիստոնեայ կամաւ, սպանցի փոխանակ նորա... Այլ եթէ քրիստոնեայ զայլազգի սպանել կամաւ, զգին արեանն տուգանեցի բոս ցուցանելոյ օրինակին հարիւր քան և երկու դեկան»: Գատաստանագրքում առանձին կարգով նախատեսվում էր նաև այն զեկուրը, երբ քրիստոնյան ինքն էր դիտավորյալամբ սպանում քրիստոնյային: Այս զեկուրում նա պատժվում էր արյան զեկով, այսինքն արյան զեի հատուցմամբ, տուգանքով և մարմնական պատիժներով: Եթե հանցագործն ազատ ու անվճարունակ էր, նա իր ընտանիքի հետ միասին վճանվում էր և ստացված դամարով հատուցվում էր արյան զեիքը. «Եսկ եթէ քրիստոնեայ քրիստոնեայ սպանել կամաւ, զգինն տու-

գանեսցի արեան իւրոց, և թագաւորի տուգանք բոս կարի լիցի: Եւ թէկաւ բոս օրինացն մահու արժանի է, այլ ի ձեռս խրատ անուս սպաշխարութեան հասցէ, ապա թէ աքրատ իցէ վաճառեցի իւրովրն յազգատում և հատուցել: Այսպես էին պատժվում դիտավորյալ սպանություններն բոս Մխիթար Գոշի Գատաստանագրքի, երբ զրանց սուրբկեաների կամ տուժողների զերում հանդես էին գալիս քրիստոնյաները կամ մահճեռականները (այլազգիները):

Նույն հարցին վերաբերող օրինաբույժներ մենք գտնում ենք Մմբատ Սպարապետի Գատաստանագրքում: Այդ Գատաստանագրքի հենց 1-ին հոդվածում ասված է. «Եվ թէ այլազգի քրիստոնէ սպանելճ մեռնի... Եթէ քրիստոնէ կամաւք սպանելճ նա նորա արեան վրեճխցիքին թագաւորին է, որ խրատ է ի յապաշխարութեան հասցնել»: Մխիթար Գոշի և Մմբատ Սպարապետի դատաստանագրքերի վերահիշյալ օրինաբույժների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք ելակետային վիճակը նույնն է. նրկու զեկուրում էլ խոսքը վերաբերում է այլազավանի կողմից քրիստոնյայի կամ քրիստոնյայի կողմից այլազավանի սպանությունը: Երևում է, որ և Գոշը, և Սպարապետը դիտավորյալ սպանությունը համարում էին մեծ վտանգավորություն ներկայացնող հանցագործություն, անկախ այն բանից, թե ով էր սպանվածը կամ հանցագործը քրիստոնյան կամ մահճեռականը:

Սպանություն անհրաժեշտ պաշտպանության սահմաններում: Երկու դատաստանագրքերում էլ նախատեսվում է, որ անհրաժեշտ պաշտպանության սահմաններում կատարված սպանության համար քրեական պատասխանատվությունը բացառվում է. թէ՛ Մխիթար Գոշը և թէ՛ Մմբատ Սպարապետը հետևելով Հետևող հայերի կանոններին՝ 18-րդ կանոնին, մարդուն իրավունք են տալիս անպատիժ կերպով սպանել հարձակվող ավազակին, մարդասպանին կամ զոգին: Գատաստանագրքերի՝ այդ հարցին վերաբերող իրավաբանորենք թեև պարզ կատուցվածք ունեն, բայց նրանց մեջ զոգին, մարդասպանին և ավազակին անարգել կերպով սպանելու սկզբունքը, որի մասին խոսվեց, ամենայն որոշակիությունամբ, իր վաղեմությունը գտել է: Ահա թե ինչպես է հարցը լուծվում Մխիթար Գոշի Գատաստանագրքի առաջին մասի 44-րդ հոդվածում. «Եթէ որ անմեղ զմտաւ ուղևոր և ոչ զօր ունէր յառաջ թշնամի պատահելու, այլ թէ որ ամենեկուն զողն և առազակն նմա դիպեսցի և սպանել է սա զնոսա մի՛ իրրև սպանող զատեսցի ի սուրբ կեղեցիցու: Բայց վասն ահագին սեղանուն սրբեսցէ զանձն աուրս սակաւս, զմտաւ անձալ թէ ընդիլ իսկ և սկամայք դիպեցան, թէկաւն յխստուծոյ իցէ մատուցիան:

կայծեկեցումն և յաղագոս քահանայից վասն ասելոյն՝ ա՛հագին սե-
ղանոյն, այլ հասարակ ամենեցուն է: Բայց այս դատաստան եկեղեց-
ւոյ դատաւորաց և ոչ արտաքինոց է գտանել, զիւրաքանչիւրոցն օգուտ
ըստ իրինս: Այս հողովածից չի կարելի եմբողորել, թէ Գոշը նման
զիւրեքներէ արարքի սուրբնակտին կշտանցում է: Ամենին ոչ: Մի
քանի օրով խորհրդածելը՝ մտքերի մեջ խորասուզվելով, տվյալ զեպ-
քում բացարձակապէս ոչ մի առնչութիւն չունի քրեական-գատական
պատմի հետ, անհրաժեշտ պաշտպանութիւն ընթացքում մարդ սպա-
նելը հանցագործութիւն չի, ա՛հա տեսական էլակետային սկզբունքը:

Գատաստանագրքի առաջին մասի 79-րդ հողովածը խմբագրված
է այնպէս, որը փաստորեն արգարացնում է այն քահանային, որն
անհրաժեշտ պաշտպանութիւն զիմելով ավագակների զեմ, սրան-
ցից մեկի կամ մի քանիսի սպանութիւն զտով փրկում է իր ընկեր-
ւների կյանքը: Այնտեղ հարց է տրվում. «Եթէ որ քի քահանայաց յուշ-
ուշ զիւրեքն և աւազակք ի վերայ անկցին, և զեպ լիցի քահանային
սպանանել զոմանս յաւարակաց և զանձն իւր, և զընկերան ասյե-
քուցել, պա՛րս է նման ի կարգի քահանայութեան կալ, թէ ոչ», և ի
պատասխան տված հարցի, զարուսակում է օրինադրութիւր. «Ոչ է ար-
ժանի կալ ի քահանայութեան, վասն զի ոչ է արժան սպանանել քա-
հանայի զմարդ որ թէ և ինքն մեռանիցի, այլև ոչ զանասուն: Յազա-
պա այսմ դատաստանի լուայ եթէ՛ վասն անձին չէ պարտ սպանել,
այլ յազգաց ընկերացն լաւ է սպանանել յորժամ աւազակքն այ-
լազգիք իցեն. և պաշտել զքահանայութիւնն թէ ոչ-ի զպուժանս
անցնի ի վարդապետաց: Մմբատ Սպարապետի Գատաստանագր-
քում անհրաժեշտ պաշտպանութիւն իրազորութիւն պայմաններում
կատարված սպանութիւնը քացահայտ կերպով խրախուսվում ու
նույնիսկ պարգևատրման արժանի երևում է համարվում: Հանցա-
պար հարձակումներից պաշտպանվելու համար կատարված նման
սպանութիւն զեպքում, նույնիսկ քահանաները չէին զրկվում անզգամ
քահանայութիւնը զրազովում իրաւունքից, թէև նրանք «արյուն էին
թափում», մի բան, որը որպէս հողեթուականների նրանք, ընդհան-
րապէս, իրաւունք չունէին: «Կու հրամայլ արևնքս, — ասված է այդ
Գատաստանագրքի 132-րդ հողովածում, — որ թէ որ կենայ ու երթայ
իւր ճամբուն, և այլը կենան ու պահեն զընանապարսն որ սպանու-
թիւն այնն կամ զողութիւն, ու այն հաւր զնացադն յաջող լինայ
ու զնաքս սպաննէ՛ նա չէ արեան պարտական, այլ զովիւր ի աւի-
թըք տալոյ է արժան: Բայց վասն եկեղեցոյն հնազանդութեանն
պարտի մեղայ ասել խոտտովանահաւրն և թողութիւն առնուլ, թէ

քրիստոնէ լինի. բայց կարք չկա՛ որ քաշէ և ոչ տուգանք ի դարպասն՝
վասն սպանութեանն: Եւ թէ քահանայ լինի հարամոյն սպանաւալը՝
նա վասն այնոր թէ ինք առաջընդդեց ու ետպէ զայն՝ զինք կամէր
սպաննել ու զայլքն սպանել էր նա չկորսնէ զիրիցոյթիւնն: Եւ պա ե-
պիսկոպոստին մեղայ ասէ, վասն հնազանդութեանն, և իսալ ու թո-
զութիւն առնու և զիւր քահանայութիւնն այնէ, և եպիսկոպոսն պար-
տի հնազանդել արինացն և արձակել զնա: Նույն ոգին մենք նկա-
տում ենք Գատաստանագրքի նաև 28-րդ հողովածի առաջին մասում.
«Էշրամայած է յարինացս, որ ամենեին շիշխէ քահանայ ոչ մարդ
սպանելի և ոչ անասուն բնաւ: Ապա թէ ուրդի որ ի ճանապարհ՝ հա-
րամոյն ի վերայն ընկնին ու կամ ի յայլ տեղ, որ կամենան զինք
ու զիր ընկերքն սպաննել, նա վասն այնոր սպաննել զիմեմահն
անձներոց, և երթայ առ եպիսկոպոսն նա երր յիմնայ եպիսկոպոսն՝
նա զինչ կամենայ կարէ այնել թէ տաճիկ սպաննէ և թէ անհաւատ
զեպ ի Թիւստոս. ապա թէ քրիստոնէ լինի սպանածն, նա բնաւ չկարէ
այլ պատարագ այնել»: Այսպէս էր լուծվում անհրաժեշտ պաշտ-
պանութիւնն ընթացքում հարձակվող հանցագործի սպանութիւն
պատժելու հարցը Մմբատ Սպարապետի Գատաստանագրքում:

Անհրաժեշտ ենք համարում ասել, որ Հեատեղ հայրերի կանոն-
ներում արտացոլված և երկու դատաստանագրքերի մեջ իրենց
հետագա զարգացումն ստացած այս օրինադրութիւնները առաջա-
դիմական բնույթի օրինադրութիւնք էին հին և միջնադարյան Հա-
յաստանում: Դրանք առաջադիմական օրինադրութիւնք էին, որով-
հետև մարդկանց լիակատար իրաւունք և սեռայ հնարավորութիւն
էին տալիս ակտիվորեն պաշտպանվելու ավագակներից, մարդա-
սպաններից, զողերից, կողոպտիչներից և նման հանցագործներից,
յայնիսկ վտանգավոր մարդկանցից, որոնցից, ինչպէս վկայում են
մեր հին ու միջնադարյան պատմիչները, զերծ չէր մեր՝ այն ժամա-
նակ միշտ տանջված ու միշտ հռչակող ժողովրդի հայրենիքը:

Սպանութիւնը բռնի գործողութիւնների հետևանքն էին կատարվել ինչպէս
Բժշկի զործողութիւնների հետևանքով կարող են կատարվել ինչպէս
զիտավորյալ, այնպէս էլ անզգուշ սպանութիւններ: Դրանց հետե-
վանքով կարող են անզի ունենալ մարդկանց կյանքից զրկելու նաև
այնպիսի զեպքեր, որոնք ըստ էութեան քրեականորեն հետապնդելի
արարքներ չլինեն:

Հայ օրենսդրական իրավաբանական հուշարձաններում ամենից
առաջ նախատեսվում են այդ կարգի զիտավորյալ սպանութիւնները:
Միայն Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի 119-րդ հողա-
ժում և այլ հողվածներում ու Մմբատ Սպարապետի Գատաստանա-

զբրի 151-րդ հոգովածում խոսվում է այն մասին, որ բժշկաներից շատերը մարդկանց մեծ վնաս են հասցնում կամ նրանով, որ իրենց ղեկորայքը փորձում են ուրիշների վրա, կամ նրանով, որ նույն ղեկորայքով ուրիշներին շարամտորեն սպանում են, կամ նրանով, որ իրենց սովորովյա՛մբ վնասալիքս ղեկիւր են տալիս հիվանդին, և նա մեռնում է, կամ անհոգովյա՛մբ գործելով շեն կարողանում որոշել հիվանդովյա՛ն նշանները և սխալմամբ մարդուն սպանում են, կամ զժգոհ լինելով վարձից, սպանում են, կամ հիվանդի բուժման հարցում անփութ լինելով, որից նա մեռնում է, կամ նախանձելով սեփական աշակերտներին, նրանց ճիշտ չեն սովորեցնում և այդ պատճառով էլ աշակերտների սխալ բուժումը մահվան պատճառ է դառնում:

Գատաստանագրքերն այդ արարքների համար խիստ պատիժներ են նախատեսում. «Բազումք ի բժշկաց բազում վնասս գործն ղեկօք կա՛մ ի փորձել ղցեղս յայլս, և կամ շարակամութեամբ սպանենն ղեկօք, և կամ վասն անդիտութեան ղվնասախկարս տան ի ղեկօց, կա՛մ անվարժ ղուլով՝ ղցասուն ոչ ղտենն ճանաչել և չաղագս անորիկ մահ՝ գործեն հիւանդաց, կա՛մ հեղզանան յաղագս ըստ կամաց ղվարձն ոչ տալոյ և այնպէս վնասեն, կա՛մ նախանձելով ընդ աշակերտս ոչ ուղիղ ուսուցանեն և նորս անդիտանալով բազում արարել վնաս, և թէ այլ ինչ ախտս ցարոց մուծին՝ եթէ՛ ինքեանք, եթէ՛ առշկերտօք,— զայստսիկ զամենեսան կամաւորս ղիտեմք»: Գատաստանագրքի վերահիշյալ հոգովածներում թվարկելով, ինչպես ինքն է ասում, կամ այլին գործողութիւններով կատարվող սպանութիւնները, Մխիթար Գոշի քայտհետն նախատեսում է այն պատիժները, որ պետք է կիրառվեն այդ արարքները կատարողների նկատմամբ: Նման սպանութիւնների մեջ մեղադրութիւնները, եթէ կատարած հանցագործութիւնը հայտնաբերվում է առանց իրենց խոստովանութեան, եթէարանում են քրեական դատի, այսինքն արյան դատաստանի, իսկ եթէ հանցագործութիւնը հայտնաբերվում է նրանց խոստովանութեամբ, այդ դեպքում նրանք պատժվում են սպանութեան համար նախատեսվող երկարամյա ապաշխարանքով: «Արդ՝ կամաւորացն արեան լիցի դատաստան եթէ յայտ վնասն զայցել, ապա թէ խոստովանութեամբ ծանիցի կամաւորի ապաշխարութիւն լիցի», ասում է մեր մեծանուն իրավագետը:

Բժշկի հանցավոր գործողութիւններով կատարվող դիտավորյալ սպանութեան պատժելիութեան հարցը մոտավորապես նույն ձևով է զրվում ու լուծվում Մմբատ Սպարապետի Գատաստանագրքի՝

մեր կողմից արդեն մատանշված 151-րդ հոգովածում. «Մեծ բան է բժշկութիւնն ի ստածումն մարդկան, և շատ սպանութիւններ կու լինի ընդ խալտան. և է որ կամաւոր, և է որ չգիտէ և չճանչէ ղցասն ու սպանող սպաննէ, կամ որ ընդ ընկերն մախան և այնով, կամ որ ղաշկերտն խակ բաժնեն ու կամաւոր հրամանք տան. և այսպիսի պատճառանիւ շատ են, որ շատ աղք ցարեր խտենն և այսպիսիքս ամէլեն կամաւոր սպանումն վ՛համարած ի չիրատունքս»: Այս Գատաստանագրքը, ի տարբերութեն և ի հակադրութեամբ Մխիթար Գոշի Գատաստանագրքի, նման սպանութեան համար մահապատիժ է նախատեսում: «...Որ թէ կամաւոր լինի սղալն և կամ վասն սղալման՝ նա ղէդ մահապարտ ղինք սպանենն», բառացի կերպով ասված է նույն այդ հոգովածում:

Իհարկե, Մխիթար Գոշի և Մմբատ Սպարապետի դատաստանագրքերում, ինչպես նաև մեր կանոնական իրավունքի հուշարձաններում նախատեսված՝ բժշկի կամ այլ անձի կողմից կատարված դիտավորյալ սպանութիւնների հանցակազմերը հաճախ հասկան զծելով տարբերվում են ժամանակակից օրենսդրութեան մեջ նախատեսվող սպանութիւնների հանցակազմերից: Միշտ չէ, որ այդ ակտերում դիտավորյալ սպանութիւնները ճշտորոշ կերպով ահմանագծվում են սպանութեան մյուս տեսակներից կամ թեկուզ իրարից, բայց այդ ամենին էլ չի նշանակում, թե մեր հին և միջնադարյան օրենքները ահաօտարակ սպանութեան տեսակները միմյանցից չէին տարբերում: Դրանցում այդ արարքները հիրավի միմյանցից տարբերվում ու սահմանազատվում էին և այդ տարբերումն ու սահմանազատումը երևում է անգամ այստեղ՝ սպանութեան համար բժիշկների քրեական պատասխանատվութիւնը նախատեսող իրավաւորմանում:

Անչափահասների կողմից կատարվող դիտավորյալ սպանութիւն: Միջնադարյան հայ երկու դատաստանագրքերն էլ նախատեսում են դիտավորյալ սպանութիւններ, որոնց սուբյեկտների ղերում հանդես են զայլս՝ երեխաները, փոքահասակները, ղեռահասները կամ անչափահասները: Մխիթար Գոշի Գատաստանագրքի ներկրող մասի 6րդ հոգովածում, օրինակ, խոսվում է այն մասին, որ եթե ան չուրս լողալով մանկունը ղմիմենան հեղձուցանիցեն, տեսանելով քնեսցեն-եթէ՛ պարզամտաբար ի խազս և թէ ցատուցեալ քնես, կամ իւրովի ղիմեալ ի խորս և անկար ի բերել արտաքս այլոց: Այդորիկ քնեսեալ համենատիցի ընդ սպանութեան ամբն և այնպէս վճիռն տացի իրաւամբքս: Կասկածից ղուրս է, որ օցատուցեալ քնեսու կատարված սպանութեան առկ այստեղ պետք է հասկանալ միայն դիտավորյալ սպանութիւնը, անհերքելի է և այն,

որ նման սպանութեան զեպրում հանցագործին պատժելիս մեծ նշանակութիւն է տրվում արարքը դիտավորութեամբ կամ անզգուշութեամբ կատարված լինելու հանգամանքին: Այլ կերպ ասած, հանցագործին պատժելիս հաշիվ էր առնվում ոչ միայն նրա տարիքը, այլև հաշիվ էր առնվում այդ արարքի կատարման մասնանկ նրա գրեւորած մեղքի ձևը, ովչալ զեպրում մեզ հետաքրքրող դիտավորութիւնը:

Այդ նույն սկզբունքին է հետևում Մմբատ Սպարապետը: Իր Գատաստանագրքի 127-րդ հոդվածի 2-րդ մասում նա նշում է, որ էբև Լընխանները կամ ընդհանրապես փոքրահասակները «...ի լոկնայն զիրար խեղճեն ի միեկն՝ նա պատեհ՝ է որ ի հասակն հային և ի յայնոր շարեն և նոյնպէս է դատն զէ որ ի վերայ գրեցաւ»: Երկու կարծիք լինել չի կարող, որ այստեղ նույնպես «ի մեկնայն քաների տակ պետք է հասկանալ դիտավորութեան կամ շարահամութեան, այսինքն մեղքի կամ մեղավորութեան ձևերից հիմնականք կամ ավելի որոշակի կլինի ասել կանխամտածված կերպով սպանութեան կատարելու մասնանկ հանցագործի մտո գրեւորված հոգեկան-հուզական վերաբերմունքն իբրև այդպիսին:

Մխիթար Գոշի ու Մմբատ Սպարապետը, վերոհիշյալից բացի, անշափահասների կողմից կատարվող դիտավորյալ սպանութեան պատժելիութեան հարցին անդրադառնում են նաև այլ առիթներով: Երանցից առաջինն իր Գատաստանագրքի երկրորդ մասի 4-րդ հոդվածում ավելի ընդհանուր ձևով մատնացույց է անում, որ «Սպանութիւն ի մանկունս նղեալ, էթէ որ սպանն ի վեր քան զերկուսանս մամ է — իբրև կատարեալ արին լիցի և քստ այնմ տուգանեցի: Իսկ խոնարհաց քան զայդ, որպէս մետասանից և տանանմենից, կեսն լիցի: Իսկ ի վայր քան զտասն-չերից մի լիցի մասն: Եւ զի թկլտալ այլ յանցանս քան զհեղեատասանն ի խոնարհ հրամայլ զմեզս մանկութեան մի լիցել կանոնք, այլ յաղապս աղպլտս իբրտունս համարեցաք: Այստեղ, ինչպես կարելի է նկատել, ոչ միայն նախատեսվում է փոքրահասակներին և անշափահասների կողմից կատարվող դիտավորյալ սպանութեան հանցակազմը, այլև մատնացույց է արվում այն կոնկրետ հասակները, որոնց անկայութեան զեպրում հանցագործների նկատմամբ պատասխանատվությունը խտտանում կամ մեղանկանում է:

Նույնն ենք նկատում Մմբատ Սպարապետի Գատաստանագրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասում, որտեղ ասված է. «Եւ թէ ուրդի որ ի խաղայն տղայքն զիրար սպանեն՝ նա պատեհ է տեսնուլ զսպանուղին հասակն. թէ հայնց, որ քան զտասնուերկու տարին ի վեր

լինի՝ նա զէր մարգասպան տուժին զինք: ապա թէ տասնումեկ տարոյ լինի՝ նա զկեսն. նոյնպէս ու այլ ի վայրն՝ նա ի վայր լինի և տուգանքն»: Ինչպես կարելի է հետախոյնել նկատել, Գոշի նման Մմբատ Սպարապետը նույնպես փոքրահասակներին և անշափահասների նկատմամբ, այն զեպրում, երբ նրանք դիտավորյալ սպանութեան են կատարում, պատժաւաբար փոխում է՝ հիմք ընդունելով հանցագործի տարիքը:

Մեզ հետաքրքրող հարցը, վերջապես, շոշափվում է Մխիթար Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի 116-րդ և Մմբատ Սպարապետի Գատաստանագրքի 152-րդ հոդվածներում: Գրանցից առաջինի մեջ, ի թիվս այլ հանցակառնների, նախատեսվում է նաև անշափահասների կողմից հեծյալ ձիոնս դիտավորութեամբ խորանցնելու և զրանով իսկ նրան՝ այդ հեծյալին, սպանելու հանցակազմը: Եթէ հանցագործը փոքրահասակ է, այսինքն մահուի, այդ զեպրում պատժելիս «...տեսցի հասակն, որպէս յառաջադոյն զրեպտ է», ակնարկելով իր գատաստանագրքի երկրորդ մասի 4-րդ հոդվածը, ասում է Մխիթար Գոշը և շարունակում. «Եւ այնպէս դատեցի, միանգամայն շարակամութեամբն առնել և կամ ընդ խաղ: Եւ յամենայն ճշմարտութեամբ տեսցի կամայն և ակամայն. զի կատարեալ ակամայն է որոց տեղջ հետիկ. իսկ ակամաութին՝ ուրախութիւն»: Ինչ վերաբերում է 2-րդ իրավանորմին՝ Սըմբատ Սպարապետի Գատաստանագրքի 152-րդ հոդվածին, ապա այստեղ հարցը լուծվում է ավելի ընդհանուր և ամբողջական, կարելի է ասել արատաւած ձևով. «Եթէ որ որ կատարեալ հասակնս լինայ և պեղծ կամաք մահ զործէ՝ կամ ի քան ամէ որ մեռանի՝ նա մահապարտ է... և թէ ի կէս հասակին է՝ նա զտուգանցն զկեսն տայ վնասաւղն... ապա թէ տղայ լինի՝ նա ի հասակն հայել պարտ է, և ի վերայ հասակն այնել զէր այլ ինք զրել ի ժժ տարին և ի ժժ և ի շարութիւն ու ի յոսին և ի կամայն են և յոյ կամայն...»:

Ահա այսպես էր լուծվում երեսնաների, փոքրահասակների և զեռահասակների, մի խտրով անշափահասների քրեական պատասխանատվութեան հարցը ըստ Մխիթար Գոշի և Մմբատ Սպարապետի գատաստանագրքերի այն զեպրում, երբ նրանք՝ այդ անշափահասները, դիտավորութեամբ սպանութեան են լին կատարում:

Մտալին սպանելը: Հին և միջնադարյան Հայաստանում ծառայի կամ, այլ բարեկամ ասած ստրուկի, ինչպես և ճորտ դուռնացու կյանքի անձնանմխելիությունը ապահովված է եղել իր տիրոջ կամայկուն օտանձգութիւններից: Այդ երևում է նաև իրավաբանական նյութներից: Դեռևս այսպես կոչված Ասորահ-հոռուեական դատա-

տանազրբի հայկական օրինակի, այլ կերպ ասած հայկական ինքնուրույն դատաստանազրբի 28-րդ հոդվածը բրեւական պատմի սպանակալիքով արգելում էր ստրկատիրոջը՝ ինքնագլուխ կերպով սպանելու սեփական ծառային, այսինքն ինքնադատաստանն դիմելու նրա նկատմամբ: Այս սկզբունքը հետագայում ընդունվել է Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանազրբերում:

Մխիթար Գոշի Դատաստանազրբի երկրորդ մասի 27-րդ հոդվածը պարտավորեցնում է դատական կարգով պատասխանատվության կանչել այն մարդուն, որը փայտով հարվածում ու սպանում է սեփական ծառային: Հիշեցնելով, որ կանոնական օրենքը ծառայների տիրոջը նման իրավունք տալիս է միայն այն բացառիկ զեպերում, երբ սրանք ապստամբում կամ առիթ են տալիս հաշմենհարգար տանելու իրենց տիրոջ նկատմամբ, Գոշը պահանջում է, որ մյուս բոլոր զեպերում ծառային սպանողները, բրեւական պատասխանատվության կանչվեն և որպես հանցագործների պատժվեն: Այսպես հարցը զեկելով, նա միտժամանակ, հիմք ընդունելով կրիտիկական որոշ ժամկետներ, փորձում է միայնացից սահմանադատել սպանություն և ծանր կամ թեթև մարմնական վնասվածքից առաջացած մահվան հանցակազմները. «Եթե որ հարկանել դժառայ իր կամ զազոխին իր դատազանա և մեղոցի ի ձնոսնել նորա, դատաստանա վրէժխնդրութիւն լիցի ի տերանց: Տեսանն առ է դատաստանն ի դատազանն և ի սուրն և յայլսն այսպիսիս, միանգամայն յապստամբութիւն նոցա և ի պատճառ լինելն: Եւ եթէ յայլազդիբ իցեն և եթէ՛ քրիստոնեակը, ըստ այնմ դիեք արեանն սուգորդին: Բայց եթէ մի որ կամ երկուս կացցել, մի՛ խնդրիցի վրէժն, զի զինք արձաթոյ իւրոյ են: Ապաշխարութիւն լիցից»:

Սմբատ Սպարապետի Դատաստանազրբում, ի տարբերություն Գոշի Դատաստանազրբի, ավելի հստակ կերպով է շարադրված այն դրույթը, որ պատժելու իրավունքի սուղիքտը մի շարք զեպերում զա պետությունն է, և որ, հետևաբար, վերջինս իրավունք ունի պատժելու անզամ իր սեփական ծառային սպանող մարդուն: Դատաստանազրբն այդ արարքը պատժում է արյան զին հատուցմամբ: Այստեղ նույնպես հիմք ընդունվելով ոչ այնքան հանցագործի զիտալորությունն ուղղությունը, որքան արդեն շոշափելի դարձած կրիտիկական երկօրյա ժամկետը, փորձ է արվում իբրև ինքնուրույն արարքներ միմյանցից սահմանափակելու դիտավորյալ սպանությունը և մահ պատճառող ծանր կամ թեթև մարմնական վնասվածքը: Եթե որ զիր ծառայն օջտէ ու սպանեն՝ նա զարեան զինքն ի զարպասն վճարէ. զի սպանելն ու իրատեղն պարոնացն է, բայց

թէ ի զարից ժամն շմեռի ու երկու ար արբի՛ նա այլ սուգանջ յտայ, ին այլ յետև մեռնի, զի իր ծառայ է, ասված է Դատաստանազրբի 117-րդ հոդվածի առաջին պարբերության մեջ:

Եթե Գոշը ծառային պատճառած մարմնական վնասվածքի հետևանքով տեղի ունեցած մահվան զեպում նախատեսում է տիրոջը պատժել ապաշխարանքով, ապա, ինչպես կարելի է նկատել վերահիշյալ հոդվածից, Սմբատ Սպարապետը նման զեպում տիրոջը պատասխանատվություն, նույնիսկ բարոյական պատասխանատվության հարցը առաջ չի բաշում, նրա այդ արարքը համարելով միանցամայն օրինական, որն էլ և թույլատրելի: Այս կարգում ևս, ինչպես տեսնում ենք, Գոշի և Սմբատ Սպարապետի տեսակետները տարբեր են:

Իճեհասպանություն: Անձի զեմ ուղղված հանցագործությունների և առանձնապես սպանությունների սխտեմում առանձնահատուկ տեղ է զբաղում ինքնասպանության հանցակազմը: Ժամանակակից բրեւական իրավունքում, որպես կանոն, ինքնասպանությունը, հետևաբար նաև զրա նախապատրաստությունը ու փորձը հանցակազմի և պատժելի արարքներ չեն: Բոլորովին այլ կերպ է այդ հարցը լուծվել հեռավոր անցյալում, երբ օրենսդրության ըստեղծման ու արդարադատության իրականացման դրոժի վրա ծանրացած էր քրիստոնեական կրոնի գաղափարախոսության կիրքը: Այն ժամանակ ընդունվում էր, որն է մարդը որպես ստածու կրոնից ստեղծված արարած ունի իր հոգին: Հոգին տվել է ինքը՝ ստավածը, և նրանից բացի ոչ ոք իրավունք չունի բանի կելույզով այն մարդու մարմնից անջատել: Այստեղից էլ տրամաբանական եզրակացություն, որ անում էին օրենսդիրները և զատարանները. մարդասպանը, ով էլ լինի նա՝ ուրիշը, թև իր կյանքի զեմ ոտնձգողն՝ ինքը, միեռնույն է, պետք է պատժվի: Եվ մենք տեսնում ենք, որ հին և միջնադարյան օրենքներով այն պատժվում էր:

Ավելին, զրա պատժելի լինելու մասին իրավանորմեր կարելի է զտնել ընդհուպ մինչև XIX դարի կեսերը հրատարակված օրենքներում: Որպես ինքնուրույն հանցակազմ, այն նախատեսվում էր Կարոլինայում և պատժվում էր եկեղեցական սպաշխարությունը, իսկ մի բանի զեպերում նաև զույրի բուժագրավումով: Մի շարք եկեղեցական ժողովների որոշումների համաձայն, ինքնասպանություն կատարածի դիակը կամ պարզապես չէր թաղվում, կամ թաղվում էր անարգական ձևով՝ առանց ժամասացության և հուղարկավորության և կամ թև ցցվում էր շներին, զիշատիչ թույուններ իր ու զաղանների առաջ որպես կերակուր: Փրանսիական օրենքներ

որ, նույնիսկ XVIII դարում, ինքնասպանութիւնը պատժում էին դիմելը դուրսն ի վայր կտակելով և հօգուտ թագաժողոր գանձարկղի դատապարտվածի ամբողջ գույքը բռնագրավման ենթարկելով։

Հին Հայաստանում ինքնասպանութիւնը պատժում էր սովորութեամբ իրավունքի նորմերի ուժով։ Բայց կանոնադրում իրենց արտացոլումը գտած, հետևաբար և երկրում երբևէ կիրառված Աթանաս Հայրապետի կանոնները⁵⁰ կանոնի համաձայն ինքնասպանութիւնը դարձյալ դատապարտելի արարք էր համարվում, թեև որս համար կոնկրետ պատժատեսակ ու շահ չէր նախատեսվում։ Սկզբունքորեն նույն կերպով էր մշակվում հարցը նաև Մխիթար Գուշի և Մմբատ Սպարապետի գիտատարաբերը։ Գուշի Գատառանագրքի առաջին մասի 74-րդ հոդվածը ինքնասպանութիւն կատարողների համար, եթե այն կատարվում էր գիտակցաբար՝ առանց հոգեկան ֆունկցիաների որևէ խանգարման, արդեւում էր եկեղեցական պատարագ անել, մինչդեռ հոգեկան խանգարման հետևանքով ինքնասպանութիւն կատարողները զրանից չէին զրկվում ան պատճառաբանութեամբ, թե իրը նրանք այդ արարքը կատարել են պակասամտութեամբ, այլ կիրպ պատժ հոգեկան ճիվանդութեան, շարքերի զրգման հետևանքով։

Հետևելով Աթանաս Հայրապետին, Գոշը մատնանշված հոգվածում հարց է տալիս. «Որ յիւր միտս ոչ իցէ և երթիցէ զիրտվին, այսինքն՝ կամ զահալվէժ անի, կամ այլ ինչ մահ մեռանի, պարտ է ի վերայ պատարագ մատուցանել թէ՛ ոչ» և տրված հարցին պատասխանում է. «Պարտ է վիճակելուցն քննել՝ եթէ ճշմարտութեամբ պատասխան էր և որար զայս, քանզի բազում անգամ մեծառտինն կատարելուցն կամելով՝ զիպիցէ որ ի վերայ նորս պատարագ մատուցատեն, առն՝ չէր միասն, զի մատուցեն զպատարագն։ Արդ՝ քննենլ պարտ է, մի՛ զուցէ ի բռնութենէ մարդկան կամ այլապէս արար զայս, ապա ոչ՝ է պարտ լինել պատարագ ի վերայ նորայ, քանզի ինքնասպան եղև։ անձին իւրոյ։ Ապա յայտար է քննել զամենուսն ճշմարտութեամբ, զի մի՛ ի դատաստան անկանեցի մատուցանողն։ Արդ՝ թէլզէտ ճայտնի բտս հարցմանն և պատասխանից, այլ վերակացուքն պարտապան են ապաշխարել բտս զատելոյ վարդապետացու, և դատաւորաց ոչ է այս»⁵¹։ Ապալետ էր հարցը լուծվում Գուշի Գատառանագրքում։ Ինքնասպանութիւն կատարողները պատժվում էին Պատժվում էին նաև նրանք, ովքեր բռնութեամբ մարդկանց հասցնում էին մինչև ինքնասպանութիւն։

Մմբատ Սպարապետը ազիլի հետևն է դնում։ Նա ոչ միայն արգելում է գիտակցաբար, մեղսունակ վիճակում ինքնասպանութիւն կատարած անձանց համար պատարագ անելը, այլև մեղսամանակ արցնելում է եկեղեցական ծեսակատարութեամբ նրանց, այսինքն ինքնասպանութիւն կատարածներին թողելը, որն իր ժամանակին ամենասարսափելի պատիժն էր։ Ահա թե ինչպես է հարցը լուծվում նրա Գատառանագրքի 98-րդ հոդվածում. «Հարցանեն յարեմքս վանս անըզմահու (ինքնասպանութիւն)՝ թէ լինի իրենց թաղում կամ պատարագ նա կու հրամայէ թէ՛ աղիկ բարակ հետարբեր պիտի լինել, զի անընմահն ազգեր են. են որ ի խելք են ու իրենց կամա կու մեռնի՛ն և զայնքը բնա ոչ թաղման արժանի շայնև և ոչ պատարագի. և են որ ի լինցի խելքայի ի դուրս վանս քառն՝ նա զայնոց կարգն պատե՛՛ է կատարել։ Բայց զազգն և պահաղքն զատեն և քալել տան, և այլ ի վերայ այտոր բտս մահուանն լինի ու իրատուքն»։

Երկու կարծիք լինել չի կարող, որ Աթանաս Հայրապետի կանոնների, Հայոց կանոնագրքի, Մխիթար Գուշի և Մմբատ Սպարապետի դատաստանագրքերի վրա, այս իրավաբանորեն կազմելիս, որոշակի ազդեցութիւն է թողել կրոնական այն զարգաբարխառութիւնը, որի մասին ակնարկվեց վերևում. մարդը ունի հոգի, այդ հոգին արվել է աստծու կողմից և նրա դեմ ոտնձգելն անպայման պետք է պատժի անկախ այն հանգամանքից, թե ով է այդ ոտընձողը՝ կողմնակի մարդ, թե՛ ինքը՝ մեղսունակ վիճակում ինքնասպանութիւն կատարած անձը։

Սեպտուրյուն խառը մեղով (մեղավորությամբ)։ Մխիթար Գուշի և Մմբատ Սպարապետի դատաստանագրքերում խոսվում է անպիտի սպանութիւնների մասին, որոնք իրենց սուբյեկտիվ կողմով տարբերվում են մի կողմից գիտաժողովալ և մյուս կողմից անզգույշ սպանութիւններից։ Այլ կերպ ասած նշված ակտերը նախատեսում են սպանութիւնն առանձին տեսակներ, որոնց կատարման զեպրում զրևնորված մեղքի ձևը դիտարկութեան և անզգույշութեան միջև ինչ-որ նոր, միջին տեղ է բռնում։ Գատառանագրքերը մեղքի այդ ձևն անվանում են խառը մեղք կամ խառը մեղավորութիւն, առանց, սակայն, տալու այդ հասկացութեան ընդհանուր և ճշգրիտ բնորոշումը։ Ինչպես մյուս բոլոր դեպքերում, այնպես էլ այստեղ դատաստանագրքերը խառը մեղքի կամ խառը մեղավորութիւն այդ զագափարի լուծվումը փորձում են բացահայտել օրինակներով։

Գուշի Գատառանագրքի երկրորդ մասի 117-րդ հոդվածը հեն-

⁵⁰ Վերջին այս նախադասութեան մեջ Գոշը հասկացնել է տալիս, որ այդ կարգի զորքերը պետք է թնկնեն ոչ թե աշխարհի, այլ եկեղեցական (հոգեւոր) կատարանների կողմից։

վելով Բարսեղ Մեծի կանոններից մեկի՝ 98-րդ կանոնի վրա, մատնացուցիչ է անուժ աչք կարգի սպանություններից մի քանիսը. «Իսկ ի պատերազմի սպանանել ի կամատրել և յախամալ է է. Եւ եթէ ի զԻշերի որ կարծիցէ զՅնամոր հարկանել և հարեակ զբարեկամ ըսպանցէ. և է սա ի կամատրել և յախամալ, Եւ ին նետ որ ձգիցէ և թշանձուչ պատահեալ սպանել, յախամալ է ի կամատրել է: Եւ նուրի գատատանազրքի առաջին մասի 82-րդ հոդովածում բերվում է խառը մեղավորությանը կատարվող սպանության ևս մի քանի օրինակները և փորձ է արվում առ յայդ սպանության ավելի ընդհանուր, բայց չօրհրեակ բնորոշումը: Սպանությունը, ապում է այնտեղ. «Է կամաւ և դարձեալ ախամայ յորժամ նետ որ ձգէ որոշ, և կամ զգաղանի, կամ ըստ այլոյ օրինակի, և պատահէ թշանձուչ, յորոյ վերայ խնդայ... սպանութիւն խոտտովանեալ ըստ կանոնական ուղղուն գատատանի, և ի ձեռս անկեալ գատատարացն՝ ճշրրտ գատել զկամայ և զախամայ, և որ երկուցն է, և այնպէս գտոյժան ուղղուն: Այստեղ, ինչպէս անհետ ևնք, Գորշ շղարփում է նաև խառը մեղավորությանը կատարված սպանության պատժելիության հարցը, այդ սպանությունը համարելով մի նոր որակի սպանություն:

Խառը մեղավորությանը կատարվող սպանության հասկացությունը փաստորեն այլ կերպ է մեկնարանելում Միքատ Սպարապետի Գատատանազրքում, որի 151 ԱՅՏ հոդովածում գիտազորայ սպանությունների հետ մեկտեղ բերված են խառը մեղքով կատարվող սպանությունների մի քանի համապատասխան օրինակներ: Ավելորդ չենք համարում որոշ մեղքերումներ կատարել այդ հոդովածին. «Նույնպէս և այս այլ է յերկուրեն, որ գիտեմալ որ՝ թէ զչարհամա կու սպանել ու զընկերն քաղէ և սպանել: Եւ կամատրել այն է, որ տայ ըրով և զմէկայլն ի վար զնէ ու սպանել, կամ քրով բշտէ, ևս այն հայնց է զէղ երբ թրով ձկարու ու եսպան: Եւ այս ազգի ազգի սպանումնքս շատ են. բայց յայս չքոցս կարէ որ զայլն իմանալու եւ է այլ որ մահղեղով սպանենն, և են որ վանս սիրոյ զեզ տան և սպանենն, և այստք այլ ընդ մահասպարտք են համարած՝ թէ այր լինի և թէ կին, և մահու վճար անուռն: Եւ այստք են կամատրք և ախամալ և որ յերկուրին մէջ սպանութենն»:

Կատարված մեղքերումներից հեշտությանը կարելի է նկատել, որ խառը մեղավորությանը անդի ունեցող սպանության հասկացողության սահմաններում հարցում Միքատ Սպարապետի և Մխիթար Գորշի մոտ միասնությունը չկա: Երանք հաճախ խառը մեղավորությանը սպանումներ են համարում այնպիսի սպանություններ, որոնց հենց իրենք իրենց գատատանազրքերի այլ հոդովածներում

յում դատում են գիտազորությանը, իսկ երբեմն էլ՝ անզորությանը կատարվող սպանությունների շարքը: Այս տեսանկյան տակ հարցին նայելով մենք կարող ենք ասել, որ վերևում բնութագրված և ըստ հանցակազմների վերլուծված գիտազորայ սպանություններից շատերը, օրինակ, բռնի գործողությունների հետեանքով կատարված սպանության որոշ տեսակները, անչափահասաների կողմից կատարվող սպանություններից մի քանիսը, անհրաժեշտ պատշապանությանը անդի ունեցած սպանությունները, նույնիսկ տիրոջ կողմից սեփական ծառային սպանելը ավելի շուտ հանդիսանում են խառը մեղավորությանը կատարվող սպանություններ, քան գիտազորայ սպանություններ:

Նույն կարգով էլ գատատանազրքերում նախատեսվող անըզգույշ սպանություններից շատերը իրենց ներքին էությունում մոտենում են հեշտատակված այդ նույն, այսինքն խառը մեղքով տեղի ունեցող կամ, որ նույնն է, խառը տիպի սպանություններին: Դրանում համոզվելու համար բավական է ասել, որ Մխիթար Գորշ Գատատանազրքի երկրորդ մասի 117-րդ հոդովածում նախատեսվող սպանություններից մի ամբողջ խումբ, որոնք համարվում են անըզգույշ սպանություններ, Ամբատ Սպարապետի Գատատանազրքում դասվում են խառը մեղքով կամ խառը մեղավորությանը կատարվող բուպանությունների թվին: Բերենք այդ հոդովածի համապատասխան հատվածը, որի արդյունքները մասամբ հանգիստացել են մոլորիտական օրենքները և մասամբ էլ Աթանասի ու Բարսեղ Մեծի կանոնները. «Եւ ախամայ սպանութիւն լինի բազմաթիւնակ. սակայն զըշանակս տացոր շափակտարայեա. «Եւ է այսպէս: Չի ի հարկանել ուրոյ փայտ և՛ սոտուցեալ տապարն ումեք զիպակ սպանցել: Եւ կամ խոնարճ ի բարձունց և կամ ի յերանց թողեալ փայտ և կամ քար՝ զիպեալ ըսպանցել: Եւ կամ յաջղով և կամ ի պարտիղէ և կամ յայլ ինչ յայպիսեաց արտաքս ձրիցէ որ քար և սպանցել: Եւ կամ ի ծառ ձրիցէ որ թափել պտուղ և զիպակ սպանցել, և կամ ի ծառայ ի խոնարճ թափել պտուղ և քար մնացեալ և կամ դաւաղան անկեալ և կամ այլ ինչ յայպիսի, ուստի մահ՝ գործիցի: Եւ կամ վարդապետ զաշակերտ վանս խրատու ըստ շափոյ հարկանիցէ: Եւ կամ հար զորդի, և կամ մայր զգուտոր, Եւ կամ զհարսն՝ սկեսուր, և կամ եղբայր՝ զեղբայր: Եւ կամ սէր զծառայ և կամ զաղայսնի՝ տիկին և կամ որ զոր, ուստի վնասու մահու լինի: Եւ եթէ շերիբար որ ընդ հրապարակ վարիցէ և կամ զայլ ինչ ի կենդանաց, կամ զայլ և առ ոտն կոխեալ մահ՝ լինի: Կամ նետ որ որոշ ձրիցէ և կամ ի նպատակ և կամ ի վայրի, և պատահիցի ումեք և սպանիցէ, Եւ եթէ քար որ

ձգիցէ կարծեցեալ թէ չէ քար: Է և այլ ազգ տակմայ՝ յորժամ զճնտ մտանի եղբայր զեղբայր սպանանել և նա հարկատրարար դարձցի և սպանեցէ և կամ որ դուրս: Եւ կամ յաւազակաց ի մէջ անկեալ՝ ի հարկ սպանեցէ»:

Իսկ ինչպես է լուծվում խառը մեղաւորութիւնը կամ մեղքով տեղի ունեցած այդ սպանութիւնների սուբյեկտների բրեսկան պատասխանատւութիւնը կամ, այլ կերպ ասած, պատժելիութիւնը հարցը: Այս հարցին Միխիլար Գոշի Գատաստանագիրքը ուղղակի կերպով չի պատասխանում, բայց հասկացնել է տալիս, որ նման դեպքերում դատարանը պետք է կնի կոնկրետ դրուժնային և նշանակի անչպիսի պատժ, որը համապատասխանի խառը մեղքով կատարված սպանութիւնների բնութիւնը: Հենց այս ոգով հարցը լուծելով նշված Գատաստանագրքի երկրորդ մասի 117-րդ հոդվածի վերջին պարբերութիւնը մեջ աւում է. «Եւ թէ խառն ի կամաւորէ և յակամայէ, ըստ այնմ դատեցիք»:

Ինչ վերաբերում է Սմբատ Սպարապետին, ապա սա լրիակատար որոշակիութիւն մացնելով հարցի լուծման մեջ, աղբարարում է, թե խառը մեղքով կատարված սպանութիւնը պետք է պատժվի միայն կիսով շափ աչն պատժի, որ օրենքում նախատեսված է դիտավորյալ սպանութիւնը համար: Իր Գատաստանագրքի 151 տէս հոդվածի վերջում նա այդպես էլ ասում է. «Ետնպէս և թէ ի կամայ և յոչ կամայ լինի (սպանութիւնը, Ա. Ք.) նա այլվայ կէսն է տուժանացն: Եւ այս բառական է»:

Անզգույշ սպանություն: Սպանութիւնները, որպես տարբեր մեղքեր ձեւերով կատարված ժանցագործութիւններ, մարդկութիւնը հայտնի են դեռևս անհուն անհուններից: Համայնաբար կրօնական գիրքը նշում էր դիտավորութիւնը և անզգույշութիւնը կատարվող սպանութիւնը առանձին տեսակներ: Հոսմական ու շրջանի բրեսկան օրենքները, ինչպես նաև դրանցից առաջ կայների կուլված սովահասակաւ օրենսդրութիւնը մեզ հետաքրքրող հարցում էլ ավելի որոշակիութիւնը մացրին, էլ չենք խոսում միջնադարյան ֆեոդալական պետութիւնների օրենքների մասին, որոնց զգալի մեծամասնութիւնը մեջ այդ սկզբունքը անց էր կացվում համակողմանի պարզութիւնը:

Ինչ վերաբերում է պատմական և միջնադարյան Հայաստանին, ապա այստեղ նույնպես հիշյալ սկզբունքն իր արտահայտութիւնը զգույշ է առաջին հայ կանոնական օրենքները, ինչպես նաև ժամանակի ընթացքում հայերն թարգմանված և Հայաստանում հոգևոր ու աշխարհիկ համապատասխան իշխանութիւնների կողմից ըն-

դունված, երկրում դարձրեալ շարունակ կիրառված օտար կանոնական օրենքները իրենց իրավանքներում հիմախ զուգընթացաբար նախատեսում են սպանութիւնը այդ հիմնական ձևերը: Դավիթ Այվկա որդու կանոնները, Միխիլար Գոշի և Սմբատ Սպարապետի գատաստանագրքերը իբրև աղբար օրենքն ամռացիորեն օգտագործելով հայ և օտար կանոնական իրավունքի հուշարանների իրավանքները, իսկ ավելի հաճախ ինքնուրույնաբար կանգնած են մնում նույն սկզբունքի վրա: Նշված իրավանքներում դիտավորութիւնը կատարվող սպանութիւններին զուգորթնող ընդհանրացող գծերով նախատեսվում են նաև անզգույշութիւնը կատարվող սպանութիւնները:

Հայ բրեսկան իրավունքում անզգույշ սպանութիւնը և դրա պատժելիութիւնը մասին առաջին հիշատակումներ մենք հանդիպում ենք Հայոց կանոնագրքի տարբեր հիշատակարաններում:

Դավիթ Այվկա որդին իր կանոններում, որպես առանձին և ինքնուրույն հանցակազմ, ուղղակի կերպով նախատեսում է անզգույշ սպանութիւնը: Այսպես, նրա կանոններից 40-րդ կանոնը աղբարարում է. «Այլ եթէ ընդ թուև անկանի (մայր) ի վերայ մանկան, կամ անհոգացեալ մանուկն ի հօր անկանի և այլի՝ Եւ ամ ապաշխարացեցէ՝ մինն արբապահուիմամբ, իսկ զԹ շարաթապահուիմար և դարձեալ զերկու երիցս ըստատուն պահեսցին: Նույն կարգով էլ 42-րդ կանոնում մենք կարգում ենք. «Այլ եթէ մարդոյ լինի ջորի խնւ կամ ձի խնցր ընկեց, կամ մարգակամբ, կամ եղն հարկանող և անդրատեցէ և այլք ազցեսցեն նմա, բողոր բարձրալ զվնասն ցուցանիցեն և նա յանհոգ րացես ոչ հնարեցի զնա որպէս արժան է, սպանէ զոր. տէր նորա մահապարտ է: Թէ յայնուրբ անտանց է, թէ ձի, ջորի, ի մեռելոյն տէրքն սացին, զի ի պէտս հոգունն ծախցցեն»:

Այդ կանոններում, որոնք իրենց ժամանակ պարտադիր ուժ ունեցող իրավանքներն էին, ինչպես հետագայում կարելի է նկատել, հիմնականում նախատեսված էին անզգույշ սպանութիւնն ըստ էության նման մի քանի հանցակազմեր. թեև կանոնների հեղինակը ավելի հետևողական լինելու ղեկավար ակտը է հասկանար, որ իր իսկ նկարագրած իրադրութիւնների պայմաններում նույն այդ բնութագրական սպանութիւնները կարող էին տեղի ունենալ նաև հանցամասններին պատահական զուգահեյսութիւնը, որեմն և դրանց սուբյեկտները շպետք է հետապնդվեին և պատժվեին:

59-րդ կանոնի և մի քանի այլ կանոնների մեջ Դավիթ Այվկա որդին բավականին ամբողջական նշաններով նախատեսում է սպանութիւնը այնպիսի հանցակազմեր, որոնց գոյութիւնը մի ավելորդ

անդամ ապացուցում է, որ նա տարբերակ է որոշակի կերպով միմյանցից սահմանազատում է դիտարկությանը և անզոր: յշ սպանություն հակացուցվումները: Ավելին, այդ կանոնները կրում է, որ բրահանդերը զարգացրել են անհատական կյանքի զրկելու բրահանդերն անտարբեր, այսինքն փաստորեն հանցակազմ շտաշացնող զնայրերի մասին: Բերենք 59-րդ կանոնի ամբողջական տեքստը. «Այլ թվ յանաբրենաց արշավանս անդիցնն առանց պատճառի ր վերայ քրիստանեից և ի ընդդիմամարտեկն սպանութիւն հանդիպի, անպարտ են, Գ ամ բաւական է վասն սրբորութեան անձին: Ապա թէ ի ձեռն կայնայ ըբէր է կամաւ սպանանէ, արեան պարտ է: Այլ վասն խնդրելոյ կամ զրաւ անեկոյ իրաւապէս եկեացնն այլազգիք յերկիր քրիստոնէից, ալրիկն կամ սպանացնն և զերի անուցուն, եթէ ի նոցանէ պատահի սպանութիւն, սուտանուն քրիստոնեայնն վճարեն, և կրննապատիկ արեան պարտականք են: Բսկ պիշերամարտութեան պատահակ սպանութիւնն առանց պատճառի, այնպէս է, որպէս վայրագարար ի պատերազմի:»

Այսպիս կը լուծվում անզոր: յշ սպանություն պատժելիության հարցը հայ եկեղեցական-կանոնական իրավունքում և Գավթի Ալավիկա որդու Կանոններում:

Սպանության այդ տեսակը որպէս առանձին հանցակազմ նախատեսվում էր նաև Մխիթար Գոշի և Մմբատ Սպարապետի գրատաստանագրութեամբ: Սրանցից առաջինը՝ Մխիթար Գոշի Գրատաստանագրութիւր, իր երկրորդ մասի 117-րդ հոդվածում, իբրև անմիջական ազբյուր օգտագործելով մովսիսական իրավունքի որոշ օրինադրություններ Երկրորդ օրինաց զբրից, ինչպիս նաև Բարսեղ Մեծի, Աթանասի և Հեռեղոսի հարերի մի ամբողջ շարք կանոններ, թվարկում է այդ սպանության բազմաթիվ կոնկրետ զեպքեր: Հոդվածում այդ կարգի սպանությունները մի միասնական տերմինով անվանվում են «ակամայ» սպանություններ: Այս ակամայ» բառը, ինչպիս այդ անուղղակի կերպով նախատել են հին և միջնադարյան հայ իրավունքի պատմության հանգրիւմ զբաղվող որոշ հայտնակներ, իր լեզվական և իրավաբանական նշանակությամբ համարի լիովին նույնանում է հայերեն «անզոր: յշ» բառի հետ, որը մեր իրավունքի պատմության մեջ միշտ էլ «դիտարկության» բառ-տերմինին բոլորովին հակառակ բովանդակություն ունեցող տերմին է հանդիսանում:

Մատենանշված 117-րդ հոդվածում Գոշը ընդունելով, որ ակամայ» սպանությունը կատարվում է բազմապիսի ձևերով, որպէս օրինակ բերում է նրանցից մի բանիսը: Գոշի բառերով՝ «սասձ այդ սպանությունը տեղի է ունենում, երբ ... ի հարկանել ուրբ ր փայտ

և ստուցեալ տապաւ ումք զիպեալ սպանել է կամ խոնարհ ի բարձանց և կամ ի լերանց թողեալ փայտ և կամ քար՝ զիպեալ ըսպանցել: Եւ կամ յազգույն և կամ ի պարտիղէ և կամ յայլ ինչ այսպիսեաց արտաքս ձգիցէ որ քար և սպանել: Եւ կամ ի ծառ ձգիցէ որ թափնից պտուղ և զիպեալ սպանցել, և կամ ի ծառ ի խոնարհ թափնից պտուղ և քար մնացեալ և կամ զաւազան անկեալ և կամ այլ ինչ այսպիսի, ուստի մահ գործիցի: Եւ կամ վարդապետ զաշակերտ վասն իրատու ըստ շափոյ հարկանիցի: Եւ կամ հայր զորդի, և կամ մայր զդուստր: Եւ կամ զհարսն՝ սկեսոր, և կամ եղբայր զեղբայր: Եւ կամ տէր զծառայ, և կամ զազախին՝ տիկին, և կամ ոք զօր, ուստի վնաս մահու լիցի: Եւ եթէ զերկիւր ոք ընդ հրապարակ վարիցէ և կամ զայլ ինչ ի կենդանեաց, կամ զասլ, և առ ոտն կիսեալ մահ լիցի: Կամ նեա որ որոշ ձգիցէ և կամ ի նպատակ և կամ ի վայր, և պատահիցի ումք և սպանցել: Եւ եթէ քար որ ձգիցէ կարծեցեալ թէ չէ քար, է և այլ ազգ ակամայ՝ յորժամ զհետ մտանէ եղբայր զեղբայր սպանեալ և նա հարկաւորարար գարձիի և սպանել է կամ որ զուրբ: Եւ կամ յաւազակաց ի մէջ անկեալ՝ ի յարկն սպանցել:» Ճիշտ չէր լինի պնդել, թէ իր այս օրինակների մեջ Գոշը լիովին ինքնուրույն է, և նրա կողմից նախատեսված բոլոր սպանությունները քրեական իրավունքի դիտություն մեջ հայտնի են որպէս անզոր: յշ սպանություններ, բայց պետք է նշել, որ զրանց բացարձակ մեծամասնությունը նույնիսկ մեր ժամանակներում տիրապետող հասկացողությամբ իրբց անզորությունամբ տեղի ունեցող սպանություն օրինակներն են հանդիսանում:

Իր Գրատաստանագրքի մի բանի այլ հոդվածներում Գոշը նախանշում է ակամայ», ըստ էության մարդու կամքից անկախ կերպով կատարվող սպանության այլ տեսակներ: Եւ, Այս տեսակներից հիշատակության արժանի են Գրատաստանագրքի առաջին մասի 82-րդ և երկրորդ մասի 1-ին, 13-րդ հոդվածները և: 82-րդ հոդվածը տվյալ զեպքում մեզ հետաքրքրող հարցի տեսակներից մի տեսակ լրացնում է Գրատաստանագրքի երկրորդ մասի կողմից արդեն հիշատակված 117-րդ հոդվածի բովանդակությունը: Այդ հոդվածի հենց սկզբում հարց է տրվում. «Եթէ որ ի քահանայից սրբէ զանդատան իր կամ զպարտէղ և քար ընկեալ զորմովմն և զիպի մարդոյ և մեռանի, զի՛նչ պարտի անել վասն կարգի քահանայութեան պաշտմանն: Եւ կամ թէ ումք յաշխարհականց նոյնպէս ակամայ սպանութիւն զիպի, որպէ՛ս պարտ է տալ սպաշխարութիւն:» Այս հարցին տրվում է աներկիտ պատասխան. այդ քահանան պետք է համարվի անզորությունամբ սպանություն կատարող անձնավորու-

թյուն, ենթարկվի ապաշխարանքի և զրկվի քահանայություն անելու իրավունքից:

Հետևելով սովորութային իրավունքին, Գոռը ազգաբարձում է, ինչ պատասխանատվություն չարցը նույն կարգով պետք է լուծվի նաև այն դեպքերում, երբ հանցագործության սուբյեկտների զերում հանդես են գալիս աշխարհիկ մարդիկ. «Նմանապես և որ ի վարդապետ է վան խրատա հարեալ է և մեռեալ, ըստ սովորութեան: Եմանապես և հարչ զորդի, և այլ այսպիսի: Եւ այսպէս է. սատիւ լուսորեալ քահանայն զժառանգան զհետ փախուցեալ ծառային. այլ թէ յամբողջի միջի ձեռով ընդ հուռն հարկան է և սպանան է, ի քահանայութիւն զայ աս է աստ լուծանէ-կամ զի շէր քահանայ և կամ յամբողջն հղես, ներէ: Եման այսմ և զակամայ սպանութիւնն օրէնքն լուսուցանեն, որպէս օտաշիլ տապարին, կամ այլ ինչ այսպիսի, զոր յապաստանի ասէ անկանել ի քաղաքն և ապրիլ, որ զերկրորդ մահուն ունի զանդին»: Ավելի կոնկրետ չարցը զնկով, Գոռը հնարավոր է համարում, որ անզգուշութամբ կամ նրա տերմինով ասած «սակամայ» սպանություն կատարողների մեզքի շափր և աստիճանը պետք է ճշտորեն որոշվի դատարանի կողմից. «Եւ արդ՝ քանզի արժան է զսակամայ սպանութիւն խոտորոցեալ ըստ կանոնական ուղղել զասատանի, և ձեռս անկեալ դատարանքն՝ ճշգրիտ զատել զկամայ և զակամայ, և որ երկուցն է, և այնպէս զտոյժսն ուղղել»: Ինչ վերաբերում է Գատաստանական Երկրորդ մասի 1-ին, խիստ ծավալուն և միաժամանակ շատ առումով հետաքրքրիչ հոդվածին, սպա պետք է ասել, որ նրա մեջ նույննա, այլ հարցեր լուծելով հանդերձ, Գոռը անզրադանում է իր տերմինով ասած «սակամայ», այսինքն անզգուշ, սպանությունների պատժելիութեան հարցին:

Այստեղ նա բնութայն է անում երեք դեպքեր. ա) երբ այլազգին, աչախներ մահմեդականը դիտավորութեամբ կամ անզգուշաբար սպանում է քրիստոնյայի, բ) երբ, ընդհանրապես, քրիստոնյան ինքն է դիտավորութեամբ կամ անզգուշաբար սպանում մահմեդականի և գ) երբ քրիստոնյան դիտավորութեամբ կամ անզգուշաբար սպանում է քրիստոնյայի: Երեք դեպքում էլ Գոռը սահմանում է համապատասխան պատժներ. «Եսկ եթէ սպանանիցէ յայլազգի քրիստոնեայ կամայ, սպանցի փոխանակ նորա. սպա թէ ակամայ, խրատիցի ի ձեռս և զգին արեան տուգանեցի»: Այսպես լուծելով առաջին դեպքը, նույն հոդվածում, մի քանի տողից հետո նա շարունակում և ապիս է երկրորդ դեպքի լուծումը. «Այլ եթէ քրիստոնեայ յայլազգի սպանել կամայ, զգին արեանն տուգանեցի ըստ ցուցա-

նելոյ օրինակին հարիբ քսան և երկու ղեկան»: և եթէ ակամայ-զին զնոյն վաթսուն և մի ղեկան»: Խոսելով երրորդ դեպքում հանցագործներին պատժելու կարգի մասին, Գոռը ազգաբարձում է. «Եսկ եթէ քրիստոնեայ զքրիստոնեայ սպանել կամայ, զգինն տուգանեցի արեան իւրոցն, և թագաւորի տուգանք ըստ կարի լիցի: Եւ թէպէտ ըստ օրինացն մահու արժանի է, այլ ի ձեռս խրատ ասեալ սպաշխարութեան հասցէ, ապա թէ ազքատ իցէ վաճառեցի իրոցն տաղէ, և թագաւորի ըստ կարի տուգանք. քայ խրատ մի առցէ»:

Անզգուշ սպանության յուրահատուկ ձևերից մեկն էլ Գոռը նախատեսում է իր Գատաստանագրքի երկրորդ մասի 13-րդ հոդվածում: Այստեղ խոսվում է այն մասին, որ երբ որևէ մեկը ցորենի կամ այլ հացահատիկի հորը մարդ է իջնցնում, որպեսզի հահահատիկ այն, սակայն իշնողը մեռնում է թունավոր նիցի, իջնցնողն այն ղեպքում պետք է պատասխանատվություն կանչվի որպես անզգուշ սպանություն կատարող, որովհետև նա պարտավոր էր այդ մահը նախատեսել ու մարզուն հոր իջնցնելուց ստաց այն օգափոխել. «Եթէ քացեալ որ հոր ցորենոյ և կանչ յայց սերմանեաց լիւրոց կամ յօտարաց ի ներքս թողցէ հանել ի նման է մեռանիցի, մահու դատաստան լիցի. և եթէ ախտացի, բժշկութեանն և խափանածոյն տուգանեցի. զի պարտ էր Բուայլ մինչ յանելէ հտոռն և այնպէս զգուշանալ: Եւ այդ ըստ այլմ կայցէ դատաստան: Սակայն ի վարձու կալեայն և կանխաւ զգուշացեալն տեսցի ճշգրիտ քննութեամբ, նմանապես և բռնապատեալն»:

Վերևում շարադրվածն ամբողջությամբ սպացուցում է այն, որ Միխիթար Գոռի Գատաստանագրքում անձի զմեռ ուղղված ամենածանր հանցագործություն՝ դիտավորյալ սպանության հետ զուգընթաց նախատեսվում էր նաև անզգուշ կամ՝ ինչպես Գոռն ու Սմբատ Սպարապետը կասեին, «սակամայ» սպանության հանցակիցներ: Եարդարվածը միտամանակ վկայում է, որ մեր մեծ իրավագետը՝ Միխիթար Գոռը, հստակ կերպով հասկանում և հասկացնել էր տալիս, որ դիտավորութեամբ կատարված սպանություն միշտ և բոլոր դեպքերում պետք է ավելի խիստ պատժվի քան «սակամայ», այսինքն անզգուշությամբ կատարված սպանությունը: Հետևաբար նույնիսկ սպանության գործերով քրեական արդարադատությունը պետք է կառուցվի սուրյենկովի մեղսանացման սկզբունքով. մարդկանց արարքների քրեական իրավաբանա-

կան որակման հիմքում միշտ էլ պետք է դրվի մեղքի կամ, որ նույնն է, մեղավորության ինստիտուտը: Այս բոլորը ինքնըստինքյան վերցրած իր հերթին մի ավելորդ անզամ վիպում են, որ Գոշի իր ժամանակին իրավաբանական բարձր գիտելիքներ և առաջադեմ ու խորաթափանց միտք ունեցող գործիչ ու մտածող է եղել:

Անզույշ սպանության և դրա պատճեխության մասին համապատասխան իրավանորմեր մենք գտնում ենք նաև Ամբաստանապետի Գաղտնիության Գրքում, իրավանորմեր, որոնք իրենց ներքին բովանդակությամբ երբեմն համապատասխանում են Մը-խիթար Գոշի Գաղտնիության գրքի վերահիշյալ՝ երկրորդ մասի 117-րդ հոդվածի որոշ պարբերություններին և առաջին մասի 82-րդ, 1-ին ու մի քանի այլ հոդվածներին բովանդակությամբ: Այդ Գաղտնիության գրքի 151 bis հոդվածը նկատելի փոփոխություններով հանդերձ վերարտադրելով Միխիթար Գոշի Գաղտնիության գրքի 2-րդ մասի 117-րդ հոդվածի որևէ մեծ հատվածի բովանդակությունը, որպես «ազատ», այսինքն անզույշ սպանության օրինակներ, մի շարք զեպեր է նախատեսում: Քերում ենք այդ հոդվածի ամբողջական տեքստը. «Եւ թէ մարդ փայտ կենայ ու կտրէ, նա փայտի կացինն ու դիպի և մարդ սպանել, և թէ փայտ կամ քար դէ, նա դայ դիպի ու սպանել. և կամ յայդոց կամ յածվոց պահել քարէ և սպանել. և կամ թէ ի քար լուծելի ու ծառ, նա անցին ու դիպի և սպանել, և կամ թէ փակչի ի ծառն ու ի հետ մասնակի բնկին ու սպանել զմարդ. և կամ թէ հայր զորդի ի վերայ խրատու բըշտէ, նա մեռնի, կամ վարդապետ զաշակերտ, կամ մայր զդուտար, կամ սկեսոր զհարսն կամ պարոն զճորտ, կամ տիկնի զմատայկան որ մտէ լինի զինչ ցեղ ու է. կամ թէ ձիով դիպի, կամ թէ կառ կոխի և սպանել. և այլ ազգ սպանանուն՝ որ մարդ հետ մարդոյ կամ եղբայր հետ եղբար զանակ կամ թույր քաշէ և ի հետամտէ, նա ընդ իր ա՛ն ի ներք գտնայ և զնայ սպանել, և կամ թէ մարդ որ ի մարդասպաներոյ ի մէջ ընկնի և կանենան զինք սպանել, նա գտնան և ինք իր աջողորմեամբն զնոցա սպանել—նա այս ի կամայն և յուր կամայն ի խառն է բանա:»

Ամբաստանապետն իր հասկացողությամբ «ազատայ» րուպանության պատճեխության անհրաժեշտության մասին խոսում:

51 Մտքի գիտությունը ցույց է տալիս, որ այս հոդվածի վերանորմեր այնքան էլ չի համապատասխանում նրա բովանդակությանը: Վերջապէս ձևակերպված է. «Կան կամայ և անկամայ մարդասպանութեան, միևնույն տեքստով փաստորեն խորք գնում է հիմնականում միան ակամա, այսինքն անզույշ սպանությունների մասին»:

և Գաղտնիության գրքի մի քանի այլ հոդվածներում: Նա խիստ մեծ և կենդանական պատիժ է նախատեսում այն զեպերի համար, երբ քահանան ծառի կամ պատի վրա քար է դնում, քայքայված այդ քարն ընկնում և մարդ է սպանում: Այդ քահանան, բոտ Ամբաստանապետի, զրկվում էր պատարագ անելու իրավունքից: Եթե նույն արարքը տեղի էր ունենում աշխարհիկ մարդու կողմից, սա ենթարկվում էր ապաշխարանքի: Եւ թէ քահանայ ի վերայ ծառի կամ ի վերայ պատի քար դնէ՝ և ընկնի ու մարդ ըսպանել. նա այլ պատարագ չկարէ այնել: Եւ թէ աշխարհական լինի, նա զեղ սպանելու ապաշխարություն քաշէ՝, սակայն է Գաղտնիության գրքի 28-րդ հոդվածի 2-րդ պարբերության մէջ:

Գաղտնիության գրքի 29-րդ հոդվածում, որը հիմնականում խմբագրված է Միխիթար Գոշի Գաղտնիության գրքի վերահիշյալ 82-րդ հոդվածի սկզբնական համաստասխան, Ամբաստանապետը թվարկելով սպանության մի շարք տեսակներ, նորից է փորձում միմյանցից սահմանորոշել դիտավորյալ և անզույշ սպանություններին, որպես առանձին հանցագործությունների ու առանձին հանցագավճների հասկացությունները. «Եւ թէ յուցենն ընէ վարդապետ զաշակերտ քշտէ որ մեռնի, նա նոյն սպանելու է. և թէ հայր զորդի ի խրատ կամ զինչ որ լինայ այսպիսիք-նա կարգք քաշէ զինչ նպիտակոյան և վարդապետը կենդանու զնեն. ապա այլ տուժանք չկրէ ի զարգվան այն որ ի յուցենն սպանել, ապա զքահանայութեան գործն այլ չալնէ: Եւ թէ երէց ի հետման մարդ յղարկէ թէ շուտ զնա ի իննա բանն, կամ հետ մարդոյ հետ հաս, և կենէ ի փողոցն ընդ մարդ դիպի որ մեռնի՝ նա զարպատն իայն կախէ որ դիպան, և յղարկուել սպանելու է երկու ցեղ: Բայց զատուտրին պարտ է փնտրել ըզդրութեան և բտարել զուրկամայ սպանութիւն: Զեղ երբ մարդ կացին ամէ ու հուղ կտրէ՝ նա անցին կացինն և ընկերոցն դիպի ու սպանել, և զան ալցն նորա և սսնէ՝ թէ կամա սպանելու: Բայց զատուտրն և կենդանու զնա փնտրումն պատճ է, որ այնն՝ ու հայնի ի սպանելուդն հասակն և ի խելքն և ի քանն ու ի ժամն, և ի յայնոր վերայ այննն զքատութիւնն և գտուժանքն: Նոյնպէս և թէ որ հետ իրաց նեա ձգէ՝ նա անցին և մարդոյ դիպի ու մեռնի. նա տեսնուել որ սխ չկենալ և մէլն ու տընտըղն զմեռնն. Եւ զկամա սպանութիւններն աշխարհական պարտուր զիտնան, և զպկամայն կենդանու: Քրեական արդարադատության իրականացման տեսակետից այս հոդվածում կարելի է մանկամեղ և մանկամեղ, որ Ամբաստանապետի, Ամբաստանապետ, հետեւելով Միխիթար Գոշին, դիտավորությանը կատարված սպանություններին

գործերի դատական քննությունը և հանցագործներին պատժելու իրավունքը վերապահում է աշխարհիկ դատավորներին, այսինքն պետական իշխանության համապատասխան պաշտոնատար անձանց, իսկ ռեպուբլիկայում ապահովումը գործերի քննությունը՝ հողերը դատարաններին: Այս փաստը նույնպես ինքնըստիմացաբար վերցրած ապացուցում է, որ Սմբատ Սպարապետը հստակ պատկերացում ուներ այն մասին, որ բրեհական արարադատությունը պետք է խաբուրվի ոչ թե օրյակտով, այլ սուրյակտով՝ մեղսացանցման սկզբունքի վրա: Հանցագործները, մանավանդ մարդասպանները, պետք է պատժվեն և այդ պատժի տեսակն ու չափը պետք է բնորոշի նայելով այն բանին, թե տվյալ հանցավոր արարքը, այդ թվում՝ տվյալ ըսպանությունը դատավորությանը (ժեկամայ) թե անզգուշությամբ (ժակամայ) է կատարվել:

Այս տեսակետից հիշատակության արժանի է Գառաստանագրքի նաև 6-րդ հոդվածը, որը Միխայիլ Գոշի Գառաստանագրքի երկրորդ մասի 13-րդ հոդվածի բովանդակության համառոտ շարադրանքն է: Այս հոդվածում նույնպես այն միտքն է զարգացվում ու կենդանացվում, որ նոր բացված հրատահատիկի հորն իջած մարդու մահվան զեպում այդ հոր պետք, որպես անզգուշությամբ սպանություն կատարող, պետք է պատժվի: «Եթե որ զիր հորն բանայ և մենակ մարդ ի ներք ասէ, ու մարդի ի նզկն խեղդվի. նա արեան տէր է անառչն, բայց տեսնույ պիտի և փնտրել և իմանալ զմտելոյն, որպէս ի վարձն ու ի չամէ կերպս»:

Սպանության պատժելիության ինստիտուտի հիմքում զենքով սուրյակտի կողմից զրեւորված որոշակի ձևերով մեղավորությունը, Միխայիլ Գոշը և Սմբատ Սպարապետը դրա հետ միասին միանգամայն զիտակցաբար նախանշում էին մարդուն կյանքի զրկելու: Նաև այնպիսի զեպեր, երբ բրեհական կամ այլ կարգի որևէ պատասխանատվության հնարավորությունը առհասարակ բացառվում էր: Այլ կերպ ասած, նրանք կանգնած էին այն տեսակետին, որ պատասխարի ճնշումը (CASUS) մարդ չպետք է բրեհական-դատական պատասխանատվության ենթարկվի, ինչքան էլ ծանր լինեն զրա՝ այդ պատահարի հետևանքները: Բերենք փաստեր մեր ասածը հիմնավորելու և ապացուցելու համար՝

Գոշի Գառաստանագրքի առաջին մասի 111-րդ հոդվածում այն միտքն է զարգացվում, որ երբ մարդ ծառից վայր է ընկնում ու մեռնում է կամ նրանից կախվելով ինքնասպանություն է գործում, կամ էրբ եզր պողահարելով մարդուն սպանում է նրան, կամ երբ որևէ մարդ կենդեցու պատի վարդի վայր ընկնելով մեռնում է, կամ երբ

կենդեցու պատի վրայից զար ընկնելով մարդ է սպանում և այլ նման զեպերում չկա հանցագործություն, չկա մեղք (մեղավորություն), ուրեմն և ոչ մեկը (ասենք ծառ տնկողը կամ կենդեցու որմնադիրը) չի կարող բրեհական պատասխանատվության ենթարկվել և պատժվել: Այդ նույն սկզբունքները փոխակերպված ձևով մենք տեսնում ենք Սմբատ Սպարապետի Գառաստանագրքի 67-րդ հոդվածում:

Գոշի Գառաստանագրքի երկրորդ մասի 92-րդ հոդվածը, հիմք ընդունելով Բարսեղ Կեսարացու (Մեծի) 8-րդ կանոնը, ազգաբարձ է, թե «մեկ որ ի պատերազմունս մահ՛ք զործին, հարբն մեր ամենակն շճամարեան ինչ զայն ի մեղքս»: Գոշը պահանջում է, որ այդ սկզբունքը միշտ էլ որպես գործող իրավանորմերով վավերացված սկզբունք մնա, և նման սպանության համար դատավորները մարդկանց որևէ պատժի չենթարկեն, որքանով որ չկա մեղք, չի կարող լինել նաև հանցագործություն: Նման սպանություն կատարողները կարող էին միայն կրոնական (կղերջեցական) ապաշխարանք կրել, բայց ոչ՝ բրեհական պատժի ենթարկվել այս բառի ժամանակակից հասկացողությամբ:

Ոնջաներպանս բոտ հայ կանոնական օրենքներին, ինչպես նաև բոտ Միխայիլ Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերին, պատերազմում տեղի ունեցած սպանությունը բրեհականորեն հետապնդելի ու պատժելի արարք չէր համարվում: Այդ նշանակում է, որ մեր հին և միջնադարյան օրենքները մարդուն կյանքից զրկելու նման զեպերը խտրական տարբերում ու սահմանազատում էին այն զեպերից, երբ մարդը կյանքից զրկվում էր մեկ ուրիշի մեղավորությամբ՝ հանցավոր դատավորությանը կամ հանցավոր անզգուշություն: Նրանք հավանում էին, որ ուրիշին օրինալարի կերպով ֆիզիկական ռիչացնելը, տվյալ զեպում թշնամուն սպանելը՝ հանցագործություն չի, ուրեմն և զրա կատարողը դատական կամ մեկ այլ կարգով չպետք է հետապնդվի ու չպետք է դատվի: Դա վկայում է նրանց իրավաբանական նրբանկատության, բրեհորեն դատապարտելի և ոչ դատապարտելի արարքները տարբերելու ու սահմանազատելու ընդունակության մասին:

Բայց մեզ հետաքրքրող հարցի տեսակետից այստեղ կարևոր ոչ միայն այն է, որ պատերազմում թշնամու զինվորին կամ նրա բանակին պատկանող այլ անձին սպանելը հանցագործություն չէր համարվում և չէր պատժվում, այլ նաև այն է, որ պատերազմի ընթացքում պատահական զուգահեյություններով կամ շփոթությամբ, կամ իրարանցման ընթացքում յուրախնին սպանելը նույնպես հանցա-

զործութիւնը չէր համարվում: Այսպէս, օրինակ, Գոշի Գառաստանագործի երկրորդ մասի 92-րդ հոդվածը ստում է. «Եւկ որ ի պատեմ-բազմունս մահ՛ք գործին, հարբն մեր ամենեկին շհամարեցան ինչ-զայն ի մեզս, ըստ որում մեզ հաճոյ թուեցաւ ամին խորհրդոյս հե-տեւել: Բայց վասն զձեռս արբելոյ բարիօք է անպիտանացն երթ ամ արտաքոս հողորդութեան լինել: Այս և ոչ ընդ օրինօքն եմուս. և ասի լոկ ի հաղորդութենէ ասէ արտաքոյ. Յայլամանէ ուսցին դա-տաւորք և մի՛ վրէժ ինչ լիցին: Այստեղ թեև ուղղակիօրեն չի հիշա-տակվում, որ խոսքը յուրախիկ սպանութեան մասին է, սակայն այդ բանը հասկացվում է:

Մտքատ Սպարապետի Գառաստանագործի 145-րդ հոդվածում, ի տարբերութիւն Գոշի Գառաստանագործի վերոհիշյալ հոդվածի, այդ մտնեւոր փաստորեն ընդգծվում է. «Այն որ զիր բնկերն ի պա-տերազմ ընդ խալապայն անգիտութեամբ սպաննէ, կամ որ կուտին ընդ իրար, նա կու հրամայլ արկնքս որ յունի մեղք. բայց վասն սպկին սրբելոյ Գ տարի ի հաղորդութեն ի դատ կենալ, և այն էլ իբր մի ոգործութիւն, որ խոճմտասին բախին Յայս պիտի հայիլ դա-տաւորացն, և պատրաստ կենալ յանձնդ արենէ»:

Հասկանալի է, թե մեկ և թե մյուս դեպքերում խոսքը դնում է այն դեպքերի մասին, երբ սպանութիւնը տեղի էր ունենում պատա-հարք. «Ընդ խալապայն անգիտութեամբ», այլ ոչ թե այն դեպքե-րի մասին, երբ այդ արարքը կատարվում էր հանցավոր զիտավորու-թեանը կամ հանցավոր անզորութեամբ, այսինքն «կամայ» կամ «ակամայ», ինչպէս կասեր նույն Մտքատ Սպարապետը:

Մասնանշենք, վերջապէս, Միսիմար Գոշի Գառաստանագործի երկրորդ մասի 113-րդ հոդվածը և նույն բովանդակութեամբ Մտքատ Սպարապետի Գառաստանագործի 149-րդ հոդվածը, որոնք մեջ նույնպէս այն սկզբունքն է վավերացվում, որ մարդուն կյանքից զրկելու փաստը զենուս այս կամ այն անձին քրեական պատասխա-նատվութեան կանչելու, այսինքն պատժելու համար իրավարանա-կան հիմք չի հանդիսանում: Այդ բանի համար անհրաժեշտ է մահ-վան որսաճառ հանդիսացած այն անձի հանցանքը գործունեութիւն-նը, որի մեջ այդ անձի մեղքը գրանդված լինի: Գոշի Գառաստա-նագործի վերոհիշյալ հոդվածը նախանշում է. «Այն թէ վարձկան որ լինի և ասիցէ ցտանուտը տանն թէ՛ անարքա՛ զիս և կամ տուր ինձ գործ արարից, իսկ նա յառաջպատարաստ ծանուցանէ նմա զորո-գայլ վնասուն, և վարձկանն առ կարիս հարկի իրոյ յանձն առնու-ցու, և սա կրկին զանպարտութեան բանն արիցէ նմա, և անդ պա-տահի վարձկանին մահ, անպարտ է: Եւ եթէ անզգուշութեամբ ի բազ-

մաց վկայան վնասն առաքիցէ կամ գործել հրամայիցէ, և անդ հա-տանիցի նմա որոգայթ մահու, արևակապարտ է: Յայտնի է այս դա-տաստան կանոնական. զի բոս կամաց վարձկանին երբալ ի գործ-անպարտ է առաքող, իսկ հարկաւորեալն և ի վկայան վնասն ա-ռաքել-ընդ դատաստանու արևան է, թէպէտե վարձու իցէ»:

Նույն կարգով էլ Մտքատ Սպարապետի Գառաստանագործի 149-րդ հոդվածում ասվում է. «Եթէ որ զմարդ ի մոխարայս տեղ յուզարկէ ի բան, ու նա սպանվի և կամ որոգայթով մեռանի՛ նա ա-րեն տեր է»: Այլ կերպ ասած, հոդվածում գրատված է սկզբունք. կա մեղք, կան նաև քրեական պատասխանատվութիւն և պատիժ: Սակայն կարգանք շարունակութիւնը. «Բայց աննույ պիտի, թէ ինչ-ցնդ էր յուղարկելի՛ ինքն յաժարեցաւ ի զնալն, և թէ ի կահրա յու-ղարկվեցաւ: Ու թէ ինք լինի յամբարէ, կամ հողովոր լինի այն բա-նին՛ նա լիա մեղք, ապա թէ ոչ՛ նա մեղք է: Նույնպէս և թէ վարձավոր լինի ի բան ինչ կամ ի գործ, և սորուշացն պարենն ու ասէ՛ թէ զի-տայ պատրաստ արայ, ու նա շանչ, ու վասն այնոր վնասի՛ նա ան-պարտ է: Ապա թէ ոչ՛ որ անխնամ էր ետ որոգայթել. նա պարտա-կան է: Հողվածի այս մասում, որը հանդիսանում է տրամարանա-կան շարունակութիւնն առաջին մասի, ասվում է, որ չկա մեղք, չկա նաև քրեական պատասխանատվութիւն, ուրեմն և քրեական-իրա-վարանական առումով՝ պատիժ:

Մեր այս ազգային դատաստանագրերից կարելի է անլ օրի-նակներ եւ բերել, բայց դարձան էլ բավական է համոզելու համար այն բանում, որ սպանութեան պատժելիութեան ինստիտուտի հիմ-քում զրանք՝ այդ դատաստանագրերը, դնում են մեղքի (մեղավո-րութեան) սկզբունքը այս բառի իրավարանական իմաստով և դա-նով իսկ իրավաբանորեն բացառում են մարդուն քրեական պատա-խանատվութեան կանչելու և պատժելու ամեն մի հնարավորութեան, երբ այդ մարդու՝ ուրիշի մահը առաջացրած գործողութիւններն ի-րենց բնութեով մեղավոր (հանցավոր) գործողութիւններ չեն լինում:

II. ՄԱՐԲԵՆԿԱԿ ԿՆԱՍՎԱՆՔՆԵՐ, ՄԵՆ ԵՎ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ

Պատմական ակնաւի: Հակամարտ հասարակութիւնների պատ-մութեան մեջ սպանութիւնների հետ մեկտեղ համարյա միշտ էլ իրենցից որոշակի հասարակական-դասակարգային վտանգավորու-թեան են ներկայացրել ինչպէս մարմնական վնասվածքները, այն-պէս էլ զրանց հետ սերտորեն առնչվող այնպիսի հանցագործու-թիւններ, ինչպիսիք են մարդու նկատմամբ գործարարից ծննն ու սպօրիկի բռնութիւնները: Դրանով է բացատրվում այն հանգաման-

բը, որ սկսած հնազույն ժամանակներից, երբ նոր էին ստեղծվում ու դրապում քրեական օրենքները, այդ հանցագործությունները նախատեսող իրավանքները օրենքների սխեմանում իրենց ուրույն տեղն էին զբաղում:

Ռուսմահորությունը ցույց է տալիս, որ քրեական մյուս օրենքների նման նշված իրավանքները կամ, այլ բառերով ասած, պատժելի այդ կոնկրետ օրենքները նույնպես դասալին-դասակարգային բնույթ են ունեցել: Մարդու առողջությունը և նրա անձի անձեռնմխելիությունը արդարապեսության իրականացման պատմության ընթացքում պաշտպանվել և դրանց զեմ կատարվող ստեղծությունների սուբյեկտները պատժվել են զսասկարգային հետևողականությամբ:

Ստրկատիրական կարգերում ստրկատերն իր ստրուկներն նրկատմամբ կարող էր ամենանոզոք բռնությունների դիմել, նրան կարող էր ցանկացած մարմնական վնասվածք պատճառել, հաշմանդամ դարձնել և նրա այդ արարքները ոչ միայն չէին հետապնդվում, այլ հենց գործող օրենքների ուժով թուլացվում ու օրինականացվում էին: Մյուս կողմից, դրա ճիշտ հակառակը, նույն այդ կարգերի օրոք, երբ ստրուկներն էին փորձում բռնություն գործարարել իրենց տերերի նկատմամբ, նրանք մասնաշարք մահապատժի էին ենճարկվում կամ պարզապես սնչացվում էին: Այսպես էր դրուսությունը հին եգիպտոսում, Բաբելոնում, Հունաստանում, Հռոմում և ստրկատիրական մյուս պետություններում: Նշանակում է մարդու առողջությունն ու անձի ֆիզիկական անձեռնմխելիությունը պաշտպանող օրենքները այդ երկրներում բացահայտ դասակարգային բնույթ ունեին: Միանգամայն իրավացի է Վ. Բ. Լեյնը, որն իր «Պետության մասին» հոդակվոր դասախոսում մեջ նշում է այն հանգամանքը, որ ստրկատիրական Հռոմի օրենքները ստրուկներին դիտում էին որպես իր, և սպանության վերաբերյալ օրենքները, ինչպես նաև մարդկային արժանապատվությունը պահպանող մյուս օրենքները ստրուկներին չէին վերաբերում⁵²:

Մարդու առողջությունը և անձի անձեռնմխելիությունը պաշտպանող քրեական օրենքներ հրատարակվել են նաև ստրկատիրական կարգերին պատմականորեն փոխարինելու եկած ֆեոդալական հասարակության օրոք, բայց այնտեղ էլ դրանք համամարդկային բնույթ չեն ունեցել, այլ ամբողջությամբ վերջրած բխել են ֆեոդալների դասակարգային շահերից և պատժի սպառնալիքով պաշտպանել են այդ նույն ֆեոդալների առողջությունն ու արժանապատվու-

թյունը, նրանց անձեռնմխելիությունը՝ հնարավոր ամեն կարգի ուսնձգություններից: Ֆեոդալական պետությունների հրատարակած օրենքները, ճիշտ է, արգելում էին ֆեոդալներին սպանելու իրենց հորտերին, բայց դրա փոխարեն նրանց անսահմանափակ իրավունք էին տալիս բռնաւալ իրենց ճորտերի նկատմամբ: Օրենքի ուժով ֆեոդալը կարող էր իր զուգապահներին, աշխերն ճորտերին վաճառել կամ ուրիշ ֆեոդալներից ճորտեր գնել, ինչպես նաև կարող էր իր ճորտերի նկատմամբ անպատժել կեռւով ուղած բռնությունը գործարարել, նրանց մարմնական պատիժներին ենթարկել:

Նախահեղափոխական Ռուսաստանում ֆեոդալներին իրավունք էր վերապատված մարմնական և ավանարիող պատիժներ կիրառելու իրենց ճորտերի նկատմամբ, նույնիսկ շղթայակապելու ու արտոքելու նրանց: Եկատերիս Երկրորդ հասուկ օրենքով նրանց այդպիսի իրավունքներ տվել էր, էլ չենք խոսում միջնադարյան ուսական օրենքների և Ռուսաստանի առաջին թագավորների նույնաբովանդակ օրենքների մասին:

Գտնաւալով այն նաչդին, թն ինչ կոնկրետ բովանդակություն են ունեցել պատմականորեն հրատարակված և անձի առողջության ու անձեռնմխելիության պաշտպանությունը վերաբերող օրենքները, պետք է ամենից ասեք նաեւ, որ դրանք բուրք չէ, որ հասել են մինչև մեր օրերը: Մեզ հասած հնազույն օրենքներից, որոնց մեջ խոսվում է այդ մասին, ինչպես միշտ պետք է հիշատակել Համմուրաբի օրենսգրքը, մովսիսական օրենքները, հունական «Տասներկու տախտակներ»: Ավելի ուշ շրջանի օրենքներից են հին Ֆրանկների պետության, անգլո-սարմական պետությունների, վաղ և միջին դարերի քրմանական ֆեոդալական պետությունների, սլավոնական ժողովուրդների պետական միավորումների օրենսդրական ակտերում գրառված բազմաթիվ նույնաբովանդակ իրավանքները:

Սկսած XIV—XV դարերից, երբ հրատարակվում են ցատաստանագրքեր, անձի առողջության ու անձեռնմխելիության քրեական-իրավական պաշտպանության վերաբերող օրենքները արդեն զբաղվում, աշխերն ֆիբացվում են, այս անգամ արդեն կոնկրետ, համապատասխան զիսպողիցիա ու սանկցիա ունեցող իրավանքների ձևով:

Ուշպես բազմաթիվ այլ հանցագործությունների, այնպես էլ մարմնական վնասվածքների, ծնձի ու բռնության պատժելիության հարցում Համմուրաբի օրենքները դաժան էին և կանգնած էին թալիտի կարգով հատուցելու սկզբունքի վրա: Վերջինս կիրառվում էր թն իր նյութական (մատերիալ) ձևով և թն սիմվոլիկ ձևով: Առաջինի

52 Տե՛ս Վ. Բ. Լեյնը, Երկր, է. 29, էջ 591:

էութիւնն այն էր, որ հնուացնում կամ վնասում էին հանցագործի այն օրգանքը, որից զրկվել էր տուժողը՝ հանցագործի օտնձգութեամբ: Օրինակ, աչք հանողի աչքն էին հանում (հոգ. 196), ստամ սարգողի ստամն էին բարդում (հոգ. 200), ոսկոր կտորոզի ոսկորն էին կտրում (հոգ. 198): Երկրորդի էութիւնը կայանում էր նույն սկզբունքի սիմվոլիկ իրականացման մէջ: Օրինակ, անհնազանդ: շլուղ ստրուկի ակնուն էին կտրում (հոգ. 292), հանդուռն ու հզփացող հոգեզավակի լեզուն էին կտրում (հոգ. 192), անհաջող վիրահատում կատարող բժիշկը զրկվում էր իր ձեռքից (հոգ. 228), ձեռքերից զրկում էին նաև հարազատ հորը կամ մորը հարվածող զավակին (հոգ. 195) և այլն:

Մարմնական վնասվածքներ, ծեծ ու բռնություն նախատեսող տասնյակ իրավանորմեր կարելի է գտնել մովսեսական Հնգամատչանում: Այդ նորմերից շատերը, ամենայն հավանականութեամբ, ժամանակին կազմավորվել են բարևոնական վերահիշյալ օրենքների ազդեցութեամբ: Աշտարովն այն է, որ զրանք էլ իրենց հերթին զարբերի ընթացքում մեծ ազդեցություն են ունեցել ստրկատիրական և միջնազարյան ֆեոդալական պետությունների օրենսդրությունները վրա: Մենք ամենեին օխալված շեքը լինի, եթև ասենք, որ զրանք՝ մովսեսական այդ օրենքների, ազդեցությունը նկատում է, անոճնական բրնական օրենքների, բարբարոսական պրավդաների, սերուսական պրավդայի, ուշ միջնազարյան ֆեոդալական պետություններին զատատասանագրքերի և նույնիսկ միահեծան որոշ պետություններին օրենսգրքերի վրա:

Մովսեսական օրենքներն ընդհանրապես և անձի զեմ ուղղված հանցագործությունները, այդ թվում արտնձնացնան մարմնական վնասվածքներ, ծեծ և բռնության տարբեր ձևեր նախատեսող իրավանորմերը էական ազդեցություն են ունեցել նաև հայ կենդեցեակն (կանոնական) ու աշխարհիկ օրենքների վրա, այս պատճառով էլ հարկ ենք համարում մի փոքր ավելի մանրամասն խոսել զրանք մասին:

Բարևոնական օրենքների նման, զրանքից շատերը նույնպես կառուցված են թալիոնի անողոր սկզբունքով: Եթե մարդիկ կուվեն և զարկելով հողի կնոջը նրա տղան անցնել տան ու նրան վնասեն, վնասողը անձի տեղ անձ պիտի տա, աչքի տեղ աչք, ստամի տեղ ստամ, ձեռքի տեղ ձեռք, ոտքի տեղ ոտք, խարանի տեղ խարան, վերքի տեղ վերք, հարվածի տեղ հարված, ապված էր ելիցում (Իկ 22—25): Նույն սկզբունքի ֆիրսացումը մենք տեսնում ենք Երկրորդ օրենացում. ԵՔո աչքը թող շինայի նույնիսկ մերձավորներ-

րից. անձի տեղ անձ, աչքի տեղ աչք, ստամի տեղ ստամ, ձեռքի տեղ ձեռք, ոտքի տեղ ոտք» (ԺԲ 21), նույնը կարգում ենք Ղևտացնում, որտեղ ապված է, որ եթև մի մարդ իր զրացուն (յուրայինին) մի խեղդելիւն պատճառով, աչքիս նարմնական վնասվածք հացների, նույն մարմնական վնասվածքը, որպես պատճառ, պետք է իրականացվի նրա նկատմամբ (ԻԿ 19—20):

Մարմնական վնասվածքների տարբեր տեսակների պատճենություն մասին Հնգամատչանում կան նաև այլ օրենսդրություններ: Ելիցում մատնանշվում է, որ եթև երկու մարդ իրար հետ վիճեն և մեկը մյուսին բարով կամ բուռնցքով հարվածի, և նա շմեռնի, բայց մարմնական այնպիսի վնասվածք ստանա, որ հենափայտով մասն զա, հակառակորդը պարտավոր է տուժող պարագայրը հատուցել և վճարել բուժման ծախսերը (Իկ 18—19): Այնտեղ շի մոտացվում հիշատակել, որ իր հորը կամ մորը հարվածողը, անպատճան պետք է մահվան դատապարտվի (Իկ 15): Մրանք էին այն հիմնական օրենսդրություններ, որոնք վերաբերում էին մարմնական վնասվածքներին, բռնություններին ու ծեծին, և որոնք իրենց արտահայտությունը գտել էին մովսեսական օրենքներում:

Հնգամատչանում ժամանակի աշխարհայացքին ու ոգուն համպատասխան հանցանորմերն յուրաքանչեւ և իրենց իրավաբանական առանձնակի կարգավորումն էին ստանում նաև այն զեպքերը, երբ անձի կշմբքը, առողջությունը և անձնանձխելությունը վտանգի տակ էր զրկում կենդանիների կողմից: Ելիցում, օրինակ, խտցվում է այն մասին, որ եթև եզր պղզահարի որևէ կնոջ կամ տղամարդու, և նրանք մահանան, եզր անպատճառ պետք է քարկոծվի և նրա միսը շլպիտի գործածվի, իսկ նրա տեղը անպատճ պետք է մնա (Ելից, Իկ 28), բայց եթև եզր ընդհանրապես պղզահարող է և զա հա հառկել է տիրոջը և տեղը ոչ մի միջոցով չի կանխում այդ, որի հետևանքով մարդ է զոճվում, նման զեպքերում եզր քարկոծվում է և նրա տեղն էլ մահվան է դատապարտվում (նույն տեղը, Իկ 29): Եթև եզր պղզահարում է ծառայի կամ ազախնուն, տուժողներին (ստրկուների) տիրոջը հատուցվում է, իսկ եզր ընդունված կարգով քարկոծվում, սատկեցվում է (նույն տեղը, Իկ 32):

Հնգամատչանի այս զրույթներից շատերը օգտագործվել են հին և միջնազարյան հայ օրենսդրական-իրավաբանական հուշարձանների հերթականների՝ Օձնեցու, Դավիթ Ալավկա որդու, Միթիբար Գուշի, Սմբատ Սպարապետի և ուրիշների կողմից: Բայց ճիշտ չէր լինի ասել, թև նրանք բնրված այդ զրույթները բոլոր զեպքերում վերցրել են բառացի կամ օգտագործել են նույնությունը: Այդ ժամանակ-

ներ հայ գործիչներն ու մտածողները, օգտվելով Հնգամատյանի գրույթներին, գործող այլ օրենսդրական-իրավաբանական ակտերի հիման վրա կաշմել են ինքնուրույն օրենսդրական ակտեր, այդ թվում՝ սեփական ազգային դատաստանագրքերը:

Հաշիական հին և միջնադարյան օրենքներում նախատեսված մարմնական վնասվածքները կարելի է սխտեմավորել ու դասակարգել տարբեր կերպ: Գրանք կարելի է սխտեմավորել՝ ելնելով հանցագործների և տուժողների զասային-դասակարգային կամ կրոնական պատկանելությունից. կամ հիմք ընդունելով այն, թե մեղավորության ինչ տեսակով ու ձևով են կատարվել հանցագործությունները՝ դիտավորությամբ թե անզգույնությամբ, և, վերջապես, հանցագործությունների ծանրության աստիճանից:

Այս վերջին դասակարգում մեր կարծիքով առավել ճիշտ և գիտական դասակարգում է նախ այն պատճառով, որ այն ավելի ցայտուն կերպով է զրևեորում ուսումնասիրվող հանցագործությունների ու հանցակազմերի բնույթը, և այսպե՛ս պատճառով, որ դասակարգման սյուս հիմքերը՝ անձանց դասալին-դասակարգային պատկանելությունը, արարքների կատարման ժամանակ դրսևորված մեղքի ձևերն ու անսակները, ալյայ ղեջրում ավելի պակաս նշմարելի, ուրեմն և ավելի պակաս բնկակելի բմբնուսներ են հանդրատում:

Մատենաշված հանցագործությունների պատեկությունից հարցում նույնպես մեր հին և միջնադարյան իրավաբանական հուշարձանները սկզբունքորեն տարբերվում ու հակարգվում են մովսրական օրենքներին: Այդ մենք նկատում ենք ինչպես հայ եկեղեցական կանոնական իրավունքի ակտերում, այնպես էլ մանավանդ մեր աշխարհիկ օրենսդրության մեջ՝ հանձինս Գավթի Այակով սրբու կանոնների և Մխիթար Գոշի ու Մմբատ Սպարապետի դատաստանագրքերի, ինչպես նաև փոխակերպված ձևով հայերեն հրատարակված ու ժամանակ առ ժամանակ Հայաստանի տարբեր մասերում կիրառված օտար օրենքների ժողովածուների մեջ գրաված նորմերի:

Ի հակադրություն մովսրական օրենքների, նրանք թալիոնի անողոր սկզբունքը մեղմացնում և պատիժ-հատուցման փոխարեն շեշտը դնում են պատժի ընդհանուր ներգործող կողմի ու երբեմն էլ դրա՝ նույն պատժի, կրոնա-բարոյական հակացողությամբ ուղղիչ-դաստիարակչական կողմի վրա: Այդ բանը երևում է, օրինակ, Մխիթար Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի 29-րդ հոդվածի և

դրան էական գծերով համապատասխանող Մմբատ Սպարապետի Գատաստանագրքի 137-րդ հոդվածի որոշ գրույթներին: Ահեարկելով մովսրական՝ աչքը աչքի փոխարեն, ատամը ատամի փոխարեն, ձեռքը ձեռքի փոխարեն, ոտը ոտքի փոխարեն, պատիժ-հատուցման անողոր սկզբունքի վրա կառուցված օրենքը, Գոշը իր Գատաստանագրքում մատենաշված հոդվածում վկայակոչելով ատանա՛ված արգեն քրիստոնեությունն ու ավետարանին, պահանջուս հ, որ այդ պատիժների փոխարեն կիրառվեն յուրային պատիժներ՝ ելնելով մարմնակոթ վնասվածքի բնույթից ու էությունից, օձկն ընդ ական, ատամն ընդ ատաման, ձեռն ընդ ձեռին, ոտն ընդ ոտին, խարան ընդ խարանի, վէր ընդ վիրի, հարուած ընդ հարուածոյ: Եւ այս դատաստան աստուածաձիկն շնորհօք անտարանին տուգանօք վճարեցի ըստ բանկանի զինչ արեանն համեմատեալ: Սակայն յառաւելն և ի նուազն ի զպայութիւնն քննութիւն լիցի ի յանգաման և ի գործն, և ի բաժանումն իւրաքանչիւր յանգաման և ի զպայութիւնն քան քան և վեց զահեկան և վեց զահեկան և կէս զանգ, զարի պահասա:

Նույնն է ալում Մմբատ Սպարապետի Գատաստանագրքի 137-րդ հոդվածում. «Վան որ մարդ զմարդ ծնծ է կամ վիրարուր՝ կու հրամայէ արևնք որ ակն ընդ ակն լինի, և ատամն ընդ ատաման, և ձեռք ընդ ձեռաց, և վեր ընդ վիրի: Վան զի հոտն համանն այս է՝ եթէ զինչ քեզ պիղծ է զու քո բնկերին մի առնիր. և Քրիստոս զհինն ի նորս վերանորոգեց՝ թէ մի առեւք ումմք շար փոխանալ զբերի: Ամ մի այնիք, ու թէ այնը որ զայս՝ նա դատաւորք արինաւք զնոյն պարտին արբուցանել անաղացն, բայց թէ ի զին հանն դատաւորք զքշտածին կամաւք զիր զարկան նա թէ կտորած զաւրված կենայ՝ զինչ է ու լինի, կամ ակոսայ ձյած, նա ե՞մ միխալ ոսկի զե-կան է զինն՝ յիստակ ոսկի: Եւ թէ զարկն մարդոյ ի խալապակն, որ պեղծ զարկան ունայ, և հետ այնոր անունն իսկի որ զարկածն նշե՛ծ ի շուրջ կուգայ՝ նա թէ այլ յետ մեռնի, նա էլում է քշտաւոյն ի մահուն պարտուցն ի դարպակ և բնկած է ի եկեղեցոյն պարտն և ի յապաշխարութիւն, որ քաւէ, այսպ զարկուց կարէ առնուլ զարպասն տուգանք և զգեղգինն ու բժշկելուցն կամ ի յազգն տայ կամ ի հողին: Եւ այլ մանոր մուսոր ծնծերն որ լինեն կառոյտ կամ անրցանք կամ քաւի ուժով նա կու հրամայէ արևնք որ այն որ վճարն ծնծ-նար և բրով լինի, հայցն որ հանի իրաւանց տերն ու ինք իրաւովի, որ այլ չա՛նէ խամրութիւն»: Այստեղից երևում է, որ մարմնական վնասվածքների պատեկությունից հարցում Մմբատ Սպարապետը նույնպես փաստորեն հակադրվում է մովսրական օրենքներին և

պահանջում, որ այդ հանցագործությունների համար անհամեմատ մեղմ, հումանիտարական բնույթի պատիժներ նշանակվեն:

Հին և միջնադարյան հայ քրեական օրենքներով նախատեսված մարմնական վնասվածքները և դրանց առնչվող հանցագործությունները հետևյալներն են.

Մարմնական վնասվածքներ, որոնց հետևանք է լինում է տուժողի մահը: Գնես հայ եկեղեցական իրավունքի առանձին ակտերում այն սկզբունքն էր ազդարարված, թե ուրիշին մարմնական վնասվածք պատճառողները պետք է պատիժը բերել՝ հաշի առնելով նաև կատարված հանցագործության հետևանքը: Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի գատաստանագրքերը, ինչպես բազմաթիվ այլ հարցերում, այստեղ նույնպես կրկնրտություն և որոշակիություն մտցրին: Գրանցից առաջինի երկրորդ մասի 26-րդ հոդվածում ուղղակի կերպով ասվում է, որ եթե կրկու հոգի միմյանց հետ վեճի բռնվեն, և հրանցից մեկը մյուսին քարով կամ բուռնցքով հարվածի սպանված, որ նա մեռնի, այդ զեպետով հարվածողը պարտավոր է տուժողին հատուցել արյան պիտի, այլ կերպ ասած՝ Գատաստանագրքը նման արարքը սպանությանը հավասարազոր վտանգավորություն ներկայացնող հանցագործություն է համարում: Իսկ եթե հարվածի հետևանքով տուժող չի մեռնում, այլ անկողին բնկնելով որոշ ժամանակից հետո հենափայտերով տանից զուրս է գրվին, ուրիշ կերպ ասած, առողջանում է, ապա այդ զեպետով հանցագործը պատժվում է շատ մեղմ, այնպիսի տույժերով, որոնք իրենց բնույթով քրեական պատիժներ չեն հանդիսանում: Ահա այդ հոդվածի դրարար տեքստը. «Եթե կտուցիին արք երկու և հարկանից որ զեպետ իւր ի նոցանէ թարի կամ բռնցի և ոչ մեռանիցի, այլ զնիցի ի մահիճս, եթէ հառնիցէ այլն և շրջիցի ի ցպոյ արտաբոյ, անպարտ լիցի որ եհարս: Մեռելոյն սպաշխարութիւն լիցի: Բայց զխափանածոյ նորս և զբժշկութեան նորս տուգանեցի. և թէ մեռցի՝ զգինն: Այս գատաստան լրմամբ յօրինացս ասացաւ. և մեղ զնոյն ամբողջ պահելի է»: Նույն այս ոգին պարունակող սկզբունքներով է նման մարմնական վնասվածքի պատժելիության հարցը լուծվում նաև Սմբատ Սպարապետի Գատաստանագրքում (137-րդ հոդված), որի մասին գատողություններ արվեցին և որի ամբողջական տեքստը բերվեց վերևում:

Մահ առաջացնող այս կարգի մարմնական վնասվածքի առանձին դեպքեր նախատեսված են նաև Մխիթար Գոշի Գատաստանագրքի առաջին մասի 26-րդ, երկրորդ մասի 27-րդ և դրանց համապատասխանող Կիրիլիայի պետության Գատաստանագրքի 11-րդ և

117-րդ հոդվածներում: Գրանցից մեկն այն զեպետ է, կր երկու հոգի վիճում են, և հրանցից մեկի հարվածով մյուսը՝ ստացած մարմնական վնասվածքից, մեռնում է (Գոշի Գատաստանագրքը, առաջին մաս, հոդ. 26, Կիրիլյան գատաստանագրքը, հոդ. 11), իսկ մյուսն այն զեպետ է, երբ տիրող հասցնած նույն տեսակ հարվածի հետևանքով մեռնում են երս տան ծառան կամ նրա ազգախնր (Գոշի Գատաստանագրքը, երկրորդ մաս, հոդ. 27, Կիրիլյան գատաստանագրքը, հոդ. 117):

Ստորև բերում ենք այդ հոդվածների կոնտեքստերը լրիվ կամ միայն այն մասերը, որոնց մեջ մասնանշված այս հանցագործություններն ուղղակի կերպով նախատեսվում են. «Եթե որ ծառանգատը ի կտուի զոր հարկանէ և ի միռէ՛ հարուածոյն մեռցի, լուծի՛ վասն յանցնութեան իւրոյ. իսկ եթէ ժողովրդական որ իցէ, որոշեցի: Եվ այս կանոնական հրաման ըստ օրինացն է. զի թէ ոչ մեռցի, այլ ի մահիճս զնիցի, և յառնիցէ և շրջիցի ի ցպոյ, անպարտ լիցի որ եհարս: Սահման եղ-զի թէ զկիս այնք մեռցի, սոյն և այս ի միռէ՛ հարուածոյ. սպա թէ ոչ մեռցի ի միռէ՛ հարուածոյ, ո՛չ լուծցի, այլ գատաստան լիցի յողջութիւնն և յայտաշխարութիւնն, եթէ ծառանգատը և եթէ ժողովրդական» (Մխիթար Գոշի Գատաստանագրքը, առաջին մաս, հոդ. 26):

«Եվ թէ յայս ծառանգատաց եկեղեցուս ընդ կարգակից ընկեր կամ ընդ աշխարհականն կտիվ այնէ ու փայտով թշտէ՛ յայնց որ մեռնակ մեռնի, նա առնուն զկարգն և ի զարպասն տան զինք, որ զէզ սպաննալ զատեն զինք: Ապա թէ շմեռնի ի ժամն ու հետ արերոյ մեռնի, նա զզարկն փետոնն ու տանուն և թէ ի սպաննալն լինա՛ նա որպէս վերոյ զրեցար՝ է տուժանք. և թէ ի կարիք լինի՛ նա տուժանքն այնոր սպաշխարութեանը լինա՛յ՝ զինչ որ եպիսկոպոսն զնէ՛» (Սմբատ Սպարապետի Գատաստանագրքը, 11-րդ հոդված):

«Եթե որ հարկանէ զծառայ իւր կամ զապախին իւր զուսպանաւ և մեռցի ի ձեռանէ՛ նորս, գատաստանաւ վրէժխնդրութիւն լիցի ի տերանց: Տեսունն ասէ և գատաստան զավագանն և ի ստրն և յալլան այսպիսիս, միանգամայն յայգատամբութիւն նոցա և ի պատճառ լինելոյ: Եւ եթէ՛ այլազգիք իցնէ և եթէ՛ քրիստոնեայք, ըստ այնմ զինք արեանն տուգանիցնն» (Գոշի Գատաստանագրքը, երկրորդ մաս, 27-րդ հոդված):

«Եթե որ զիր ծառայն թշտէ ու սպաննէ՛ նա զարեան զինքն ի զարպասն վճարէ. զի սպաննելն ու խրատելն պարոնացն է: Բայց եթէ ի զարկուց ժամն շմեռնի, ու երկու արս պարի՛ նա այլ տուգանք

շատ, թէ այլ յետ մեկնել, զի իր ծառայ չու (Մժբատ Սպարապետի Դատաստանագրքը, 117-րդ հոդված)։

Յուրահատուկ տեսակի մարմնական վնասվածք է նախատեսված Մխիթար Գոշի Դատաստանագրքի երկրորդ մասի 28-րդ և Մժբատ Սպարապետի Դատաստանագրքի համապատասխան՝ 84-րդ հոդվածում։ Երկու դատաստանագրքերում էլ նշված է, որ հզի կնոջ արցանելու գտնվող սաղոթ մի ղեպքում իբրև ձևավորված ինչ-որ նյության է, իսկ մյուս դեպքում՝ իբրև ձևավորված մարդկային էակ, ելլ սահ այն ղեպքում, երբ հարվածից ընդհատվում է կնոջ հիու-թյունը ու հետևանք լինում է այն, որ ձևավորված, արդեն մարդկային կերպարանք ստացած այդ սաղոթ ոչնչանում է, Դատաստանագրքեր, որոշ սահմաններում հետևելով մոլոխական օրենքներին, կատարված արարքը դիտում է իբրև մարմնական վնասվածքից առաջացած և իր վտանգավորության աստիճանով սպառնութանը համահավասար հանցագործություն, դրա համար նախատեսում է նույն պատիժը, ինչ պատիժ նախատեսվում է դիտավորյալ սպանության համար։

Քերենք այդ հոդվածների լրիվ տեքստերը. «Իսկ եթէ կուռցին արք երկու և հարկանիցեն զկին յդի և կյանիցէ սաղմն անկար, կէս վնասու տուգանիցի որչափ ինչ արկանիցէ նմա այդ կնոջըն, և տացէ ազաւելով։ Ապա թէ կերպարաննաւ իցէ, տացէ անձն ընդ անձին։ Յայտնի է և այս դատաստան աստուածային բոտ սահմանի։ Ապա թէ ոչ՝ մի է նկարնայն և աննկարն բոտ յուսոյ առնն ծնանիս կնոջն, թէ և բազում միջոց է նկարելոյ և աննկարի։ Եւ տացէ անձն ընդ անձին.— և այս դատաստան փոխելոյ տուգանք և ապաշխարութեամբ վճարեցի, որպէս յայտնեալ է դատաստանօք թագաւորացն, համեմատելով ընդ այնուրիկն»⁵³։

«Եթէ որ զարկնէ զպատկավոր կին և նա ձգէ զտղայն, և թէ զնա անկերպարանք լինի և խլիքն՝ նա կէս տղայի վճարէ զհայրն, որչափ որ զնէ նորա զգինքն հայրն և զինչ այլք աղչուար միջնորդն։ Ապա թէ կերպարանք ունեայ տղայն՝ նա անձն ընդ անձին տուժի, թէ ընդ հայրն շահափ և ընդ եկեղեցին» (Սպարապետի Դատաստանագրքը, հոդված 84-րդ)։ Սրանք էին մեր օրենքներով նախատեսվող այն մարմնական վնասվածքները, որոնք զուգորդվում էին տուժողի մահվան հետ։

⁵³ Այստեղ Գոշը ակնարկում է իր իսկ Դատաստանագրքի երկրորդ մասի 1-ին հոդվածի այն պարբերությունը, որտեղ նա խոսում է դիտավորյալ սպանության և դրա պատկերաստան մասին (սակ՝ այս աշխատության 125-րդ էջ, որտեղ թողված էր բերված է այդ պարբերությունը)։

Մարմնական վնասվածքներ, որոնք զուգորդվում էն մարդու այս կամ այն օրգանի կամ ունակության կորստով։ Ինչպես հին և միջնադարյան պետությունների ու ժողովուրդների օրենքներում, այնպես էլ պատմական ու միջնադարյան Հայաստանի կանոնական ու աշխարհիկ շատ օրենքներում կան իրավանորմեր, որոնք նախատեսում են ուրիշի ձեռքը կամ ոտքը կտրելու, նրա ոսկորը շարժելու, նրան տեսողությունից զրկելու, և այլ նման հանցագործությունների հանցակատից շնքը կարող չհիշատակել Հայոց կանոնագիրքը և մասնավոր Մխիթար Գոշի և Մժբատ Սպարապետի դատաստանագրքերը։

Գարեթի բնթացքում օտար և հայ եկեղեցական ժողովների կանոնագրքերում տեղ գտած իրավանորմերի մեջ հաճախ է խոսվում այն մասին, որ ուրիշին տեսողությունից, լսողությունից կամ ընկալելու որևէ այլ օրգանից զրկելը, ինչպես նաև նրա ձեռքը կամ ոտքը կամ ոսկոր կտրելը պետք է ենթարկվի աշխարհիկ և կանոնական խիստ պատիժների։

Նույնը, ավելի ամբողջական և ավելի ամփոփ ձևով, մենք տեսնում ենք Մխիթար Գոշի և մասնավոր Մժբատ Սպարապետի դատաստանագրքերում, որոնցում նախատեսված իրավանորմերի ընդհանուր ոգուն համապատասխան այդ հանցագործությունների մեջ մերկացվածները, որպես կանոն, պատժվում են ոչ թե մոլոխական թալանի անողոք սկզբունքով, այլ մեծ մասամբ ենթարկվում են զուլյալին և դրամական պատիժների կամ թե եկեղեցական-կանոնական տույժերի՝ հաշվի առնելով այն, թե հանցագործը ինչպիսի կոնկրետ մարմնական վնասվածք է պատճառել։ Գոշի դատաստանագրքի առաջին մասի 14-րդ հոդվածում խոսվում է այն մասին, երբ տղամարդը իր կնոջ հետ վիճարանելով վիրավորում, ձեռնում է նրան և ծանր մարմնական վնասվածք է հասցնում։ Այստեղ նրշվում են նաև այն պատիժները, որոնց պետք է ենթարկվի նման տղամարդը. «Եթէ՛ զխական արտիվ լցեալ այդ զին անարկղ նախատանօք միշտ, և եթէ խորթ իցեն և աշորիկ ազազու մուլի, դատաստան լիցի.— թէ յառաջնումն յանձին կալաւ զձեռս համբերել պարտի, ապա թէ ոչ՝ յաղզ զարձիկ կնոջն. Իսկ եթէ յաղզս ժանդ բարոց գործէ, ոտն ընկանէ կացմն, կամ խլէ աչք զին ատումն, կամ խնդէ, դատաստան նույն լիցի որպէս օտարացն՝ հատուցանել զտուգանս որոց կնոջն են. և կրկին լիցի, զի մի՛ իբրև զհարձ կալցին, այլ իբրև զմարմին ինքնանց. և այդ՛ յորժամ զղաւսցին։ Իսկ եթէ ի նոյն յամատութեան կացմն, երկուղ է— մի զսցէ հարեալ սպանցէ. յետ բազում խրատու և յանդիմանութեան մեկնիցի... և զի

յորդանն հրամայեցաւ թողուլ զի մի զործիրք մա՛ն, և ի Տնանէ նորին պազաւս առացաւ զոր և աստ նորին օրինակաւ պատշաճ զմէկ-նին զատեցաքս:

Այստեղ, ինչպես տեսնում ենք, նախատեսվում է միայն մի մասնակի զեպք, երբ ամուսինք իր կնոջ ձեռքն է կտրում կամ նրան զրկում է տեսողությունից, կամ ատամներն է շարզում և կամ թե ընդհանրապես խեղճանդամում է նրան: Բայց ուշագրավն այն է, որ Գատաստանագրքի մեջ կա իրավանորմ, որը նախատեսում է այդ նույն հանցակազմներն ընդհանրապես, աստից կոնկրետ անձանց նշելու: Կա արդեն մի ավելորդ անզամ վկայում է Գատաստանագրքի իրավաբանական կառուցվածքի բարձր հատկությունների և հարցերն արատարհաված ձևով լուծելու համար նահանս փաստի մասին:

Բերենք այդ իրավանորմը քստ Վ. Բատամայանցի. «Եւ սոցնն ի նմանէ (այսինքն տղամարդոց) հազար դրամ արծաթ կրկին քան զոր օտարն հարկանէ, զի երբ օտարն կտրէ ձեռն իմոյ ոտն, իւլէ աք կամ ատամն և անզամոցս, իւրբարնշիր անզամոյ հազար դրամ է տուգանքն, և որ կամօք զմարդ սպանն շորս հաղար դրամ է զինն, և որ յայս շորս անզամոցս վնաս՝ ամեն մեկի հազար տուգանէ...»⁵⁴: Այլ հարց է, թե երբված այս իրավանորմը Գոշին է պատկանում, թե ավելացված է հետադարձում: Կարելի է նույնիսկ համաձայնվել Վ. Բատամայանցի հետ, որ այն ուրիշների կողմից ավելացված է, բայց դա չի հերքում այն նշմարությունը, որ հայկական դատաստանագրքում երբևէ եղել և հավանաբար կիրառվել է վերջ նշված իրավանորմը:

Մխիթար Գոշի Գատաստանագրքի մեջ, բացի նրա ստաջին մասի 14-րդ հոդվածից և նշված իրավանորմից, կա եւ մի հոդված, որտեղ զործյալ նախատեսվում է որոշակի ծանր հետևանքների հետ զուգորդված արանական վնասվածքի մի ինքնուրույն հանցակազմ: Գա նրա երկրորդ մասի 30-րդ հոդվածն է: Այստեղ նախատեսված է այն դեպքը, երբ ծառան կամ ազախինք տուժում, այսինքն մարմնական վնասվածքներ են ստանում իրենց տիրոջ ոտնձգության հետևանքով: Հոդվածի զիստզգիտիվ մասի հիմք կազմում են մուսիսական օրենքները, բայց պատժելիության հարցում, ինչպես հասար, այնպես էլ այստեղ Գոշը զստերում է իր լիակատար ինքնուրույնությունը և ինքնատիպությունը. «Իսկ եթէ որ հարցէ զակն ծառան իւրոյ, կամ զակն ազախնոյ իւրոյ և կտրացուցս, արձակեցէ զնսսա ազատս փոխանակ ական նոցա: Եւ եթէ զատամն ծառայի

խորչ և կամ զատամն ազախնոյ իւրոյ թափեցէ, արձակեցէ զնսսա աղատս փոխանակ ատաման նոցա: Թերևս և աստուծային օրենքս զայլ ևս զզնայութիւնն և զանդամս ազգահավասար րմին հրամայիցի նմանազէս կաննէ ծառայից և ազախնաց: Եւ այս դատաստան անփոփոխ կացցէ մեզ յօրինանցն սահաստացելալս: Իսկ եթէ յայլագրեաց իցէ ծառայն և ազախինն, վաճառիցէ որքան արծան է՝ պակաս և կամ քնդ կէս զնոյ, քստ որում ի զէպ իցէ զատաստանի իրաւամբք. սակայն իշխան լիցի թէ և՛ ոչ կամի վաճառելը: Գոշի Գատաստանագրքի այս իրավանորմը նույնպես դասակարգչային հետևողականություն չայտուի շարժով և հայտնի սահմաններում ծառանակին պաշտպանելու սպահնալիչ է մարդու անողջությունը և նրա անձի անձեռնմխելիությունը իրական կամ հնարավոր ոտնձգություններից:

Ի տարբերություն Մխիթար Գոշի, Սմբատ Սպարապետն իր Գատաստանագրքի մեջ թիչ է հիշատակում այն մարմնական վնասվածքների պատժելիության մասին, որոնց հետևանքը լինում է տուժողի մարմնի կարևոր օրգաններից մեկի կորուստը: Բայց որ նման մարմնական վնասվածքները նա ընդհանրապես պատժելի արարքներ է համարում, դա կասկածից զուրս է: Գատաստանագրքի այն քաղամքիվ հոդվածները, որոնց մասին մենք հիշատակել ենք կամ պիտի հիշատակենք ստորև, մեր ասածի ուղղակի կամ անուղղակի պաշտպաններն են հանդիսանում: Այդ հոդվածներից և ընդհանրապես Գատաստանագրքի բոլոր էպիկետային դրույթներից երևում է, որ Սմբատ Սպարապետը խոսում է անբուժելի մարմնական վնասվածքների (ծառայի աչքը հանելու, նրա ատամը շարզելու, նրան խեղճանկելու) մասին և հանցադրույթությունների պատժելիության հարցը լուծում է կամ ինքնուրույնաբար, կամ հետևում է Գոշի Գատաստանագրքի մեջ ստաջ քաղված դրույթներին: Ինչպես շատ ուրիշ արարքների, այնպես էլ նման մարմնական վնասվածքների քրեական-իրավական զնահատականքը տալու ժամանակ Սմբատ Սպարապետը նույնպես որոշակի զասակարգչային մոտեցում է ցուցաբերում: Այդ երևում է նրա Գատաստանագրքի մի ամբողջ շարք հոդվածներից և ստանձնապես 117-րդ հոդվածի 2-րդ մասից:

Մարմնական վնասվածքներ, որոնք չեն զուգորդվում ծանր հետևանքների հետ: Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերում, ինչպես նաև հայ կանոնական իրավունքի առանձին Նուշարձաններում կան հոդվածներ, որոնց մեջ ակնարկվում է մարմնական վնասվածքների մասին, բայց կոնկրետ կերպով չի սահմանաորոշվում զրանց էությունը և մասնավոր չի արվում զը-

⁵⁴ Վ. Բատամայանց, Մխիթար Գոշի Գատաստանագրքը 2-րդ հրատարակում, Երևան, 197-րդ թվական, էջ 111—112, 197-րդ թվականի վերջում:

րանց տարբերիչ գծերը: Այդ հողավանդը թվով քիչ էն, բայց կան: Այսպես, օրինակ, Գոշի Դատաստանագրքի երկրորդ մասի 5-րդ հողավանդը խոսում է այն անշահահասների պատմեկություն մասին, որոնք խաղալիս միմյանց համարում, խեղճում են կամ թե իրենց արարքներով միմյանց զրկում են այս կամ այն զգայաբաններին, առանց սակայն սահմանադրուելու, թե ինչու՞մ են կոչանում այդ արարքների հանցակազմերի բովանդակությունը:

Նույնը տեսնում ենք Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում, որի 127-րդ հողավանդը թեև խոսում է այն զեպերի մասին, երբ անշահահասներն ու փոքրահասակները միմյանց վնասում, խոցոտում կամ շարդոտում են, բայց չի մեկնաբանում, թե ինչ պետք է հասկանալ այդ տերմիններից յուրաքանչյուրի տակ: Չմայելով զրան, երկու դատաստանագրքերն էլ փոքրահասակներին նման արարքները համարում են հանցավոր արարքներ և զրանց համար խիստ պատիժներ են նշանակում: Պատժատեսակը և շափոք որոշելիս դատաստանագրքերը կնում են մի քանի պայմաններից, որոնցից են հանցագործության անմիջական սուբյեկտների տարիքը, մեղքի բնույթը, բայտ նրանցիցի պատճառված մարմնական վնասվածքի ծանրության աստիճանը և այլն:

Քերենք այդ հողավանդերի բնագիր տեքստերը. «Յորժամ մանկուն է ի խաղս զմիմեանս վնասիցեն, թէ՛ պատահմամբ իցէ է թէ՛ ցամամբ, այդորիկ քննեալ լիցին: Եմանապես և ի սպանությունս, և ամբն նման սպանությունն, և ի զցայտիմիսն համեմատեալ տուգանքն լիցի և զխափանածոյն և զբժշկությունն տուգանեցի: Զայդ բոտ մանկանցն իրաւամբ տեսք զատատանս (Գոշի Դատաստանագրքը, երկրորդ մաս, հող. 5): «Եւ վնասէ տղայ զտղայ և ի վնասին խոցցնէ կամ կտորէ նա նույնպէս հասակն հային... ի խոցըն, և զղեզղին՝ յայնոր վնասոյ զնեն...» (Սմբատ Սպարապետ, Դատաստանագրքը, 127-րդ հողավանդ 2-րդ մաս):

Ըստ էության նույն սկզբունքներն են պարունակում Գոշի Դատաստանագրքի երկրորդ մասի 7-րդ և 8-րդ հողավանդերը և զրանց էապես համապատասխանող Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 128-րդ, 129-րդ և մի քանի այլ հողավանդեր: Մրանց բուրբ մեջ էլ խոսվում է երեխաների կամ փոքրահասակների կողմից կատարվող զանազան անթույլատրելի արարքների մասին և զրանց թվում չի մոռացվում այն զեպերը, երբ այդ դատաստանագրքի արարքների պատճառով նույն այդ երեխաների հասակակիցները կամ խաղընկերները այս կամ այն մարմնական վնասվածքներ են ստանում:

Այսպես, օրինակ, Գոշի Դատաստանագրքի երկրորդ մասի 7-րդ հողավանդը խոսում է այն զեպերի մասին, երբ երեխաները զրազ են զային և զրանով իսկ միմյանց զորում են քարծր տեղից ցած վազել կամ արդեկքների վրայով թռիչքներ զործի, կամ ձյան վրա սահել և այլն, որոնց հետևանքով անմիջական կատարողը մարմնական վնասվածք է ստանում: Երկրորդ մասի 8-րդ հողավանդը նախատեսում է այն զեպեր, երբ պատանիները զրազ են զային ծանրություն բարձրացնել և ստանում են մարմնական վնասվածք (օրինակ, աղեթափություն և այլն): Նման զեպերը իրենց արտահայտություններն ու լուսարանումն են գտել նաև Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 128-րդ, 129-րդ և մի շարք այլ հողավանդերում:

Ե՛մ և բռնություն: Հին և միջնադարյան հայ կանոնական իրավունքի հուշարձաններում, առանձնապես հայ ազգային դատաստանագրքերում ծնծի և բռնության՝ որպես միմյանց հնա սերտորեն անշիջող հանցավոր արարքների պատմեկություն մասին նույնպես համապատասխան իրավունքներ կան նախատեսված: Մեր կանոնագրքի շատ հողավանդերից, ինչպես նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքի երկրորդ մասի 1-ին, 12-րդ հողավանդերի ու զրանց համապատասխանող Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 1-ին և 5-րդ հողավանդերի ընդհանուր ոգուց պարզ կերպով նրևում է, որ այդ արարքները, անկախ նրանց սուբյեկտների ու տուժողների ուժ լինելուց, ժամանակին առհասարակ հետապնդվել և պատվել են:

Հանցագործների նկատմամբ պատիժ նախատեսելու ժամանակ հաշվի է առնվում նրանց կատարած արարքների զասային-զասակարգային բնույթը, որը նրևում է Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 5-րդ և Մխիթար Գոշի Դատաստանագրքի երկրորդ մասի 12-րդ հողավանդերից: Բերենք այդ հողավանդերի բնագիր տեքստերը. «Եթէ՛ երկու մարդ լիբար անցնին ի մեծ և կամաթբ մարդիք լինեն՝ նա տուգանքն սակա լինի այնոր՝ որ ստա լինի: Այա թէ՛ աազ ու կրտսեր լինեն. նա վնաս այնոր իրա պիսի մարդ չէր ու լրբեցա՝՝ նա զնարա մագն տան փետել՝ ու շատ անուն զտուգանքն» (Սմբատ Սպարապետի Դատաստանագրքը, հող. 5): «Եթէ՛ կրտիցին արք և մին պատահի անկատար լինել և յանդգնեալ փետտիցէ զմորուս կատարելոյն, զատատան լիցի կրկին մասամբ զհերոս հատանել և զան իւրտ արձանուցն կսկեցուցանել, մանաւանձ զի զպատուուողս աւնարգանց: Ապա թէ՛ բռնազոյն և կամ պատուուող յանդղեանայ իցէ, միոյ զզայութեան տուգանի կէսն լիցի ի տուգանս: Եւ այդ աա այդ լիցի, զի այլոց օրինակն ցուցեալ է կտուոյ դատաստանաց»

(Փոշի Դատաստանագրքի, երկրորդ մասի շոգ. 12)⁵⁵: Այսպիսով, երկու դատաստանագրքերն էլ իրենց բովանդակությունները պայցանցում են, որ իրենք Ֆեոդալային Հասարակական Հարաբերությունների ակտիաներն ու արտահայտությունն են Հանդիսացել պատմական անցած դեպքած ժամանակներում:

Բերված հոդվածներից բացի թե՛ կանոնադրում է թե՛ դատաստանագրքերում կան իրավանորմեր, որոնց մեջ վերևում մատնանշված արարքների սուբյեկտները և մասնավոր ուղղակիները կոնկրետանում են կամ, ազվի ճիշտ կլինի ասել, ստավել որոշակի են դառնում: Մխիթար Փոշի Դատաստանագրքի երկրորդ մասի 15-րդ և առաջին մասի 4-րդ հոդվածները քրեական պատիժներ են նախատեսում այն աշխարհիկ մարդկանց համար, ովքեր հանդգնում են վիրավորել կամ հարվածել, այսինքն՝ բռնաբալ թահահայի նկատմամբ: Այդ անձանց արարքների վտանգավորությունը հիմնավորվում է նրանով, որ իրք թե՛ թահահաններն աստուծո ժառանգներ են և նրանց անարգելով կամ ձեռնկոմ հանցագործները զրանով իսկ վիրավորում ու անարգում են աստուծուն, «Կարգեցին առաքնալուսն և եղին հաստատուլեամբ՝ եթէ մի՞ որ անարգեսցէ և անզոտնեսցէ է արհամարհանօր կաշցի զքահանայն թէ և կարի որ յանարգաց իցէ, դետացել զի գկատուած անարգէ, զի Աստուծոյ սպասաւոր է ձեզ ի բարիս և համարս սացեն ընդ որոց ձերոց...», «Եւ զայս զատաստանս և որ նախ քան զնա երբեմն թէ է սակա ինչ զրեցեց⁵⁶, այլ երկրորդ յօժարեցեաց արձմ յառաքնալական կանոնաց՝ ցուցանելոյ աղաքաւ: զմեծութիւն պատժոցն անարգողաց թահահայից, զի զատել զոյց է զնոսս ընդ աստուածանաբար իբրաւացի դատաստանս, բոս ալսմ՝ որ զձեզ անարգէ զիս անարգէ...»⁵⁷: Այսպէս է հարց լուծվում Փոշի Դատաստանագրքի երկրորդ մասի 15-րդ հոդվածում:

Նույնը նկատում ենք Դատաստանագրքի առաջին մասի 4-րդ հոդվածում: Այստեղ, ի տարբերություն վերոհիշյալ 15-րդ հոդվածի դրույթների, կատարվող հանցագործության պատիժները ավելի

են կոնկրետանում ու շոշափելի դառնում. «Եւ եթէ ժողովրդական որ արհամարհէ զքահանայ իր նախատելով, և կամ յանզգիս է հարկանել, դատաստան է իրուամբ հատանել զձեռն, բայց եթէ յոժ զղձմամբ առաջի անկիս է աղաչիւր պաշտարալ, ներեցան նամա: Տիրող սոցիալական խավերի և առաջին հերթին հոգեորականության շահերը պահանջում էին ամեն կարգի հանցավոր ստեղծություններից համակողմանի կերպով պաշտպանել թահահաններին:

Թահահային ձեռնկոմ, նրան անարգելու կամ նրա նկատմամբ բռնություն գործադրելու դեպքում մեղավորներին իխտ կերպով պատժելու անհրաժեշտությունը սկզբունքոր իր ամրապնդում է զտեղ նաև Մմարս Սպարապետի Դատաստանագրքի 9-րդ, 50-րդ և մի քանի այլ հոդվածներում: «Ձքահանայ թէ որ անարգէ կամ ձեռնէ՛ նա գկատուած կու անարգէ. զի Քրիստոս հրամայեց թէ՛ որ զձեզ (այսինքն՝ թահահաններին, Ա. Ք.) անարգէ՛ զիս անարգէ, և այնպէս տուտէ զզո աստուածանարգո», ավում է 9-րդ հոդվածում: Նշ վերաբերում է 50-րդ հոդվածին, այսպ ալստեղ Մխիթար Փոշի Դատաստանագրքի առաջին մասի 4-րդ հոդվածի որով արդեն մատնացուց են արվում այն կոնկրետ պատիժները, որոնց պետք է ենթարկվեն Հանցագործները. «Ու թէ իսպալայ լինի և յանզգնեալ ըշտէ իրիցուն, նա ձեռքն կտրվի. այսպ թէ զղչայ ու մեղայ սաէ, նա եղիկոպուսն կարգ զն է ո քաշէ»: Ահա թե ինչպես էին պատժվում թահահայի նրկատմամբ ձեռ կամ բռնություն գործադրող աշխարհիկ մարդիկ կլինիչան Հայաստանի դատաստանագրքով:

Չափազանց ուշադրով են Մխիթար Փոշի Դատաստանագրքի առաջին մասի 40-րդ և Մմարս Սպարապետի Դատաստանագրքի 66-րդ հոդվածները: Դրանցից առաջինի մեջ այն սկզբունքն է զրաւված, թե այն մարդը, որը հանդգնություն է ցուցաբերում և չի լսում թահահային՝ եկեղեցական արարողության ժամանակ, կամ դատավորին՝ պետք է մահվան դատապարտվի. «... և մարդ ուր, որ առնիցէ հոյարտութեամբ առ ի շլակոյ թահահային, որ կացցէ պաշտել յանուն Տեսնո Աստուծոյ քոյ, կամ դատարոին՝ որ Բյլ յաւուրսն յայնտսիկ, մեղցի մարդն այնա: Նույնը կարգում ենք մմարս Սպարապետի Դատաստանագրքի 66-րդ հոդվածում, որտեղ հավասարության նշան է զրվում հոգեոր և աշխարհիկ դատարանների միջև և ազդարարվում, թե բոլոր նրանք, ովքեր իրենց անհեշտականություն են ցուցաբերում դատավորի կամ հոգեորականի նկատմամբ, նրանք նույնպես մահվան են դատապարտվում. «Եթէ որ դատաստանի եկեղեցոյ արինաց կամ դարսուս, նամասով արած լինի ու

⁵⁵ Այստեղ Փոշի մատնանշում է իր Դատաստանագրքի առաջին մասի 26-րդ հոդվածը, որի մասին, ինչպես նաև Դատաստանագրքի երկրորդ մասի ետյն Հարցն վերաբերող 26-րդ հոդվածի մասին մենք արդեն խոսել ենք:

⁵⁶ Փոշը ակնարկում է իր Դատաստանագրքի առաջին մասի 30-րդ և հավանաբար 4-րդ հոդվածները, որոնց մասին մենք հետագայում խոսելու ենք:

⁵⁷ Վերջին այս բանով՝ «որ զձեզ անարգէ զիս անարգէ, Գոշը բերում է Ավետարանից (Ղուկասի, Ժ 16), որտեղ ավետարանիչն այն մտան է զարգացնում, իբր Տրիստան սակ է, որ անարգում է թահահաններին, նա զրանով իսկ անարգում է իրեն՝ աստուծուն:

կարծած՝ անհնազանջ լինի, նա դաշա Աստուած է հրամայել ընդ Մովսես, որ մեռնի անազալ: Երկու կարծիք լինել չի կարող, որ բերված հողովածներում հիշատակված հայաբնութիւնը, օտն անազանքը քառերի առկ ժամանակահիցքերը հասկացել են այլեայլ գնահատան ասեմգրվումներին հետ մեկտեղ նաև քահանաներին ու ընդհանրապես հողերականներին ծննդը, նրանց նկատմամբ առհասարակ բնութիւնը գործադրելը, զուցե և նրանց խեղճանգամ դարձնելը կամ սպանելը:

Հին և միջնադարյան հայ իրավաբանական հուշարձաններում նախատեսված հանցագործություններից մեկը, ինչպէս ասանք, չոր ցավակի կողմից իր ծնողներին հարվածելը կամ ծննդն է, մի շահագրանջ վտանգավոր, մարդկային բարոյականություն ամենատարբարական սկզբունքները սասանող հանցագործություն, որի պատժելությունը հարցը նույնպես չեն անտեսել մեր դատաստանագրքերի հեղինակները:

Այդ արարքների հետապնդման մասին խոսում են Մխիթար Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի 23-րդ և Սմբատ Սպարապետի Գատաստանագրքի 97 bis հոդվածները: Գատաստանագրքի բուն արարքը և դրա կատարողին, դատաստանագրքերի մատնանշված հոգվածները, սակայն, չեն առաջարկում, որ նման զեպերում հանցագործի ձեռքերը կտրվեն կամ նա անպայման մահվան դատապարտվի, ինչպես այդ մենք տեսնք հին բարեխոնակի և մովսէսական օրենքներում, այլ պահանջում են կամ մահապատիժ, կամ դրա փոխարեն մեղավորի նկատմամբ կիրառել հարկադրանքի այլ միջոցներ՝ նախելով նրա տարիքին, հասունության աստիճանին և արարքի կատարման ժամանակ դրսևորած մեղքի բնույթին: Ահա այդ հոդվածները. «Որ հարկանէ զհայր կամ զմայր իւր, մահու մեղաց: Այդորքի բա տրինացն (այսինքն բա մովսէսական օրենքներին, Ա. Թ.): նմանապես կանսք լիցին մահու շափ ապաշխարել: Իսկ գատաստան այս լիցի. եթէ յանձնագրութեան և ի մանկութեան գործէ, ներելի է ձեռողացն. սպա թէ յանգրնութեամբ և արհամարհանօք, իշխան լիցին ձեռողքն յետ քաղում անգամ խրատու աստիճան քահանայից և ձեռքը հրաժարել ի նմանէ և տարագրել ի ժառանգութիւնէ: Ապա թէ զզբացեալ բա կամաց նոցա դարձից ապաշխարութեամբ արժանապէս, քնկաշնալ լիցի դարձնալ» (Գոշի Գատաստանագրք, հոդ. 23): «Կու հրամայէ Մովսես Աստուծոյ բերանովն՝ թէ որ քշտէ հայրն և իր մայրն՝ նա մեռանի, կամ անարգէ, կամ քարաժառ մեռցի, թաւէ թէ տղայնէ լինի, հայնց որ իսկի շղիտնայ թն ինչ արար և թէ իր ձեռողքն և որ տեսնն շամարն ընդ սղալութիւնէ, թէ չէ,

որ ի զարպսու դատաստանն էլնեն ձեռողքն՝ նա անհար է իրանալ մեռնի» (Սմբատ Սպարապետի Գատաստանագրք, հոդ. 97 bis): Այսպես էլին պատժում հոր կամ մոր նկատմամբ բնութիւնը գործադրող կամ նրանց զննող կամ հարվածող զավակները բառ հին և միջնադարյան հայ քրեական իրավագրքի:

Գոշի վերահիշյալ հոդվածի միտքը լրացնում ու ամբողջականացնում է նույն Գատաստանագրքի երկրորդ մասի 70-րդ հոդվածը, որին համապատասխանող իրավանքում Սմբատ Սպարապետի Գատաստանագրքում մենք չենք հանդիպում: Այդ հոդվածում հիմք ընդունելով մովսէսական օրենքը՝ հանձնիս Երկրորդ օրենացի ԻԱ գլխի 18—21 հրույթները, Գոշը ասում է. «Ես եթէ իցէ ուրաք որդի խեռ և անգամ և ոչ լուցից ձայնի հօր և մօր իւրոյ, և խրատցիցն զնա և ոչ անսայցէ, կայցի զնա հայր և մայր իւր և տարցին առ ձերակոյտ քաղաքի իւրեանց և ի դուռն տեղոյն իւրեանց, և ասացնն ցար քաղաքին իւրեանց-որդիս մեր այս խեռ և անգամ և ոչ յսէ ձայնի մերում, հանգանակող է և արշիտ: Եւ քարկոծեսցին զնա արք քաղաքի նորա քարաժք և մեռցի, և բարձիք զարն ի միջոյ ձերմէ. և լուեալ այլոցն զահի հարկանիցին: Սա մովսէսական օրենքն է, բայց Գոշը համաձայն չէ նրանում նախատեսված դատան պատժին՝ քարկոծությունը մահապատժին և դրա համար էլ ընդունելով հանգրձն արարքի վտանգավորությունը, նա դրա համար վերջին հաշիվով այլ պատիժ է նախատեսում, ուստի շարունակում է. «Երգ է այս դատաստան այն՝ որ գծնողս հարկանէ. զի անդ մահու մեռնի, զի զիրն անարգէ գծնող և նովա: Գնաւարակացն՝ Աստուած և աստ առանց միջնորդի միայն զԱստուած՝ լուծմամբ պատուիրանին: Վանդորոյ անդ՝ մահու մեռցի, որ է երկու մահ. և աստ պարզարար մեռցի, որ է միայն նա Աստուած յանցանքն: Այլ որպէս անդ զաւ իրաւամբ՝ էլանի ի ժառանգութեան փոխանակ մահու, նոյն լիցի և աստ: Այս էր Գոշի կարծիքը նման զեպերում, մի կարծիք, որ նա, ինչպէս արդեն գիտենք, արտահայտել է նաև ուրիշ աղիթներով:

Սմբատ Սպարապետի Գատաստանագրքի ամբողջական գծնով, իսկ Մխիթար Գոշի Գատաստանագրքի իրիտ ընդհանուր գծերով նախատեսում են տղամարդու կողմից մի ուրիշ տղամարդու դիտվորյալ կերպով ձեծի եկեղծելու կամ հարվածելու մի այլ զեպի կամ, որի ընթացքում կատարվող արարքին իրեն հանցակից մասնակցում է կովոցներից մեկի կամ մյուսի կինը: Այստեղ, երբ բոլորը ված այդ կովի հետեանքը լինում է տղամարդկանցից մեկն ու մեկի մահը կամ ծննդաւորելը, մյուս տղամարդու կինը պատժվում է: Սպարապետի մոտ, բացի այդ, ասանձին իրավանքում կա այն մասին,

որ ընդհանրապես իր ամուսնուն ծծծող կինը պետք է ամենախիստ կերպով պատժվի, Բերենք Սմբատ Սպարապետի Գատաստանագրքի 76-րդ և Մխիթար Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի 88-րդ հոդվածները, որոնց մեջ այդ հանցագործությունները նախատեսված են. «Եւ թէ կիննայ կին՝ որ այրկանն քշտ՝ նա զձեռն կտրեն. զիտարն զղլխոյն է՛ր քշտէ: Բայց թէ ներեն՝ նա զգինն տալ ըստ արժանեացն» (Սպարապետ, հոդ. 76): «...Կին միոյն բուռն հարկանէ զերկուտրեաց յարթողին անն, ըստ օրինացն է հատանել զձեռն, այլ առ մեզ զգին ձեղենն տալ, որպէս ցուցեալ է իւրարանչիւր զգայութեանց» (Գոշ, հոդ. 88): Ինչպես տեսնու՞մ ենք, թե՛ Գոշը և թե՛ Սպարապետը այս ղեկպերտու՞մ նույնպէս, ի տարրերսկայն և ի հակադրութիւն մովսիսական օրենքներին, որպէս կանոն մեղմացնում են, այսինքն թեթեւացնում են արանսեմոված հանցագործություններէր պատժելութիւնը, բացառութեամբ թերեւ այն ղեկպերին, երբ կինը ծնծծու է իր ամուսնուն կամ պարզապէս բռնանու՞մ է նրա նկատմամբ:

Այսպէս էին պատժվում սպանությունն իր տեսակներով, մարմնական վնասվածքները, ինչպէս նաև զիտավորայտ կերպով հարձակու՞մն ու ծնծծելը և առհասարակ մարդու կողմից մարդու նկատմամբ ֆիզիկական բռնություններ գործողընդ հին և միջնադարյան հայ իրավագիտութեամբ: Ասումնափրութիւնը, ընդ որում, ցույց է տալիս, որ եթե պատմական այդ ժամանակներում դատարանների կամ դրանց համատարագոր հաստատությունների կամ անձանց կողմից հայ իրավագիտութեանը նորմերը կիրառվել են, ապա կիրառվող այդ նորմերի թվում առաջին տեղերից մեկը բունէն ևն նշված հանցագործությունները նախատեսող իրավանորմերը: Գրանց կիրառող օրդանների հանդիսացել են մի կողմից հողերը և մյուս կողմից աշխարհիկ գաւառբանները: Թե՛ առաջինները և թե՛ վերջինները սովորութային իրավունքի նորմերի ուժով գործելով, ղեկավարվել են նաև հանցագործություններ նախատեսող գրավոր իրավանորմերով:

Մեր հին և միջնադարյան օրենքները ավելի խիստ էին պատժում նրանց, ովքեր հանցագործությունները կատարում էին հարած վիճակում: Նման անձինք, ինչպէս այդ մասին ուղղակի կերպով մատնացույց են անում Մխիթար Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի 9-րդ և Սմբատ Սպարապետի Գատաստանագրքի 130-րդ հոդվածները, պատժվում էին միաժամանակ նաև հարբեցողութեան համար: Բերենք այդ հոդվածների կոնտրաստները, որոնց ազդուները մասամբ հանդիսացել են Սահան Պարթևի, Հովհան Բմաստասերի

կանոններն ու ավետարանները և մասամբ մովսիսական օրենքները. «Ե զինարբուս վնաս ինչ եղեալ՝ ըստ հողեւոր մեր օրինաց մի՛ լիցի յազազս այնորիկ ինչ ներել, զի նայն արբեցութիւնն դատի. և թէ անդ զմիմեաց ի մարտնչին բեկանիցեն և կամ խեղիցեն, հաստաի դատ լիցի և բժշկու թեան և խափանածոյն սուսպանայի: Եւ թէ մահ գործի՝ տեսցի պատահումնն. թէ մախանօք և կամ վրիպմամբ և կամ ալլօք այսպիսիք իցէ, յերկուցն շարժեալ եղև թէ միոյ առանկելն. և անպէս վճիռն հատցի և զին արեանն տուգանեսցի, և զինարբուացն կցորդութիւնն դատիցի հաստաի և նոցայն ընդ նմին լիցի տուգանեն: Եւ թէ ի զգայութեանցն ինչ վնասիցի, ըստ այնմ և դատն լիցի, բայց զի ըստ օրինացն մահու իսկ են արժանի, այլ զի խրատի ի ձեռն առցեն և ըստ անտարաննա աղբիցին: Զայց պատշաճ վարկանիմք դատաստան: Եւ զայդ նախախնամարք գործիցեն, զի թէ չիցէ երկիր յոյն գործոյ շարի՝ մի լիցի խրատ, բայց միայն սուսպան և ապշխարութիւն» (Գոշ, հոդ. 9): «Կու հրամայէ արէնքաքս, որ զայն ցեղն (այսինքն այն հարբեցողները, որոնք հարբելով կովի են բռնվում և վնասներ են պատճառում) երկու ազգ պիտի դատել՝ մէկ վնաս արբեցութեանն, որ ինք մարդ էր ու հանչանք խմեց՝ որ խումբեցաւ ու զայն վնասն արար. և երկու հետ վնաս վնասուն զոր գործեց, և զին վնասն արծնայ: Թէ ի մահ կենայ՝ նա յիման զպատճառն և զմախանքն, թէ յումն է, թէ հայնց որ յայնոր է պատճառն՝ որ սպանվա՞ւ նա զարեան զինքն տան. և թէ սպաննաղն է շատ տեղ. Եւ թէ խոց լինի մահու՝ նա քշտաղի տայ զղեղիցն, և զինք ի զրնգանն պահեն ըստ զարկուցն, և զայնոր խափանն զոր ի յիր բանէն կեցաւ՝ վճարել տան.— Կու հրամայէ արէնքս՝ որ թէ զայնոր ձեռքն կտրեն, որ քաւէ զսպանութիւնն զոր արար՝ նա ի դատարան կամքն է, թէ վնաս իր հողոյն խղճն և իբրտա մէն տայ» (Սպարապետ, հոդ. 130):

III. ԱՐԱՐՔՆԵՐ, ՈՐՈՒՄ ԱՌԱՋ ԵՆ ԲԵՐՈՒՄ ՈՐՈՒՄ ՄԱՀ ԿԱՄ ԱՅՆ ՍԱՆԻ շԵՏԵՎԱՆԵՐՆԵՐ

Մեր հին և միջնադարյան քրեական օրենքները, այս աշխատութեան նախորդ էջերում լուսարանվածներից բացի, իրենց նորմութեամբ նախատեսում են բազմաթիվ այլ գործողություններ ու անգործություններ ևս, որոնք թեև առաջացնում են մարդու մահ՝ կամ զանազան բնույթի ծանր կամ թեթեւ մարմնական վնասվածքներ, բայց որոնք իրենց մեջ նման հանցագործությունների կատարման

գիտավորություն կամ անզուգուծություն չեն պարունակում, ուղղակի կամ անուղղակի հանցավոր նպատակներ իրենց առաջ չեն դնում: Դրանք ինքնբերական վերջրած հանցավոր լինելով հանդերձ, իրենց կատարման պրոցեսում միայն օրյակախօսորեն ղուգորզվում են քրեականորեն հետապնդելի այս կամ այն հանցավոր հետևանքների հետ:

Այս վերջին կարգի արարքները նախաձեռող իրավաճարմների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք՝ այդ արարքներին վերաբերող նորմերի բացարձակ մեծամասնությունը, ի տարբերություն հայ իրավունքի մի ամբողջ շարք այլ իրավաճարմների, միանգամայն ինքնուրույն բովանդակություն ունեն: Դրանք մտցվել են հայ հիմն և միջնադարյան օրենքներում, մեր կարծիքով, մի հիմնական նպատակով՝ հասարակության ու սրա առանձին անդամների մեջ զորաշավորության և ուշիմունյան ոգի մտցնելու նպատակով, այն հաշվով, որ իրենց անհետատես և չմտածված դործողություններով մաղդիկ ավելորդ զոհերի տեղից շտան, ֆիզիկական տառապանքներ չկրեն և ուրիշներին էլ վիշա չդատաճառեն: Իրավաբանական լեզվով արտահայտված, դրանք նախատեսում են քրեականորեն անտարբեր արարքեր կամ գործողություններ, որոնց բուն հետևանքն է միայն, այն է՝ հանցավոր հետևանքը, որ հետապնդելի ու պատժելի է զարմնում կատարողներին:

Ընտանի կենդանիների տված վնասը և նրանց տնրերի պատասխանավորյունը: Դավիթ Ալավկա որդու Կանոններից մեկը՝ 42-րդ կանոնը, քրեական պատիժ է նախատեսում այն մաղդկանց համար, որոնց կատաղած ջորին կամ ձին, կամ թև հարու տվող կողք արջացիով կամ հարու տալով մարդ է սպանում: Դրանց տնրերը պատժվում են այն պատճառով, որ համապատասխան միջոցների դիմած չեն լինում՝ հնարավոր վտանգավոր հետևանքները կանխելու ուղղությամբ, այլ ոչ թե այն բանի համար, որ կատաղած ձի, ջորի կամ հարու տվող կենդանի են պահում:

Հողվան տաում է. «Այլ եթե մարդը լինի ջորի խնո կամ ձի կիցքսնկեց, կամ մարդակեր, կամ եզն հարկանող և անզիտասցէ և այլք սպղնջցեն նմա, բողք բարձեալ զվնասն ցուցանիցեն և նա յանհորս զայլցէ ոչ հնարեցէ զնա որպէս արժան է, սպանել զոր, տէր նորս մահուպարտ է...»: Նույն կանոններից 43-րդում Ալավկա որդին մարդկանց օրինաչափ արարքներն ու գործողությունները միանգամայն հասկանալի պատճառով պատժելի չի հայտարարում, բայց նա, այնուամենայնիվ, պատժելի է նախատեսում այն զեպքերում, երբ այդ արարքների կամ գործողությունների ժամանակ

անուշադրության հետևանքով մարդ է սպանվում: Բերենք այդ հոդվածի բնագիր տեքստը. «Այլ մարդ ի հանապարհ յուղարկել ումեք բազում աբիբնակ տեսանին ի հարցմունս խզնի և անխզնի, զի են ումեք որ ի գործս մշակութեան կարգելու ի տերանց իրեանց և կէտ յաշգկարծութիւն և այլք ի զինուորութիւն են այլքն այլ զործ, որ ի պէտս մեր հասարակաց կենաց: Այլ եթէ ի գործս իրեանց կենացէ որոգայթ մահու, անպարտք են տեսաք նորս, մանաւանդ այնոցիկ, որ զպատաստութեան պատուէրն հանապաղ կացուցանան ի լսելիս հնապանցնոյ իրեանց, տպա թէ հասարակ միարսնութեան սիրոյ և խողաղութեան միոյ կենաց զընդդէմ հրամայեն զործել տեսաք ծառայից և անզ պատահիցէ ումեք մահ կամ սպանումն, մահու պատել տէր նորս: Իսրձեալ, եթէ որ ի նոցանէ ծանուցանի տեսն իրոյ զվնաս նորս առաջիկա և նա անհոգացեալ անպատաստարար առաքէ զնա ի գործ և պատահի վնասն, յորձ ի իթլայլ, որ առաքեաց, արեամբ պարտ է: Իսկ եթէ որ զայլ որ եր իցէ և առաքել ի գործ իւր և անց, որ որոգայթի, արեան պարտ է: Այլ թէ վարձկան որ լինի և առջ ցտանուտէրն թէ առաքեա զիս և կամ տուր ինձ գործ, զի տարից, իսկ նա յառաջապատարատ ծանուցանի նմա գործոգայթն և նա առ կարի հարկի իրոյ յանձն անուցուր և նա կրիին զանպատաստութեան բանն առ նա, և անզ պատասխի նմա, անպարտ է: Ե և այլ, որ ի վաղին գործի ամենայն զզուտութեամբ և ի բազմաց վկայանք վանս առաքիցի կամ գործել հրամայիցէ և անզ հասանել նման որոգայթ մահու, արեան պարտ է: Ահա այսպես էր լուծվում մեզ հնաոգորդը հարցը Դավիթ Ալավկա որդու Կանոններում:

Ալավկա որդուց բերված վերոհիշյալ երկու կանոնների բովանդակություն հիշեցնող իրավաճարմներ մենք գտնում ենք Մխիթար Գոշի Դատաստանագրքի երկրորդ մասի (հոդ. 31) մեջ և Սմբատ Սպարապետի (հոդ. հոդ. 122 և 124) Դատաստանագրքում:

Մխիթար Գոշի Դատաստանագրքի երկրորդ մասի 31-րդ հոդվածում կարդում ենք. Իսկ եթէ հարկանիցէ ցույ զայլ կամ զկին և մեռանիցին, ցույն բարկած լիցի և միս նորս մի կերիցի և տէր ցուն անպարտ լիցի: Եւ այս գատատան ըստ օրինացն հաստատուն մեզ կացցէ. զենեալ զցույն՝ զբարկոծելոյ լցցի տեղի, և վաճառեալ յայլազդիս զմիսն՝ զզինն յաղթաստ սաչցան, և հաստատուն չիմամբ իսկ սասցաւ և տէրն անպարտ լիցի: Ապա թէ ցույն հարկանող իցէ չերկն և չեռանգն, և բողքեալ իցէ տեսանն նորս և նորս լիցի ի միջոյ բարձեալ, և սպանանիցէ զայլ կամ զկին, ցույն բարկած լիցի և տէրն ցուն առ նմին մեռցի: Իսկ եթէ փրկանք անկանցին

ի վերայ նորա, տացէ փրկման ընդ անձին իւրում ըստ ամենայնի՝ որչափ ինչ արկանեցին նմա: Եւ եթէ զորդիս կամ զգուստր հարկանեցէ ըստ նմին օրինակի արտացնն նմա: Ահա թէ ինչպէս էր զրզվում մարդու դատական պատասխանատուութիւնը այն զեպքում, երբ դրա անկույթն ու անբարեխիղճ վարքագիծ հետեանքով նրա եզր (ցուր) պողահարելով մարդ էր սպանում:

Գաստատանագրքի նույն հոդվածում, փաստորեն առանձին իրավանքումի ձևով, Մխիթար Գոշը նախատեսում է անզած այն զեպքեր, երբ մի մարդու եզան (ցլի) պողահարութիւն հետեանքով սպանվում է մեկ այլ մարդու ծառան կամ ազախինը: Այստեղ արեւն եզան տերը պատժվում է որոշակի տուգանքով, որ տրվում է սպանված ծառայի կամ ազախին տիրոջը իբրև հատուցում: Տուգանքի շարքը սահմաննելիս Գոշը հաշվի է առնում այն հանգամանքը, թէ անասնատերը քրիստոնյա էր թէ՛ մահմեդական. «Իսկ եթէ զծառայ կամ պառախին հարկանեցի ցուլն, նրեսուն կրկին սաստիք արծաթայ տացի տեսանն նորա, և ցուլն բարկոծ լիցի: Հղիին ծառային այլզորքիք նշանակէ տար, և ցուլն քուցեալ է: Միպիս ըստ դատաստանի ի քրիստոնեանց և յայլազգին քնտրութիւն լիցի: Ապա բնէ բեկանելից և կամ խափանեցի ի զգալութեանցն, և չիցէ զիտակ վնասու ջլոն, անպարտ լիցի տէր նորա. իսկ եթէ բողոքեալ իցէ և չիցէ ի միջոյ բարձեալ, տուգանեցի զըշկութեանն և զխափանածոյն. և այս յիւրաքանչիւրսն լիցի դատողութեամբ»: Այստեղ պարզ նշեցաւով է, որ «ծառայ» և «ազախին» բառերը նույն իմաստ ունեն, ինչ որ «ստրուկ» և «նորսկուհի», «ճորտ» և «ճորտուհի» բառերը, քանի որ նրանց սպանութիւնը պատժվում է ոչ թէ իբրև քրեական հանցագործութիւն, այլ օրինականցի կողմից պարզապէս հատուցվում է պատճառած վնասու:

Մխիթար Գոշի Գաստատանագիրքը, վերոհիշյալ հոդվածից բացի, իր երկրորդ մասի 37-րդ և 38-րդ հոդվածներում վերստին անդրադառնալով կենդանիներէ տերերի պատասխանատուութիւն հարցին, երբ այդ կենդանիներ կձեռնով, պողահարելով կամ այլ եղանակով մարդ են սպանում կամ մարմնական վնասվածք պատճառում, մատնացուց է տնում այս անգամ արդեն որոշակի հանդամանքներ, որոնց վրա պետք է հենվեն արդարադատութիւնն իրականացնող մարմիններն ու անձինք՝ այդ հարցը լուծելիս: 37-րդ հոդվածում նշելով այդ հանդամանքները (տիրոջ նախազորացած լինելը իր կենդանու ընավորութիւն մասին, առաջացած վնասի կոնկրետ քնույթը, որն է հետեանքի բաշակայտութիւն փաստը, տուժողների ով լինելը և այլն), կենդանիներէ տերերը ենթարկվում էին

մեկզմ կամ խիստ պատիժներէ՝ սկսած սովորական սպաշխարութիւնից ընդհուպ մինչև արյան գիծ հատուցումը: Բերենք այդ հոդվածները որոշ կրճատումներով. «Եթէ բողոքեալ իցէ (այսինքն՝) և կենդանիներէ տիրոջը նախազորացնալ հայտնվել է իր կենդանիներէ ընավորութիւն մասին, Ա. Թ.)— զրատանդակն տուգանեցի, և կամ թէ ոչ զգոշացուց (այսինքն՝) եթէ տերը չի նախազորացուցել, Ա. Թ.)— սպա թէ անգիտունալով և կամ զգոշացուցեալ— զիկն վնասուն և մահուն: Իսկ եթէ ոչ վնասիցի և կամ ոչ մեռանցի, զխափանածոյն և զըշկութեանն տուգանեցի, զիտելով և ոչ զգոշացուցանելով— զրովանդակն, և ոչ զիտելով և զգոշացեալ զիկն: Իրատացի կարծին լամենայնս յոչ վնասեալսն և յոչ մեռեալսն զխափանածոյն և զըշկութեանն տուգանելի: Իսկ զսպաշխարութեան յամենայնայնս տուցեն վարդպետք:» (հոդ. 37): «Եթէ ծառայ կամ ազախին, կամ որդի, կամ դուստր, կամ կին, կամ այլ ոք յիւրոցն (այսինքն՝) կենդանիներէ տերերին, Ա. Թ.) սպանալ կամ վնասեցաւ, թէ անգիտունալով կամ զգոշացուցանալու լիցի ի դատաստանէ: Իսկ եթէ իբրցն բողոքեցին և նա ոչ ետրձ կամ ոչ զգոշացուց, դատաստան լիցի ի վարդապետաց զսպաշխարութիւնն սահմանել զկամվորի և զակամայի» (հոդ. 38): Բերված հոդվածներն իրենց հերթին մի ավելորդ անգամ սպացուցում են, որ Մխիթար Գոշի Գաստատանագրքին ընդհանրապէս անտարբեր չի գտնվել այն զեպքերում, երբ մարդու անհոգութիւն կամ նրա անշքահայաց լինելու պատճառով մեկ այլ մարդ սպանվում կամ մարմնական այս կամ այն վնասվածք է ստանում: Նման զեպքերը կատարատեսաբարում իրավական, այդ թվում քրեական-իրավական հարգավորման են ենթարկվում:

Նույն սկզբունքներէ վրա է կանգնած Սմբատ Սպարապետի Գաստատանագիրքը: Այսպէս, այդ Գաստատանագրքի 122-րդ հոդվածի մեջ խոսվում է այն մասին, որ եթէ որնէ մարդ զրատա կամ կով է ունենում, և այդ կենդանիները արացի տվող կամ պողահարող են լինում, ու երբ ուրիշ մարդիկ տիրոջը նախազորացնում են, որ կենդանուն հետու պատճ, բայց տերը չի լսում և ոչ կիտարում նրանց այդ պահանջը, որի հետեանքով նույն կենդանու արացուց կամ պողահարումը մարդ է սպանվում, այդ զեպքում տիրոջը և վնաս տված այդ կենդանուն խտորեն պատժում են՝ կենդանու տերը ենթարկվում է մահապատժի քարոծութիւնս միջոցով, իսկ կենդանին ոչնչացվում է. «Եթէ որ զրատա կամ ընդուղ ունեայ որ քշտան լինի, ու ասեն թէ հան զիկրդ ի քեկէ, նա հանել, որ քշտա ու մարդ ըսպանեն՝ նա քարկոծեն զինք և զիբ տէրն և կամ զնէ ինք զիք ի

գարպսեն. ապա թէ այլ շինինք քշելի՛ նա զանասուն մէն քար-
լեծեն...»:

Մեզ հետաքրքրող հարցի մասին խոսվում է նաև 124-րդ հոդ-
վածքում Ալյանոզ էլ կենդանիները աքաղի սվող կամ պղզաճոր հոգ-
լինելու զնայում, որի հետևանքով զարծյալ առաջանում են մարդ-
կանց մահ կամ մարմնական վնասվածքներ, նրանց տերերը պա-
տասխանատվության են կանչվում, հակառակ վիճակը բացառում է
քրեական-իրավական սուղվների կիրառումն հնարավորությունը.
«Սայց զեռ այլ կայ ի քշտանքն՝ որ թէ առ տէրն, թէ ի յետ քշտան է
նա զկէս զմարտ թէ մահ զորով, և թէ խոցնա, նա զղեղցիկն տայ
ինչվի առողջունայ: Եւ թէ յիւրոցն սպանել՝ ազատ կամ ծառայ՝ նա
սպաշխարութեամբ քան զինչ վարդապետն կամ նպիտոպոսն կարգ
դնէ նորա»:

Միխիթար Գոշի և Մմրատ Սյարապետի գաղտաստանագրքերի
վերնում բերված հոդվածների առանձին գրույթներից երևում է, որ
երբ կենդանիների պաշտահարություն կամ աքաղի տալու հետևանքով
զոհվում են նրանց տերերի մերձավորները կամ ծառաները, այդ
զնայում կենդանիների տերերը ենթարկվում էին միայն սպաշ-
խարություն, բայց ոչ քարկծություն կամ արշան զնի հատուցման:
Այս մոմենտը հարկ է բնորոշել: Մեր խորին համոզմամբ դա հայ
գերդաստանում երբևէ գոյություն ունեցող հայրիշխանության յուրա-
հատուկ արտահայտությունն ու զրեւորումն է մեր իրավունքի հու-
շարձաններում, երբ ընտանիքի հայրը զարեք շարունակ, սովորու-
թյան իրավունքի համաձայն, անսահմանափակ իրավունքներ ունի
իր բնույթի անդամների նկատմամբ: XIII գրքում, երբ կիրիկյան
Հայաստանում այդ սովորությունն իրավունքի նորմներ իրենց
ուժը սբությունը պահպանում էին, նրան քրեական պատասխանա-
տվության կանչելն իր կենդանիների զործողությունների համար
նպատակահարմար չէր: Հավանաբար այստեղ զեք է կատարել նաև
հարցի բարոյական հարցը. հիշտ չէր լինի պատժել հորը՝ իրեն իսկ
հասած զբռնատվության կամ վնասի պատճառով:

Այլ անձանց, այդ բովում վաճողների և բժիշկների զործողու-
թյունները: Մեր գաղտաստանագրքերը նախատեսում են բազմաթիվ
այլ արարքներ ևս, որոնց հետևանքը նույն կարգով մեղացանցնում է
դրանց սուրյնկաներին. թեև վերջիններս այդ արարքները կատարած
են լինում առանց հանցավոր զիտավորության: Այստեղ նույնպես
երանք պատասխանատվության են կանչվում ոչ թե բուն այդ ա-
րարքների համար, այլ այն բանի համար, որ չեն նախատեսում
դրանց հնարավոր հետևանքները, մի բան, որ պարտավոր էին կամ

կարող էին նախատեսել: Միխիթար Գոշի Գաղտաստանագրքի երկ-
րորդ մասի 14-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է
սահմանում այն տերերի, որինակ, իշխանների նկատմամբ, որոնց
գաղտաստանագրքի վարդապետը շինականներին մահվան է հասցնում.
«Եւ եթէ սվելի քան զորեն անգթաբար հրամայիցէ զործել և այնու
վնաս մահու հասցէ ի տերանց ընդ հարկի անկիւրց, պարտապան
լիցի արեան գաղտաստանի գերագունից տերանք. Եւ քառ արժան-
ունց զպաշխարանն ցուցցեն խնարհությունն ի վնասի ի վնա-
սից զբժշկութեան և դատահանձոնն հատուցեն և յանբժշկելեաց—
զուսպանան»⁵⁸. Նույն սկզբունքով է շարադրված Մմրատ Սյարապե-
տի Գաղտաստանագրքի 7-րդ հոդվածը, թեև նրա մեջ խոսքը գնում
է ոչ թե տերերի կամ իշխանների, այլ անմիջականորեն մշակ վար-
ձողների մասին: «Եթէ որ մշակ վարձի ու առանց խնամցը հանչաք
մի շատ հայծնցել ի բան, կամ իրք տա վերցնել՝ որ մեռնի կամ
վնաս, նա պատճէ է, որ հայի գաղտաւորն ի վարձն ու ի բուն և ի
կարիքն, ու ի յայնոր վերայ այնէ զիրավունքն ու եկեղեցին զնէ
զապաշխարանքն»:

Մեկ այլ հոդվածում Գոշը քննություն է առնում այն զնայերի
և նրանց մեղքի անկեղծի պատժելությունը հարցը, երբ որևէ մեկը մեկ
ուրիշ հարգող վտանգավոր տեղ է ուղարկում կամ վտանգավոր
զործի է զնում, և նա մահանում է: Այստեղ նույնպես նա բացատրում
է քրեական պատասխանատվության հնարավորությունը, երբ առ-
ժողին ուղարկողը կամ զործի զնողը նախայնա զղուշացնում է նրան
պատանուցող հնարավոր վտանգի մասին, և սահմանում է քրեա-
կան պատիժներ, երբ այդ նախազգուշացումը իրականում տեղի ու-
նեցած չի լինում:

Մեր խոսքը գնում է Գաղտաստանագրքի երկրորդ մասի 111-րդ

⁵⁸ Պետք է անչ սակայն և ան, որ Գաղտաստանագրքի այլ մտազորում այս
հոդվածը խորհրդավոր է աշխուժ, որ նույն արարքը՝ տերը կողմից իր ծառաներին
մահվան կը հասցնելը կամ նրանց ծանր մարմնական վնասվածքներ ստանալը,
փաստորեն զարգում է քրեական հանցագործություն լինելուց և կարծեք թե գաղ-
տաւոր է բազմաթիվական օրինախախտում, որի մասնակ աբարքի սուրբկտին պար-
տավորեցնում են միայն հատուցել մահվան կամ պատճառան վնասի համար և ուրիշ
ոչինչ. «Իշխանք և այլք, եթէ յավելի զատելն զպատիկոս, որ ընդ մեռաք իրենց
իցեն և հանդիպի մեռանել, արեան զիր առցեն ի մեռել և առցեն յորից կամ
յազգայան և թէ մեռն կորեն կամ սուռ անա մառն ի յին կամ անչ, զեղեղ տան,
և թէ բժշկոց լիցի վարձան բժշկին և դատահանձոն վարձու: Ընդից անկեղ մահ,
որ այս բովանդակությունը իրավանքով չիս Լայց կանեսագրքում և գաղտաստա-
նագրքերում, որ այն փաստորեն հակասում է 14-րդ հոդվածի որոն, պետք է ենթա-
դրուք, որ դա ավելացված է գրիչների կողմից՝ հետագայում:

Նոզվածի մասին, որ Դավիթ Ալավկա որդու Կանոններ 43-րդ հոդվածի որով ստեղծ է. «Այլ վասն զմարդի ճանապարհ չգարիքի ումեք բազում օրինակք տեսանին ի հարցմանս խղճի և անխղճի: Զի են ումանք, որ ի գործ մշակութեան և կենցաղի տերանց իւրեանց, և կէտ բարեգործութիւն, և այլք ի զինորութիւն, և դարձեալ այլք ի յայլ գործ որ ի պէտս ճասարակաց մերոց կենացս օրինօք պատրաստեալ է: Անչոցիկ, որոց ի գործս իւրեանց եկեցել որոգայք մասնու, անպարտ են տեսարն նորա, մանաւանդ այնոցիկ՝ որք զպատրաստութեան պատուէրն հանապարզ կացուցանել ի լսելիս հնազանդելոց իւրոց: Ապա թէ ճասարակաց միտարանութեան սիրոյ և խաղաղական մերոց կենաց զընդէման հրամայիցեն գործել տեսարք ծառայից և անզ պատահիցի ումեք մահ կամ սպանութիւն, մահապարտ է տէր նորա: Դարձեալ եթէ որ ի նոցանէ ծանուցանել տեսան իւրոյ զվեասն որ առաջի կայ, և տէրն անհոգացեալ անպատրաստաբար առաքել ի գործն, և պատահի վնասն յորմէ խիթար, որ առաքեացն արեան պարտ է»:

Այս հոդվածի միտքը ավելի կոնկրետացնում է որոշակի են գործնում նույն Դատաստանագրքի երկրորդ մասի 112-րդ և 113-րդ հոդվածները: Դրանցից առաջինը ազգաբարձ է, որ եթե որեւէ մեկը իր ստորագրայիններից մեկին ու մեկին գործի է ուղարկում, և վերջինս այնտեղ որոգայքի մեջ ընկնելով մահանում է, ուղարկողը հարկ եղած զգուշավորություն չուցացրեցելու համար պետք է քրեական պատասխանատվություն կանչվի ու պատժվի, իսկ երկրորդը, նախնայելով վարձողին և վարձվողի դրուերած վերարժեւորներին՝ աշխատանքի նշանակելու է այն կատարելու ժամանակ, պատասխանատու է դարձնում վարձողին կամ, ընդհակառակը, նրան ազատում է պատասխանատվությունից, այս անգամ արդեն նշանակություն տալով այն կոնկրետ պայմաններին ու պատճառներին, որոնց մեջ գործում և որոնցից մեկնում է կամ, ընդհանրապես սասած, սուսում է վարձված և աշխատանքի ուղարկված անձը:

Անցնենք Սմբատ Ապարապետի Դատաստանագրքի այն հոդվածների քննությունը, որոնք խմբագրված են Պաշի Դատաստանագրքի երկրորդ մասի վերահիշյալ՝ 111-րդ և 113-րդ հոդվածների սկզբունքներին համապատասխան:

Դրանք 142-րդ և 149-րդ հոդվածներն են: 142-րդ հոդվածում Սմբատ Ապարապետն ամենից առաջ մատնանշում է, որ մարդկային ցեղը շատ դասերի է բաժանվում, կան ազատներ, հեծյալներ, արհեստավորներ, ծառաներ և այլն: Մարդիկ իրենց աշխատանքային գործունեության ընթացքում ի պաշտոն կամ ծառայության

կարգով ենթարկվում են միմյանց և կատարելով զանազան աշխատանքներ ու հանձնարարություններ իրար հետ տարանասիկ բարձրագույն հարաբերությունների մեջ են մտնում: Այսպիսի իրազեկության պայմաններում հնարավոր է, որ տեղի ունենան այս կամ այն մարդու մահը: Հարց է առաջանում, ո՞վ պետք է պատասխանատվություն կրի այդ մահվան համար: Եվ ահա Ապարապետը այդ հարցը կարգավորելու նկատառումներով իրավաբանորեն է սահմանում. «...այն մարդը, որ ի իր գործոյն պատեհն մեռնի՛ր նա անպարտ են տէրքն՝ բահրակ այն տէրն որ պահելն պնդել լինայ և արիացուցել զիր գործաւորքն և զհնազանդքն: Ապա թէ տերն յայն բանն յուզարիկ դմարդ, որ շինայ իր գործ և շինայ չիք կրթում ու վնասի՛ նա այն պարտակտն է և մահապարտ: Ես թե որ անհոգնել զմիտարարայն և յուզարիկ դմարդ, որ մեռնի՛ր նույնպես մահապարտ է»: Այսպիսով, կիլիկյան պետության օրենքներով, երբ գործավորը աշխատանքի ընթացքում մեռնում է իր իսկ անհոգության կամ անզգուշության հետևանքով, գործատերը, առանձնապես այն գործատերը, որը ձեռնարկած է լինում նախազգուշական համապատասխան միջոցներ և հնարավոր վտանգի մասին վաղուց զգուշացրած է լինում, քրեական պատասխանատվության չի կանչվում: Այստեղ չկա մեղք, չկա նաև քրեական պատասխանատվություն: Բայց երբ գործատերը աշխատողին այնպիսի աշխատանք է հանձնարարում, որը նրա անձնական ուժերից ու ընդունակություններից վեր է, և այդ աշխատանքի կատարման ժամանակ նա մեռնում է, ինչպես նաև այն զեպրում, երբ գործատերը հանցավոր անհոգ վերարժեւորք է գրեւորում, որի հետևանքով նույն այդ գործավորը զոհվում է, նա այդ մահվան համար քրեական պատասխանատվության է կանչվում և պատժվում: Այստեղ արդեն, հակառակ առաջին դրույթյան, կա մեղք, կա նաև համապատասխան քրեական պատժ:

Դատաստանագրքի 149-րդ հոդվածում Սմբատ Ապարապետը զարգացնում է նույն այդ սկզբունքները. եթե որեւէ գործատեր մեկ այլ մարդու վտանգավոր վայր աշխատանքի է ուղարկում, և նա այնտեղ սպանվում կամ որոգայքի մեջ ընկնելով մեռնում է, գործատերը պատասխանատու է զոհվածի համար, իսկ եթե մահն առաջանում է հենց իրեն՝ սուստից ինքնազատություն կամ անսիրտության հետևանքով, աշխատանքի ուղարկողը, այլ կերպ սասած գործատերը քրեական պատժի չի ենթարկվում, որովհետեւ այս զեպրում նա մեղք գործած չի լինում, ու նրա վարքագիծը իր մեջ հանցավոր որեւէ բան չի պարունակում. «Եթե որ զմարդ

ի մտիտաբայ տեղ յուզարկել ի քան ու սպանվի և կամ որդաչլիով մեռանի՝ նա արեան տէրն է. Բայց տեսնուլ պիտի՝ թէ ի՞նչ ցեղ էր յուզարկեն՝ ինք յամբնցալ ի գնացի, և թէ ի կա՛հրա յուզարկեցնաւ: Ա, թէ ինք լինի յամբարն, կամ Նաղաղվոր լինի այն բանին՝ նա չկա մեղք, ապա թէ ոչ՝ նա մեղք է: Նոյնպէս և թէ վարձովոր լինի ի քան ինչ կամ ի դործ, և զգուշացել պարտն ու ասէ՝ թէ՛ դիտայ պատրաստ արայ, ու նա չայնէ, ու վասն այնոր վնասի՝ նա անպարտ է: Ապա թէ՛ ոչ որ անխնամ երես որոգայթել՝ նա պարտական է: Ահա այսպէս էր մեղ ճետաբերող Նարցը լուծվում 149-րդ Նոզվածում:

Կարևոր են Մխիթար Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի 120-րդ Նոզվածը և նույն բովանդակութեամբ Ամբատ Սպարապետի Կատաստանագրքի 150-րդ Նոզվածի 2-րդ մասը: Նշված իրավանդո՛ւմների ուժով սպանութեան մեջ մեղադրանքովում է այն անձը, որը մեկ ուրիշին հանձնարարելով այս կամ այն աշխատանքը կամ նրան այս կամ այն գործը հարկադրելով կատարել, վերջին հաջով հասնում է այն բանին, որ տվյալ անձը մահանում է: Այստեղ տեսնում ենք նույն այն սկզբունքը, ինչ անանք քիչ առաջ. մարդը պատժվում է ոչ թէ ուրիշի վրա այս կամ այն աշխատանքը դնելու կամ նրան այս կամ այն գործը կատարելու համար հարկադրելու, այլ պատժվում է, որովհետև այդ արարքի հետևանքով մեկ ուրիշ մարդ մեռնում է. եվ որովհետև այստեղ նույնպէս բուն արարքը կարող էր կատարվել ինչպէս հանցավոր դիտավորութեամբ, այնպէս էլ անզգուշութեամբ, Մխիթար Գոշն ու Ամբատ Սպարապետը այդ սպանութիւնը, նայելով հանցանքներին ու պատճաններին, համարում են կամ դիտավորյալ (սպանալ), կամ ոչ դիտավորյալ (սպանալ) և կամ թէ խառը մեղքով կատարված սպանութիւն:

Ուսումնասիրվող Նարցի տեսակետից կրկնելով Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի վերևում քննարկված 14-րդ, 111-րդ, 112-րդ և 113-րդ Նոզվածների բովանդակութիւնը, նույն Գատաստանագրքի երկրորդ մասի 120-րդ Նոզվածն ասում է. «Եթէ՛ որ զոր ի գործ ինչ հարկի առաքել և վնաս լիցի մահու, այսպիսի ինչ-և թէ ի ծառ հարկէ՛ երանել և թափել պտուղ և կամ ընդ զետ անցանել հարկէ, և կամ ի ձի որ խիտ իցէ հարկէ՛ երանել, կամ այլ ինչ այսպիսի, և կամ բռնադատէ և լիցէ չիւրոց և կամ վարձկան, և մահ պատահի, արեան դատաստան լիցի ի կամարտէ և յակամայէ. առաւել լիցի բռնադատողացն. Իսկ վարձկանին և չիւրոցն եթէ աւելի քան զտովորութիւնն հարկէ կամ բռնադատէ ընդ դատաստանաւ է կամարտի և ալկամայի: Կրկնելով Ամբատ Սպարապետի Գատաստանագրքի

7-րդ, 142-րդ, 149-րդ և այլ Նոզվածների բովանդակութիւնը, նույն այդ Գատաստանագրքի 150-րդ Նոզվածի 2-րդ մասը ազդարարում է. «Նոյնպէս և թէ՛ որ մարդ ի ծառ հանէ կամ ի բար, և կամ յանձնող զրատա՛ ի կահրայ, և մեռանի՝ նա արեան տէր է. ապա թէ իր կամարք լինի երկն ու կամ վարձով՝ նա անպարտ է: Բայց ամէն բանի լինելն որ երթայ՝ ի կամայն է և ի յուչ կամայն»:

Մխիթար Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի 34-րդ, 116-րդ և Ամբատ Սպարապետի Գատաստանագրքի 123-րդ ու մասում 152-րդ Նոզվածներն ընդունում են, որ երբ որևէ տղամարդ կամ կին ընկնելով բազմած Նորը կամ ջր՛հորը մեռնում են, ապա Նորի կամ ջր՛հորի տերերը պետք է պատժվեն՝ որպէս անզգուշութեամբ սպանութեան կատարողներ՝ իրենց Նորը կամ ջր՛հորը բաց վիճակում թողնելու համար: Պատմի տեսակը և չափը որոշվում է, երկնելով մի շարք հանցանքներից, օրինակ, այն բանից, թէ զեղբը զղէրն է տեղի ունեցել, թէ ցերեկը, սուտուրը քրիստոնչաւ է եղել, թէ մահմեդական, կույր է եղել արդար չառ, թէ նորմալ տեսողութիւն է ունեցել, հարրած է եղել, թէ զգաստ և այլն:

Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի 34-րդ Նոզվածը, խոսելով այդ մասին, սահմանում է. «Այլ եթէ անկանի այդ կամ կին է՛ Նոր բացաւ և ի ջր՛հոր փորեալ և մեռանիցի, թէ ի սուս իցէ՛՛ կէս արեան տուգանեցի, իսկ եթէ՛ ի զիշերի՛՛ բառանգակ արեան: Նոյն լիցի յաղագս կանանց, ծառայից և աղայխաց: Գատեալ լիցի քրիստոնեայն և այլազգին: Որպես ի զիշերի՛՛ լիցի կոյրն և արբեալն և մանուկն»:

Նմանազարկան որոշ փոփոխութիւններով նույնը կրկնված է Ամբատ Սպարապետի Գատաստանագրքի 123-րդ Նոզվածում. «Եթէ՛ որ զիբ Նորն ի բաց թողու... ապա թէ մարդ սպանել (այսինքն եթէ մարդ ընկնի բաց թողված այդ ջր՛հորը և մեռնի), նա տայ զարեան գինն, կամ զիբը սպանենն նորայ փոխան. Բայց թէ ցորկի լինի՝ նա զկէտն վճարէ. նոյնպէս և թէ հարբած լինի մարդն և ի Նորն ընկնի: Երկու դատաստանագրքերն էլ, ինչպէս տեսնում ենք, ոչ թէ Նոր փորելու կամ ջր՛հորը բաց թողնելու համար են պատժում, այլ պատժում են հետևանքի՛ մարդու հետ զժրախտութիւն պատահելու համար:

Ինչ վերաբերում է Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի 116-րդ Նոզվածին և մասամբ Սպարապետի Գատաստանագրքի 152-րդ Նոզվածին, ապա ըստ զրանց հետապնդելի է հայտարարվում այն զեպրը, երբ որևէ մեկը շարժականութեամբ կամ կատարի տալով վախճանում կամ խրոնոցնում է Նե՛ծայլի ձին և հետևանքը լինում

է այն, որ այդ հեծյալը վարը բնկնելով մեծնում կամ մարմնական վնասվածքներ է ստանում: Այստեղ հանցագործը պատժվում է կամ որպէս դեռավորութեամբ սպանութեան կատարողի, կամ որպէս անզգուշութեամբ սպանութեան առաջացնողի և կամ թէ պարզպէս պատճառած մարմնական վնասվածքների համար, բայց արարքը պատժելի դարձնելու մոմէնտը ոչ թէ հանցագործի կողմից մին խրտնեցնելն է, այլ դրա հետևանքը՝ մարդու մահը կամ նրա խնդանդան գտնուելը: Ինչպես կարելի է նկատել, այնտեղ ևս մենք տեսնում ենք յուսարանումը նույն այն սկզբունքի, որի մասին նրկար գաստողութեաններ արեցինք աշխատութեան նախորդ գլոխներում:

Հիլոսրյան հանցավոր բնիհատում և դրան առնչվող արտրեն-բը: Հիլոսրյան հանցավոր բնչհատման տակ մենք նկատել ունենք ամենից առաջ արորտը: Արորտ բարդ առաջացել է լատիներեն abortus բառից, որը նշանակում է կնոջ արգանդում գտնվող սաղմի անժամանակ հեռացում:

Բժշկական գիտութեան մեջ բնչուսմված է արորտը բաժանել նրկու տեսակների՝ բնականի և արհեստականի: Բնական արորտի պատճառները մեծ մասամբ թարեմված են լինում հղի կնոջ օրգանիզմի առանձնահատկութեանների մեջ: Այդ կարգի արորտը քրտորեն որևէ հետապնդում չառաջացնող կարող է և այդպիսի է նղղէ միշտ: Ինչ վերաբերում է արհեստական արորտին, որի պատճառները արտաքին զանազան գործոններ են, ապա սա էլ իր իրավական գնահատման տեսակետից կարելի է գասակարգել նրկու խմբերի՝ իրավարանորեն հետապնդելի, որեւմե և պատժելի արորտ և քրտորեն անտարբեր, որեւմե և ոչ հետապնդելի, այսինքն անպատժելի արորտ: Այն նշանակում է քրտորեն հետապնդելի արորտը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կնոջ արգանդում գտնվող սաղմի արհեստական ոչնչացում կամ դրա հեռացում, որ կատարվում է ապօրինաբար, այսինքն սովյալ նրկրում սովյալ կոնկրետ իրագրութեան պայմաններում սովորութեան իրավունքի կամ գրավոր օրենքների ուժով նրա արղնվածութեան պայմաններում:

Մարղկային հասարակութեան պատմութեան մեջ, առանձնապէս զարգացման վաղ, նախարքիտոնեութեան շրջաններում տեստեսական-նյութական մեծ կարիքը, և ինչպէս այդ նկատուել են Մոնտեսքրյոն, Մակարսկիը, կարտը, Կովալեսկին և ուրիշները, մասամբ կրտեն ու կրտնական հավատալիքներն են նղղէ այն գործոնները, որտեք պայմանավորել են արհեստական արորտների գոյութեան փաստը, կարիքից ստիպված աստանդական կյանք վարող կամ ապրտարտ տարրական միջոցներից զուրկ նստակցաց մարղու հա-

մար նորածին զավակները ալեւորող ու անօրտա բնուներ կին գտանում, իսկ կրտնական հավատալիքները նման դեպքերում սրբագործում էին անզամ մարղակերութեան զարհուրելի սովորութեանը: Իրանով պետք է բացատրել արհեստական արորտներն ու ինքնարորտի տարածված լինելը վայրենութեան, բարբարոսութեան և նույնիսկ բաղարակրթութեան առաջին աստիճանների վրա գտնվող ժողովուրդների մտտ:

Արհեստական արորտներն ու ինքնարորտներն արղելող իրավանորմեր մենք չենք գտնում հին շինական, բարեւոնական օրենքներում և ոչ էլ գտնում ենք հրեական Հեզամատայնում: Նշանակում է պատմական Չինաստանում, Բարբելոնում, ինչպէս և հին հրեանան համայնքներում այդ արարքները, փաստորեն, օրինականացված էին: Աղզագրական բաղմամբիվ նյութեր ողղղակի կերպով մաստաացույց են անում արորտների ու ինքնարորտների լայն տարածվածութեանը հին ու նոր աշխարհի շատ ուրիշ ժողովուրդների՝ հնղղիկների, հույների, հռոմեացիների, զատարղիացիների, հաբեշների, թաղուզ օվղիանոսի կղղղիների բնակիչների և այլոց մեջ: Ավելին, շատ ու շատ հին ժողովուրդներ, իրենց սեղանների շուրջ սովելորղղ բերաններն չունենալու նպատակով, թույլատրում էին ձերերի և նորածինների անպատժ սպանութեանը, էլ չենք խտում այն մասին, որ որոշ կրկրներում զավակ ունենայն իրավունք էր համարվում և այդ իրավունքը սրվում էր մարղկանց միայն այն դեպքում, երբ սրանք որողակու տարիքի (հասակի) էին հասնում:

Միտմամանակ նղենք, որ նղղէ նն ժամանակաշրջաններ, երբ արհեստական արորտների կատարումը սպանացել է տոհմերի, ցեղերի և անզամ ամբողջ ժողովուրդների գոյութեանը: Այն վիճակը նույնպէս զբաղեցրել է մարղկանց և ստիպուել նրանց, իրենց մերկ գասային-գասակարղային շահերը կնկնելով, այդ արարքի դեմ սովորութեան իրավական խիտա նորմեր սահմանել կամ զամեն բրեական օրենքներ բնղունել: Այսպէս, օրինակ, ուշ շրջանի հռոմեական կայսրերի օրենքները, Գիզեսաների շատ հողվածները, Հուրանի մի շարք օրինազրույթները, Հուստինիանոսի օրենսդրութեանը և Մանուի օրենքները, բարբարոսական պրավդանները, XIII դարի անղղիական, XV դարի Ֆրանսիական, XIII—XV դարերի գերմանական ֆեոդալական պետութեանների բաղմամբիվ բրեական օրենքները, որտեք մեջ հույնպէս, իրեն ժանրազույն հանցագործութեաններ, հետապնդվում էին արորտը, ինքնարորտը և նույնիսկ քղղղավորղղելուց խուսափելու դեպքերը:

Չափապանց հետարղրեր է արորտի և ինքնարորտի թույլտվու-

Քյան կամ արդիւման մասին եղած հայացքներին պատմութիւնը: Ընդամատայանի անհայտ հեղինակները կնոշ արզանդի սաղմը նույն- նացեղում էին նույն կնոշ օրգանիկմի բաղկացուցիչ մասերի հետ: Սաղմուի վնասողը համարվում էր կնոշ դեմ ոտնձգութիւն կատարող և պատժում էր ամենախիտա պատիժներով: Նույնը տեսնում ենք ստորիկների մոտ: Նրանք գտնում էին, որ մարդկային կյանքը սկսվում է ծննդի պահից. էմբիոնոլը, օրինակ, գտնում էր, որ արշապնում սաղմը (պտուղը) չի աքրում, կենսունակութիւն չունի, որ շափով որ առաջին շունչը նորածնի մոտ տեղի է ունենում ոչ թե մոր արգանգում, այլ ծնվելուց անմիջապէս հետո: Գիտօգններ և Լե- ուր Բիլը նույնպէս մարդու կյանքի սկիզբը համարում էին նորածնի առաջին շունչը: Այս կարգի հայացքներ լայնորեն տարածված էին Լոնսաստանում՝ զարգացման որոշակի շրջանում, և այդ հայացքնե- րի ազդեցութեան տակ էլ օրենսդրութիւնը կնոշ արգանդի սաղմը (պտուղը) համարում էր մոր օրգանիկմի անբաժանելի մասերից մեկը, և արքայի ու ինքնարքայի համար կնոշը, որպէս կանոն, չէր պատժում: Պլատոնը խորհուրդ էր տալիս լայնորեն թուլատրել արքայը՝ կենելով պետութեան շահերից, առաջին հերթին նրա տըն- տեսական և զուցե ռազմական շահերից: Նա արքայը համարում էր միանգամայն սովորական, ուրեմն և օրինաւորի երեսույթ: Ա- րիստոտելը գտնում էր, որ կինը պետք է պետութեանը որոշակի քա- նակութեամբ ներխաններ տա, և եթե այդ թիվը լրանում կամ զերա- զանցում է, ապա նրան պետք է օրվի արդող կատարելու իրավունք: Բովանգակ միջնաշարում արքայու ու ինքնարքայի պատժելիու- թեան անհրաժեշտութեան զաղափարը սրբագործված զաղափար էր և դրանով պետք է բացատրել կանոնական իրավունքում համապա- տասխան քրեական-իրավական նորմերի զգույթիւնը: Գեոևս Կոստանդնուպոլսի 629 թ. եկեղեցական ժողովում արքայի ու ինք- նարքայի համար մահապատիժ սահմանվեց: Լոնսական պապերը մի շարք դեպքերում արքայը նույնացրին սպանութեան հետ: Ար- գանգում գտնվող սաղմը ստավծաւիկն կամքով ոգի է ստանում, ուստի նրա դեմ ոտնձգողը ոտնձգում է կատարչւլ մարդու կյանքի դեմ, ահա այն սկզբունքը, որով զենվարվում էին կանոնական օ- բիեքների ստեղծողներն, այդ թվում հռոմեական պապերը:

Նոր ժամանակներում Գեֆոն, Ջոնս Մոլուարտը, Տաուսանեզը, Ֆրանկլինը, Ուոլլեսը և արանց հայացքների կոմպլիքստոր Մալթուս- սը, բուրժուական հասարակութեան մեջ տիրող բոլոր զորախտու- թիւնների ու անախորժութիւնների միակ պատճառը համարելով մարդկանց քանակական աճը, խորհուրդ էին տալիս օրենսդիր օր-

գաններին թուլատրելու և լայնորեն իրականացնելու արքայը, խորհուրդ, որին որոշ պետութիւնների օրենսդիր օրգանները հա- նույնով ունկնդրեցին: Փաստորեն նույն զաղափարախտութիւնն են բարդում նեոմալթուսականները՝ ժամանակակից իմպերիալիզմի այդ շատագոյնները:

Այսպէս է դեհանտովել ու հետապնդիվ արքայը և նրան աղքա- վող ինքնարքայու ու մյուս արարքների քրեական արգարադատու- թեան իրականացման պատմութեան մեջ հին աշխարհում, միջնա- գարում և մասամբ նոր ժամանակներում:

Հին և միջնադարյան հայ քրեական իրավունքում Նդիութեան արհեստական ընդհատման և դրան առնչվող արարքների պատժե- լիութեան մասին մի շարք իրավաբանորմեր կան: Գեոևս մեր կանոնա- կան իրավունքի հուշարձաններում ամենայն որոշակիութեամբ այդ մասին հիշատակվում է. հաջող Հայրապետ Ներսէս կաթողիկո- սի էր իրարզողը եկեղեցական կանոններում, դրա 30-րդ կէտին օրինակ, խոսում էր անպիսի հոգի կնոշ մասին, որն ունիչի միջո- ցով էր իսկ ազիտութեամբ ներխային թանցուցանում է: Կանոն- նակի ազգարարում էին, թե նման կինը պետք է պատժվի եռամյա անպաշտարութեամբ, որն այն ժամանակ խիտա պատիժներից մեկն էր համարվում: Նույնբրովանդակ իրավաբաններ հայ եկեղեցական կանոնաւրքի տարբեր ակտներում դրապժած են մի շարք անգամ, սկսած VIII դարի վերջերից ընդհուպ մինչև XVI դարի կեսերը:

Զափազանց ուշադրով է Գովիթ Ալաովկա որդու Կանոնների 48-րդ կանոնը: Այդ կանոնի համաձայն տարբեր եղանակներով հը- դիութեան ընդհատումը համարվում էր սպանութեանը համահավա- սար հանցադորժութիւնը և հանցապարծ, նրա հանցակիցներն ու ան- կամ առնչակիցները պատժվում էին որպէս մարդասպաններ: Եժժէ որ մարդ լինի սպանեալ, կամ մատնեալ, կամ այրեցողութիւն խոր- հեալ, կամ կին զոտայն ի փորին սպանեմ զնզով, կամ կոխելով, կամ դորժով անկանելով, և այլ որ, յարան կամ ի կանանց մերձ կացող և սպանանողին այնմիկ խորհրդով կամ բանին կողողէ կամ կարող էր ալանելոյ զրկելոյն, կամ յանձնէ կամ այլոց ազդ առնելով և անփոյթ արար, հաղորդ է սպանութեան նորա, նոյնպէս այրեցո- րին և սպանողի գմանուկն...», ասված է կանոնում:

Ուսումնասիրվող հայքի տեմակետից շափապանց բարդ լինակ է քննութեան առնվում նույն կանոնագրքի 78-րդ կանոնում: Այդ կա- նոնը ամենախիտա պատիժների սպանութիւնքով մանկաբարձ թշկին պարտավորեցնում է բոլոր միջոցներն զնդով փրկել նորածնին երե- խալի կյանքը: Եթե երեխան նախքան ծնվող արդեն մեռած է, ապա

նման զեպրեճում մանկարարձ պետք է ամեն կերպ աշխատի փրկել մեր կյանքը: Բայց եթե այնպիսի դրուձյուն է առաջանում, որ միայն մեր մահման զեռով է հնարավոր դառնում Էրեխանցի փրկութիւնը, օրենքն այդ վիճակը օրինականացնում է: Քող մեռնի մաշչրը, բայց ոչ կրքն նորմալ կերպով ծնվող ստողը երեխան, ա՛ա՛ այն սկզբունքը, որն ընկած էր 78-րդ կանոնի հիմքում. «Այլ կանայք, որ ի ծնունդս մեռանին, մի՛ զրկեցնին ի հողորդութիւնէ: Եվ մանկարարն, որ ոչ զղուշանաց ծնեցելոյ մանկան և մեռանիցի մանուկն յանպատարատութիւնէ նոցա, արեան պարտ է: Եւ մանուկն կրկնեալ ի ներքս, պատրաստարար ձեռն արիանելի պարտ է մանկարարձին կամ այլ արուեստաւորին՝ ուղղել զմեռուկն, զի մի՛ մեռանիցի ի մայրն, Այլ քս մեռեալ լինի մեռուկն ի ներքս և նա զժողարածին լինի, յաղագս այնորիկ և մինչև ի մա՛հ հասանի մայրն, պարտ է արուեստաւորաց զործոյն յարանց եթէ ի կանանց, որ վստահանայն կարեն, ձեռն արկանել ի ներքս և յաւղել զմեռուլ մանուկն և արտաքս բերն՝ զի մայրն մի՛ մեռցել: Ապա եթէ կենդանի իցէ մանուկըն, մի՛ որ յանզգեակալ սպանցէ յաղագս կենաց մարն: Քող մայրըն մեռանիցի և մի՛ մանուկն: Ապա թէ յաղագս մարն որ սպանցէ զմեռուկն ժ՛ամ ապաշխարեսցէ:»

Ինչպես Դավիթ Ապովկա որդոյ Կանոններում, այնպես էլ Մխիթար Գոշի Դատաստանագրքում անշարի բարձր է արժեքավորվում կնոջ արշահնում զանվող կենսունակ պտուղը: Համամիտ լինելով մովսիսական օրենսդրութեան և կանոնական իրավունքի սերզ-բանքներին, Գոշը գտնում է, որ հայ իրավունքը նույնպէս պատժի սպանաւիթքով պետք է պաշտպանի այդ պտուղը հանցավոր ոտքն-ձգութիւններին: Ժառանգութեան բացման հարցը լուծելիս նա զատուորներին պարտավորեցնում է տղամարդու մահից հետո սպանել մինչև նրա հղի կնոջ պաշտվելը, այն նպատակով, որպիսի նորաձինք ժառանգ զարձալ: Եթև նորաձին երեխայի մայրը մեռնում է, այդ դեպքում նույնպէս Էրեխան հանգես էր զգլխս իբրև մեր ժառանգ: Ահա Գոշի մտքերը սեփական բտտեքով. «Եւստուան-ձային օրենսդրութիւնն և կանոնական հրամանն զնկարեալ սաղմնն ի զատատան զնէ արեան և այն՝ զի առաջի կարք ծնունդ յանվնաս լինեն... Եւ մարմնոյ ծնեալոյ՝ մարմնոյ ժառանգ եղիցի, որպէս յԱստուծոյ ծնեալքն՝ Աստուծոյ: Ապա թէ յոչ կին պատահի ի մեռանիլ առն, ակն կայցին զատուորք ծնեղանն և այնպէս զժառանգութիւնն հաստատիցն ի ծնանելն: Եւ թէ ընդ նիին աուր յորում ծնա՛ մեռանիցի, մանուկն ժառանգ է: Ի մանկանէն այլք ժառանգիցեն, և ոչ ի հորէն: Եւ եթէ մայր մանկանն մեռանիցի, թե՛ ի

ծնունդս թե՛ զկին ծնեղանն, թէ և ի նմին աուր մեռանիցի, մանուկն ժառանգ ի մօրն և ի մանկանէն հայրն ժառանգէ...» (Դատաստանագրքը, երկրորդ մաս, հոդ. 97):

Մեր երկու ազգային դատաստանագրքերն էլ հղիութեան արհեստական ընդհատման, որպես ինքնուրույն հանցակազմ ավող արարքի մասին դատում են բավականին ընդհանուր և ամբողջական գծերով: Դրանք, սակայն, նկատի են ունենում բացառապէս այն դեպքերը, երբ կնոջ հղիութիւնն ընդհատվում է կովի մեջ նրան հասցված ֆիզիկական հարածից: Զհամաձայնվելով մովսիսական օրենքների զածան ու անաղք պատիժներին, այդ դատաստանագրքերը սահմանում են անհամեմատ մեղծ պատիժներ. զրամական հատուցում և ապաշխարութիւն, այլ կերպ ասած այդ արարքը պատժվում է քաղաքացիական-գատական պատիժներով. «Եսկ եթէ կտուիցին արք երկու և հարկանիցն զկին յղի և ելանիցէ սաղմն անկար, կէս վնասու տուգանիցի որպիսի ինչ արկանիցէ նմա այլ կերպ, և տացէ աղաւելով: Ապա թէ կնոջարանեալ իցէ, տացէ անձն ընդ անձին: Այսպես անաղք էր մովսիսական օրենքը, բայց Գոշը, չհամաձայնվելով դրա հետ, դատում էր հետեյալ կերպ. «Ծայտնի է և այս (այսինքն՝ վերեւում մատանշվածք, Ա. Ք.). զատաստան աստուածային բոտ սահմանի. ապա թե ո՛չ մի է նկարելն և անկարն բոտ յուսոյ անն ծնանիլ կնոջն, թէ և բազում միջոց է նկարելոյ և անկարի: Եւ տացէ անձն ընդ անձին.— և այս զատաստան փոխեալ տուգանօք և ապաշխարութեամբ վճարեցի, որպէս յայտնեալ է զատաստանօք թագաւորացն, համեմատելով ընդ այնտիկն: Ահա այսպէս է լուծում Մխիթար Գոշի Դատաստանագրքի երկրորդ մասի 28-րդ հոդվածը այն անձանց քրեական պատասխանատւութեան հարցը, օվքեր կովի մեջ ծեծում կամ հարվածում էին հղի կնոջը՝ առաջացնելով նրա հղիութեան արհեստական ընդհատում:

Նույն սկզբունքներն իրենց վավերացնող գտել են Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 84-րդ հոդվածում, բայց այսուտեղ, ի տարբերութիւն Մխիթար Գոշի Դատաստանագրքի վերոհիշյալ հոդվածի, պատիժը խստացված է: Բացորոշ կերպով նկատելի է ան, որ Սմբատ Սպարապետը հակում է ունեցել պահելու և իրականացնելու մովսիսական օրենքի խիստ պատժամիջոցները: Ահա այդ հոդվածի կոնտեքտը. «Եթէ որ զարկնէ զպատանդարոք կին, և նա ձգէ զտղայն, և թէ զճո անկերպարանք լինի և խլինք՝ նա կէս տղայի վճարէ զհայրն, որչաք որ զնէ նորա զգինքն հայրն և զինչ այլք աղևաւք միշնորդեն: Ապա թէ կերպարանք ունեայ

տղայն՝ նա անձն ընդ անձին տուժի, թէ ընդ Տալլին շահարի և ընդ կեկեղեցին»:

Առանձնապես ուշադրամ է այն, որ ի տարբերություն Միսիմար Փոշի Դատատանագրքի, Սպարապետի Դատատանագիրքը իրավունք է տալիս եկեղեցուն, ինչպես նաև ապագա երկխախ Տուր ներքև Տաշաղգործին: Վերջինս պատժում էր, եթև եկեղեցին աստի կնոջ ամուսինը հրաժարում էին այդ անել, այսինքն հրաժարում էին ներել:

Դավիթ Ալավկա որդու Կանոններում կան մի քանի հոդովածներ, որոնցով մեր գիտնական վարդապետը չուրորինակ հնատեսությունամբ ու նրբանկատությունամբ պաշտպանում է կնոջ արգանդում գտնվող պտղի նորմալ զարգացումը: 51-րդ կանոնը կատեգորիկ կարգով է խիստ ապաշխարություն սպանալիքով հղի վիճակում գտնվող կնոջը պահանջում է շամունակա և ընդհանրապես հղիության ամբողջ ժամանակաշրջանում հնուու մնալ սեռական հարաբերության մեջ մտնելուց:

Ալավկա որդին համոզված էր, որ նման կնոջ կենսակցությունը սպանալու է պտուղը և հետևանքը լինում է այն, որ ապագա երկխախ ծնվում է ոչ նորմալ մարդու կերպարանքով: «Այլ կին,— ասված է այդ կանոնում,— որ յղի իցէ, մի՛ ամուսնասցի, մինչև ծնցի մանուկն: Եւ այս է պատճառն, զի յուզ խեղաթիրությունը, որ լինի ի մարմնս մանկանն, յայնմ ժամու յամուսնութենէն լինի, որ յղի իցէ և ի կանաց կարգի: Արդ, շէ պարտ յայս Բ ժամանակի մերձենալ, մանաւանդ քահանայից: Եթէ որ հեղզուսցի պատուրանիս, մեծաւ ապաշխարութեամբ որոշեսցեն ի հաղորդութենէ, իսկ քահանայի ի պատարագելոյ զՔրիստոս: Այսպէս ի ստանէ կամ ի կիրակի մի որ մերձեսցի: Ապա եթէ յանգիտութեան՝ շարք մի պահեսցէ, ապա թէ դիտէր և ամուսնացաւ քստաստուն աւր պահեսցէ: Եւ թէ աներկիւղ սովորութեամբ զնոյն անէ՝ ընդ անհիծիւք է, Իսկ թէ քահանայի հանդիպի այս մի անցաւ ու աւր հարաւ արտաքոյ կացցէ սրբութեան: Ապա թէ սովորութեամբ անէ՛ զայն ընդ անհիծիւք է և ի քաց կացցէ պատարագելոյ զՔրիստոս, ապա թէ լիտոյ զըղջասցի, առաջերդն իշխան է Բ ամ ապաշխարէ՛ պատարագեսցէ: Այս հոդովածում նախատեսված արարքը նույնպես ընդցազործություն է համարվում, որքանով որ խոսքը վերաբերում է կնոջ արգանդում գտնվող պտղի կամ սաղմի զարգացման քրեական-իրավական պաշտպանության հարցին, հասարակության քանակական աճին ու մարդկանց բազմացմանը:

Աւշադրվ է 53-րդ հոդովածը: Այս հոդովածում Դավիթ Ալավկա որդին մեծ զայրությունով է խոսում իր համոզմամբ նրբալլ Տանցազործությունների մասին. ա) երբ ամուսին շունեցող անտառի կինը զնոջ է ընդունում Հղիխանալու համար, բ) երբ, ընդհակառակը, ամուլ ճանաչված կինը զնոջ է ընդունում Հղիանալու համար և գ) երբ կինը տղամարդուն գրգռել զնոջ է տալիս կամ արտաքոյ նկատառումներով նրա կերակրին կամ ըմպելիքին զանազան նուրբներն աճելի կամ պակաս խստությամբ պատժվեն. «Այլ շնացնալքն ի քողտան կրկին կրեսցն և զկարգ ապաշխարութեան: Իսկ անանց անն պոռնիկ կանախ՝ զնոջ անունն յշղանալ, ընդ այնտիկ համարեն նոքա, որք հարհարեն՝ յորովայնի սպանանել զմանկոսն, միով մասամբ պակաս յանցանէ ապաշխարեսցին և թէ լիցին արժանի լետիք թաւալի: Եւ որ վասն յղանալոյ անունն զնոջ ամուլքն, ամ մի ապաշխարեսցն, զի բնութեան արարիչ Աստուած է: Բայց եթէ ի ցաղց սպանուի արախանի կամ իրականիքն ծնողական զարուրեան խախտումն լինել՝ ի բժշկաց անողջանալ, անխիղճ են, այլ ո՛չ ի դիւաց կամ ի կախարաց, ի շրուտից կամ յայլ իրաց: Այլ են ոմանք ի կանանց յանաւրինաց, որ զնոջ տան արունց կամ հոմանեաց, յաւերոբաց անտի, որ կանէ ի մարմնոյ իրանց, խառնեն ի կերակուրն, այնպիսինքն նոզվին ի մահ և ի կեանս և լետախ թաւալէն զրկեսցին: Ապա թէ խոստովանին և ծանր ապաշխարութիւն յանձն անունն, զմձորէիցն զիցեն նոցա կարգ: Մձոնայքըն են պրկեկանք, բանդի նոքա և կանալք իրենաց խառնեն յաննանայն ի կերակուր և լըմպելքն, ինքեանք պղծին և զայլ անմեղ անձինս, տալով նոցա, ապականեն: Այսպիսով զիւրտուսց աղուէսարարձ զնեն ի ճակատի և զջիւ ոտիցն հատանել և զմեղսն յտին թաւալկին արժանի լինիցի»: Հենց այն հանցանքներ, որ, բայց Դավիթ Ալավկա որդու, վերնում մատնանշված հանցազործություններից առաջինը դիտվում է որպես սպանության հավասար հանցազործություն, իսկ վերջինը դիտվում է իբրև մձորեկությանը հարկուն նույնացվող վտանգավոր արարք, վկայում է, որ իրենց ժամանակ հղիության արհեստական ընդհատման հետ խստորեն պատրվել են դրան անշիղջ նաև մյուս հանցազործությունները:

Հղիության հանցավոր ընդհատման հետ անուղղակի կերպով առնչվում է տղամարդու որդեկության անբժի այսպես կոչված ապականման հանցակազմը: Այդ հանցազործության վերաբերյալ առանձին հիշատակումներ մենք գտնում ենք դեռևս մեր եկեղեցական, կանոնական իրավունքի հիշատակարաններում: Հայաստանի նախալուսավորիչ Թադևոս Առաքյալի 18-րդ կանոնում, օրհ-

նակ, խոսվում է այն մասին, թե նրանք ովքեր աստծու նկատմամբ ասածն են հրկուզը աստիճան համարելով՝ Եի շնան զորդեծնութիւնն հեղուցուն», համասարեցվում են մարգասպաններին և իբրև հանցարգործներ պատժվում են ծանր ու երկարատև ապաշխարանքով:

Կանոնական իրավունքի հիշատակարաններում այդ առթիվ այլ իրավանորմեր էլ կային, բայց հարցն ամբողջական ձևով զրվում ու լուծվում էր Գալիթի Այազկա որդու Կանոններում: Այս հուշարձանի 54-րդ հոդվածում ասված էր. «Այլ ոմանք, արք անաւրէնք, ի շնայ իրեանց կամ քինով կանանց իրեանցն զսերով որդեծնութեան, զոր հաստատեաց Տէր յաճումն, նոքա զհակառակն գործեն արարչութեան, այսինքն՝ արտաքս հեղուն, զոր նզովէ յեկեղեցի Աստուծոյ: Իսկ եթէ հատանի ի շարէն, բազում անգամ զայն արարենալ, կարգ պանուղացն եզրիցի: Բայց վարդապետը հայեցնալ ծանր ապաշխարութիւն՝ իշխան են կարճել զժամանակն»: Հոդվածից պարզ կերպով երևում է, որ նրա հնդիմակը, գտնվելով իր դար կրոնական բարոյախոսութեան ազդեցութեան տակ, հետադարձ-դեմի, ուրեմն և բրեանկանոններն պատժելի է հայտարարում այնպիսի մի արարք, որը թեև անշվում էր հոդիթիյան հանցավոր ընդհատման հանցակազմին, բայց որը հետագա ժամանակներում բուխորովին չէր պատժվում՝ իրենից որևէ լուրջ վտանգավորութիւնն չենթկախացնելու պատճառով:

Այդ հոդվածի գոյութիւնը մի ավելորդ ապացույց է այն բանի, որ հասարակական կյանքի պատմութեան մեջ հանցագործութեան հասակացութիւնը երբեք միտվում է և նույնիսկ հարմարեցվում է տիրապետող կրոնական աշխարհայացքին ու կրոնական պատկերացումներին:

IV. ՍԵՌԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒՅՑՈՒՆԵՆԻՐ

Սեռական հանցագործութիւնները զրանք մարդու սեռական անձեռնմխելիութեան դեմ կատարվող որոշակի ոտնձգութիւններ են: Այս հանցագործութիւնների հասակացութիւնը նույնպես ժամանակի ընթացքում փոփոխվել է: Միևնույն արարքները պատմական որոշ շրջաններում որոշակի ժողովուրդների մոտ համարվել են ծանրագույն սեռական հանցագործութիւնները և հետագայում նույն այդ ժողովուրդների իրավագիտակցութեան ու իրավունքի տեսանկյունից դադարել են այդպիսի լինելուց և, ընդհակառակը, միանգամայն խրախուսելի, քրեորեն ոչ գաղապարտելի արարքները, հետագայում հենց նույն իրավունքի ուսով համարվել են ծանրագույն սեռական հանցագործութիւններ:

Մեր ասածը հիմնավորելու և լուսարանելու համար վերջիններ այսպես կոչված հյուրասիրական հետերիզմի սովորութիւնը, որի առաջացման նախադրյալը տակազին տոհմական կարգերում սկիզբ առած ու զարգացող խմբամտանոթիւնն էր: Խմբամտանոթիւնն ժամանակ յուրաքանչյւրում այդ առթիվ մեծ նշանակում էր ցանկացած որևէ կնոջ ամուսին, և, ընդհակառակը, ամեն մի կին իրավունք ուներ կենակցելու ցանկացած տղամարդու հետ: Այսպես էր դրութիւնը և ոչ որի մտքով անգամ չէր անցնում, թե նրանց արարքը «հանցագործութիւն» էր: Տոհմական կարգերը բայթայվեցին, բայց այդ հետերիզմի սովորութիւնը երկար ժամանակ մնում էր: Շատ ու շատ ժողովուրդների մոտ, երբ որևէ տղամարդ հյուր էր գալիս կամ պարզապես հարկադրված էր լինում այս կամ այն ընտանիքի հարկի տակ գիշերել, աստուղաները նրա արամագրութեան տակ դնում էին որևէ կնոջ, որի հետ նա կարող էր ազատ կերպով կենակցել, ասանց նայելու կնոջ կամքին: Այսպիսով, ներկայիս հասկացողութեամբ քրեաբարութիւնը՝ խրախուսելի արարք էր համարվում, և միայն շատ զարեթ հետո այն արգելվեց և կնոջ կամքին հակառակ նրա հետ բռնի կերպով կենակցելն ազգաբարձից իբրև ծանրագույն քրեական հանցագործութիւն և այդ մասին պատժներ սահմանող օրենքներ հրատարակվեցին:

Ահեղագործութիւնն և նվարտուն: Ինչպես բազմաթիվ այլևայլ ժողովուրդների մեջ, այնպես էլ հայերի մոտ շատ դարեր առաջ օրինականացված, ուրեմն և թուլատրելի է համարվել նույնիսկ մի այնպիսի երևույթ, ինչպիսին արեանագծութիւնն էր: Դա այն շրջանն էր, երբ գոյութիւն ուներ այսպես կոչված բազմաթուլութիւնը: Կըրջինս արտահայտվում էր տարբեր ձևերով: Այսպես, օրինակ, երբ հարազատ եղբայրները կամ այլ մտակի ազգականները կենակցում էին միևնույն կնոջ հետ, կամ երբ հարսի հետ կենակցում էին նրա ամուսնուց բացի, նաև այդ ամուսնու հայրը կամ ավագագույն մի այլ ազգականը: Ինչպես մատակցույց են անում հայ որոշ ազգագիրներ, մեր ժողովրդի իրավական հայացքներում երբեմն իշխել է անգամ այն տարօրինակ գաղափարը, թե հայրն իրավունք ունի տիրանալու սեփական որդու կնոջը: Սա մենք զիտում ենք իբրև մի մնացորդ կեցած այն հեռավոր ժամանակներից, երբ հայրն ու որդին միաժամանակ իրավունք ունեին համարվել միևնույն կնոջ ամուսիններ: Այսպես էր երբևէ, և այն ժամանակ ոչ որի մտքով չէր էլ անցնում, թե այդ արարքները հանցագործութիւններ են:

Բայց ժամանակները փոխվեցին, փոխվեցին նաև մարդկանց արարքերի իրավաբանական գնահատումները: Հետագայում այդ

արարքները ոչ միայն արգելվում են, այլև արգելվում են խտա-
զույն պատժների սպանակիրով: Եւս՝ Եւսպիմանի ժողովն արդեն
քրեական օրենք էր ընդունել, որով խտտորեն պատժվում էր սե-
փական զավակի կնոջ հետ կենսակցող հայրը:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում մի բանի խոսք
ասել այդպես կոչված նվուժյան մասին: Նվուժյունը դա սկիսքաբար
կողմից իր հարսին, այսինքն իր տղայի կնոջը բռնի կերպով տիրելն
է, նրա հետ կենսակցելը: XVIII և XIX դարերի հայ նահապետական
ընտանիքներում այդ երեսույթը, ճիշտ է սակավ չափով, բայց և
այնպես իրեն տակավին զգացնել էր տալիս: XIX դ. 80—90-ա-
կան թվականների մեր պարբերական մամուլի էջերում յույս տե-
սել մի շարք հողվածներ, որոնց հեղինակները, վկայակոչելով նը-
վուժյան գրեթեման առանձին դեպքեր, զրուհից եղբայրացեում
էին, թե հայ գյուղացիների զերգաստաններում ամուսնական բար-
քերը բնկնում են և դուրզացիներն այլատերվում են:

Հողվածների հեղինակները պարզապես չէին հասկանում, որ
այդ դեպքերը դարձր առաջ միանգամայն օրինաչափ համարվող
նվուժյան արձագանքն ու արտահայտություններն էին և ուրիշ ո-
չինչ: Նրանք չէին հասկանում, որ երբևէ բարոյական արարք հան-
դեսացող նվուժյունը, յուրահատուկ այդ հեռերիցմը միայն հետա-
զուսում հանցավոր ու հակաբարոյական արարք դարձավ, որ դրա,
որպես սեռական հանցագործության պատժելիության մասին միայն
հետագայում համապատասխան իրավաբանները մտցվեցին մեր ե-
կեղեցական-կանոնական և աշխարհիկ օրենքներում⁵⁶:

Այսպիսով, նվուժյունը սկզբում հանցավոր արարք չէր համար-
վում և քրեորեն չէր պատժվում: Հետագայում միայն, շատ հար-
յուրամակներ հետո, այն դիտվում է իբրև սեռական կամ, գուցե
ավելի ճշշտ կլինի ասել, ընտանեկան հարաբերությունների քնադա-
վառում կատարվող հանցագործություն:

⁵⁶ Սանարոբ. Ահա նվուժյան գործությունը արդարացող մի փաստ ոչ այնքան
հետադար առջալից. Կազմվանի Ձեփի գրությունը Եոզրբ անունով մի կին առաք առքի
ամուսնական կնոջ վաբեցող հետո հանկարծ առնցք փախելով է Եոզրբին ա-
մուսնացրել էին անչափահաս և քիչքիական թույլ զարգացում առնեցող մի տղայի
հետ, որի հայրը, հենվելով իր իշխանության վրա, տարիներ շարունակ կենսակցել էր
սեփական հարսի հետ, սրա ամուսնու և սկիսքը դիտությունը ու հավանությունը:
Հայրը այլևս անկարող լինելով նման դրություն հանրորժիկ, առնցք հեռանում է
և ապաստանում իր ազգականների մոտ: Սակայն համազուգուցքները ստիպում են
Եոզրբին վերադառնալ իր ամուսնու և շարունակել նույն կյանքը, որովհետև
այլ ընտանիքներում էլ այդ երեսույթն ընդունվում ու օրինական էր (տե՛ս Եժը դարս,
1885 թ., № 20):

Ահրատ: Անհնատարքի չի լեկրատի այլանգակ սովորույթը:
Լեկրատը նույնպես դարձր առաջ լայնորեն տարածված մի սովո-
րույթ էր: Այն հատուկ էր բազմաթիվ ժողովուրդների այն շրջանում,
եւրո տիրում էին տոհմատիրական կարգերը: Այդ սովորույթի հա-
մարմն այրի մնացած կինը պարտավոր էր ամուսնանալ միայն
մեծածա մամուսնու այս կամ այն հարազատներից մեկի հետ: Տոհ-
մական կարգերի անկումից հետո, լեկրատի սովորույթը, դասա-
կարգային գունավորում ստանալով, պահպանվեց: Ընտանքի բեր-
ւած կինը համարվում էր այդ ընտանիքի սեփականություն: Նա ոչ
մի զեպրում տանից հեռանալու իրավունք չուներ և պարտավոր
էր, թեկուզ և իր կամքին հակառակ, կենսակցել տան որևէ այլ տղա-
մարդու հետ: Լեկրատի սովորույթն ընդունված տակավին նով-
սիսական օրենքներում, Մանուկ օրենսդրությամբ և այլն:

Պատմական որոշակի փաստեր վկայում են, որ հին Հայաստա-
նում նույնպես լեկրատի սովորույթը տարածված է եղել: Թագա-
վորական և քահարարական շատ անձերում հարս եկած կինը
այլևս տոհմից չէր հեռանում, այլ մնալով այնտեղ, ամուսնանում
էր իր մեծած ամուսնու մերձավոր կամ հեռավոր ազգականներից
որևէ մեկի հետ: Սովորույթային իրավունքը հարկադրում էր նրան
ամուսնական կապերի մեջ մտնել իր իսկ կամքին հակառակ:

Այդ բոլորն ասում են, որ լեկրատը երբևէ թույլատրելի, ուրեմն
և քրեորեն անպատժելի արարք էր: Դարևր հետո այդ արարքը նույն-
պես դիտվեց իբրև հանցավոր արարք ու օրենքներ հրատարակվե-
ցին դրա պատժելիության մասին: Նման օրենքներ հրատարակ-
վեցին նաև Հայաստանում: Բուզանդը վկայում է, որ Ներսես Մեծն
Աշտիշատի ժողովում ընդունել է տալիս մի օրենք, որտեղ սովում
էր. «Եւ զի լինեցին յամուսնութեան օրինաւորք, մի՛ ստել և մի՛ դաւ
բերել իրեանց ամուսնութիւն ընդալ կողմանց. և փախելլ ալվելի
ի մերձաւոր և լազգեւն տոհմակից խառնակութեան ամուսնութենէն.
և մահանաղ ի մերձաւորական ի նուոց, և որ դամ մի այամ նմին
լալալ էր ինչ»⁵⁷:

Նույնարժանեզակ իրավանորմ գտնում ենք «Մահմանք և կա-
նոնք կարգի եկեղեցույ սուրբ Ներսիսի Հայոց Հայրապետի» կոչված
ակտի մեջ, որի 24-րդ հոդվածում ասվում է. «Ելանն որ զեղբար
կինն առցլ, ոչ բնզունի զնա եկեղեցի Աստուծոյ, բայց եթլ մեկնես-
ցին և զմահայարտին այսաշխարսութիւն կրեսցին և ստոյգ այսաշ-
խարեսցեն: Եղբոր կնոջ և նման մերձաւորների հետ ամուսնանա-

⁵⁷ Տե՛ս «Փաստադի Բուզանդայն Պատմութիւն Հայոց», էջ 77:

ու, որպէս ըստ էութեան հանցանքի արարքի մասին օրենք մենք այնուհետև տեսնում ենք Շահապիվանի ժողովի կանոններում: Այս կանոններից 12-րդ կանոնը ասում էր. «Եթէ Հայր զորդուց կին ունեցի, կամ նշրայր զկորուսր, նոյն պատահաքն ու նշովք լինցին»: Այդ նշանակում էր հենց օրենքի ուժով նրանք՝ Հայրն ու կորսորդները, ենթարկվում էին ծանր ասպաշխարութեան և տուգանքի. «Մինչև զարձգի և ասպաշխարեցի է ամ ընդ ունկիղիքս, Գ ամ ընդ ձնուամք, Ծ դրամ աղքատաց, Ծ դրամ յեկեղեցոյս»:

Մեր հին և միջնադարյան աշխարհի օրենքներում նույնպէս բազմաթիվ իրավաւորման կան, որոնցով իբրև ինքնուրույն բրտական հանցագործութեան հետապնդում ու պատժում էր լիբրատոր նշորակացութեանը պարզ է. այստեղ նույնպէս կրրէ՛ր օրինաւամբ համարվող արարքը հետագայում հանդես է բերվում ու դիտվում է որպէս ծանրագոյն հանցագործություն:

Չմոռանանք հիշատակել փորձահասակների և մանավանդ անշարիահասների սեռական անձնուսիխոթութեան դեմ ուղղվող արարքների մասին: Այս կարգի անձանց, առանձնապէս իգական սեռին պատկանողների հետ ամուսնանալը, կրրէ՛ր խրախուսվող երևույթ էր: Ինչպէս այլ ազգերի պատկանող անձինք, այնպէս էլ Հայոց շատ թագավորներ ու ֆեոդալ նախարարներ կնութեան էին վերցնում բոլորովին մանկամարդ աղքիկների և նրանց հետ ազատորեն կենակցում: Բայց հետագայում ամենուրեք կանոնական ու աշխարհիկ օրենքներով պատիժներ սահմանվեցին նաև այդ արարքների համար. այլ կերպ ասած անշարիահասների և փորձահասակների հետ սեռական հարաբերություն անենալը զիալեց իբրև բրտական հանցագործություն, թեև, նորից կրկինք, այն դարեր ի վեր հանցագործություն չէր համարվում:

Վերահիշյալ փաստերն իրենց ամբողջութեամբ առած անհերքելի կերպով ասպացուցում են, որ առաջին Հայացքից անփոփոխ թվացող սեռական հանցագործությունների, ինչպէս նաև ամուսնական հարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների հասկացություններն անգամ, մյուս հանցագործությունների հասկացությունների նման, ժամանակաշրջանից ժամանակաշրջան, սերնդից սերունդ փոփոխվել են: Երբևէ քրեականորէն անուարքն արարքները հետագայում հանցագործություն են համարվել և, ընդհակառակը, հանցավոր արարքներ համարվող շատ արարքներ ժամանակի բնթացքում սովորութիւն իրավունքի և հենց զրված օրենքների ուժով զարգարել են ալոյտիսին լինելուց:

Սեռական հանցագործությունների պատմելութեան մասին

զարգար առաջին օրենքները երևան են եկել մեր օրերից մի քանի հազար տարի առաջ. Համմուրաբի օրենսգրքում խիստ պատիժներ էին նախատեսվում արնապղծութեան համար, սեփական աղչակ անլ լրացող Հայր իր բնակավայրից արտագում էր (հոգ. 154), հարսի հետ կենակցող սկեսայրը պատժվում էր մահապատժով, որի իրականացման ձևը ջրահեղձում էր (հոգ. 155), եթև տղան իր հոր մահից հետո կենակցում էր նրա այրու, այսինքն հարգատմոր հետ, այդ պնցում երկուսն էլ, այսինքն թե՛ որդին և թե՛ մայրը, ենթարկվում էին մահապատժի, նրանց այրում էին (հոգ. 157):

Մովսիսական օրենքների համաձայն կույս աղչական բռնաբարողները և ընդհանրապէս սեռական անձարձակութուններ թույլ տվողները նույնպէս խստորեն պատժում էին. նրանք ենթարկվում էին դրամական ծանր պատիժների և անգամ մահապատժի (Վեռացք, Ի 10, Երկրորդ օրինաց, ԻԲ 22, 28—29, Եիցք, ԻԼ 16—17 և այլն):

Սեռական հանցագործությունները բարեխնական և հրեական օրենքներից բացի, պատժել են նաև ստրկատիրական մյուս պետությունների օրենքներով: Եգիպտոսում, հին Չինաստանում, Հնդկաստանում, Հունաստանում, Հռոմում և այլ երկրներում հանցագործը պատժվում էր դաժան օրենքներով, նույնարժանգակ հարալուսավոր իրավաւորման մենք գտնում ենք վաղ ֆեոդալիզմի և զարգացած ֆեոդալական հարաբերությունների դարաշրջանների ապրած պետությունների օրենսորոշումներում, ինչպէս նաև կանոնական իրավունքի հուշարձաններում: Ընդհանրապէս դասակարգային բոլոր հասարակությունների մեջ էլ սեռական հանցագործությունները, առանձնապէս բռնաբարությունը, արվամուլությունը և արնապղծութեան մի քանի սեռական ամենայն խստութեամբ պատժվել են:

Դասակարգային հասարակութեան կազմավորմամբ և առանձնապէս քրիստոնեութեան տարածմամբ Հայաստանում նույնպէս որոշ արարքներ սկերում սովորութիւն օրենքների ուժով, իսկ հետագայում նաև զրավոր իրավաւորմանով սկեսցին հետապնդվել որպէս սեռական հանցագործություններ: Սրանց թվում ամենից առաջ դասվում են ժամանակակից հասկացողութեամբ սեռական հանցագործությունները՝ բռնաբարությունը, արվամուլությունը, կալվատությունը և այլն: Բացի այդ, դրանց թվին պետք է դասել այն բոլոր հանցագործությունները, որոնք թեև անմիջականորեն ուղղված չէին քնտանեկան հարաբերությունների կամ փորձահասակների ու անշարիահասների սեռական անձնուսիխոթեան,

կամ բարոյականության նորմերի զեմ, բայց և վերջին հաշվով սե-
ռական սանձարձակության դրսևորման ձևեր էին. օրինակ, արնա-
պղծությունը, անասնաժողովրդներ և այլն: Ստորև մենք շարադրում
ենք այդ հանցագործությունները նախատեսող իրավաբանական սե-
սությունը, հիմք ընդունելով Հայոց կանոնագրերը, Գավիթ Այվազկա
որդու Կանոնները, Մխիթար Գոշի և Մժբատ Սպարապետի դատաս-
տանագրերը, Ներսես Լամբրոնացու աշխարհիկ օրենքը, հայերեն
խորհրդանշված և երբևէ Հայաստանում կիրառված Անտիոքի ասիզ-
ները (օրենքներ) և այլն:

Բռնաբարություն: Վերոհիշյալ օրենսդրական-իրավաբանական
ակտերի համապատասխան իրավաբանորեն ամենինը սահմանա-
ստացվել է խտտորեն պատժվել է բռնաբարությունը: Բռնաբա-
րությունը համարվում էր այն, երբ տղամարդը կնոջ նկատմամբ
բռնություն գործադրելով կենսակցում, այլ կերպ սասած սեռական
հարաբերություն էր ունենում նրա հետ: Այս արարքի հակաբարո-
յական բնույթի և բարձր վտանգալիքությունը մասին բազմաթիվ
հիշատակումներ մենք գտնում ենք Հայոց կանոնագրերի նորմներում:
Դրանցում զանազան բարոյախտական զարմամբներով զատա-
պարտելով այդ արարքը կատարողներին, միաժամանակ նշվում է, որ
հանցագործները պետք է ենթարկվեն ծանր ավաշխարանքի, որն
խնկական ջրեական պատժի (ռեպրեսիայի) մի ձև էր պատմական
այն ժամանակներում, երբ Հայաստանում բացակայում էր կամ
սուստիկ թույլ էր հայկական պետականությունը, երբ շկային հա-
մապատասխան դատարաններ:

Բռնաբարության պատժելիության մասին Գավիթ Այվազկա
որդու Կանոններում ուղղակի հիշատակում չկա: Բայց նրա այն
հոդվածներում, որտեղ խոսվում է անստակության գատապարտելի
լինելու մասին, նկատվել է առնվում նաև բռնաբարությունը, որբա-
նով որ անստակության հասկացությունը սակ Գավիթ Այվազկա որդին
մտցնում էր սեռական բուրբ էրցցեսներն ու սանձարձակությունները
առհասարակ:

Ի տարբերություն Գավիթ Այվազկա որդու Կանոններին, Մխիթար
Գոշի և Մժբատ Սպարապետի գատաստանագրերը առանձին հոդ-
վածներ են նվիրում բռնաբարության նույնիսկ և զրա պատժելիու-
թյան հարցին: Այս գատաստանագրերից առաջինի առաջին մասի
20-րդ հոդվածը, բռնաբարությունն առհասարակ պատժելի արարք
հայտարարելով ու որոշակի իմաստով հակադրվելով մովսեսական
օրենքին, պահանջում է, որ այն արարքի մեջ հանցավոր ճանաչ-
ված անձը, տուժողի հետ առողջ օժիտը, և այն էլ անկապելով ա-

մուսուլմանը անպայման ամուսնանա, իսկ եթև այդ բանը չի ցան-
կանում, ապա իր արարքի համար նա պետք է հատուցում վճարի
ճիշտ այն շահով, ինչ շահով հատուցում է վճարում նշան զոված
աղբկան բռնաբարողը: «Ձխոտեալն բռնազատել՝ նոյն կացցէ զա-
տաստան աննկեղնի բտ որում օրինկեղն և իցէ՞», ասում է Գոշը,
սակնալիելով իր Գատաստանագրքի առաջին մասի 18-րդ հոդվածը
և այնուհետև շարունակում է. «Ապա ի՞նչ գտանիցէ որ աղջիկ կոյս,
որ չիցէ խօտեալ անն, և բռնաբար նեչիցէ ընդ նմա, տացէ այն
որ նեցնաց ընդ նմա հօր աղբկանի յխուն երկգրամեան արժաթոյ
և նորա լիցի կինն. մի՛ իշխեսցէ արձակել զնա զամենայն ժամա-
նակս իբր Այդ ըստ օրինացն է (այսինքն ըստ մովսիսական օրենքի,
Ենդրորդ օրինաց, ԻԲ 28—29). մեզ լիցի-անբաժնին առ առ-
նոյ զնա անարձակելի. ապա թէ ոչ կամիցին-բտ խօտելոյն տոժն
լիցի»: Այսպես էր զրվում և լուծվում բռնաբարության ջրեական
հետապնդման հարցը Մխիթար Գոշի Գատաստանագրքում:

Մժբատ Սպարապետի Գատաստանագրերը, հանձնել 73-րդ
հոդվածի օրինադրություններ, բռնաբարություն հետապնդման ու
պատժելիության հարցում ավելի հեռուն է գնում: Նա անողոր
մարմնական պատժ է նախատեսում այն կեցրծում, երբ բռնաբա-
րողը ջրժժարվում է իր կատարած արարքի համար հատուցում վը-
ճարելուց և տուժող աղբկա հետ ամուսնանալուց. «Եթէ որ զկոյս
աղբկան բռնէ և ուժ այնէ, և գիրք ի յանձնէ հանէ, նա թէ խնամա-
խաւոված լինի նա գատաստանն զէ՛ղ կարգին լինալ, որ զրեցար
(այստեղ Մժբատ Սպարապետը նկատի ունի իր Գատաստանագրքի
նախօրդ, 72-րդ հոդվածի որոշ օրինադրություններ, Ա.Թ): Եւ թէ ոչ՝
նա տա հարն յխուն զրամ, ու պակվի ընդ ինք անբաժնելի:
Ապա թէ չկամենալ՝ նա կտրեն զձեռուն: Բայց պարտ է գրեռել՝ որ
երկրին բնակիչը ի պարտին պահն են, և այն որ տառպել աղբիկ
մի գտնու ու իր ուժ այնէ՛ նա պարտին է ուժն: Եւ ի յայտ տեղզ
մեծ փնդաւղովիւն պիտի, և հալի ի կտրեին ուժն ու ի յաղբկան
և ոչ կամայն խրատունն այնիւ, և կամայն՝ ներումն»: Այս հոդ-
վածի գոյությունն ապացուցում է, որ Կիլիկիայի հայկական պետու-
թյան մեջ բռնաբարությունը որպես ջրեական հանցագործություն
որոշ տարածում ստացած երևույթ է եղել և մեր կարծիքով զրանով
պետք է բացատրել օրենքով նախատեսված պատժի արտակարգ
զածանությունը:

Հայտնի է, որ Գուրանի ու Շարխաթի համաձայն մահմեդական
պետություններում բռնաբարության և ընդհանրապես ամուսնական
անհավատարմության ու սեռական էրցցեսների զեպրում մեղավոր-

Ներք պատժվում էին նույն այդ պատժով հեռացվում էին սեռական անդամները: Այդ նույն արարքների համար խստագույն մարմնապահ պատիժներ, նույնիսկ մահապատիժ էին նախատեսում Ան-հոսթերի, Արևելյան Եվրոպայի ֆեոդալական մի շարք պետություն-ների, բյուզանդական՝ դեռևս Իսափրյան կայսրերի ժամանակնե-րից գործող օրենքները: Մրանք պետություններ էին, որոնց հետ անտեսական, քաղաքական և կուլտուրական աշխույժ կապերի մեջ էր գտնվում Վրիլիյան Հայաստանը, և բացառված չէ, որ իր Գա-տաստանազդիբբը կազմելիս Սմբատ Սպարապետը, օգտագործելով զրանցից շատերի մեջ գործող պաշտոնական օրենքներն ու բարոյախոսական խրատները, օգտագործել է նաև այն օրենքների սանգրիաները, որոնք վերաբերում էին բռնադատության քրեական իրավական հետապնդման ու պատժելիության հարցին:

Պոռնիկություն: Սեռական բնույթի մյուս հանցագործությունը որի պատժելիության մասին քիչ իրավանքներ չկան հին և միջնա-գարյան հայ քրեական օրենքներում, դա այսպես կոչված պոռնիկո-թյունն է: Ասում ենք այսպես կոչված «պոռնիկություն», որովհետև ելված իրավանքներում չի բերվում այդ արարքի իրավաբանական բնույթի մասը, թեև բնօրենքում ձևով հասկացնել է տրվում, որ դա անասկություն է այս բառի նեղ, սահմանափակ իմաստով: Այդ արարքի մասին իրավաբանական և բարոյախոսական հարուստ նյու-թերք վկայում են, որ հին և միջնագարյան հայերի բարքերը այն-քան էլ անարատ չեն եղել, ինչպես փորձում են ներկայացնել կղե-րական և բուրժուական որոշ մասնագետն ու գործիչներ:

Այդ հանցագործության մեջ հատկապես մեղադրվել են հինց հույներականները: Եահայիվանի ժողովի կանոններում, որոնք հայ բարձրագույն հոգևորականների և աշխարհիկ իշխանավորների կողմից ընդունվել ու ժամանակին կիրառվել են Հայաստանում, մի ամբողջ շարք հոգվածներ կան, որոնք ոչ միայն բարոյապես են դատապարտում սանձարձակությունն ու պոռնիկությունը, այլև պահանջում են դրանց մեջ մերկացված պաշտոնյաներին, անգամ հոգևորականներին հեռացնել իրենց պաշտոններից ու ենթարկել ծանր ապաշխարության կամ մեծագումար սուղանքներին: Այլ կերպ ասած ելված կանոնները մարդկանց այդ արարքները համարում են ծանրագույն քրեական հանցագործություններ: Բերենք ժողովում ընդունված կանոններից մի քանի օրինակ. «Եթէ եպիսկոպոս որ գտրի ի պոռնիկեան կամ ի պոռնիկութեան կապ յինչև իցէ ի վաստիբը գործս և գառաքելական և զտորս ամբոն անարգեաց... և վկայու-

թեան ի յայտ եկեացէ, յաթոռոյն և յիշխանութենն մերժեացի և զքահանայութիւն մի պաշտեացէ, ԽՄ դրամ յեկեղեցի տուգանեացի և անձին իտրոյ լիցի մեղազորի: Չի մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ: և պոռնիկեան կարօտեաց բաշխեացեն» (հոգ. 1): «Եթէ քահանայ որ ի պոռնիկեան իցէ կամ ի պոռնիկութեան կամ յայլ վատխար գործս և վկայութեամբ իբրն ի յայտ եկիցեն՝ զքահանայութիւն մի պաշ-տեացէ Տ դրամ տուգանս տացէ, և յաղքատս բաշխեացեն, և նա ի զարաց կարգի կացցէ. Ապա թև և ի զպրութեան ի նոյն պոռնիկեան գտանիցի, ի կարգէն ելցէ և ի զպրութենէն, մինչև ի կարգ ուղղու-թեան եկեացէ ապաշխարութեամբ. . . Եթէ կրօնավոր երէց գտցի ի պոռնիկեան և ի պոռնիկութեան կամ յայլ գործս շարեաց և ստուգեալ վկայիք, քահանայութեն լուծի և յեկեղեցոյ բաժնն հեռացեալ լիցի, Տ դրամ տուգանս տացէ և ի կարօտեալս բաշխեացեն. Եթէ երեք, Եթէ սարկաւազ՝ կանոնս այդ կացցէ, և նորա ի կարգ զինուորութեան կացցեն և ի հարկս արքունի, և ընդ պաշտօնեայս մի խտանեացին: Ապա Եթէ կին երիցու կամ սարկաւազի ի շնութեան գտցին ընտրոյ նորա լիցին կամ զեկեղեցին և զքահանայութիւն ընտրեացին, կամ զկինն. Եթէ զքահանայութիւն սուցեն, զկինն ի սանէն ի բաց հան-ցեն և ապաշխարութիւն իխտս ի վերայ զիցեն: Ապա Եթէ զուստը լընտանեաց քահանայի ի պոռնիկութեան գտանիցի, եկեղեցոյ բաժ-նի մի՝ իշխեացէ, և ի քահանայական տանէն ի բաց ելցէ. և խիտա ապաշխարութիւն ի վերայ զիցեն և պատուհասս: Եվ որդոյն երեցու նոյն պատուհաս լիցի...» (հոգ. 2): նույն ոգով են կառուցված Եա-հայիվանի ժողովում ընդունված 3-րդ, 13-րդ, 14-րդ և մի քանի այլ կանոններ:

Պոռնիկության պատժելիության մասին հոգվածներ կան նաև Ստի. Գլիկի, Անիի և այլ եկեղեցական ժողովներում ընդունված, ինչպես և Հովման Մանդակունտ վերաբովոյց կանոններում:

Անցնենք առաջ և տեսնենք, թե ինչպես է պոռնիկության պատ-ժելիության հարցը լուծվում մեր դատաստանազրքերում: Դավիթ Ալավկա որդու մտտ մենք գտնում ենք երկու հոգվածներ, որոնք անմիջականորեն շոշափում են այդ հարցը: Դրանք 75-րդ և 50-րդ հոգվածներն են: 75-րդ հոգվածը պատժելի է հայտարարում միմ-յանց հետ աննվովդ երեք արարքներ. ա) ամուլ կնոջ կողմից այլ տղամարդու հետ սեռական հարաբերություն ունենալը, բ) տղա-մարդու կողմից պոռնիկությանը զբաղվելը և գ) կավտուրթյունը: Երեք արարքներն էլ Դավիթ Ալավկա որդու կողմից բարոյապես դատապարտվում և քրեորեն պատժելի են հայտարարվում: Ահա թե ինչ է սպվում այդ հոգվածում. «Այլ ոմանք ի կանանց, ամուլ զուլով-

գլխատնան յայն հանն և երթալ պոռնկին ընդ ատարսն: Թէ այնպիսին զղջացեալ ի շարեաց զոր գործեաց՝ մեծաբան ատարինու-
թեամբ ժամ ամ ապաշխարէ, նորնպէս և այլ իւր ներքինի զրով, ըստ
այն ամ աւրեակնի: զկուսութիւն իւր յապականութիւն ատարաց ծակէ,
նա և յարանց վատարբախօց, յայնցանէ զկանայս իւրեանց զկու-
սանս տան ի փորձ ատարաց: Եւ նն, որ յաղազս աղքատութեան և
զրեզրզութեան իւրեանց լինին տարուեր իբրև կատար ավտարաց
ի կանայս իւրեանց: Զայնպիսին շամբ և քարի: Հալածնացին և մի՛
թողցեն ի ժողովս քրիստոնէից, և կանայք նոցա մի՛ կացցեն և ամ
նոսա: Եւ իշխան է քահանայն կոչել յապաշխարութիւն՝ որպէս
կամի, արասցէ:

50-րդ Տողվածը, ի տարբերություն 75-րդ Տողվածի, նախա-
տեսում է պոռնկություն և դրան անընդոտ հանցագործությունների
մի ամբողջ շարք ևս, այդ թվում. ա) կույս աղջկա շնանալը ա-
մուսնացած տղայի հետ, բ) այրի կնոջ շնանալը ամուսնացած տը-
ղամարդու հետ, գ) միմյանց նկատմամբ ազգանցական կապ ու-
նեցող մարդկանց շնանալը, դ) սեփական հարսի կամ ջրուջ հետ
շնանալը, ե) հարազատ մոր կամ մորաքրոջ հետ կենակցելը և այլն:
Այս Տողվածով Փավլիթ Ալվիկա որդին ըստ երևույթին հետապնդել
է կոնկրետ օրինակների օգնությունը հարցն իր ամբողջական ձևով
լուսարանելու և մարդկանց զիտակցությունը հասցնելու ազնիվ նը-
պասակը:

Աբսուրդձված իրավաբանական ըմբռումներ, որոնք հատուկ
էին հետագա ժամանակներին, XII դարում համարյա զրոյություն
չունեին, և այդ պատճառով էլ հրատարակված քրեական օրենքները
իրենց վրա միշտ էլ կրում էին կոնկրետության կնիքը: Այդ բանը
զգալի է ինչպես բոլոր արդյունքներում, այնպես էլ Ալվիկա որդու
մոտ: Բերենք 50-րդ Տողվածի տեքստը. «Կույս ընդ կուսի շնայ՝
զինչ է պատժեն. նախ առաջին՝ կույսն կուսի հանդիպեցուցանել
հրաման է կանոնական: Ապա թէ յառաջ քան զմիտարինն կույս
ընդ կուսի շնայ, երեք և ամ ապաշխարեսցեն արտաքոյն եւ երկու՝ ի
ներքս և յես այնորիք ամուսնացուցեն զնոսա, ոչ զնելով պակս,
զի ապականեցին զկուսութիւն: Այլ զկոյս ամուսնացելոյ տալ ոչ
է արէն, ապա թէ հարկատրին տալ, կուսին պակս զիցեն՝ թէ այր
և թէ կին, իսկ ամուսնացելոյն՝ ոչ: Այլ ի սոցանէ թէ որ մեղաց շա-
ղախեալ իցէ, չէ պարտ զուզել զնա ընդ կուսի: Իսկ եթէ այրն և ա-
մուսնացեալ գտանի ի շնութեան, հինգ ամ արտաքոյն և երկու ի ներքս
ապաշխարէ. եւ զարիեակ ապաշխարութեան երիս կարգս սահմանել
ի սրբապահութիւն, երեք եւ ի տարջն: Այլ թէ երկու ամուսնանոր

շնանան. ավելիք եղիցի ապաշխարութիւն: Այլ ազգականի՝ ըստ
հետաորութեան և մերձաորութեան զանազանի ապաշխարութեանը:
Քանզի հարաքոյր և մարաքոյր հասարակ ըմին, նոյնպէս և ի նո-
ցանէ ծնունդին զկարգ ապաշխարութեան: Արդ, ծնունդ նոցա թէ
պոռնկին ընդ միմեանս՝ Թ ամ ապաշխարեսցեն: Իսկ եթէ ընդ հար
կամ ընդ մար քնս ժի ամ ապաշխարեսցեն: Իսկ այլ թէ ընդ քնս
որ մտարերիցէ, թե առ ի հարւ, եւ ի մարւ, թե երկուցոցն, միա-
պէս ունին սորայ, մինչեւ ցրտան ամ ապաշխարութիւն զիցեն:
Իսկ եթէ քսանամեայ կամ երեսունամեայ մեռիցէ, ի մարմնի հա-
ղորդեցի, ապա եթէ ի վեր կույս՝ լետին թաւալակին: Թէ յանճատան
զանեանս զանեանս կամ ի մարաքոյր, մինչ ի վարճանս զանեանս ար-
տարս կենաց իւրոց ի զոհնոցի ապաշխարեսցէ և յետին թաւալակին
թէ լիցի արժանի: Ապա թէ ընդ հարսին որ պոռնկի, այնպէս է թէ ի
քնս իւր պոռնկի, բայց ի կարգէն լերից մասունն զմինն պակսու-
ցուցեն: Իսկ որ ըստ ընդ նա իւր, մի՛ մերձեացի ի կին իւր մինչև
ապաշխարեսցէ, նոյնպէս և հարսն առ այր իւր: Բայց վարդապետը
իշխանք են կարճել զմասմանկն: Եթէ հրապարակու հանդիսացաւ
մեղքն, մեկնեցն զկինն յանի իւրմէ, այրն կին արասցէ, իսկ
կինն այլում մի՛ լիցի: Եթէ ընդ զորանչի շնայ, այնպես է կարգն,
որպէս ընդ մարտին, մասամբ միով պակաս: Եւ ի հրապարակելն՝
թողէ այրն զկին իւր: Իսկ եթէ ի ծածուկ ի կամս իւր է թողողն և
ոչն, բայց մի մերձեացի ի կին իւր սաանց ապաշխարութեանն:

Պոռնկություն և դրան անընդոտ զանազան հակաբարոյական,
այն ժամանակվա հասկացողությունը հանցավոր ճանաչված ա-
բարբեների քրեական-իրավական հետապնդման ու մեղազորնե-
րի պատժելիության հարցը չի անտեսվել նաև Մխիթար Գոշի
և Սմբատ Սպարապետի գաղտնասուզրբերում: Գոշի Վատաստա-
նազրբի առաջին մասի 19-րդ Տողվածում ստվում է, որ երբ անբա-
րոյական կյանքով ապրող տղամարդը կենակցում է ամուսնացած
կնոջ հետ, նա ենթարկվում է դատական պատժի: Չրեղունելով
մոլմեթոսական խիտ օրենքը, ըստ որի նշված արարքի մեջ մեղա-
վոր ճանաչված տղամարդը պետք է դատապարտվի մահապատժի,
Գոշը կանգնում է ավետարանում այդ իսկ հարցին վերաբերող խը-
բատական իրավանորմի վրա, որտեղ մատնանշված արարքի հա-
մար հիշատակված սանկցիան ավելի մեղմ պատժներ է նախա-
տեսում: Բերենք Տողվածի այն մասը, որտեղ շարադրված է մեղ
հետաքրքրող իրավանորմը. «Յորժամ յայտնի շար գործ շնացողաց

ընդ առնակնոց, վրէժ լիցի դատաստանաւ Եթէ կամօք և կույմաժք կնոջ իցէ. և եթէ լրբութեամբ առնն սղծի, մի անգամ եթէ բազում, և այսու եթէ պարտաւորի այլն վնասիչ, ըստ օրինացն (այսինքն ըստ մովսինական օրենքների, Ա.Թ.) մահու արժանի է, ալ ըստ անտարախն փրկանօք լիցի արևնն. Ընդ նմին հարցի և կամօք կնոջն և այլն: Այսպիսով, Միսիթար Պոչը վերջին հաշվով համաձայնվում է, որ հանցագործության մեջ մեղարարվող աղամարդը նեթարելի նյութական հատուցման կամ այլ պատիժների, բայց ոչ մահապատժի:

Մերտ Սպարապետի Գատաստանագրքը պոսեկության մեջ տեսնելով ավելի բարձր վտանգավորություն ներկայացնող հանցագործ արարք, զրա համար, ինչպես նաև սեռական մի քանի այլ հանցագործությունների համար ավելի խիստ պատիժներ է սահմանում: Եթե՞լ ումեք կին ի բողոթիս բնովի և կամ մարդ ցուլ առ ինքն,— ասվում է Գատաստանագրքի 72-րդ հոդվածի 17-րդ մասում,— նա պատե՛հ է սուտուսից քննի զճշմարտն՝ թէ կինն զցուլն է հարկել ու խարել, թէ ցուլն զկինն: Եւ թէ ցուլն զկինն լինի խորել ու բերել ի յայտոց տուն՝ նա յայս տեղօ արենքս զժար օսաստ է հրամայել, զի զրել է, որ մեռնի, կամ ի պակաս դժան կտրեն, առան թէ ի կահրա բան լինի այրել: Ապա թէ անայր կին լինի լել, և խոստացեալ լինայ թէ՛ պակավիմ ընդ քեզ, ու այնով լինայ խարել զկինն՝ նա ճարն է, որ պսակվի, ու եկ պսակվի նա տուժանք շարարի: Ապա թէ կինն լինի խարել զցուլն՝ նա խրատն ու մեծ քանակք ի կնկանն զեհն է. ու այրկանն կամար խրատվի կինն՝ ասի նորա ձեռն արժենայ, և այս քիթն լինի»: Այսպես էր պատժվում պոսեկությունն ըստ Մերտ Սպարապետի Գատաստանագրքի, բնց ուրում, կարելի է ենթադրել, որ պոսեկի կնոջ քիթն և անառակ աղամարդու սեռական անգամները կտրելը որպես պատժաստանների լայնորեն թույլատրվել են Բյուզանդիայում, Բասվրյան կայսրերի շրջանում: Այստեղ այդ պատժաստանակները կիրառվում էին ինչպես այլ հանցագործություններ կատարողների, այնպես էլ ընտանեկան անհավատարմության մեջ մերկացված ամուսինների նկատմամբ: Բացառված չէ, որ այդ պատժաստանակները Կիլիկիայի հայկական վաղաժողովյալ քրեական օրենսդրությանը նախատեսվել են հենց բյուզանդական օրենքների աղեցություններ, ինչպես այդ նկատում է Կարսթը իր մեռումենտալ աշխատություններից մեկի մեջ⁶⁰:

Արվամադուրյուն: Մեր հին և միջնադարյան էկեղեցական-կանոնական օրենքներում, ինչպես նաև աշխարհիկ օրենսդրական ակտերում բազմաթիվ իրավանքորմեր կան, որոնք վերաբերում են միմյանց հետ սերտորեն առնչվող երկու այլ, իրենց բնույթով գործարար սեռական կարգի հանցագործություններին (սեռանապղծության) պատժելիության հանդեպ: Այդ հանցագործությունները նախատեսված էին զեռես նիկիայի առաջին տիեզերական ժողովում ընդունված կանոններում, որոնք հետագայում մտցվեցին Հայոց կանոնագրքի մեջ: Այդ կանոններից 18-րդ կանոնը խոսում էր այն մասին, թե նրանք, ովքեր զրաղվում են արվամադուրյամբ, նույնն են ինչ որ անասնատուները: Կանոնը օրակես քրեական պատիժ սպաշխարանք էր նախատեսում թե՛ այն զեպքում, երբ նշված արարելիքի սուրբկետների զերում հանցես էին գալիս աշխարհիկ մարդիկ և թե՛ այն զեպքում, երբ այդ սուրբկետները կրեանվորներն էին:

Այս նույն բովանդակությամբ կրավանքորմեր կարելի է հանդիպել հայոց Հայրապետ ներսես կաթողիկոսի կանոններում (հոդ. 34), այսպես կոչված սուրբ հայրերից Քաղեսու Առաքյալի կանոններում (հոդ. 21, 24), Հնտեղո հայրերից Բարսեղ Մեծի վերագրվող կանոններում (հոդ. 2) և այլն: Սրանք բոլորն էլ նշված հանցագործությունների համար նախատեսում էին երկարամյա ապաշխարություն, իսկ առանձին զեպքերում էլ ավելի ծանր պատիժներ, այդ թվում անգամ մահապատիժ:

Գաղթից Այսպիս օրդու Կանոններում անասնամուրյան և արվամադուրյան մասին հիշատակվում են երկու հոդվածներում: 34-րդ հոդվածում մոթ կերպով ակնարկվում է զբանցից առաջինի, ինչպես նաև սրան առնչվող հակարարության այլ արարքների մասին և հանցագործությունը պատժելու են ապաշխարության 56-րդ հոդվածում նույն արարքների պատժելիության հարցը լուծվում է նույն ձևով. «Այլ վասն արուսպետաց և անասնագրտաց մի է բան,— ասվում է այնտեղ և շարունակվում է,— եթէ ի հնգանուններն նիցն գործեսցեն՝ ժե՛ւ մ ու ապաշխարացեն ի քսանամեկնցն՝ Ի ամ, երեսունամեկնցն՝ 1 ամ: Իսկ քան զայս ի վեր ժամանակն՝ մինչև ցար մահուն ապաշխարացեն և յեան թախալին մի՛ զրկեսցին: Իսկ ատարացն և ազգանոց առուելիքին միսպես անասնոցն, թէ ոչ շարն միսպես տեսնի Այաղագլխոցն և քուրդին զմի ունին քան: Իսկ սուրբ և անսուրբ անասնոցն շոյ զանազանութիւն. այլ զերկուստանն սպանանել հրամայեն արենքն, զի մի յիշատակ շար յալտեան մնացէ: Իսկ որք ոչ արկին ընդ խոստովանութեամբ և

⁶⁰ 84՝ J. Karst, Sempadscher Kodex, B. 11, 42 115-119:

կերանի մասը կամ ի կաթնե լանդեռու Գ ամ ապաշխարեցնել և ամանքն շարզեցնել: Ապա թէ դիտութեամբ կերան, ի բահանալու-
թիւն մէջ երկեացնել այսպիսիքն: Բայց վարդապետք իշխան են՝ որ-
պէս կամեն...»: Այստեղ արդեն, ինչպես տեսնուի ենք, այդ արարք-
ներն համար նախատեմովոյ պատճի՝ ապաշխարութեան ժամեկու-
ներն տեղորոշուելը շախազանց զգալի է և որոշ դեպքում ցմահ՝
կախոված անձի տարիքից, նրա զավանանքի բնույթից, ազգութիւն-
նից և այլն, իսկ անասնամուրոյն անմիջական առարկան կամ
օրէկկտը՝ կենդանիները, ոչնչացվում են:

Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերը
նույնպես մեկից ավելի անգամ հիշատակում են սեռական այց
հանցազործութիւնները՝ անասնամուրոյն և արվամուրոյն
պատժելիութեան մասին:

Այսպէս, Գոշի Գատաստանագրքի առաջին մասի 11-րդ հոդ-
վածք իրավունք է տալիս կնոջը ամուսնալուծվել և հեռանալ իր
ամուսնուց, եթէ վերջինս մերկացվում է ի թիվս այլ՝ նաև վերահիշ-
յալ կարգի արատավոր արարքների մէջ: Հոգվածը անասնամուր-
ոյն և արվամուրոյն զեպքում նախատեսում է ծանր ապաշխա-
րութիւն:

Սմբատ Սպարապետի Գատաստանագրքի 72-րդ հոգվածի
8-րդ մասը, իրեն հանցավոր արարք, հիշատակում է անասնամու-
րութիւնը և միայն ընդհանուր զօնրով՝ արվամուրոյնը: Ահա
այդ հոգվածի տառացի տեքստը. «Եւ թէ ծուռ բան այնէ այրն ընդ
կինն պղծագործութեամբ հետ այլ ումք, որ սուուրվի և թէ ընդ
անասուն մեղանէ. և թէ ի քրիստոնեութենէն ելին և ճշմարտի, որ
չլինի ըզօրդ ի հաստի, որպէս երբ սուուզեն, ու այլ ճար չկենայ՝
նա բաժնվի իրանաւ, և զկէս պտուզանց անուռ այն, որ բաժնվի: Ի
տարբերութիւն Գոշի Գատաստանագրքի համապատասխան
հոգվածի, այստեղ արարքների պատժելի լինելու մասին հիշատա-
կում չկա, թէև հոգվածի ընդհանուր տանից հասկացվում է, որ զը-
րանք պետք է որ գատասպարտելի համարված լինեն:

Գատաստանագրքերի մյուս հոգվածներում արդեն որոշակի է
վերահիշյալ արարքների քրեականորեն հետապնդելի, ուրեմն և
պատժելի լինելը: Մխիթար Գոշի Գատաստանագրքի առաջին մա-
սի 19-րդ հոգվածում մենք կարգում ենք. «Բայց այլք ի գատաու-
րաց արժան վարկան հատանել զատականս այրոցիկ, և զանասնա-
պղծի և զարուազիտի, այլ ներժ օրէնք զայդ իսկ զպատուհաս կա-
նոնական և փրկանօք: Եւ զորա լիցին եթէ հարկ ինչ իցէ գատաս-
տանի: Եթէ յայլազգեաց գատաւի և ընդ ձեռամբ մեր իցեն, հա-
-

տանելն իրավացի է: Նշանակում է Գոշը, նայելով հանցագործու-
թեան բնույթին և այն կատարողի զավանանքին, անասնամուրո-
ւթյան կամ արվամուրոյն համար որպէս քրեական պատժելի,
նախատեսում է փրկանք (տուգանք), գատական այլ պատժելի և
վերջիններիս թվում սիմվոլիկ թախտնի ձեռով՝ հանցագործի սեռա-
կան անզամենի հետացում:

Հարցի լուծումը մի փոքր այլ կերակ է ընդունում Սմբատ Սպա-
րապետի Գատաստանագրքում: Այստեղ Գոշի Գատաստանագրքի
վերահիշյալ հոգվածին համապատասխանող 72-րդ հոգվածի 7-րդ
մասում (պարբերութիւնում) հիշատակվում է միայն անասնամու-
րոյն մասին, թէև զրա համար նախատեսվում են հիմնականում
նույն այն պատժները՝ ինչ պատժներ որ նախատեսում էր Գոշը
արվամուրոյն ու անասնամուրոյն համար: Ընդհակառակ է թէ
ընդ անասուն բանն (տղամարդուն) կտրեն զերկուքն զձուքն և
զձեռն, և ապա կկերելցին տան որ քաւէ, կարգում ենք այդ հոգ-
վածում:

Մխիթար Գոշի Գատաստանագրքում կան երկու հոգվածներ ևս,
որոնց մէջ մեր իրավագետը գատարաններին, գատավորներին և
մյուս համասպատասխան հաստատութիւններին ու անձանց նորից
է պարտավորեցնում խիստ լինել արվամուրոյն ու անասնամու-
րոյն նկատմամբ ամեն անգամ, երբ հանգամանքների բերումով
զրւում են ամուսինների և նրանց գույշը բաժանման հետ կազմած
զանազան Տարցեր: Դրանք Գատաստանագրքի առաջին մասի 78-րդ
և 88-րդ հոգվածներն են, որոնց համապատասխանող իրավանոր-
մք մեզ անհայտ պատճառներով բացակայում են Սմբատ Սպա-
րապետի Գատաստանագրքում: 78-րդ հոգվածում այն մտքն է
անցկացվում, որ ամուսինը, երբ մեղադրվում է անասնապղծու-
թեան մէջ, նրա կինը իրավունք ունի տեսնուութիւնից իր բաժին
զուլքը վերցնել և հեռանալ, մինչդեռ ամուսինը նոր կին վերցնելու,
այսինքն ամուսնանալու իրավունք չունի:

Ավելի հետաքրքիր է 88-րդ հոգվածը, որի հիմքը Բարսեղ Մե-
ծին վերագրվող կանոններից 209-րդ կանոնն է: Հոգվածում գա-
տասպարտվում են ի թիվս այլ արարքների, նաև անասնամուրո-
ւթեան և արվամուրոյն մէջ մերկացվածները: Գոշը պահանջում է
ուրիշ պատժներին հետ մեկտեղ, նրանց նկատմամբ կիրառել նաև
զուլքի բանազրավում ու կեկողեցական ապաշխարութիւն: Բերենք
այդ հոգվածի զարարք տեքստը առանց կրճատումների. «Գին և
կամ այլ ցաւազին, կամ արտաձէտ, կամ արուազէտ, մի՛ իշխես-
ցին ամուսնանալ և անարգել զպսակն օրհնութեան, և եթէ որ

յաղգոյն, զկէս ընչիցն չիկեղցոյ տացն և երբ ամ ապաշարեսցնն: Եվ զայս յաղագս ծնկեղցն յախտս առ, զի նախ առողջսացն կամ Տոգելորաց-յաղագս աշխորիկ պարսպեցցին. արուազիտաց և անասնազիտաց-զի մի ի պատմեստս այնորիկ զապաշարութիւն մոռացին և զի միջոցօք ժամանակօք մարբնցին: Ահա աչսպես էին որակվում ու պատժվում անասնամարտիւնն ու արվամարտիւնը մեր միջնադարյան աշխարհիկ դատաստանագրքերում:

V. ՊԱՏՎԻ ԵՎ ԱՐԺԱՆԱԿԱՍՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՎԱԾ ԸՆԿՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ատմական ակնաղի: Մարդու պատիվը և արժանապատվությունը բերօրեն պաշտպանվել է հազարամյակներ շարունակ: Հակամարտ հասարակութիւններն պատմութեան ընթացքում այդ պաշտպանութիւնը կատարվել է որոշակի և կանխակալ ձևով: Տուժող պատիվն ու արժանապատվութիւնը պաշտպանվել են՝ նայելով նրա, ինչպես նաև հանցագործի դասային ու զասակարգային պատկանելութեանն ու հասարակական դիրքին: Այդ բանը մենք տեսնում ենք դեռևս Համաժողովրդի օրենսգրքում: Ըստ այդ օրենսգրքի, երբ որևէ մեկը սպառնում էր բարձր զինք ունեցող մեկ այլ անձի, նա հրապարակօրեն ենթարկվում էր զգան կաշուց պատրաստված մարտիկի 60 հարվածի (հոդ. 202), երբ ազատն էր ազատ մարդու նկատմամբ այդ արարքը կատարում, նա որպես հատուցագին վճարում էր մեկ միևն արծաթ (հոդ. 203), երբ ազատ արձակվածն էր կատարում ազատ արձակվածի նկատմամբ՝ վճարում էր տաս սիլվ արծաթի (հոդ. 204), իսկ երբ որևէ մեկի ստրուկը սպառնում էր ազատին, նա սպանվում էր կամ կտրվում էր նրա սկանչը (հոդ. 205):

Մարդու պատիվն ու արժանապատվությունը զասակարգային նկատառումներով պաշտպանվում էր նաև մովսրահական օրենքներում: Ինչ վերաբերում է հոռմեական իրավունքին, այս գործող նորմերն ուժով մարդկանց վիթխարի զուսպվածներ, առաջին հերթին ստրուկները բացարձակապես իրավազուրկ էին: Նրանք մարդ չէին համարվում, հոռմեական օրենքը նրանց զիտում էր որպես իր, ուստի մարդու կյանքը, անձնավորութիւնը և ընդհանրապես նրա պատիվն ու արժանապատվութիւնը պաշտպանող օրենքները ստրուկներին չէին վերաբերում: Նույն ոգով էր հարցը լուծվում

ճիշդպատկան, հունական և ստրիատորական մյուս պետութիւններին համապատասխան օրենքներում:

Մարդու պատիվ և արժանապատվութեան պաշտպանութեան հարցը համակողմանի կերպով դրվել է ֆեոդալիզմի օրոք: Ֆեոդալիզմի դարավոր պատմութեան ընթացքում այդ տիպի պետութիւններում հրատարակվել են հարյուրավոր դատաստանագրքեր և այլ օրենսդրական-իրավաբանական ակտեր: Ըձմարտութեան զեմ մեզանշած չենք լինի, եթե ասենք, որ դրանցից չկա և ոչ մեկը, որի մեջ դարձյալ զասակարգային դիրքորոշմամբ ու նպատակապատկասթեանք շղջափված լլկին անձի պատվի ու արժանապատվութեան քրահ-իրավական պաշտպանութեան հարցը: Այդ օրենքները պատվի և արժանապատվութեան զեմ ուղղված հանցագործութիւնները առանձին խտութեամբ են պատժել, երբ կատարողները եղել են ճորտերն ու մյուս իրավազուրկները, իսկ ստուժողները եղել են շահագործողներ և ընդհակառակը, շին պատժելով կամ անշափ մեղմ են պատժել, երբ կատարողները եղել են շահագործողները, իսկ ստուժողները՝ ճորտերն ու մյուս իրավազուրկները:

Վիրավորակ և զբարեառարյուն: Էին և միջնադարյան հայ օրենքներում նույնպես անձի պատվի և արժանապատվութեան քրահական-իրավական պաշտպանութեան մասին իրավանորմերը զգալի տեղ են զբաղում: Այդ իրավանորմերում նախատեսվում են թվ վերավորանքի և թվ զբարբառութեան հանցակազմերը և հետաքրքիրն այն է, որ հոգեորականներն, աշխարհիկ իշխանավորները, ծնողները պարճն ու արժանապատվութիւնը ավելի հետեւողական ու ավելի խիտս պատիժների սպանակիքով էր պաշտպանվում: Առանձին իրավանորմեր նվիրված էին առհասարակ զբարբառութեան ու վիրավորանքի պատժելութեան հարցին:

Դեռևս Կաստանզնուպոլսի 381 թ. կնկնդական-տիեզերական ժողովում ընդունված, հայերեն թարգմանված և Հայաստանում օրենք զարձած կանոններից մեկում խոսվում էր հոգեորականների պատվի իրավական պաշտպանութեան մասին: Ծառերը, ասված էր այդ կանոններից 6-րդ կանոնում, Էնկնցու բարեկարգութեան մեջ խոսովութիւն և զժողովութիւն զցելու ու ժողովրդի աշխին հոգեորականութեան պատիվը ոտնահարելու դիտավորութեամբ զանազան զբարբառական մեղադրանքներ են բարբում հոգեորականների վրա: Դրա առաջն անկիտ համար Կաստանզնուպոլսի սուրբ ժողովը որոշում է առանց բնութիւնն ոչ մի մեղադրանք իրավաքի չհամարել և ոչ էլ իրավունք տալ մեղազրկու եկնկնցու կառավարողներին, այսինքն հոգեորական իշխանավորներին: Այնուհետև շարտ

նակում է, որ Հերետիկոսները կողմից հարուցված մեղադրանքները չպետք է բնորոշվեն, իսկ Հերետիկոս Համարվում են նրանք, ովքեր վաղուց հնուցեղ են եկեղեցուց, ենթարկվել են նզովքի, ինչպես նաև նրանք, ովքեր արտաբուսա միջակա են Նավաստան, բայց առանձին ժողովներ են կազմում մեր կողմից կարգված եպիսկոպոսների դեմ: Ապաշխարության դատապարտված և պատժված անձինք չեն կարող մեղադրել եպիսկոպոսներին: Նման գանգառները պետք է ներկայացվեն տվյալ վայրի եպիսկոպոսական ժողովին և ապացուցվեն հարուցված մեղադրանքները: Եթե ժողովն ի վիճակի չեղավ խնդրի կարգադրել, այն ժամանակ գանգառը պետք ներկայացնել մի ավելի մեծ ժողովի: Մեղադրանքները լապացուցվելու դեպքում գանգառաբերները, որպես զրպարտիչներ, կենթարկվեն խիստ պատիժներին:

Հին Հայաստանում այսպիսի օրենք ընդունելն ու կիրառելը չի կարելի պատահականորեն համարել: Այդ օրենքի գոյությունը ապացուցում է, որ հոգևորականները պատմական Հայաստանում մատաչի մեջ մի առանձին հեղինակություն չեն վայելել: Հողերաբուկաններին «զրպարտողներ» թիվը շատ է եղել: Նրանց հեղինակությունը բարձրացնելու համար, տիրապետող հասարակական խավերը բազմաթիվ միջոցների են դիմել ու այդ միջոցների մեջ յուրահատուկ տեղ են զբաղել եկեղեցական-կանոնական և, ինչպես թե՛ հետո կանոններ, աշխարհիկ օրենքներում նախատեսված խիստ բրնական ուսուցանանքը:

Ասորա-հուռեական դատաստանազրքում կամ, այլ կերպ և զիտականորեն ավելի ճիշտ ասած, ներքևս Համբարձումը աշխարհական օրենքում, որը պատմական Նավաստի տվյալներով գործել է Կիլիկյան Հայաստանում մինչև Մմբուս Սպարապետի խառատանազրքի երևան գալը, նույնպես խոսվում է բանասրկության, այսինքն մարդու պատվի և արժանապատվության դեմ անպատեհ ձևով սոսնձություն կատարողներին քրեական պատասխանատվության կանչելու ու պատժելու մասին:

Ի տարբերություն Կոստանդնուպոլսի եկեղեցական տիեզերական ժողովի կանոնների, վերոհիշյալ Գրատաստանազրքում նշված արարքները համար անմարդկայնորեն անողոր պատիժներ են նախատեսվում՝ արտոր և նույնիսկ մահապատիժ: Ահա թե ինչ ենք կարգում նրա 119-րդ հոդվածում. «Մարդիկ որք լինին բանասրկույթ և փսփուք յառնենին և առ դատաստուր զչափ ստուրեան բանիցն, կշռեսցէ դատատուրն և ձգեսցէ զիտաս յարտորս և բաշլուռն ի հոցանէ ի մահ մատենին յարինաւր»: Այսպես էր անձի պատվի ու

արժանապատվության նկատմամբ սոսնձություն կատարողների պատժելիության հարցը լուծվում Մեծ Հայքում և Կիլիկյան Հայաստանում, մինչև մեր աշխարհիկ գոտատանազրքերի երևան գալը:

Գավիթ Ալավկա որդու Կանոններում, այսինքն հայ աշխարհիկ շեռուս առաջին հուշարձանում, ամենայն որոշակիությամբ զրվում է լուծվում էր այդ հարցը: Ծճարտությունը, սակայն, պահանջում էր անել, որ այդ ակտում տեղ գտած իրավանորմը (84-րդ հոդված) վերաբերում էր միայն մասնակի դեպքերի. ա) երբ անարգանք, այսինքն վիրավորանք հասցնելու միջոցով սոսնհարվում էր քահանայի պատիվն ու արժանապատվությունը և թ) երբ նույն արարքն ուղղվում էր սեփական ձեռողների՝ հոր և մոր պատվի ու արժանապատվության դեմ. «Այլ որ զբահանալ անարգէ, կամ թշնամանէ, կամ ապտակէ, այնպիսիքն խաշահանունսն համարին, որ զբախչ մեղացն և զազատիչն ի զոթիոց, զշճարիտ քահանայապետն զՔրիստոս, որ հանձնեա իտիսխանակ վասն մեր զխաչն և շար հատուցին ընդ բարչո նմա: Արդ, քահանայ զամենայն արինակ բարեացն Քրիստոսի յանձն իւրում բերէ վասն փրկութեան ժողովրդեանն: Զի նա է, որ պսակէ ի խորհուրդ Քրիստոսի և եկեղեցույ, նա մկրտէ և լուսավորէ Հուզովն Սրբով, նա է, որ հաղորդեցուցանէ կենաց հացին, նա է որ խաչին և անտարանական շնորհիվ և երգաւք հոգևորաւք յուզարկեայց այս կենացս յափտեմիցն. նւ յանցարտ կենացս յայտոսիկ մեզ ամենայն փրկութեան առիթ նա է, բարեխառնութիւն աւոցն, և պտղոց առատութիւն, և ամենայն հիւանդաց ի պէս-պէս ցաւոց առողջութիւն հայցի յԱստուծոյ... արդ, այս ամենայն բարեաց պարտոց զիտ'րը շար հատուցանող լինեն ապերախոքն: Արդ մի որ մտարկեալ ի թշնամանս քահանայանք, քան զի Աստուած է վրեժխնդր անպատուութեանն զի սալ' իմ է վրեժխնդրութիւն և նս խնդրեցից... Քանզի որ անարգէ զքահանայն, Աստուած անարգէ: Որպէս ասաց Տէր մեր աշակերտացն, որ ձեզ անարգէ, զիս անարգէ: Արդ, որ թշնամանէ զքահանայն, անարգող է Աստուծոյ. մի մնացէ յիշատակ նորս յափտեան... Արդ, որպէս վասն քահանայից է պատուիրանն, նոցնպես և վասն ծնաւազանն, քանզի և նորս երկրորդ Աստուածք կոչին, զի Աստուծոյ արարութեանն ի մերոյ զոյակցութեանն զորձակից են որպես մշակ (այսինքն որպէս Նայր, արարիչ, վաստակող, Ա. Թ.) և երկրի (այսինքն որպէս մայր, ծնող, Ա. Թ.):» Այսպես էր անձի պատվի և արժանապատվության պատժելիության հարցը լուծվում Գավիթ Ալավկա որդու Կանոններում:

Գավիթ Ալավկա որդու Կանոնների վերոհիշյալ հոդվածում նա-

խառնակում է հիմնականում միայն վիրավորանքի հանցագիշոր-
իք երկու կողմից տեսանկյունով: վիրավորանք խոսքով (սալլ որ...
անաքզև) և վիրավորանք գործողությամբ (սալլ որ... սպառկել):
հայց հողվածի կոնսերվացում գործածված «Քննամանկ» արտ («ալլ
որ... Քննամանկ») առում է, որ նրա հնդինակը մտք կերպով ահ-
նարկում է նաև զրպարտության մասին և պահանջում է, որ քահա-
նային ու ծնողներին զրպարտողները նույնպես պատժվեն: Այս մեր
կարծիքը հիմնավոր է թվում, որովհետև հայերեն «Քննամանկ»
բայը, ինչպես այս միակշարման ճիշտ կերպով նկատել է ակադե-
միկոս Սո. Մալխասյանը իր բացատրական բառարանում, նշանա-
կում է անարգել, վատարանել, անպատվություն անել, վիրավորել,
այսինքն վերջին հաշվով նաև ավարտել: Այն հանգամանք, որ
հողվածի բովանդակությունը շարախված է կրոնա-բարոյախոսա-
կան քարոզներով, որ այն շարախված է առ քահանան ու ծնողներն
ունեցած չքրմ խոսքերով, տվյալ դեպքում իրավաբանական առան-
ձին նշանակություն չունի և հարցի էություն մեզ քատ էություն որևէ
փոփոխություն չի մտցնում:

Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանազրբերում
մարդու պատվի և արժանապատվության րինա-իրավաբան պաշտ-
պանության հարցին վերաբերող թե ընդհանուր և թե առանձին,
կոնկրետ իրավանորմեր կան, որոնց մեջ նախատեսված հանցագոր-
ծություններին, ալլ կերպ սասծ վիրավորանքի ու զրպարտության
սուրբնկաները և օրենկաները ավելի որոշակի են: Այսպես, օրինակ,
Գոշի Գատաստանազրբի երկրորդ մասի 12-րդ հողվածը և Սմբատ
Սպարապետի Գատաստանազրբի 5-րդ հողվածն ավելի ընդհանուր
իրավանորմեր են: Գրանց մեջ խոսվում է ընդհանրապես նույն դա-
սին պատկանող մարդուն վիրավորանք հանցելու, նրա մորտը
քաշելու և փետելու մասին, արարք, որի համար թե մեկ և թե մյուս
դատաստանազրբերը խիստ պատիժներ են նախատեսում: «Եթե
կողմին արք և մին պատահի անկատար լինել և յանդգնեալ փետ-
տիքը գծորուս կատարելույն, դատաստան լիցի կրկին մատար
զհերան հատանել և զանի քատ արժանույն կսկծեցուցանել, մանա-
ւանդ զի զպատուար անարգեաց: Ապա թէ բուսազին և կամ պատ-
ուարու յանդգնեալն իցել, միոյ զգալույթանն տուգանի կէան լիցի
ի տուգան: Եւ այդ առ այդ լիցի, զի այլոց օրինակն ցուցեալ է
ի կուտոյ դատաստանաց: Այսպես է հարցը լուծվում Մխիթար Գոշի
Գատաստանազրբի երկրորդ մասի 12-րդ հողվածում:

Նույն ոգին տեսնում ենք Սմբատ Սպարապետի Գատաստանա-
զրբում: Այդ Գատաստանազրբի 5-րդ հողվածում խոսելով կռիվ ու

ծծկոտուրի մասին, միաժամանակ անողղակի կերպով նշում է
մարդուն հասցած վիրավորանքի ու զրա պատժելիության մասին:
«Եթե երկու մարդ չիրար անցնին ի ծծե և կամաթք մարդիք լինին՝
նա տուգանքն սակաւ լինի այնոր: Ապա թէ աւազ ու կրտսեր լինին,
նա վասն այնոր որ իրապիտ մարդ չէր ու լրքեցաւ՝ նա զնորս մազն
տալ փետել՝ ու շատ առնուե զտուգանքն»:

Երկու դատաստանազրբերում էլ առանձին հողվածներ կան
թագվորներին և իշխաններին վիրավորելու կամ զրպարտելու
դեպքում մեղավորներին խստորեն պատժելու անհրաժեշտության
մասին: Գրանք Մխիթար Գոշի Գատաստանազրբի երկրորդ մասի
18-րդ և Սմբատ Սպարապետի Գատաստանազրբի 18-րդ հողված-
ներն են: Գոշի Գատաստանազրբի երկրորդ մասի 18-րդ հողվածն իր
ձեքում զնելով կղերական բնույթի կղեմի ստաքիական կողմն
կանոնների 78-րդ կանոնը, առում է. «Եթե որ թշնամանեցել զժա-
զուրս և զիշխանն անիրաւարս, պատուտա կրեսցել — Եթէ ժա-
նուսգաւոր է լուծցի, Եթէ ժողովրդական՝ որոշեցի: Այսպես հարցը
լուծելով, Գոշը, զրա հետ միասին, պարավորեցնում է, որ նման
գործերը հանձնվին եպիսկոպոսներին և վարդապետներին քննությանը,
որքանով որ թագվորներն ու իշխանները աստծու պատկերներն են:
Եթե վիրավորողը կամ զրպարտողը հողեղական է, նա պետք է
զրկվի իր կոշուծից, իսկ Եթե աշխարհական մարդ է, պետք է են-
թարկվի սպաշխարանի ու այդ պատիժը կրի այնքան ժամանակ,
քանի կատարված արարքի համար ինքը չի զղչացել. «Եւ զայս
դատաստան դատել կպիսկոպոսաց և վարդապետաց է, զի պատկեր
են Աստուծոյ թագաւորք և իշխանք: Եթէ անարգողն իցել ժառան-
գաւոր՝ իրաւացի է լուծանել, և զաշխարհական որ որոշել մինչև
զղչացի: Եւ այդ հատատի այժմ: Այսպես էր Գոշը հետապնդում
ու պատժում այն բուրդ զեպերը, իր օրենքությունը կր կատարվում
թագվորների և իշխանների պատվի ու արժանապատվության դեմ:

Մխիթար Գոշի Գատաստանազրբի մատնանշված հողվածի
սկզբունքները մենք տեսնում ենք Սմբատ Սպարապետի Գատաս-
տանազրբի 19-րդ հողվածում: «Եթե որ վասն թագաւորի անպատեհ
կամ անարժան խաւոր ասէ՝ և կամ վասն իշխանի կամ մտեղ, նա
պատեհ է յառաջ ի եկեղեցին դատաստել: նա թէ լզայ լաւցնի զիբ
խաւորն, նա թէ կարգաւոր լինի՝ նա ձգուի և կարգէն և վարուի յա-
մէն երկրէն, և թէ աշխարհական լինի՝ նա համալորեն Կիւրքն և քա-
նազրած վարեն: ու թէ բանն մեծ լինի՝ նա սազայ տան ի վերայ
իրացին: Այս հողվածից պարզ կերպով նկատվում է, որ Կիւրկյան
Հայաստանում նույնպես քրեական օրենքները անտարբեր չէին այն

քույր զնպքերում, երբ Յագավորների կամ իշխանների պատվի ու արժանապատվության զեմ այս կամ այն ոտնձգությունն էր կատարվում: Այդ Նողվածում նախատեսված խիստ պատժներով կարգավորությունը, երկարամյա ապաշխարությունը, արտաքրումը, արքայը, տուգանքը և այլն, մեր ասածը հիմնավորող փայլուն և անժխտելի ապացույցներ են, որոնք միատեղանակ վկայում են այդ Գառաստանագրքի դասակարգային բնույթի մասին:

Գառաստանագրքերը քրեական պատիժների կիրառման սպառնալիքով հետեղականորեն պաշտպանում են նաև Նողերականների պատիվն ու արժանապատվությունը: Գոչի Գառաստանագրքի առաջին մասի 4-րդ Նողվածում այն միտքն է զարգացվում, որ կառնադարձական իր քահանային խոսքով վիրավորում կամ հանդուրձանքար հարվածում է, նրա ձեռքերը պետք է կտրվեն, բայց եթև հանցագործը խորը զղջանքով ձեկի է դալիս և խնդրում իրեն ներել ու ենթարկել ապաշխարության, այդ զեպքում նրան ներում են և ենթարկում եկեղեցական ապաշխարության: Գառաստանագրքի երկրորդ մասի 15-րդ Նողվածում Գոչը նորից է անդրադառնում քահանաներին վիրավորող անձանց պատժելիության հարցին, ընդ որում այս անգամ նա հենվում է քաղերկական կանոնների վրա՝ «Կարգեցին առաքելայն և եղին հաստատութեամբ՝ եթէ մի՛ որ անարգեսցէ և անգոսնեսցէ և արհամարհանօք կայցի զքահանայն թէ և կարի որ յանարգաց իցէ, դիտեսցէ զի վկստուած անարգէ, զի Աստուծոյ սպասար է ձեզ ի բարիս և համար տացնն ընդ ողոց ձեռոց, զի զբեալ է դիշխան ժողովրդեան քո մի՛ բամբասեսցես: Եվ զայս գառաստան և որ նախորն զեա երբեմն թէ և սակա ինչ զբրեցոք (Նեղինակը հավանաբար անխարկում է իր Գառաստանագրքի առաջին մասի 4-րդ Նողվածը, Ա. Թ.), այլ երկրորդը յժայռեցաք այժմ յառաքելական կանոնաց՝ ցուցանելոյ ազգաս զմեծութիւն պատժոցն անարգողաց քահանայից, զի դատել զոչը է զեռես ընդ աստուածանարգս իրաւացի գառաստանաւ, բոս այնմ՝ որ զձեզ անարգէ զիս անարգէ»: Ահա այսպես խիստ էր Գոչի Գառաստանագրքը այն զնպքում, երբ ոտնձգություն էր կատարվում քահանայի պատվին ու արժանապատվության զեմ:

Նրանից ետ չէր մնում Սմբատ Սպարապետի Գառաստանագիրքը: Սա իր 50-րդ Նողվածում ազդարարում էր, որ եթև կոխկ կամ վնաս առաքան և աշխարհիկ որեւէ մարդ հանդոցի վիրավորանք տացնել (բռշաել) քահանային, նրա ձեռքերը պետք է կտրվեն, բայց եթև այդ մարդը ներքնապես զղջա և ներումն խնդրի, ապա եպիսկոպոսը պարտավոր է նրան դատապարտել ապաշխարության:

Գառաստանագրքի 9-րդ Նողվածում Սպարապետը էլ ավելի կտրուկ կերպով է հարցը դնում. «Ջրահանայ թէ որ անարգէ կամ ժեծ՝ նա վկստուած կու անարգէ. զի Քրիստոս հրամայեց թէ որ զձեզ անարգէ՛ զիս անարգէ. և այնպէս տուժէ զէդ աստուածանարգ»: Երկու գառաստանագրքերն էլ անողոք էին մանավանդ այն զիպքում, երբ Նորը կամ մորը բամբասում, այսինքն նրանց զրպարտում էին սեփական զավակները: Միխիթար Գոչի Գառաստանագիրքը զավակների կողմից կատարվող այդ արարքը պատժում էր այնպես, ինչպես պատժում էր Նորը կամ մորը ձեծողի, նրանց զեմ ձեռք բարձրացնող զավակի արարքը, այսինքն պատժում էր մարմննեղն խիստ պատիժներով կամ ծառանեթությունից զրկելով, իսկ Սմբատ Սպարապետի Գառաստանագիրքը զամար որդ զնպքերում նախատեսում էր նուշնիակ մահապատիժ: Բերում եմ Գոչի Գառաստանագրքի և Սպարապետի Գառաստանագրքի համապատասխան Նողվածների կոտեքստերը, որոնց մէջ այդ արարքը ուղղակի կերպով նախանշվում էր. «Որ բամբաս զհայր իր կամ զքմայր իր, մահու մեռցի», ասում է Գոչն իր Գառաստանագրքի երկրորդ մասի 25-րդ Նողվածում, զրանով իսկ վկայանդնելով մովսիսական օրենքը (Յից, ԹԼ 17, Ղեապցոց, Ի 9) և Ավետարանը (Մատթեոսի, ԺԾ 4), ու շարունակում. «Ջայտնի բամբասուցս և յանցանս ձեռոզնց հրապարակողաց զմահու մեռանիլն ասէ, այլ բոս մեզ՝ գառաստանաց հարկանողաց զմեռոսն լիցի, որպէս ցուցնայն է», վերջացնում է Գոչը իր միտքը, ակնդրելով իր իսկ Գառաստանագրքի այն Նողվածը (երկրորդ մասի 23-րդ Նողված), որը նախատեսում էր զավակների կողմից հարազատ ձեռողներին ձեծելու կամ ընդհանրապէս նրանց նկատմամբ բռնություն գործադրելու զեպքերը:

Հետեւելով Գոչին, Սմբատ Սպարապետն իր Գառաստանագրքի 87 bis Նողվածում ասում է. «Կու հրամայէ Մովսէս Աստուծոյ բրկանովն՝ թէ որ քշտէ հարն և իր մարը, նա մեռանի, կամ անարգէ կամ բամբասէ՝ մեռցի. քալէլ թէ տղայիկ լինի, հայնց որ իսկի շքգիտեան թէ ինչ արքա, և իր ծնաւոցն և իր ծնաւոցն և որ տեսանն յամստունն ընդ սգալու թեկէ, թէ չէ, որ ի զարարու գառաստանն էլ ենն ծնաւոցն՝ նա անհար է իրաւաք մեռնի»: Ինչպես տեսնում ենք, ծնողների նկատմամբ բռնություն գործադրողների, նրանց վիրավորողների ու զրպարտողների պատժելիության հարցում Սպարապետի Գառաստանագիրքը, Գոչի Գառաստանագրքի համեմատությամբ, ավելի խիստ պատիժներ էր ասհմանում:

Ուշագրկաւ են Գառաստանագրքի այն առանձին Նողվածները, որոնք հարկանողաց զմեռոսն լիցի, որպէս ցուցնայն է, վերջացնում է Գոչը իր միտքը, ակնդրելով իր իսկ Գառաստանագրքի այն Նողվածը (երկրորդ մասի 23-րդ Նողված), որը նախատեսում էր զավակների կողմից հարազատ ձեռողներին ձեծելու կամ ընդհանրապէս նրանց նկատմամբ բռնություն գործադրելու զեպքերը:

Հետեւելով Գոչին, Սմբատ Սպարապետն իր Գառաստանագրքի 87 bis Նողվածում ասում է. «Կու հրամայէ Մովսէս Աստուծոյ բրկանովն՝ թէ որ քշտէ հարն և իր մարը, նա մեռանի, կամ անարգէ կամ բամբասէ՝ մեռցի. քալէլ թէ տղայիկ լինի, հայնց որ իսկի շքգիտեան թէ ինչ արքա, և իր ծնաւոցն և իր ծնաւոցն և որ տեսանն յամստունն ընդ սգալու թեկէ, թէ չէ, որ ի զարարու գառաստանն էլ ենն ծնաւոցն՝ նա անհար է իրաւաք մեռնի»: Ինչպես տեսնում ենք, ծնողների նկատմամբ բռնություն գործադրողների, նրանց վիրավորողների ու զրպարտողների պատժելիության հարցում Սպարապետի Գառաստանագիրքը, Գոչի Գառաստանագրքի համեմատությամբ, ավելի խիստ պատիժներ էր ասհմանում:

Ուշագրկաւ են Գառաստանագրքի այն առանձին Նողվածները,

որոնք վերաբերում են կանանց պատվի և արժանապատիւնի մասին քրեա-իրավական պաշտպանութան հարցին, երբ ոսնծորդները դերում հանդես էին գալիս այդ նույն կանանց ամուսինները; Վերջիններս օրենքի համաձայն պատժվում և նրանց վարքագիծը դատապարտվում էր, երբ նրանք զրպարտում էին սեփական կանանց՝ մեղադրելով կուսութան խախտման մեջ: Ահա թե ինչ ենք կարգում Միխիլար Քոչի Գատաստանագրքի առաջին մասի 21-րդ հոդվածում, որի հիմքը որոշակի իմաստով և հայտնի սահմաններում հանդիսանում է մովսիսական օրենքը (Նրկրորդ օրինաց, ԻԲ 14—21): «Եթէ որ առնուցս կին և ասիցէ և ստովիւմար բամբարօցէ ոչ լինել կույս, խոստովանութեամբ ոչ զարեւակ իւրեանց և այլց կանանց պատովանութիւնս, խրատեսցի այնք գանիւ և տուժիցի հարիւր սիկղ ըստ օրինացն համամատեալ ընդ մերս: Եւ նորին լիցի կինն և մի՛ արձակիցէ զամենայն ժամանակս: Ապա թէ Էջմարիտ իցէ բանն և ոչ գտցին կուսութիւնք ազգիանն, մահ՛ ըստ օրինացն (այսինքն ըստ մովսիսական օրենքների, Ա. Թ.) և առ միկ լիցի լուսն արձակել իթէ կամիցի և պահել իթէ հաճոյիցէ, և ո՛չ հրապարակիցէ, զի բազում ինչ վրիպանք զործի կուսից և զի ոչ ի տան անն եղև անազրովիւն...»: Այստեղ, ինչպես տեսնում ենք, զրպարտել ամուսինը պատժվում է մարմնական պատիժներով և հօգուտ պետութան կամ եկեղեցու բռնազանձվող զգալի դուժարային մեծութան հասնող սուզանքով: Եման ամուսնու նկատմամբ սուլված, ըստ լուսնին քրեական-վարչական պատիժներ կիրառելու անհրաժեշտութիւն մասին կարգում ենք Քոչի Գատաստանագրքի առաջին մասի 94-րդ հոդվածում, որին համապատասխանող իրավանքում Ամբաս Սպարապետի Գատաստանագրքում, որքան մեղ հայտնի է, բացակայում է: Այս հոդվածում նշված է. «Եթէ որ կին արար և անուլ պատահաց և այլն հանցէ վասն ամուսինան, որ ինչ կնոջն կարասի բերեալ է ի տունն՝ թէ՛ ազգսին, թէ՛ անասուն, եթէ՛ հանդերձ, եթէ՛ արծաթ, առնուլ իշխեսցէ և գնալ: Եւ թէ քան վաստովիւնն այլ ինչ արատ չուցէ ի կինն, սուզու ևս անաղ կնոջն ամազորանացն—թէ ազատ է՝ հազար երկու հարիւր դրամ, և թէ շինական՝ վեց հարիւր դրամ...»: Ահա Քոչի Գատաստանագրքի այն իրավանքում, որոնք վերաբերում էին կնոջը զրպարտելու կամ նրան վիրավորելու պատժելիութեան հարցին, երբ հանցագործութեան սուբյեկտների զօրում հանդես էին գալիս ամուսինները:

Ամբաս Սպարապետը մեղ հետաքրքրող հարցին նվիրել է իր Գատաստանագրքի 74-րդ հոդվածը: Այդ հոդվածի համաձայն կուսութան խախտման հարցում սեփական կնոջ զրպարտող ամուսինը

պատժվում էր նույն այն պատիժներով, ինչ տեսանք Միխիլար Քոչի մոտ (մարմնական պատիժներ և տուգանք): Բայց Սպարապետի մոտ նկատվում է մի էական տարբերություն: Հակառակ Քոչի Գատաստանագրքի առաջին մասի 21-րդ հոդվածի օրինադրույթներին պահանջի, անտեղ բնագործվող սուգանքը տրվում է կնոջ ազգականներին որպես հատուցում այն բանի համար, որ կնոջը զրպարտելով, հանցագործը կարծես թէ միաժամանակ զրպարտում է նաև նրա հարազատներին՝ ազգականներին ու բարեկամներին: Միխիլար Քոչի նման Ամբաս Սպարապետը նույնպես, եթե կինն է մեղավոր, նրա նկատմամբ խիտ պատիժներ էր նախատեսում. «Եթէ որ առէ զկինն, և առ թէ՛ շղատչ զինք կույս, և վկայնով սուտ էլնէ այն՝ նա ծնծեն կուսու վասն կնոջն քաշանցն, և սայլ կնկանն ազգին հարիւր դրամ տուգանք, և այլվայ զկնիկն անուտ: Ապա թէ իրաւ լիցի այրիկըն՝ նա արկնքն (այսինքն մովսիսական օրենքը, Ա. Թ.) զմահ՛ կուս հրատալէ՛ ազգիանն: Բայց մենք եկեղեցականք ներկող զրամբներն կուսնունք պատահ՛, և զաղջիկն իր ազգ թող գիտնանա: Բայց թէ կարէ զատատուր ծածկել ու՛ հաշտեցնել՝ նա իր կամ է. և թէ ոչ՛ թողու, և իր այլ կին անուտ, և զայն ազգն այննն զինչ ուզենա: Ինչպես տեսնում ենք, որոնք նայտեղ հետաքրքր է համարում ամուսինների հաշտեցում:

Տայով աշխատութան այս զլիթ բովանդակութեան ընդհանուր ամփոփումը, պետք է ասել, որ հին և միջնադարյան հայ իրավունքի բուրյաձանների իրավանքներում փաստորեն նախատեսվում է մարդը այն հանցագործությունները, որոնք ուղղվում էին մարդու կյանքի, առողջության, սեռական անձնանվիրելիության, պատվի ու արժանապատիւնի վնասում: Այս փաստը ինքնբարտիբյան վերքրած մի ավելորդ անգամ խոսում ու վկայում է այն մասին, որ հին ու միջնադարյան հայերը սեփական երկրում զուսակարգային կայուն օրինակներով յուն և իրավակարգ ստեղծելու գործում ամենեկին էլ անշնչուհի ու անձններեց մարդիկ չեն եղել, ինչպես այդ փորձում են ապացուցել բուրժուական արևմուտքի որոշ գիտնականներ: Վերջիններս հայ իրավունքի միանգամայն համապարփակ այդ հուշարձանների մեջ ինքնուրույն ոչինչ չեն ուզում տեսնել կամ թէ միտումնավոր կերպով այդ հուշարձանները համարում են մովսիսական օրենքներից, օտարերկրյա զանազան օրենսդրական ակտերից, կանոնական իրավունքի հուշարձաններից կատարված սուլորակն ծաղկաբույսի և ուրիշ ոչինչ: Այդպես են իրենց աշխատությունների մեջ հարցը դնում Բիշոֆը, Կաստը, Կոչլերը և ուրիշները:

ԳՈՒՅՔԱՅԻՆ ԼԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատմական ակնարկ: Արտագրության գործիքների և միջոցների մասնավոր սեփականության վրա հիմնված հասարակությունների մեջ գոյություն ունեցող հանցագործությունների դեմ տարվող քրեա-իրավական պայքարը միշտ էլ դաժան ու անողոր ընդդեմ ունեցել է: Այդ սեփականությունն իրենց ձեռքը կենտրոնացրած հասարակական խավերը համապատասխան օրենքների կիրառմամբ ամենախիստ պատիժներով պատժել ու ահաբեկել են բոլոր նրանց, սվքեր այս կամ այն կերպ ոտնձգել կամ փորձել են ոտնձգել մասնավոր սեփականության դեմ, սասանել զրա «բարոյագտության» և «սոնձնանխելության» «հավիտենական» սկզբունքները: Բայց հարցը միայն խիստ պատիժների կիրառումով չի լուծվել: Հասարակական լայն խավերի շրջանում այդ սեփականության նկատմամբ «բարոյական երկյուղածություն» ու «հարգանք» առաջացնելու և արմատախորհու հատուկ նպատակով շահագործողները դիմել են անզամ աստվածների ու սրբերի օգնությանը: Աստվածաշնչում, ավետարաններում, Ղուրանում, ավետարաններում և կրոնա-բարոյախոսական բնույթի այլ բազմաթիվ գրքերում մասնավոր սեփականությունը բարոյախոսական խրատներով պաշտպանվում էր ճիշտ նույնպիսի հաշտություններ, ինչպիսի հաշտություններն էին պաշտպանվում էր աշխարհիկ ու կանոնական ճիշտակն ու քաղաքացիական խիստ օրենքներով: Միևնույն ժամանակ ճիշտ է նկատել Պոլ Լաֆարը, թե մարդկանց մեջ մասնավոր սեփականության նկատմամբ հարգանք ներշնչելու համար պահանջվում է աստվածների և օրենքի ամրոցը հեղինակությունը⁶¹: Սակայն սա հարցի միայն մի կողմն է:

⁶¹ Տե՛ս Ս. Լաֆար, Происхождение и развитие собственности, М., 1925, էջ 63:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ սեփականության համար մարդկային հասարակության պատմության մեջ արյան գե-տեր են հասել: Հանուն զրա ծանրագույն ոճրագործություններ են կատարվել: Միլիոնավոր մարդկանց արյունն է թափվել, և նրանց մահաստուտ կմախքներն են փռվել այն ճանապարհներին, որոնցով ընթացել է ուրիշ աշխատանքի շահագործման վրա հիմնված մասնավոր սեփականության կազմավորման ու զարգացման պատմական պրոցեսը: Այս բանը նկատվում է թե՛ ստրկատիրական, թե՛ ֆեոդալական և թե՛ բուրժուական կարգերում: Ֆ. Էնգելսը մի առիթով գրում է, թե հին Հռոմում սկսած Տիրերիտից մինչև ներքև ստվարական երևույթ էր զարմել այն, որ հարուստ հռոմեացիները զատապարտվում էին մահապատժի միայն նրա համար, որպեսզի հետբավոր դատնուր անարգել կերպով բռնախելու և յուրացնելու նըրանց գույքը⁶²: Ֆեոդալական կարգերի օրոք բոլոր երկրներում անխրտիր օրինականացված էր ուժեղի իրավունքը՝ ջախջախելու իրենից թուլին և զրանով իսկ սեր դատնուր նրա սեփականությունը:

Բուրժուական հասարակության հիմքը կապիտալիստական մասնավոր սեփականությունն է, աշխարհ վերջին հաշվով կապիտալը, որն աշխարհ զավոյ իր գոյությանը բնագունակ է զստնում ամեն մի ոճրագործության. «Ե՛թե փողը, — հենվելով և հետևելով Օժենյե ատում է Կ. Մարքսը, — աշխարհ է գալիս մի աշտի վրա արյան բնական բիծ ունենալով, այդ նորածին կապիտալի բոլոր ծախսիներին, օտից մինչև զլուխ, արյուն ու կեղտ է հոսում»⁶³: «Կապիտալը, — կարգում ենք մենք Տ. Գյունդինգի մոտ, — խուսափում է աղմուկից ու կոպից և երկուր բնավորություն ունի: Այդ ճիշտ է, բայց այդ զեռ ամբողջ ճշմարտությունը չէ: Կապիտալը վախենում է շահույթի բացակայությունից կամ շատ փոքր շահույթից, ինչպես շնույթունը վախենում է զատարկությունից: Բայց նրա ակալ է բավականաչափ շահույթը, կապիտալը համարձակ է դառնում: Տասր տոկոսն ակալաժեղքն և կապիտալը համաձայն է կիրառման: Ըստն տոկոսի զեղքում նա աշխուժանում է. հիսուն տոկոսի զոպրում նա զրականապես պատրաստ է ամեն մի հանդիգություն: Հարյուր տոկոսի զեղքում նա ոտնասակ է տալիս մարդկային բոլոր օրենքները. երեք հարյուր տոկոսի զեղքում զկա մի ոճիր, որ զործելու իրակ շանի նա, թեկուզ նրան կախաղանի վտանգ սպառնալիս լինի: Եթե

⁶² Տե՛ս К. Маркс и Фр. Энгельс, Соч., т. 15, էջ 606—607:
⁶³ Կ. Մարքս, Կապիտալ, Կ. 1, Հայտնատրոս, Երևան, 1954, էջ 793—794:

անգուճակ ու կոկոր շահույթի են բերում, կապիտալը կսկի նպաստը
ի՞նչ մեկին, ի՞նչ մյուսին: Ապացույց՝ մարտասնկությունը ու ստրկա-
վաճառությունը»⁶⁴, Այսպիսի իրագրությունների մեջ է զարգացել
մարտու կողմից մարզու շահագործման վրա հիմնված մասնավոր
սեփականությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը՝ կա-
պիտալիզմի անկման ու սոցիալիզմի ու կոմունիզմի հաղթական եր-
թի ժամանակաշրջանը:

Իմպերիալիզմի դարաշրջանում նույնպես կապիտալիստական
հասարակության հիմքը ու պաշտոնումները օրջեկտը մարզու շահա-
գործման վրա հիմնված բուրժուական մասնավոր սեփականությունը-
ներն է: Ինչպես միշտ, այդ սեփականության շահանիշն ու համար-
ժեքը մնում է զեղին սատանան՝ ոսկին, հանուն որի, այսինքն վերջի-
նի հաշվով հանուն մասնավոր սեփականության ու սրտ տերերի,
միայն առաջին և երկրորդ աշխարհամարտերի ժամանակ տասնյակ
միլիոնավոր մարդիկ զոհվեցին ու հեկատոմբեր բարձրացան բազում
երկրների արյունոտ ճանապարհներին: Այդ աճավոր անցյալը աշ-
խատավոր մարզու համար ավելի իմաստակա ու բովանդակալից են
գարձնում մեծ կենիի խոսքերը. «Երբ մենք հողիներ համաշխար-
հային մասշտաբով... ոսկուց հանրային գույարաններ կշինենք աշ-
խարհի մի քանի ամենամեծ քաղաքներ փողոցներում: Այդ կլինի
ոսկու ամենից «արդարացի» ու ակնաուռ-խրատական գործածու-
թյունն այն սերունդների համար, որոնք չեն մոռացել, թե ինչպես
ոսկու համար տասը միլիոն մարդ կտորվեցին ու երեսուն միլիոն
մարդ հաշմանդամ արին 1914—1918 թվականների «սպառազու-
կան մեծ» պատերազմում...»⁶⁵:

Քրեական իրավունքի հազարամյա պատմության ընթացքում
շահագործողական բուրք ֆորմացիաներում և բոլոր նրկներում
բազմապիսի օրենքներ են շրայարակվել մասնավոր սեփականու-
թյան այս կամ այն կոնկրետ ձևը հանցավոր ոտնձգություններից
պաշտպանելու համար: Համմուրաբիի օրենսգրքը մահապատժով
կամ ժանրազույն մարմնական պատիժներով էր պատժում այնպիսի
արարքներ, ինչպիսիք էին տանգրաների կամ պալանտերի պատ-
կանուղ գույքի զողությունը, եզան, ոչխարի, խոզի, մականյի զողու-
թյունը՝ անկախ այն բանից, թե ումն էին պատկանում դրանք՝ տա-
ճարին, պալատին, թե անհատ անձանց (հոգ. 6, 8): Առանձին խըս-

տությունը հետազոտվում էին ստրուկի զողանալը կամ փախած
ստրուկին ապաստան աալը (հոգ. 15,26): Հետազոտվում էին, մյու-
շայտե, կողողուտն ու զրան հանցակեցի (հոգ. 22—23) և այլն:
Ուշագրավն այն էր, որ օրենսգրքի մի շարք հողվածների համաձայն
ստրուկին զողանալը նույնիսկ ավելի խիստ էր պատժվում, քան
նրան սպանելը, որովհետև ստրուկը որպես սեփականություն կազ-
մող իր կամ առարկա օրենքի աշրում ավելի բարձր արժեք էր ներ-
կայացնում, քան որպես մարդ:

Գույքային հանցագործությունների նկատմամբ աստարբեր չէին
նաև մովստակն ու հոտնեկան օրենքները: Մրանք նախատեսում
էին ուրիշի գույքի զողության, կողպուտի և ավազակային հարձակ-
մամբ այն ձևեր բերելու, այդ գույքը ոչնչացնելու, յուրացնելու հան-
ցակազմեր, թեև միշտ չէր, որ զրան այդ արարքների համար պե-
տական պատիժներ էին նշանակում: Հոտնեկան օրենքները, օրի-
նակ, որոշ շրջանում իրավունք էին տալիս պարտատիրոջ անար-
գել կրկնով որպես ստրուկ վաճառելու, անգամ սպանելու Հոտի
այն քաղաքացուն, որը համարվում էր իր պարտքը վճարել կամ
նույնիսկ հրաժարվում էր ժամանակին վճարել:

Առանձնապես անոգոք էին ֆեոդալական պետությունների
օրենքները: Բարբարոսական պրավաունքը գույքային շատ հանցա-
տրուկությունների համար մահապատիժ էին նախատեսում, ընտա-
կան պրավաունքում՝ թեև այդ պատիժը ուղղակի կրկնով չէր նախա-
տեսվում, սակայն ժամանակաշրջանի բազմաթիվ զրողներն ու ճա-
նապարհորդները պատժում են, որ հին պալունները գոյնն ու ավա-
զակի կսխազում էին բարձրացնում: Պսղվի դատական հրովար-
տակում, Իվան ԱՆեղի դատատեսանցքում և հետագա ժամանակ-
ների օրենքներում այնպիսի հանցագործությունների համար, ինչ-
պիսիք էին, օրինակ, ավազակությունը, ձխողությունը, խոշոր
կողպուտներն և այլն, հիմնականում մեկ պատիժ էր նախատես-
ված՝ մահապատիժը:

XV և XVI դարերում, նույնիսկ աննշան գույքային հափշտակու-
ների զեպքում Արևմտյան Եվրոպայի շատ երկրներում կիրառվում
էին մարմնական ծանր պատիժներ և մահապատիժ: Անգլիայում
մահապատիժը նախատեսվում էր անգամ այն ժամանակ, երբ հա-
փշտակվածի արժեքը մի քանի ֆարդինգի էր հասնում: Մեծ ուսո-
պիստ Քոտմաս Արորը զայրույթով էր ատելությունը է խոսում այդ մա-
սին: «Մահապատիժը,— ասում է նա,— նույնքան անարդար, որ-
քան անօգուտ պատիժ է: Նա շատ դաժան է զողությունը պատժե-
լու, իսկ շատ թույլ այն արդիկելու համար: Սովորական զողության

⁶⁴ Մեջերումը կատարված է ըստ «Կապիտալի առաջին հատորի հայերեն
վերահիշյալ թարգմանության, էջ 294, 250-րդ գծանթագրություն:

⁶⁵ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 117—118:

Համար արքայ չէ կախազանը, սամենասրտափելի պատիժն իսկ չի կարող գողտվյուն անկուց աճաբնկել նրան, որին միայն այդ միջոցն է մնում քաղցին շմեռնելու համար: Այս հարցում Անգլիայի և մի քանի ուրիշ երկրների արգարագատությունը նման է այն վատ ուսուցչին, որն իր աշակերտին ավելի հաճույքով ծնծում է, քան սովորեցնումս⁶⁶:

«Կապիտալ»-ում Կ. Մարքսը արշուճտտ օրենսդրություն է անվանում այն օրենսդրությունը, որը կյանքի էր կոչվել անողորմարար պատժելու հող ու տեղից զրկված և իրենց ֆիզիկական զոյությունը պահպանելու, մի կերպ ապրելու համար մուրացկանություն անող կամ ինչին զույրային հանցանքներ կատարող թշվառ մարդկանց, այսինքն նախկին արհեստավորներին ու մար հողատերերին⁶⁷:

Ամեն անգամ, երբ ֆեոդալիզմի ղեմ մղվող ճակատամարտերում բուրժուազիային հաջողվում էր այս կամ այն երկրում պետական իշխանության զուտն անցնել, նրա առաջին կողմում էր գաղտնուում սահմանադրական, քաղաքացիական և քրեական օրենքներ հրատարակել՝ պաշտպանելու համար սեփական զոյություն տնտեսական հիմքը՝ կապիտալիստական մասնավոր սեփականությունը: Այդ սեփականության պաշտպանության անհրաժեշտության մասին առաջին նկատելի ակնարկներ մենք գտնում ենք ղեռն Ազատությունների մեծ խարտիայում (XIII դարի սկիզբ), որտեղ ազդարարվում էր, ին թագավորը առանց զատատնի օրինական պատվճոհի կրավունը չունի ինքնազուտ կերպով կալանավորելու կամ սեփականավորելու պատժ մարդկանց, ընդ որում՝ ազատ մարտիկ ստանով օրենքը հասկանում էր ինչպես ֆեոդալներին ու ազնվականներին, այնպես էլ բուրժուականացող սեփականատերերին ընդհանրապես:

Նրբ XVIII դարի վերջում բունվեց ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը, նրանում հեզեմոն ղեր կատարող բուրժուազիան զարծյալ ոչ մի առիթ բաց չլիողնց սրբազործելու և պաշտպանելու մասնավոր սեփականությունը: Այդ հեղափոխության կատարման ընթացքում շահագործողների կամքով ընդունված օրենքների, և այդ թվում 1789 թվականի «Մարդու և քաղաքացու իրավունքների ղեկկարացիայի» մեջ կարմիր թելի նման անցնում է կապիտալիստական մասնավոր սեփականության որպես «սրբություն» հասակողմանի պահպանությունը և պաշտպանության զազափարը: Իսկ երբ բուրժուազիան, վերջնականապես հաղթելով, պետական իշխա-

նություն ղեկն էր ձեռքը կենտրոնացրեց, նա հրատարակեց և կյանքում անհողողող ձեռքով սպեց կիրառել սեփական սահմանադրությունը, ինչպես նաև իր քրեական ու քաղաքացիական օրենսգրքերը, որոնց վերջնական կոչումն էր վարչա-կառավարչական, քրեա-իրավական և քաղաքացիական-իրավական բոլոր միջոցներով ճարձյալ պաշտպանել ու ամրապնդել այդ նույն սեփականությունը: Նապոլեոնի քաղաքացիական և քրեական օրենսգրքերում, որոնք բուրժուական Յրանսիայի և ընդհանրապես բուրժուազիայ առաջին օրենսգրքերն էին, իրավանորմներ սխտեմավորված էին՝ կենտրոնախ և առաջ սեփականություն պահպանության ու պաշտպանության շահերից: Բուրժուական սեփականության ղեմ կատարվող ոտնձգությունների ղեկքում մեղավորները պատժվում էին երկարամյա բանտարկությամբ, ժամկետային կամ ջրահամարանսկություններ, իսկ առանձին ղեկքերում՝ նույնիսկ մահապատժով:

Այդպես էր պաշտպանվում բուրժուական մասնավոր սեփականությունը բոլոր երկրներում, և ճշմարտությունը պահանջում էր ասել, որ դրանով, ինչպես նաև այդ սեփականության «հախտնեկանաչ» «սրբազան», «տնտեսան», «քրեաին» լինելու զաղափարներով հասարակական ղիտակցություն մշակելու, մարդկանց այդ ողով դատարակելու ճանապարհով բուրժուազիային հաջողվեց հասնել մասնավոր սեփականության հիմքերի ղզալի ամրապնդման:

Հայ հին և միջնադարյան օրենսդրական-իրավաբանական հուշարձաններում նույնպես չի անտեսվել մարդկանց զույրային իրավունքներն ու շահերն պաշտպանության հարցը: Քրեական իրավանորմներում խիստ պատիժներ են նախատեսվել սեփականության ղեմ կատարվող ամեն մի հնարավոր ոտնձգության համար: Այդ իրավանորմների ղոյությունը միաժամանակ ստում է, որ հին և միջնադարյան Հայաստանում զույրային հանցադործությունները բավականին տարածված երևույթներ են եղել: Ազգատությունը, տեական կարիքն ու սովը շատ ու շատ անգամ ստիպել են մարդկանց, առանձնապես շունեոր աշխատավորներին ձեռք մեկնել ուրիշ սեփականությունը և այդ բանի համար նրանց օրենսդրությունը պատժվել են: Պատմական Հայաստանի, էլ առավել միջնադարյան Հայաստանի «սոսկորի» մասին եղած տեսությունը՝ ֆիզիկա և ղատում, երբ մենք ուսումնասիրում ենք այդ օրենսդրությունը, մասնավոր, էրբ խորամուխ ենք լինում այն կանքի կողող հատարական և դատակարային-քաղաքական պատճանների մեջ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեր հին և միջնադարյան օրենսդրական-իրավաբանական հուշարձաններում նախա-

66 Քոմսա Մար, Ոտոպիա, Ե., 1935, էջ 257:
67 Տե՛ս Կ. Մարքս, Կապիտալ, Ե., 1, ղբ. 24, § 3:

տեւով են գուրային բոլոր հիմնական հանցագործությունները և այդ թվում զոդությունը, կողպուտը, ավագակությունը, խարդախությունը, վաշխառությունը, ինչպես նաև ուրիշ գույքի ունեցման կամ փախցման ամենատարբեր ձևերը:

Գողություն: Գողություն պատժելիության մասին հայ իրավունքի դանազան ակտերում ամենեց շատ է հիշատակվում: Այդ արբերը նախատեսող բազմաթիվ իրավանորմեր կան հիշատակված մեր աշխարհիկ ու եկեղեցական օրենսդրում, ընդ որում զոդություն ասելով այդ նորմերը հասկանում էին ուրիշին պատկանող գույքի գաղտնի հափշտակում և նախանշում էին զրա ամենատարբեր ձևերն ու տեսակները:

Դեռևս հայոց Հայրապետ ներսես Մեծին վերագրվող կանոններում զողությունը պատժվում էր քսանամյա ազաշխարհումով: Այն համարվում էր մարդասպանությանն ու ավագակությանը հավասարող հանցագործություն (կանոն 9): Կղեմի այդ մասին ասած ամանած կանոններից մեկը ակնադիելով զողությունը արարբերին, պահանջում էր, որ այդ կարգի արարբերի մեջ մերկացված եպիսկոպոսը, քահանան ու սարկավագը անպայման լուծվեն, այսինքն՝ աղապմեն հողեոր սպասավորների դասից (կանոն 23): Հետևող հայրենի կանոններից մի քանիսը ուղղակի կերպով պարտավորեցնում էին, որ զողը և նրա հանցակիցը կամ, ինչպես ասված է կանոններում, «հյուրենկալը» պետք է մահվան դատապարտվեն (կանոն 4):

Ուշագրավ են մեր աշխարհիկ օրենքների՝ Դավիթ Ալյավկա որդու Կանոնների, Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերի իրավանորմերը: Սրանցից առաջինը՝ Դավիթ Ալյավկա որդու Կանոնները, զողություն և դրան առնչվող մյուս գուրային հանցագործությունների պատժելիության հարցին նվիրում է երկու՝ 41-րդ և 79-րդ հոդվածները: 41-րդ հոդվածից մենք իմանում ենք, որ նրա հեղինակի օրոք, ըստ երևույթին սովորության իրավունքի ուժով, զողությունը պատժվում էր նաև հանցազորների «փայտի հանելով», այսինքն՝ մահուցատուժով: Ալյավկա որդին այդ օրինաչափ է համարում: Նա միայն զիմ չէ, երբ մեկը կաշառով ցանկանում է նման պատժից խուսափել: «Այլ զանս զողոց ի փայտ հանելոյ,— ասում է նա,— իբլ ըսոր իցէ, իբէ հայ, և մարդոյ հրամայիցեն ի փայտ հանել, իբլ արար իցէ խույս տալէ ի տեղոյն, ապա թէ ոչ՝ կաշառով զերծցին: Իսկ իբլ այտու ոչ աղեկացեն, ապա հրամայեալսն ի տերանց պարտ է կատարել այլ ոչ առավելութեամբ, որպէս հրամայէ Յոզհաննէս զինուարցն, թէ մի առա-

ւել քան հրամայեալսն առնիցէր, քանզի Աստուած ի սիրտ հայի, որպէս ասէ տէրս:

79-րդ հոդվածում Ալյավկա որդին նախատեսում է զողություն, կողպուտի և ավագակության հանցակազմերը, թեև բոլորին էլ մի տերմինով համարում է զողություն, սրա տակ հասկանալով ուրիշի գույքի շահադիտական նպատակով կատարվող հափշտակում առհասարակ: Սակայն այդ հոդվածում նա բավականին խելացի կերպով միմյանցից դանազանում է մանր զողություն, անխնայական միջոցների գործադրմամբ կատարված զողության և այլ նման հանցակազմեր և համապատասխան ձևով նախատեսում պատժատեսակներ՝ տարբեր տեղությունամբ ապաշխարանք կամ գուրային խիստ պատիժներ:

Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերում զողության տեսակների և օրանց պատժելիության մասին էլ ավելի մանրամասն օրինադրույթներ կան: Տերմինները պատկանող գույքի, եկեղեցական գույքի, մարդկանց սեփականություն կարգով մասնավոր գույքի գողության, մարդազողության և նման այլ հանցագործությունների պատժելիության մասին այդ դատաստանագրքերում տարբեր հոդվածներ են նախատեսվում: Մխիթար Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի 1-ին հոդվածում, օրինակ, խոսվում է սերունդական գույքի գողության մասին և դրա համար խտտազույն պատիժներ է սահմանվում՝ եկեղեցի հանցագործի ազգային, այլ կերպ ասած, կրոնական պատկանելիությունից. «Այլ զողո գանձուս աէրուսի՝ զայլազգի խրատեալ յաշս և կամ ի ձեռտ, զկին և զորդի և զգրաստեղիսին յարբուսիս կալեալ, տարագիր արացսէ: Իայց զբիստունեայ-զղողոսն առեալ և դինն և դինն և զորդիս յազգատում և ի քրիստոնեայս վաճառեալ թողլէ. ապա ոչ այս ոչ իցէ, խրատիցի յաշս և ի ձեռտ և թողցիս: Սույն կարգով էլ Սմբատ Սպարապետի Գատաստանագրքի 1-ին հոդվածում կարգում ենք. «Սո որ յարբուսի քամբէ իրք զողոսայ՝ նա զերկու աւրն հանել և զկինն ու զորդին արանուն և այլ դինն ունեն առնուն և թէ ծախել զկինն և զորդիքն արժան է»: Այսպես էր պատժվում սերունդական, այսինքն պետական գույքի գողությունը Մեծ Հայքում և Կիլիկիայն Հայաստանում:

Երկու դատաստանագրքերում էլ պատժելի է հայտարարվում եկեղեցական գույքի գողությունը, անկախ այն բանից, թե ուրիշը էին հանդիսանում զրա ստրկյալները՝ Շոգեոր սպասավորները, ինչ՝ աշխարհիկ, այսինքն՝ աշխարհական մարդիկ: «Եթէ որ ժառանգատու կամ ժողովրդական սուցլ է ոտրը եկեղեցույ մտնողեն և կամ ձեթ,—

առված է Գոշի Գատաստանագրքի առաջին մասի 28-րդ հոդվածում, — որոշեցիք և Շեքագաթիկ տուժեցիք, որով առն անօթով, ոսկեղինաւ որբեցելով: Ըս մի՛ որ ի պէտս պատեցանաւ, զի օրինազանաւորսն է: ապա թէ որ քորոնեցիք, զպատահանաւ որոշեցիք»: Հետեւելով Գոշին, Սմբատ Սպարապետն իր հերթին գրառել է այնպէ՛ իխտ իրավանորմ. «Եթէ որ ի յեկեղեցոյ ձեթէ կամ յանաթից՛ կամ ի զգետտոց՛ կամ ի մտեկեղեկ՛ կամ յայ իրաց զողեսոյ, նա զկարգն կորսնէ և հինգ տուլլ վճարէ զիբրքն, և այս յայժմամ լինի, որ կարծեալ կեցցեմք ի վերայն: Ապա թէ ի զողովիսն, բռնվի՛ նա զկարգն առնուս ու զարպտուն նամոտովն իր իբատ ու սաղայ այնն՛՝ զէզ զողոյ ու անհատի» (հոգ. 13): Այսպիսով, կարող ենք սահել, որ սաւոր իրբրիս զողովայն ճանչցակարէ նույնպէս չի անտեսվել մեր արդարյան դատաստանագրքերում:

Միթիվար Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի 39-րդ և 40-րդ հոդվածները հաջորդաբար նախատեսում են հետեւյալ երկու հանցանքները՝ արքաների (եղեւթի), ավանակների ու ալլընտանի կենդանիների զողովույնը և անային իրերի զողովույնը: Երկու զեպրում էլ մասնակիորեն հնկեվելով մովսիսական օրենքների վրա, Գոշը զատարաններին պարտավորեցնում է մեղավորներին պատժել կամ դրամական հատուցմամբ, կամ եկեղեցական պատիժներով (ապաշխարանքի տարբեր ձևերով): Գոշի Գատաստանագրքի այդ հոդվածներին համապատասխանող իրավանորմեր Սմբատ Սպարապետի Գատաստանագրքում իրենց արտահայտությունը չեն գտել:

Խիստ ուշագրավ են Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի նաև 19-րդ ու 109-րդ հոդվածները: Գրանցից առաջինը վերաբերվում է այն զեպրեթին, երբ զողոքն ու ամվազակներ ունենում են իրենց հանցակիցները՝ թաքցնողներ ու օժանդակողներ: Գոշը հնկեվելով Հետևող հայրերին և անուղղակի կերպով՝ մովսիսական օրենքների վրա, գրում է. «Գո՛ք կամ ասպնջական իւր բոս կամաց կեկեղեցոյն զնոս մահու մատնել արժանի լիցի, զի հնուցեալ սաւազակն և իւր հացամեծարքն միշտ լինին ի մահ գատապարտեալք: Զայդր զկին պարտ է գատարորին հնուեկէ, — ստում է Գոշը վկայաբերելով Հետևող հայրերի կանոնադրության 4-րդ կանոնը ու շարունակում, — և զայս յաղագո մարդազողաց և սաւազակաց առէ. և բոս օրինաց հրամայէ ի մահ գատապարտել նաև զկամակից հացտուն. և բոս կեկեղեցոյ օրինաց ևս կարգէ: Բայց զկին կանոնաց այդ ևս ցուցանալ է գատաստան»: Երկրորդը՝ 109-րդ հոդվածը, օրիս աղբյուրը ամենայն հավանականությամբ մեր կողմից արդեն բերված Դավիթ

Այավկա որդու Կանոնների 41-րդ կանոնն է, վերաբերում է այն զեպրեթին, երբ քրիստոնյան հանդես է գալիս հանցագործին կախական բարձրագույն, այսինքն դատավճիռը ի կատար ածող զերում: Գոշը կրոնա-բարոյախոսական գիրքերից ելնելով, արդելում է քրիստոնյա մարդուն կամավորությամբ այդ բանն անել և Այավկա որդու նման իրավունք է տալիս նրան, քնկուզ կաշառք սալու զեով, խոստովել գրանդի: Սմբատ Սպարապետի Գատաստանագրքում բացակայում են Գոշի Գատաստանագրքի նաև այս երկու հոդվածները՝ 19-րդ և 109-րդ հոդվածները բովանդակությունը հիշեցնող հոդվածներ:

Դիակապտություն: Անցնենք դիակապտության պատժելիության հարցին: Մեր երկու գատաստանագրքերն էլ որպես ինքնուրույն հանցավոր արարք առանձին իրավանքներում նախատեսում են զիսկի կողորձաման հանցակարգը, այսինքն՝ դիակի հետ թաղված իրերի ու արժեքների զողովայն կատարումը: Հանցագործը զաղտնի կերպով հափշտակում է այդ իրերը, արժեքները կամ նույնիսկ դիակը: Քրիստոնեական բարոյախոսության տեսակետից դիակապտությունը պատմական շատ հնուվոր մասնակներից օկսած իրենից բարձր վտանգավորություն էր ներկայացնում: Այդ պատճառով էլ իբրև ծանր քրեական հանցագործություն այն նախատեսվում էր զեռես Հետևող հայրերին վերագրվող կանոններում: Այս սկսի 17-րդ կանոնի համաձայն՝ դիակապտուրը զղջալու և կատարվածն անկեղծությամբ խոստովանելու զեպրոմ եննարկվում էր նզովքի և ցմահ հնուացյում էր եկեղեցական համայնքից, իսկ եթէ չէր զղջում ու չէր խոստովանվում, գատապարտվում էր մահվան: Մեր բերելով այս կանոնը, Գոշն անվերապահորեն չի համաձայնվում զրանում նախատեսված պատիժներին և իր Գատաստանագրքի երկրորդ մասի 89-րդ հոդվածում պահանջում է, որ օրինազանցները, այսինքն դիակապտողներն եննարկվեն արան զին հատուցման ու ապաշխարության: «Ջգիակողպտուս եթէ ըմբոնեցի, — գրում է Գոշը, — և ապա կամօք խոստովանեալ — ո՛չ մեղցի, իսկ եթէ որ ոչ սպանցել, քննեցել, զնա սուրբ եկեղեցի է մինչև ի մահ որոշեցիք, քանզի տեղի ապաշխարութեան նորա չիք: Յայտ է յասացելոցս եթէ՛ անզղչիցն մահ որոշեաց, այլ այնպիսեաց արեսն լիցի զին բոս ցուցելոյ օրինակին (սակնարկվում է Գատաստանագրքի երկրորդ մասի 1-ին հոդվածի այն պարբերությունը, որտեղ խոսվում է ապանություն պատժելիության մասին, ինչպես նաև Գատաստանագրքի նույն մասի 4-րդ, 9-րդ, 14-րդ, 27-րդ և 30-րդ հոդվածները, Ա. Ք.)՝ զարձեալ և ապաշխարութիւն պատ-

շահին: Եւ այդ լիցի դատաստան պարզեցի իրաւացին: Այսպէս էր զիսկապատօնայան և՛օնայան ու զրա պատժելիութեան չարքը լուծելով Մխիթար Գոշի մտտ:

Մտքաւ Սպարապետի Գատաստանագիրքը որոշ զեպերեւում այդ նույն արարքը պատժում էր էլ ավելի խիստ պատիժներով: Այսպես, օրինակ, երբ զիսկապատող նախազգուշացում էր չկրկրենել արարքը, բայց նա անհնազանդ գտնվելով կրկնում էր այն, այդ զեպերում արզեն օրինազանց նմարկելովում էր մահապատժի կամ կենդանի թաղելում էր, կամ դատապարտում էր ցմահ՝ բանաարկութեան: «Վասն այն ազդ անհաստաց,— կարգում ենք մենք դատաստանագրքի 134-րդ հոդվածում,— որ զմեռեալ կողոպտանի՝ էտ չհրամայէ արևնքս, որ երբ բունն զիքն, որ մենկա ի խոտ ցայ վասն այն մեռելին՝ նա չմեռանի. այպ ա՛նոր բնա ոչ ապաշխարութիւն կայ և ոչ թողութիւն, ոչ յեկեղեցոյ և ոչ ի դարպա՛ւ, քակէ զնէ ինք զիքն, զկց որ զրեւո կայ յարեան զիքն: Ու զնն ի յի՛քն յըչու, որ թէ ալլ այնէ՛՝ նա մեռնի, և կամ զիքն կենդանի թաղեն, ու կամ ի զքեղանն կենայ ու մեռանի»: Ահա այսպէս էր շիսկապատութեան չեռապելովում ըստ Կիլիկիան շայտասանի՝ փաստորեն պաշտենական դարձած օրենսգրքի:

Կողոպտան քեքի տեսկներ: Մխիթար Գոշի և Մտքաւ Սպարապետի դատաստանագրքերի տունձին հոդվածներում էրբմն խոսք էր զնում զողութեան նաև ալլ, համեմատար թնթև տեսակների մասին: Այսպէս, օրինակ, զրանցիք առաջին էրկրորդ մասի 124-րդ հոդվածում խոսվում էր այն մասին, որ երբ արհեստավորը զանազան նպատակների համար իրեն հանձնված նյութը զողանում էր, ալլ զեպերում նա պարտավոր էր հատուցել զրա քառապատիկը, իսկ այդ նույն նյութի կորստի զեպերում, նա հատուցում էր զրա հնգապատիկը: Մտքաւ Սպարապետի Գատաստանագրքի 140-րդ հոդվածի համաձայն, երբ արհեստավորը զանազան նյութեր էր վերցնում այս կամ այն նպատակով, բայց զրանց մի մասը զողանում էր, որպէս զողութեան կատարողի նա զատում ու զատապարտում էր այս անգամ արզեն ընդհանուր հիմունքներով: Եթև արհեստավորը «...զողացել լինայ ի նիթոյն՝ նա դարձնէ, և դատվի զի՛ց գող զինչ որ չհրամայած է վասն զողերոյն...», բառացի կերպով սոված էր այդ հոդվածում: Նույն կարգով էլ Մխիթար Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի 95-րդ հոդվածը, հիւ՛շ ընդունելով Յարսնից Մեծի կանոնագրքի 105-րդ կանոնը, ազգարարում էր. «Արուեստարք քբ յափշտակեն զինչ այլոց՝ տայցն ընդ միւս շորսպապ թէ ու—այաշխարեսցն ըստ վարդապետին հրամանի:

Չայտանեայն և ի դատաստան անկեայն հատուցանել աւէ, և որք կարող են. և որ ոչ ունին կար և զեծուովն ապաշխարելու: Այստեղ, ինչպէս տեսնում ենք, արհեստավորը դատապարտվում է զողացված նյութի քառապատիկ արժեքի հատուցման, եթև ունեօր է, կամ ապաշխարութեան: Համարյա նույնն ենք կարող ենք Մտքաւ Սպարապետի Գատաստանագրքի 147-րդ հոդվածում, ըստ որի հավասարակէս պատժվում էին ուրիշի զույրի յուրացումն ու արհեստավորների կողմից կատարվող զողութեանը. «Եկէ որ զումնք իրք հարան ուտէ՝ նա թող շորս կրկին վճարէ, և ապա քաի. և եթէ ոչ՝ նա թող յաղքատս տայ, և ընդունած է: Եւ արուեստար, որ զմարդոյ իրք զողնայ՝ նա շորստակ վճարէ զտէրն իրացն, և թէ ոչ նա թող յաղքատս տայ, և ապա քաւէ»: Ահա այսպէս էին պատժվում մանր զողութեաններն ու հափշտակումները ըստ մեր միջնադարյան ազգային դատաստանագրքերի:

Գողութեան, որպէս զույրային հանցագործութեան մասին, բազում իրավանորմեր կան օտարերկրյա այն օրենսդրական տեսերում, որոնք հանգամանքների բերումով ժամանակի ընթացքում վերափոխվել են հասարակ և կիրառելի են շայտաստանում մինչև միջնադարյան հայ ազգային դատաստանագրքերի երևան գալը:

Ատորս-հոռմեական դատաստանագրքի հայկական վարիանտում, որը ինքնուրույն օրենսդրական մի ակտ էր և նրա թարգմանողի՝ Լամբրոնացու, անունով միանգամայն իրավացի կերպով կոչվել է Լամբրոնացու քաղաքացիական օրենք, զողութեան և նրա տեսակներից պատժելիութեան հարցին նվիրված էին ավելի քան տասը հոդվածներ: Նրա 117-րդ հոդվածում, օրինակ, ասվում էր թէ «Ամենայն գողք պարտական են մահու, որք որ ի գիշերի յափշտակէ առանկ պարտական է մահու. և այն որք գիշերն բմրունն մահու դատին յօրինացն. իսկ որ ցերեկն և լուսով զողանան վզենկին միայն»: 121-րդ հոդվածի համաձայն նա ով զողութեան կատարելու նպատակով ծակում էր ուրիշի տան պատը, նույնպէս դատապարտվում էր մահվան: «...Որ ք ական հատանէ դտուն վասն զողութեան մահապարտ է յօրինացս», բառացի կերպով ասված էր այնտեղ:

Գողութեան պատժելիութեան մասին տունձին անկարկներ մենք գտնում ենք նաև «Համառոտ ժողովումն օրինաց վերստին» օրենսդրական ակտում, որի իսկապարհից մեկը գտնվում է Փարիզի ազգային մատենադարանում և որի հայկական կամ ավելի ճիշտ կիրի տանկ կիրիկյան ծագումը կասկածից զուր է: «Պոստոր որ ի ներքոյ հօրն հրամանի է, թէ զողանայ ստացածս առնն, հայրն իր դատապարտի, վասն զի գտաւ ի գողութենէ առ նա. կամ հայրն

տայ և վճար, կամ տայ զդուտարն ր ձեռն պարտականին... կինն էթէ զողանայ ինչ զստնն, ոչ բմբունն զնա իբրև զմահապարտս, կարգում ենք այդ նույն ակտում:

Առանձնապես ուշագրավ է Նետաբրքի և Նետայի հանգամանքը. կամբրոնացու աշխարհական օրենսգրքին իր 71-րդ հոդվածում ազգաբարձում էր, թե կինն իրավունք չունի սեփական ամուսնուն բամբասել կամ տայանի առաջ նրան մատնել՝ մերկացնելով այս կամ այն հանցագործության մեջ: Ենույն կարգով էլ եղբայրն իրավունք չունի իր եղբորը և ծառան իրավունք չունի իր տիրոջը բամբասել կամ մատնել: Սա քննհանուր կանոն էր, բայց այդ կանոնը սահմանող օրենքը նախատեսում էր նաև բացառություններ. կինը, եղբայրն ու ծառան այդ բաներն անելու իրազույց ունեին, նթև խոսքը վերաբերում էր թագավորի ծիրանիի գեղությունը կամ նրբ շոշափվում էր այնպիսի թանկագին քար պահելու հարցը, որն իր հազվագյուտության և մեծածնություն պատճառով կարող էր պատկանել միայն և բացառապես թագավորին: Բերենք անքաղաք. թէ տայ արևերս հրաման կնոջն զայր իր բամբասել և անել յատենի թե զայս ինչ և զայն զործեցիր. նաև ոչ եղբայրցնն տայ հրաման զեղբայրսն բամբասել վասն շար գործոցն. և ոչ ծառայիցն տայ հրաման զտեսարսն բամբասել կամ մատնել. բայց թէ կարեն ցուցանելն թէ զողացելալ է զծիրանիս Թագաորական կամ ունի առ իր քարինս պատուականս թագուցելայս որ միայն թագաւորին վայել էր Այս հոդվածը միաժամանակ վկայում է պատական այդ մասանակներում պարտական գույք հայտնաբերաների տարածված լինելու ու զրանց բարձր վտանգավորության մասին:

Գողություն և ընդհանրապես գույքային հանցագործությունների դատվելիության մասին առանձին իրավաբանորեն մենք զանում ենք նաև Անտիոքի օրենքներում, որոնք իսպանյան թագավանդով էին հայերեն և հավանաբար պատմական որոշ շրջանում կիրառվում էին Կիլիկյան Հայաստանում: Այդ բանում համազօրելու համար բավական է վկայակոչել նշված ակտի 9-րդ դրի թովանգակոմիանը, որտեղ կրոնիկոս կերպով խոսվում էր զրատս կննդանիների գողության զեպերի և զրանց անշվող մի քանի այլ արարքների, ինչպես և այլ արարքների սուրյակտների պատմելիության սահմանների մասին:

Կողպուտ: Ջրեական իրավունքի պատմության մեջ կողպուտ անելով համարյա միշտ էլ մարդիկ հասկացել են մի որն է անձի պատկանող գույքի բացահայտ հափշտակում, սպիանքն, կրք ինքը՝

առտոցը, ակնաստես է լինում իր գույքի հափշտակմանը, սակայն անկարող է լինում կանխելու այդ արարքը:

Այսպես է հարցը պատկերացվել ու լուծվել նաև հայ իրավունքի պատմության մեջ, թեև «Գողությունս բառատերմինը զարեր շարունակ հայոց լեզվում գործածվել է մեկ այլ նշանակությամբ ևս: Այսպես, բառ Վ. Բաստամյանցի, ակարծի. 2. Աճառյանի և ակաղան. Ստ. Մալխասյանցի «Կողպուտ» կամ «Կողպուտ» բառերը ներքե նշանակել են մեռած մարդու անձնական գործածության իրերը (զիբարկը, զոտին, կերակրամանները, հաղուտը, անկողինը, մատանին և այլն) կամայոր հիմունքներով եկեղեցուն կամ վանքին և սեփականություն հանձնելը⁶⁸: Սահակ Պարթևին վերագրող կանոններում, ինչպես վերևում տեսանք, հարցը այդպես էլ լուծվում էր: Ենույնիսկ Նետագրում հողերականները մեռած մարդու գույքի հանձնումը եկեղեցուն պարտադիր են հայտարարում և շեղատարվելու զեպում մեղավորների նկատմամբ եկեղեցականականական կամ քրեական պատիժներ են սահմանում: Հաջորդականներ շարունակ բանանները, վարդապետներն ու եպիսկոպոսները, ինչպես նաև այլ կրոնների հոգևոր քրմերը վշտացրել են մեռելատեղերին նման զվզելի պահանջներով: Նրանք չէին բավարարվում կամայորության օրենքով, այլ անհանցում էին մեռածի ամենալավ հաղուտները, ամենաթանկագին կարասին, նրա մեծարժեք զարդերը և այլն: Այստեղից էլ մեր կարծիքով «Կողպուտ» կամ «Կողպուտ» բառերը ստացել են իրենց ներկայիս նշանակությունը և մտել հայ իրավաբանական տերմինների բառացանկում մեջ:

Կողպուտի՝ իբրև ինքնուրույն հանցակազմ պարունակող արարքի մասին առաջին հիշատակումներ մենք գտնում ենք Հայոց կանոնագրքում, որտեղ այդ արարքի հանցակազմը հաճախ նույնացվում է ավազակության հանցակազմի հետ: Ենույն ոգով է հարցը զբվում Ասորա-հռոմեական դատաստանագրքում կամ, ավելի ճիշտ կլինի ասել, կամբրոնացու քաղաքացիական օրենսգրքում: Այս կառույց օրենսդրական ակտի 120-րդ հոդվածը մարդկանց զույրի, առանձնապես նրանց անասունների կողպուտի, այսինքն յուրահասուսի ձեռք կատարված հափշտակության համար ծանր պատիժ էր սահմանում: Մեղավորները աջուրվում կամ վատարվում էին կրկի օահմաններից զուրս, ընդ որում օրենքը դատարաններին էր վերա-

⁶⁸ Տե՛ս Վ. Բաստամյանց, Միխիթրյալ Գոյի Դատաստանագիրք Հայոց, էջ 279—280, 607-րդ ձանթագրություն, 2. Աճառան, Արմատական բառարան, «Կողպուտ» բառը, Ստ. Մալխասյանց, Բացատրական բառարան, Երեք քաղաք:

պահում կոնկրետ պատճառաբանությամբ արտաքին կամ արտերկրյա մակերևույթը որոշելու իրավունքը:

Գավիթ Աշավկա որդու Կանոններում, ինչպես նաև Մխիթար Գոշի ու Սմբատ Սպարապետի դատաստանագրքերում կողպատի պատժելիության մասին առանձին իրավանորմեր չկան, բայց դրա մասին մեկից ավելի անգամ հիշատակվում է այդ ակտերի՝ այն հոդվածներում, որտեղ խոսվում է ավազակության քրեա-իրավական պատժելիության մասին: Դրանում համազվելու համար բազմական է նշել Գավիթ Աշավկա որդու Կանոնների 75-րդ հոդվածը, Մխիթար Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի ու Սմբատ Սպարապետի Գատաստանագրքի համապատասխանաբար՝ 19-րդ և 1-ին հոդվածները, որոնց մասին հանգամանորեն կիսովի ստույգ:

Կանոնագրքում առանձնացվում է հարևանի հողաբաժնի բռնախլուման, այսինքն յուրատեսակ կողպուրտի հանցակազմը, մի հանցագործություն, որի համար եկեղեցական կանոններում խիստ պատիժներ են սահմանվում՝ անձեր և եզրվր, որոնց աղոցելության տակ հանցագործը պետք է ցմահ սպրեթ: Այս հանցագործության մասին, որքան մեզ հայտնի է, առաջին անգամ հիշատակվում է Հեսեոզ հայրերի կանոններում (հոգ. 52), այնուհետև՝ մյուս կանոնների մեջ: Դրանց բուրբի աղբյուրն ըստ երևույթին հանդիսանում է մովսեսական իրավունքը, որն այդ եռույն արարքի՝ ուրիշի հողասահմանը խախտելու համար խիստ ծանր պատիժներ՝ մահապատիժ, եկեղեցական և այլ պատիժներ էր սահմանում (տես՝ ս. Երկրորդ օրինաց, Ի՛վ 17, ԺԹ 14 և այլն):

Ավազակություն: Ծահագործողական բուրբ հասարակություններում էլ ավազակությունը համարվել է ամենամար, հետևաբար և ամենավտանգավոր հանցագործություններից մեկը: Հնագույն ժամանակներից սկսած սովորութային իրավունքը և տարբեր կրկններում գրաված օրենքներն այդ արարքի սուրյեկտների նկատմամբ սահմանել են հիմնականում միայն երկու պատիժ. մահապատիժ՝ իր որակյալ ձևերով և երկարամյա, նույնիսկ ցմահ տաժանակրությունը: Ավազակությունը միշտ էլ հանդիսացել է այն հանցավոր արարքը, որի օրիկանները եզրվ են մի կողմից մասնավոր սեփականատիրոջ դուրքը և մյուս կողմից՝ այնի կյանքը կամ առողջությունը: Ձևաված հարձակմամբ մարդուն սպանել կամ խեղանգամել՝ նրանից զանազան նյութական արժեքներ հափշտակելու հատուկ նպատակով, այս է ավազակության քրեա-իրավական էությունը:

Ծահագործողական հասարակություններում, այդ իմում նախ և առաջ ստրկատիրական և ֆեոդալական հասարակություններում ավազակությունն ու դրա ձևերից մեկը հանդիսացող ծովահնությունը համախ կատարվում էին կազմակերպված հանցավոր խմբերով և այն էլ մեծ մասշտաբներով:

Ավազակախմբերի ու ծովահնների խմբերը հին աշխարհում, վաղ ֆեոդալիզմի շրջանում և բովանդակ միջնադարում հանդիսա շին թողնում Եվրոպայի, Աֆրիկայի, Ասիայի պետությունների կառավարություններին: Հյուսիսային, Միջերկրական և Սև ծովերում ծովահնները լուրջ վտանդի տակ էին դնում ոչ միայն մարդկանց երթևեկությունն ու տրանսպորտի նավերի անվտանգությունը, այլև խափանում էին միջպետական առևտրական հարաբերությունների հաստատման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:

Ավազակների և ծովահնների դեմ պայքարելու համար անուղբ օրենքներ էին հրապարակվում և միջազգային քննիչի բազմապիսի պայմանագրեր էին կնքվում, թեև ճշմարտությունը պահանջում է ասել, որ դրանք բուրբ զեպրերում չէ, որ ցանկալի արդյունքներ էին տալիս: Այդ օրենքներն ու պայմանագրերն աշխարհի շրջերգրերն ավազակությունն ու ծովահնությունը, որոնց ծնող արժատները գտնվում էին և գտնվում են տիրապետող շահագործողական հասարակական հարաբերությունների սխտանում: Դրանք չկարողացան նույնիսկ արժատասխել անել որպես ստրուկ վահանելու նպատակով կատարվող մարդագործությունը, որի տեսննին ռեցիդիվներ բուրբուական աշխարհում իր արտահայտությունն ու դրսևորումը գտնում են անգամ մեր օրերում:

Հին և միջնադարյան Հայաստանում ավազակությունն ըստ երևույթին մեծ տարածում ստացած հանցագործություն է եղել: Այդ մասին բազմաթիվ կոնկրետ փաստեր են բերում մեր պատմիչները, թեև ճշմարտությունը պահանջում է ասել, որ նրանք հաճախ, միանգամայն անհիմն կերպով՝ ավազակա և շեղուղակ են անվանում նաև աշխատավոր ու շահագործվող մասսաների դասակարգային-բազմաբան շահերի պաշտպանության համար մարտնչող մարդկանց, առանձնապես գյուղացիական առաջադիմական ելույթներն ու հակակրոնական շարժումների ղեկավարներին կամ դրանց ակտիվ մասնակիցներին:

Բուզանդն իր Պատմության մեջ անհերքում է այն մասին, որ նախաքրիստոնեական, այսինքն՝ հեթանոսական Հայաստանում ծայր էին առել ավազակությունը, ավարառությունը և դրանց արձեղվող մյուս հանցագործությունները: Նա հարցն այնպես է հրամցը-

նում, որ իբրև թե հայ առաջին քրիստոնյաներ հանդիսացան ամենակարգ քարոզիչները, որոնք կամաց-կամաց մարդկանց ուղիղ ճանապարհի վրա բերին՝ նրանց ետ պահելով հանցագործություններից, այդ թվում ավագակոմիտից և հափշտակումներից⁶⁹։

Խորենացին պատմում է, որ հայոց Վաղարշակ թագավորը մարդկանց պատվիրում ու խորհուրդ էր տալիս թողնել ավագակոմիտերը, չդավել միմյանց նկատմամբ և հպատակվել արքունական հրամաններին։ Դրանով իսկ, ըստ պատմիչի, նրանք ձեռք կբերեն վտանգություն իր իսկ աչքում, այսինքն թագավորի աչքում⁷⁰։ Խոսելով Տիգրան Մեծի գործունեության մասին, Խորենացին նշում է, որ այդ հզոր թագավորը նախ բնաջնջեց ավագակոմիտիս լեռներում ու նոր մեկնեց Ասորքը՝ հռոմեական զորքերի դեմ կռվելու համար⁷¹։

Մեր միջնադարյան պատմիչները, օրինակ, Գանձակեցու, Կազանկատվացու, Լաստիվերցու, Ունշայեցու և մյուսների աշխատությունների մեջ երբեմն ամբողջ էջեր են նվիրվում ավագակոմիտի գործունեությանն ու հանցավոր վարքագծին։ Վերջիններիս հանցավոր հարձակումներից մարդիկ հաճախ վախենում էին պուղից դուր գնալ, անգամ երեկոյան ժամերին իրենց տներից դուրս գալ⁷²։

Պատմիչների ամենատարբեր առիթներով ակնարկները ավագակոմիտյան, այսինքն բռնություններ կամ սպանություններ կատարվող ուրիշ գույքի հափշտակման մասին փաստացի ապացույց է, որ այդ հանցագործություններ պատմական Հայաստանում իբրև տարածված և մեծ վտանգ ներկայացնող արքայ է եղել։

Ավագակոմիտյան տարածված լինելու մասին են վկայում նաև այն բազմաթիվ խրատական ու պատմիչ նորմերը, որոնք տեղ են գտել մեր կանոնադրում, նորմեր, որոնցով մարդկանցից պահանջվում էր հեռու մնալ ավագակոմիտից ու նման արարքներից։ Այդ նորմերն ավագակոմիտի, ինչպես և սրանց հանցակիցների նկատմամբ եկեղեցական-կանոնական և քրեական-իրավական բնույթի խստագույն պատիժներ են սանկցիավորում։ Դեռևս հայոց

ներսու կաթողիկոսին վերագրվող կանոններում քահանայա պաշտօնաբանք էր նախատեսվում ավագակոմիտի նկատմամբ (19-րդ կանոն)։ Այս յուրատեսակ խրատական և միաժամանակ քրեա-իրավական նորմը, իհարկե, տարբեր խմբագրություններ, իր հետագա արտահայտությունն է գտնում իրավաբանական օրենսդրական մյուս ակտերում։

Միջնադարյան Հայաստանում կամ, ավելի ճիշտ կլինի սակե, պատմական Կիրիկիայի հայ թագավորության մեջ գործող օրենքներից մեկն էր՝ Անտիոքի առիղներում, մենք գտնում ենք ավագակոմիտյան մասին բավականին ճիշտ ու ընդհանրացված մի բնորոշում և օրենքով նախատեսված այն պատիժը, որը հավանաբար կիրառվում էր այդ հանցագործությունը կատարած անձանց նկատմամբ։ Այս նշանակում է օրենքը հավատար հաշտություններ խմբագրել էր ավագակոմիտյան նախատեսող իրավանքների թե՛ դիսպոզիցիան և թե՛ սանկցիան։ Ահա օրենքի այդ հոդվածը. «Եթե՛ որ ավարքը կամ այլ իր իբր ձեռք ունեայ և սաչլած կենայ ի լիքս ի վաղէ, և զայ մէկ մի այլ առևու դիքք ուժով և կահարալովեամբ, առանց դարպասուն, նա զայ զրկածն ու զատրուտի ի դարպասն և չերգաւածն, և ուժ այնոզն ի ժամն ի դարպասն կենայ, և շղիմախօսէ և ուրանայ որպէս արժանն է, ասելով Չէ, թէ Աստուած կամի, նա մշտնջենավոր կորույս զայն իրքն. և վառն այն ուժոյն տայ տուգանք ի դարպասն 12 սոյ, որ է նոր դրամ ԽԾ»։ Այստեղ, ինչպես տեսնում ենք, ավագակոմիտյան բնորոշումը է որպես ուրիշի գույքի քսցարձակ ու քոնի հափշտակում՝ ֆիզիկական ուժի զործադրմամբ, իսկ արարքի համար սահմանված պատիժը գույքալիս խիստ բնույթի պատիժ է։ Ավագակոմիտյան, որպես ինքնուրույն հանցակազմ տվող արարքի ավելի ճշգրիտ բնորոշում պատմական այն հեռավոր մասնակներում, երբ իրավանքների ստեղծման տեխնիկան Հայաստանում տակավին զարգացած չէր, պատկերացնել անգամ չի կարելի։

Դավիթ Այազկա որդու Կանոնների 79-րդ կանոնում ավագակոմիտյան, կողպուտը և զողովուտը համարվում են միևնույն հանցավոր գործունեություն՝ գույքի հափշտակման տարածներ, թեև դրանք հասկացություններ և նշանակվող պատիժները բավականին տարբերվում են միմյանցից։ Ե՛հազում արհեստը են զողովեան,— ասում է մեր օրենսդիրը և շարունակում,— է՛, որ ավագակոմիտի լեբրես և ի կիրքս ճանապարհաց կալով տեղազերծ անեն զանցատրս և բազմաց սպանություն գործեն, և է՛, որ որմափոր լինին տանց՝ և կողպուտն որ ինչ ի տանն իցէ, և է՛, որ շանդ-

⁶⁹ Տե՛ս «Փաստոսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1850, էջ 73—81։

⁷⁰ Տե՛ս «Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց», Տիգրիս, 1913, էջ 105—109։

⁷¹ Տե՛ս նույն տեղը, էջ 130։

⁷² Տե՛ս «Դրատեսակներուցու Պատմութիւն Հայոց», Քիֆիս, 1912, էջ 257 և հետևյալները։

գինն ձևնարկին ի արբմբինն առուծոյն, և են, որ կծծիրն կռչին-
որ ակնաձեւով դիտեն զըրջակայս և աստ և անդ, զոր ինչ բժբրանի-
ցեն, անխնն Արդ, որ ավազակք են՝ վայրկայց, արինարտու գա-
զանաց նման են, որոց յազմեն, փազազին և գէշ գէշ պատասնն,
այնպիսիքն թէ զարժին և խոստովան լիցին զմեղա իւրեանց՝ ի խորգ
և ի մոխիր, մինչև ցմահ ապաշխարեացն և ի մահու հաղորդեցնն։
Բայց զյնբարութեան ժամանակն լինել նոցա յաւազակութեան
անդ և առար էին տեսցեն զիտնականքն և զարինակ շարեացն,
զորս յանցին նոցա, և բոս այսմ կշռեսցեն զմամանակ ապաշխա-
րութեան ի վերայ նոցա։ Եւ զորմարտ կողոպտողացն, որ զնմա-
նութեան սկան և խրդան բնին լինիրանք, բոս առազակացն աւ-
րինակի տեսցեն և արասցեն զիտնականքն որովս արժան է։ Իսկ
կծծիր որ զմարտագոյն գողանան, նման են մանրագոյն զեւեոց...
այնպիսեացն զժուարին իցէ յողջախոսութիւն փոխել։ Եթէ ոչ զառ-
նան ի շարութեանն անբժշկելի են, թէ քահանայ է, ի բաց կացցէ ի
պատարարելոյ զՔրիստոս, ապա թէ յանդգնի, ընդ անիծիք է։ Իսկ
յողջախոսահաւ նոցա՝ տեսցեն զիտնականք և արասցեն որպիս
կամին։ Նույնպէս ժողովրդայնացն՝ որք յայս սովորեալ են, Եթէ
ոչ զառնան, զրկեսցեն ի հաղորդութեան և հասկը նոցա նուրբ ըն-
ծայից մի՝ առցեն յեկեղեցի, մինչ զղլացցինս։ Այսպիսով, Ալավհա
որդին ավազակութեան, կողոպտարի և գողութեան հանցակազմերը
տարբերում, այսինքն սահմանազատում է միտնանցից՝ մի կողմից
հիմք ընդունելով դրանցից ամեն մեկի կատարման օրենիտիվ կող-
մերի առանձնահատկութիւնները և մյուս կողմից՝ դրանցից յուրա-
բանչլորի վտանգավորութեան ապահանք հաստատական կլան-
քում։ Առտի նա խիստ կամ մեղմ պատիժներ, սովյալ զգայրում
ապաշխարանքի տարրեր ժամկետներ է սահմանում այդ հանցա-
գործութիւններից ամեն մեկի համար։

Ալավհութեան քրեա-իրավական լուծման և պատժելութեան
հարցը չի անտեսվել մեր ազգային դատաստանագրքերում։ Մխի-
թար Գոշի և Մմբատ Սպարապետի դատաստանագրքերում։ Մխի-
թար Գոշն իր Գատաստանագրքի երկրորդ մասի 19-րդ հոդովածում,
հիմք ընդունելով Աղեմի առաքելական կողմած կանոններից 78-րդ
կանոնը, Հեանող հայրերի կանոնադրութեան 4-րդ կանոնը, Եւրից,
Երկրորդ օրինացի մի քանի օրինադրութիւններ, ազգաբարձում է, թե
«Գո՛ղք կամ ապաշխարանք նոցին բոս կամաց եկեղեցւոյն զնոս
մահու մտանել արժանի լիցի, որ հնացեալ աւարակն և իւր հացա-
մեծարքն մքշտ լինին ի մահ գատաստարտեալ։ Զայդ զկնի պարտ
է դատարրին հետեւի։ Եւ զայս յազգաց մարդագողաց և աւազակաց

ասէ. և բոս օրինաց հրամայէ ի մահ գատաստարտել նաև զհամա-
կից հացտուն, և բոս եկեղեցւոյ օրինաց ևս կարգէ։ Բայց զկնի կա-
նոնաց այդ ևս քուցեալ է դատաստանն։ Ինչպէս տեսնում ենք, Գոշը
միջնադարյան ֆեոդալական քրեական իրավունքին հատուկ անո-
ղք պատիժներ է նախատեսում ոչ միայն գողների ու ավազակների
նկատմամբ, այլև նրանց ամեն կարգի հանցակիցների՝ օժանդա-
կողների ու ապաստանողների նկատմամբ։ Նրանց բոլորն էլ են-
քարկվում էին մահապատժի, անկախ այն բանից, թե նրանք մարդ-
կանց էին հափշտակում, թե իրենց ավազակային գործողութիւն-
ներով ուրիշների գույքային բարիքների զեմ էին օտնձգում։

Մմբատ Սպարապետի Գատաստանագրքում թեև առանձին
իրավաբան չկա ավազակութեան հանցակազմի էություն և դրա
պատժելիութեան հարցերի մասին, սակայն այդ օրենսդրական սկե-
տի բոլոր այն հոդովածները (օրինակ, 1-ին, 47-րդ 112-րդ, 125-րդ
և այլն), որոնց մեջ մեր մեծ պետական գործիչն ու օրենսգիրք նա-
խաշում է զգողութեան, խարդախութեան, մարդազորութեան և բնո-
հանրապետ հափշտակութեան հանցակազմերը, աստեղ նա փաս-
տորեն միաթամանակ մտցնում է նաև ավազակութեան ու կողոպու-
տի հանցակազմերը։

Խարդախություն։ Ուրիշի վատահոլման շարաշահման կամ
խարխուլ միջոցով նրա գույքի հափշտակումը քրեական իրավուն-
քի պատմութեանը վաղուց ի վեր հայտնի հանցագործություն է
հանդիսացել։ Դրա էությունն ու պատժելիութեան մասին առանձին
իրավաբաններ կարելի է գտնել բաբելոնական օրենսգրքում և մով-
սիսական օրենքներում։ Մասնաւոր սեփականութեան հետագա
զարգացումն իր հերթին առաջացնում է խարդախութեան նորանոր
հանցակազմեր։

Ստրկատիրական Հռոմի քրեական օրենքները լի էին խարդա-
խութեան պատժելիութեան մասին իրավաբանական նորմերով։
Նույնը նկատում ենք ստրկատիրական մյուս պետութիւնների, այդ
թիվում Բյուզանդիայի օրենսդրութեան մեջ, վաղ ֆեոդալիզմի ու
միջնադարյան ֆեոդալական բոլոր պետութիւնների քրեական
օրենքներում։

Հին և միջնադարյան օրենսդրական-իրավաբանական հու-
շարժաններում խարդախութեան կոնկրետ դրսևորումների վերա-
բերալ իրավաբաններ կարելի է գտնել հիմնականում միայն Մխի-
թար Գոշի և Մմբատ Սպարապետի դատաստանագրքերում, թեև
ճշմարտութիւնը պահանջում է ասել, որ այդ նորմերը հաճախ

խորհրդային հանցակազմը նույնացնում էին այլ հանցագործություններին, օրինակ, զոդովյան տարրեր հանցակազմերի հետ: Մխիթար Գուշի Գատառատանագրերի առաջին մասի 110-րդ հոդվածը խոսելով այդ տարրեր մասին, հետևյալ կերպ է նկարագրում դրա հանցակազմը. «... բազումը շրջին խաբէութեանը յանուն սրբոց և եկեղեցեաց վանաց. և այլքո բազմադիմի պատճառօք և բազումս պատրեն, մինչ զի ոչ է զիրար ի վերայ կալ պատրուկնալ շարնաց նոցա, քանզի հնարին ընծայական ունել թուլթիս, և այլ ևս ձեռս ստանան կեղծատրութեամբ»: Հոդվածում չի մատնանշվում, թե նման մարդիկ քրեական բնույթի ինչ պատիժների կամ եկեղեցական-կանոնական ինչ տույժեր պետք է ենթարկվեն, բայց պարտավորեցվում է, որ հանցագործները հարկադիր կարգով պետք է հետ տան կամ նրանցից պետք է հետ վերցնել խորհրդային եղանակներով ձեռք բերված բոլոր արժեքներն ու գույքը և վերադարձնել տուժողներին կամ օգտագործել հանրօգուտ նպատակներին համար:

Նույն այդ ողով է հարցը լուծվում նաև Մմբատ Սպարապետի Գատառատանագրերի 67 bis հոդվածում, որտեղ ասված է. «Երբ սուտ երէց կամ զիտառ լինի որ՝ ազգի ազգի որ կու լինին շարք ու խարեն զկատուած և զմարդիկը և կամ սուտ զերևտարութեան թուղթ գրեն ու մատնեհարեն՝ նա երբ գտնվի սուտն ի վերայն, նա զինչ ունեն անուղ պիտի, ու յայն սուր տեղն յուղարկել՝ ում անուն զխարեութեամբն ժողովքն կու այնքն և կամ լայն սուրբն տալ յոր տեղ որ սուտ եղալ ինքն: Բայց թէ կենայ հարակ՝ նա պատեհ է, որ եպիսկոպոսն գամէնն եկեղեցւոյն ի շէնքն տայ կամ ի վարդապետանոց և կամ հշմարտ գերէտրոջ: Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնպես հանցագործութեան մեջ մերկացված անձանցից խորհրդային մեք բերված գույքը բռնախլվում, վերցվում է, և այն վերագրվում է տերերին կամ արվում է եկեղեցուն: Բայց ուշագրավն այն է, որ հոդվածում ավելի ընդհանուր ու արտարահված կերպով ազդարարվում է, թե խորհրդային մյուս բոլոր դրսևորումները պետք է հետապնդվեն նույն կարգով: «Բայց կայս, — ասվում է նույն հոդվածում, ակնարկելով ֆիշ սուշ մեր կանարած մեջքերման իմաստ, — հանց վասն այնոր զրեցար՝ որ զորս (խորհրդայիններ, Ա. Թ.) շատ ազգի ազգի կերպով կու շրջին. և զամէնն այլ ձեւով յիմացիք՝. ու թող ի ձեռք բռակզ շմտե՛ լայն հարած իրացն»: Սա արդեն ավելի ընդհանուր իրավանքում էր, որք զդրութիւնը պատիվ է բերում նրան և՛ ձեռնմակին՝ Կիլիկիայի պետութեան զարավար և օրենսգիր Մմբատ Սպարապետին:

Երկու դատառատանագրերում էլ, վերևում շարադրվածից բացի, նախատեսվում են մի քանի այլ հանցավոր արարքներ ևս, որոնք նույնպես ըստ էության խորհրդային տարրերաներ են հանդիսանում: Գուշի Գատառատանագրերի երկրորդ մասի 95-րդ հոդվածում, նշակեն ունենալով հարսեղ կեանքացուն վերագրվող կանոնագրութեան 105-րդ կանոնը, նշվում է, թե այն արհեստավորները, ովքեր խաբերալուծութեք հափշտակում են ուրիշի արժեքները, պարտավոր են հատուցել դրա հնչապատիկը, հակառակ դեպքում նրանք ենթակա են աղաշխարութեան, որի տարիքը որոշվում է վարչապետների հայեցողութեամբ: Նույնը մենք նկատում ենք Մմբատ Սպարապետի մոտ, որի Գատառատանագրերի 147-րդ հոդվածի 2-րդ մասում ասված է. «Եւ արեստատար, որ զմարդոյ իրք գողնայ՝ նա չորս տակ վճարէ զտէրն իրացն և թէ ոչ, նա թող լազրաստ տայ և ապա բաւէ»:

Գուշի Գատառատանագրերի երկրորդ մասի 127-րդ հոդվածում խոսվում է ջրաղացպանի կողմից կատարվող խորհրդային մասին, որն արտահայտվում էր աղալու համար ջրաղաց բերված հացահատիկի զոդովյան (խորհրդային) կատարված հափշտակութեան) ձեռք: Այդ ջրաղացպանը հատուցում էր հափշտակվածի քուտապատիկ արժեքը և բացի այդ ենթարկվում էր հանդիմանութեան, այսինքն հասարակական պարտավանքի ու արգահատանքի: «Այլ զղոցացեան՝ շորքկին, և ի կոփոցաց յանդիմանութեան լինի նշուակաց», ասվում էր Գատառատանագրերի վերհիշյալ հոդվածում: Նույն հանցագործութեան մասին է խոսվում Մմբատ Սպարապետի Գատառատանագրում՝ 173-րդ հոդվածում, որտեղ նշված է, թե «... զջրաղացպաններն կու համալէ ալելնքս որ հասու և հասատարիմք պատեհ է զնել վասն գոյութեան երկրին, որ չափինն գաղտնն, ու թէ ալելնն՝ ուն զարդարանս պարտի որ պատժէ, և գուղլ տայ վճարել զարջոտաց վճանն ու չհարկին վան կապուուն ու շահուն... ու թէ անցնել սու ընդ քարն՝ միտակ վճարէ գուլեր, ապա թէ զողնայ շորս տակ...» Ահա այսպես էին պատվում ջրաղացատերերը հին և միջնադարյան Հայաստանում, երբ նրանք խորհրդային հափշտակում էին աղալու նպատակով իրենց ջրաղաց բերված հացահատիկը:

Չափազանց ուշագրավ և հետաքրքիր են այն դեպքերը, երբ խորհրդայիններն արտահայտվում էր սխալ կշռաբարերի կամ սխալ չափող այլ գործիքների ու միջոցների օգտագործմամբ կատարվող հափշտակումների ձեռք: Այդ մասին մեր դատառատանագրերում խիստ պատիժներ սահմանող համապատասխան իրավա-

ներմեր կան և այդ իրավանքներին զուտվյուծն ատում է այն մասին, որ պատմական Հայաստանում նույնպես առևտրականները զանազան խորամանկությունների դիմելով խարդախել ու խաբել են գեորդներին:

Պատաստանագրքերից զեւ շատ առաջ Հայոց կանոնագրքի տարրեր ակտերում կային միայն առանձին կանոններ, որոնցով խստորեն դատապարտվում էին սխալ կշիռների կամ սխալ շափերի օգտագործմամբ անզի ունեցող հափշտակումները: Այդ կանոնների հիմքը հանդիսանում էին նաև մոփսոական օրենքները: Օրինակ, Ղևտացոց, ԺԹ 35—36, Երկրորդ օրինաց, ԺԿ 13—15, Աղոմանի առակներ, Ի 10 և այլն, որտեղ մի շարք խրատներ կային այն մասին, որ կշռաբարի, երկրություն և այլ շափերի մեջ խարդախելը անիրավություն ու անարդարություն է, որ նման արարքները աստծուն հանելի բաներ չեն, ուրեմն զրանց կատարումը մեղք ու հանցանք է և այլն: Նման խրատներ էր կարգում ներսես Շնորհալույն, պահանջելով, որ ... մի որ խարդախմամբ և նենգությամբ, վանաորացել զստացուածս իւր անմեղ զնողաց, մանաւանդ ստախուսովեամբ և սոստ երգումար զսամիկան և զանցնտան խաբելով, զի ի զատաստանէին աւուր ընդ զոզս և ընդ հափշտակողս դատելոց է այնպիսին»⁷³: Շնորհալու այս խրատը, հասկանալի է, չէր լինի, եթե նրա ապրած մամանակաշրջանում առևտրի բնագավառում առևտրական խարդախություններն ու զրանց առջևիդ մյուս հանցագործությունները լայնորեն տարածված չլինեին:

Խարդախության համար պատժելիություն սահմանող իրավանքումեր կան նաև այն ակտերում, որոնք քարգամանաբար, փաստորեն իրեն ինքնուրույն օրենսդրական ակտեր դարձած, կիրառվում էին Հայաստանում մինչև մեր ազգային դատաստանագրքերի հրապարակ գալը: Այս անհակադից չի կարելի անտեսել կամբրոնացու կողմից փոփոխումներով ու էական լրացումներով քարգամանված Աստուհ-հոսմեական դատաստանագրքը, ինչպես նաև Մարտա Սպարապետի քարգամանած Անտիոքի արվիտրի: Վերջին ակտի 19-րդ զուտիւր ամբողջովին վերաբերում էր առևտրի մամանակ կատարվող շափերի ու կշիռների խարդախման պատժելիության հարցերին: Այդ զլիսում բառացիորեն ասված էր հետևյալը. «Յա թէ լինի որ պարոնութիւն մունետիկ հանէ՝ որ իբր համանք մունետիկէ, և որ մի անցքընէ զմունետիկն համանքն, նա վճարել լձ սուլ, որ է նոր դրամ կ'ը, եւ թէ առ խանութ դափի շափ կամ կշիւր, կամ զան, կամ կան-

գուն, կամ այլ յայտպիտեսաց՝ ծուռ կամ պակաս, նա վճարէ տուղանք լձ սուլ, ու թէ շափ մարծպան կամ կէս մարծպան, կամ շարեկ, կամ շալլ որ նման է սոցին որ քան զպարոնութեանն մասանհարն՝ այլ սող կենայ ի վերայ, ու գտնվի մարդ, որ այնով առտուոր կենայ ու այն, նա այն է կատարել պատճենվորս որ զպարոնութեանն մասանհարն կարել է. նա այնոր անձն ու տունն ու ինքն մնացել է զարպուսն համանքն»: Ինչպես տեսնում ենք, այս իրավանքումք նույնպես խստորեն պատժում է սխալ շափերի, շափիչ գործիքների ու միջոցների և սխալ կշիռների միջոցով կատարված խարդախությունները:

Անցնենք մեր ազգային դատաստանագրքերի համապատասխան հողավճանքի քննությամբ: Մխիթար Գոշի Պատաստանագրքում երշված հարցն իր օրենսդրական-իրավաբանական կարգավորումն է ստացել սահմանալին ճշտորոշությամբ: Այդ հուշարձանի երկրորդ մասի 123-րդ հոդվածում խոսվում է այն մասին, որ քաղաքներում ու ավաններում առևտուրը պետք է կարգավորվի քաղափորի ու իշխանների հրամանով, որ նրանք պետք է առևտրի զործում հաստատեն համապատասխան շափերն ու կշիռները և իրենց գործակալների միջոցով հետեն և հետապնդեն խարդախներին: Հարցն այսպես լուծելով, Պատաստանագրքը, այնուհետև, խիստ պատժելի նախատեսող իրավանքում էր սահմանում առևտրի մեջ սրխայ ու կեղծ շափեր ու կշռաքարեր գործածողների ու զրանով իսկ խարդախություն կատարողների, այլև զորամանկներին նկատմամբ: Ահա հիշյալ 123-րդ հոդվածից մեզ հետաքրքրող հատվածը. «Եւ վաճառք ըստ հրամանի քաղաքացի կարիտեցին ի քաղաք, կամ յիշխանաց ըստ հրամանի քաղաքացի, թէ ի քաղաք, կամ յաւանս, կամ յայլ ինչ տեղիս ի գաւառս: Եւ նախահողութեամբ զշափս և զկշիւրս և զոյցս նոցա զիցեն տեսանելով զգորութիւնս պաճառին: Կարգեսցեն և կոփիչս միշտ որոնել և տեսանել, զի մի՛ նենգութիւն ինչ արասցեն: Այլ խարդախիցն խրատ ըստ հրամանի իշխանացն լինի: Գողիցն ի շափսն և ի կշիւրս հատուցանել շարեկին, և յանցնմանովեմամբ նշատակել ի զարհուրումն այցոց: Ըսկ գտնականատիցն և զրամակոփիցն զձեռսն հատանել հրամանաւ իշխանաց: Խարդախների նկատմամբ պատիժներ սահմանել իշխանների հրամանների համաձայն, նրանցից բռնախել հանցագործութիւնն ճանաչարհով ձեռք բերված իրերի ու արժեքների քառապատիկ արժեքը և հրապարակորեն անարգել ու նշավակել նրանց՝ ի սարսափ օրիշների, զրամանկներին ենթարկել անողոր մարմնական պատժի՛ կարել նրանց ձեռքերը, ահա թէ ինչպես էր Գոշը լուծում խար-

⁷³ «Ներխոյի Շնորհալույ թուղթ ընդհանրական, Էջմիածն, 1863, էջ 107:

զգիտութուն կատարողներն և կնիզ գրամատչանների պատմելիութ-
յան հարցը, և ճշմարտութունը պահանջում է առև, որ հարքի նը-
ման լուծումը, մանավանդ պատմական այդ ժամանակներում մը-
տաված, խելացի ու առաջգիտական լուծում էր:

Կիլիկյան Հայաստանի օրենսգրքի հեղինակի՝ Սմբատ Սպարա-
պետի ուշագրությունից նույնպես չի վրիպել նման խարդախություն
կատարողների պատմելիությունը: Չարցր: Հետևելով հայ սովո-
րութային իրավունքին և Մխիթար Գոշին, նա նույնպես իր Գոտատ-
տանագրքի 112-րդ հոդվածում առևտրի գործի, այդ թվում չափող
գործիքների ու միջոցների ընդհանուր կարգավորման գործի համար
պատասխանատու է դարձնում պարոնների (իշխանների) և այ-
նուհետև ազգաբարձում է, թե կշռաբարձը, չափող գործիքներն ու
միջոցները կնդոնողները պետք է նկատարվեն խառագույն բրնական
պատիժների այն հաշվով, որ ուրիշները դրանից ահաբեկվեն ու
այլևս համարձակվեն նման արարքերի կատարել: Բերենք նաև
այդ հոդվածի համապատասխան հատվածները. «Պարտ է դիտու-
նալ, որ զվաճառացն և զպարտուցն սահմանն ի քաղաք և ի դուրս
պարտեմքինն սահման է զիրաւունքին զչափն և զկշիռն և զայն
այսպիսեացս. և զուրերն և մուխիսպայնին ի վերայ այսոր սաստե-
լով բոլորը պահեն. և զայնք, որ ծեծմարք չըզորեն հետ երեք գար-
պայի քստնացն՝ նա ի պարոն կամ յերեսիոխանն՝ բերեն, որ ի
վերայ մեղանացն իրատել տալ կամ խոռուկ կամ մեռցնել: Բայց
այնք որ զկշիռն կամ զչափն ստիրեն՝ նա այս է, որ շորքեցին վճա-
րեն, և իրատեն դիրենք ի զուան, որ այնք վախեն: Եւ զայնք, որ
դրամ քըշտեն կամ դրամ հարթեն՝ անխիզճ առ պարոնութիւնն՝
զծծոր կտրեն ի պակասս... Բայց կու հրամայէ արկնքս՝ որ այն
ժախաղն, որ խաբէ զանզէտն ու իր սող իբք ծախէ, նա զենք զկզ
զող ու անհաւատ գտանն, զկզ որ գրել ենք վասն զողերոյն: Տան-
ջահարել, խեղանգամել, մահապատել զատապարտել, զուլքը բըռ-
նախել կամ հանցագործին հրապարակային կերպով զանակոծման
կենթալն, հահ այն զատական նյարտիտրել, որ կիլիկյան հայկա-
կան օրենքը նախատեսում էր խարդախություն կատարողների և
դրան առնչվող մյուս ծանր հանցագործությունների սուրյեկոսների
նկատմամբ կիրառելու համար:

Պատմական Հայաստանում սխալ կնիզների և սխալ խոսքա-
բերի կամ չափող գործիքների գործածութիւնը կատարվող խար-
դախութիւններն ըստ երևույթին ժամանակին անհանգստացրել են
անզամ այն օտար պետություններին, որոնք նվաճել էին Հայաս-
տանը: Տեսնելով, որ առևտրականների ու հարկահավաքների սա-
-

րատեսակ շարաշահումները բնակչության մեջ լուրջ զգոհություն
են առաջացնում և բոտ լուծման վախենալով ճարավոր ճաղաքա-
կան պողովումներից ու ազգային-ազատագրական ապստամբու-
թիւններից, նրանք ևս իրենց հերթին Հայաստանում օրենքներ են
հրապարակում՝ նպատակ ունենալով կարգավորելու այդ երկրում
ստարվող հարկային քաղաքականութիւնը և սաստելու մարդկանց,
առանձնապես պաշտոնյաներին, որ նրանք գործեն օրենքի սահ-
մաններում՝ և շարաշահն իրենց դիրքը:

Այս տեսակետից ուշագրավ է բյուզանդական կայսր Բիզոսի
օրենսգրքի 12-րդ գրքում տեղ գտած 386 թվականի սխոտուլը, որով
Հայաստանում գործող բյուզանդական հարկահաններին և գործա-
կան վերակացուներին հրամայվում էր հարկեր և տուրքերը գան-
ձելիս գործածել ճիշտ կշռաքարեր: Օրենքում միաժամանակ սակաճ
էր, որ երբ հարկահանը խարդախի և սակչին պահանջի, քան սահ-
մանվածը, նա խստորեն կպատժվի:

Այսպես էր հետապնդվում ու պատժվում խարդախությունը և
այդ թվում սխալ կնիզների, կշռաքարերի կամ սխալ չափող և այլ
գործիքների ու միջոցների գործածութիւնը կատարվող խարդա-
խութիւնն ու խաբեարւոյթիւնը հին և միջնադարյան Հայաստա-
նում:

Վաշխառույուն: Պատմական, առանձնապես միջնադարյան
Հայաստանում վաշխառութիւնը միշտ էլ մի միջոց է եղել, որով
քաղաքի և դուռի շահագործողները, այդ թվում եկեղեցու սպասա-
վորները համախա անողորմարար հարատահարել ու տնտեսապես
ճնշել են աշխատավորներին՝ նրանցից պահանջելով սահմանված
տոկոսից շատ ավելի բարձր տոկոսով դրամ, հացահատիկ կամ այլ
արժեքներ ու միջոցներ: Այդ արարքի զատակարգային բարձր վտան-
գավորութիւնը հաշվի առնելով, մեր կանոնական և աշխարհական
օրենքները եկեղեցական և բրնական խիտ պատիժներ են նախա-
տեսում դրա սուրյեկոսների՝ վաշխառուների նկատմամբ:

Վերցնենք թեկուզ ներսես կաթողիկոսի և ներշապուհ Մամիկոն-
յանց եպիսկոպոսի կանոնները, որ զրվել են ամենայն հավանակա-
նութիւնը 554—555 թթ.: Այդ կանոնների մեջ հեղինակները չափա-
զանց մեծ զարույթով են խոսում վաշխառուների և վաշխառութիւն
մասին, շեշտը դնելով բուն արարքի նույնպիսի հետևանքների վրա.
Եեցին ոմանք և զվաշխս զահեկանաց իւրեանց, կէտք վաճառեցին
քնկերաց իւրեանց որոսես ծառայու, և այլն նսուն վարձակս կանանց
իւրեանց ամբարշտելալք ի բնութեան, անարժանութեամբ անձանց
իւրեանց մեղանա:

Այդ կանոններից առաջ և մասնավոր չհետադաժում կյանքի կոչված ու Հայոց կանոնադրքում մտցված զանազան իրավաճարհարում կարելի է տեսնել քրեական կամ վարչական խիստ պատիժներ նախաձեռող կոնկրետ օրինակներ: Նման իրավաճարհարմեր կային առաքելական, Նիկիայի ժողովի, Լավոդիայի, Բարսեղ Մեծին վերաբերող և այլ կանոնադրությունների մեջ, որոնք զանազան ժամանակներում մտցվել էին Հայոց կանոնադրքում: Իրավաճարհարում նշվում էր, թե շահով զրամ տվող հոգևորականները զրկվում են հոգևորական կոչումից: Պատժվում են նաև աշխարհիկ մարդիկ, եթե երանք զբաղվում են վաշխառությամբ:

Ահա այդ կանոն-իրավաճարհարից երկուսը. «Վասն այնոցիկ, որ ի կարգի են և ի կանոնի, յուխտի եկեղեցույ յազահուսթին և զօշարազուսթին անկանխիցի, զարծաթ իրեանց ի վարձու տացել և տուկուսօք պահանջիցել, և մոռանայցել զբարբառ աստուածնեղէն զրոց, որ ասլ թէ զարծաթ իր ի վարձու նա ոչ տացել, և մասնաւոր զայլ-թի գալթ պաշտաման թուպարտու յաղթու մեղկ, և ծոյլ ի հաստա, այնպիսումն ասէ զիր. վայ որոց թողեալ իցել զուսումն մանկութեան և մոռացեալ զուխտն աստուածնեղէն, կամ եղև մեծ ժողովոյն, զայնպիսին մերժել ի կարգէն, կամ բարեսէր կամօք յուղղութիւն անջ» (Նիկիայի ժողովի կանոններ, կանոն 16): «Կարգեցին առաքեալուն և եղին հաստատութեամբ թէ որ փոխ տայ, և առնու վաշխ և տուկոսիս, և ազահուսթամբ շահն շահիցել, այնպիսին մի՛ համարեսցի ընդ հաստացեալս և մի կացցել ի կարգ պաշտաման թահասութեան, ոչ լսիցել, զոր ետ պատուներ արարելն Մովսիսի, թէ պատու-իրեան որդւոյն Իսրայէլի, զի մի պահանջեցնցն զփոխս ի մերձեալ տօնին թողութեան և յամենայն եօթներորդի, որչափ նս առաւել պատժոյ արժանի համարեցիր զայժմուս» (Առաքելական կանոններ, կանոն 19): Այսպէս էր զրկվում վաշխառութեան զեմ տարիւղ պայ-բարի ու զրա պատժելիութեան հարցը մեր ազգային կանոնադրքում:

Ավելի հետևողական ու կողմնորոշող էին մեր աշխարհիկ դատաստանադրքերի նորմերը: Ի տարբերություն կանոնադրքի կանոնների, այդ նորմերն ավելի արտօրահամար էին, ունեին դիսպոզիցիաներ՝ իրենց կատեղորիկ և համախ որոշակի սանկցիաներով: Դավիթ Ալավկա որդու Կանոնների 86-րդ հոդվածը, օրինակ, իրենց վաճառվորութեան աստիճանով միմյանց հավասարեցնելով մի կողմից զղորմյունը, կողողուտն ու ավազակությունը և մյուս կողմից՝ վաշխառությունը, այնուհետև ազդարարում էր, թե վաշխառուները պետք է պատժվեն հիշատ այնպիսի քրեական

պատիժներով, ինչպիսի պատիժներով պատժվում են զողերն ու ավազակները. «... և վաշխառուն և վաշխատուն կցորդ է ամենայն ասագակն, որ ի լերինս կողպտնեն, և որմափոր զողոցն և կծծանաց, և որ տնանկացուցանեն և աղբատացուցանեն զմարդիկ, զի բնութեամբ ինքեցի մարդիկ են, բայց շար սովորութեամբ զազանք են և ոչ մարդիկ: Չի հնարին տալ զտօկին, ածին բնութեամբ և վաշխին ծնունդ պահանջեն, որ շար է, քան բունաբար պտուղ առնուլ. սա ի աստանայէ շահանքն, որ շար է, քան բունաբար պտուղ առնուլ. յափշտակող: Մի՛ արասցել, զայս ի քրիստոսնէլ, զի աստուածիցն է զործը: Այլ թե որ արար և զղջացել, զրկան հաստուցի շրտապտիկ և ապաշխարութիւն զզողաց և ասագակաց կրեսցել և ապա հազորեսցի»:

Միխիթար Գոշը վաշխառության էությունն ու պատժելիության հարցը քննութեան է առնում իր Գատաստանադրքի առաջին մասի 50-րդ հոդվածում, որի աղբյուրը նիկիայի ժողովի վերահիշյալ 16-րդ կանոնն է: Բերենք հոգվածի տեսքեր որոշ կրճատաններով. «Վասն այնոցիկ որ ի կարգին իցեն և կանոնին և յուխտի եկեղեցույ և յազահուսթին և ի զօշարազուսթին անկանխիցին, զարծաթ իր ի վարձու տացել և տուկոսօք պահանջիցել և մոռանայցել զբարբառ աստուածնեղէն զրոց... և մանաւոր զայլ ի գայթ ի պաշտաման և թուպարտ յաղօթս, մեղկ և թոյլ ի հաստա այնպիսումն ասլ զիր՝ վայ՛ որոց թողեալ իցել զուսումն մանկութեան և մոռացեալ զուխտն աստուածնեղն: Կամ եղև մեծ ժողովոյս զայնպիսին մերժել ի կարգէն և կամ բարեսէր կամօք յուղղութիւն անջ. Լուրիցն քահանայց զվճիկ կանոնական գատաստանին և զարհուրեցին ապա թե ոչ՝ վերջին և անաշառ գատաստանա գտուելոց են»: Թեպես տեսնում ենք, Գոշը վաշխառությունը համարել է յափազանց վտանգավոր և զատապարտելի արարք, պատժելի ոչ միայն աշխարհիկ գատարանի, այլ նախ և առաջ աստվածային գատաստանի կողմից:

Վաշխառությունն ըստ երևույթին լայնորեն տարածված երկվույթ էր նաև Կիլիկիայի հայկական թագավորության մեջ, առանձնապես հոգևորականության շրջանում: Մեր կարծիքով զա է պատճառ, որ Մերատ Սպարապետն իր Գատաստանադրքում պահանջում էր որպես հերետիկոս կարգալույծ անել վաշխառու հոգևորականներին և առաջին հերթին նրանց, ովքեր չէին խոստովանում իրենց կատարած հանցագործությունը: Նա Գատաստանադրքի 54-րդ հոդվածում գրում է. «Եւ թէ իսկի եկեղեցական մարդ զիչն և լինի, իշխէ զեկան տայ ի վաշխ ու բանեցնել, նա կամ երաշխետար և

բխթով խոստանայ որ այլ չանել ու զոր արար՝ նա այսպիսիք է ու քակ: ու թէ շատու յանձն, նա զեզ Հերեթիկոս ձգնն զինք ի կարգին ինչոյ յախտեանս:

Միայնքար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերի վերոհիշյալ 50-րդ և 54-րդ հոդովաները թեև ուղղակիորեն վերաբերում էին վաշխառու հոգևորականների պատմելիության հարցին, այնուամենայնիվ ապրիորի կերպով կարելի է սակ, որ դրանցով դատվում ու դատապարտվում էին նաև աշխարհիկ վաշխառուները, որքանով որ նրանք նույնպես հասարակական դասակարգային բարձր վտանգավորություն ներկայացնող մարդիկ էին:

Հին և միջնադարյան Հայաստանում վաշխառության տարածված լինելու մասին մեր մատենագրության էջերում բազմաթիվ ուղղակի և անուղղակի այսպիսիքներ կան Այդ երևույթի տարածվածության հիմնական պատճառը մեր կարծիքով մի կողմից հասարակության մեջ նոր սոցիալական խափի՝ անտերական, խոշտանկան դասի երևան գալն էր և մյուս կողմից՝ գյուղացիության դասակարգային շերտավորումը: Անևարականները, բուն դինելով տնտեսապես դարգացող բաղաբներում ու դասակարգային խճորում ապրող գյուղերում, չարաշահում էին իրենց անտեսական ուժը: Նրանք վերջնականապես քայքայում էին պրոգրեսիվ կերպով ազդատացող աշխատավորությանը, առանձնապես գյուղացիությանը: Ստեղծված գրութային ստիպում էր պետական իշխանությանը կամ, այլևիչ ճիշտ կլինեիր սակ, նրա դերը կատարող եկեղեցուն ու սրբ ազդեցիկ ներկայացուցիչներին, սաստնչել և հնարավոր միջոցների գնով սահմանափակել նրանց՝ վաշխատուների ու նման տարրերի գործունեությունը: Այստեղից էլ այն կանոնների ու քրեական օրենքների գոյությունը մեր օրենսդրական իրավաբանական հուշարձաններում, որոնց մասին հանգամանորեն խոսեցինք վերևում:

Այս ֆոնի վրա հարցը պատկերելով, մեզ համար միանգամայն հասկանալի է նաև ներսև Շնորհալու իրոք թաղաբարեակներին, թե «... մի տայք զարծած մեր ի վարձով: ըստ մարդարին, այնոցիկ, որք նեղին՝ ի բնույթն էլ իշխողաց և ուտէք զաղբատութեան վաստակս նոցա ի շահս վաշխինք, այլ որպես եղարք կարեկիցք և օգնականք ինրոք միմեանց: Եւ զոր տայք նոցա փոխ՝ զայն միայն պահանջեցին ի նոցանէ...»⁷⁴: Շնորհալուն վշտացած էր ստեղծված գրութային տեսնելով: Նա պահանջում էր վաշխառուներից շարաշահնչ իրենց տնտեսական ուժն ու արքատների կարիքը. կարիքա-

վորներին փոխանիքար դրամ կամ նյութական այլ փոխատվություն տալու ղեկավարմ, նրանցից հետագայում պահանջել միայն փաստորեն աված զումարը կամ նյութական արժեքները՝ առանց վաշխի ու ստիպոի, առանց շահագորտական հակումների:

Վաշխատվյալն գրեթեմաս ձևերը հին և մանավանդ միջնադարյան Հայաստանում տարբեր էին, բայց նորատակը նույնն էր՝ նեղելու և ձեռնչ կարիքի մեջ իրենց թվավա գոյությունը թաշ տվող ազդատուներին, առաջին հերթին՝ հայ գյուղացիներին:

Հայտնի է, որ անգամ մինչև XIX դարի վերջը վաշխառունը կային Մուշի, Բուլանլուխի, Բիթլիսի, Շիրվանի, Վանի, Ալաշկերտի և այլ վայրերի հայկական շրջաններում: Տեղաբնակները վաշխատության տարբեր ձևերին օտար բառերով մերթա (կամ մարարթ), սալաֆ և ֆուրուս էին անվանում: Դրանցից առաջինը վերաբերում էր վարտցանքին, այսինքն վաշխառուն գյուղատնտեսական մթերքների բերքով էր ստանում իր ստիպունները: Երկրորդը՝ սալաֆը, տարածվում էր անասունների վրա. գյուղացին ստիպուններ վճարում էր անասուններով, իսկ երրմին էլ անասնամթերքներով՝ յուղով, բրդով, պանրով և այլն: Երրորդը՝ ֆուրուսը, փոզով վճարվիչը ստիպն էր: Ժնքը ղեկավար էլ ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, ստիպուններն առասպելական թվերին էին հանում (60 սոկոս, 70 սոկոս և ավելի)⁷⁵: Ահա թե ինչպես էր հայ հողի վրա վաշխատությունն իրեն ղրեւորում, նույնիսկ մերձավոր անցյալում: Այդ աշարքը պատժվում էր հայ հին ու միջնադարյան օրենքներով, որովհետև այն բացահայտ վտանգավոր էր սիրող հասարակական ուժերի, այդ թրվում հոգևորականության համար:

Գուլի ոչնչացումը: Քրեական իրավունքի պատմության մեջ ուրիշին պատկանող ցույցի, առանձնապես նրա տան, ցանցների և սահմանների գիտավորյալ ոչնչացումը միշտ էլ խտորեն հետապնդող, քրեական օրենքով պատժվող հանցագործություն է համարվել: Դրա պատճառը հասկանալի է. ուսնագրություն էր սրբության սրբորձ մասնավոր սեփականություն զեմ: Այդ ուսնագրությունը էր կարող հանդերձվել և իրականում չէր էլ հանդերձվում, եթե նույնիսկ այն արտահայտվեր ոչ թե ուրիշի գույքի հափշտակումների, այլ այդ գույքի ոչնչացման կամ վշացման ձևով: Մեղավորները պատժվում էին պետական հարկապանքի ամբողջ ուժով, նրանք դատապարտվում էին մարմնական պատիժներին, նույնիսկ մահապատժի:

⁷⁴ «Ներքոսի Շնորհալույ թուղթ ընդհարականս», էջ 107:

⁷⁵ Տե՛ս «Մշակ», 1887 թ., № 78:

Դեռևս բարեխոնական օրնադրությամբ նախատեսվում էին ուրիշի գույքի դիտավորյալ և անզոր ունչացման ու փշացման բաշխման հիմքեր, և նման արարքները պատժվում էին ընդգծված խստությամբ:

Ուրիշի գույքի ունչացումը կամ փշացումը հետևողական կերպով էր պատժվում նաև մովսիսական օրենքներով. նրկորդ օրինացում (ԺԲ 6), օրինակ, այն միայն էր զորացվում, թե երբ հրդեհ է բռնկվում և հավաքված օրանք կամ շնեմված ցորենը, կամ արարք այլով է, հրդեհ գցողը իբրև պատիժ պարտավոր է հատուցել ամբողջ վնասը:

Այս հարցում առանձնապես անողոր էին ստրկատիրական Հռոմի քրեական օրենքները: Չալոսի վկայությամբ «Տասներկու տախտակներ» նորմերից մեկի համաձայն շղթայվում, և մտրակահարվելու հետ մահվան էր դատապարտվում նա, ով նախատեսված կերպով հրդեհում էր ուրիշի տունը կամ տան մոտ գտնված հացահատիկի դեղը: Իսկ եթե հրդեհ տեղի էր ունենում անզորության, ապա մեղավորը հատուցում էր պատճառած վնասը, անվնասունակ ճանաչվելու դեպքում նա ենթարկվում էր ավելի մեղմ պատիժների կամ ստրկացվում էր: Պլինիոսի վկայությամբ «Տասներկու տախտակների» մեջ նախատեսված էր մեկ այլ իրավանք, որի համաձայն ուրիշի ծանր շարակամությամբ կամ դիտավորությամբ կըտրելու դեպքում մեղավորները ստժողին հատուցում էին 25 առ, այսինքն՝ փաստորեն մի պատկանելի դամար:

Հռոմեական հետագա օրենքներով, ինչպես նաև հին աշխարհի ու բովանդակ միջնադարի անխոր բոլոր պետությունների օրենքներով, ուրիշի գույքի դիտավորյալ ունչացումը և փշացումը, մասնավորապես, երբ դրանք զուգորդվում էին նյութական մեծ վնասների կամ մարդկային զոհերի հետ, նույնպես հետապնդվում էին իբրև ծանրագույն հանցագործություններ:

Հին և միջնադարյան հայ օրենսդրական-իրավաբանական հուշարձանների հեղինակները նույնպես անզորացրել են այդ դեպքերին: Հուշարձանների մեջ մի ամբողջ շարք իրավանքորմեր կային, որոնցով, որպես հանցավոր արարքներ, այլ կերպ ասած քրեական հանցագործություններ արգելվում էին ուրիշի գույքի հրդեհում, որչինչացում կամ փշացումը: Նշված արարքների պատժելիության հիմնական նախապայմանը համարվում է սուրյնկտիվ մեղայան հիմք՝ մեղքը: Դիտավորությամբ կատարվելու դեպքում մեղավորները պատժվում էին, իսկ անզորության դեմ պատահականությամբ կատարվելիս՝ հատուցում էին իրենց պատճառած վնասը:

Դեռևս հայոց Հայրապետ Ներսիսի վերագրվող կանոններում իրականորմեր կային այն մասին, որ ուրիշի այդին հարկանողը, երբ դա կատարվում է դիտավորությամբ (սառ շարի», ինչպես ասված էր էպոստոլ), ենթարկվում էր ետմյա ապաշխարության: Նույն պատժով էին զատապարտում ուրիշի կըր կամ այլ բանող անասող սպանողին: Իսկ երանք, ովքեր դիտավորությամբ հրդեհում էին ուրիշի տունը, դատապարտվում էին ավելի խիտ պատժի տասնամյա ծանր ապաշխարանքի: Նույնարժանողականներ մենք տեսնում ենք մեր Կանոնագրքի բնագրում տեղ գտած այլ կանոնագրություններում էս:

Գավիթ Ապովկա որդին մեզ հետաքրքրող հարցին նվիրել է միայն մեկ հոդված՝ 60-րդ հոդվածը: Այդ հոդվածն ավելի բնոհատոր կերպով է հարցը դնում. վնաս հասցնելու եղանակը հրճարթյունն է, մեղքի ձև՝ դիտավորությունը, իսկ հանցագործության սեականներն են հասարակ և քրակալը: Հանցագործությունը որակյալ էր դասնում, երբ հրճությունը զուգորդվում էր անասունների անկման կամ մարդկանց նկատմամբ զժբախող դեպքերի հետ: Այս դեպքերում, հասկանալի պատճառով, պատժելիությունը անճանեմատ խտանում էր: Ահա այդ հոդվածի տեքստը. «Այլ վնաս այրեցողաց՝ եթե համարաց միայն եղի կրակ մի անգամ և եկեցեթ ի զղումն է նա ապաշխարեսցե: Ապա թէ անասնոց վնասաց ժ ամ: Իսկ եթե մարդ վնասեցա ի տանն, ուր զհուրն եղ, ի խորդ և ի մոխիր, զամենայն ատուր կենաց ապաշխարեսցե և թէ լիցի լստին թաշալի արժանի»: Այսպես էր ուրիշի գույքի ունչացումը պատժվում Գավիթ Ապովկա որդու Կանոններում:

Մխիթար Չոռն ու Սմբատ Սյուրպպետը ուսումնասիրվող արարքի իրավաբանական զնահատականն ու արժեքավորումը, այդ թվում քրե-իրավական արժեքավորումը տվել են իրենց զատասանագրքերի մի քանի հոդվածներում: Նրանք ուրիշին պատկանող գույքի ունչացումը կամ փշացումը մեթթ համարել են քրեորեն անարարք արարք և մերթ էլ ծանր քրեական հանցագործություն: Այդ սահմանազատան հիմքում, ինչպես պարզ կերպով նկատվում է, երանք դնում էին մի կողմից սուրյնկտի դրանորած մեղքի ձևը և մյուս կողմից՝ կատարված արարքի թողած հետևանքների թնայվելը: Երբ արարքը կատարվում էր անզորության կամ պատահմամբ և հետևանքներն էլ ծանր չէին լինում, սուրյնկտները քրեական պատժմանի չէին ենթարկվում, երանք միայն հատուցում էին պատճառած վնասը և դրանով հարցը լուծվում էր: Իսկ երբ արարքը կատարվում էր դիտավորությամբ կամ թեկուզ և անզորությամբ,

բայց այն զուգորդում էր ծանր հետևանքների հետ, մեղավորները ենթարկվում էին քրեական պատժմաների կամ համեմալն զեպս այնպիսի տույժերի, որոնք իրենց բնույթով ու էությունով, փաստորեն, դատական պատժման էին:

Մի քիթար Փոշն ուրիշի զույլի ոչնչացման և փշացման զեպերը բնութիւյան է առնում իր Գառաատանազգրքի երկրորդ մասի 42-րդ, 48-րդ և 118-րդ հոդվածներում, որոնց համապատասխան իրավանորմներ մենք գտնում ենք Մմբատ Սպարապետի մտա (120-րդ, 135-րդ և 155-րդ հոդվածները): 42-րդ հոդվածում Փոշն ուրիշին պատկանող զույլի հրդեհումը պատժում է պատժաբան զմասն մինչև կրկնապատիկ արժեքի հատուցմամբ, բայց կրկնքն պատժաբանփոր որոշելիս նա պահանջում է վաղորոք մանրամասն կերպով տուգել և պարզել, թե որտեղից է առաջացել հրդեհը, մտտիկից, թե հետիկից, ով է արդյոք հանցիտանքի արարել սուրյնկտը, փորքահասակ, թե տարեց մարդ, պատահարք, թե դիտալորութչամբ է հրդեհը բրուրելիվը, բարեկամ, թե թշնամի մարդ է հրդեհողը և այլն: Այս և նման հանգամանքները մանրամարկիտ հաշի տանելով միայն Փոշը թույլատրում էր հանցագործներին նկատմամբ կոնկրետ պատժազմ սահմանել, և մենք այստեղ շենք կարող շասել, որ հարցի նման լուծումը միանգամայն խելացի, դիտականորեն ճիշտ, իրավաբանորեն համարյա անխերի լուծում էր սխկ նախ էլ նախիցէ հուր.— գրում է Փոշը.— և գտանիցէ փուշ և բնդ նմիցէ արիցէ զկայ, կամ գտան, կամ գանդ, տուգանելով տուգանեցի որչ զուրս հաննել իցէ: Եւ զայս զստատան բստ քննութեան հրամայէ սուրբ օրենքն զատել թէ՛ ո՞ր արդեօք հանեալ հուրն եղն՝ մե՞թ թէ հեթի, զանաա՞ս թէ շանքի՞, և յո՞մամէ՛ ի բարեկամն՝ թե՛ ի թշնամուոյ, պատահմամբ թե՛ կամա՞ւ, ման՞նկ թէ ծե՛ր և այլ յայսիսի, զի զայս յայտ ամեն տուգանելով տուգանիլն: Եւ մեզ այսոցիկ հետեւելի է: Զի թէ կամաւ իցէ, կրկին տուգանեցի: Ապա թէ մերժ ի կալ կամ յօրան հանիցէ որ հուր և ոչ զղուշացեալ շիտուցէ, զբովանդակն տուգանեցի: Իսկ թէ հետաստանէ շանդէ զայցէ, զկէս նորուն: Եւ որ ինչ այսոցիկ հետեւիլն նմանապէս եթէ շանամեց այրիցէ կամ ի մարդկանէ, տուն և եթէ այս ինչ շինուածոյ, և կամ հանդերձ և որ ինչ նման սոցին, այնորից և զայս զտանեցնն: Ահա թե ինչպես էր Փոշը պատժում ուրիշի զույլը դիտալորութչամբ կամ անզղուշարար հրդեհող, այսինքն այդ զույլը մեղավորութչամբ ոչնչացնող անձանց:

Նույն սկզբունքներով էր հարցը լուծվում Մմբատ Սպարապետի մտա, միայն այն խիտ էական տարբերութչամբ, որ արարքի առանձնական ծանր զեպերը այստեղ կարող էին պատժվել մահապատ-

ժով, այն էլ որակյալ մահապատժով՝ հանցագործին այրելով: Կիլիկյան Հայաստանում Ֆեոդալական ուժից պետականութչան զյուրեթյունը այդ պատժի կիտար ամուսն իմանգամայն հնարավոր էր քրեանուն: Արեւելյան Հայաստանում նույնպես այդ և նման արարքները հետապնդվում ու խտտորեն պատժվում էին և այդ արվում էր զույլեթյուն ունեցող սոցիալական հարաբերութչունները, ավելի որոշակի ասած՝ սեփականատիրական հարաբերութչունները այաշտպանելու և ամրապնդելու համար: Բերում են Մմբատ Սպարապետի Գառաատանազգրքի համապատասխան՝ 120-րդ հոդվածի տեքստը. «Եթէ որ կրակ ձգէ և խանձն եղն՝ նա պատհէ՛ւ որ տեսնուն աղէկ թէ վասն է՞ր արար՞ շարիմութեամբ արար և կամ թե՛ նչ ցեղ, և թէ կամաւ ք և թէ յոչ կամայ, և թէ կամաւ ք էր ու վասն շարութեան նա զզկննն վճարէ ու կամ զինք այրին. և թէ յոչ կամայ՝ ի հնուէ բերէ հողմն՝ նա զկէսն, և թէ ի մատէ նա միատակ վճարէ: Եւ յայտը վերայ այլն որ տեսնուն զբանն որ էլ լինայ, նա յայնոր վերայ այլնն զիրատեսն»:

Փոշի Գառաատանազգրքի երկրորդ մասի 48-րդ հոդվածը վերաբերում է հատկապես նա զեպերին, երբ դիտալորչալ կերպով հրդեհվում է ուրիշի տունը: Այստեղ Փոշը զուրս է զային անգամ մովսիտական օրենքների սահմաններից և պահանջում է մեղավորներին պատժել նույնիսկ մարմնական ծանր պատժով՝ ձեռքեր կտրելով, միաժամանակ շոտանալով նրա վրա զինչև պատճառված վնասն բտուպատիկ, կոնկանք կամ միատակ արժեքի հատուցման պարտականութչունը: Եթէ կամաւ որ հուր զիցէ տան և բմբունեցի որ եզ, տեսցեն՝ դի թէ ի մարդկանէ մեցի ի հուր, խրատ սուցէ ի ձեռն, թէպես մահու արժանի է բստ օրինակն, թերևս ապաշխարութեան հասանելի: Եւ տուգանք լիցի. թէ կարող իցէ-զբովանդակն պահանջիցի արիւն, ապա թէ ոչ-բստ կարի լիցի: Եվ տուժին խրատ ոչ է, ոչ ատա և ոչ յալան. այլ անտակին խրատ և ոչ տուժի ի զեպէ. բստ արժանուցն զպատշանն արապան: Իսկ եթէ յանանոց, շուրքատիկ հատուցէ: Ապա ան մարք խտուչ կամ օրանի, կամ յայսպիսեացս իցէ, կրկին լիցի տուգանել: Նույն լիցի ցանկոյ և նմանեաց նորին. այսպէս հանդերձից և նոցին նմանեաց: Ահա թե ինչպես էր տունը հրդեհողների զատական պատասխանատվութչան հարցը լուծվում Փոշի Գառաատանազգրքի երկրորդ մասի 48-րդ հոդվածում:

Ինչ վերաբերում է Մմբատ Սպարապետի Գառաատանազգրքի համապատասխան՝ 155-րդ հոդվածին, ապա նրա սակեցրելում այդ արարքի՝ հրձգութչան, համար նախատեսվող պատժներն էին բան-

տարկութիւնը, ծծեն ու մարմնական պատիժները, որոնք բոտ երեւելիքն կիրառվում էին միտամամանակ: Երբ արարքը կատարվում էր ակնհերձ շարկամութամբ, «վասն շարութեան», ինչպես ասված է Նորվանում, մեղավորները պատժվում էին մահապատժով: Բացի այդ, նրանց դուրից վճարվում էր տուժողին՝ պատճառված վնասի կրկնապատիկ արժեքը: «Եթէ ուրդի, որ մարդ իր կամար կրակ ձգէ,— ասվում է այդ Նորվանում,— նա պատեն՝ է տեսնուու, թէ ի խաշունաց կամ ի խումբուրինն է լելի կամ չարքած լինայ նա այն այլ ցեղ է, ու դայն զքնտանոր և ծծուար և խրտատանար պարտ է ըզդորել: Ապա թէ վասն շարութեան լինի՝ նա պեղծ է, որ ի յայտ իշխեց, և թէ որ բանվի և յայտ մեղանք՝ նա պատեն՝ է զինք այն չորովն տուժել, ու լիքը ընչիցն զարքեքրման վրենն տուպլ վճարուել զինչ ազգ ու լինայ վզկենն»: Ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Գատաստանագրքի այս Նորվանի բովանդակությունը սերտորեն առնչվում է նույն Գատաստանագրքի վերնում բերված 120-րդ Նորվանի բովանդակության նետ: Այս երկու Նորվանները, ինչպես նաև Մխիթար Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի 42-րդ և 48-րդ Նորվանները փոխադարձաբար լրացնում են միմյանց:

Մխիթար Գոշի Գատաստանագրքում ուրիշի դուրքի հրդեհման հարցի մասին կա նա մեկ Նորվան, որի համաձայն, երբ մեկը հրդեհում է մեկ ուրիշի արգար վաստակը, նա դատապարտվում է իր պատճառած վնասի եռապատիկ հատուցման, իսկ դրա իրականացման անհնարիեության դեպքում՝ տեսանման ապաշխարութիւն: Մեղ համար անհասկանալի պատճառով դրան համապատասխանող իրավանքում Մմբատ Սպարապետի Գատաստանագրքում չկա:

Բացի վերոհիշյալ երկու դեպքերից, երկու դատաստանագրքերն էլ աստանային Նորվաններով նախատեսում են ուրիշին տուժեանական վնաս պատճառելու այնպիսի դեպքեր, երբ վնասելու բուն եղանակը և մեղքի ձևը հիմնովին փոխվում են, այսինքն վնասը պատճառվում է առաջացրած հեղեղից, իսկ մեղքի ձևը դառնում է բրեւոնի դատապարտելի անզգուշությունը:

Մխիթար Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի 118-րդ Նորվանը, օրինակ, վերաբերում է այն դեպքերին, երբ ուրիշին պատճառված վնասը տեղի է ունենում հեղեղումից: Այնտեղ ասվում է հետևյալը. «Եթէ պատահի ումեք ջուր բերել առտով ի գործ ինչ կամ յաղազս ոտոգանելու, և վճարելու զիւր գործն և ընդ վայր իլողեալ՝ վնաս ընկերի իւրոյ յայգի կամ յանդատան և կամ ի բնակութիւն ինչ անիթէ, եթէ զգուշացուց և ինքն փոյթ կալու զգուշանալ, և ապամայ վնաս ինչ գործեցաւ, կէս վնասուն դատաստանալ վճարեցրի»:

Ապա թէ հեղեղացեալ անփոյթ արար և ոչ զգուշացուց և ինքն ոչ ըզգուշացաւ, եղեալ վնաս ինչ-բովանդակն վճարելու լիցի, մանաւանդ թէ շարակամութեամբ առնիցէ: Սակայն օրինակն տեսի կթէ ումեք էղել, լիւրեմէ՝ թէ ի վարձկանէ՞, ի կատարելո՞յ թէ յանկատարէ՞, ի զիշերի՞ թէ ի տունիւն, և այլն յալզես դատեսցի»: Այս Նորվանից պարզ կերպով երեւում է, որ հեղեղումով ուրիշին վնաս պատճառելու, որպես կանոն, Գոշը քրեական հանցագործություն չի համարում և պատիժ չի նախատեսում, բացառությամբ թեթև այն դեպքերի, երբ այն կատարվում է շարակամությամբ, այլ կերպ ասած վնասելու սխտավորությամբ: Հողվածի վերջին նախադասություններն ուղղակի կերպով ասում են, որ Գոշի համոզմամբ քրեականորեն հետապնդելի և ոչ հետապնդելի հեղադրուներ միմյանցից սահմանազատելու նպատակով անհրաժեշտ է նախապես, այն էլ մանրակրկիտ կերպով ստուգում կատարել՝ պարզելու ու ճշտորոշելու արարքի սուբյեկտի մեղքի բնույթը, այն, թե նրա կողմից հանցավոր նպատակալըրում էղել, թե չի էղել, զիտավորությամբ է կատարվել արարքը, թե անզգուշաբար:

Նույն կերպ է հարցը լուծվում Մմբատ Սպարապետի մոտ, որի Գատաստանագրքի 150-րդ Նորվանը, հիմք ընդունելով Գոշի Գատաստանագրքի երկրորդ մասի վերոհիշյալ 118-րդ Նորվանը, բառացի կերպով ազդարարում է. «Եթէ որ առտով ջուր տանի ի լիւր բանին կարիքն, և իր կարեցն լուծէ զջուրն որ այլոց վնաս արել, նա թէ արիացուցել լինայ զվնասուն և թե՛ն՝ նա կիտավճար տալ իւրն ապա ի՞նչ ոչ որ պակ լուծու լինայ և Մեղել անփոյթ՝ նա ի լման արարել, բահրակ թէ վնաս շարութեան լինի այրել: Բայց աղէկ յիմանալ պիտի զպատճառն թէ զինքն է լել յանկակած, թէ ի մշակէ է, թէ լինէ իրաց. և ի վերայ այնոր այնև զվճարն, նա ումն այս է իրավանցալ: Ահա թե ինչպես իր պատժվում հեղեղումից պատճառված վնասը Մմբատ Սպարապետի Գատաստանագրքում:

Անհրաժեշտ ենք համարում ասել, որ բնութիւյան անազարտության պահպանման և բնութիւյան զանազան օրյեկտներին զեմ ուղղվող ուսնձգությունների պատժելիության հարցի մասին ևս հայ իրավունքի հուշարձաններում քաղաքացիական ու քրեական բնույթի շատ իրավաբաններ կան: Այդ նորման ուղղակիորեն արժագանքում են մեր ժամանակների պահանջություններին ու խնդրներին: Հայոց կանոնադրքի, Գալիթ Այվիկա որդու Կանոնների, Մխիթար Գոշի և Մմբատ Սպարապետի դատաստանագրքերի, Ներսես Նամբրուցու աշխարհիկ և զինվորական օրենքների բոլոր այն նորմերը,

որոնք մեջ խոսվում է ցանքատարաօրիցունների հեղգման, արտերը և հնձված հացահատիկը հրգեհեռու, կենդանիներին անհարկի տանջահարելու, սպանելու կամ ոչնչացնելու մասին, գիտաճանաչողական և դատախարակչական որոշակի նշանակություն ունեն անգամ ժամանակակից մարզու համար:

Մտանանշված իրավանքումների շատերի տեսական-իրավարանական վերլուծությունը մենք արդեն արվել ենք: Կանոց առնենք այդ տեսականից ստանձնապես հետաքրքիր ևս մի քանի դեպքերի վրա, երբ հանցավոր ստանձգություն է կատարվում բերքատու ծառերի դեմ. երբ արածավելում են արտերն ու այգիները կամ երբ ավերվում են թուղունների բնեքը:

Միթիթար Գոշն իր Գատաստանագրքի երկրորդ մասի 49-րդ հոդվածում ազդարարում է, թե նա, ով շարունակմբ զրոգված կտրում է ուրիշի բերքատու ծառը, և դա քննվում ու հաստատվում է, պետք է նրան իբրև օրինազանցի պարտավորեցնել նոր ծառ անկել ու այդ ծառի անպողաձվետության բոլոր տարիներին տուժողին վճարել սեփական ծառերից այնքան բերք, որքան կտար կտրված ծառը: Նի՞ն ծառ կտրողը սեփական ծառերքը չի ունենում, այդ դեպքում նա պարտավոր է մուծել բերքի լրիվ արժեքը:

Արձագանքելով մեծ իրավարանին, Ամբատ Սպարապետն իր հերթին մատնանշում է. «Եթ չ ոք ի սիրտ կընէ ու երթայ դմարդոյ պողաբեր ծառ կտրէ. նա կու հրամայէ իրավունքս որ այլվայ իր տան անկել, և չիմանան թէ այն ծառն քանի արժենայ, և թէ որչար պտուղ տայր ի տարոջն, նա չամեն տարի դայն խաստն վճարէի ծառին տէրն, ինչուր նոր անկածի ի յաջնոր շաբն բերք տայ» (հոգ. 159):

Նույն ոգով է հարցը լուծվում և այն դեպքում, երբ արածավերվում է ուրիշի արտը կամ այգին: Գոշը ազդարարում է. եթե մեկն ու մեկը թողնում է, որ իր անասունները վնասեն ուրիշի արտը, այդ դեպքում նա պարտավոր է վնասը հատուցել իր արտի և այգու եկամտից (Գատաստանագիրք, երկրորդ մաս, հոգ. 41):

Նույն սկզբունքը տեսնում ենք Սպարապետի մոտ. «Եթէ ոք զիր անասունքն թողու որ երթայ զայլոց արտ ուտէ կամ զայլզի՝ նա չափին չուանով զկերածն, և այն շափով ի յիրոյն տան, և թէ լուճնայ՝ նա զայն վզենն զեկան վճարէ» (հոգ. 119):

Թե՛ Գոշի և թե՛ Սպարապետի գատաստանագրքերը պարտավորեցնում են ապաստանել մոլորված անասուններին և հետագայում տներին հանձնել, օղնել, որ հիվանդ, վայր ընկած զրանտը կամ մյուս անասունները վեր կենան ու ապաքինվեն, Եթե ձաղնրով կամ

ձվերով թռչունի բուն հանդիպի, մայր թռչուններին ձևոք չպետք է տան, ձագերին ու ձվերին շպկտք է ոչնչացնեն (Գոշ, Գատաստանագիրք, երկրորդ մաս, հոգ. հոգ. 72, 73, 75, Ամբատ Սպարապետ, Գատաստանագիրք, հոգ. հոգ. 161, 162, 168): Արանք բոլորը պատմական օրինադրույթներ են ու գատողություններ, որոնք, նորից կրկնենք, արձագանքում են մեր դարին և գիտաճանաչողական ու դատախարակչական որոշակի նշանակություն ունեն մեր օրերում:

ԿԱՇԱՌՔ ԵՎ ԵՐԱՆ ԱՌՆԵՎՈՂ ԼԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անտադոնիստական հասարակությունների դարավոր պատմության մեջ ափրապետող դասակարգերն ու դասերը, սեփական շահերին համապատասխան, միշտ էլ գործել են այն ուղղությամբ, որ իրենց ստեղծած պետական-պաշտոնական սպարառները և այդ սպարառների բազմապիսի ու բազմաստիճան պաշտոնյաները, լինեն դրանք պետական, քաղաքական կամ ռազմական զործիշներ, արդարագատությունն իրականացնող անձինք կամ կրոնի (պաշտամունքի) սպասավորներ, հետևանկանություններն ու դասակարգային անաշառությամբ կատարեն իրենց պարտքը: Հիշյալ սպարառների աշխատողները զործող օրենքների ուժով ամենաանողոք կերպով հետապնդվել ու պատժվել են ամեն անգամ, երբ նրանք, խախտելով սահմանված կարգը, շարահանություններ են թույլ տվել, առանձնապես կաշառք են վերցրել, դրամաշորթությամբ են զբաղվել, անարդար դատավճիռ են կայացրել և այլն:

Մատենաշված հանցագործություններից ամենաբազմազան է ամենատարածվածը պատմականորեն հանդիսացել է կաշառքը կամ, ավելի ճիշտ կլինի ասել, կաշառակերությունը: Դա արտահայտվել է նրանում, որ պաշտոնյաները մասնավոր անձանցից այս կամ այն ձևով նյութական կամ նման կարգի այլ օգուտներ են կրողներ այն բանի համար, որ նրանք սպարառներ էին կատարել ի պաշտոնին:

Քրեական իրավունքի պատմության ընթացքում կաշառակերությունը, որպես առանձին խտրությամբ պատժվող հանցագործություն, հանդիպում է այդ իրավունքի զարգացման շահագրգիռ լավ ժամանակաշրջաններում: Բրբելունի օրենսգրքում մի բանի ակնարկներ կան այդ արարքի պատժելիության անհրաժեշտու-

թյան մասին: Մովսիսական օրենքները նախատեսում էին դատավորների կողմից կաշառք անելու դեպքերը, դատավորների պարտավորեցնում էին իրավունքը չձանել, աշառություն չանել, անմեղին ու արդարին չձեռնցնել, մասնավոր կաշառք չառնել, որովհետև կաշառք «կուրացնում է աշարացներին և շուտ է տալիս արդարների զործը» (Ելեց, ԻԳ, 7): Ընդունված օրենքները ազդարարում էին դատարանում անիրավություն չանել, ազգասաներին երեսպաշտություն չանել, մեծին շոգորորթել և արդարությամբ դատել (Ղևտացոց, ԺԹ 15): Հրամայում էին արդար դատարանով ժողովրդին դատել և կաշառք չվերցնել: այն պատճառարանությամբ, որ կաշառքը կուրացնում է իմաստունների աչքը և այլն (Երկրորդ օրենսգ, ԺԶ 18—19): Այս օրենքների դասակարգային բովանդակությունը ժամանակակիցներիս լիովին հասկանալի է: Դրանցով հետապնդվում էր գոյություն ունեցող, բայց զեղև թույլ պետական իշխանության գործունեության օրինաչափության աղանձվածան նպատակը:

Կաշառակեր դատավորների նկատմամբ առանձնապես անողոք են եղել հին պարսիկները: Հերոդոտը հազորգում է, որ պարսկական թագավոր Կամբյուսեսը մահապատժել է ննթարիում կաշառառու դատավորին, նրան մաշկահանում է և հրամայում այդ մաշկով ծածկել նույն այդ դատավորի ավտը, որպեսզի այլևս ոչ մի նոր դատավոր չհամարձակվի նման արարք կատարել: Պատմական այլ ազրյուների համաձայն Գառհի օրոք սրբադորված սովորություններ էր կաշառառու պաշտոնյաներին, առանձնապես դատավորներին, խաշահանություններ մահանալ դատապարտել:

Պակաս զսժան չէին հռոմեական օրենքները: «Տասներկու տախտակներ», ինչպես նաև հետագա դարերի քրեական օրենքների նշված արարքի (կաշառքի) համար, մասնավոր կերպ արտրկտներին զերում հանդես էին գալիս դատավորները կամ պետական-քաղաքական գործիչները, հաճախ նախատեսում էին մահապատժի՝ գոյքի բունարավումով: Չնայելով օրենքների խտությունը, հռոմեական կայսրության մեջ այդ արարքը միշտ էլ լայնորեն տարածված հանցագործություն է եղել: Հին Հռոմի իրավաբանները զայսույնով են խոսում այն պաշտոնյաների մասին, որոնք մեկացվում էին կաշառակերության և դրան առնչվող արարքների մեջ:

Կաշառակերությունը շահագանց լայն տարածում ստացավ ֆեոդալիզմի օրոք: Կաշառակերների շքեցանակն ավելի լայնացավ և ընդգրկեց պետական ու հասարակական-քաղաքական կյանքի

անխոր բոլոր բնագավառները՝ Գրանցից հետո չմնացին եկեղեցու սպասավորները՝ սկսած շարքային վանահայրերից ու քահանաներից և վերջացած կարդինաներով, կաթողիկոսներով ու պապերով՝ Գրանով էլ բացառվում այն հանգամանքը, որ պետական պաշտոնական օրենսգրքերը, ինչպես նաև եկեղեցական-կանոնական օրենքները ներլցվեցին կաշառքի ու դրան առնչվող արարքները պատճենիության վերաբերյալ խիստ սանկցիաներ նախատեսող ըրավաճորմերով։ Բայց պետք է ասել, որ հրատարակվող այդ օրենքները, որպես կանոն, այստեղ նույնպես թղթի կտորների էին վերածվում այն պատճառով, որ ֆեոդալական կարգերը, ինչպես նաև մարզու կողմից մարզու շահագործման վրա հիմնված մյուս բոլոր կարգերը իրենց հատուկ, օրյկեթիվորեն զբաղվող գործունեի ուժով հանցագործություններ, այդ թվում կաշառակերություն ու դրան առնչվող հանցագործություններ են ծնում ամեն օր, ամեն ժամ, տարերայնորեն և հաճախ էլ մասսայական մաշտարներով, իսկ միայն խիստ պատիվներ ստանաող օրենքներով զբաղանք առաջն առնելու, էլ տակվել դրանց լիկվիդացնելու չափերը պարզապես ապարդյուն են դառնում։

Կաշառակերությունն ու դրան առնչվող հանցագործությունները տարածված են եղել նաև հայ պատմական իրականության պայմաններում և դա ստիպել է մեր կանոնագրքի ու աշխարհիկ օրենքների, առանձնապես դատաստանագրքերի հեղինակներին կազմվող ակտերում ու հուշարձաններում համապատասխան իրավաճործի մտցնել։ Այդ նորմերում նախատեսվող հիմնական հանցագործություններն էին կաշառակերությունը, զոռաքաղությունը, սիմոնիականությունը և կաշառակերությունը։

Օրենքները կաշառակերությունը համարում էին պետական, հասարակական և հոգևոր ֆունկցիաներ իրականացնող մարդկանց կողմից իրենց դիրքի շարաշահումով մասնավոր անձանցից նյութական օգուտների ստացումը։ Կաշառակերություն էր համարվում, օրինակ, երբ դատավորը, դրամ կամ նյութական ուրիշ արժեքներ վերցնելով, արդարացնում էր հանցագործին, կամ երբ եպիսկոպոսը նյութական որոշակի հատուցումով մեկին քահանա էր ձեռնադրում, կամ ասեղն չէր հայտնում իր կողմից սպասարկվող շրջանում մտցնելու պատրաստված լինելու, կամ մտցնեականների գործունեության մասին։

Ջոռաքաղություն էր համարվում դրամ կամ բնջհանրապես նյութական արժեքների զջուրմ՝ պաշտոնական կամ հոգևոր դիրքի շարաշահումով, նվերներ վերցնելու անվան տակ, մարդ-

կանց կողպատում։ Ջոռաքաղ էր դիտվում, օրինակ, այն քահանան, որը հարսանիքի, կնուծքի, թաղման ծեսերը կատարելով շինականներից դրամ կամ նյութական արժեքներ էր շորթում կամ աշուպա կոչված ճողադրամ էր վերցնում։ Որպես հանցավոր արարք ճողաքաղությունը սերտորեն առնչվում էր կաշառակերության հետ։ Գրությունն այնպես էր, որ մեր կրոնական և աշխարհիկ օրենքների նորմերը այդ երկու հանցակազմերը հաճախ չէին սահմանազատում իրարից, դրանց մեջ կաշառակ, կաշառակերություն և զոռաքաղություն տեղախնները, որպես կանոն, օգտագործվում էին միասնամասկ։

Սիմոնիականությունը դա շահագիտական նպատակներով կաշառքի միջոցով ձեռնադրվելն է, վրդով հոգևոր կոչում ստանալը։

Կաշառակերությունը կամ կաշառք տալը նույնպես հանցագործություն է, որովհետև մարդիկ պետական, հոգևոր կամ հասարակական-քաղաքական դիրք ունեցող անձանց նյութական օգուտներ տալով, այլ կերպ սասած, նրանց զնելով, նրանց գործունեությունը համարացնում էին իրենց սեփական շահերին ու պահանջներին, կամ, ինչպես ժողովրդական իմաստուն առածն է ասում, կուրացնում էին նրանց ու շահում դրանից։

Նշված հանցագործություններից հին և միջնադարյան Հայաստանում ամենատարածվածն ու ամենափտանգավոր կաշառակերությունն էր, այսինքն կաշառք ստանալը, Գրա տարածվածությունն ու բարձր վտանգավորության մասին միաբերան վկայում են համարյա մեր բոլոր պատմիչները սկսած V և հետագա դարերից։ Նրանց հաղորդումներից պարզ կերպով երևում է, որ կաշառք վերցնելու ախտով վարակված են եղել պետական, քաղաքական, հասարակական, դատական և եկեղեցական-հոգևոր սանդղազում դիրք զբաղած գործիչները։ Իր Պատմության վերջում՝ «Քրդու-ի մեջ Մովսեսն Խորենացին իր հոգու ամբողջ կսկիծով գանգատվում է. «Վարդապետք տխմարք և ինջնահաճք, անձամք ստեայ պատիւ և ոչ յկատուծոյ կուչնցնալ, արծաթով բտտեայալ և ոչ ճողով. ոսկե-սերք, նախանձոտք, թողեալ գհնզուկիւն, յորում Աստուած բնակէ, և զալլլլ եղեալ դիւրեանց հոռսս զիշտանով... իշխանք սպատաճքք, զողակիցք զողոց, կծիք (կաշառակեր), կծծիք, ժլատք, ազահք, յախշտակողք, աշխարհուներք, աղտեղաւերք, ծառայիցն համա-միտք Գատաւոր տմարդիք, սուտ իտարող, կաշառառով (բնդգծու-մք իմն է, Ա. Ք.)», անբնորոք իրաւանց, անհաստատք, հակա-ասկողք»։ Ինչպես տեսնում ենք, Խորենացին առանց որևէ վերա-

պահման կաշտակեր է անվանում վարդապետներին (ուսուցիչներին), իշխաններին ու մանավանդ դատավորներին: «Ողբը-ի մեջ այս տեսակետից նա մի առանձին համակրանքով չի արտահայտվում նաև մյուսների կրոնավորների, վիճակավորների, աշխարհական գործիչների և զինվորականների մասին: Չկա ծուխ առանց կրակի: Եթև այդ հանցավոր արարքը ժամանակին լայնորեն տարածված չլիներ, հազիվ թե մեր պատմագիրը հարչ համարեր այդ մասին, այն էլ իր Պատմության վերջում, հիշատակում անգամ անելու⁷⁶:

Վարդանանց պատերազմի ազնիվ վկան, մեր քաղցրալեզու Աղիշեն գտնովյանը խոսում է այն մասին, թե ինչպես հին Հայաստանում նույն այդ պատերազմի նախօրեին պարսկական տարրերը կաշառը միջոց էին գարծրել քաղաքական նպատակների հասնելու համար: Հայոց մարդպանը, ասում է Աղիշեն, պարսկական արքունիքից բերել էր նաև շատ դրամ և գողտնի սրա-նրա

⁷⁶ Սակար, ետրևնացու «Պատմության» աշխարհարար թարգմանիչներից մեծանուն Սո. Մալխասյանը «Ողբ»-ի թարգմանությունը ծանոթացրած է ազգասրբելով, թե զոր վերջին մասն ընթերցողը չլսեր էր որովհետև բառացի բնորոշ էր, որ իբր թե հայ ժողովրդի բոլոր զատակազերի սպակակնում են եղել ամեն տեսակ ժողովրդյուններով, և հայոց աշխարհը լցված է եղել ամենակերպ սարերախն ազնուներով և հասարակական շարիքներով: Ես դատողություններ է անում այն մասին, թե իբր պատմաճոր «Պատմության» մեջ մի էջը չի արդարացնում այդ ողբույն պատկերը, որ այնտեղ նկարագրված է Հարջո սպայու գեներով, Սո. Մալխասյանը այդ պատկերը միանգամայն մտացածին է համարում՝ արտահայտություն պատմաճոր իբր թե վշտահար հոգու ու հուռանուն արմատաբուխան, որոնց արմատները, ըստ նույն Սո. Մալխասյանի, հասարակական-քաղաքական և անձնական բողբոջն այն հոգ ունեին Այս կարգի գաղափարները մեր խորին համոզմամբ արժյալ զեղտած գիտական ոչ մի հիմք ու ապացույց չունեն, երբ պատմագիրը սեղծ սարխանի վրա գրում է, թե սովյա եղբորմ, սովյա պատմաաշխատում հասարակական շարիքներ են տարածված եղել, սպա մենք գրողները ենք որովոնք հենց այդպես էլ հասկանալ, մտնավանդ որ հակասակ գրությունն ապացույցով փաստեր չունենք: Անհրաժեշտ է ասել, որ հարցի նման ժողովրդան զեղտած ինչպես ետրևնացու, այնպես էլ ամեն մի այլ պատմագրի յուրաքանչյուր մտքին ու գաղափարները կարելի է ցանկացած կենսարտությունը տալ և նման մեկնաբանությունները, համակառնել է, միշտ էլ հակասական կլինեն: Անկեղև թյուրիմացություն է Սո. Մալխասյանի նաև այն գրույթը, որ իբր ետրևնացու «Պատմության» ոչ մի էջ չի արդարացնում այն ողբույն պատկերը, որ «Ողբ»-ում նկարագրված է: Ընդհակառակը, ամբողջ պատմությանը հենց այդ պատկերն ու գեներալ արդարացնող ու հիմնավորող պատմություն է: Անկեղև փաստ է, որ «Պատմության» մեջ բազմաթիվ էջեր են կոխվում իբր ժամանակի տարածված հակահասարակական արդարներ, այդ թվում հանցավոր արարքների (զավանտություն, սովապետություն, կաշառ, սեռական հանցագործություններ, սպանություն) արարածներ լինելու մասին, և ետրևնացին հաճախ ակարգվում է անգամ դրանց պատճառները:

գրպանն էր դնում, իբր թե պարզև ու պատիվ էր տալիս և մեծ նենգություն անձեղ մարդկանց հրապուրում էր ու իր կողմը քաշում: Ահա թե կաշառն ինչպիսիս չոր է ունեցել հայ ժողովրդի համար ճակատարարական ժամանակաշրջանում՝ պարսիկների դեմ այդ ժողովրդի մղած հերոսական պայքարի ժամանակաշրջանում: Աղիշենի այս և նման հաղորդումները արձագանքում են պատմաճոր՝ ետրևնացու նույնարժանիակ ուղղակի հաղորդումներին⁷⁷:

Փակտոսու Բուզանդը պատմում է, թե մի առիթով ինչպես Անգղիզ կաշառի միջոցով աշխատում էր պարսից թագավոր Շապուհին ու հայոց թագավոր Արշակի գծտեցնել: Իր նպատակին հասնելու համար Անգղիզ մեծ քանակությամբ ոսկի է տալիս հայոց Վասակ զորավարին, կաշառում բոլոր մեծամեծներին, որոնք իրենց համամայնությունն են տալիս նրա համար աշխատելու: Բուզանդի այս հաղորդումը երևում է, որ հին Հայաստանում հանցավոր սարքերը կաշառի միջոցով հնատարած էին նույնիսկ քաղաքական ստոր նպատակներ՝ գծտեցնել և միմյանց դեմ պատերազմի հանել տարրեր պետությունների կամ իշխանությունների, և ճըշմարտությունը պահանջում է ասել, որ դա նրանց երբևեմ հաջողվում էր:

Բուզանդի հաղորդումներից երևում է, որ բարձրաստիճան հողերապականներն անգամ անտարրեր չեն եղել կաշառ անելու և սիմոնականություն հարցում: Այս տեսակետից խիստ ուշագրավ է նրա պատմության այն հատվածը, որտեղ խոսվում է Հոհան Եպիսկոպոսի վարքի մասին⁷⁸: Հոհան Եպիսկոպոսը մի անգամ անցնելով ճանապարհով տեսնում է ձիու վրա նստած ինչ-որ երիտասարդ մարդու: Ձին իր գեղեցկություններով դրամում է նրան և ահա նրա մեջ միտք է հղանում տիրանալ ու փոխարենը նրա տիրոջը քահանա ձեռնադրել: Հոհանը ձիատիրոջը ցած է իջեցնում, ճանապարհից զուրս հանելով հրամայում է խոնարհվել իր առաջ: Երբ այդ մարդը կատարում է նրա կամքը, Հոհանը ասում է նրան. «Քեզ երեց (քահանա) եմ ձեռնադրում», իսկ նա պատասխանում է. «Ես մանկությունից ի վեր եղել եմ ավազակ, մարդասպան, ջարդագործ, խանակ վարքի տեր և այժմ էլ նույն գործունե եմ գտնվում, ես սրբան չեմ այդ քանին»: Չնայած երիտասարդ մարդը շատ է համառում, վիճում ու խնդրում, բայց Հոհանը անզորվելի է մնում:

⁷⁷ Տե՛ս Աղիշենի վասն Վարդանանց և Հայոց պատերազմին», Երևան, 1957, էջ 54:

⁷⁸ Տե՛ս «Փաստասիր Բուզանդացու Պատմության Հայոց», 1889, էջ 137—138:

թող ինքը ձին ստանա, փույթ չէ, թե երկիվա ավագանի ու մարդասպանը բահանա կդառնա:

Վերջապես Հոհաննայ շարժուն զետին զլորելով, ձեռքը զընում է նրա վրա բահանա ձեռնադրելու համար և հետո ոտքի կանգնեցնելով հրամայում է վերնագրեալը հանել և հոգևորականի շուրջառ զցել վրան: Դրանից հետո նա ասում է. «Դե՛ս ըս դուրը և այդ գլուղի բահանան դարձիք»: Նա նույնիսկ շփոթեր, թե որ գլուղիցն էր այդ մարդը: Ի վերջո այդ բուրից հետո Հոհաննայ մտնեմուն, բռնում է ձիու երասանակը և ասում. «Այս ձին էլ ինձ աշխատավարձ լինի, որ բեզ բահանա ձեռնադրեցի»⁷⁹:

Այսպիսով, պատմագրի վկայությամբ հայ եպիսկոպոսը մի ձիու համար ավագանին ու մարդասպանին դարձրեց բահանա: Այդ զեպըր տեղի է ունեցել մեր թվարկության IV տարում, երբ կրոնի բարձրատիճան սպասավորները, այդ թվում եպիսկոպոսները հավանաբեցվում էին սրբերի և սուրբ աննաշված այդ կրոնավորը կաշառքով ծախում է հողերի պաշտոնը: Ահա Հոհաննայ կես կատակ կես լուրջ պատմության ներքին իմաստը:

Անվանի հոգևորականների կողմից, այն էլ կաթողիկոսի պաշտոնը գրավելու համար կաշար առաջարկելու մասին բավականին հավաստի հիշատակումներ կան Ղազար Փարպեցու զործունեության հետ կապված պատմության մեջ, Հայտնի է, որ իշխան Վահան Մամիկոնյանը տեսնելով Ղազար Փարպեցու մեծ շնորհքը ու սաղանջը, նրան Վաղարշապատի կաթողիկե մայր եկեղեցու վահանաչը է նշանակում: Այդ բանը դուր չի գալիս մի շարք անվանի հոգևորականների, և նրանք, ինչպես վկայում են պատմական աղբյուրները, թշնամանում են Փարպեցու հետ: Նրանք հանդիմանում են կաշարը առաջարկել նույնիսկ Վահան Մամիկոնի իշխանի՝ ձրգտելով Փարպեցուն հեռացնել տալ, որ իրենք զբավեն Վաղարշապատի կաթողիկե եկեղեցու վահանաչության խիստ արդուանավետ պաշտոնը:

Հետագա ժամանակների պատմագիրներն ու զործիչները իրենց հերթին բազմաթիվ փաստեր են բերում, որոնցից երևում է, որ միջնադարյան Հայաստանում նույնպես իրենց զգացնել են տալիս զանազան հանցավոր արարքներ, այդ թվում կաշառք ու զրբան անշուղտ մյուս հանցագործությունները: Իրանում հանձնարվելու համար բավական է թեթևաբան կատարվեցու, Կաղանկատվացու, Գանձակեցու, Իրասխանակերտցու և այլոց պատմությունները,

ժանտիվերնալ Գրիգոր Մագարտրոսի թղթերին և ներսես Ենդեալու այն բազմաթիվ խրատներին, որոնք միջնադարյան Հայաստանում օրենքի ուժ ունեին:

Լատիվերցին, օրինակ, զանգառվում է, որ իր ժամանակներում ամեն մարդ յուր նանապարհը փշացրեց և այդ պատճառով երկիրը լցվեց անօրինությամբ, արգարությունը պակասեց և անառակությունը բազմացավ, իսկ երբ օտար նվաճողները Հայաստան են մտնում, այդ պահից արդեն արգարության օրենքն անիրավության է փոխվում, արժաթասիրությունն ավելի է հարգվում, քան ստովածասիրությունը: Իշխանները զողերին զողակից, վրեժ անող և արժաթին ծառայող դարձան, գրատվորները՝ կաշառակեր, կաշառքի համար արգարագրատությունը ծախեցը⁸⁰:

Շատ ուշագրավ է մի պատմական դեպք, որի վրա ուշադրություն է դարձրել Լատիվերցին և որի զատակարգային էությունը բացահայտել է պրոֆ. Ս. Պոզոսյանը: Դուրապցիները, տոգորված ինքնաբազան քաղաքական զազափորախոսությամբ, ապստամբում են ֆեոդալական շահագործման անողը լծի և կղերի դեմ: Սրանք շարժում են ինչ-որ սրբավայրի խաչ, վայթում մեռոնը և փորձում են սպանել ինչ-որ անվանի կրոնավորի: Այդ զեպերը զայրացնում են տիրողներին և շուտով Մամուկե Հայրապետը զեպի վայրն է շտապում զավտրի եպիսկոպոսներին, բահանների ու աշխարհիկ իշխանությունների ներկայացուցիչներին հետ: Սրանք անողը կերպով պատժում են ապստամբներին, նրանցից ոմանց ճակատին անգամ անտաղարշմ դեռելով, այսինքն ծանր մարմնական պատժ են թարկելով:

Ակտիվ ապստամբներից ու թոնդրակյաններից էր Վրվեռ անունով մի կին: Դատավորը հրամայում է պատժել նաև նրան: Իայց Վրվեռը, ինչպես հաջորդում է Լատիվերցին, կաշառքով զբավում է եպիստատո անունով եպիսկոպոսին, որդեգր է նրան ու այդ կերպ խուսափում է ծանր պատժից: Դատավորն էլ նույնն էր կամենում, քանի որ Վրվեռի երբայրը բարձրատիճան զործիչ էր, որից շատ էր քաշվում հենց ինքը՝ զատավորը⁸¹: Ինչպես տեսնում ենք, Լատիվերցու ապրած դարում անգամ հարավոր էր ծանրագույն հակակրոնական, ավելի ճիշտ կլիներ ասել հակապետական հանցագործություններ կատարել և կաշառքով ու ծախսությամբ անպատժ մնալ:

⁸⁰ Տե՛ս «Լատիվերցույ Հայոց պատմութիւն», Ազգեսանդապուլ, 1893, էջ 78—79:

⁸¹ Տե՛ս նույն տեղը, էջ 164:

⁷⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 275—276:

Վկայակոչենք նաև Ուժնայեցուն: Իր ժամանակագրութեան» մեջ նա գանգատվում է զանազան պատմաաղբյուրներում Հայաստանում տիրող դրության մասին, այն մասին, որ երկրում հանցավոր ճրնույթները, այդ թվում կաշառակերությունը լայն տարածում էին ստացել: նա գրում է. «Ու ահա յայսմ հետև է ոչ որ կարասցն կալ հաստատուն ի հաւատս Քրիստոսի և ի պատուիրանս Աստուծոյ՝ ոչ հայրապետ և ոչ վարդապետ, ոչ եպիսկոպոս և ոչ քահանայ, ոչ արեղայ և ոչ կրօնավոր, ոչ իշխան և ոչ ժողովուրդ: Իշխանք յարեանս ի գոզս և յաւազակս և յափշտակողս, դատուորք ի կաշառս և յանիրազոտատանս»: Մի էջ հետո նա ասում է. «Հայրապետք և եպիսկոպոստք և քահանայք և կրօնավոր արժասնասերք ստովի ջանատուածաներք»: Իսկ մի քանի էջ հետո ավելացնում. «Վաղարզ արծաթյան թողուն ի բաց զհաւատն... առաջնորդքն, իշխանքն լինելոց են կաշառատերք և ստախոսք և սուտ երդմունք և ի ձեռս կաշառացն թիւրեն զդատատանս իրաւանցն աղբատինս և այսպես շարունակ»⁸²:

Միջնագարյան հայ մյուս պատմագիրներից նույնպես կարելի է բացառաբխով մեջբերումներ կատարել այն մասին, որ Հայաստանում տարածված հանցագործություններից մեկը և ամենավտանգավորը դա կաշառակերությունն է եղել: Բայց բավարարվենք ասածով ու դիմենք այլ աղբյուրների:

Պահպանվել են տարբեր ժամանակների վիժագիր արձանագրությունները, որոնք զրվել են բոլորովին տարբեր վայրերում: Այս արձանագրություններն անգամ վկայում են կաշառակերության և զբյուրան առնչվող արարքների տարածվածության մասին պատմական և միջնագարյան Հայաստանում: Այսպիսի, Անիում հայտնաբերված մի արձանագրության մեջ, որը գրված է 1228 թ., խստիվ կերպով պատվիրվում էր, որ եկեղեցու պատրոնները, ով էլ լինի նա, կին թե սղամարդ, կաշառքով վանահայր շինեն. «... պատրոն ով լինի այս սեղանի ի հարանց կամ ի կանանց, ով կաշառք հայր դնէ, այդպիսին նզովս առցն զճուղային զկատուածավաճատին, և զվայնինն զեղբարյաւսպանին և հայրն այլ զործաւորք, որ կաշառք տան յայտնի կամ ծածուկ, երկնաւոր հօրն, հայրապետացն և ամենայն արքոյ առնիձայլ եղիցի յողի և ի մարմին... արդ եթէ մեծ է և եթէ փոքր կարծես առնու թէ հայտ կամ այլ զործաւոր կաշառք է տվել և վրեժխնցիք շինի վերագրելոցս, նզովիցս տէր է, ամեն»:

⁸² Տե՛ս «Մատենա Ուժնայեցոյ ժամանակագրութիւն», էջ 53, 54, 60, 70 և այլն:

Հաճի՛մու հայտնաբերված 1185 թ. արձանագրության մեջ ասվում է. «Եթև որ առաջնորդաց ի յրծայիցէ եկեղեցոյս խորէ և զվատակս բազմաց և տուրս հօռաց իրմ համարի որչափ ատուած արեան է, անշաք նզովմ է, որ կաշառովք հայի, կրիկի նզովմ է»: Հաղպատում հայտնաբերված 1195 թ. արձանագրության մեջ դարձյալ հետևա կարգով անձերնք են սեղում այգապս կաշառատունների զվիւն. «... շինեցի զամրոցս և զեկեղեցիս Հաղպատու տուր նշանիս բազում աշխատութեամբ: Արդ, եթէ որ զսա Հաղպատայ հանէ... նզովեալ եղիցի... և առաջնորդ նորս, որ կամաւոր նախանձու կամ ծալութեամբ կամ կաշառաք դատ ի Հաղպատայ հանէ, զվերորդեալ նզովի առցն: Այսպիսով, նույնիսկ, վիժագիր արձանագրությունների մեջ մարդիկ երկուց են արտահայտել, թե իրենց մահից հետո ուրիշները կաշառքի ուժով կարող են զանազան ապօրինիություններ կատարել՝ իրենց ցանկությունների կամ իրենց աշխատանքի արդյունքների նկատմամբ:

Հին և միջնագարյան Հայաստանում կաշառակերության որպես տարածված հանցավոր արարքի մասին ակնարկներ կան նաև օտարերկրյա պատմագիրների աշխատությունների մեջ: Մի կողմ թողնելով հռոմեացի Տակիտուսի (մեր թվարկության 1 դարի վերջ և II դարի սկիզբ) և արաբ Իբն Բատտուայի (XIV դար) ատանձին ասույթները, վկայակոչենք XI դարի ստորի հոգևորական-պատմագիր Հովհաննես Բար-Շուշանին: Սա իր գրություններից մեկում ուղղակի կերպով հայտարարում է, որ «Հայքս նայնիրպուսները փողով ու կաշառքով են նշանակվում և համայնքներն էլ իրար ձեռքից փողով ու կաշառքով են խլիլում»⁸³: Բար-Շուշանի այս խոսքերը զուցե գրությունը չափազանցում են, բայց ու միջնագարյան Հայաստանում հոգևոր հայրեր հայրեր համախ փողով ու կաշառքով էին նշանակվում և համայնքներն էլ իրար ձեռքից փողով ու կաշառքով էին խլիլում, այդ մասին կան ուրիշ, համեմատաբար անհերքելի այլ ապացույցներ հայ պատմագիրների աշխատություններում, կանոնադրել ու դատաստանադրերի ուղղակի վկայություններում:

Մեր օրերին է հասել մի հետաքրքիր վկայություն, որը անուղղակի կերպով ապացուցում է կաշառակերության տարածված լինելը նույնիսկ հայկական զաղթօտայններում: Լեհ Սազով Պարունյան (պալս) պատմում է, թե ինչպես էին լեհահայ նախադասներում կազմվում հայաց դատական ատյանները և ինչ նշանաբանով էին այդ

⁸³ Մեջբերումը կատարված է քառ լիցեզիտա Ծ. Տեր-Մինասյանի «Հայոց եկեղեցու հարաբերությունները առաջը եկեղեցիների հետ» աշխատության, էջ 180-ձին, 1908, էջ 253:

ատայանները հարցերը լուծումն Ալեանեղ նշված է, որ երգվյալները երգվում էին հետևյալ խոսքերով. «Ես Ա. Ա. երգվում եմ առաջի տեսան աատուծոյ ամենակալի հոր և որդոյ և հոգոյն սրբոյ, ամենատարբ կույսի՝ աստվածամոր Մարիամայ, առաջի սրբոց հորն իմոյ Գրիգորի Լուսավորչին և ամենայն սրբոց Աստուծոյ... լինել Նավատարիմ... և ամեն զատերն լավ կատարելով արգար վճիռ տալ իրզհրս համենատ առանց կաշառի և առանց ակնածութեան: Եվ եթե երգվածս չպահեմ, թող պատժի ինձ արգար զատաստանն Աստուծոյ»⁸⁴: Երգման տեքստը վկայում է կաշառքի տարածվածության մասին:

Անցնենք հայ քրեական օրենքների պատմությանը: Կաշառակերտության, զոշաքաղության, սիմոնիականության և կաշառատության որպես հանցավոր արարքների պատժելիության անհրաժեշտության մասին առաջին իրաւական դարձվածքների ու պաշտոնական իրավանորմների մենք հանդիպում ենք մեր եկեղեցական-կանոնական իրավունքի հուշարձաններում: Նշված դարձվածքներին ու նորմերին աղբյուրները հանդիպում են մասամբ մովսիսական օրենքները, մասամբ էլ օտար ժաղում ունեցող կանոնական օրենարտությունները: Բայց շնայելով այդ փաստին, զրանց կազմավորման ու առաջացման զործում ամենավեճական զերբ կատարել է հայ քաղաքական-իրավական միտքը այս բուռի զեռնական-մարքսիստական իմաստով:

Հայաստանի նախալուսավորիչ Բաղնոս Առաքյալին ու այսպես կոչված սուրբ Մահակին վերաբրվող կանոններում, Նեկիսյանի ժողովի, Վաղարշապատի եկեղեցական ժողովների, Եահայրիկանի ժողովի, Մանգակունտու վերաբրվող, Անիի ու Հարբի եկեղեցական ժողովների և մյուս համարյա բոլոր ժողովների կողմից ընդունված կանոնարտություններում կարծիք թելի նման այն միտքն էլ պարզացվում, որ կաշառքը, զոշաքաղությունը, սիմոնիականությունը և այլ նման արարքները որպես սրբոյր շարիքների արմատ Հանդիսացողը՝ «աստծու իրավունքը ծախող» արարքներ, որպես «Շուշային և կախարչ Միմոնի ախտի» արտահայտություններ, պետք է խստորեն հետապնդվեն և զրանց կատարողները պետք է անողորմար պատժվեն: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ կանոնարտությունները վերահիշյալ արարքների սուրբիկտների նկատմամբ

առհասարակ էին թե՛ ըստ իրական քրեա-դատական պատմության և թե՛ եկեղեցական-կանոնական պատմության: Սկզբունք այն էր, որ հանցագործները պետք է պատժվեին միաժամանակ թե՛ ֆիզիկապես և թե՛ հոգեպես: Երկարամյա տարածն ու տարարվածեցակ պաշտոնավորները, պաշտոնավորումը, եկեղեցուց հեռացնելը, բանազրանքը, եկեղեցական եզրվըը, ազնիսպողոշը այն հիմնական պատժամիջոցներն էին, որ մեր կանոնագրքի կանոնարտություններին ուժով կիրառվում էին մեղավորների նկատմամբ:

Կաշառակերտության և զրան առնչվող մյուս հանցավոր արարքների քրեա-իրավական էությունն առկա պարզաբանելու նկատառումներով կանոնագրքում ժամանակի ընթացքում մտցված կանոնարտություններին որոշ մեղքերումներ կատարներ: Եահայրիկանի ժողովում ընդունված իրտա, իսկ երբեմն էլ զածան կանոնների մեջ հանձն էր հիշատակվում այդ հանցագործությունների պատժելիության մասին: Նշված հուշարձանի 20-րդ կանոնը, օրինակ, ազգաբարձում էր, որ եթե քահանան իմանում էր ժողովրդի մեջ մտղչյա կա ու չէր հայտնում նախկերպոսին, նա եթեթրվում էր մժղչեություն հարող անձի հասար նշանակված պատժին, այսինքն ազվեսագրոշմանը կամ որ նույնն է խարանագրոշմանը և սամիշտ զրկվում էր քահանայությանը զրավելու իրավունքից: Եթե հաստատվեր, որ քահանան հայտնել էր եպիսկոպոսին ու ցույց տվել մժղչեականներին, բայց եպիսկոպոսը կաշառք առնելով կամ աշատությանը, իր զիրքը շարաշահելով մժղչեականներին օգնել, այսինքն հովանավորել ու թաքցրել էր, նման եպիսկոպոսը զրկվում էր իր ավոտի ու նշովում էր: Եթե եպիսկոպոսը ցանկանում էր հանցագործներին պատժել, սակայն վերջիններս ներկայանում էին աշխարհիկ իշխանությանը, այսինքն զավտրի իշխանին, նախարարին կամ գյուղի գլխավորին և սրանց օգնության էին դիմում ու վերջիններս էլ պաշտպան կանցնելով, կաշառք վերցնելով կամ աշատությանը, կամ այլ նկատառումներով մժղչեականներին հովանավորում ու թաքցնում էին, իրենց այդ արարքների համար իշխանությունների այդ ներկայացուցիչներն ու գործիչները հայտարարվում էին եզրված և զրկվում էին եկեղեցի մտնելու, այնտեղ աղոթելու իրավունքից այնքան ժամանակ, քանի մժղչեականներին չէին հանձնել համապատասխան մարմիններին կամ համապատասխան պաշտոնատար անձանց ձեռքը:

Ավելի հետաքրքիր բովանդակություն ունեց նույն հուշարձանի 16-րդ հոգված-կանոնը, որտեղ կաշառքի և զրան առնչվող մյուս արարքների սուրբիկտների նկատմամբ սահմանվում են քրեական և

⁸⁴ Այս փաստաթղթի հայերեն թարգմանությունը բերված է Քիչրեյի «Das alte Recht der Armenier in Polen» աշխատության մեջ, այդ աշխատության հայերեն թարգմանության վերջում իբրև հավելված: Լեհերեն իսկաղբը ազգազրված է Տարխաղրում, 1869 թ.:

եկեղեցական-կանոնական խիստ պատիժները Քերենց այդ հողովա-
ծի համապատասխան հատվածը. «... բայց որ զլիսաւոր եպիսկո-
պոսն է յաշխարհին, առանց նորա կամաց եպիսկոպոսն որ մի լիցի, և
վանեցին երեց կամ անապատաւոր առանց զաւտոի եպիսկոպոսին
չիշխէ լինել եպիսկոպոս կամ երեց, կամ ազատ որ դատաւորաց, և
կամ շինական վասն առաջնորդս կարգելոյ և հովիւս պատրաստե-
լոյ յեկեղեցոյ, և ժողովրդապետս և օրէնսդիրս կացուցանելուց, զի
ժանեցին հեթանոսք, թէ մարդիք են նորա, և վասն այսր իրաց կա-
շառառացն և կամ աշառանօք առնիցեն. քանզի մարդ ի դեմս հայի,
իսկ Աստուած ի սիրտս, և նորա կաշառօք և աշատութեամբ զանարգե-
ալս մեղօք և զպղծալս օրհնեցին. որպէս ասէ Պողոս եկեղեցւոյ դա-
տաւորս նետուցանեն վասն կիրուսեալ արժամոյն, տալիք կաշառուր
անիծեալ լիցին, որպէս խաշահանօք ետուն կաշառ պահապանաց
և ընդ Սիմոնի կախարդի, որ արժամով և ընչաբ կամէր ստանալ
լառաքելոցն զընօրհն հողոյն, և անեալիք կաշառոյն նզովեալ լիցին
ի տեսանել. կարասի զոր կաշառ առին ընդ Յուդայի համարեալ
լիցին, զոր վասն տեսնո մատնութեան է առ, և կրկնապատիկ դար-
ձուցեն անգրէն տալիքն, շիշխեն ասնույ որպէս խաշահանուրն զա-
գարակն գնեցին և ի կարոտեալս բաշխեցին: Եւ եպիսկոպոսն և ե-
րեցն, որ վասն այնոր կաշառ առցնեն և վասն ինչ և է իրաց ըստ
դրեցելուն թէ «կաշառ կուրացուցանէ զսիրտ իշխանաց» և զարձեալ
«կաշառ ի ձեռն արժամայ և ի վերայ իրաւանց մի անուցուտ» և
ճշմարտութիւն ի ձեռն արժամայ քարչի յամենայն ժողովս և զուլեալ
լիցին և իշխանութենէ և ի քահանայութենէ մեծեցեցին ի բաց: Որ
կաշառու առին ընդ գեհնդի բրոտոի և զղոցոսն համարեցցին, անէծք
մարգարէին ի վերայ նոցա եղիցին, քանզի ի ձեռաց գետին խնորհ-
ւոց է զարին զօրացն, այլ զարձանաւորս խնորհալ ցոցեն: Ահա
թի ինչպես էր կաշառքի և զրա հետ ասնչով մյուս շարաշահումնե-
րի պատժելիութեան հարցք լուծվում Շահապիվանի ժողովի ընդու-
նամ կանոնադրութեան 16-րդ հոդովում:

Այլ յուրի կանոնագրութեան 20-րդ և 16-րդ կանոնների գո-
յությունն ասում է, որ կաշառակերությունն ու զրա հետ կապված
մյուս հանցագործությունները հետագա զարբերում են լայնորեն տա-
րածված են եղել Հայաստանում ինչպես աշխարհիկ իշխանություն-
ների շրջանում, այնպես էլ մանավանդ հողերակաշառութեան շրջա-
նում:

Նիկիայի ժողովի 15-րդ կանոնը նույնպես խստով կերպով
դատապարտում էր հողեր սպասավորների տարատեսակ ու տա-
րարվանգակ շարաշահումները և զրանց թվում կաշառքը. «Վասն

բարձմ հուդիցն և մեծամեծ ամբոխիցն, որ լինին ի կողմանս, որք
եպիսկոպոս լինին, և զայլ վիճակ յափշտակել շանան, և որք երեց-
կունք լինին, և շրջալ ի քաղաքի ի քաղաք և զայլոց ժողովուրդս
ցանական յափշտակել, կամ եղև մեծ ժողովոյս, զի զայնպիսին դա-
մարեցուցեն իրարարանչիւր վիճակի. այպ եթէ ի բռնութենէ կամ
կաշառօք զգործոն յանգղեալ գործեաց և ընդզմ եկաց առաքելա-
կան կանոնիս, կամ եղև ստոր և մեծ ժողովոյս, զի զայնպիսին ըն-
կացն ի բաց յաթոռոյ և ի կարգի քահանայութեան և բնաւ ի բաց
մեծեցնել ի պաշտպանանէն, և այնուհետև իրիցի քեզ իբրև մի յա-
նըզգամաց...»: Այս կանոնից պարզ կերպով երևում է, որ եպիսկո-
պոսները և մյուս ավելի վերագաս հոգևոր գործիչները, հաճախ յա-
յառահեղով իրենց դիրքը, կաշառք են առաջարկել կամ վերցրել: Այլ
արարեցեր դատապարտելի-համարանական այնքան բարձր վնաս-
գավորություն են ներկայացրել, որ ժամանակին մեղավորները առ-
միշտ զրկվել են պաշտամունքի գործի քնազավառում իբրև հոգևոր
սպասավորների գործելու կամ իբրև քարոզիչներ աշխատելու իրա-
վունքից:

Կանոնը տվյալ դեպքում մեզ համար մեծ հետաքրքրություն է
ներկայացնում հասկանալի պատճառով. այն համարյա անսիրտիս
կերպով գործել է Հայաստանում, մտցվել է մեր կանոնագրում ու
սրանից էլ անցել է աշխարհիկ օրենքների՝ Մխիթար Գոշի Գատաա-
տանագրքի և Սմբատ Սպարապետի օրենագրքի մեջ, կազմելով սը-
բանցից առաջինի առաջին մասի 49-րդ և Սմբատ Սպարապետի Գա-
տաառագրքի 53-րդ հոդվածների բովանդակությունը:

Կանոնագրքի մեջ մտած մեկ այլ կարգի հուշարձանների կա-
նոններից երևում է, որ կաշառքը, այդ թվում առանձնապես հոգևոր
ձեռնադրութեան համար կատարվող կաշառակերությունն ու կաշա-
ռանավթյունը իրենց զգացնել են զուլեալ նաև հետագա զարբերում:
XIII դարի առաջին կեսին տեղի ունեցած Սար եկեղեցական ժողո-
վում ընդունված կանոնադրութեան մեջ ասվում է, որ ձեռնադրու-
թեանն արժանի են արժանավորները: Այն պետք է տեղի ունենա
ստանց կաշառքի: Դրանից հետո միայն մարդիկ կարող են եպիս-
կոպոսական հողերո սատիճանի տիրուհւս մեծաքանակ մարդկանց
վկայութեամբ և թեմի կամքով առանց կաշառքի. «Ամենայն ձեռ-
նադրութիւն յեկեղեցի՝ որ է պարզեց հողոյն սրբոյ, զոր տայ արժա-
նաւորացն, առանց արժամոյ լիցի ըստ կանոնաց, զի այն այստ Յու-
դայի և Սիմոնի կախարդի է, որ խոտեցան, և ոչ միարանեցաւ ընդ
նոսա շերտն, որ ի տեղիս վասն աղքատութեան լուծեալ է և տգի-
տութեան: Այսուհետև արժանաւոր են միայն և զիտունքն առցնն

գատահան եպիսկոպոսութեան սեփու ճնտրվեամբ և վկայութեամբ և թեմին կամակցութեամբ առանց կաշառացոյ: Ահա թէ ինչպէս էր հարբը լուծվում նշված կանոնագրութեան 1-ին հոդովածու:

Այժմ դիմենք ժամանակակից պաշտոնական գործող և օրենք շահեղիսացող, բայց բոտ էութեան օրենքի ու պարտագիր կանոնների ուժ ունեցող գրավածներին, որոնք նույնպէս ապացուցում են կաշառքի տարածվածութեան փաստերը հին և միջնադարւան Հայաստանում: Վերջենք դրանցից երկուք. «Հաճախապատում ճառք»-ը և «Քուղթ ընդհանրական»-ը: Այդ գրավածներից առաջինի հեղինակը փաստորեն անհայտ է, բայց այն վերագրում են Գրիգոր Լուսավորչին: Այնտեղ խոսվում է մարդիկ առաջինի արարքների մասին, նրա հասարակական վարքագծի կանոնների մասին: Պահանջվում է, որ մարդիկ «շար» գործերից հեռու մնան և կատարեն միայն «բարին», հեռու մնան այսպէս սասած առավածային պատվիրանները խախտելուց: Հեղինակը երկար մտածումներից հետո, այնուամենայնիվ, հաց է տալիս, ինչպէս վարվել, երբ մարդիկ չեն խորտակում, չեն ուղղվում և շարունակում են շարիք գործել: Այդպիսիները, եթէ նույնիսկ նրանք թագավորներ լինեն, իրենց վատ արարքների համար պետք է պատժվեն և՛ աստծու, և՛ մարդու դատաստանի կողմից: Աստվածը պերզույն դատավորն է, բայց նա կարգել է նաև աշխարհիկ իշխանութեանը՝ իր կամքը կատարելու համար, առհասարակ հանցագործներին պատժելու համար. «... այլ և զվազուորս և զիշխանս և զդատաւորս ի խաղաղութիւն և ի շինութիւն աշխարհի կարգեաց աստուած, զի զամբարիշտս, զլուսնս, զգոլոս, զկախարզս և զամենայն անիրաւս պեռս-պեռ տանջանօք և մահուամբ զարժեութեցուացեն, զի ամենայն շարագործք ըմբռնեալի յահի արգելցեն ի շարեացն»:

«Հաճախապատում»-ի մեջ նրա հեղինակը աշխարհիկ պետական իշխանութեան գոյութեան հիմքերից մեկը համարում է հենց հանցագործներին պատժելը և այդպէս հարբը զննելով, նա պահանջում է, որ շնացողներին, ամբարիշտներին, զողերի, սրբապղծողներին և մյուս հանցագործներին նման, դեռ առավել խստութեամբ, պատրժվեն կաշառակները. «Բայց է և ի նոսա անիրաւութիւնք նման նոցա (այսինքն ինչպէս շնացողներ, ամբարիշտներ, զողեր, սրբապղծողներ, Ա. Թ.) և առաւել նա որք կաշառօք և կամ այլ ևս շարեօք բազմացուցանեն զանօրինութիւն համարձակեալ ի վրեանս»:

Այն իշխանավոր մարդկանց, ովքեր կաշառք են վերցնում, «Հաճախապատում»-ի հեղինակը սպառնում է աստծու բարկութեամբ,

որս ցաստմով և հանդերձալ կյանքում հավիտենական տանջանքերով. «Եւ վասն այսօրիկ բանան որոնք բարկութեան սովոյ և սրոյ և զերութեան և պեռս-պեռ վտանգից և մահուց և յետ աստեացս ի հրախոն խաւարն, աղտաքին, ուր լալ ալաց և կրճել աստմանց»։ «Հաճախապատում»-ի այս և նման բազմաթիվ մտքերն ու դատողութիւններն ասում և անհերքելիորեն ապացուցում են, որ պատմական Հայաստանում նույնպէս կյանքը առաջ չի ընթացել առանց անհատների, սովյալ զեպքում հանցավոր մարդկանց բազմաթիվ էրացնների, որ այնտեղ ու այն ժամանակ նույնպէս իրենց զգացնել են սովել բազմապիսի հանցավոր արարքներ և այդ թվում կաշառակերութիւնն ու հետեարքը նաև կաշառատվութիւնը:

Դասնանք շատ սովել ուժ ժամանակներում գրված ներսա Շր. նորհալու «Քուղթ ընդհանրական»-ին: Այստեղ նույնպէս շուշախվում են հասարակական-քաղաքական և քրեա-իրավական մեծ թվով հարցեր: Ամբարիշտք այնպէս է թվում, որ «Ընդհանրական»-ը խրատների մի ժողովածու է և ուրիշ ոչինչ: Բայց այդ խրատների մեջ հեղինակը քացահայտում է իր ժամանակի վատ բարքերը, խարաղանում է անբույլատրելի ու դատապարտելի արարքները և տարբեր սոցիալական շերտերին, այլ կերպ ասած տարբեր դասակարգերի պատկանող անձանց ուղղված խրատներով պահանջում է վերջ տալ հանցավոր արարքներին ու բռնել առարկին կյանքի ճահապարհը, այնպիսի ճանապարհ, որ հեռու է այն ամենից, ինչ արատավոր է ու դատապարտելի, ինչ աստծու և մարդկային դատաստանով պատժելի է:

Հենց այս ոգով էլ Շնորհալին խրատներ է կարգում աշխարհական իշխաններին, բարձր դիրք գրավող հոգևորականներին, վաճառականներին ու բանաններին, զինվորներին, քաղաքաններին, երկրագործներին, կանանց և այլն: Ես բերում եմ այդ խրատներից միայն երկու քաղվածքներ, որոնց մեջ խոսքը ցնում է կաշառքի, այսինքն կաշառակերութեան ու կաշառատվութեան մասին: «Մի՛ որ իսրեական ամխոսի շարժնայ՝ կաշառանօք աւազուց յափշտակեսցէ զառաջնորդութիւն վաճառ ասանց ժամանակին առաջնորդի ընտրութեան և հրամանի», այսպէս է խրատում Շնորհալին հոգևորականներին: Դիմելով աշխարհիկ իշխանավորներին նա արտել է. «Մի՛ գոր անիրաւութեամբ դատիր, այլ ուղիղ դատաստան արարել, զի և ձերն դատաստան քաղցրութեամբ լինիցի... և մի խստութեամբ, մի վասն կաշառաց կամ վասն սիրելիութեան միոյ կողմանն, կամ մյուս անտելութեան և սխալականութեան, կամ վասն պատույն, երեսաց Ի միոյն աշանկով՝ զանեղանի արդարացուանք ի դատաստանի և

զարգարտն փորժը զիրաւուն...»: Մեջբերումներն ինքնըստինքյան ասում են, որ Ենորճալու ժամանակաշրջանում նույնպէս հայերի մեջ իրենց զգացնել են տվել կաշառքն ու մյուս շարաշահումները՝ եկեղեցական-հոգևոր պաշտոնների հափշտակումը, անձնական նկատառումներով կամ շահագրգռվածութիւյամբ արդար մարդկանց զատուպարտելը, նույն այդ նկատառումներով ինչպէս և նյութական շահագրգռվածութիւյամբ հանցագործություններ կատարած անձանց պատժից պաշտելը և այլն:

Կաշառքի և դրա հետ կապված հանցավոր արարքների էության ու պատժելիության հարցը շի անտեսվել Գավթի Ալավկա որդու, Միխիթր Գոշի և Սմբատ Սպարապետի մտա: Նրանցից առաջինը այդ հարցը շոշափել է իր կանոնադրութեան մի քանի հոդովաններում, որոնցից հիմնականները երկուսն են՝ 35-րդ և 98-րդ հոդովանները: Գրանցից պարզ կերպով երևում է, որ պատմական այդ շրջանում, այսինքն XI—XII դարերում Աղվանից աշխարհում բնակվող հայերի մեջ լայնորեն տարածված են եղել կաշառքն ու անշնչող մյուս հանցագործությունները: Հոդովածում խոսվում է կաշառակերութեան, շորհազմանուութեան, եկեղեցական պաշտոնների հափշտակման, կաշառքով ամուսնալուծություն կատարելու կամ, ընդհակառակը, ամուսնութիւն կնքելու, նույն կարգով մեռելաներին ուսուցանելու, վարձով հանգուցյալին փողելու, հաղորդութիւն տալու և ուրիշ արարքների մասին: Այդ արարքներն այն ժամանակն իստորեն պատժվում էին երկարամյա ապշխարանքով, պաշտոնանկութեամբ և այլն: Անլավկա որդին դրանովիւմբ զանգատվում է, որ տարածված կաշառքի ու շարաշահումների հետեւում երբեք վառ քննութիւններ էլ են տեղի ունենում. «Եւնոց և առն բաժանում, զաւակաց ցրումն, ընդից առումն, տանց աւերումն, ի հայրանայց ելումն, ի գատատորս և լատեանս բազում քարշումն... այլ և յուզլ բճախեղդութիւն»: Ահա թե ուր էին հասցնում կյանքի սանգուզքում որոշակի դիրքը զբաղվող մարդկանց հանցավոր շարաշահումները և սրանց թիւում տարբեր ձևերով դրսևարվող կաշառքը, դոշաքաղութիւնն ու սիմոնիականութիւնը:

Կաշառքի և անշնչող մյուս հանցագործությունների իրավաբանական բնորոշման ու գրանց պատժելիութեան հարցը առավել լրիւթութիւյամբ է լուծվում Միխիթր Գոշի և Սմբատ Սպարապետի զատուսանագրքերում: Իր Գատուսանագրքի մի շարք հոդովաններում Գոշն ամենից առաջ զատուպարտում է զատավորների հանցարդար շարաշահումները, նրանց կողմից կատարվող կաշառառութիւնը՝ զրանց համար սահմանելով կոնկրետ պատիժներ: «Մի՛ խոտորիցես

զիրաւուն եկին և որրոյ և զարտին, — սպում է այդ հուշարձանի երկրորդ մասի 85-րդ հոդովածում ու շարունակում, — զատուտրաց զնէ որկես ոչ վարիլ կաշառք և ալլօք պատրանօք, որպէս եցույց կայս և, եթէ զայս զործ արասցէ, անկցի ի պատուին»: Այսպիսով կաշառառու զատավոր պատժվում էր պատվազրկութիւյամբ, որը պատմական այդ ժամանակներում խիստ ծանր պատիժ էր համարվում:

Նախագրութեան վեցերորդ գլխում մեր օրենսգիրքը գրում է. «Եւ պարտ է զատուտրին առանց կաշառոց լինել, զի դրեալ է թէ-կաշառ կօրացոցցանէ զաշտ սրատեսս, զի համարձակ լիցի յատեան զատաստանին կաշառ ի վերայ իրուանց ոչ անելով և զվճիս զատաստանին ուղղի հասցէ. զի միայ յողոցան հոճեսցին. որպէս և Տէրն առաց թէ—մի՛ ըստ այս դատի: այլ ուղղի զատաստանս աքարէք»: Գոշը միաժամանակ մասնացույց է անում, որ քրիստոնէսը զատավորների կողմից արգարադատութիւնը կաշառքով ծեղուղեցով թուլակամ թուլակամ քրիստոնէսները կցինձն մասնեղակաց զատարաններին, այսինքն Գոշի բաներով ասած այլազգի զատարաններին՝ իրենց հետաքրքրող հարցերի լուծման համար, իսկ զա, ըստ նույն Գոշի Գատուսանագրքի սկզբունքների, միանգամայն անթույլատրելի ու վտանգավոր էր համարվում պատմական այդ ժամանակներում:

Գատուսանագրքի առանձին հոդովածներում Գոշը նախատեսում է կաշառքի ուժով կատարվող ինքնուրույն հանցագործությունների հանցակազմերը: Գատուսանագրքի առաջին մասի 49-րդ հոդովածում, որի տեքստը, ինչպէս վերևում նշել ենք, հիմնականում համընկնում է Նիկիայի ժողովի կանոնադրութեան 16-րդ հոդովածի տեքստին, նախատեսվում են այն զեպքերը, երբ եպիսկոպոսները կաշառք տալով փորձում էին միմյանցից վիճակներ հափշտակել: Այդ եպիսկոպոսները... ի բաց ընկեցնեն յաթոռոյն և ի ի կարգէ քահանայութեան և ընա իսկ ի բաց ընկեցնեն յաթոռոյն և կարգէ քահանայութեան և ընա իսկ ի բաց ընկեցնեն ի պաշտասաննէն: Ահա այն պատիժը, որին ենթարկվում էին օրինական կաշառատները:

Գատուսանագրքի առաջին մասի 2-րդ հոդովածում հակաօրինական, ուրեմն և հանցավոր են համարվում այն զեպքերը, երբ աշխարհական իշխանները կաշառք վերցնելով կամ տալով, այս կամ այն անձին հոգևոր սպասավոր էին նշանակում, հոգևորական էին զարձնում: Այս կարգի երևույթներ, ինչպէս երևում է, միշտ էլ հայտնի են եղել հայ աշխարհիկ իշխանավորներին, զրա համար էլ

այդպիսի նորմեր մեր կանոնական օրենքներում միշտ էլ եղել են։ Դրանցից մեկը՝ Դվինի 645 թ. 5-րդ ժողովի կանոնադրությունը (Տող. հոդ. 9-րդ և 10-րդ), հիմք ընդունելով, Մխիթար Գոշն իր հերթին ազդարարում է. «Արտաքոյ իրասանց է իշխանաց կաշառք առաջնորդս եղբարցն կացուցանել զորս նոքա ոչ կամիցիքն»։ Այս արարի համար Գոշը, սակայն, կոնկրետ քրեական պատիժ չի սահմանում։

Դատաստանագրքի նախադրություն մեջ և առաջին մասի մի բանի հոդվածներում հեղինակը թաուցիկ դատադրություններ է անում նաև այլ հանցավոր արարքների ու դրանց պատժելիության անհրաժեշտության մասին, ինչև ճշմարտությունը պահանջում է ասելի որ դրանցում վավերացված օրինադրություններն այնքան էլ ճշտորոշ չեն։ Այսպես, նախադրության 5-րդ դիմում ակնարկվում է տղետ ու անուս մարդկանց արծաթի շնորհիվ, այսինքն կաշառքով, նպիսկոպուս քնտրելու, որպես դատապարտելի ներուշիի մասին։ Նույն նախադրության 7-րդ դիմում հարցն այնպես է պատկերացվում, որ արգարադատություն իր իրականացման ընթացքում կարող է գործ ունենալ նաև կաշառված վկայի հետ։ Այդ կարգի վկաները պետք է տուժի նենիարկվեն։ Առաջին մասի 109-րդ հոդվածում այն միտքն է անցկացվում, որ հոգևորականները, հանցանք կատարելով կարող են ամուսնության ակտ կնքել՝ «կաշառքից կորսանալով»։ Միայն մի լիցի կաշառք կորացելու, որպես զրազումս տեսանեմք.— ասում է Գոշը այդ հոդվածի վերջում, ակնարկելով հոգևորականներին,— զի այնքան են վրէժխցիքը այդորիկ օրինաց, որքան զձեռս լի՝ ասեն կաշառք, զորոց զդասն հատուցանելոց են»։ Այսպես էր կաշառքի, այսինքն կաշառակիրության ու կաշառատություն պատժելիության հարցը լուծվում Մխիթար Գոշի մտու։

Կաշառքը և անշվող հանցագործությունները պատժվում էին իրիկյան օրենքներով։ Այդ արարքների պատժելիության մասին առանձին օրինադրություններ կային ամենից առաջ այն օտար օրենսդրական ակտերում, որոնք ժամանակի ընթացքում թարգմանվել էին հայերեն և ինքնուրույն օրենսդրական ակտ զատելու։ աստիճանի լրացումներով ու փոփոխումներով կիրառվել ամբողջ երկրում։ Այստեղ մենք նկատի ունենք Լամբրոնացու աշխարհիկ օրենսգրքը և Անտիոքի ու Կիպրոսի ասիզները։ Այդ արարքների բռնաիրավական հետապնդման հարցում անտարբեր չէին նաև Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի իրավափոփոխությունը։ Նշված իրավական ակտերում հոգևոր և աշխարհիկ դատավորների կողմից կաշառք ասելը, այլ բաներով ասած կաշառատությունը կամ կաշառակե-

րությունը ընդհանուր ձևով որակվում էր իբրև աստծու իրավունքի վաճառում։ «Կու հրամայէ արէնքս և առաքելական իրավութեքս,— ասվում է այդ Դատաստանագրքի 10-րդ հոդվածում,— որ թէ եկեղեցական զատարու և թէ աշխարհական լինի ու ճշմարտի զվերայն որ թէ՛՝ զԱստուծոյ իրաւունքն կաշառոց կու ծախէ, նա ձգն զիք ի զատարական ամբողջն և զէջ աստուածածախս տուժեն. զի Աստուծոյ իրաւունքն ծախելց Յուդայի պէս»։ Ինչպես տեսնում ենք, կաշառակիրությունը, երբ դա կատարվում էր դատավորների կողմից, պատժվում էր պաշտոնանկություն և մեղավորները ենթարկվում էին այնպիսի լրացուցիչ պատժներին, որ կիրառվում էին աստվածախաններին, այսինքն իրենց հավատն ուրացողների նկատմամբ (մատուցական ծանր պատիժներ կամ քստորարնակեցում, անզամ որակյալ մահապատիժներ)։

Դատաստանագրքի 62-րդ հոդվածը, իր հիմքում զնկելով Մխիթար Գոշի Դատաստանագրքի առաջին մասի 2-րդ հոդվածի համապատասխան իրավափոփոքը, քրեաբան հետազոտիչը է համարում այն դեպքերը, երբ թագավորը կամ իշխանը շարաշահելով իրենց դիրքը և կաշառք վերցնելով ինքնազուխ կերպով, առանց թիմի համաձայնության, վանահայր են նշանակում։ «Ընդդեմ Աստուծոյ իրասանցն և արինացն և ճշմարտութեանն է,— ասված է այդ հոդվածում,— որ թագավոր կամ իշխան կամ այլ ազգ զկաւար եկեղեցական կամ աշխարհական, որ վասն կաշառաց նոցա (վանքի արեղաւորին, Ա. Թ.) հայր զնէ, զոր իրենք (եղբայրության մեջ եղողները, Ա. Թ.) շուղեն»։

Կաշառակիրությունը կամ ավելի ճիշտ կլինի ասել կաշառքը, որպես այսպես կոչված ստավածային օրենք ու իրավունք ծնելու միջոց է դիտում Դատաստանագրքի 24-րդ հոդվածի համապատասխան իրավափոփոքը։ Այդ նորմի համաձայն նույնպես կանոնական կեղեցական և քրեական խիստ պատիժներ էին նախատեսվում այն դեպքերում, երբ եկեղեցական հայրապետներն ու դատավորները կաշառքով զանազան աստիճանի իրավունքներ էին կատարում. «Եւ տեսէք թէ քանի՞ պնգանք կայ հայրապետացն և այլ դատարարաց կեկեղցոյն,— ասված է այն հոդվածում,— որ վասն կաշառոյ չիտխնն զԱստուծոյ իրաւունքն ի ծուռն։ Եւ ոչ ամենեին ի սահմանադրութեանց եկեղեցոյ և ոչ ի սահմանաց թեմերոց իշխէ որ փոփոխել բնաւ առանց կամողիկոսի որ մեծ ժողովի տեսով այնէ»։

Այն քրեաիրավական նորմերից բացի, որոնց մեջ ուղղակի կերպով նախատեսվում էին կաշառքի և անշվող հանցագործությունների հանցակազմներ, հին և միջնադարյան հայ օրենսդրա-

կան-իրավաբանական հուշարձաններում, այդ թվում նախ և առաջ Հայոց կանոնադրքում տեղ են գտել բազմաթիվ խրատական կամ ավելի ճիշտ կլիների ասել բարոյախոսական նորմեր ևս, որոնց միջոցով նույնպես գատապարտվում էին նույն այդ արարքները, այն տարբերությամբ միայն, որ խրատական-բարոյախոսական նորմերը քրեական պատիժներ չէին նախատեսում: Այսպիսով, եման նորմերի գոյությունը ևս ապացույց է այն բանի, որ պատմական Հայաստանում տարածված են եղել կաշտոքն ու զրան առնչվող հանցադործությունները:

ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ՄԱՐԳԿԱՆՑ ԿՅԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԵՄ

Հակամարտ հասարակությունների զարգացման բուրյ փուլերում տիրապետող զասակարգերի ու դասերի կամքով կյանքի ընթացքի համար անհրաժեշտ որոշ կարգ, մարդկանց զործանուսթյան, նրանց վարվելակերպի համար որոշ սեփիմ ու կանոններ են սահմանվել, որոնց անսասան կատարումը երաշխավորվել է օրենքով, այդ թվում զբառված քրեական օրենքով՝ պատժի սպառնալիքով: Այդ հարցում մեծ դեր են ունեցել նաև սովորութային իրավունքի նորմերը:

Գեռևս բարելոնական օրենքներում խիստ պատիժներ էին նախատեսվում այն բժիշկների համար, ովքեր սխալ բուժում կամ վիրահատում կատարելով ծանր հետևանքներ էին առաջացնում: Երախտավում էր, օրինակ, այն բժիշկը, որը վիրահատում և մարդուն բուժում էր: Բայց միաժամանակ օրենքը պարտավորեցնում էր մարմնական պատժի ենթարկել (ձեռքը կտրել) այն բժշկին, որի անփութությունը պատճառով բուժվողը կուրանում կամ մեռնում էր (հոգ. հոգ. 215-րդ, 218-րդ և այլն): Նույնարժանողակ օրենքներով, թալիոնի անողոր սկզբունքով նույն Բարելոնում պատժվում էին նաև կան շինարարները, որոնց անփութության պատճառով կատարված առևեր փլվում էր և սպանում տիրոջը կամ նրա աղային: Այստեղ արդեն մահապատժի էին գատապարտվում ինքր՝ շինարարը կամ իր աղան (հոգ. հոգ. 229-րդ, 230-րդ և ուրիշ հոդվածներ):

Հասարակական կարգը և մարդկանց անվտանգությունը ապահովող առանձին իրավանորմեր կային մովսիսական օրենքներում և հին հռոմեական օրենքներում: «Տասներկու տախտակներում», օրինակ, մարդկանց զիշերային անդորրության խախտումը սուղոցով, զոռուն-զոլլունով և այլ ձևերով, հաճախ պատժվում էր մահապատ-

ժողովի վերաբերում է վաղ և զարգացած ֆինանսավարչի շրջանին, ապա այն պատմաշրջանում նույնպես քիչ քրեական օրենքներ է սովորութային իրավունքի քիչ իրավաճեղճ-կանոններ չկային, որոնց հիման վրա պատժում էին հասարակական կարգի և մարդկանց կյանքի անվտանգության ու ապահովության դեմ ուղղված սոսնձությունները:

Հայ հին և միջնադարյան իրավաբանական հուշարձաններում տեղ գտած մի շարք իրավաստեղծում և հայ սովորութային իրավունքի առանձին կանոններ նախատեսում էին հանցավոր արարքներ, որոնց ամենայն իրավամբ կարելի է դասել հասարակական կարգի, նույնիսկ հանրային անվտանգության և մարդկանց առողջության դեմ ուղղվող հանցագործությունների թվին: Այդ արարքներն էին՝ հարեցողությունը, դանազան աշխատանքների կատարման ժամանակ մարդկանց կշանքի անվտանգության նախազույսկան կանոնները չլպահանումը, եկեղեցիներում ծխակատարությունների խանգարումը, մարդավաճառությունը, բժշկի կողմից հիվանդին սխալ բուժման ենթարկելը և այլն: Սրանք արարքներ են, որոնցից մի քանիսը հանցակազմ առաջացնող արարքներ էին հանդիսանում, իսկ մի քանիսն էլ հետապնդվում էին միայն այն դեպքերում, երբ զուգորդվում էին ծանր հետանքների, օրինակ, սպանության, հղիության ընդհատման կամ զանազան մարմնական վնասվածքների հետ:

Հարեցողություն: Վերցնենք հարեցողությունը կամ, այլ կերպ ասած, հարբածությունը: Կանոնադրում այդ քայլի վտանգավորության և քրեորեն պատժելի լինելու մասին բազմիցս հիշատակվում է Սահակ կաթողիկոսի վերադրվող կանոններում, Պպիրի ու մյուս եկեղեցական ժողովներում ընդունված կանոններում ազդարարվում էր, թե այն քահանաներ, որոնք հարբում են և կապվում անառակ կանանց հետ, ենթարկվում են խիստ պատիժների և այդ թվում ևս պաշխարության:

Կանոնագիրքը առանձին նորմեր չէր պարունակում այն մասին, թե ինչ պատիժների են ենթարկվում աշխարհականներ, երբ իրենք էին ոգևիլից խմիչքներ զործածում ու հարբում, բայց ինչպես այդ նկատել են որոշ գիտնականներ, օրինակ, Կարսոսը, սովորութային իրավունքով նրանք նույնպես ենթարկվում էին այն կամ այն պատժիչ-հարկադրական միջոցների: Ենթադառնալիս ստատուսները իրեն անհրեղիս փաստեր պետք է ընդունենք, որ միջնադարյան Հայաստանում նույնպես եղել են դեպքեր, երբ մարդիկ հարբել ու հայհոյել են սրբերին և անգամ աստծուն:

Սեր աշխարհիկ օրենքները նույնպես հարբածության կամ, ա-

վելի ճիշտ կլինի ասել, մարդու հարբած վիճակի քրեա-իրավական կոնվյուսը չեն անտեսում: Գրանց մեջ կարծիք թելի նման այն սկզբունքն է վավերացվում, որ մարդու հարբած վիճակը իրենից բարձր վտանգավորություն է ներկայացնում, սալինք հանցագործություն և, հանցավոր արարք կամ թե կարող է զուգորդվել այլ հանցավոր գործողությունների հետ: Սրկու դեպքերում էլ մարդը պետք է պատժվի: Գավթի Այսովկա որդու Կանոնների 39-րդ կանոնը, ինչպես գիտենք, պատժում էր այն հորը, որն իրեն գինաբուրի տալով, մոռացություն էր մատուցում երեխային, և նա առանց հսկողության մնալով զետում խեղճվում էր: ԵԱյլ Հայր մանկան քնացնել ից է առ գինումպուս կամ ի ցրծ ինչ և մանուկ սորա անկատար դիմեալ առ Հայր իր և հեղձեալ ի գետ. զի ոչ ցիտաց ի նոցանը, անպատճառ ևս, վասն անհրտութեանն: Բայց վասն արեցութեան, զի եղեն պատճառ կորստեան մանկանն, ևրքս քառասուն պահացին զերկու սրբապահութեամբ և մինն շարքապահար՝ մ ծնեղեան, իսկ Հայր մանկանն մմ մի պահաց՝ զինց ամիսն սրբապահութեամբ և զինց շարքապահարութեամբ ծնգրութեամբ...»: Նույն կանոնագրության 82-րդ կանոնը, ի թիվս այլ հարցերի, խոսում էր նաև այն մասին, որ հարբած վիճակում մարդը ի վիճակի է ու հաճախ էլ կատարում է հանցավոր այնպիսի արարք, ինչպիսին էլ ասովածահայտությունը: Կանոնն այդ արարքի համար նույնպես, այն ժամանակվա հասկացողությամբ, շատ խիստ պատիժ էր նախատեսում: Հանցագործը ենթարկվում էր ցմահ՝ սշրմնուսղի ապաշխարություն և նրա հարբած լինելու փաստը ոչ թե մեղմանում, այլ բեղահատար, խտտացնում էր կատարված արարքի պատժելիությունը:

Մխիթար Գոշի Դատաստանագրում առաջին մասի 124-րդ հոդվածում տրվում է հարբածության վիճակի իրավարանական բնորոշումը՝ մասնացույց անելով, որ Աբրեցութիսն ըստ ստուգարանութեան լարեցումն իսկ է, իսկ ժայթքելն և կամ ոչ՝ ի կազմում է բազում անգամ պատահի մարմնոցն: Իսկ եթէ սահման արեցութեան լարեցութիսն է, ապա և սահման ոչ արեանալոյ անյարեցութիսն է: Գարձեալ՝ նշանակ արեցութեան զեղեւումն մարմնոյ է և բանիս և ապա դրանից հետո ազդարարվում է, թե այդ վիճակում գտնվող հոգեքո սպասավորներն անգամ հնուցվում են եկեղեցական արարողություններ կատարելու և պատժվում են՝ զատուպարտվելով խտտագույն ապաշխարանքի: Առանձնապես ուշադրամ է Դատաստանագրի երկրորդ մասի 3-րդ հոդվածում վավերացված սկզբունքը, որի համաձայն հար-

բածնների միջև ու ընդհանրապես Տարբածնների կողմից կատարվող հանցագործությունները որևէ ներդրամտություն չէին արժանանում և դա նախ և առաջ այն պատճառաբանությամբ, որ հարբածությունն ինքնբերական վերցրած համարվում էր պատժելի արարք կամ զատուպարտելի վարքագիծ:

Այս աշխատության նախորդ զույսներում մենք հանգամանորեն ցույց ենք տվել, թե ինչպես միխթարյան օրենքը հարբածությունը չէր նույնացնում անմեղսունակ վիճակի հետ և թե ինչպես այդ օրենքով հարբած վիճակում սպանություն և նման հանցագործություններ կատարող անձինք պատժվում էին իբրև մեղքը կամ պատասխանատուությունը ժանդարացող հանգամանքներում հանցագործություն կատարողներ:

Այսպես էր դեհամարվում հարբած վիճակը հին և միջնադարյան հայ կանոնագրքով և աշխարհիկ օրենքներով հանձնելու Գավիթ Արզուս որդու Կանոնների և Մխիթար Գուշի ու Սմբատ Ապարապետի զատաստանագրքերի:

Մի փոքր ավելի խոսենք Սմբատ Ապարապետի Գատաստանագրքի մասին: Այստեղ հարբածության էությունը նվիրված իրավանորմերն ավելի ամբողջական և զիտական առումով ավելի բովանդակալից են: Այդ Գատաստանագրքի 33-րդ հոդվածում միանգամայն խելացի կերպով այն միտքն է զարգացվում, որ հարբածությունն ու հասարակական անդորրությունն իսանգարումը հանդես են գալիս միաժամանակ, որ դրանք հավասարապես հանրապետանոց երևույթներ են: Գրանից կենցիվ օրենքն ազդարարում էր, «եւ արբեցազն և խալապարսի (այսինքն՝ աղմկաբարբ, կոպարար, մարդկանց հանդիստը խանդարողը, Ա. Թ.) ի դուրս ձգվի՝ ինչվի հանց գայ ի խելք զէղ տանորդն կամի»: Այս նշանակում է հարբեցողները և այդ վիճակում կոխվ ու աղմուկ բարձրացնողները եկեղեցուց, այսինքն՝ կրոնական արարողություններից (պատարագ, ժամասացություն, հոգևատեղիտա և այլն) հեռացվում էին և մեկուսացվում այնքան ժամանակ, քանի նրանք չէին սխալվում: Եթե նկատի ունենանք, որ պատմական այդ ժամանակներում եկեղեցին մի տեսակ հասարակական վայր էր, մի յուրահատուկ հավաքատեղի, այսպ ավելի հասկանալի կդառնա օրենքի վերոհիշյալ պահանջի իրավարանական արժեքը, այսինքն այն, որ հարբածությունը համարվում էր այլ հանցագործությունների կատարման նախապայման:

Այս իրավարանական միտքն ավելի է զարգացվում Գատաստանագրքի 131-րդ հոդվածում, որտեղ ուղղակի կերպով մատ-

նանշվում է, որ ուտելն ու խմելը պետք է շահվաճող լինեն և որ ավելին «... պեղծ է և ազահուլթին և պատճառն ամեն շարեաց. և չէ պատեհ, որ խելի մարդ զայդ այնչ, մանաւանդ քահանայ կամ եկեղեցական»: Հրապանելով և ամբողջականացնելով վերոհիշյալ 33-րդ և 131-րդ հոդվածների իմաստը, Գատաստանագրքի 130-րդ հոդվածն արդեն իբրև արտարահաված նորմ խոսում է այն մասին, որ հարբած վիճակում այս կամ այն կոնկրետ հանցագործություն կատարողները պետք է զբնականորեն իբրև հանցագործներ պատժվեն թե՛ մեկի և թե՛ մյուսի համար, այսինքն հարբեցողության ու դրա հետևանքով կատարված կոնկրետ հանցագործության համար. «Կու Տարմայէ արէնքս, որ զայն ցեզն (այսինքն աուրուցմիտց բարձրացնող և վնաս պատճառող, կոխվ անող հարբեցողները, Ա. Թ.) երկու ազգ պիտի՝ դատել՝ մէկ վասն արբեցողութեան, որ ինք ժամեր է և հանչար խմել»՝ որ խումբերցաւ ու զայն վնասն արար, և երկու ի հետ վասն վնասուն զոր զործեց, և զինչ վնասն այժեհաս: Հոդվածում հարցը այս կերպ զրվելով, այնուհետև երկրում է հարբած վիճակում զիտավորյալ սպանություն կատարելու օրինակը, որի մասին մենք արդեն համապատասխան զատողություններ արել ենք այս աշխատության նախորդ էջերում:

Գատաստանագրքի վերջին հոդվածներից մեկում՝ 155-րդ հոդվածում, մեր օրենսգրքին ամենախիստ պատիժներ է նախատեսում այն զեպերի համար, երբ հարբած մարդ հրդեհ է ուրիշի դուրսը: Այստեղ արդեն նա հրամայում է հանցագործին պատժել բանտարկությամբ, ծնծով և տանգահարումով. «Եթէ ուրդի, որ մարդ իր կամաւ կրակ ձգէ՝ նա պատեհ է տեսնուլ, թէ ի խալտսաց կամ ի խումբութեան է լնլ՝ կամ հարբած լինայ, նա այն այլ ցեղ է, ու զայն զրեատանոք և ծծծնաւք և խրատանար պարտ է ըշորդել»: Սրանք արդեն պետական հարկադրանքի քրեական ձևեր են, որոնց մենք հաճախ ենք հանդիպում Սմբատ Ապարապետի Գատաստանագրքում:

Նախազգուշական կանոնների խախտում: Հասարակական կարգի և մարդկանց հարապիկն անվտանգությունն դեմ ուղղված մյուս հանցագործությունը դա զանազան աշխատանքների, առանձնապես շինարարական աշխատանքների կատարման ժամանակ անվտանգությունն խախտողական կանոնների շարահավաքումն է: Մեր կանոնագրքում տեղ գտած տարբորվանդակ հիշատակարաններում բազմաթիվ խրատներ կան այն մասին, թե մարդիկ իրենց զործունեության ընթացքում, անգամ սուրբյիկտիվ կյան-

քում ու կենցաղում պետք է զգույշ և ուշիւ լինեն այն հաշվով՝ որ սրբիչներին նյութական կամ այլ կարգի վնասներ չպատճառեն, հակառակ դեպքում զանցառումները պետք է պատժվեն:

Քրեական իրավունքի տեսանկյանը որոշակի հետաքրքրություն ու արժեք են ներկայացնում Գոշի և Սպարապետի դատաստանագրքերի նույնատիպ մի շարք հոդվածներ, որոնցից շատերի մասին այս աշխատության տարբեր գլուխներում մենք արդեն հատուցություններ արել ենք:

Տվյալ դեպքում հարկ ենք համարում կանց առնել այդ դատաստանագրքերից առաջինի երկրորդ մասի 34-րդ, 76-րդ և երկրորդի 154-րդ հոդվածների վրա: 34-րդ հոդվածում այն գրույթն է վավերացվում, ըստ որի, երբ որևէ ազամարդ կամ կին ընկնում է փորված հորը կամ ջրհորում և մեռնում է, ապա հորի կամ ջրհորի տերը համարվում է սպանություն կատարող և գատապարտվում է արևյան գնի վճարման կիսով չափ, երբ դեպքը տեղի է ունենում ցեղիկ ժամանակ, և լրիվ չափով՝ երբ դեպքը տեղի է ունենում գիշերք: Նույն պատիժն էր կիրառվում, երբ նույն կերպ մեռնում են արարքի սուրյնկա հանդիսացող անձի կինը, ծառան կամ աղախինը: Որևնքը միմյանցից սահմանազատում է այն դեպքերը, երբ սուսուղները տարբեր դավանանքի պատկանող անձնավորություններ են: Կույր մարդու, հարքամի և երեխայի ընկնելը հավասարեցվում է այն դեպքին, երբ չափահաս մարդը ինքն է ընկնում գիշեր ժամանակ:

Այս հոդվածի խնդիրներից մեկն ըստ երևույթին հենց այն է, որ պատժի սպանակներով պահանջում էր հոր կամ ջրհոր շինող անձանցից զգուշավորություն ցուցաբերել այն հաշվով, որ ցժբարխտ դեպքեր տեղի չունենան, մարդիկ չմեռնեն: Նույնարժանքից է նաև 76-րդ հոդվածը: Հինգ ընդունելով մովսիսական օրենքը (Ներկրորդ օրինաց, ԽԻ 8), այս հոդվածն իր հերթին պարտավորեցնում էր. «եւ եթէ շինեսցես տուն նորաշէն, արասցես պսակ շուրջ զտանեօքն և մի՛ սպանումս զործեսցես ի տան քում, զի մի՛ անկանիցի որ անկանեսցես իցէ, ի ընտանէ»: Գոշը այս պատվիրանը շարագրելով, այնուհետև խոսում է այն մասին, թե պետք է նվազորել, որ բերված այդ պատվիրանը նման դեպքերում հետապնդում էր մարդկանց զգուշավորության վարժեցնելու, այլ կերպ առած, ուշիւ դարձնելու նպատակը: Այդ կերպ հարցը դնելով Մխիթար Գոշը պահանջում էր, որ այդ պատվիրանի խախտման համար, եթե, Խճարկն, մարդկային զոհեր չեն եղել, մեղավորները պատժվեն ապաշխարությամբ. «Եարծելի է, թէ և զայս պատուիրան նման

այն, որ զվիրարող զտեճ պատարագօք հրամայէր քանկ և ոչ դատաստանու արին խնդրել, ոչ տայ ի ձեռս դատավորաց զպատահանայ: Ո՛ր մի՛ հարկ կարտո իցնու, զգուշանայլ ուսուցանէ. իսկ մեզ ապաշխարութիւն լիցի»: Ահա թե ինչպես էր մեզ հետաքրքրող հարցը լուծվում Գոշի մաս:

Ավելին վճռական էր Սմբատ Սպարապետի Գատաստանագրքը, որի 154-րդ հոդվածի համաձայն, երբ տան շինարարության ժամանակ խախտվում էին աշխատանքի անվտանգության կանոնները և դրա հետևանքով մարդը կտրեց կամ պատեց վայր ընկնելով մեռնում էր, այդ տան տերը պատասխանատուության էր կանչվում, իբրև ակամայ սպանություն կատարողի և պատժվում էր արյան գնի հատուցմամբ: «Կու հրամայէ արէնքս,— ասված էր այդ հոդվածում,— որ ով նոր տուն շինէ՛ նա բոլոր ցեղեցն պսակ դէև, որ մարդ ընդ տուն երդն ի վայր շքնկէի ու մեռնի. թե չէ՛ արեան տըր և և զամեն գիեցն վճարէ»:

Գոշի և Սպարապետի դատաստանագրքերի վերահիշյալ և մի շարք այլ հոդվածների տեքստերի ուսումնասիրությունից կարելի է գիտատեսորեն եզրակացնել, որ մեր իրավունքի այդ հուշարձանները, փաստորեն, նախատեսում էին անորոշ դատավորություն օրպես մեղքի յուրահատուկ ձև, այսինքն ընդունում էին այնպիսի մեղալին վիճակ, երբ բուն արարքի նկատմամբ արարքի սուսուղները գրեկորում էր գիտավորություն, իսկ դրա հետևանքների նկատմամբ՝ հանցավոր անզգուշություն:

Այս փորձի փաստը նույնպես վկայում է մեր այդ հուշարձանների հեղինակների բարձր իրավասանական կուլտուրային մասին, այն մասին, որ նրանք ընդունակ են գտնվել ոչ միայն տարբերելու ու միմյանցից սահմանազատելու, սահմանագծելու տարբեր հանցակազմներ, այլև տարբերելու ու սահմանազատելու մեղքի, որպես սուրյնկեղիվ մեղատեսցման ձևի, ձևերն ու տեսակները:

Միսակատարությունների խանգարում: Մեր կանոնական իրավունքի հուշարձաններից երևում է, որ հին և միջնադարյան Հայաստանում մարդիկ այնքան էլ արտակախ ու մոլեռանդ հավատացյալներ չեն եղել, ինչպես երբեմն փորձում են իրենց ընթերցողներին համոզել մեր քրիստոնյա պատմիչները: Ավելին, պատահական միտնգամայն արժանահավատ աղբյուրները, զրանց թվում հաճախ հենց իրենց՝ այդ պատմիչների աշխատություններում բերված փաստերն առում են, որ այդ հետաժոր դարերում նույնքան եղել են հավատացյալներ և ոչ թիլ թվով անհավատացյալներ: Եթև հեթանոսության շրջանում Հայաստանում մարդիկ կենաց ու

մատու պայթյաբ էին մղում բրիտանուսիայան դեմ, խանգարում ու խափանում էին դրա ծնենքը, ապա բրիտանուսիայան զոյուսիայան հենց առաջին տարիներին սկսում է բրիտանուսիայաների անօրինակ հայածանքը հեթանոսուսիայան մնացուկների ու հենց իրենց՝ հեթանոսական կրոններին հօգուտ քրիստոսի դեմ, այդ կրոններին համապատգոզներին, դրանց հետեղներին դեմ:

Մեր կանոնական օրենքներում, սկսած VIII դարից, բազմաթիվ հիշատակումներ կան այն մասին, որ տարբեր խավի մարդիկ, այն էլ հաճախ հարբած վիճակում, խանգարել են եկեղեցական արարողութիւններն ու կրոնական ծեսերը: Գրանուսում համազգիւտ համար բազմական է ծանոթանալ Պարտաւի ժողովի կանոններին, այսինքն՝ եկեղեցական-կանոնական հնագույն օրենքներին: Այդ օրենքները մեղավորների նկատմամբ խիստ պատիժներ էին նախատեսում, որոնց թիւում իր չուրահատուկ սեղն էր զբաղում երկարամյա ապաշխարութիւնը: Հօղով իշխանավորների կամ զաւտավորների կամքով մարդիկ նեթարկում էին ծանր ձեռքի անպաշխարութիւն, գանակոծման և նույնիսկ մարմնական պատիժներին:

Որ իսկապես նշում արարքը՝ կրոնական ծեսերի ու արարողութիւնների խանգարումը հին և միջնադարյան Հայաստանում հանցագործութիւն էր համարվում ու որպէս այդպիսին հետապնդում էր օրենքով, զրա մասին ուղղակի և անուղղակի ապացույցներ կան նաև մեր աշխարհիկ օրենքներում: Մխիթար Գոշի Գառաստանագրքի առաջին մասի 103-րդ հոդովմից, օրինակ, երևում է, որ մարդիկ հանդոզել են խեղույքներ ու դիւարբուր կազմակերպել, հանցանքներ կատարել եկեղեցիներում, էլ ո՞ր մնաց ծեսերն ու արարողութիւններին խանգարում, որը միանգամայն հնարավոր ու անխուսափելի էր: Հօղովմն իր իրականորմերով այդ և նման արարքների համար համապատասխան տույժեր, այլ կերպ սասծ, այն ժամանակվա հակաօրոնութիւնը պատիժներ էր նախատեսում: Նույնարդիւնդակ են Մարտ Սպարապետի Գառաստանագրքի 39-րդ և մի քանի այլ հոդովմաները:

Մարդագողութիւն: Մեր միջնադարյան օրենքները պատժելի արարքներ էին համարում նաև վաճառելու նպատակով մարդ զողանալը: Սա գուրջային հանցագործութիւնն էր, թեև ուրիշին որպէս ստրուկ կամ ճորտ վաճառողները գուրջային օգուտներ էլ էին ստանում, այլ հանրային անվտանգութիւնն դեմ ուղղված ծանրագույն հանցագործութիւն էր, որովհետև զրանով վտանգի տակ էր զրվում նախ և առաջ մարդկանց ազատութիւնն ու անձնական ապահովու-

թիւնը: Մարդավաճառութիւնն բարձր վտանգալորութիւնն ու պատժելիութիւնն մասին շատ օրինագրութիւններ կան հայ կանոնական ու աշխարհիկ օրենքներում և դա միանգամայն հասկանալի պատճառով: Բանն այն է, որ հանցագլուտ արարքը, այն թիւում առաջին հերթին մահճեղականները հափշտակում էին բրիտանուսիայան, այսինքն հայերին և նրանց որպէս ստրուկ կամ ճորտ վաճառելով՝ անտեսելի վիշտ էին պատճառում հարազատներին: Այսպիսով, մարդագողութիւնը որպէս հանցագործութիւն կապված էր ստրկավաճառութիւն հետ:

Ստրկատիրական կարգերում, վաղ Ֆեոդալիզմի օրոք և կապիտալիստիկ այսպէս կոչված նախասկզբնական կուտակման շրջանում, այլ կերպ սասծ, հնադուսն ժամանակներից մինչև XVIII դարը ներառւով ստրկավաճառութիւնը անտարի ձևերից մեկն էր: Գրա աղբուրները հանդիսանում էին պատերազմներն ու զանազան ավազակային հարձակումների հետևանքով տեղի ունեցած գերեզմուսները: Պարտաված կամ հարձակմամբ գերեզմուսով մարդիկ համարյա բացառապէս դանուսում էին հասարակ ապրանքներ, որոնք մյուս ապրանքների հետ համահասակամբ կերպով վաճառվում էին մեծ քանակութիւնների կամ նավահանգստային քաղաքների, այլ կերպ սասծ ստրկավաճառանոցների ընդարձակ շուկաներում:

Ստրկավաճառութիւնը հատկապէս տարածված էր հին Հունաստանում ու Հռոմում: Ստրկների վաճառքի հարուստ շուկաներ կային երկու կողմն, Գիլոսում, Կարթագենում: Կենտրոնական Եվրոպայում գերմանացիների արշավանքները շրջանում լայն տարածում ստացավ սլավոնական ծագում ունեցող ժողովուրդներից հափշտակված ստրկներին անտարբ: Եվրոպայի հարավում, ինչպէս նաև Միջերկրական ու Սև ծովի ավազաններում ստրկավաճառութիւնը խաշակբաց արշավանքների անխուսափելի ուղեկիցն էր: Առանց խղճի խաշի զգալու այդ ան գործով էին զբաղվում վաճառականները, անկախ նրանց ազգային ու կրոնական պատկանելիութիւնը, անկախ զավանքի բնույթից: Ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ հաճախ այդ անտարի առարկաներն էին դանուսում բազմահարգ հայեր, որոնք զանազան ճանապարհներով հափշտակվելով Մեծ Հայրից ու Կիլիկիայից, անարգի կերպով վաճառվում էին Հռոմի, Վենետիկի, Ալեքսանդրիայի շուկաներում, ինչպէս նաև մասույմանական ու մեղողական խանութիւնների կենտրոնական քաղաքների բազմաթիվ ստրկավաճառանոցներում:

Մարդագողութիւնն պատմելիութիւնն մասին Մխիթար Գոշն ու Սմբատ Սպարապետը իրենց զատաստանագրքերում ասանձին իրա-

վանորմեր են մտցրել: Գոշի Գատատանազորի նրկրորդ մասի 24-րդ հողավածը, Էլակեա ընդունելով մովսեսական օրենքը, ըստ որի մարզ գողացողը կամ նրան ձախողը կամ ծախելու նպատակով ներքան պահողը պետք է մահվան դատապարտվի (Ելից, Իև 16, նրկրորդ օրինաց, ԻԿ 7)։ Ճա գրանում է։ «Որ որ գողացցի յորդուցն Իսրայէլի եւ վաճառիցէ զնա, եւ գտցի առ նման, մահու, մեղցի, Իսկ մեզ փոխելով լիցի այսպիսի լրմամբ: Եթէ քրիստոնեայ գողացնաւ զքրիստոնեայ վաճառ յայնազրիս եւ յայտ շար գործն զայցէ, յաւազս ապաշխարութեան հասանելոյ մի մեղցի մահու, այլ ի բանտ արկեալ-երաշխատորօք զստեալ զինն յղիցի եւ գործուցել զվաճառեալու: Ապա թէ չիցէ ճար, զզինն ի գողացելոյն տայցեն տեարս եւ իրատեայ յաւա արձակիցեն, կամ նշան զիցի. անզղջից օղջի իտուտն»: Ինչպես տեսնում ենք, Գոշ մարզագողութիւնը պատժում է ոչ թէ մահապատժով, այլ բանտարկութեամբ՝ հուշար զնելով այն բանի վրա, որ բանտարկվածը միջոցներ կգտնի ու կվերագարձնի, հետ կզնի իր իսկ վաճառած քրիստոնեային: Բայց Գոշը հասկանում էր, որ այդ բանը կարող էր անճար գտնուել Այս զեպրում արդեն նա նախատեսում էր հանցագործին դատապարտել այլ պատիժների եւ զրանց թվում հօգուտ գողացվածի հարազատների բոնազանձվող զլուսազնի ու մարմնական խիստ պատիժների՝ կուրացման եւ խարանադրուման:

Հիմնականում նույն այդ սկզբունքներով է շարադրված Սմբատ Սպարապետի Գատատանազորի 125-րդ հողավածը, որն իր հերթին ներառվելու էր իր տախի հանցագործին՝ գողանալով կամ թն գնելով, ծախվածին աղտտել զերկութունից: Գատատանազորի միաժամանակ ազդարարում էր, որ մարզագողը արժանի է ծանրագույն պատիժների՝ ապաշխարութեան ճես գուրգոցված ցմահ բանտարկութեան եւ մարմնական պատժի՝ կուրացման: «Մարդ որ քրիստոնէ գողանայ, եւ տանի անապրինաց ծախել՝ ուս ճնար է ի հին արկեացն (այսինքն մովսեսական օրենքների համաձայն, Ա. Թ.) թէ ապրի: Բայց թէ խեղի ներողութիւն լինի՝ որ կալել զծառայն ազատել եւ իյնա զարձակել՝ գողնալով կամ գնելով ինքն ինչի մահ ապաշխարել է ի զեղանն, նա այդ ի դատարոհն կամքն է. եւ կուրացնել յերկու աշացն արժան է»: Ահա այսպես էր հետապնդվում ու պատժվում մարդագողութեանը Կիլիկիայի Հայաստանում, որի տերիտորիան հաճախ պատերազմների թուրք ծանր հետևանքներով եւ այդ թվում մարդագողութեամբ ու ստրկավաճառութեամբ հանդիսէր:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ մարդագողութեան պատ-

մելու ժամանակ իրավանորմեր կան նաև կամբրոնացու կողմից կազմված աշխարհիկ օրենսգրքում, որի մասին մենք հիշատակել ենք: Այդ աշխարհիկ 118-րդ հողավածի համաձայն, մատնեւձված արքաբը, եթէ գողացվողը ազատ էր եւ գնվողական ծառայող, պատժվում էր մահապատժով: 120-րդ հողավածի համաձայն առանց թաղավորի կարագորութեան կատարվող զերեվարութեան համար հանցագործները պատժվում էին արտարանակեցմամբ: Ահա այսպես էր պատժվում մարդագողութիւնը:

Ի՞նչպիսի կողմից իր պարտականությունների շնորհիւ: Ուսումնասիրվող հանցագործությունների թվին անհրաժեշտ է գտնել նաև բժշկի կողմից հիվանդին սխալ բժշկման ենթարկելը եւ ընդհանրապես իր պարտականությունների ոչ պատշաճ կատարումը, որոնց մասին նույնպես մեր օրենսդրական-իրավաբանական հուշարձանները մեկից ավելի անգամ մատնացույց են անում: Վերջենք սովորութային իրավունքը եւ Գավիթ Աւովկա որդու Կանոնների 48-րդ, 77-րդ, Մխիթար Գոշի Գատատանազորի երկրորդ մասի 119-րդ եւ Սմբատ Սպարապետի Գատատանազորի 151-րդ հողավածները, որոնց մասին մեր աշխատութեան առաջին մասերում հանցակազմի ստրեյկիով կողմի ընդհանուր էությունը քննելիս եւ անձի դեմ ուղղված հանցագործությունների հանցակազմների վերլուծությունը ստույ ժամանակ մենք որդյ անհրաժեշտ դատողություններ արել ենք: Տվյալ զեպրում մեզ հետաքրքրող հարցի տեսակետից հայ սովորութային իրավունքի նորմերը եւ այդ հողավածների իրենց ամբողջությամբ առած ասում են, որ հին եւ միջնադարյան Հայաստանում զործող օրենքները համաձայն բժշկիները քրեական պատասխանատվության էին ենթարկվում ինչպես այն զեպրում, երբ նրանք հանցագործությունները կատարում էին գիտավորությամբ («Էկամայ»), այնպես էլ այն զեպրում, երբ նրանց կողմից նույն այդ արարքները կատարվում էին անզգուշկությամբ («սակամայ»)։ Առաջին զեպրում, եթէ կատարվածը ծանր հետևանքներ էր թողնում, օրինակ, մահ էր առաջացնում, նրանք՝ այդ բժիշկները, դատապարտվում էին բանտարկության եւ անգամ մահապատժի, իսկ երկրորդ զեպրում, երբ նման հետևանքներ չէին առաջանում, բժիշկները, նախելով գործի կոնկրետ հանգամանքներին, պատժվում էին ապաշխարաբեքով, տուգանքով եւ միայն բացառիկ զեպրերում՝ բանտարկութեամբ:

Նույն օրենքների ուժով բժիշկը՝ հիվանդի կողմից կանչվելու զեպրում, պարտավոր էր նրա մոտ գնալ: Հիվանդին չհամախելու

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԳԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ղեկըրում, երբ պատճառը հարգելի էր, բժիշկը որևէ պատասխանատվության չէր ենթարկվում, իսկ երբ անհարգելի էր՝ պատժվում էր որպես անզգուշությունը հանցագործություն կատարող, իսկ եթե հիվանդի առողջությունը քայքայվում էր, բժշկի պատասխանատվությունն էլ համապատասխանաբար խստանում էր:

Բժիշկների տղիտվության կամ անփորձության հետևանքով հիվանդին պատճառած վնասը, նրանց կողմից հիվանդության ախտաչիշի որոշման հարցում դրսևորվող անընդունակությունը և հիվանդներին ոչ ճիշտ ցուցումներ տալը պատժվում էին որպես զիտավորության կատարվող հանցագործություններ:

Ուշագրավ է վերջապես և այն, որ բժիշկների կողմից իրենց աշակերտներին վատ ուսուցանելն անգամ պատժվում էր, և մեղավորները, իբրև զիտավորության կատարված հանրորեն վտանգավոր ու հանցավոր արարք թույլ տվողներ, դատական պատասխանատվության էին կանչվում:

Պատմական ակնարկ: Արդարագատության իրականացումը գատարանների կամ դրանց փոխարինող օրգանների ու անձանց կողմից բրնական, քաղաքացիական, ամուսնա-բնտանեկան և այլ զործերի գասակարգայնություն ճիշտ լուծումն է դործող օրենքներին համապատասխան: Արդարագատության զեմ ուղղվող հանցագործությունները սոնձգում են այդ արդարագատությունն իրականացնող օրգանների ճիշտ, հասարակության մեջ տիրապետող հասարակական խավերի շահերին համապատասխան, կազմակերպված ու դործող օրգանների գործունեության զեմ: Արդարագատության իրականացումը սերտորեն կապված է օրինականության պահպանման սկզբունքի հետ: Աստղինի ճիշտ իրականացմամբ ապահովվում է օրկրորդի կայունությունն ու անասանությունը: Օրենքների գասակարգային լինելը, հասկանալի պատճառով, պատմականորեն միշտ էլ պայմանավորել ու պայմանավորում է արդարագատության և օրինականության գասակարգային բնույթը:

Արդարագատության իրականացման զեմ ուղղված հանցագործություններն այն վտանգավոր արարքներն են, որոնցով այս կամ այն ձևով սոնահարվում է արդարագատության բուն ֆունկցիան՝ այս բառի լայն հասկացողությամբ: Այդ հանցագործությունների էությունն ու ձևերը ժամանակի ու տարածության մեջ միշտ փոփոխվել և ներկայումս էլ փոփոխվում են այն պարզ պատճառով, որ արդարագատությունն ինքը, ինչպես նշեցինք, դասային-գասակարգային բովանդակություն ունի, հետևաբար բոլոր դարերին ու ժամանակներին հատուկ, այսպես կոչված համամարդկային արդարագատություն ու դրա զեմ ուղղված անփոփոխ, մեկընդմիշտ սրված հանցագործություններ չեն եղել ու չկան:

Արդարադատութեան իրականացման բնագավառում կատար-վող հանցագործութիւնները թլով շատ են. անձի անձինք բռնակա-ն պատասխանատւութեան կանչելն ու դատապարտելը, դատավորների կողմից անարդար դատավճիռ կամ այլ կարգի որոշումներ կայաց-նելը, անհատ անձի կողմից սուտ ցուցմունք տալը կամ մատ-նութիւն անելը, արդարադատութիւնն իրականացնող պաշտօնա-տար անձանց կամ վկաներին որոշակի նպատակով կաշռուելը, դա-տապարտալի կողմից իր նկատմամբ քանակաված պատիժը կրելուց խուսափելը և այլն: Գրանցից մի բնիսը, որինև, անարդար դա-տավճիռ կայացնելը կարող է կատարվել համապատասխան պաշ-տոն կամ դիրք ու ֆունկցիա իրականացնող անձանց կողմից, իսկ մի բանիսի, որինև, սուտ ցուցմունք տալու, մատնութիւն ան-ելելու դերում որպէս սուբյեկտներ կարող են հանդիս գալ պաշտոն չունեցող կամ ծառայական բնութի գանազան ֆունկցիաներ չիր-ականացնող անձինք:

Տվյալ երկրում, տվյալ ինքզրութեան պայմաններում արդարա-դատութեան ճիշտ իրականացման շարքով հիմնականում միշտ էլ շահագործված են եղել այն հասարակական ուժերը, որոնք տնտե-սապէս ու քաղաքականապէս տիրապետող են եղել և դա հասկանա-լի պատճառով՝ նման արդարադատութեան ճիշտ իրականացումը համապատասխանել է շննց իրենց, այդ ուժերի նեղ գատային-դա-տակարգային շահերին: Գրանով է բացատրվում այն հանգամանքը, որ հին, միջնադարյան և ժամանակակից պետութիւններն այդ ար-դարադատութեան իրականացումը պաշտպանել են ի թիվս այլ միջ-ջոցների նաև քրեական օրենքները իրենցով ու օգնութեամբ:

Հին բարեխոնական օրենքը ծանր պատիժներ էր նախատեսում այն դատավորի համար, որը դատավճիռ էր քրեակրիւմ, որոշում էր կայացնում, փաստաթուղթ էր պատրաստում և սպա ինչ-ինչ նկա-տառումներով փոխում էր դրանց բովանդակութիւնը, այսինքն փաս-տորեն ոտնձգում էր իրականացվող արդարադատութեան դեմ, ծոռւմ էր այդ արդարադատութիւնը: Այդպիսի դատավորը պատժվում էր ծանր տուգանքով և առմիշտ հեռացվում էր իր պաշտոնից: Եւ այդ օրենքն անողորմաբար պատժում էր դատարանում սուտ վկայութիւն տվողներին և զրկարտոյններին: Համաժողովրդի օրենսգրքի 1-ին և 3-րդ հոդվածներին համաձայն, երբ որևէ մեկը որպէս վկա հանդիս պալով դատական գործով չէր սպասուցում իր սասքը, և եթէ այդ գործը սպանութեան կամ բնդհանրապէս մարդու կյանքին վնասը-րող դատական գործ էր, այդ վկան, որպէս սուտ ցուցմունք տվողի, դատապարտվում էր մահապատժի: Եթէ վկան ստում էր գուշային

հանցագործութիւնների գործերով, նա ենթարկվում էր այն պատժին, որին պիտի ենթարկվեր այն անձը, որի դեմ նա սուտ վկայութիւն էր տվել:

Վկաների նկատմամբ այսպիսի խիստ պատիժների կիրառումը բացատրվում է նրանով, որ պատմական այդ ժամանակներում եր-բաներ, փաստորեն, միաժամանակ հանդիս էին զայիս իբրև դատա-վորներ, և նրանց խտրը դառնում էր օրենք: Այդ մասին կան հիշա-տակրումներ շատ գիտնականների, այդ թվում, օրինակ, դերմանացի գիտնական Գրիմի մոտ⁵⁵:

Հին հռոմեական օրենքները նույնպէս սուտ ցուցմունքներ տվող վկաների դատապարտում էին մահապատժի: «Տաներկու տախ-տակներէ» համաձայն նրանք հայտնի Քարպիս ժայռից ցած էին նետվում: Եւրոյարովանդակ օրենքներ գործում էին նաև հին Հու-նաստանում և սորկատորական մշուս պետութիւններում:

Հանրահայտ են այն կատեղորեն և անողոր պահանջները, որ մովսիսական օրենքները ներկայացնում էին դատավորին ու վնա-ններին: Մրանք խտտորեն պատժում էին իրենց դիրքը շարաշահու՝ անաբարգ գործիչու և դատարանի առջև ստելու համար: Եւ այն կերպ էր հարցը լուծվում բովանդակ միջնադարի բոլոր ֆեոդալական պե-տութիւններում: Տիրապետող դատակարգներ ու դասերը, իրենց շա-հերին լիովին համապատասխան ոգով կերտված արդարադատու-թիւնը հռչակել էին իբրև աստվածային արդարադատութիւն և մա-հապատժով, տաժանակրութեամբ, մարմնական ու գուշային պա-տիժներով հետապնդում ու պատժում էին օրենքների պահանջն ան-տեսողներին անկախ այն բանից, թէ ովքեր և ինչ ճանապարհով էին այդ անում:

Անարգաբ դատավճիռ կայացնելը: Հին և միջնադարյան հայ օ-րենքներում այն հարցը՝ արդարադատութեան ճիշտ իրականացման քրեա-իրական պաշտպանութեան շարքը, հասկանալի պատճառ-ով չէր կարող անտեսվել և իրականում անը գտած ակտերում հա-ճախ է հիշատակվում այն մասին, որ դատավորները պարտավոր են արդարագատ լինել, շարժվաղել օրենքն ու իրավունքը, շարժարաց-նել մեղավորներին և դրան հակառակ, շղատապարտել անմեղին: Այդ կարգի արարքները համար Հայոց կանոնագիրքը խիստ պա-տիժներ էր նախատեսում: «Կարգիցին առաքելուց և էղին հաստա-տութեամբ,— ասված է առաքյալներին վերազվող կանոնագրու-թեան 27-րդ կանոնում,— եթէ որը են յատիճան դատաօրոթեան

⁵⁵ Stw = H. Grimm, Deutsche Rechtsaltertümer, Lpz., 1899, էջ 857, 785:

և իշխան անել զգառաստան, եթէ թիւրեցիք, եթէ աշտոյց ներսաց և պարտաւորեցէ զազգարն և արդարացուցէ զպարտաւորն, մի՛ հա կացցէ ի կարգի գատաւորութեան և պատահանել կշտամբեացքի, զի ոչ իմացաւ զգրեանց աստուածային ձեռատի յօրէնս Մովսիսի, թէ մի՛ խտորեցուցէս զիրաւունս ի գատաստանի և կաշտա ի վերայ իրաւանց մի՛ անուշուցուս: Այսպես էր ճարցը լուծվում մեր եկեղեցական-կանոնական իրավունքում. երկրային արդարագատութիւնն սատվածային արդարագատութեան արտահայտութիւնն է, և նրա զեմ ոտնձգողը, թեկուզ նա գատավոր լինի, պետք է պատժվի: Ահա այն սկզբունքը, որ դրավում էր այդ իրավունքում, հայ եկեղեցական-կանոնական իրավունքներում:

Ներսես Ենորճային իր «Քուզմբ բնդհանրական»-ում բատ երևույթին տեսնելով ժամանակի ազտեղութիւններն ու անարդարութիւնները, իր հերթին քնն իրականներ չի կարգում հողեղոր և աշխարհիկ ելխանութիւններին այն մասին, որ սրանք գործեն աստվածային օրենքի թելագրանքով ու անհրաժ, այսինքն անարդարացի դատարաններն, անմեղներին շշտատպարտեն և կաշտոքի կամ այլ գործոններին ուժով մեղավորներին պատժից շաղատեն, եթէ հիշենք, որ «Քուզմբ բնդհանրական»-ի խոսքերը միջնադարյան Հայաստանում իրք օրենքի ուժ ունեն, էլ ազնիւ հասկանալի կդառնա, թե ինչպէս էր զրվում արդարագատութեան նկատմամբ օտնձգութիւններ կատարողներին, առաջին հերթին գատավորներին, սուտ վկայութիւն տվողներին և նմանների պատժելուութեան ճարցը պատմական անցած-ցնացած այդ ժամանակներում:

Մեր գատաստանագրքի հեղինակները նույնպես, հասկանալի պատճառով, չէին կարող անարարեր գտնել այն անանց նկատմամբ, ովքեր գատական պաշտոններ վարելով, շարաշահում էին իրենց զիրքը և պատժից ազատում հանցագործներին կամ, բնդհանրականը, գատապարտում էին անմեղներին: Նախքան այդ մասին հանդիմաններին խոսելը, քնդգծենք, որ նրանք այս հարցը լուծելիս հիմք էին ընդունում և ելնում էին մաթղիկանց քրեական պատասխանատվութեան ենթարկելու սուբյեկտիվ (մեղքի) սկզբունքից: Պատասխանատվութեան ճարցը զրվում էր, կոր անձը մեղավոր էր լինում կատարվածի մեջ, այսինքն արարքը կատարում էր իրատվորութեամբ, իսկ հակառակ դեպքում նրան պատժելու մասին խոսք անգամ չէին չէր կարող, եթէ նույնիսկ նա սխալներ գործեր:

Միևնաբ Գոշի Դատաստանագրքի նախադրութեան վեցերորդ գլխում հենց այդպէս էլ հարցը լուծվում է. «եկլի գատաւորն զգոյշ կայցէ լիւրցո սպասաւորացն (այսինքն դատարան ատենակալներէք),

Ա. Ք.), որք այնպէս կարող իցնել զի ի գատաստանի խօսիցին. զի սովորութիւն է ի դատ եկեղեցն ծածկարար կաշտուել, զի իխրեանց կողմն խօսեցցին: Զի մի գուցէ ի նոցա հնարիք խօսելն խարիքին միտք դատաւորին ի բանս նոցա և անիցէ թիւր զգատաստանն: Անխարելի գատաստան Աստուծոյ է, որ զձաժուկան և զլայտնիս տեսանէ. իսկ երկրաւորս բազում անգամ պատահի զի սխալէ: Բայց մի՛ ոք մեզ զիցէ նոցա որ ահամայ սխալեն. իսկ որ կամաւ թիւրք զգատաստանն՝ ինքն մնայ ի գատապարտութիւն վերին գատաստանին: Ինչպէս պարզ կերպով նկատելի է, արդարագատութեան իրականացման հարցում գատավորի բարեիցէ մոլորութեամբ ու անզգուշութեամբ («ախմայ») թույլ տրված սխալները, բատ Գոշի, շպետք է մեղաւանջենք գատավորին: Նրան կարող են մեղաւանջեցնել միայն զրտավորացւ, այսինքն զիտակցական-կամային («կամային»), բայց ոչ անզգուշ գործողութիւնները: Նույն այս իրավարանական քաղաքական իր վավերացումը գտել է Դատաստանագրքի նախադրութեան իններորդ գլխում, որտեղ Գոշը համեմատելով հայկական արդարագատութիւնը մահմեդական արդարագատութեան հետ, ասում է, որ ի տարբերութիւն մահմեդական արդարագատութեան, հայկականը պետք է արդարագատ, ճշմարիտ և անկաշտ լինի, այլ ոչ թե սուտ վկանքով ու աշտու. «Զի գատաստան մեր պարտ է իրաւամբք և ճշմարիտ և անկաշտ լինել, և ոչ սուտ վկայիք, և ոչ պատող ճարտարք, և զհողի մեկուցո ոչ զրկել և ոչ զանձառանգան անմասն հանել ի հոգոյ բաժնից, և այլ նոյնպիսիքս: Իսկ նոցայն հեռի է յայսմ աննայնէ»: Պատասխանատվութեան կարող են կանգնել միայն նրանք, ովքեր անարգար, ոչ ճշմարիտ և միտուժանվոր պատեր են անում. ահա այս իրավանքումի ներքին էությունն ու ոգին:

Գոշը հետեւելով առաքելական կանոններին և մասամբ էլ զգատագործելով մովսիսական օրենքները, ազդարարում է, որ եթէ գատավորը ազգավազում է արդարագատութիւնը, աշտում է որդանի մարցո, գատապարտում է արդարին և արդարացնում մեղավորին, նա այլևս շպետք է մնա իր գատական կողմն մեջ, այսինքն գործի որպես գատավոր, այլ պետք է մերկացվի ու պատժվի, որքանով որ չի կարողացնել հասկանալ աստվածային օրենքի էությունը: «Եթէ որք են յաշտանն գատաւորութեան և իշխան են աննել գատաստան,— սպամ է Գոշի Դատաստանագրքի երկրորդ մասի 16-րդ հոդվածում,— եթէ թիւրիցէ և աշտոյց ներսաց և պարտավորեցէ զարդարն և արդարացոյցանէ զպարտաւորն, մի՛ ևս կացցէ ի կարգի գատաւորութեանն և պատահանաւ կշտամբեցի. զի ոչ իմացաւ զգրեալն աստուածային ձեռամբն յօրէնս Մովսիսի և եթէ՛ մի՛ խո-

տորեացուցնս զիրաւունս ի գատաստանի և կաշառ ի վերայ իրասանց մի՛ առեուցուս: Ի գատաստանի գատատարացն և կանոնական Հրասաննացն ուսար՝ մի՛ շնորհնս յաշահանս լինիլ և եկեղեցուց զգատողութիւնն. և եթէ արատաքո իրասանն և աշատանօք վարիցի, անկցի յայնմ շնորհէ: Ձի գոն գատաստանք և գատատարաց ի վեհեցն: Եւնս գնեսա՛ր գիտողացն զիրաւունս օրինացնս:

Որ Քոչի մտա Հարցի այս կերպ լուծուիք սկզբունք էր, այլ ոչ բն պատահանորեն արտահայտված մի սովորական միտք, դա երևում է նրա Գատաստանգրքի նույն՝ երկրորդ մասի նաև 85-րդ հոդվածից, որտեղ գատավորներից դարձյալ ու դարձյալ պահանջվում է արքարգատությունը շնտել, մարդկացն նկատմամբ անիրավութուն չանել, կաշառքով կամ խաբրեալական որևէ այլ եղանակով չզործել: Այս հոդվածում նույնպես նշվում է, որ գատավորն, նյն նման արարքներ է կատարում, պետք է խտտորեն պատմվի, այսինքն զրկվի իր գատավորական կոչումից և պաշտոնից:

Անարդարագատ, միտանալիք կերպով գործող գատավորների պատժելիության անհրաժեշտության սկզբունքն իր օրենսդրական մարտպնդումն է գտել նաև Սմբատ Սպարապետի Գատաստանագրքի 10-րդ հոդվածում, որտեղ այն միտքն է անցկացվում, թե նման գատավորները պետք է զրկվեն իրենց պաշտոնից և գատվեն ու գատապարտվեն որպես աստվածամաճառներ, այսինքն որպես ստովածային օրենքը ոսնահարողներ ու ծախողներ:

Սուտ վկայություն: Պատմականորեն, գարեի ընթացքում հրատարակված մեր օրենքները պատժել են նաև գատարանում սուտ վկայություն տվողներին ու զրպարտիչներին: Այն շափով, ինչ շափով այդ արարքները կատարվում ու աննշվում էին անձի դեմ ուղղված հանցագործությունների ու սուտ երդման հետ, մենք արգելն քննել ենք անձի դեմ ուղղված և կրոնական հանցագործությունների մասին մեր գատողությունների անելիս՝ սույն աշխատության երկրորդ և երրորդ զուխներում: Այժմ ասե՛ք, թե ինչպես էր բնորոշվում ու պատժվում սուտ վկայությունը որպես ինքնուրույն հանցակազմ պարունակող բրնական օրինախախտում, որպես հանցագործություն:

Մեր կանոնական իրավունքի առանձին հուշարժաններում անհարկներ կան այն մասին, որ սուտ վկայությունը հո հողերը կամ աշխարհիկ գատարաններում սուտ, այսինքն իրականությունը համապատասխանող ըուցմունք տալն է, այլ կիրպ սասմ այս կամ այն նկատառումներով գատարանից ճշտություն թացցնելը կամ այն չբառմունքն է: Առարկական կողմն է կանոններում նման արարքի հասար մեղավորները պատժվում էին եկեղեցական-կաշահական

խիստ պատիժներով: Եահայիվանի ժողովում ընդունված կանոնների համաձայն ծանր ապաշխարանքով, անգամ մարմնավան խիստ պատիժներով պատժվում էին բոլոր նրանք, ովքեր հրաժարվում էին վկայել մեղնականների դուրբյան ու նրանց գործունեության կապահցությունը, օրինակ, հրաժարվում կամ խուսափում էին նրանց բնակավայրերի տեղը հայտնել համապատասխան հողեր իշխանություններին:

Սուտ վկայության պատժելիության մասին բավական հանգամանորեն խոսվում էր Անտիոքի սահղներում և Լամբրոնացու աշխարհիկ օրենսգրքում կամ այսպես կոչված Ասորահանձանական գատաստանագրքի հայկական վարիանտում: Այդ օրենսդրական իրավաբանական ակտերը սուտ վկայության համար նախատեսում էին արքարանակեցում և անգամ մարմնական ու անվանարկող պատժներ:

Ինչ վերաբերում է Գովիթ Ալավկա որդու կանոններին և մեր գատաստանագրքերին, ապա դրանց մեջ նշված հանցագործությունն էլ ունի այն սովորական հոգեբանական հիմքերով, որոնք հանցագործություններում ու կարգավորումներում էր էլ ավելի ամբողջական դեբերով: Ալավկա որդու կանոնների 45-րդ հոդվածի համաձայն սուտ վկայություն տվողները բրնական պատասխանատվության էին կաննչվում ու պատժվում էին սուտ երդում տվողների հետ համահավասար շափով, մանավանդ, երբ խոսքը վերաբերում էր ծանր հանցագործությունների, օրինակ, սպանության, գերեմկանատության և նման այլ գործերով արվող գատական վկայություններին: Այդ հոգեվածի ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ալավկա որդու ժամանակներում սուտ ցուցմունքը և վրգայությունը աշխարհիկ ու հողեր գատարանների համար հանախիթք են հանդիսացել անարգար գատավորների կայացնելու և անմեղ մարդկանց գատապարտելու կամ մեղավորներին ազատելու գործում: Մխիթար Քոչի Գատաստանագրքում և Սմբատ Սպարապետի օրենսգրքում սուտ վկայության պատժելիության մասին ավելի հաճախ է խոսվում և այդ հանցագործության մասին ավելի շատ օրինագրություններ ու իրավանորմներ կան: Քոչը, օրինակ, համաձայն գանդալում, որ իր ժամանակ սուտ երդումը, ուրեմն և նման երգամար վկայի կողմից գատարանում արվող սուտ վկայությունը կամ ցուցմունքը լայն տարածում ստացած երևույթներ են հանգիստացել, որ այդ երևույթները ինքնուրույն կարգած իրենցից բարձր հասարակական-դասակարգային մտանցավորություն են ներկայացրել: Այսպես հարցը դնելով, Քոչը պահանջում էր անգամ ցմա՛ր ապաշ-

խորտվեցանք պատճառով բուրի նրանց, ովքեր երգումք սուտ վկայութիւն էին տալիս:

Եարագրելով Գատաստանագիրքը գրելու բուն պատճառները, Գոշն այդ պատճառների թիվում մատնացույց է անում այն, որ մեծացել է շարիքը և հավատացյալները երգվում են ոչ միայն դատարանի առջև, այլև ամեն մի դատարի առիթով: Գրանելով նրանք խախտում են աստծու պատվիրանը: Այդ պատճառով էլ ինքը դատասանագիրքը գրելով ցանկացել է ի թիվս այլ հարցերի լուծման, վերականգնել նաև երբևէ սահմանված, բայց արդեն ոտնահարված ազդիբավուցքը և դատարանի համար այդ գործում օրենքներ ու կառուցելու հաստատել: Նախադրույթիան երկերորդ զլխում նա գրում է. «Բայց զի անհայ շարութիւնն և հավատացեալք ոչ միայն ի դատաստանի երզնուն, այլ վախրապար և յաճախ և յամենայն անպէտ իրս, որով լուծանի փրկչական հրամանն, և մէք կամեցաք որպէս զի լուծանայ օրինին օրչեսն օրչեսն և կանոնս հաստատեացոր ի դատաստանի»: Նույն այս միտքը նա զարգացնում է նախադրույթիան ութերորդ զլխում, որտեղ գրում է. «Ձեժծ և դստկալի հրամանն Տեսան տեսանեմք այժմ կոխան եղան ի մարդկանէ, քանզի յաճախեաց վախրապար նրդնույն. և զոր Քրիստոս հրամայեաց ամենեկին մէ՛ երզնուլ, այժմ տեսանեմք ի հասարակաց բանից կարգի լեալ յոչինչ պէտս, ի փոռցուն և ի հրապարակ և ի բանակոտութիւնս, ոչ միայն մանկուք, այլ և ծեր, ոչ միայն աշխարհի մարդիկ, այլ բազում անգամ և բահահանք: Եւ թէ՛ զկայ լինի դատաստանել ընդ միմեանս ուժանք, յայնժամ ոչ մնան մինչև ի տեղի դատաստանին և կամ ի հրամանդ դատարանի և ապա երզնուն, առ ի կոտելն և ի ճանապարհին զայն բազում անգամ երզնուն ստակալի օրինակաւ: Իսկ յորժամ գայնեն ի տեղի դատաստանին և դատարան հրամայեցէ վասն իրաւանց դատաստանին երզնուլ, յայնժամ հակառակին թէ՛ վասն ամենայն շահից աշխարհի ո՛չ երդնումք. և կամին այնու զանձինս իւրեանց օրինապահս ցուցանել, այնք՝ որ սակա մի յառոջ առանց ուրուք հարկ անելելոյ բազում անգամ երդուման»:

Այլ ուրիշ առիթով, նախադրույթիան վեցերորդ զլխում, պատասխանելով այն հարցին, թե ինչպիսի հատուկություններ ու ընդունակութիւններն տես մարդիկ պետք է լինեն դատավորները, մեղադրողներն ու մեղադրյալները (ամբաստանյալները), մեր օրենագիրք ի միջ այլոց ազգարարում է, որ նրանք պարտավոր են սուտ վկայներ չլինել, մանավանդ այդ բանը յանել ուրիշ ունեցվածքը հափշտակելու կամ արծախսաբերութիւն, այսինքն կաշտարի համար: «Մի՛ կացուցեն սուտ վկայս կամելով զընկերին ինչնս յափտակել, զի

խտամ է յԱստուծոյ սուսն: Մի՛ բնաւ ի վարձու կալցին գատեմասոս ճարտաստան մարդս և ստույթեամբ յազմեցեն ի դատաստանի: Մի՛ կաշտուցեն զդատարան և զընկերին ինչնս արծախսաբերութեան ախախ յափշտակեցեն, զի արծախսաբերութիւնն արժամ է յամենայն շարեաց», ասում է Մխիթար Գոշը:

Գոշն, ինչպես ասացինք, առանձնապես կայծ է առնում այն բանի վրա, որ իր զարաշրջանում մարդիկ, այդ թիվում վկաները վարժվել էին սուտ երգվել հենց դատարանում: Նա պահարակում, կշտամում է այդ կարգի մարդկանց, աշխարհիկ և եկեղեցական կանոնական խիստ պատիժներ է սահմանում նրանց նկատմամբ և իր զբոյթները, որպես ընդհանուր սկզբունքներ արտահայտող զբույթներին, հիման վրա ազգարարում, որ մարտավորներին, հարեցողներին ու մեղապարտներին մինչև զղջանքը շիտոյաարել, որ երգվեն և դատարանում վկա լինեն, այսինքն ցուցմունքներ տան: Վկաներ չեն կարող լինել նաև բանահինգ տարեկան հասակ չըրացած անձինք և շատ ուրիշներ:

Դատարանում երգումը պետք է թույլատրվի թէ՛ զնպգրում: Նրանք, ովքեր վկաններ չունեն, զրա փոխարեն կարող են դատարանում երգվել: Ընդ որում երգումն երկու տեսակներ կան, ասում է Գոշը. երգում խոստովանութիւն և հերքման, այլ կերպ անվանում ուրացութիւն երգում, Հերքման կամ ուրացութիւն երգումը համարվում է այն, երբ երգվողը ձեռք դնելով խաչի, ավետարանի կամ թեկուզ եկեղեցու այլ իրերի վրայ, հերքում, փառում է այս կամ այն նրքը կամ թե խոսելով ասում է. «Թող ես քրիստոնյա չլինեմ, այն այս բարս այսպես չէ»: Խոստովանութիւն երգումն այն է, երբ նույն կերպ վարվելով, այսինքն ձեռք խաչի, ավետարանի, մեռուսաստիքի վրա դնելով կամ եկեղեցու պատին կամ խորանին կամ այլ իրի կպցնելով և դիտակցելով, որ աստված ամենատես է, ասում է, «Աստված տեսում է, և այս խաչն ու ավետարանը վկա են, որ ես ճիշտ եմ խոսում և չեմ սուտ»: կամ թե ասում է. «Երգումն եմ նրանց փառքով ու զորութեամբ»: «Նրանք, որ չեն ստում»: «Նրանք, որ չեն երգում, — ասում է Գոշը, — մի՛ խոստովանութեան երգումն է և մյուս՝ ուրացութեան: Եւ ուրացութեան երգումն այն կոչի՛ որ զնկ զձեռն ի խաչ կամ յանտարան կամ չեկեղեցի ո՛չ եմ թէ չեմ այլ այլոց... Իսկ խոստովանութեան երգումն այն կոչի, որ զնկ զձեռն ի խաչ, կամ յանտարան, կամ չեկեղեցի, դիտելով զի Աստուած արտապետ է, առ թէ՛ զիսէ Աստուած, և խաչս այս և անտարանս վկայ է. զի ո՛չիդ է զոր ասեմս և ո՛չ է սուտ. և կամ ասել թէ՛

առցա փառք և զօրութիւնն՝ զի ոչ ստեմ: Այսպիսի երդումնս խոստովանութեանն է—զԱստուած սրտազէտ կոչել, և զիսաշն—Քրիստոս սր նշան, և զանտարանն-Աստուծոյ բան, և զեկեղեցին—Աստուծոյ Տուն» (Նախագործութուն, ութերորդ զուգի):

Գաղափարապաշտութեան նախադրութիւնն բաժնի արբերք զլուսնեբունս երդման մասին այսպէս մարմնաման խոսելով և զատապարտելով վկայի կողմից սուտ երդման արվող ամեն մի վկայութիւն, Գոշն իր Գաղափարապաշտութեան երկրորդ մասի երկու հոգովածներում՝ 67-րդ և 101-րդ հոգովածներում, մեզ հետաքրքրող սկզբունքի տեսակետից ավելի որոշակի կերպով է զնում ու լուծում հարցը: Նա քրեա-իրավական նորմեր է սահմանում, որոնցով կոնկրետ սանկցիաներ են նախատեսվում սուտ վկայութեան համար: 67-րդ հոգովածում պահանջվում է, որ ամեն մի գործ, այսինքն իրավաբանական նշանակութիւն ունեցող յուրաքանչյուր դրութիւն կամ փաստ հաստատվի երկու կամ երեք վկաների ցուցմունքներով, և որ ամեն մի սուտ վկա պատասխանատվութեան կանչվի ու պատժվի:

Գաղափարապաշտութեան նախապայմանն ու հիմքը, ինչպէս արտահայտում է Գոշը, նման վկայի մեղավորութիւնն է, նրա շար կամքի գրեւորումն ու մատնանքը, նրա շար զիստավորութիւնը, այն, ինչ ինչ բնույթի վկայութիւն էր նա ուզում տալ: արդյոք ազանութեան վերաբերյալ էր վկայութիւնը, ինչ այլ կարգի վկայութիւններ: Տրված վկայութեան բնույթին էլ համապատասխան, անհրաժեշտ է վկային դատել ու զատապարտել այս կամ այն պատիժներով: Թժրեկացք զատաստան զեկեղեցանէ զերկուց կամ զերեց վկայից հաստատել գրան, և զսուտ վկայն ըստ շար կամացն հրամայէ տանջել. և ի՞նչ արեան կամեացի վկայել և ի՞նչ ալլոց, նուրիս դատելը, ասում է Միխիթար Գոշը իր Գաղափարապաշտութեան աջ հոգովածում:

Գաղափարապաշտութեան երկրորդ մասի 101-րդ հոգովածում, որը հատկապէս վերաբերում է սուտ վկաներին դատելու և կոնկրետ պատիժներին նշանց զատապարտելու կարգին ու սկզբունքներին, օւղապակի կերպով ասվում է. Եթե մեկը սուտ վկայութիւն կտա և զրա ուժով ամբաստանյալը կզատապարտվի մահապատժի կամ մարմնաման պատիժներին, նման վկան իր հերթին անպայման պետք է պատժվի այն հիմունքներով ու կարգով, որոնք մատնանշված են նույն Գաղափարապաշտութեան երկրորդ մասի վերահիշյալ 67-րդ հոգովածում: Այս նշանակում է 101-րդ հոգովածում Գոշը մի անգամ ևս ազդարարում է, որ սուտ վկայութեան համար մարդիկ պետք է պատասխանատվութեան կանչվեն ու պատժվեն՝ վկայութեան բնույթին ու զրեւորած մեղքի տեսակին ու աստիճանին համապատասխան. որ-

քան ծանր լինի այն հանցագործութիւնը, որի մեջ ուրիշն մեղավոր դարձնելու և զրպարտելու դիտավորութեամբ գործել է վկան, այնքան ծանր պետք է լինի այդ վկայի նկատմամբ պատիժը և բնդահանակը, որքան ինքն լինի հանցագործութիւնը: այնքան ինքն պետք է լինի նշանակված դատական պատժը:

Սուտ վկայութեան դեպքում քրեական պատասխանատվութիւնն սահմանող իրավանքում մենք գտնում ենք նաև Սմբատ Սպարապետի Գաղափարապաշտութեան: Այդ հուշարձանի 160-րդ հոգովածում սուտ երկրորդ և սուտ վկայութիւնը համարվում են մեծ շարիք, որի ծնող պատճառներն ըստ հեղինակի ավելի ծանր այնպիսի հանցագործութիւններ են, ինչպիսիք են խաբէրայութիւնը, ուրիշի զույգի հափըշտակելը, խաղախութիւնը, կողոպուտը, ուրիշի զույգի ունջացումը և այլն: Նույն հոգովածում այդ արարքի համար նախատեսվում են քրեական բնույթի այնպիսի պատիժներ, ինչպիսիք են մահապատիժը, մարմնական պատիժները և սուղանքը: Ըստ համապատասխան իրավանքում, զատարանում հանցն ևեղող սուտ վկան պետք է ենթարկվի նույն պատժին, որ պետք է կրեր անորատանյալը սուտ վկայութեան հիման վրա, լինե՞ր զա մահապատիժ, մարմնական պատիժ, սուղանք, ինչ մեկ այլ պատճառանակ:

Քերեք քաղվածքներ Գաղափարապաշտութեան վերահիշյալ՝ 160-րդ հոգովածից. «Եւ մեղանշելն կամար չէ քանց իրք, որ արհամարհ է որ զԱստուծոյ հրամանն և զզատաւորացն ու զիրաւանցն ահն մտնայ ու ի յետ ձգէ ի մտաց. և այնով ստէ իր ընկերոցն ու իւր և յափշտակէ ու զնաւ, և ապա յանկից ծնանի այլ մեծ շարն, ատուրովութիւն և սուտ վկանութիւնը և այն թալուց շարիք: Այստեղ, ինչպէս տեսնում ենք, փորձ է արվում ցույց տալ՝ սուտ երդման, հետեւաբար նաև սուտ վկայութեան առաջացման պատճառներն ու հետեւներն:

Հարցը այսպէս լուծելով և ազդարարելով, որ նահատ վկայի ցուցմունքներին չպետք է հավատար, այլ պետք է հավատար երկու և երեք վկաների ցուցմունքներին, Սպարապետը նույն հոգովածում այնուհետև բերում է սուտ վկաների նկատմամբ պատիժներին կիրառում նախատեսող իր իրավանքումը. «Եւ ի՞նչ ուրիշ սուտ վկայ ի վերայ մարդոյ նա կու հրամայէ անընթաց, որ՝ զինչ այն սուտ վկայութեամբ անմեղն պիտի որ տանջուր, նա զինք տանջեն ի՞նչ մահու ի՞նչ իրաւտելոյ՝ և ինչ տուգնելոյ: Եվ ի՞նչ ի խոստովանութիւն երթայ՝ նա կանոնք կու հրամ է որ Ե տարի եկեղեցի շմանի, ապա ի զուրս աղասիլ է ողորմութիւն տայ աղքատաց, և ապա կարէ հաղորդել: Բայ ի վերայ մեղանց շարին տան և զապաշխարանք ըմպելու:

**ՀԱՆՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՄՈՒՄՆԱԸՆՏԱՆԵԿԱՆ
ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Այսպիսով, պատասխանատուության հարցը լուծելիս և հանցա-
դրժնների նկատմամբ կոնկրետ պատժաչափ ու պատժատեսակը ո-
րոշելիս, նշանակալից է ընդունել մարդու կատարած հանցագոր-
ծության բնույթը և նրա կողմից զբանջարված քրեա-իրավական մեղ-
քի աստիճանը: Ահա այն սկզբունքը, որ զբաղում է սուտ վկաններին
զատապարտելու, նրանց նկատմամբ քրեա-պատժական կամ վար-
չական միջոցներ կիրառելու հիմքում ինչպես Սմբատ Սոլաքապետի
Գատաստանագրքում, այնպես էլ նրա մեծ ուսուցիչ՝ Մխիթար Գոշի
Գատաստանագրքում:

Պատմական ակնաբկ: Ամուսնություն և ընտանիք հասկացու-
թյունները պատմականորեն միշտ էլ միմյանց հետ կապված են ե-
ղել: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զրանք մարդկային
հասարակության կազմավորման հենց առաջին աստիճաններից
սկսած անցել են իրենց յուրահատուկ զարգացման պրոցեսը և այդ
զարգացումը վերջին հաշվով պայմանավորվել է տնտեսական
գործոնով, այսինքն արտադրողական ուժերի ու զրանց համապա-
տասխան սեփականության ձևերի զարգացմամբ:

Ամուսնության և ընտանիքի պատմության հարցերով հետա-
քրքրվող բոլոր անվանի գիտնականներն էլ նկատել ու իրենց աշ-
խատությունների մեջ ընդգծել են ամուսնա-ընտանեկան հարաբե-
րությունների սերտ կապը տնտեսական հարաբերությունների
հետ: Այս բանում համոզվելու համար բավական է թերթել Լ. Մոր-
գանի, Մ. Կովալևսկու, Ս. Գեանիցիու և ուրիշների աշխատություն-
ները:

Մարքսիզմի կլասիկները այս հարցում ավելի առաջ դնացին:
Ֆ. էնգելսը օգտագործելով Լ. Մորգանի կողմից հավաքված նյութե-
րը, առաջին հերթին նրա «Հին հասարակությունը» մոնումենտալ
աշխատության նյութերը և հենվելով Մարքսի աշխատությունների,
առանձնապես նրա՝ Լուիս Գ. Մորգանի «Հին հասարակությունը»
գրքի կոնսպեկտի վրա, ամփոփեց բուրժուական ազգագրագետնե-
րի և սոցիոլոգների կողմից այդ քննազավառում հավաքված հըն-
կայական նյութերը, գիտականորեն սխտեմավորեց այն ու իր «Ըն-
տանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը»

հռչակավոր աշխատութեան մեջ ոչ միայն ցույց տվեց ամուսնութեան և ընտանիքի պատմական զարգացման զիսավոր աստիճանները, այլև բացատրեց, գիտականորեն հիմնավորեց, որ զրանց ձևերը սպրկել ու ապրում են իրենց դիսկրետիկ զարգացման պրոցեսը, որ այդ զարգացման հիմքերի հիմքը հանդիսացել ու հանդիսանում է հասարակության նյութական արտադրությունը, այլ կերպ ասած, արտադրողական ուժերի զարգացումը և զրան համապատասխան՝ սեփականության կոնկրետ, պատմական ձևերը:

Այն հետևորդ դարերում, երբ մարդկությունն անջատվելով կենդանական աշխարհից սկսում է ապրել հորդաներով, ժամանակակից հասկացողությամբ ամուսնություն և ընտանիք չեն եղել, տղամարդիկ ու կանայք կայուն զույգերով չեն ապրել:

Տոմսական կարգերում տնտեսության զարգացման ուժով կյանքը՝ ինքը, մարդկանց ստիպում է կարգավորելու տարրեր սեռերի մեջ մեզոց հարաբերությունները: Այստեղ սաղմավորվել է ամուսնությունը, որը, սակայն, ոչ թե անհատական ընտանիքի վրա հիմնված մենամուսնություն, այլ խմբամուսնություն էր, այսինքն ամուսնության մի այնպիսի ձև, երբ ատանձին անհատներ փոխարեն տղամարդկանց և կանանց ամբողջ խմբեր էին մտնում միաժամանակյա ամուսնության մեջ: Խմբամուսնության ավելի ուշ ձևերից մեկը՝ պուսպուտ ընտանիքն էր, երբ մի քանի բույրեր ամուսնանում են այնպիսի տղաների հետ, որոնք եղբայրներ էին:

Ամուսնությունն Աեկրից է նաև այսպես կոչված քաղցամուսնությունը, երբ մեկ կին միաժամանակ ունենում է մի քանի ամուսին, որոնք իրար նորայր կամ բարեկամ են լինում:

Մայրիշխանությունը զարգացման շրջանում որպես ամուսնության ձև կազմավորվում ու զարգանում է զուգամուսնությունը, որն ըստ նույնի անհատական ընտանիքի վրա հիմնված, սակայն իր նյութական հիմքից, արտադրելու ուն հնարավորությունից սակավին զուրկ մենամուսնությունն էր: Այս կարգի ամուսնության վրա հիմնված ընտանիքը նույնպես հասարակության կայուն սեռտեսական բջիջ չէր: Ինչպես ցույց են տալիս Լ. Մորգանն ու Ֆ. Հնգվելը իրականների և ամերիկյան հնդիկների շատ ու շատ ցեղերի մեջ ամուսնացած զույգը ոչ մի սոսնձանցված տնտեսություն չունեիր, այլ զույգից կազմված ընտանիքը որևէ սեփականություն չունեիր և որպես հասարակական բջիջ ընդգրկվում էր այն համայնքի մեջ, որի ներսում նա աշխատում ու ապրում էր:

Մայրիշխանական հասարակությունների մեջ ամուսնությունը,

որպես կանոն, մայրիշխանական բնույթ ունի, կինը շարունակում էր մնալ ու ապրել իր ազգակցական տոհմում, իսկ տղամարդը գալիս էր ուրիշ տոհմից: Այսպես էին ընտանիքի ու ամուսնության ձևերը մայրիշխանական ընտանիքում պատմական որոշ ժամանակաշրջանում:

Տնտեսության, ատանձնապես երկրագործության և անասնապահության զարգացման հետևանքով մարդկությունը մայրիշխանությունից անցնում է հայրիշխանության շրջանը: Տնտեսական կյանքում բարձրանում է տղամարդու դերը: Մաղմաղորված մասնավոր սեփականությունն իր հետագա զարգացումն է ստանում: Անասնապահ և սեփական տնտեսության վրա անհատական ընտանիքներ կազմվում, ինքնուրույն կենսացույցի իրականություն կանոնադրված են սեփական տնտեսության փոխարինելով: Հնտանիքի զույգն է անցնում սղամարդը: Հիմա արդևն տղամարդը չի գնում ուրիշ տեղում, այլ ուրիշ տոհմից կինն ինքն է գալիս տղամարդու մոտ՝ կազմելու համար նոր ընտանիք: Ավելին, կինը որպես սեփականություն համախո պարզապես զնվում է և վերածվում աշխատուժի: Մայրիշխանական ամուսնությունը փոխարինվում է հայրիշխանական ամուսնությամբ, որին հատուկ է լեվիրատի սովորույթը, հատուկ են երկկուսությունն ու բազմակուսությունը, երևույթներ, երբ կինը, նույնիսկ հանգամանքներին ու պայմաններին, վերածվում է քանուկ անասունի, ստրուկի: Շատ երկրներում, ատանձնապես մուսուլմանական արևելքի երկրներում հայրիշխանությամբ է պայմանավորվում հարեմների գոյությունը, որը զարեր շարունակ ստեղծացրել է կնոսը, ոտնահարել նրա մարդկային արժանապատվությունը:

Հայրիշխանական ընտանիքը տուժափրակյան կարգի քայքայման ժամանակաշրջանի ընտանիքն էր, որին հաջորդեց մենամուսնության վրա հիմնված նոր ձևի ընտանիք: Արտադրողական ուժերի զարգացումը բարձրացրեց արտադրողականությունը, առաջացրեց աշխատանքի հասարակական մեծ բաժանումները, մեղավորվեց ժամանավոր սեփականությունը, որը հասարակությունը հակամարտ դասակարգերի բաժանման հիմքերի հիմքը հանդիսացավ: Անհատներին հաջողվեց սեփականատեր դառնալ: Անցումը գեղարվեստի մենամուսնություն պայմանավորվեց նրանով, որ գրասեղանը զույգի հասարակության մեջ նման ընտանիքը վերածվեց տնտեսական կարող բջիջ՝ մասնավոր սեփականատիրական տնտեսություն: Այսպես առաջացավ շահագործողական հասարակության համապատասխան ընտանիք, որի պատմական ձևերը նույնպես ժամանա-

կէ ընթացքում կոնկրետանում են Ստրկատիրական հասարակութիւններում ճանաչվում էր միայն պատաների միջև կատարված ամուսնութիւյունը՝ ազամարդու անպայման և հաճախ անահամանափակ իշխանութիւյունը: Ստրկաների ամուսնութիւյունը ամուսնութիւյուն չէր համարվում և որեւէ իրավական հետեանք չէր առաջացնում, որովհետև երանք համարվում էին ստրկատիրոջ մասնավոր սեփականութիւյունը և ամուսնանալ կամ կենակցել կարող էին միայն ստրկատերերի համաձայնութիւյունը ու երանք ցանկութիւյունը:

Ֆեոդալիզմի օրոք ամուսնութիւյան և ընտանեկան կենակցութիւյան հիմքում էլ առավել մեծ շարհերով էր դրվում մասնավոր սեփականութիւյունը: Ֆեոդալների և մուսն արտուղի խալիքին պատկանող անձանց ամուսնութիւյունը, իբրև կանոն, կատարվում էր մեծ ֆեոդալական մասնավոր սեփականութիւյունը պահպանելու ու կենսանկու, կամ թե քաղաքական նկատառումներով: Այսպես էր բովանդակ նվրոպայում, այդպես էր նաև հին ու միջնադարյան Հայաստանում, օրտեղ նախարարական տոհմերը, մեր մեծ պատմագիրների վկայութիւյունը, իրենց տնտեսական և քաղաքական շահերից կնկնելով, փոխադարձաբար միջանց աղջիկներ էին նվիրում կամ փեսացուներ առաջարկում:

Ամուսնութիւյան տիրապետող ձևը մենամուսնութիւյունն էր, որը սակայն, չէր խանդարում ֆեոդալների ունենալու իրենց հարճերը, և, ինչպես վերնում տեսանք, հարեմները: Ինչ վերաբերում է նորտերին, ապա երանց ամուսնութիւյունը նույնպես կատարվում էր կալվածատիրոջ կամբում: Միջնադարյան նվրոպայում այս հարցում ֆեոդալների կամալականութիւյան ամենանողկալի ձևերից մեկը, ինչպես հայտնի է, գնջղիուհի-հարսի նկատմամբ առաջին դիչերված իրավունքն էր, որ հայ պատմական իրականութիւյան պայմաններում չի արմատալորովել կամ տարածվել:

Այսպիսով, ամուսնութիւյան ձևերը և դրանց համապատասխան կազմված ընտանիքների ներքին բովանդակութիւյունն ու կոչումը պատմականորեն փոխոխուն հասկացութիւյուններ են: Ուսումնասիրութիւյունը ցույց է տալիս, որ նույն կարգով էլ փոխոխուն հասկացութիւյուններ են հանդիսացել ամուսնա-ընտանեկան հարաբերութիւյունների ընդգալաում կատարվող հանցագործութիւյունները: Երբեւէ հանցագործութիւյուն կամ զատապարտելի երեսոյթ չհամարվող ընտանեկան զամանկութիւյունը, երկկանութիւյունը, բազմկանութիւյունը, կնոջ տնտեսգումը, մինչ ամուսնանալը սնտանկան կենակցութիւյունը և այլն, հետագայում, մենամուսնութիւյան ժամանակ սովորութիւյան իրավունքի կամ զբալոր օրենքների ուժով զառնում են

ժանրագույն հանցագործութիւյուններ: Այնպես է ստացվում, որ փաստորեն անհնար է դառնում ամուսնա-ընտանեկան հարաբերութիւյունների ընդգալաում կատարվող հանցագործութիւյունների բիջ թէ շատ ընդհանուր և ճշտորոշ բնորոշում տալ կամ պարզապես իվազելով այդ հանցագործութիւյունները: Չկան այնպիսի արարներ, որոնք բոլոր ժամանակներում համարվելին ամուսնա-ընտանեկան հարաբերութիւյունների դեմ ուղղված հանցագործութիւյուններ: Ամեն մի պատմական դարաշրջանում այդ հանցագործութիւյունների հասկացութիւյունն ու տեսակները փոխոխվում, փոխվում ու կենկրտանում են:

Պատմականորեն որոշ երկրներում դրևորված արտամուսնութիւյան (եկղզոգամիս) տիրապետութիւյան ժամանակներում, օրինակ, ամուսնական արգելքներ հաճախ բնորոշում էին մարդկանց շատ լայն շրջանակներ: Ավստրալիայի սեղաբնիկը չէր կարող ամուսնանալ ոչ միայն իր տոհմային համայնքին պատկանող կնոջ հետ, այլև ամեն մի այլ տոհմին կամ ցեղին պատկանող կնոջ հետ, եթև այդ տոհմը կամ ցեղը կրում էր ամուսնացողի տոհմանունը կամ ցեղանունը: Ենչված կարգի խախտումը նույնիսկ արտամուսնական սնտական հարաբերութիւյան զեպում հետապնդվում ու զաժանորեն պատժվում էր, և մեղավորը կարող էր նույնիսկ մահապատժի ենթարկվել: Այսպես էր դրութիւյուն երկար ժամանակ, և միայն հետագայում տոհմատիրական հարաբերութիւյունների վերջնական քայքայման շնորհիվ պատժները փոքր-ինչ մեղմանում են ու վերածվում պարտալամքի:

Դասակարգային հասարակութիւյան կազմալորմամբ կյանքի կոչված սովորութիւյին իրավունքն ու զբալոր օրենքները այս անգամ արդեն անողաբար պատժում են մենամուսնութիւյան հիմքերը խախլող արարքները: Համմութաբի օրենսդիրը զամանան կնոջը պատժում էր մահապատժով, Եթև այդպիսի, ալված էր այդ օրենսդրի 143-րդ հոդվածում, որ կինը սանձարձակ էլ, խախտում է ամուսնական համալարմութիւյունը, քայքայում է իր տունը, արհամարհում է սեփական ամուսնուն, ապա այդ կնոջը պետք է մահապատժի ենթարկել, շուրջ նետել: Մահապատժով էր պարտժվում արնակոծութիւյունը, որը հայտնի իմաստով նույնպես ուղղված էր մենամուսնութիւյամբ կազմված ընտանիքի զոյութիւյան հիմքերի դեմ: Եթև որեւէ մեկը, եշված էր 157-րդ հոդվածում, իր հոր մահից հետո պատկում է իր մոր մոտ, ապա դրանց երկուսին էլ պետք է մահապատժի զատապարտել, երանց պետք է այրել:

Բարեխոսական օրենքներից իրենց խստությամբ հետ չլին մը- նում մտվելուսկան քրեական օրենքները: Այս օրենքների համաձայն ամուսնա-ընտանեկան հարաբերությունների բնագավառում կա- տարիվող շատ հանցագործություններ, օրինակ, ընտանեկան անհա- վատարմությունը, արնազգծությունը, անհիմն կնաթողությունը, ամուսնությունից առաջ ուրիշի հետ սեռական հարաբերություննե- րի մեջ մտնելը և այլն, նույնպես խստորեն պատժվում էին: Պատ- ժի հիմնական ձևերից մեկը հանցագործին քարկոծությամբ սպա- ենելն էր: Այդ հանցագործությունները, վերջապես, անողորարար հետապնդվում ու պատժվում էին հոսմեական օրենքներով և մա- նավանդ միջնադարյան ֆեոդալական քրեական օրենքներով: Վեր- չիններս գրանց համար նախատեսվում էին, ի թիվս մահապատժի ու մարմնական պատիժների, նաև անվանարկի պատիժներ՝ մե- զավորին անարգանքի սյունիկ գածել, նրան մերկ վիճակում հաս- տակության մեջ շրջեցնել, սովանակի վրա նստեցնել և այլն:

Չին և միջնադարյան հայ օրենսդրական հուշարձաններում նախանշված են մի ամբողջ շարք արարքներ, որոնցով ստեղծվում էին ամուսնա-ընտանեկան հարաբերությունների սովյալ ժամանակա- շրջանի համար ընդունելի սովորություններ: Այդ արարքները նա- խատեսող իրավանորմեր ստեղծվում և բուն արարքները պատժե- լի հայտարարելով, տիրապետող գասակարգներն ու զսանբը հետա- պնդել են որոշակի նպատակ. պաշտպանել ու ամրապնդել մենա- մուսնության վրա ստեղծված ընտանիքը որպես հասարակական- տնտեսական տեսակետից մեծ նշանակություն ունեցող ուժ, որ- պես մասնավոր սեփականության պաշտպանության նախապայ- ման: Նման ընտանիքի անձնանշխնությունն քրեա-իրավական պահպանմամբ ու պաշտպանությամբ շահագրգռված էր նաև հայ քրեատնտեսական լուսավորչական եկեղեցին, որի ժողովներում նույնպես ընդունվում և բառ էրվան օրենքների ուժ են ստանում համապատասխան կանոնները: Կանց առնելը այդ արարքները նա- խատեսող իրավանորմերի վերլուծության վրա ավելի հանգամա- նորեն:

Դավանաբարություն: Դավանաճանությունն ամուսնիներից մեկի կամ մյուսի անհավատարմությունն էր: Դրա պատժելության մա- սին համապատասխան իրավանորմեր մենք գտնում ենք ինչպես Հայոց կանոնադրում, այնպես էլ աշխարհիկ օրենսդրական ակտե- բում, հանձինս կամբրոնացու օջևների, Մխիթար Գոշի և Մմբար Սպարապետի դատաստանագրքերի: Կանոնադրում գեղեցված Եահայեղվանի ժողովի կանոններից մեկը՝ 3-րդ կանոնը, ուղղակի

ազգաբարում էր, որ կրք որևէ մեկը կին է ունենում և դավանա- նում է նրան, այդպիսի մարդը պետք է կշտամրվի, սուզան- վի, ենթարկվի մարմնական պատիժների և վտարվի եկեղեցական համայնքից: Ընդ որում, ազատների համար օրենքը, որպես կա- նոն, միայն կշտամրանք ու սուգանք էր նախատեսում, իսկ ամուսն- ների, այսինքն հասարակ մարդկանց համար՝ միաժամանակ մարմնական պատիժներ և սուզանք: Հանցագործության համար պատիժը նշանակվում էր՝ նյնելով հանցագործի գասային, գասա- կարգային պատկանելությունից: Նույնաբովանդակ իրավանորմեր կան նաև այլ կանոնադրությունների մեջ:

Մխիթար Գոշի Դատաստանագրքում այդ արարքի՝ դավանա- նություն պատժելության հարցն իր կարգավորումն ստանում է նույն դատաստանագրքի առաջին մասի 10-րդ հոդվածում: Հոդվա- ծի համաձայն մեղավոր ամուսինը, լինի դա աղամարդը թե կինը, միևնույն է, պետք է պատժի, բայց պետք է պատժի ոչ թե մա- Տակառոտով, ինչպես պահանջում էր մեծախոսական գածան օրենքը, այլ արյան ընի հատուցմամբ, ինչպես աղչաբարում է Ավետարա- նը. «Ճորձամ յայտնի շար գործ շնացողաց ընդ անանկեոց, վրժ լիցի դատաստանա: Եթէ կաժօք և կոշմամբ կնոջ իցէ, և եթէ լըր- րութեամբ անն պղծի, մի անգամ եթէ բազում, և այսու եթէ պար- տուորի այլն վնասիչ բառ օրինացն մահու արժան է, և այլ բառ անտարնեսի փրկանոց լիցի արնես: Ընդ նմին հարցի և կամե- կիջու, և այլն. ...Իսկ եթէ ընդ այլուն շնայցէ, եթէ խարիցէ անուղ կին, և կամ ի կնոջն իցէ պահաւան, և եթէ բանադատելով ցալոց դատեսայ և պարտաւոր ցուցեալ-այլն սուժիցի բառ օրինակի կիսոյ խօսեցելոյ կուսին, եթէ աղի կին և եթէ ուղ զպարտեալն այլու: Այլպես էր համար լուծվում Մխիթար Գոշի Դատաստանագրքում:

Սմբար Սպարապետի մոտ այլ կերպ է հարցը դրվում. դավա- ճանություն մեջ մեղիացված աղամարդը և կինը, որպես կանոն, գատվում ու դատապարտվում են կամ մահապատժի, կամ թախի- ռի օրենքի անողորմությամբ՝ ծանր մարմնական պատիժներին: Օ- րենքը դավանաճանության հանցակազմը նույնացնում է անտակու- թյան հանցակազմի հետ: Ահա թե ինչ է սոված Դատաստանագրքի 72-րդ հոդվածի 17-րդ սահման. «Եթէ ումը կին ի րողութեան բանվի, և կամ մարդ ցույ առ ինքն նա պատնէ է ստուգութեամբ ըննել զճշմարիտն՝ թէ կինն զցույն է հարկել ու խարել, թե ցույն զկինն: Եւ թէ ցույն զկինն լինի խարել ու բերել ի յայոց ստն՝ նա յայս անոց արենբա րժար սաստ է հրատալել, զի գրել է որ մեանի, կամ ի պակասն զձեռն կարեն, սասուլ, թե ի կահուսոյ բան լինի՝ այլու:

Ապա թէ անար կին լինի լճը, և խոտաօցել լինայ թէ՛ պակսվիմբնդ բնու, ու այնով լինայ խաբել զկինն՝ նա ճարն է որ պահվի. ու եկի պահվի՛ նա տուժար շարտոր: Ապա թէ կինն լինի խաբել զանո՛ն՝ նա խրատն ու մեծ տուժարի կնիկանն զԵՆ է. ու այրկանն կամար խրատի կինն՝ բանի նորա ձեռն արժենայ, և այս բիթն լինի: Ամբատ Ապարպակետի Գատատանազրբում այս անողոր իրավանորմի գոյութիւնն ապացոյց է այն բանի, որ պատմական Կիլիկիայի հայ թագավորութիւնն մեջ հնաեղանկան պայշար է տարվել մենամուտութիւնն վրա հիմնված բնութանի գոյութիւնն ու ամբարպետան համար: Այդ պայշարի և Գատատանազրբի նորմերի նպատակը մեկն էր՝ պահպանել ֆեոդալական մասնավոր սեփականութիւնը, որը թագավորում էր Կիլիկիան Հայաստանում:

Ենայրումն: Մեր կանոնադրքի մեջ հաճախ է ակնարկվում այսպէս կոչված շնութիւն, որպէս ինքնուրույն հանցակազմ առաջացնող արարքի պատճիւրութիւնն մասին: Ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ շնութիւնը նույն զարգանաութիւնն էր, այսինքն ամուսնացած անձանց սեռական հարաբերութիւնը հակառակ սեռի այլ մարդկանց հետ: Կանոնադրքն այդ արարքը պատժում էր երկարամյա ապաշխարանքով. այսպէս, օրինակ, Քաղեռն Առարպալին վերագրվող կանոններում հարց է տրվում. ի՞նչ պետք է անել, երբ ամուսնացածները շնանում են և այդ հարցին պատասխանում էր, թէ նմանները. «...տաններկու ու արտաքոյն եկեղեցոյն ապաշխարանքն արտաստար. վնց ամ օրէնս մի առջէ, և զտարտայն երեք մասն պահեցէ, և մի մասն կերիցէ»: Ինչպէս տեսնում ենք ապաշխարանքը զուրորդվում էր այսպէս կոչված սպաս պահելուն հետ:

Շահապիճանի ժողովի կանոնադրութիւնն համաձայն շնարար տղամարդը, որն ունենալով կին և զավակներ այր էր ցցում ուրիշ կնոջ վրա, նկատիվում էր ապաշխարանքի և տուգանքի, իսկ եթէ նա շինական էր՝ անզամ մարմնական պատիժների: Հանցագործի ամբողջ զուրքը բաժանվում էր ամուսինների միջև հավասարապէս: Պատժվում էր նաև շնարար վարբազթծ զրևերած կինը, ինչպէս նաև տղամարդուն հրահրողն ու զրդիչը: Ա՜նա թէ ինչպէս էր հարքը լուծվում այդ կանոնադրութիւնն 4-րդ հոդվածում. «Եթէ որ զկինն թողէ զորդոյ մայր առանց բանի պոնտութիւնն և կամ թէ արար ինչ շար ի մարմնի չիցէ, ալլ որ եթէ այն շնարարոյ իցէ և ալլում ակն եղեալ իցէ, դատատանն այս լիցի. գտունն և զկանան և զորդիս և զհոգ և զամենայն ինչ բաժանեցեն հասարակաց, զկէսն կնոջն առցեն, և թէ կամք են՝ այր ի տուն սածել, ինքն

համարձակ օձցի, զբաժինն կալցեն և զարբունի հարկն ողջ արտացեն, և ալլն որ էթող է ամ ապաշխարանք և յեկեղեցի տուգան տայցէ, թէ ազատ է Յ դրամ, թէ շինական է զանախ լիցի և ժ յեկեղեցի տուգանեցի, փոխաբերութիւնամբ դամուսնութիւնն խոտելոյ: Ապա թէ մինչդեռ ի պայշարին և ի տուգանի իցեն, և կին որ յանգրեցալ կնաթողին կին լիցի և ամ մի չիցէ անցեալ, շայտ եկն եթէ զառօջին կինն նա եւ թողու, կալցեն զկինն և յուրականոց տարի մի ազապէ զողհան, եթէ ազատ է յուրկանոց շերթայ ձ դրամ տացի ի զողհան: Նույն կանոնադրութիւնն՝ Շահապիճանի ժողովի կողմից ընդունված կանոնների մեջ միաժամանակ զատապարտվում էր այն կինը, որն ինքնազուխ կերպով, առանց հարկալի հիմքերի ու պատճանների լքում է իր բնտանիքը և հեռանում: Միխիթար Գոշի Գատատանազրբի առաջին մասի 87-րդ ու 90-րդ հոդվածները և զրանց ողով կազմված Մմբատ Ապարպակետի օրենսդրքի 87-րդ հոդվածն ըստ էության պաշտպանում են նույն սկզբունքը. բայտ որի ամուսնացողների շնարար վարքը ամուսնալուծութիւնն, ուրեմն և ապապ բնտանիքի գոյութիւնն զազարեցման, այսինքն բայշարման հիմքն է հանդիսանում: Գործը պետք է կազմակերպվի ու տարվի այնպէս, որ ամուսնութիւնն սկտը հենց սկզբից տեղի չունենա, այն նախապէս կանխվի, եթէ ամուսնացողներից մեկն ու մեկը զրևերում է շնանալու հակումներ:

Հայոց կանոնադրքի ու դատատանազրբերի այս նորմերը հայ պատմական կյանքում մասնական զտակարգային-բաղաբանկան իմաստով որոշ դրական դեր խաղացել են. զրանք օգնել են հայ բնտանիքի պահպանմանն ու ամբարպետմանը և զրամով էլ մեր ժողովրդին ասիականացից փրկելու, նրա գոյութիւնն պահպանման մեծ գործին: Պատժելով հանցագործներին կամ սաստելով հանցավոր հակումները զրևերած անձանց, օրենքը զրանով իսկ նպաստել է այն բանին, որ հայ բնտանիքը շրայշարվի, ալլ իր գոյութիւնը պահպանի և պետքի վաճարի ամբարն ու ավելի բարգաւաճի՝ հիմք ծառայելով նոր բնտանիքների համար:

Կեղծ վիսլուտար իր ամուսնուց: Հին և միջնադարյան հայ օրենքները խոտութիւնամբ պատժում էին այն զնպրբեր, երբ կինը, առանց մանուակիտ հիմքերի, ինքնազուխ կերպով թողնում էր իր ամուսնուն և տանից հեռանում: Շահապիճանի ժողովի կանոնները, Միխիթար Գոշի և Մմբատ Ապարպակետի զատատանազրբերը պարտափորեցնում էին նման կեղծ վերագարանել իր ամուսնուն և վերջինիս կամքին էին թողնում նրան ներհլու կամ պատժելու հարցի լուծումը: Ամուսինը կարող էր ներել, և այդ զնպրում նրանք

շարունակում էին իրենց հաստիզ ընտանեկան կյանքը և կարող էր շնորհի, ավելին, կարող էր նրան ստրուկ կամ ճորտ դարձնել: Երկուսն ստրուկ կամ ճորտ վաճառել:

Եթե նկատի ունենանք, որ մարդուն ստրկացնելը պատմական այդ ժամանակներում քրեական պատմատեսականներից մեկն էր, ապա հասկանալի կդառնա այն, թե ինչու պատմական Հայաստանում այդպիսի կնոջ արարքը դիտվում էր որպես ինքնաբերական հանցագործություն: Եթե որ կին յառնէ Լւանիցէ,— սպվում էր Շահապիվանի ժողովի կանոնագրության 6-րդ հոդվածում,— կալցեն և անդրէն յայր յիւր տացեն, և մանավանդ, որ վարձականօք իցէ վարձակաց և ոչ բողաբար, թէպէտ և վաճառեցիս և յաղախնութիւն կալցի: Եթէ կամք իցեն անո, հողվեր և բարի խրատու և սիրով կալցէ զնա: Ապա թէ այրն շարաբարոյ ինչ է կամ պոռնիկ, կամ հանգանակող և արբեցող, կամ այլ ինչ խեղճական, բանիւ և խրատու կըրչատարեցնի զայրրն, ի կարգ ածցն և հնարեղեցուցն զերկօսին: Եթէ ազատ է, տուգանօք և խրատու ի կարգ ածցն ապա թէ դիտախոխեցի այրն, կինն պաշտեսցէ զնա: Օրինքը, ինչպես տեսնում ենք, կնոջ արարքը զատապարտելի չի համարում, երբ զրանում մեղավոր է լինում ամուսինը, այսինքն, երբ նա իր բնավորութեամբ շարաբար է լինում, կամ անբարոյական, կամ կովարար, կամ հարբեցող: Այստեղ արդեն օրենքը ամենայն հետևողականութեամբ պատիժներ է նախատեսում ամուսնու համար:

Այս նույն սկզբունքներով է հարցը լուծում Մխիթար Գոշի Դատաստանագրքի առաջին մասի 85-րդ և Մեքսա Սպարապետի Դատաստանագրքի 89-րդ հոդվածներում, այն տարբերությամբ միայն, որ վերջինում ավելի որոշակիորեն է ազդարարվում պատժի կնոջը ստրուկ դարձնելու և դրանով իսկ նրան պատժելու սկզբունքը: Բերում եմ Սպարապետի Դատաստանագրքի 89-րդ հոդվածի կոնսերվատը. «Կին՝ որ առանց եկեղեցույ է առանց հրամանաց և մեծ պատճառանաց, որ հանեցնէ զգատաւորն, թողու դայրն ու փախոյ՝ նա իրաւունք է, որ բռնեն զինք և բերեն ի չիբ այրիկն տան, որ յափտեան ծառայ ունեայ զինք ու այնէ զինչ որ պիտի, զարթ ի ծախելոյն և ի սպանելոյ և ի բաժնելոյ: Զի արդ բողովեան պատճառ է, ապա հրամայած և յարէնք, որ ծախել այլ կարէ զինք այրիկն: Ապա թէ տեսնուն, որ վասն այրկանն պղծութեան լինի, և կինն, որ փախաւ՝ ի հարկից տեղ զնաց առ իր ազդ՝ նա զայրիկն ազէկ բողորեն զարպատ սաստով և եկե-

ղեցոյն, ու երաշխաւոր տայ որ այլ չայնէ, և ապա հատեցնեն զիրենք: Ապա երբ փախաւ՝ թէ բողցել լինայ, և կենայ յարկանն ի վերայ այլ պարճաւ՝ նա հատեցնել է կամ բաժնեն, ապա ոչ կաշտուաց և ոչ ծնութեանք, զի որ ծնուն է՝ նա ինք տայ Աստուծոյ պայցիտուն. և կանոնքս բղորդ է: Ինչպես տեսնում ենք կինը պատասխանատվությունից ազատվում է, եթե նրա արարքը կատարվում է ամուսնու վատ վարքագծից հարկադրված, բայց ամուսինների պատասխանատվության հարցը լուծելու, հեղինակը ավելի է ընդգծում մարդու անհատական, այսինքն սուրբյկետիվ մեղքի նշանակությունը: Հողվածը տղամարդոց իր կնոջ փախուստի, եթե կարելի է այնպես արտահայտվել, պորտիւր քննության և անուն բացառապես մեղքի տեսանկյունից և ներք սպակեղումով մեղքն ընկնում է կնոջ վրա, այս զեպքում պատժվում է նա և չի պատժվում ամուսինը, բ) մեղքը ընկնում է ամուսնու վրա, այս զեպքում պատժվում է ամուսինը և չի պատժվում ինքը՝ կինը և դ) երկու կողմերն էլ մեղավոր են և այս զեպքում պատասխանատվության են կանչվում երկուսն էլ՝ թե՛ կինը և թե՛ տղամարդը:

Վերահիշյալի առիթով ստենք, որ տակավին Ատորա-Հոռոմեական դատաստանագրքում կամ, ինչպես երբեմն ավելի ճիշտ ասում ենք, կամքրոնացու աշխարհիկ օրենքում ևս (75-րդ հոդ.) նախատեսվում էր կնոջ ստրկացման հնարավորությունը, երբ սա զավաճանելով իր ամուսնուն, զնում էր մեկ այլ տղամարդու մտտ և նրան կին դառնալով, այլևս չէր վերադառնում իր նախկին օջախը: Եման կնոջը, որպես ծանր հանցագործություն կատարողի ստրկության դատապարտելը օրենքով ընդունված կամ սովորությունով սրբազորված ու ազդարարված քրեական-իրավաբան միջոցառում է: Եզել հին աշխարհի ստրկատիրական շատ պետություններում, օրինակ, Բաբելոնում, Եգիպտոսում, Հունաստանում և Հռոմում, որտեղից էլ այն անցել է բյուզանդական օրենսդրության մեջ և ավելի ուշ ժամանակներում մտել հայկական օրենքներում:

Իհնգազլովս ամուսնալրյուն: Խոսքը վերաբերում է այն զեպքերին, երբ օրինական, այսինքն եկեղեցական կարգով ամուսնացողներից մեկնումեկը՝ կինը կամ տղամարդը, առանց եկեղեցական իշխանությունների թույլատվության լրում էր մյուս կողմին և ամուսնական հարաբերությունների մեջ էր մտնում մեկ ուրիշի հետ: Եման երևույթները հայ հողի վրա լայն տարածում ստացան այն ժամանակ, երբ օտարերկրյա, առանձնապես մեղողական, արաբական և թուրք-թաթարական արշավանքների հետևանքով

Հայերը գերեզմարվում էին ու բշտում այլ երկրներ: Երբ ամուսինները մեկը մեկը գերեզմարվում էր, իսկ մյուսը մնում էր իր հայրենիքում, գործախն ու որբացած երեխաների մտա, քնակահարսը հորք էր ծագում. ինչպես պետք է կարգավորվի երկրում մնացած ամուսնու հետագա ամուսնույթյան գործը: Այդ գործի կարգավորմամբ սկսեց զբաղվել եկեղեցին, որը սկսած շորթորդ դարից, մի շարք կանոններ բնգունեց, որոնք, եկեղեցական մյուս բուրք կանոնադրույթյունների կանոնների հման, օրենքի ուժ ունենին և իբրև գործող օրենքներ կիրառվում էին Հայաստանում:

Գնուս Բարսեղ Կեսարացուն վերաբովող կանոններից մեկում, կանոններ, որոնք նույնպես մտել էին մեր կանոնագրքի մեջ, աղ-գաբարբում էր, որ, երբ ամուսիններից մեկը ամուսնանում է առաջին, իսկ մյուսը երկրորդ անգամ ու այնուհետև երանցից մեկն ու մեկը մեռնում է, ապա կենդանի մնացած ամուսինը այլևս իրավունք չունի ամուսնանալ, հակառակ զեպքում պետք է նմանակ-վի ապաշխարույթյան, այսինքն պատժվի որպես երեք կին ունեցող տղամարդ, իսկ երան երրորդ անգամ ամուսնացնողը քահանան պետք է զրկվի քահանայություն անելու իրավունքից (Շող. 207-րդ):

Մի փոքր ավելի ուշ, յոթերորդ դարի կեսին, Գվինի Ծ-րդ կեն-դեցական ժողովն նոր օրենք բնգունեց: Նշվեց այն մասին, իբրև թե հայերի գործած մեղքերի պատճառով աստված նրանց պատ-ժեց, օտարները տիրեցին մեր երկիրը և նրա քնակիչներից շա-տերը գերի տարվեցին, իսկ նրանց ամուսինները, առանց վարդա-պետների կամ մյուս հոգեբարկանների հրամանների ամուսնա-ցան: Այդպիսիների համար Գվինի Նշված ժողովը օահմանում էր, որ ով մինչև 7 տարի, երբ զուգակիցը գերության մեջ է, համար-ձակվի ամուսնանալ, նրա արարքը կշիտվի իբրև պոռնկություն, և նա կենթարկվի դատական պատժի՝ զանազոմության և զույթի բնագրավման: Բռնագրավված զույթը կբաժանվի աղքատներին, և մեղավորները կենթարկվեն 7-ական տարի ապաշխարության: Իսկ եթե կանայք ամուսնացել են 7 տարի հետո, գերությունից ամուսինների վերադառնալու զեպքում, նրանք կարող են ետ վե-րադառնալ իրենց նախկին ամուսինների մոտ, եթե կամենան: Հակառակ զեպքում ամուսինները կարող են ուրիշների հետ բնդ-հանոր կարգով ամուսնանալ: Բերենք այս հողվածի գրաբար տեքստը. «Այլ վասն մերյո մեղաց յոբմամ աշխարհս զերեցուս և թշնամնաց բազում արք և կանայք ի գերութեան էին և ետցա ա-մուսինքն առանց վարդապետնի հրամանի կանայս առին և արանց եղին, վասն այնպիսեացն օահմանեցաք այսպես թէ յառաջ քան

զ է ամ մինչ զուգակիցն ի գերութեան էր և ետրա յանդգնութեամբ այլ ամուսին. այնպիսեացն ամուսնութիւնն ի պոռնկութեն է և քան և պատուհաս կրեցան լընչից և ի ստացուածացս ետցա հրամայեցաք անուոյ վարդապետնի և աղքատս առցնել և զոտա դատուանել ի միմեանց և ապաշխարել է ամ. իսկ եթէ է ամին ամուսինքն դարձնալ ի գերութենէն անդրէն. հրամայեցաք դառնալ իւրաքան-չիւր ամուսինս, ապա եթէ ոչ կալցին զոր առին և ետրա որ դար-ձան արհնութեամբ այլ կանայս առցնել և այլ արանց լինիցին և կրկին ապաշխարութիւն ի վերայ եղիցի. իսկ որ համբերեացն ոչ է ամ առցէ արհնութեամբ առանց սուգանի և պատուհասի և կրկին ապաշխարութիւն եղիցի» (Շող. 7):

Ինքնազուրի ամուսնությունը պատժելի արարք համարվեց նաև մեր աշխարհի զստատանազրբերով: Մխիթար Գուշք բաղվածա-արք բերելով Բարսեղ Կեսարացու կանոններից 207-րդ կանոնը, չի պարբերաբնգում, որ Հայաստանում շափեց զուրս խիտա օրենք կիրառվի ինքնազուրի ամուսնության զեպքում: Դրա համար նա նպատակահամարն ու ճնշտ է զտնում մեղավորների պատժել միայն ապաշխարությամբ և ոչ ավելին:

Այժմ վկայակոչենք մի սովորության օրենք, որը կիրառ-վել էր IV դարում, այսինքն, Բարսեղ Մեծի ժամանակ, և ինչպես այդ նկատել է Վ. Բաստամյանցը, մեղծ էր համարվում, բայց շատ խիտա էր թվում տասներկուերորդ դարում, այսինքն Մխիթար Գուշք օրոք: Բարսեղ Մեծի ժամանակ եկեղեցին նախ օրինական էր համարում միայն մեկ ամուսնություն և երկրորդ՝ պահանջում էր, որ ամուսնացողները անպայման լինեն կույս: Մաշտոցի ժա-մանակ, ինչպես հայտնի է, առանձին կարգ կար՝ կույսը կույսի հետ և առանձին կարգ՝ արքին արքիացյալին հետ պատկվելու հա-մար: Հետո եկեղեցին հարկազրկված սկսեց թույլ տալ նաև երկ-րորդ պատկ, բայց իբրև բացառություն, իսկ երրորդը բուրոմլին արդիվում էր, և հանցավորները, թե՛ ամուսնացողները, թե՛ ամուսնացնողը ենթարկվում էին եկեղեցական-կանոնական, այ-սինքն՝ վերջին հաշվով քրեական պատժի: Բացի դրանից, երբ պա-տահան էր, որ մեկը լինում էր կույս, իսկ մյուսը արքիացյալ, կույ-սը պատկն էլ համարվում էր իբրև երկրորդ ամուսնություն, ուստի իր ամուսնու մահից հետո նա իրավունք չունի կրկին ամուսնա-նալու: Գուշքի ժամանակ նման զեպքերում երկրորդ ամուսնությունը ներքին էր համարվում, իսկ երրորդը՝ թույլատրվում էր զովարու-թյամբ իբրև բացառություն:

Գուշքն շատ խիտա էր թվում Բարսեղ Մեծի վերոհիշյալ կա-

Տոնը, և նա նույնիսկ կասկածում է, թե իրականում այդ կանոնը պատկանում է արդյո՞ք այն Հեղինակին, որին վերագրվում է, այսինքն Բարսեղին: «Երկրայի այս կանոնը սրբոյ լինել Բարսեղեաց, այլ յումանէ ներմամբ այսպէս ծանեար. զի կրկին ապաշխարութիւն երկկնոյն անպիտեանց լիցի: Եւ բաճանային պարս է զայս ուսուցանել զամենն կանոնի, զի մի դատապարտեսցի զայսզս աշտուելոյն: Զայս այդոցիկ զհոսացար լինել զատաստան» (առաջին մաս, հոգ. 86): Գոչը, սակայն, այլ կերպ է հարցը դնում, երբ գերութեան մեջ գտնվող ամուսնու կի՞նն էր այդ քայլին դիմում, կամ ընդհակառակը, գերութեան մեջ գտնվող կնոջ ամուսինն էր այդ անում, նա ընդունում էր Գվինի հինգերորդ ժողովի 7-րդ կանոնը և զրանով իսկ հակասում ինքն իրեն: Ա՛նա թէ ի՞նչ ենք կարգում Գատաստանագրքի առաջին մասի 104-րդ հոդվածում. «Տորթամ վասն մեղաց մերոց աշխարհս զերեցաւ բազում արք և կանայք ի գերութեան էին և նոցա ամուսինքն աստ առանց վարդապետաց հրամանի կանայս աօրին և արանց եղեն: Վասն այնպիտեանց ասմանեցար այսպէս: Զի թէ յառաջ քան զեօթն ամ է և որ այնպիսեանց մինչ զուշակիցքն ի գերութեան էին և այլ աօրին, այնպիսեանց ի պտնկութիւն համարեսցի և զան և պատմա՞ս կրօնքն, և լընչից և ի ստացուածոց անուպ և յազգաստ մատակարարն, և զատուցեն ի միմեանց և ապաշխարեսցին զեօթն ամ...»:

Այսպիսով, ընդունելով այդ ժողովի կանոնը, Գոչը հետապնդում էր մի նպատակ. որքան հնարավոր է, թեկուզ պատճի կիրառման սպառնալիքի գնով, պահպանել հայ քրեանիքը և թույլ չտալ զրա քայքայումը, որը նրա ճիշտ համոզմամբ այդ շրջանում վնասից բացի հայ ժողովրդին որևէ օգուտ բերել չէր կարող:

Սմբատ Սպարապետն իր Գատաստանագրքում այս հարցի մասին զատողութիւն անելիս ոչ մի նորութիւն չի հայտնում: 40-րդ հոդվածում, որի արդյուրը Մխիթար Գոչի Գատաստանագրքի վերահիշյալ 104-րդ հոդվածն էր, հետևարար և վերջին հաշիվով Գվինի 5-րդ եկեղեցական ժողովի կանոնագրութեան 7-րդ հոդվածը, նա հետևելով ընդհանուր սկզբունքին ուղղակի կերպով ազդարարում է, թե ամուսիններից մեկի զերեկաբութեան զեպրում, մյուս ամուսինը պարտավոր է ամբողջ յոթ տարի սպասել նրան: Հետևապէս վարքագիծ զրուերելիս, այսինքն ամուսնանալիս, այդ ամուսնու արարքը զիտվում էր իբրև անտակութիւն, և նա ենթարկվում էր 7-ամյա ապաշխարանքի: «Վասն մեղաց Աստուած կոտայ զմեզ ի ձեռն անարիւնեաց,— ասվում է այդ հոդվածում,—

Թէ այլն լինի ծառայ տարած, նա կի՞նն է է տարի համբերէ, ու թէ այս է տարույս ընդ ներքս այրիկ անուտ, նա չէ ընդունած, այլ բողոքիւն է համարած, ու բաժնէն զինք ու հանելոթին ու ապաշխարել է տարի: Նույնպէս թէ զկնիկն տանին, նա այրիկն համբերէ ու թէ չհամբերէ՞ նայ նոյն պատժն է:» Այսպիսով, Սմբատ Սպարապետը նույնպես ամուսիններից մեկի ինքնազուրկ ամուսնութեանը համարում էր հանցագործութեան և պատժում էր քսա էութեան քրեական պատժով, որի միայն իրականացման ձևն էր կրօնական քննիք կրում:

Մեկ այլ հոդվածում, որը թեև քրեա-իրավական նորմ չի պարունակում, բայց և անմիջականորեն կապված է վերահիշյալ 40-րդ հոդվածի բովանդակութեան հետ, մեր օրենսգիրքը պարտավորեցնում է լքալքայիկ բնտանիքը, կի՞ն նույնիսկ կինը հարկազարար գերեզմարվի և անտակութեամբ զրազնվուն է դատապարտված եղել: Նման կինը որևէ պատժի չէր ենթարկվում, և ամուսինը պարտավոր էր նրան ընդունել և շարունակել ընտանեկան կյանքը նրա հետ: Գատաստանագրքի 90-րդ հոդվածում այս առիթով մենք կարդում ենք. «Կինն, որ վասն մեղաց ի ծառայութիւն տարվի կամ ի յալլ ինչ որ նման և սորա... զի արք կանայս անսինն և կանայք յարանց եղեն... բայց զինչ ցնդ ու է, երբ զայ՛ նա զիր կի՞նն անսզալ անուտ: Եթե կինը մյուս տղամարդոց զավակ էր իր հետ բերում, երեխան վերագարձվում էր հորը, իսկ կինը մնում էր իր օրինական ամուսնու մոտ. «Ապա թէ մեկ այլ այրիկն տղայ կենայ՛ նա ի հայն տան. և ինք զիր կի՞նն անուտ անլաւատա՞նա, քաւլ թէ շինի եկեղեցոյ կամ»: Ինչպես տեսնում ենք, այս հոդվածի նպատակը նույնն է. հայ մենամուսնական ընտանիքի գոյնարման պահպանումը և ամրապնդումը:

Կնաթղութիւն: Հին և միջնադարյան հայ օրենքներով պատժվում էր նաև կնաթղութիւնը: Կնաթղութիւն էր համարվում նաև, երբ տղամարդը, ասանց այդ քանի համար հիմնավոր պատճառներով, թողնում էր իր կնոջը: Սրոջ օրենքներ նման տղամարդուն նշված արարքի համար պատասխանատու էին զարձանձ զործողութեան կատարման սուսկ փաստով, իսկ որոշ օրենքներ էլ, ի տարբերութեան առաջինների, զրա համար ուրիշ լրացուցիչ պայմաններ էին ստաշ քաշում:

Կնաթղութեան հետապնդման մասին սկզբնական հիշատակումներ մենք գտնում ենք հայ եկեղեցական առաջին ժողովներում, օրինակ, Վաղարշապատի 325 թ. ժողովում ընդունված կանոններում, Գրիգոր Լուսավորչի կանոններում և այլն, որոնց

ուժով մեղավորները համարյա բացառապես պատժվում էին անպաշտարաներով, Գրիգոր Լուսավորչին վերագրվող կանոններից 6-րդ կանոնը նախատեսում էր կնաթողության մեկ այլ ձև ևս: այդ այն էր, որ ամուսինքն թողնում էր իր ներկերը կնոջը և նորից վերադառնում էր առաջինի մոտ, այդ տղամարդը պատժվում էր ութամյա ապաշտարաներով, իսկ ներսն Լաւրապետի կանոններից 8-րդ կանոնը դրա համար հեղանջա ապաշտարանք էր նախատեսում:

Ուշագրավ է, որ ներսն Լաւրապետին վերագրվող կանոններից 4-րդ կանոնը հանցավոր արարք էր դիտում մի բոլորովին այլ դեպք. նրբ մեկը կենակցում էր որևէ աղքատ հետ, բայց հետո ամուսնանում էր այդ նույն աղքատ քրոջ հետ, և այդ մեծ անպատվությունը շտանկելով, առաջին քույրը ինքնասպանություն էր գործում: Կարծեք զգալով այս արարքի ավելի բարձր հասարակական-բարոյական վտանգավորությունը, կանոնների հեղինակը դրա համար սահմանում էր այս անգամ արդեն 12-ամյա ապաշտարություն:

Կնաթողությունը առավել խտուրխամբ պատժվում էր Շահապիվանի ժողովում քննույնված կենտններով: Այդ կանոններից 4-րդ կանոնով անհիմն պատճառաբանությամբ կատարված կնաթողությունը պատժվում էր խտազուն մարմնական պատիժներով կամ զգալի գումար տուգանքով, կամ միաժամանակ թե մեկով ևս թե՛ մյուսով: Գերեք կանոնի զարբար սեքսուալ-եթիկ որ զգինն թողցէ զորդույ մայր առանց բանի պոռնկութեան և կամ թէ արատ ինչ շար ի մարմնի չիցէ, այլ որ եթէ այրն շնարարոյ իցէ և այլում ակն եղեալ իցէ, դատաստանն այս լիցի. գտուն և զկեանս և զորդիս և՛ զհող և չուր և՛ զամենայն ինչ բաժանեսցեն հասարակաց, զկեսն կնոջն առցեն, և թէ կամք իցեն կնոջն դայրն ի տուն ածել, ինքն համարձակ աձցէ, զբաժինն կայցեն և զարքունի հարկն ողջ արգացեն. եւ այրն որ եթող և՛ ամ ապաշխարեսցէ և յեկեղեցի տուգանս առցէ, թէ ազատ է 3 դրամ, թէ շինական է գումարի լիցի և ճ դրամ յեկեղեցի տուգանեսցի, փոխանակ օրհնութեամբ դամուստութիւնն խտուրելու: Ապա թէ մինչդեռ ի պայքարին և ի տուգանի իցեն, և կին որ յանդգնեալ կնաթողին կին լիցի և ամ մի չիցէ անցեալ, յայտ եղև եթէ գառաջին կինն նա ևս թողուլ, կայցեն զկինն և յուրկանոց տարի մի աղասցէ զոգեացն, եթէ ազատ է յուրկանոց շերթայ ճ դրամ տացէ ի զոգիսն: Շահապիվանի ժողովում քննույնված օրենքների դատանութիւնը, ինչպես տեսնում ենք, իր արտահայտությունը գտնում էր նաև այստեղ:

Քննարկվող արարքի իրավաբանական նույնիսկ և պատժելիության մասին ավելի ամբողջական նորմեր մենք գտնում ենք օտար ժամանակների ընթացքում մտցվել են մեր կանոնագրքի և աշխարհիկ օրենքների մեջ: Այս տեսակետից ուշագրավ են նեոկեսարայի եկեղեցական կանոնադրության 11-րդ և 12-րդ հոդվածները. «Եթէ որ արձակեսցէ զկին իւր վասն բանի պոռնկութեան և կամ վասն այլ շարագործութեան, որ ոչ միայն այրն, այլև աշխարհ վկայէ զործոց նորա, արձակեսցէ. քնդունի զնա կանոնս. բայց մի ամ ապաշխարեսցէ, ի ձևոն ողորմութեան արքայցի և հաղորդեսցի օրինացն. և եթէ կամեսցի կին արացսցէ, և կինն այլ առնն չիշխէ՛ լինել մինչդեռ կկեղանի և այր նորոս» (11-րդ կանոն): Ինչպես տեսնում ենք այստեղ, երբ կինը մերկացվում է անսահմանության կամ այլ սխալի մեջ, կնաթողությունը թույլատրվում, այլ կերպ ասած օրինականացվում էր:

Միանգամայն այլ կերպ է հարցը դնում մյուս՝ 12-րդ կանոնը. «Եսկ եթէ ոչ վասն պոռնկութեան և ոչ վասն շար գործոց եթող զկին իւր, այլ վասն վատարարութեան որպես թէ այլում ակն եղեալ իցէ, զայսպիսիս ոչ ընդունին կանոնք մինչև շտանայ նորա առաջին կինն. և ընդ շտանացն եօթն ամ ապաշխարութիւն կայցի-հինգ ամ արտաքոյ և երկու ի ներքս: Ապա եթէ ոչ զարճի առ բուն կինն իւր, զկեանս տան իւրոյ բաժանեսցէ-զկեն կնոջ իւրում տացէ և տուգանս յեկեղեցի, զի զպսակն օրհնութեան գոր ընկալու վասն ամուսնոյ իւրոյ անարդեաց. եւ ինքն զուսուր կենաց իւրոց պոռնիկ կրկեսցի և մի՛ մտցէ յեկեղեցի Աստուծոյ, այլ ի դրունս հասասարեսցի ազօրից, ի ձևոն ողորմութեան, տոր տեսակաց, շերմոսանոց արտասուր զյեանի թոշակն ընկալցի: Ապա եթէ կինն մեռանիցի և այրն կին շտանիցի և յապաշխարութիւն եկեսցէ, հինգ ամ ի գրունս և երեք ամ քնդ ձևումք հասասարեսցէ ազօրից, ի ձևոն ողորմութեան քաւեալ հաղորդեսցիս: Այստեղ, առաջինն հակառակ, կնաթողությունը ոչ միայն արգելվում է, այլև պատժելի արարք է համարվում. մեղավոր տղամարդը պարտավորվում է վերադառնալ իր կնոջ մոտ, իսկ եթե չի վերադառնում, նա պարտավոր է իր ունեցած գույքի կես մասը տալ նրան և, բացի այդ, եկեղեցուն տուգանք վճարել: Այսպիսի արտադրող ցմահ համարվում էր անառակ մարդ և զրկվում էր անգամ եկեղեցում աղոթելու իրավունքից:

Այսպես էր պատժվում կնաթողությունը հայ եկեղեցական-կանոնական օրենքներով, որոնք, ինչպես քանիցս հիշատակել ենք,

փաստորեն պետական-բաղադրյալական օրենքների ուժ ունենել և կիրառվում էին պատմական Հայաստանում: Այդ արարքը պատճենի կ'համարվում մի կողմից որպես Հասարակական-դատակարգային վճարգավորություն անբխյացնող արարք և մյուս կողմից՝ իբրև քրիստոնեական կրոնի բարոյականության սկզբունքներին հակասող արարք: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ դրա պատճելություն հարցում շահագրգռված էին թեև կրոնի սպասավորները և թեև աշխարհիկ իշխանությունները:

Դավիթ Այվկա՝ որդու Կանոնները ոչ միայն խստորեն պատժում էին անհրճելի շարժադրված կատարվող ամեն մի կնաթողություն, այլև պատժում էին անզավ խնչազար, հողեկան հիվանդ կնոջ բաց թողնելը: Այլ կերպ ասած, Այվկա որդին կնոջ նույնիսկ ծանր հողեկան հիվանդությունը ամուսնալուծության գործում հարգելի պատճառ չէր համարում և զա այն հիմնավորմամբ, որ կին աստված է միացրել, մարդը շլիթի բաժանել, ուստի և մարդն իրավունք չունի զրանով առաքաղոջը համարել, այսինքն իր հողեկան հիվանդ կնոջը թողնել: «Չդիսահար կին չէ պարտ թողուլ, զի զօր Աստուած զուզեաց, մարդ մի մեկնեացէ, ապա թէ թողու, այլ կին ոչ իշխէ առնուլ, զի կնաթող է Իսկ եթէ յանդգնի և այլ կին առնէ և ամ ապաշխարեցն և զոր կթող զպէտս նորա լիով հոգասցէ», ասված էր այդ սկտի 70-րդ հոդվածում:

Կնաթողության իրավաբանական հետևանքների և առանձնապես դրա պատճելության հարցին Սիսիմար Գոշը նվիրում է մի ամբողջ շարք հոդվածներ, որոնց մի մասի բովանդակությունը հայտնի սահմաններում հասնելնում է հայ և օտար եկեղեցական ժողովների կանոններից շատերի բովանդակության հետ: Ավելի կանկրտեա ասած, այդ հարցին նա նվիրում է իր Գատաստանագրքի առաջին մասի 9-րդ, 11-րդ, 21-րդ, 42-րդ 56-րդ, 57-րդ, 78-րդ, 90-րդ, 93-րդ և 104-րդ հոդվածները, որոնցից շատերի մեջ խոսված է նաև ուրիշ հանցավոր արարքների, օրինակ, այսպես կոչված շնության, պոռնկության, զավանհության և այլ հանցագործությունների մասին:

Վերոհիշյալ հոդվածները կազմելիս հեղինակն օգտագործել է մուսուխական օրենքները, ավետարանների խրատական դրոխները, մեր կողմից արդեն հիշատակված նեոկաթոլիկ եկեղեցական ժողովի կանոնագրության կանոնները, Հայոց կանոնագրքերը և այլ աղբյուրներ: Բայց նա ինչպես միշտ, այնպես էլ այստեղ հանդես չի եկել հասարակ կոմպրոմիսների դերում, այլ արտահայտել է իր որոշակի կարծիքը և դրանով սեփական իրավաբանական նորերը:

Այս նորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Գոշը կնաթողությունը որպես հանցանք պատճելի է հայտարարում և զրա համար նախատեսում է անպիսի պատիժներ, ինչպիսիք են եկեղեցական ապաշխարանքը, գույքային պատժները և անցած մարմնական պատիժները: Մարմնական պատիժները կիրառվում էին շինականներին, այսինքն գյուղացիների նկատմամբ, իսկ գույքային պատիժները ավելի հաճախ ազատների, այսինքն ֆեոդալների նկատմամբ, ինչպես այդ ուղղակի կերպով երևում է Գատաստանագրքի առաջին մասի 93-րդ հոդվածից, որի հիմքը Շահապիվանի ժողովի խիստ օրինագրություն 4-րդ կանոնն էր:

Կնաթողությունը թույլատրելի, ուրեմն և պատճելի արարք չէր համարվում հիմնականում հետևյալ դեպքերում. ա) երբ կինը մերկացվում էր աննոտություն, այլ կերպ ասած, ուրիշ տղամարդու հետ ունեցած անբարոյական կապի մեջ (հոգ. հոգ. 9-րդ, 11-րդ և 93-րդ), բ) երբ նա ամուսնությունից առաջ խախտած էր լինում իր կուսությունը, բայց ամուսնուն ներկայացած էր լինում իբրև կույս (հոգ. 21-րդ), գ) երբ ամուսնին ավելի քան լսթ տարի զերուսնից մեջ գտնվելով՝ կնոջը հայտնի չէր դարձնում իր կենդանի լինելու մասին (հոգ. 104-րդ), զ) երբ կինը մերկացվում էր այսպես կոչված կախարդության մեջ կամ տառապում էր բառ երևույթին վաներական հիվանդությամբ կամ բրոտուսությամբ (հոգ. 93-րդ):

Կիրիկիայի հակական թաղավորության դատաստանագրքը նույնպես չի անտեսել կնաթողության օրենսդրական կարգավորման պրոբլեմը: Այդ երկրում կնաթողության լրակատար և անկաշկանդ ազատությունն անխուսափելիորեն կհանդիպեն ընտանիքների քայքայման և ֆեոդալական-ավատական մասնավոր սեփականատիրության փոշիացման: Դա հակասում էր ինչպես ֆեոդալների շահերին, այնպես էլ քրիստոնեական կրոնի ու սրա պաշտամունքի սպասավորների շահերին, անգամ ողջ ազգի շահերին: Դրանով պետք է բացատրել, որ այստեղ, Կիրիկյան Հայաստանում կնաթողության պատճելիության հարցում շահագրգռված էին թեև՝ աշխարհիկ իշխանությունները և թեև՝ հողերականությունը:

Մյուսը Սպարսպետի Գատաստանագրքում կնաթողության թույլտվության հիմունքների ու սահմանների և զրա պատճելիության հարցը իր իրավաբանական կարգավորման էր ստանում 72-րդ հոդվածի 6-րդ մասում, 72-րդ հոդվածի 17-րդ մասում, 74-րդ, 78-րդ և 22-րդ հոդվածներում, որոնց վրա զգալիում է Գոշի Գատաստանագրքի առաջին մասին 9-րդ, 11-րդ, 21-րդ, 56-րդ, 57-րդ, 78-րդ, 93-րդ և 104-րդ հոդվածների բովանդակության որո-

շակի ազդեցությունը Հետևելով Մխիթար Գոշին, Սմբատ Սպարապետն իր հերթին իրրև սկզբունք կնախողությունը պատժելի արարք էր հայտարարել, բացառությամբ մի քանի դեպքերի, որոնք հիմնականում համընկնում են Գոշի մտտե նախատեսված և վերևում մատնացուցիչ արված դեպքերի հետ, բայց նա կնախողություն համար մարմնական պատիժներ և տուգանք չի նախատեսում, ինչպես այդ նկատեցինք Գոշի մտտե, այլ նախատեսում է եկեղեցական համայնքին ու նրա հովանավորությունեջ հեռացում՝ զուգորդված մեղքերի թողություն զրկման հասկացության և ապաշխարանքի հետ:

Գառատառանագրերի 79-րդ հոդվածն այդ մասին սասում է շատ պարզ և ընդգծված. «Այնոնք որ անեկեղություններ զիրենց պարկով կինն թողուն՝ առանց բողոքներն և կամ այլ իրանուսք պատճառանայց կոխեն զեկեղեցոյն պատկն և թողուն զիրենայց կաննին՝ նա կուհրամայէ արեւնք որ եսաթն տարի եկեղեցոյն յամէն ընդունելութենէ և ի պահեն ի զուրս մնան, չհաղորան զինք և ոչ ի մահ թողուն և ոչ ի նկանք: Ապա թէ զառնայ՝ նա որ այնելոց կարգ զինն որ ապաշխարէ. և ապա յեկեղեցի մտնէ ու հաղորդի: Եւ թէ յայն միջոցն այն թողած կինն մեռնի՝ նա ընա ոչ կարէ յեկեղեցի մտնել. և ոչ այլ կին առնուլ, ինչվի ութ տարի հայնց ապաշխարէ, որ զեկեղեցին հունցնէ զհինգն ի զուրս և զերեք տարի ընդ ներքս յեկեղեցոյն, և ապա ազատ է»: Եթե նկատի ունենանք, որ մարդուն եկեղեցական համայնքին և հովանավորությունեջ ութ տարիվ հեռացնելով նա միաժամանակ զովվում է Հաղորդությունեջ ու անգամ մեղքերի թողությունեջ, որը ինքնաբերական վերջրած քրիստոնեական կրոնի գաղափարախոսությամբ վարակված միջնադարի համարու համար խիստ ծանր պատիժ էր, ապա հասկանալի կլինի այն անողորմությունը, որով գառատառանում է Կրիկիայն հայկական պետության ցրեական օրենքը անհիմն շարժառիթներով կատարված կնախողությունը:

Երկկնություն և բազմակնություն: Սրանք միմյանց հետ սերտորեն առնելով աղբյուրներ էին: Առաջինի հույժներն այն էր, որ տալամարդը նույն հարկի տակ ընդհանուր տնտեսություն վարելու հիման վրա, միաժամանակ երկու կին էր պահում, իսկ երկրորդի հույժները կայանում է նրանում, որ նույն հարկի տակ նույն տղամարդը պահում է երկուսից ավելի կանայք: Ինչպես վկայում են մեր աղբյուրները, թե՛ երկկնությունը և թե՛ բազմակնությունը հայ պատմական իրականության պայմաններում երբեք օրինականացված արարքներ են եղել: Այդպես է եղել նախաքրիստոնեական, այսինքն հեթանոսության դարաշրջանում: Ըստ ավանդության, Հայկ

Ղույցազնը մեկից ավելի կին է ունեցել: Տիրառն Երկրորդ թագավորն ունեք իր հարմար, Արշակ և Վաղարշակ թագավորների օրոք, ինչպես այդ մասին վկայում են մեր պատմիչներեջ Բուզանդն ու Նորենացին, երկկնությունն ու բազմակնությունը նույնպես, փաստորեն, զեռ կնականի երևույթներ էին: Հայոց շատ նախարարներ մեկից ավելի կանայք ունեին և այդ բազմական չէր, նրանք շարունակում էին զանազան, մեծ մասամբ բաղադրական նկատառումներով, միմյանց փոխադարձաբար կանայք նվիրել:

Քրիստոնեությունը պետական կրոն հայտարարելով, հայ տիրապետող հասարակական խավերը, զեկավարվելով իրենց զաստիճան-դասակարգային շահերով, ընտանիք կազմելու ընդունելի ձևը համարեցին մեկամուսնություն, այսինքն միակնություն վրա հիմնված ընտանիքը: Այդ կապակցությամբ, այսինքն միակնությունն ու բազմակնությունը հայտարարվեցին իրրև մի կողմից նոր ընտանիքի և մյուս կողմից՝ քրիստոնեական բարոյականության սկզբունքների զեմ ուղղված հանցալուր, ուրեմն և պատժելի արարքներ: Հայոց առաջին հողերու առաջնորդներեջ մեկը՝ Սահակ Հայրապետը, ինչպես հայտնի է, խիստ օրենքներ և եկեղեցական կանոններ սահմանեց այդ երևույթի զեմ: Գրանց հաջորդեցին Հայոց կանոնագրերում տեղ գտած բազմակնիվ նոր կանոններ, որոնք երկկնության, մասնավորաբար բազմակնության համար երկարամյա ապաշխարանք ու զույգային պատիժներ էին նախատեսում, բայց երկկնության ու բազմակնության սովորույթները այնքան խոր արմատներ ունեին, որ այդ օրենքներն անգամ անկարող գտնվեցին ամբիշտ լիզվիզանելի այն:

Երկկնության և բազմակնության պատժելիություն հարցը, հասկանալի պատճառներով, չէր կարող անտեսվել մեր աշխարհիկ օրենսդրական հուշարկարանները կամ հիշատակարանները կազմողների կողմից: Դավիթ Այվազյան օրգին կատեգորիկ կերպով արգելում էր երկկնությունն ու բազմակնությունը որպես քրիստոնեական բարոյախոսության սկզբունքներին հակասող արարքներ և զրանց համար խիստ պատիժներ էր նախատեսում (արքայաբանք, զուլքային պատժներ և այլն): Նրանից հետ շմնացին Մխիթար Գոշն ու Սմբատ Սպարապետը:

Մխիթար Գոշն իր Գառատառանագրերում ամենից առաջ գանգատվում է այն մասին, թե երկկնությունն իր ժամանակ, չնայած օրենքով արգելված, բայց լայնորեն տարածված երևույթ է եղել: Նա նպատակահարմար է համարում այդ արարքի զեմ պայքարել նաև եկեղեցական-կանոնական պատիժների գործադրման միջոցով:

Վկայակոչելով Աստվածաշնչի այն դրույթներին մի քանիսը, որոնցով թույլատրվում է ամուսնալուծությունն ու նոր ամուսնությունը, մեր Հեղինակը այնուհետև գրում է. «Եւ զի ընդարձակ էր անուշալ ալլ (հասն), և միանգամայն երկուս (երկու կին) ունել ի տան, և այն անոսց բանի պոռնկութեան, և զի բոտ մեզ այս ոչ է — եթէ պատահի զկնի թողլոյն և մահուն զզշանալ՝ որ ատելութեամբ մեկնեցան ապաշարութեամբ միտսցին, բայց եթէ պատահի այնպիսի լինել, որոց միաւորել իցէ արժան» (առաջին մաս, հոդ. 43-րդ):

Երկկնությունը, հետևաբար նաև բազմակնությունը պետք է հետապնդվեն ու պատժվեն՝ ահա Գոչի Գատաստանագրքի 54-րդ հոդվածի ներքին ոգին: Այդ հոդվածը արգելում է քահանա ձեռնադրել որոր նրանց, ովքեր մերկացվում են երկկնության կամ որուն հավասարեցված մեկ այլ արարքի մեջ: Վկայակոչելով Անկյուրիայի եկեղեցական ժողովի կանոններից 20-րդ կանոնը և Գրիգոր Լուսավորչին վերագրած կանոններից 30-րդ կանոնը, Գոչը, հանձնել 54-րդ հոդվածի, սահմանում է մի նոր իրավանորմ, որը նույնպես, իրեն հատուկ լեզվով ու մտքերի ճշգրիտ ձևակերպումներով ազդարարում է երկկնության, հետևաբար և բազմակնության պատժելիության դադափարը:

Ինչ վերաբերում է Ամբաստանապետի, ապա նա իր օրենսգրքում թեև քրեական իրավանորմ չմտցրեց երկկնության ու բազմակնության պատժելիության մասին, բայց խմբագրած մի քանի հոդվածներից պարզ կերպով երևում է, որ ինքը նույնպես հակում է ունեցել նշված արարքները քրեօրենս պատժելի հայտարարելու գործում: Այդ բանում համոզվելու համար բավական է ընթերցել օրենսգրքի 56 bis 75-րդ և մի քանի այլ հոդվածներ: Գրանցից 56 bis հոդվածի մեջ կարմիր թևի նման անց է կացվում երկկնության, հետևաբար նաև բազմակնության անթույլատրելիության գաղափար, իսկ 75-րդ հոդվածն ուղղակի կերպով ազդարարում է դրանց պատժելիությունը:

Միջնագարյան Հայաստանում, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, երկկնությունը և դրան առնչվող արարքները պատժվում էին նաև սովորության իրավունքի ուժով՝ որը հաճախ ավելի կիրառական էր, քան գրավոր օրենքները:

Ահա այսպես էին պատժվում ամուսնության և ընտանիքի դեմ ուղղվող հանցավոր արարքները հին և միջնագարյան Հայաստանում հայկական սովորության օրենքներով, եկեղեցական-կանոնական օրենսդրությամբ և մեր աշխարհիկ դատաստանագրքերով, այդ թվում Գավիթ Այավկա որդու կանոններով:

ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԵՌԱԿԱՆ ՈՂՋԱՍԽՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՄ

Պատմական ակնարկ: Գնուս հնագույն ու հին մի շարք ժողովուրդների իրավաբանական սովորությունով, մարդկանց պատժելու սպառնալիքով, նրանցից պահանջվում էր պահպանել իրենց սեռական ուղղաստությունն ու անաղարտ մնալ մինչև նրանց որոշակի հասակի (տարիքի) հասնելը կամ նույնիսկ մինչև ամուսնանալը: Նրանցից միաժամանակ պահանջվում էր հեռու մնալ բոլոր այն արարքներից, որոնք զստակարգային իմաստով հանրության համար վտանգավոր լինելով հանդերձ, իրենց կատարմամբ խախտում էին հասարակության մեջ սահմանված բարոյական կարգի նորմները: Այդ բնագավառներում կատարվող շատ ու շատ արարքներ հանցագործություն էին հայտարարված, այն էլ հաճախ շատ խիստ, քրեական դատան պատժներով պատժվող հանցագործություններ:

Այսպես, Համմուրաբի օրենսգրքին արնայզությունը, որն այդ երկրում բարոյական սիլլոնները խախտող ծանրագույն հանցագործություն էր համարվում, պատժում էր որակյալ մահապատժով (հոդ. 157-րդ), հետապնդվում էին նաև անասնաժուրությունը (հոդ. 171-րդ) և նման այլ հանցավոր արարքներ:

Այս հարցում անողոր էին մանավանդ մովսիսական օրենքները, որոնց համաձայն կույս աղբիկ հետ իր իսկ համաձայնության էենակցելը, եթե նույնիսկ նա ամուսնական շափահասության հասած լիներ, հետապնդվում էր (Նիցի, ԻԲ 16—17, Երկրորդ օրինաց, ԲԲ 23, 28—29 և այլն): Հետապնդվում ու պատժվում էին մերձավորների ամուսնությունը (Ղևտացոց, ԺԼ 2—4, 6—8, 15, Ի 11—21), աղբիկ կողմից նախքան ամուսնանալը իր կուսության խախտումը (Երկրորդ օրինաց, ԻԲ 16—21) և այլն: Վեր-

չին հանցավոր արարքը, սին դա կատարվել էր աղէկա մեղքով, պատժվում էր նույնիսկ որակալ մահապատժով՝ քարկտութիւյամբ, կամ կրակի մեջ այրելով՝ ըստ Համմուրբի օրենսգրքի:

Սկզբապէս մեծ մասամբում սեռական անադարտութիւյան և քրիստոնեական կրօնի սկզբունքներին համապատասխանող բարոյականութիւյան ու ողջախոհութիւյան նորմերի դեմ ուղղված հանցագործութիւնները պատժվում էին բովանդակ միջնազարում թէ՛ աշխարհիկ օրենքներով, թէ՛ կանոնական իրավունքի նորմերով և թէ՛ սովորութիւյան իրավունքի ուժով: Այնպիսի հանցավոր արարքներ, ինչպիսիք են արնապղծութիւնը, անասնաժուլութիւնը, փոքրահասակներին և զեռահասներին ամուսնացնելը, կենդանիներին ավելցիկ կերպով տանջահարելը, մարդկանց, առանձնապէս կանանց ստեղծելու, կույս աղէկան գալթակզեցնելը, զանազան անասնապարտը գործողութիւնների կատարումը և այլն, հաճախ պատժվում էին ծանր մարմնական պատիժներով, երկարամյա ապաշխարութիւյամբ, նույնիսկ մահապատի ամենատարբեր ձևերով:

Բայց սա հարցի մի կողմն է: Մյուս կողմից ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ այն հարցը, թե որ հանցագործութիւններն են անզիջանում մարդու սեռական ողջախոհութիւյան և բարոյականութիւյան դեմ ուղղված հանցագործութիւններ, միշտ էլ գրեթե օրինակ ու հեղինակ ունենալու պատմական հարց: Սեռական ողջախոհութիւյան և բարոյականութիւյան դեմ ուղղված կաշու, մեղմեղմիշտ տրված կամ անփոփոխ, բոլոր ժամանակների ու բոլոր պետութիւնների օրենքներով ու իրավաբանական սովորութիւններով, բարոյականութիւյան նորմերով ընդունված ու արգելված հանցագործութիւններ նույնպէս չեն եղել և չկան: Միևնույն արարքը հանցագործութիւն է համարվել դասակարգային-հասարակական որոշակի կատարվածք ունեցող տվյալ կոնկրետ հասարակութիւյան պայմաններում և դադարել է հանցագործութիւն լինելուց, երբ փոխվել են այդ հասարակութիւնն ու դրա հետ կապված պայմանները:

Հեթանոսութիւյան շրջանում պատմութիւնը հայտնի երկրներում, այդ թվում Հայաստանում, աղբիւրները որոշ տարբերի հասնելով, աղտո կերպով, նույնիսկ ծնողների զրգումով, առանձնազգացած հատուկ վայրերում կենակցում էին սեռամարկանց հետ՝ խախտելով իրենց կուսութիւնը և նրանց ոչ ոք չէր մեղադրում անասնակութիւյան մեջ ու չէր պատժում: Բայց նույն այդ արարքների համար հետագա դարերում, առանձնապէս քրիստոնեութիւյան տիրապետութիւյան շրջանում, քրեական խիստ պատիժներ, այդ թվում մահապատիժ ու մարմնական պատիժներ սահմանվեցին: Ազգայնոր, մեր ժողովրդի

պատմութիւյան մեջ հայտնի եկեղյաց տաճարը, Գրիգոր Լուսավորչի գործունեութիւնը և Սահակ Հայրապետին վերապրող եկեղեցական-կանոնական դասն օրենքները, որոնք իրենց բնույթով, ինչպէս արդեն գիտենք, քրեական-իրավական գործող նորմեր, այսինքն կիրառվող օրենքներ էին:

Փոքրահասակներին ամուսնացնելը, անգամ արնապղծութիւնը բոլոր ժամանակներում, նույնիսկ միևնույն պատմաշրջանում ապուղ բոլոր ժողովուրդների մոտ միշտ չէ, որ հանցագործութիւններ են համարվել: Ընդէ են ժամանակաշրջաններ և ժողովուրդներ, որոնց մեջ դրանք երկուսն էլ սրբագործված սովորութիւններ են եղել: Այսպէս, մահմեդական աշխարհի սովորութիւյան իրավունքին հայտնի է բաշքարթիւն, իսկ ամերիկյան հեղիկների մի քանի ցեղերի պատմութիւնից հայտնի է, որ ամուսնութիւնը թույլատրվում էր բացառապէս մերձավորների միջև և այդ էր պատճառը, որ մի բնական-ֆիզիոլոգիական պրոցեսի անհրաժեշտութիւնը մարեցին ու աշխարհից հեռացան այդ ցեղերը: Նման ցեղերի գոյութիւյան մասին իրենց աշխատութիւնների մեջ պայտուցներ են բերում Մորգանը, Էնգելսը, Բահնֆելը և ուրիշներ:

Պետք է ասել, որ հին և միջնադարյան հայ սովորութիւյան իրավունքը և դրավոր կերպով մեզ հասած հայկական օրենքի բոլոր օրենքները նույնպէս նախատեսել են մարդու սեռական ողջախոհութիւյան և բարոյականութիւյան դեմ ուղղված հանցագործութիւնները: Փորձենք տալ այդ հանցագործութիւններից յուրաքանչյուրի ընդհանուր բնութագրի՝ հիմք ընդունելով նախ և առաջ մեզ հասած դրավոր օրենքները:

Մեծավորների արնապղծութիւն: Մեծավոր ազգականների ամուսնութիւնը կամ միմյանց հետ ունեցած նրանց սեռական հարաբերութիւնը, բուն հին և միջնադարյան օրենքների, համարվում էր արնապղծութիւն:

Գեռես Հայաստանի այսպէս կոչված նախալուսավորչի Քաղենու Առաքյալին վերաբրող կանոններում հարց էր տրվում և պատասխանվում, որ երբ մոտիկ ազգականների ամուսնանում են, նման ամուսնութիւնն անհրաժեշտ է շեղալ հայտարարել, այսինքն լուծել իբրև աստվածային անձեքի հետեանք ու մեղավորներին էլ պետք է ենթարկել ծանր ապաշխարութիւյան և այլ պատիժների: Նույն ոգով էր զրկւմ ներսու Սեմի անվամբ կամ որ նույնն է Աշտիշատի ժողովում ընդունված կանոններից մեկը, որով որպէս հանցագործութիւն արգելվում էր այն անգամ արդէն նախարարների որդիներին

իրենց մերձավոր ազգականները հետ ամուսնանալը, «մի բան» որևէ երբևէ ինչ-ինչ նկատառուներով թույլատրվում էր:

Շահագրգիռների հայտնի կանոններում նույնպես դատապարտում է արգելվում է մերձավոր բարեկամների միմյանց հետ ամուսնանալը: Հենց ժողովի ընդունած 12-րդ կանոնում ասվում էր. «ևրդ եթէ որ զկին հօր իւրոյ ունիցի, ո՛չ ընդունի զնա կանոնս, ի սուրբ եկեղեցի նա մի՛ մտցէ, և յամենայն ժողովոյս նդովմալ լիցի, մինչև դարձցի և ապաշխարեսցէ, է՛ ամ ընդ ունկնդիրս, Գ՛ ամ ընդ ձեռամբ, Ս՛ դրամ աղքատաց, Ս՛՛ դրամ յեկեղեցի. և վարքն քննեալ՝ հաղորդեսցի: Եթէ հայր զորդոյ կին ունիցի կամ եղբայր զեղբոր նոյն պատուհան և նդովք լիցին: Այլ՛ զչեմբ հարազատի և զազգականի զկին որ մի՛ իշխեսցէ ունիլ կնոսթեան և կամ շնալ, կամ եթէ կնոջ կամորն է խառնակութիւնն զպատուհան և զպազանս և եզով զնոյն կրեսցէ և յապաշխարսթիւն. կայցեն զկինն և յուրկանոց տարցեն ժ՛ տարի առացէ՝ զողեսնալ, ապա եթէ ազան է ի սրդիսն շարթալ, Յ՛. դրամ տայցէ նոցա: Ինչպես տեսնում եմք, սա մի որոշակի բրհական իրավանորմ է իր զիսպողիցիալով և սանկշխալով:

Կարծեք իբրև լրացում այս կանոնի, հետևյալ՝ 13-րդ կանոնն իր հերթին ազգարարում էր. «Որ զազգական կին առնէ, այս պղծութիւն և զարշանք յայտնի լիցի և անուանեսցի ի միջի ձերում, զի մի՛ որ բնոջ աղտաղանս մարմնոյ իւրում խառնակեսցի՝ ըստ սովորութեան հեթանոսաց և անասունած ամբարիշտ ազգաց... արդ, մի՛ որ, որ զպատուածապաշտութիւն և զբրտառնութիւնն զգնեցան և զտէրունական մկրտութեան զկնիք և զբրոշմ զարքունական ունիցի, զբոյր կամ զբեռորի կամ զեքրայրորդի կամ զհօրբոյր կամ զայլ ոք յազդի անդ իւրում մտնուէ զորբորդ սերունդն կին զոր մի՛ իշխեսցէ առնել, զի մի պատուանում եղիցի մտր հաւատոյն. քանզի բարիութիւն յանձին իւրում գանձէ, այնպիսին որդի անօրինի և թերախտար եղիցի, մի՛ բորդոջեսցի... եթէ որ այնպիսեացն պակտ օրհնեսցէ, կամ ի հարսանիսն երթիցէ, կցորդ եղիցի շարեաց զբոժոջ նոցա, և ի կարգէ պաշտօնէից հնուացեալ եղիցի: Եւ թէ՛ որ եպիսկոպոս կամ երէց գտցի ի խորհրդանս, յաթոռոյն և ի քահանայութեանն անկեալ եղիցին: Բայց որ խոտորեցան յօրինաց սրբոց և ի կարգէ եկեղեցոյ, եթէ զարձցին ի պիղծ ամուսնութեանն և մեկնեսցին ի միմեանց ի ձեռն մեծածնած արցոց մինչև զկէս կենաց և բնչից իրեանց հողոյ բաժին սացան ի կարօտանալ, ի վշտանգեալս և ի սուրբ եկեղեցի, զամենայն աուուրս կենաց իրեանց ապաշխարեալ,

և ի վախճանին՝ թէ լիցին հաղորդելոյ արժանի, հաղորդեսցին: Ապա և զխաւորք եկեղեցոյն, որ ի խորհրդին էին և որ զպակտ օրհնեաց Չ՛ դրամ եպիսկոպոսն ամուսնեսցի յաղքատս և Մ՛ երէցն, Մ՛ որ զպակտ օրհնեաց, և ապա մատիցին յաթոռն ի քահանայութեանն»: Սա նույնպես քրեական-իրավական մի նորմ էր իր զիսպողիցիալով և սանկցիալով:

Այսպիսով, Շահագրգիռների ժողովի կանոններով քրեական իրավական առումով, իբրև ինքնուրույն հանցակալով պարունակող արարք, իբրև քրեական հանցագործութիւնն արգելվում էր մերձավոր բուրբ բարեկամներն ու հարազատներն ամուսնութեան միմյանց հետ: Պատժվում էին ոչ միայն ամուսնացողները, այլև պատժվում էին արարքի հանցակիցները, ինչպես նաև այն հոգեորականները, ովքեր կատարում էին նման ամուսնութիւնն հաստատող կրօնական-եկեղեցական պարտողութիւնները: Հանցագործներին նկատմամբ կիրառվող պատժառնականներն էին երկատեսմայ ապաշխարութեանը՝ զուգորդված տուգանքի հետ կամ առանց տուգանքի, հողեւր պաշտոններին զրկելը, զույցի բռնազրավումը, տուգանքը, նդովումը և այլն, և այլն:

Այն սահմանը, որից հետո ազգականների ամուսնութեանը թույլատրվում էր, սկզբում համարվում էր շարրորդ սերունդը, իսկ անելի ուշ շրջանում արդեն դարձավ յոթերորդ սերունդը: Չորրորդ սերնդի մասին անկարելիվ էր, օրինակ, Գարտալի եկեղեցական ժողովի կանոններում և, ինչպես տեսանք, Շահագրգիռների ժողովում հաստատված կանոններում, իսկ յոթերորդ սերնդի մասին՝ Սսի նրկարդ ժողովի կանոններում, որոնցից 8-րդ կանոնն ուղղակի կերպով ազգարարում էր, թե ... պակտ մի՛ լիցի ի մերձավոր ազգականս ընօթն ծնունդ: Յոթերորդ սերնդի մասին հիշատականեր կան կանոնական իրավութեան նաև այլ հուշարձաններում:

Միևնույն Գուշը մերձավորների ամուսնութեան անթույլատրելի լինելու և նման ամուսնութեան զեղքում մեղավորներին պատժելու կամ այլ տույժերի ենթարկելու հիմունքների ու սահմանների հարցը քննութեանն է առնում իր Դատաստանազրքի առաջին մասի 108-րդ և 109-րդ հոդվածներում: Այդ հոդվածներում նա այն միտքն է զարգացնում, որ նման ամուսնութեանը հանցեցում է արեսպղծութեան և զա՛ մի հանցանք է, որ ամեն կարգի շարիքների ծագման արմատն է հանդիսանում: Հարցը ազգայն զինելով, Գուշը վճարական կերպով արգելում է բույր և եղբոր երեխաների միմյանց հետ ամուսնանալը, արգելում է վարքիմաց գնով ու վերքեմաց գնով մշտու բուրբ բարեկամների, աչ ու ձախ թեւերի հարազատների ամուսնու-

Քյուրը, նա այդ կարգի ամուսնությունները համարում է ծանրա-
զույգ հանցագործություններ՝ արժանի ամենախիստ պատժելիքի:
Հնչատակելով, որ երբևէ մարդիկ ամուսնացել են անզամ միջոց-
հարազատ քույրերի հետ, Մխիթար Փոշը փառաբանում է սովոր-
ական օրենքները, որոնց ուժով նման արարքները ոչ միայն ար-
գելվեցին, այլև ծանրագույն հանցագործություն հայտարարվեցին:
Հարցի ընկալման ու պատկերացման այդ ֆունի վրա էլ նա գրա-
ռում է իր քրեա-իրավական նորմերը. «Ապա թէ (ամուսնությունը)
երկու ի մի կողմանէ իցէ և մի ի միոյ, բնասին մի՛ տայցնն թոյլ,
այդա թէ յամուսնայ արասցնն, քակեսցնն. իսկ եթէ ոչ կարեն կամ
յաղագս յանզգնութեան և կամ զի իշխանք իցնն, ծանր ապաշխա-
րութեամբ սահմանեսցնն. իսկ թէ անզգտանալով ըստ սասցանոցն
իցէ, ալլ ազգ լիցի ներևու: Սակայն իշխանաց ալլ օրինակ լիցի
ներման յամենայսն: Ապա թէ (ամուսնությունը) մին ի միոյ կող-
մանէ իցէ և մին ի միոյ, բնասին մի լիցի ներև, թե՛ զհեղձով իցէ և
թե՛ անզգտանալով, նզովիք քակեսցնն. այդա թէ ոչ կարեն, մի՛ լիցի
հազորոյի ընդ նոսա, ալլ լիցին հեղաջեալք իբրև զպոռնիկս մինչ
զզրացնուլ քակեսցին և ապաշխարութեամբ ուղղեսցին. զի ի լի-
նելն՝ ոչ մնայ և ոչ մի, որպէս ի շորորոյին նրկուս և շերորոյին
մի...»: Այսպես էր անմեղքամբ հարազատներին միմյանց հետ
ամուսնանալու պատժելիության հարցը լուծվում Մխիթար Փոշի
Պատասխանաբերում:

Ի մեծ զարմանս, Սմբատ Սպարապետի Պատասխանաբերում
մենք համապատասխան նորմերի չենք հանգիպում, որոնցով պատ-
ժելի հայտարարվեր վերոհիշյալ արարքը: Սակայն Սպարապետը
մենամուսնությունը համարում է բնուսանք կազմելու միակ միջո-
ձեր: Ուստի, մենք կարող ենք ներկայացնել, որ վերլիկյան Հայաստա-
նում նույնպես մերձավորների ամուսնությունը համարվել է ծան-
րագույն հանցագործություն և պատժվել է, նույնիսկ այն հանգա-
մանքին, որ այդ մասին երկրի պաշտոնական դարձած դատաստա-
նագրքում բրեական բնույթի իրավանորմեր չկային:

Փոճրճասակի, անչափանասի և արբունի շխամաժի ամուս-
նությունը: Հայ կանոնական իրավունքի հուշարձանները և աշխար-
հիկ օրենքները մշտական կերպով արգելում են. ա) միևնի տասր տա-
րեկան փոքրահասակի նշանադրությունը կամ ամուսնացնելը, բ)
անչափահասի, ալլ կերպ սասած, տասր տարեկանից մինչև տասն-
հինգ տարեկան երեխայի ամուսնությունը և գ) արբունի շխամաժ,
այսինքն սեռական հասունության չհասած, թևե քաղաքացիական
չափահասության (տասնհինգ տարեկան) հասած մարդու ամուս-

նությունը: Այդ արարքները ոչ միայն պարզապես արգելված էին,
այլև դրանք կասարողները, իբրև հանցագործներ, զործող օրենք-
ներով դատապարտվում էին:

Ինչու Սահակ Հայրապետին վերազրվող կանոնների մեջ
մատնացույց էր արվում, որ ծնողները և քահանաները կարող են
նրկասաներին ամուսնացնել, եթե դրանք որոշակի տարիքի են հա-
սել և բացի այդ նախապես իրար ճանաչելիս են եղել: Այս կարգը
խախտող քահանաներն ու ծնողները, այսինքն ամուսնացող փոք-
րահասակների կամ դեռահասների ծնողները խտտությամբ պա-
տժվում էին: «Պատուր արարէք նոցա,— սասու է Սահակ Հայրա-
պետը.— զի տղայոց կանայս մի՛ խուսեցան և մի՛ կատարեցն
առանց դիրեարս տեսանելոյ, մի՛նողնեց ճաճութեամբ և զուր քահա-
նայք, տղայոց ամենեկն իսկ պսակ մի օրհնէք, մինչև ի կատարումն
հասակի. իսկ կատարելոց, որոց զմիմեանս ոչ իցէ տեսնուլ, ի հա-
նոյս իրենաց, պսակ մի իշխեսցիք զնել՝ առանց քննութեան և ցնո-
սին ինքեանս ըստցանելոյ, զոցէ ըոնապատմեամբ ծնողաց յա-
կամայ հասանալ իցնն. և զայնպիսի հարստեհիս մի՛ իշխեք յանձն
անուլ, զի միևն ցայտո յայզպիսի անկարգութենէլ բազում վնասք
զնացին յայխարհիս՝ հոգևոր և մարմնաւորս: Այսպես էր հարցը
զրվում Սահակ Հայրապետի կանոններից 27-րդ կանոնում, որտեղ,
ինչպես նկատում ենք, քրեա-իրավական նորմ չկա:

Հետևյալ՝ 28-րդ կանոնն արդեն սահմանում էր պատժական
իրավանորմը. «Ապա թէ յսեմ,— սասու է հայոց Հայրապետը նշված
կանոնում,— եթէ որ ի քահանայից արտաքոյ մերոյ չբաժանի այն-
պիսեաց պսակ օրհնեսցէ, դեռեսցէ, զի քահանայն պատահաս կը-
րեսցէ. ըստ օրինակի վնասակարաց. և ծնողքն ոչ անպարտ լինեն
ի պատահասնս: Թե ինչ կոնկրետ պատժներ էին կիրառվում
նման քահանաների ու ծնողների նկատմամբ, պարզ չէ, կրայ ամե-
նայն հավանականություն մի զեպտում կիրառվում էր կոտնավորի
ատրինակից, այսինքն քահանայության հոգևոր կոլումբի զրկելը,
իսկ մյուս դեպքում՝ երկարամյա ապաշխարությունը: Սրանք եր-
կուսն էլ հին և միջնադարյան Հայաստանում, ինչպես բազմիցս նշել
ենք, որոշ պատմաբաններում ծանր պատժներ էին հանդիսա-
նում:

Փոքրահասակին և դեռահասակին, կարելի է սան նույնիսկ ան-
չափահասին, ամուսնացնելը պատժելի արարք էր ճանաչվում հայ
և կնդեցական-կանոնական իրավունքի նաև ուրիշ ակտերով: Այս-
պես, օրինակ, Վաղարշապատի շորորոգ կնդեցական ժողովի, Եա-
նայիվանի ժողովի, Գլինի կերկրոգ ժողովի, Պարտալի, Հարբի

տեսական լինի դատաստան-զիմամուր սպանողի զվարճի երիցն ղունել՝ ծնողաց հարսինն, և սինսալին, և ծնողաց նորս, և քահանային դուանիկի կարգէն: Ե զխոտորէն շառնի անպարտս, այլ յաղամա- յիցն (այսինքն անգողոչ սպանողներին, Ա. Թ.) ղեկն ի կարգէն: Եւ յոյժ սաստիկ եպիսկոպոսաց՝ այնպիսեացնա: Ահա թե ինչպես էր հետապնդվում ու պատժվում արքունցի շահաստ մարդկանց ամուս- նութիւնն ու ամուսնացնելը քառ Մխիթար Գոշի Դատաստանա- գրքի: Այստեղ կարնոր է ընդգծել այն, որ մեր մեծ իրավաբանը՝ Մխիթար Գոշը, հստակ կերպով սահմանում, սահմանագծում ու սահմանադատում է իրարից անդափանսներին կամ փոքրահասակ- ների (հոգ. 91-րդ) և արքունի շահաստներին ամուսնութիւնը (հոգ. 119-րդ): Մեր օրերից մոտավորապես 800 տարի առաջ այդպիսի նբրանկատ մարդ կարող էր լինել միայն համապարփակ գիտելիք- ների տեք անձնագրութիւն, միայն մեծ մտածողութիւն տեք գիտ- նակաւոր:

Կնոջ առևանգում: Հայ պատմա-ազգագրական նյութերի և իրավաբանական սովորույթների ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ կնոջ հետ ամուսնանալու նպատակով նրան առևանգելը շատ երկար ժամանակ լիովին օրինալիս և օրինականացված երե- փութ է համարվել: Այն ոչ միայն չի հետապնդվել, այլ քնդհակա- ոակը, իրախուսվել ու քաջանքովի է: Այսպես էր օրինակ, հեթա- նոսական կրօնների շրջանում: Երբ հայոց Արտաշէն թագավորը կնութիւն վերցնելու նկատառումներով առևանգեց պառնների ար- քայազուստը Սաթենիկին, իտրենացու վկայութիւնը դա միայն ցըն- ծութիւնն առաջացրեց հայերի մեջ: Կամ վերցնենք Շիրին շահ և Բահր ավանդակները: Սե ասրի թագավորի թոռ Շիրին շահը առևան- ցում է քաջանց տանից իր հովանած ազգկան՝ Բահրին, որն ան- գամ բաշխարթմայով ճանաչված էր որպես Շիրինի հարսնացուն: Շիրինի այդ վարքագիծը միայն խնդրանքն առաջ բերեց յուրային- ների մեջ, նա միայն խրախուսվեց: Այսպիսի բազմաթիվ օրինակներ կարելի է բերել ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ մյուս ժողովուրդ- ների պատմութիւնից, որոնք այսպեսցում են, որ կնոջ առևանգու- մը երբևէ չէր հետապնդվում և չէր պատժվում, այսինքն հանցադո- ծութիւնն չէր համարվում:

Բայց ժամանակի ընթացքում այդ արարքը դարձավ հանրօրն, ուվելի ճիշտ կլինի ասել, դասակարգայնորեն վտանգավոր երևույթ: Այն հետապնդվեց բրեական պատժով սպանալիքով: Այդպես էր ամենուրեք, այդպես էր նաև Հայաստանում: Հրտարակվեցին բազ- մաթիվ օրենքներ, որոնց գոյութիւնն ինքնբնութեան վերջում մի

այսպեսցուց էր, որ խոտով էր բուն արարքի բարձր վտանգավորու- թիւնն մասին:

Պրոֆ. Խ. Սամվելյանը իրավացի կերպով նկատում է, որ կին, այսինքն հարս առևանգելու շարժապահն տարածված լինելու ապա- ցույց են մի շարք արգելական և պատժական կանոններն ու օրենք- ները, որոնք սահմանվել են հայ օրենսդրութիւնն մեջ և դարերի քն- նացքում կրկնվել: Արգելական այդ օրենքները կարող էին երևան գալ միմիայն այն ժամանակ, երբ իրականութիւնն մեջ գոյութիւն են ունենում արգելումն առաջացնող պայմաններ: Օրենսդրութիւնն խիստ որոշումներն ու դրանց դարավոր գործադրութիւնը դրավ- կան են, թե ժողովրդի մեջ ինչպիսի գծավոր էր արմատացած առևանգումը և թե ինչպիսի գծավորն պայմար էր հայածանքի էր ենթարկվում այդ արարքը կատարողը վարչական, այդ թվում դա- տական օրգանների կողմից⁸⁶:

Իսկ որոնք էին «խիստ որոշումներով» այդ բրեական օրենքնե- րը՝ առևանգման գործերով լիզավորների նկատմամբ:

Գրիգոր Լուսավորչի 9-րդ կանոնն ազգաբարձում է, թե երբ մեկն ու մեկը առևանգելով ազգկան, առևանհում է նրա հետ, պատկը պետք է անվավեր ճանաչվի և առևանգվածը իրավունք ունի դրանից հետո ամուսնանալ ցանկացած տղամարդու հետ: Այն կա- նոնը, ինչպես տեսնում ենք, քրեա-իրավական չէ, թեև իր բնույթով այն արգելող, հետևաբար և սաստղ, կանխող իրավանորմ է: Քրեա- փրայնական նորմ չէ նաև Հեռտեղ հայերի կանոնադրութիւնն 15-րդ կանոնը, որտեղ նշվում է, թե առևանգված կինը, եթե նույնիսկ նա երեսուներ ունենա, եթե չի ցանկանում կամ նրա հայրն ու մայրը չեն ցանկանում, որ մնա իրեն առևանգող ամուսնու ուստ, պարտա- վոր են նրան հետ դարձնել հոր տունը, բայի որ հարաբարական պահումը կարող է բազմապիսի շարիքներ առաջացնել: Կանոնը մեզ համար հետաքրքրական է նրանով, որ սահասարակ արգելում է կնոջ առևանգումը և պարտավորեցնում է աշխարհէկ ու ճոզեր իշ- խանութիւններին նրան վերագործնել իր հոր տունը՝ ազատ ամուս- նութիւն իրավունք վերապահելով նրան: Կանոնը միաժամանակ նշում է, որ հակառակ վարմունքը առևանգողի նկատմամբ կարող է նոր հանցագործութիւնների սեղիք տալ:

Արդի հասկացողութիւնները քրեա-իրավական, այլ կերպ ասած, պատժական իրավանորմ էր Շահապիվանի ժողովի ընդունած կա- նոններից 7-րդ կանոնը, որը կնոջ առևանգման համար նախատե-

86 Տճ՝ Խ. Սամվելյան, Հայ սովորութեան իրավունքը, Թիֆլիս, 1911, էջ 41:

սում էր համապատասխան սանկցիա, այսինքն որոշակի պատժա-
տեսակ ու պատժաշափ: Ե՞նթ բռնաբլամբ անուանգում է կատար-
վում, նշված է այդ կանոնում, ապա անանգովածը հանձնված է իր
ձեռողներին, իսկ մեղավորը ծանր տուգանքի է դատապարտվում:
Ե՞նթ ազատ է 1200 դրամի շափով, իսկ ե՞նթ շինական, այսինքն գյու-
ղացի է՝ 700 դրամի շափով, դրան ավելացրած մարմնական պա-
տիժ: Պատմվում էին նաև անանգման հանցակիցները, ալ կերպ
ասած անանգողին օգնողները: Անանգովածի հետ կենակցելը լրա-
ցուցիչ քրեական պատասխանատվության հիմք էր հանգրսանում:
մեղավորը տուգանվում էր 100 դրամով և բացի այդ դատապարտ-
վում էր երամայ պաշարարություն: Բերենք այդ կանոնի դրարք
տեքստը որոշ կրճատումներով: «Ելք անանկ սանիցին, կայցեն
զկինն և անզէն տացեն ց՛ալք կամ ց՛մալք իւր և տուգանենցին փո-
խանակ անարգանաց, եթէ ազատ է ԽՄ ազատ եթէ շինական է Խ:
Ու որո հրոսն երթնալ էին օգնականք սրտ փեսային, առ այրն ձ
գրամ տուգանենցին և զհրոսին գրամն զզէն յեկեղեցի տացեն և
զզէն կարօանելոց: Ապա եթէ ստու փեսայն ընդ ազգկան պոսնկա-
ցաւ տանց պսակ զնեխոյ, յեկեղեցի տուգան կայցեն ձ դրամ, զի
զպսակն օրհնութեան անարցնաց, Գ՛ սմա յապաշարութեան կար-
ցէ, ապա եթէ երիցու ուրուք դաղտ պսակ եղեալ իցէ տանց հօք և
մօք աղչկանն, երէցն գրահանալովին շիշխնեցէ պաշտել, և ձ
գրամ տուգան կայցեն և կարոանելոց տացեն, և զպսակն զոր եղան՝
աէր լիցոք»: Ահա այսպես էր պատմվում կնոջ անանգումն ու դրան
հանցակցելը ըստ Եահայկիանի ժողովի կանոններին:

Միսիքար Գոշի Դատաստանագրում քննարկվող հանցավոր
արարքի՝ կնոջ անանգման պատժելիության հարցի մասին խոս-
վում է առաջին մասի 34-րդ, 51-րդ և 96-րդ հոդվածներում, հող-
վածներ, որոնց համար իրավաբանական աղբյուրներ են հանգրսա-
ցել Հետևող հայերի, Գրիգոր Լուսավորչի, Եահայկիանի՝ ժողովի,
Անկուրաբի ժողովի և Եկեղեցական քաղաքաբիլի ալլ ժողովների կա-
նոնագրությունների կանոնները: Այդ հոդվածները աներկմիտ կեր-
պով պահանջում են, որ դատական պատասխանատվության կանչ-
վեն ինչպես անանգողներն իրենք, այնպես էլ զրոնց հանցակից-
ները, այսինքն՝ օգնողներն ու օժանդակողները: Գոշը մեղավորներին
նկատմամբ սահմանում է տարբեր ժամկետներով ապաշարու-
թյուն, տուգանք և այլն, միաժամանակ պահանջելով, որ դատա-
բանի կողմից կոնկրետ պատժատեսակն ու պատժապիք որոշվի:
հաշվի առնելով հանցագործության կատարման ժամանակը, հան-
գամանքները և յուրաքանչյուր զեպիք առանձնահատկությունները:

Գոշն այդպես է հարցը դնում մի ակնհերև ու խելացի նպատակով:
նա հնարավորություն է բնձնում այն բանի համար, որ դատարանն
էլ լիճակի լինի հանցագործներին նկատմամբ պատիժը անհատակա-
նացելի, այսինքն պատժատեսակն ու շափը որոշելի նաչելով կոնկ-
րետ հանցագործության բնույթին և այդ հանցագործության սուր-
յեկտին, սրա դասային-դատակարգային պատկանելությանը, նրա
ով լինելուն, մեղքի աստիճանին և այլ հանգամանքներին:

Միջնագրայն Հայաստանում կնոջ անանգմամբ կատարված
սմտանության բարձր հասարակական-դատակարգային վտանգավոր-
ություն մասին են վկայում նաև ներսես Ենորհալու իրատեսերը:
Ենորհալին իր «Թուղթ քնզհանրական»-ի մեջ ոչ միայն ազդելում
է անանգմամբ սմտանությունը, այլև իրեն քրեական հանցագոր-
ծություն դատապարտում է այդ ըստ երևույթին, տարածված սովու-
րույցը, այն համարելով բյուրավոր շարիքների պատճառ և մոլա-
կան ախտերի աղբյուր: «Մի և այնցիկ որք անակազս ասին, զիցի
պսակ, որ հակառակ օրինաց Աստուծոյ է և բիւր շարեաց պատ-
ճառք ի ստանայէլ շարժեալք ի մոլական ախտ», ստում է նա:
եվ իսկպես, կնոջ (աղչկա) անանգման զեպում, ինչպես հայա-
նի է, համար հանցավոր կրքեր սաստիկ բորբոքում են և դրանց
հետևանքը լինում է ծանրագույն հանցագործություններ: Եվ ահա
նման հանցագործությունները կանխելու նպատակով է, որ ներսես
Ենորհալին գրել և ժամանակին մարդիկնց կարգապահ էն, նրանց
մեջ մասնայականացրել են օրենքի ուժ ունեցող նրա իրատեսերի ժա-
ղովածուն՝ «Թուղթ քնզհանրական»-ը, սովյալ զեպում մեղ հետա-
քըրքող խրատ-իրավանդորը:

Կնոջ անանգման և անանգմամբ կատարվող հարկազիր
սմտանության կամ կենակցության համար անողոր քրեական պա-
տիժներ էին նախատեսվում Կիլիկյան Հայաստանի քրեական օրենս-
ներով: Դեռևս ներսես կամբոնացու կողմից աշխարհիկ դատա-
սանակազրքը, որը երկրի գործող օրենքներից մեկն էր, այդ արար-
ներին համար մահապատիժ էր նախատեսում: «Ե՞նթ որ յափշտակ
զկոյս կամ զկին որ ոչ ունի այր, մահապարտ է: Թև և ոչ մերձեցա
ի նա. վասն յափշտակութեան որպէս շնացող զնա անանցեցք»,
կարգում ենք Դատաստանագրքի 62-րդ հոդվածում: Մահապատիժ
և ծանր մարմնական պատիժներ. ահա թի քրեա-իրավական ինչ
միջոցներ էին նախատեսված աղչկա կամ կնոջ անանգման, կամ
այդ միջոցով նրանց չեա կենակցելու զեպերում:

Պական անողոր հետ Մմբառ Սպարապետի Դատաստանա-
գրքի իրավանորմերը՝ 73-րդ և 83-րդ հոդվածները: Այդ հոդվածնե-

րի համաձայն կնոջ կամ աղբիկ անհանդուժ հավասարեցումը էր բռնարարության և մեղավորների նկատմամբ բնույթաբարձում էր կիրառել մարմնական պատիժներ սիմվոլիկ թախտի սկզբունքներ լիովին համապատասխան. «Եթե որ անօգնաչ այն՝ անդասը,—կարգում ենք դատաստանագրքի 83-րդ հոդվածում,— նա որդիքն բճեք լինեն. Այդ թէլ բռնվեն՝ նա գտանալին զձուքն և զձեռն կտրեն, որպէս յառաջ գրեցաք վասն կուտիցն (նկատի ունի դատաստանագրքի 73-րդ հոդվածը, որը նախատեսում էր աղբկան բռնարարելու հանցակազմը, Ա. Ք.), և մնայ աղբիկին ի ծնալագն և լեզարացն ի հրամանք»: Ահա թե որտեղ էր հասնում Կիրիլյան Հայաստանի պաշտոնական դատաստանագրքի խտտութիւնը՝ կնոջ կամ որ նույնն է աղբիկ անհանգաման և դրան առնչվող հանցագործությունների պատժելիության գործում:

Կնոջ առևանգումը և դրան առնչվող մյուս հանցագործությունները հին և միջնադարյան Հայաստանում պատժելի արարքներ էին ճիշտ այնպէս, ինչպէս զրանք պատժելի էին միջնադարյան Եվրոպայի սրբերն բոլոր երկիրներում: Ահա այն եզրակացությունը, որին մենք հանգում ենք համապատասխան օրենսդրությունները ուսումնասիրելուց, զրանք վերլուծութիւն և նկարակերպ հետո:

Ներանոսի հետ ամուսնաւար և ամուսնկապի հետ կենակցելը: Մեր հին օրենքներում, առանձնապէս Կանոնագրքում, մի քանի իրավանքումք կան, որոնցով, որպէս քրեական հանցագործություններ վճռական կերպով արգելւում են միմյանց հետ առնչվող երկու արարքներ՝ հեթանոսների հետ ամուսնանալը և մահմեդականների հետ կենակցելը: Սրանցից առաջինը՝ հեթանոսի հետ ամուսնանալը, նախատեսված էր ներքստ Հայրապետին վերադրվող կանոնները 13-րդ կանոնում, որը պատժի սպասուկերով արգելում էր հայ տղամարդուն հեթանոս, այսինքն ոչ քրիստոնյա կին առնել և հայ կնոջը՝ հեթանոս տղամարդու հետ ամուսնանալ: Մեղավորները պատժվում էին ապաշխարութիւնք և եկեղեցական-կրօնական հարկարարների այլ ձևերով: Կանոնի մեջ բառացի կերպով ասված էր. «Կանն որ գհնթանես կին առնէ, կամ լիիի առն, շար է, սասուանոց եթէ յանհաւատութեան կան և մնան. Եթե թողցէ կամ մեացի անհաւատն, ժր ամ ապաշխարեսցէ և զծնունդն ամիցէ ի հաւատառն: Նույն ոգով է հարցը դեռն Պարտուկի ժողովը: Վերջինիս ընդունած կանոններից 11-րդ կանոնը պատկերում է քահանաներին բարոզելու հայերին, որ հետո մնան հեթանոսների հետ կենակցելուց կամ նրանց հետ ամուսնանալուց, քանի որ այդ արարքներն ան-

քնական, անչափ ծանր հանցագործություններ են. «Քահանայք պատուր արասցեն արանց և կանանց և զտերեաց նոցա, զի շարասցեն ընդ հեթանոսի զուգութիւն, զի զուգութիւնդ այդ չէ ամուսնութիւն, այլ անօրէնութիւն և պիգծ անառակութիւն, զի զինչ բաժին կայ հաւատացիլոցն ընդ անհաւատին, զի այդ շար է, քան զընութիւն, և որ զարշաղոյն է, քան զընութիւն՝ անբանական յանցանք»: Իրավանքումք, ինչպէս տեսնում ենք, միաժամանակ դրսևորվում և հանդէս է գալիս իբրև բարոյական նորմ՝ հետապնդելով միևնույն նպատակը՝ արգելել հայերին ամուսնական կապերի մեջ մտնելու հեթանոսների կամ որ նույնն է ոչ-քրիստոնյաների հետ, լինեն արևելք թուրք, թուրք, թաթար թէ պարսիկ, սրբնույնն էլ: Դա՛վիթ Ալաւիկա որդու Կանոնների իրենց հերթին, խտիվ պատժում էին հայ կնոջը, որը հանցողում էր սյունկանայ մահմեդականի հետ և այն հայ տղամարդուն, որը մահմեդական կնոջը մտնում էր այդ նույն նպատակով: «Ընդ քորդի շնայ կին, սորմարին հանդերձ, թէ յամարութեամք՝ կրկին ապաշխարեսցէ զընութիւնն զսորձականն, ապա թէ անայցիելու գտեալ և երկրորմաք շարիւքն բռնադատել, կամ ագախին ի տեսնէլ իրմէլ նոյն և ծառայ, անպարտական են: Բայց վասն սրբութեան երեք ամ ապաշխարեսցեն: Բայց առն անկի տեսանի, քան կնոջ, զի նոցա հնար տեսանի զերծանելոյս: Այսպէս էր հարցը զրվում Ալաւիկա որդու Կանոնների 18-րդ կանոնում, և հարցի նման լուծումն իր զարաշրջանի տեսնական. հասարակական և բարոյական-քաղաքական հարաբերությունների ճիշտ ու տրամաբանական արդյունքն էր:

Այսանդ մեզ հետաքրքրող հարցի տեսակետից կարևոր է նաև այն, որ Ալաւիկա որդու Կանոնները իբրև ինքնուրույն հանցանկով պարտանկող արարք կորույց կերպով արգելում էին հայ մարդուն իր աղբկան կամավորությամբ ալլազում, այսինքն մահմեդականի կնութիւնն ստը: Գրանք էլ առավել արդելում էին նրան՝ երեսույնի վաճառել անհավատութիւն կամ սպականութիւն համար: Այդպիսի ծնողները նույնպէս ենթարկվում էին եկեղեցական-կանոնական ծանր պատժի, որն իր քնույթով փաստորեն քրեական պատժ էր: Նրանք նկզվում էին ցմահ և մահանալիս, նույնիսկ չէին հաղորդվում (կանոն 19-րդ):

Կնոջ անպատեն վարձազիմը տղամարդկանց կովի ժամանակ: Միշխար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերը արգելում են կնոջը միջամտել տղամարդկանց կովին այն պատճառաբանութիւնով, որ այդ միջամտությունը կարող է ծանր հետևանքներ թողնել, մասնավորապէս կարող է զործնական-բարոյական առու-

մով նպատել, որ կովոդներեց մեկը սպանի կամ խնդարգամի մյուս-
սին: Գեուև մովսրահական օրենքները նախատեսում էին նման կենոք
ենթարկել ծանր մարմնական պատժի՝ նրա ձեռքերը կտրել: Երկ-
րորդ օրինացում այն առթիվ ասած էր. «Երբ տղամարդիք իբր ար-
հեստ կովեն, և մեկի կինը մտենան իր մարդուն ազատելու նրան ծն-
ծողի ձեռքիցը, և ձեռքը երկարացնելով նրա ամոթոյիցը բռնէ, այն
մամանակ նրա ձեռքերը կտրես, և աչքը բնավ չյնայի» (ԻԾ
11—12):

Վկայակոչելով մովսրահական այս իրավանորմը, Մխիթար Գոշը
չի համաձայնվում նրա դատան սանկցիոնայի հետ և պարտավորեց-
նում է հանցագործի ձեռքերը կտրելու փոխարեն, նրան ենթարկել
զրամական տույժի այն ցուցարի շահով, ինչ օրենքները, այսինքն
իր Գատաստանագրքի երկրորդ մասի 9-րդ, 28-րդ, 30-րդ հոդված-
ները նախատեսում են որպես ձեռքերի չուրահատուկ կվիվլայնե-
տային արժեք. «և եթէ կոտիսին արք ընդ միմեանս և թահիկոյ ա-
ղազու կին միոյն բուսն հարկանէ զերկարեանց լաղթողին անոն,
բւտ օրինացն հատանել զգնու. այլ առ մեզ զդին ձեռինն
ապլ, որպէս ցուցնալ է իւրաքանչիւր զգալութեանց» (երկրորդ մաս,
հոդ. 88-րդ): Ընչպես տեսնում ենք այս հարցում նույնպես Գոշը
բռնում է մովսրահական խիստ օրենքները մեղմելու ուղին: Ոչ թե
ձեռքերը կտրել, այլ միայն զրամական տույժ նշանակել, միայն
նույնքան վերցնել կատարված հանցագործության համար, ահա թե
որն էր Գոշի՝ բւտ էություն խելացի ու նպատակահամար, իր օս-
մանակներին համապատասխան սկզբունքը:

Այլ ձևով է հարցը լուծվում Մեքատ Սպարապետի մոտ: Սպար-
ապետը գտնում է, որ նման դեպքերում կինը փաստորեն զորոժում է
որպես հանցակից. նա օգնում է իր ամուսնուն հակասկորդին ծն-
ծելու կամ սպանելու գործում, ուստի և պետք է ենթարկվի ավելի
խիստ պատժի՝ նրա ձեռքերը պետք է կտրվեն, ինչպես պահանջում
է մովսրահական օրենքը:

Լսենք Սպարապետին: «Եթէ երկու աչրիկ չիբար լինան անցել ի
կտի,— ասում է Սպարապետը,— ու կնիկ իշխել ի մեջ մտել, որ
մէկին ազնէ ու խաչապալաչ այնէ և պատճառաւ որ մէկն զմէկայն
ծնծէ կամ սպանել՝ նա կու հրամայէ արեւնքս որ ձեռն կտրվի այն
կնկանն, զի այն ում ուժն եղաւ ու ծնծուցաւ. նա ի յայն կնկնէն-
ելաւ ուժն ու ծնծելն, և ոչ ի խոտնէն» (Գատաստանագրք, հոդ. 76-
րդ): Որպես հանցակից կինը պետք է խիստ պատժի կրի, ահա կի-
ւիկյան Հալաստանի պաշտոնական Գատաստանագրքի պահանջը:

Այլ հանցագործություններ: Հին և միջնադարան հայկական
օրենքներում, վերևում բերված օրինադրություններից բացի, առան-
ձին հիշատակումներ կային նաև կույս աղչիկներին դալթակցեցնե-
լու դեպքում մեղավորներին պատասխանատվության կանչելու մա-
նել, կենդանիներին ավելորդ կերպով սանջահարելու համար մարդ-
կանց պատժելու մասին և այլն, որոնք նույնպես մարդկային ող-
ջախոհության և քրիստոնեական բարոյականության դեմ ուղղված
հանցագործություններ էին համարվում:

Իրր օրինակ մատնացույց անենք կենդանիներին սանջահա-
րելու դեպքը. կրոնական բարոյախոսությանը դատախաբակված հայ
քրիստոնյան չէր կարողանում հանցործի անմեղ կենդանուն ծն-
ծելը կամ խոցուտելը: Եվ ահա մենք տեսնում ենք, որ մամանային
զորոժող օրենքները հիմք ընդունելով այդ հանգամանքը, պահանջում
էին պատասխանատվության ենթարկել մեղավորներին և նախա-
տեսում էին որոշակի հանցավոր արարքերի: Եվ Մխիթար Գոշի Գա-
տաստանագրքի երկրորդ մասի 51-րդ հոդվածը, կլակետ ունենալով
մովսրահական օրենքը, պահանջում էր կենդանու սպանողին դատա-
պարտել՝ տիրոջը հատուցելու հենց նույնանման մի կենդանի: Բայց
այսպես հարցը զննելով, օրենքը միաժամանակ պահանջում էր դա-
տի ընթացքում պարզել, թե ո՞րն է սպանության բուն շարժառիթը
կամ պատճառը. սպանված կենդանու նկատմամբ զրևոտված վրե-
ժը, բերը թե մեկ այլ հանգամանք: «Եւ որ հարկանէ զանասուն,
անձն ընդ անձին տուգանեցի,— ասում է Գոշը վկայակոչելով
Ղևտացոցի ԻԳ 18-րդ իրավանորմը և շարունակում,— բւտ իւր
հայտին անտութեանց և ի մեզ կացցէ զատատանոց աստվածային:
Սակայն զատատան կոչի՝ իբր զի քննիցի մախանօք հարեալն և
պատահմամբ, և այլն այսպիսի»: Այսպիսով, մեղավորին կոնկրետ
տույժի, այլ կերպ ասած պատժի ենթարկելու համար պարտադիր
էր կենդանուն սպանելու կամ խոցուտելու շարժառիթի բացահայտու-
մը:

Կենդանիներին անմեղ տեղը սպանելու կամ ծնծելու համար
պատժեժներ էին նախատեսվում նաև կիլիկիայի օրենքներով: Մեք-
ատ Սպարապետի Գատաստանագրքի 160-րդ հոդվածում մեղ հե-
տաբերող հարցի մասին զրված է. «Զի... կու հրամայէ իրաւունքս,
որ թէ որ քշտէ անասնոյ նա իմանան բողոք զարկելոյն պատճառն,
և թէ ի վերայ ստի լինի և կամ վասն ռիակալութեան, և ի զուրս
ի վնասել՝ նա զարկ իբ քշտուն զոր ինք անմեղ անասնոյն
և կարի. սպա թէ վնաս լինի՝ նա ի վերայ զարկուցն վնասն կտրվի
և զատատանն. և թէ չըշտէ ու համբերէ և զայ ի զատաբտան նա

ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՃ ԿԱՏԱՐՎՈՂ
ՀԱՆՑԱԿՈՐԾՈՒՅՈՒՆՆԵՐ

զրք վճարն ըստ վնասուն արժեքն ստննու: Այնպէս է դուրս դա-
լիս, որ մարդը քրեական պատասխանատւության էր կանչւում,
նրք նա գործում էր զիտավորությամբ, իսկ երբ նա չէր միջամտում
գործին և կենդանին, այնուամենայնիւ, նյութական վնաս էր պատ-
ճառում իրեն, ապա նրա տերը պարտավորվում էր հատուցելու
պատճառած այդ նյութական վնասը:

Այստեղ կարևորն այն է, որ կենդանուն սպանողը, խոցողը
կամ ծեծողը դատական պատասխանատւության էր կանչվում ոչ
այնքան ուրիշին նյութական վնաս պատճառելու համար, որքան այն
բանի համար, որ նա խախտելով քրիստոնեական բարոյախոսու-
թյան սկզբունքը, սպանում էր անմեղ արարածի, տվյալ զեպքում՝
կենդանուն, կամ ֆիզիկական տանջանքներ էր պատճառում նրան:
Կենդանին ևս մի տեսակ հոգի և զգացողութիւն ունի, նրան սպա-
նելը, խոցելը կամ ծեծելը մեղք է ու հանցանք, ուրեմն և զրանում
մեղավորը պետք է պատժի աստվածային պատիժ-հատուցման
կանոնի համաձայն: Այս էր այն սկզբունքը, որով հիմնավորվում ու
արդարացւոյում էր պատիժների կիրառումը նման զեպքերում և նը-
ման անձանց նկատմամբ:

Հայտնի է նաև այն, որ կենդանիներին անհարկի տանջաճա-
րելը, խոցոտելը կամ սպանելը մարդու, առանձնապէս պատանիներ-
ի ու երիտասարդների մեջ կարող է առաջացնել և հաճախ էլ ա-
ռաջանում է անկարեկցութիւն, դժամութիւն, խելահեղութիւն,
նուրբիկ վայրագութիւն, մի խոսքով գանազան բացասական կըր-
քեր ու հակամենք: Հավանաբար այս հանգամանքը ևս հաշվի են
առել Միխիթար Գոշն ու Սմբատ Սպարապետը իրենց դատաստանա-
զրքերի վերոհիշյալ հոդվածները շարադրելիս և քննարկված իրա-
վանորմերը ստեղծելիս: Այդ իրավանորմերով նրանք իրենց առջև
դրուղանի նպատակ էին դնում. բարոյապէս ազդել մարդկանց վրա,
մեղմել ու վերացնել նրանց հոգում ու բնավորութիւն մեջ իրենց
արտահայտութիւնը գտնող մտի ու բացասական հակումները:

Անենից առաջ երկու խոսք այն մասին, թե ինչ պետք է հաս-
կանալ շքինվորականների կողմից կատարվող հանցագործութիւն-
ներն ստելով: Ելովք երկար ուսումնասիրելուց և համապատասխան
մասնագետների հետ խորհրդակցելուց հետո, որոշեցինք այդպէս
անվանել այն հանցագործութիւնները, որոնք նախատեսված լի-
նելով հին և միջնադարյան հայ սովորութային կամ գրավոր քրեա-
կան օրենքներով ու կատարվելով զինվորականների կողմից, վերջին
հաշվով ուղղվում էին երկրի զինված ուժերի, այդ թվում աշխար-
հազարերի՝ որպէս զորական միավորումների մարտունակութիւն,
զրանցում սամանկած կարգապահութիւն, այլև երկրի պաշտպա-
նունակութիւն շահերի զմ առհասարակ: Այդ նշանակում է այս
զխում մտցվել են մի կողմից ժամանակակից տերմինաբանութիւնով
արտահայտված զինվորական հանցագործութիւնները և մյուս կող-
մից՝ նույն զինվորականների կողմից կատարվող ընդհանուր քրեա-
կան հանցագործութիւնները:

Ինչպէս մյուս բոլոր հանցագործութիւնները, այնպէս էլ հան-
ցագործութիւնների վերոհիշյալ խմբի մեջ մտնող զինվորական
հանցագործութիւնները կոնկրետ պատմական բնույթ ունեն: Ա-
վելի որոշակի ասած, այդ հանցագործութիւնների, ուրեմն և զրանց
կատարումը արդելող ու պատժելի հայտարարող սովորութային ու
գրավոր օրենքների գոյութիւնը պայմանավորված է զասակարգա-
յին հասարակութիւն գոյութիւնով՝ հազարամյակներ առաջ ստեղծ-
ված բանակի, սայիքն զինված ուժերի գոյութիւնով: Զին-
ված ուժերն էլ իրենց հերթին որպէս պատերազմի գործիք կազմա-
վորվել ու զարգացել են պատմական այն ժամանակներում, երբ

Հասարակությունը երկփեղկվել է չակամարտ դասակարգերի ու առաջացել են պետություններ:

Առաջին դասակարգային հասարակության, այսինքն ստրկատիրական հասարակության կազմավորմամբ միայն նրանք են կազմակերպվել, ստեղծվեցին զինված ուժերը՝ ժամանակակից հասկացողությամբ: Դրանից հետո արտադրողական ուժերի զարգացման և արտադրական հարաբերությունների մեջ կատարվող փոփոխություններին զուգընթաց փոխվեցին պատերազմ վարելու բնույթը, տեխնիկան ու եղանակները, և զբա հետ միասին փոխվեցին բանակի կամ զինված ուժերի կազմավորման ու կազմակերպման ձևերը: Ստրկատիրական պետություններին և վաղ ֆեոդալիզմի շրջանին հատուկ աշխարհազորին ու հիմնական բանակներին փոխարինելու նկատ դարգացած ֆեոդալիզմի զարաշրջանին համապատասխանող հավաքագրվող կամ վարձու զորքերից կազմվող բանակները, իսկ վերջիններս էլ ժամանակի ընթացքում իրենց սեղը դիշեցին ներկայիս հասկացողությամբ կազմակերպված բանակներին, որոնց գոյություն հիմքը, և՛ ին անտեսենք ընչիև բացառությունները, հանդիսանում է համընդհանուր զինվորական պարհակը, այն է պետության քաղաքացիների կամ հպատակների պարտադիր զինվորական ծառայությունը:

Մարզու կողմից մարզու շահագործման վրա հիմնված հասարակությունների մեջ, սկսած ստրկատիրական հասարակությունից և վերաջրած բուրժուական հասարակությունով, կազմակերպված զինված ուժերն ու բանակները ծառայել են շահագործող դասակարգերի ու դասերի պետականության ամրապնդման, ճնշված ու շահագործվող դասակարգերի ու հասարակության մյուս խավերի զոսակարգային-քաղաքական զիմադրության ճնշման գործին, զավթողական կամ նվաճողական արտաքին քաղաքականության իրականացման ու նույնարտվանդակ պատերազմներ վարելու ևև ու զմնդակ գործին:

Այդպիսի զինված ուժեր կամ բանակներ ունեցել են հին Ագրիպտոսը, Ասորեստանը, Բաբելոնը, Հռոմը, Պարսկաստանը, Բյուզանդիան, վաղ ֆեոդալիզմի և զարգացած ֆեոդալիզմի շրջանի անտիր բոլոր ֆեոդալական պետությունները: Նման զինված ուժեր ու բանակներ կազմավորվել են նաև հին ու միջնադարյան Հայաստանում այն ժամանակ, երբ նրկիքը քաղաքականապես անկայիս ու ինքուրույն է եղել: Այսպես, հայերը զինված ուժեր ու բանակ ունեցել են

Տիգրան Մեծի օրոք, Արշակունիների թագավորության ժամանակներում, Բաբարտունյաց պետության մեջ և Կիրիկյան Հայաստանում:

Եահագործողական պետություններում երկրի պաշտպանության բնագավառում կատարվող հանցագործությունները և այդ հանցագործությունները պատժող սովորության ու զբավոր օրենքները, ինչպես անարկիցիներ վերևում, պատմականորեն պայմանավորված են եղել իրենց գոյության հիմքերով՝ բանակով ու զինված ուժերով: Այդ հանցագործությունները հետապնդվել ու պատժվել են կամ սովորության պատժական օրենքներով և կամ զբավոր քրեական օրենքներով: Սովորության օրենքներն իրենց բովանդակությամբ անողոր են եղել և գործիչ են անհամեմատ վաղ ժամանակներում, երբ նշված արարքներ նախատեսող զբավոր օրենքներ կամ շկային, կամ համարյա չկային, իսկ նույն հարցին վերաբերող զբավոր օրենքներն ավելի ուշ ժամանակների ծնունդ են:

Վաղ ժամանակներում բոլոր պետություններում էլ զինվորականների կողմից իրենց ծառայական պարտականությունների կատարման կապակցությամբ զբանործված վախկոտությունը, զբաժասից կատարվող փախուստը, թշնամուն զերի հանձնվելը և այլ նման հանցագործություններն յուրայինների մեջ միատեսակ առևտություն ու արհամարհանք էին առաջ բերում: Բացի այդ, նման արարքների համար մեղավորները սովորության իրավունքի ուժով դատապարտվում էին մահապատժի, տաժանակրության, ծանրացույն մաքմանական պատիժների, խարանարոշման կամ լավագուշի պայսում ստրկացում էին: Այդպես էր գրությունը Ագրիպտոսում, Ասորեստանում, Բաբելոնում, Պարսկաստանում, Հռոմում, Բյուզանդիայում, վաղ և միջին ֆեոդալիզմի շրջանի ֆեոդալական բոլոր պետություններում: Դրանք թվում էին Հայաստանը բացառությամբ չէր կազմում:

Պատահական չի կարելի համարել այն հանգամանքը, որ Հայաստանի զարավոր հարևան Պարսկաստանի իրավաբանական սովորությունները համաձայն վախկոտ և անհամարձակ ճանաչված զինվորները, ինչպես այդ վկայում են պարսիկ, հայ և օտար պատմագիրները, մահապատժի էին դատապարտվում: Պատահական էլ և կան, որ հայոց զորավար Վարդան Մամիկոնյանը Ավարայրի ճակատամարտն սկսելուց թիշ առաջ հայոց զորքին ուղղված իր ոգենշնդոց ելույթում, ըստ Աղիշի հաղորդման, ակնարկելով ըստ երկույթիին հայերի սովորության օրենքները, խոսում էր այն մասին, որ իր զլխավորությանը հայերի վարած բոլոր պատերազմների ժամանակ զինվորականներից ով որ փախչում էր, վատ անում

էր ձեռք բերում աշխարհում թագաւորից անտղորմ մահ էր ստանում, այսինքն կատարված հանցագործութիւնն համար մահվան էր դատապարտվում:

Այսպէս էր սկզբնական շրջանում. զինվորական զործի բնագավառում զինվորականների հանցավոր արարքները պատժվում էին սովորութային օրենքներով, այսինքն զրի շառված, քայց դարերի ընթացքում սովորույթի՝ փաստորեն սրբագործված իրավանորոշումը:

Քայց զնալով սովորութային օրենքները փոխարինվում են գրավոր օրենքներով, Զինվորականների կողմից կատարվող հանցագործութիւնները և այլ թվում հատկապէս զինվորական հանցագործութիւնները պատժելու նկատառումներով հրատարակվում են հատուկ քրեա-իրավական ակտեր: Գրավոր այլ օրենքներից մեզ համար առանձնապէս կարևոր ու հետաքրքիր են Հռոմի պատմութեան կայսրութեան շրջանում մշակված օրենքներն ու կանոնները, որոնք սխտեմաբարձ ևնով հասել են մեր օրերը: Գրանք մեզ համար կարևոր ու հետաքրքիր են, որովհետև, ինչպէս Տեոտ կոնսենսը, որոշակի նշանակութիւն են ունեցել Կիլիկիան Հայաստանի զինվորական քրեական օրենսդրութեան ստեղծման գործում, հանդիսանալով սրա հիմնական աղբյուրը: Այլ օրենքները վերաբերում են մեր թվարկութեան երկրորդ և երրորդ դարերին: Գրանք նախագծերի հեղինակը, ինչպէս հաղորդում են արչուրները, հանդիսացել է Հռոմի անվանի իրավաբաններից մեկը՝ Արրի Մենանդրը: Նրա սխալմական գործի մասին գրում, որն ըստ երևույթին հաստատվել ու երբևէ օրենքի ուժ է ունեցել, գրաված են եղել այն կանոններն ու օրենքները, որոնց բազմաթիվ հատվածները մենք տեսնում ենք Գիբսոսի 49-րդ գրքի 16-րդ տխուրի ֆրագմենտներում: Այսպէս, ինչպէս նաև նույն Գիբսոսի 48-րդ գրքի մի շարք ֆրագմենտների մեջ մենք հանդիպում ենք զինվորականների կողմից կատարվող հանցագործութիւնների, առանձնապէս զինվորական հանցագործութիւնների պատժելութեան վերաբերյալ բավականին հաջող, իրավաբանական բարձր տեխնիկալով կազմված օրենքների ու կանոնների մի ամբողջականութեան: Գրանք իրենց բավանդակութեամբ այնքան կատարյալ ու ընդհանրացված էին, որ Հռոմի պատմութեան հետագա ժամանակներում անպաժ բավարարում էին երկրի զինված ուժերի կողման պահանջներին ու հավանաբար այդ պատճառով էլ որևէ էական փոփոխումներ ու փոփոխումներ չենթարկվեցին: Հետագա ժամանակներում Բյուզանդիայում գործում էին Մենանդրի ժամանակաշրջանի հռոմեական զինվորական կանոնները:

Նենց այս օրենքները էլ Բյուզանդիան կողմից կացման կարգով մտցրեց իր օրենսգրութեան մեջ, որոնք հետագայում, ժամանակի ընթացքում իրենց ազդեցութեան ունեցան Բյուզանդիային հարեւան մի շարք սուլթանի պետութիւնների օրենսգրութեաններով վրա: Բյուզանդիային հարևան երկրների թվում էր նաև պատմական Կիլիկիան Հայաստանը, որն ի տարբերութեան Մեծ Հայքի, կազմել ու կիրառութեան մեջ էր զրել զինվորականների կողմից կատարվող հանցագործութիւնները նախատեսող մի ամբողջական ու համապարփակ օրենսդրական-իրավաբանական ակտ: Դա ներսեւ կամ բրտուցուց զինվորական քրեական օրենք էր, որի բովանդակութեան վրա նկատվում է հռոմեական (ուրմն և բյուզանդական) համապատասխան օրենսդրութեան, առաջին հերթին Գիբսոսի 48-րդ և մանավանդ 49-րդ գրքերի մի շարք ֆրագմենտների որոշ

ու օրենքները, այսինքն կայսերական Հռոմի զինվորական քրեական օրենքները: Գրանք Հուստինիանոսի կողմից կատարներն իրենց հատուկ ննով վերանորոգել կամ, ինչպէս երբեմն ստում են, թարմացրել էին, այսինքն համարյա առանց փոփոխութեան մտցրել էին Հուստինիանոսի ակտեր կողմ օրենսդրութեան մեջ:

Ճշմարտութեան զեմ մեղանշած չլինելու համար պետք է տեսնել, որ պատմական այն ժամանակներում, երբ Բյուզանդիան նախապատրաստվում էր մահու ու կենաց պատերազմ մղելու իրեն շրջապատող թշնամիների՝ պարսիկների, արաբների, բուլղարների, մոնղոլների, թաթարների և թուրքերի զեմ, պարտական իշխանութեան զեմ իրենց ձեռքը կենսապահպան շահագործող սոցիալական խավերը ստեղծեցին հզոր զինված ուժեր և կազմեցին ու հաստատեցին զինվորական ու ժովային համապատասխան կանոնադրեր, որոնք սպասելի կերպով էին նախատեսում զինվորական հանցագործութիւնները: Այդ կանոնադրերը վերաբերելով զորամասերի կառուցվածքին, ծառայութեան և ենթակայութեան կարգին, զինվորականների պարտականութիւններին ու իրավունքներին, նախատորմից շարժման կարգին, նրա մեջ մտնող նավերի ծառայողների իրավունքներին ու պարտականութիւններին, նրանց վարքագծին և ալլն, համարյա թե չէին շոշափում զինվորականների կատարած ծառայական կամ մյուս քրեական հանցագործութիւնների զեմ տարվող դատական-իրավական սյայարի հարցերը: Այդ հարցերը կարգավորվում էին Հուստինիանոսի օրենսգրութեան մեջ մտած կայսերական Հռոմի այն զինվորական քրեական օրենքներով, որոնց մասին ակնարկվեց վերևում, այսինքն՝ Արրի Մենանդրի ակտեւնով մայտին քրեական օրենքներով:

Նենց այս օրենքները էլ Բյուզանդիան կողմից կացման կարգով մտցրեց իր օրենսգրութեան մեջ, որոնք հետագայում, ժամանակի ընթացքում իրենց ազդեցութեան ունեցան Բյուզանդիային հարեւան մի շարք սուլթանի պետութիւնների օրենսգրութեաններով վրա: Բյուզանդիային հարևան երկրների թվում էր նաև պատմական Կիլիկիան Հայաստանը, որն ի տարբերութեան Մեծ Հայքի, կազմել ու կիրառութեան մեջ էր զրել զինվորականների կողմից կատարվող հանցագործութիւնները նախատեսող մի ամբողջական ու համապարփակ օրենսդրական-իրավաբանական ակտ: Դա ներսեւ կամ բրտուցուց զինվորական քրեական օրենք էր, որի բովանդակութեան վրա նկատվում է հռոմեական (ուրմն և բյուզանդական) համապատասխան օրենսդրութեան, առաջին հերթին Գիբսոսի 48-րդ և մանավանդ 49-րդ գրքերի մի շարք ֆրագմենտների որոշ

Մ 49.16): Այսպիսով, հրամանի կամ հանձնարարության պարզ շփատարումը, անկասկածանաբանորեն, դիտվում էր իբրև ավարտված հանցագործություն և պատժվում էր: Այստեղ օրենքը հետևողանքների բնույթը, բառ երևույթի, համարում էր պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանք, բայց ոչ հանցակազմի առկայության նախապայման, ինչպես այդ կարող է թվալ աստիճանի հայացքից:

Դատաբանության հետ առնչվում էր մեկ այլ հանցագործություն, այսպես կոչված ինքնասպանության փորձը՝ զինվորական ծառայությունից հեռանալու համար: Այս հանցագործությունը որևէ նրբամանություն կամ առնչություն չունի քնդհանուր քրեական հանցագործությունների հետ: Այստեղ, համանաբար, օրենսգրքը նկատի ունի, երբ զինվորականը ինքնասպանության է դիմում, ապա նրա մոտ բացակայում են զինվորականի համար անհրաժեշտ արհմիջոցներ ու կորովը: Իրա համար էլ հռոմեական կայսրերն էլ դրանց հեռանելով բյուզանդական կառավարողները, ի ջուզ մյուս զինվորականների, ինքնասպանության փորձ կատարող ռազմիկներին նկատմամբ խիստ պատժական միջոցներ էին կիրառում: Ահա թե այդ մասին ինչ էր սովոր Պիզիստի 48-րդ գրքի 19-րդ ֆրագմենտում. «Այն ռազմիկը, որն իր զեն ձեռք է բարձրացնում և այդ դորքը մինչև վերջը չի հասցնում, պետք է պատժվի մահապատժով: Եթե նա զա կատարում է անտանելի ցավի կամ հիվանդության կամ այլ վնաս հետևանքով, ապա պետք է նրանբարձրով հեռացվի զինվորական ծառայությունից» (I 38, § 12, Մ 48.19):

Պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություններից օրենքը նախատեսում էր պետին, այսինքն հրամանատարին զործողությանը հասցնող վիրավորանքի հանցակազմը. ով ձեռք է բարձրացնում պետի վրա, նա պետք է պատժվի մահապատժով: Հանցագործության հանդուստից ծանրանում է նախելով պետու օրոճանապատվության անհրաժեշտ, համարյա բառացի կերպով ասված էր Պիզիստում (I 6, § 1, Մ 48.16): Ինչ վերաբերում է զինվորական զույգային հանցագործություններին, ապա հռոմեա-բյուզանդական օրենքները նախատեսում էին զինվորական զույգի, առանձնապես զենքի վաճառքը, զենքի կրկնաօր և այլն: Այն ռազմիկը, որը պատերազմի ժամանակ կորցնում կամ վաճառում էր իր սեփական զենքը, պատժվում էր միայն մեկ պատժով՝ մահապատժով: Պատասխանատվությունը լրջորեն մեղմացնող հանգամանքների առկայության զեպքում միայն թուլլատրվում էր դիմելու աստիճանազրկման կամ պաշտոնազրկման, այ-

սինքն հին հռոմեացու կամ բյուզանդացու համար անվանարկող պատժաձևերի կիրառման (I 13, § 3, Մ 49.16): Այսպես էին պատժվում զինվորական հանցագործությունները ստրկատիրական և բյուզանդական կայսրության քրեական օրենսդրով:

Այսպիսով, զինվորական հանցագործություններ կատարող անձանց նկատմամբ կիրառվում էին քնդհանուր պատժաձևակները, դրանց թվում մահապատժն ու մարմնական պատիժները: Հանցագործ զինվորականները ենթարկվում էին նաև սքստարքանիցման, նրանց նկատմամբ չէին կիրառվում մահապատժի որոշ ձևեր, դրանց թվում կասազան ու վայրի զազանների հշրոմանք հանձնելը, ինչպես նաև տաճանակության մի տեսակը՝ հանքահորեում շղթայակապ, որպես ստրկի աշխատող (I 3, § 10, Մ 49.16): Եղված պատիժները, որպես կանոն համարվում էին զինվորական ծառայություն կրողի արժանապատվության անհամապատասխան պատիժներ և զա հավանաբար այն պատճառով, որ զինվորագործական կանչում էին հիմնականում միայն իշխող սոցիալական խավերից սերվածներին, որոնց նկատմամբ անլանարկող պատիժներ, ինչպես հայտնի է, քնդհանրապես չէին կիրառվում: Այստեղ, ինչպես տեսանք, բացառություն էին կազմում փախած, այսինքն թշնամու կողմն անցած զինվորականները, որոնք կարող էին դատապարտվել կախաղանի կամ վայրի զազանների հշրոմանք հանձնելու: Պատերազմի վետերանների և զրանց զազանները նկատմամբ, անկասկածաբան սոցիալական մաղուսից, եղված պատիժներից բացի, չէին կիրառվում նաև զանակման ու մարակահատումը (I 3, § 2, Մ 49.18):

Քնդհանուր քրեական պատիժներից բացի, զինվորականների նկատմամբ կիրառվում էին նաև հատուկ զինվորական պատիժներ՝ վերջիններս կիրառվում էին, երբ կատարված հանցագործությունները համեմատաբար թեթև բնույթ ունեին և ծանր հետևանքներ չէին առաջացնում: Հատուկ զինվորական պատիժներից պետք է հիշատակել աստիճանազրկումը կամ պաշտոնազրկումը, անարգական, նշամակելի ձևով մարզում զինվորական ծառայությունից ազատելը և այլն (I 3, § 1, Մ 49.16): Երբևմե միևնույն հանցավոր արարքի համար զինվորականները ենթարկվում էին այլ պատիժների, իսկ քաղաքացիական անձինք կամ բյուրովին չէին պատժվում կամ ենթարկվում էին միանգամայն այլ պատիժների: Գեզիստի 48-րդ գրքում այս կապակցությամբ ասված էր հետևյալը. «Քաղաքացիական անձանց միջոցով կատարվող մի քանի դործողություններ որևէ պատիժ չեն հետևեցնում կամ առաջացնում են

Քիճի պատիժ, իսկ նրան հրատարակում են զինվորականները, ապա այդ գործողություններն ավելի խիստ պատիժ են առաջաշնուտ, Ե՞թե զինվորականն զբաղվում է մյուսներին զվարճություն վատանող արվեստով, ապա նա պատժվում է մահապատժով (1 14, Ը 48-49)։

Իրավունքի պատմարանները մեկնաբանում են, որ ուրիշներին զվարճություն կամ բավականություն, այսինքն հաճույք պատճառող արվեստ անելով օրենքը հասկանում էր, օրինակ, այն զնգերը, երբ հասարակության մեջ զինվորականը հանդես էր գալիս իբրև պարող, կամ իբրև ծաղրածու, կամ կատարում էր մեջբանողի գանազան գործողություններ, կամ երգում էր զվարճալի, անցնենդեր կրքեր և այլն։ Հռոմեացի և բյուզանդացի տիրապետողը պահանջում էր, որ իր երկրի զինվորականը լինի զուսպ, զմեղմ և զբանտվ անզամ ցույց տա անողոր ասզմիկ-Նվաճողի իր աճավոր կոչումը⁸⁵։

Սա էր Հռոմեական կայսրության ժամանակներում գործող և Արբի Մենանդրի անունով հայտնի զինվորական քրեական օրենսգրքի մասնակցությունը, որը, ինչպես ասացինք, առանց էական փոփոխությունների ու լրացումների, որպես գործող օրենսմասով բյուզանդական համապատասխան օրենսգրքության մեջ, սկսած Հուստինիանոսի ժամանակներից և որից XII դարում օգտվեց մեր մեծ մտածող ու պետական գործիչ Ներսես Լամբրոնացին, Կիլիկյան Հայաստանի զինված ուժերի համար ինքնուրույն զինվորական քրեական օրենք կամ, զույգ ավելի ճիշտ կլինի ասել, օրենսգրքություն կազմելու ժամանակի։

Հայ իրավունքի և բանասիրության պատմության մեջ ամբողջ 57 հոդվածներից բաղկացած այդ կարևոր իրավական ակտը պարզապես անվանվել է «Լամբրոնացու զինվորական օրենք» և նրա ուսումնասիրության գործը բարձիթող է արվել։ Այն ոչ միայն հայ իրավունքի պատմության, այլև հայոց ընդհանուր պատմության, մասնավոր էր կրկին քաղաքական պատմության համար վերին աստիճանի մի կարևոր փաստաթուղթ է, որը, ցավոք, սա այսօր բոլորովին չի հետազոտվել։ Մենք այստեղ զրա մասին կիսուներ միայն այն շարժով, ինչ շարժով այն հանդես է գալիս իբրև հայ քրեական իրավունքի որոշակի բնագավառին վերաբերող պատմա-իրավաբանական հուշարձան։

Այդ հուշարձանի հերթնակը, ինչպես ասել ենք, հանդիսացավ

Կիլիկիայի հայ թագավորության ամենամեծ մտածողներից և պետական-քաղաքական իմաստուն գործիչներից մեկը՝ Ներսես Լամբրոնացին, նա թեև ժամանակի անվանի հոգեբանականները էր և ուներ եպիսկոպոսի հոգևոր աստիճան, սակայն իր ամբողջ գիտակցական կյանքը, փաստորեն, նվիրաբերեց աշխարհիկ կյանքին, հայ գիտության և կուլտուրայի հարստացման ազնիվ գործին։ Նրա բեղմնավոր գրչին են պատկանում տոմարեն ու մարդկազմությանը, հայ և անգամ ուրիշ ազգերի պատմությանը վերաբերող ստեղծագործություններ։ Լինելով Տարսուսի, այսինքն Կիլիկյան Հայաստանի մեծ քաղաքներից մեկի եպիսկոպոսը, նա ամենախրատ կապերի մեջ էր գտնվում հայոց արքունիի հետ։ Արքունիքը նրան էր հանձնարարում հաճախ կարևոր պետական գործեր և այդ թվում մանավանդ օրենսդրական գանազան ակտերի նախագործը կազմելու աշխատանքները։ Այդ պատճառով էլ մեզ համար բոլորովին զարմանալի չէ, որ Լամբրոնացին հանդիսացավ Ասորահռոմեական դատաստանագրքի հալկական տարբերակի հեղինակի նշված դատաստանագիրքը ինքնուրույն մի օրենսդրական ակտ էր և գործում էր բովանդակ Կիլիկյան Հայաստանում իբրև այդ երկրի պաշտոնական քաղաքացիական օրենսգրքերից մեկը։ Մեզ համար զարմանալի չէ և այն, որ նրան հանձնարարվեց պետության զինված ուժերի կարիքների համար քրեական օրենքների կազմելու պատասխանատու դարձր, որը նույնպես նրա կողմից փայլուն կերպով իրականացվեց։ Ստեղծվեց հայ իրավունքի հետաքրքիր ու բովանդակալից հուշարձաններից մեկը՝ Կիլիկիայի հայկական պետության զինվորական քրեական օրենքների իր ժամանակավա պայմաններում անօրինակ ըստով հարուստ ժողովածուն։ Հինգերորդական այդ օրենքների ժողովածուն հրատարակվեց XII դարի վերջում, հեղինակի մահվանից թիշ առաջ, ամենայն հավանականությամբ 1196 կամ 1197 թթ.։

Լամբրոնացին այդ օրենսդրական-իրավաբանական հուշարձանն ստեղծեց, օգտագործելով իր ժամանակաշրջանի Հայաստանի հարեական պետությունների համապատասխան օրենքները։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օգտագործված օրենքների թվում հիմնական Արբի Մենանդրի անունով հայտնի Հռոմեական զինվորական օրենքն էր, որն, ինչպես արդեն ակնորկվեց վերևում, մտել էր բյուզանդական օրենսգրքության մեջ իբրև կայսրության գործող օրենքներից մեկը։ Բայց այստեղ կարևոր հետևյալ հարցն է. այդ հանգամանքը՝ օտար օրենքների ստիկական օգտագործմամբ ավյալ երկրի համար ինքնուրույն, սեփական օրենսդրական ակտեր կազ-

⁸⁵ Հմմտ. Նույն աշխատությունը, էջ 183—186։

մելու փաստը, նսեմացնու մ է արդյոք դրանց կառնողներին աշխատանքի նշանակությունը:

Այս հարցին պետք է տալ վճռական պատասխան. ո՞չ, չի նսեմացնում: Իրավունքի և այդ իվումը քրեական իրավունքի համարժեքությամբ հարձակումը մեզ նույնիսկ XIX և XX դարերում կարելի է մատնացույց անել հարյուրավոր դեպքեր, երբ այս կամ այն երկրում բնդուվել են օրենքներ ու օրենսդրեր, որոնց նորմերից շատերը, համախանգամ այդ օրենքներին ու օրենսդրերին ամբողջական տեսքերը բառացի կերպով վերարտադրել են կառնողների կողմից օգտագործվող օրենսդրական ակտերի բովանդակությունը, և ոչ ոք չի էլ փորձել նսեմացնել այդ նոր ակտերի հեղինակներին աշխատանքը: Եվ մենք բացարձակապես անարդարացի կլինենք, եթե փորձենք մազաչափ անզամ նսեմացնել ներսևս կամրոնացու կատարած գործը այն հիմնավորմամբ, թե նա Կիլիկյան Հայաստանի բազարացիական կամ զինվորական օրենսդրությունը կազմելիս օգտագործել է նաև այլապիսի, այդ իվումը հռոմեական-քրեական դրանց համապատասխան օրենսդրական ակտերը:

Պետություն և իրավունքի գիտության մարքսիստական-լենինյան տեսությունը պահանջում է այլ կերպ զննել հարցը. երբ տվյալ երկրում տիրապետող դասակարգերն ու դասերը հիմնադրելով իրենց սուվերեն պետությունը, ստեղծում են սեփական օրենսդրական ակտեր՝ օգտագործելով օտար ծագում ունեցող օրենսդրական ակտերը, ապա իրենց երկրի համար ստեղծված այդ նոր օրենքները, անկախ դրանց ծավալից, ընույնիսկ ու բովանդակությունից, ոչ թե օտար օրենքների պարզ կրկնողություններ են լինում, այլ նախնան են գալիս իրեն նոր, սուվերեն պետության բոլորովին ինքնուրույն օրենսդրական ակտեր: Այսպես, օրինակ, բարեխոսական օրենքները հիմք են հանդիսացել մովսիսական օրենքների համար, մովսիսական օրենքներն էլ իրենց հերթին ազդել են հռոմեական օրենսդրության և սրա միջոցով՝ բյուզանդական օրենսդրության վրա, նսպոլեոնի քրեական և քաղաքացիական օրենսդրերի ոգով կերտվելիցն եվրոպական, նույնիսկ ասիական որոշ պետություններին քրեական և քաղաքացիական օրենսդրերը, նախահեղափոխական Ռուսաստանի քրեա-իրավական ակտերը հիմք ու աղբյուր՝ հանդիսանալով պանական կենսատանի և նախկին բուրժուական հանրապետություններին՝ կառավարի, կիտվալի և էստոնիայի քրեական օրենսդրերի համար և այլն: Ստեղծված բոլոր օրենքներն էլ նոր օրենսդրական ակտեր չեն, որոնց մեջ գրանդում էր տվյալ երկրի,

իրեն ինքնուրույն պետականություն ունեցող երկրի, սուվերենությունը:

Այսպես էր դրոշմը նաև հին և միջնադարյան Հայաստանում: Կառնածից դուրս է, որ հայոց հակայածովալ կանոնադրերը, Գավիթ կելվկա որդու Կանոնագրությունը, Մխիթար Գոռի Գատաստանագրերը, Սմբատ Սպարապետի Գատաստանագրերը այսպես կոչված Ասորա-հռոմեական դատաստանագրերի հայկական տարբերակը, Կիլիկյան Հայաստանի զինվորական քրեական օրենքը և այլ օրենսդրական իրավաբանական հուշարձանները կազմվել են ամբողջովին կամ մասամբ օգտագործվելով այլ պետությունների օրենսդրությունները և զանազան ժողովուրդների իրավաբանական սովորույթները: Բայց որովհետև դրանց ատաղձը հանդիսացել է հայ իրավունքը և նման ակտերը ուժի մեջ մտցվել ու կիրառվել են բուն Հայաստանում, այդ պատճառով էլ դրանք օրենսդրական-իրավաբանական ինքնուրույն հայկական ակտեր են և փաստորեն ու իրավաբանորեն օրենսդրական վավերացում ունեն: Օրենսդրել էլ դրանք ուժի մեջ մտցրել և որպես կանոն ապահովել էլ դրանց կիրառումը:

Դառնալով Կիլիկյան Հայաստանի ներսևս կամրոնացու տեսանով հայտնի զինվորական օրենսդրության իրավանորմերի իրավաբանական-գիտական վերլուծությանը, պետք է ամենից առաջ նկատենք, որ այդ ակտը ժամանակին հաստատվել է Կիլիկիայի պետության օրենսդիր օրգանների կամ բարձր պաշտոնատար անձանց կողմից, այլ կերպ ասած, այն իր օրենսդրական վավերացում է առաջնել: Պատահական չի կարելի համարել այն, որ հենց ինքն՝ ներսևս կամրոնացին, այդ ակտի վերջում ավելացնում է. «ներսևս ատասպետ թարգմանիչ և օրենսդրիչ զինուորական սահմանագրութեանն զգուշացուցանելով սուվա զգորս»: Որքան այդ օրենսդրությունը համապատասխան կարգով հաստատված կամ հավանությունը քասացած չլիներ, կամրոնացին էն չէր կարող, պարզապես իրեն իրավունք չէր վերապահի սակ. «...զգուշացուցանեն սուվա զգորս»⁹, Բացի այդ, այդ ակտի մեկից ավելի ձևագիր օրինակների գոլությունը նույնպես ապացուցում է, որ այն նախապես սանկցիա քաստալովով պատմական Կիլիկյան Հայաստանում գործող օրենքներից մեկն է հանդիսացել:

Պետք է անվերապահորեն համաձայնվել Գ. Հակոբյանի հետ,

9 Հմմտ. Ղ. Ալիշան, Սիտան, էջ 91, ծանոթագրություն 7 և 8, Կ. Պատմալուսն, Զինվորական օրենք ներսևսի կամրոնացուց (Երևանուք, 1902 թ., նոյեմբեր, Ս 11):

որն իր «Ներսես Լամբրոնացի» ծանրակշիռ մենագրություն մեջ այն միտքն է կարգաչնում, թե Լամբրոնացու թարգմանած զինվորական օրենքները Կիլիկիայի Հայկական պետության և ժամանակի պահանջով էին կյանքի կոչվել ու իբրև ազգպիտիներ մեծ նշանակություն ունեցան Կիլիկյան Հայաստանում զինվորական կարգապահության բարձրացման ու ռազմական զործի կազմակերպման խնդրում, թե զրանք իրենց ժամանակին ունեցել են Հայրենասիրական նշանակություն, իսկ մեր օրերի համար զուրկ չեն պատմական և իրավագիտական արժեքից⁹⁰:

Ներսես Լամբրոնացու վերահիշյալ զինվորական օրենսդրությունը, ինչպես արդեն ասել ենք, բաղկացած էր 57 հոդվածներից: Դրանք զինվորական զործի ու զինվորական ծառայության հետ սերտորեն առնչվող, տարբեր հարցեր կարգավորող իրավանորմեր էին, որոնց կարելի է բաժանել երեք խմբի. ա) հոդվածներ, որոնք կարգավորում էին զինվորական ծառայության ու նեթակառուցման կարգը և վերաբերում էին զորամասերի կառուցվածքին, զինվորականների իրավունքներին ու պարտականություններին և այլն, բ) հոդվածներ, որոնք նախատեսում էին զինվորական ծառայողների կողմից կատարվող զինվորական հանցագործությունները այս բառի արդի, այսինքն ժամանակակից իմաստով և դ) հոդվածներ, որոնք նախատեսում էին նույն անձանց կողմից կատարվող ընդհանուր քրեական հանցագործությունները: Առաջին խմբի մեջ մտնող թվով չէր հոդվածների Լուսիյունը տվյալ զեպարտմեզ յի հետարբբրում. զրանք մեր հետազոտության բնագավառից ու սահմաններից դուրս են, ինչ վերաբերում է երկրորդ և երրորդ խմբերի հոդվածներին, այդ զրանք անմիջականորեն վերաբերում են մեր նյութին, ուստի զրանց մասին անհրաժեշտ ենք համարում հանգամանորեն խոսել:

I. ԶՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽՏՆՈՂ ՕՐԵՆԵՐՆԵՐ (ՀՈԴՎԱԾՆԵՐ)

Նշված հոդվածները նախատեսում են զինվորական ծառայություն կրող անձանց այն հանցագործությունները, որոնք ուղղվում էին երկրի զինված ուժերի սխտանում սահմանված ծառայություն:

⁹⁰ ՏՃԿ Գրիգոր Հակոբյան, Ներսես Լամբրոնացի, Հայկ. ՍՍՀ ԳՊ հրատարակչություն, Երևան, 1971:

նր կրելու կարգի ու կարգապահության դեմ, զրանց կատարմամբ հաճախ միտածանակ ամենավտանգավոր ձևով ոտնձգվում էր բովանդակ երկրի պաշտպանության հանդեպ զինվորականների կողմ հանցագործություններ են:

Զինվորական դավաճանություն: Այս արբբրի Լուսիյան և պատմելիության հարցին Լամբրոնացու զինվորական օրենքն անպարզառում էր մի քանի անգամ: Այսպես, 7-րդ հոդվածը դավաճանություն էր համարում թշնամու կողմն անցնելը: Խիստ պատիժներով պատժվում էին ոչ միայն դավաճան զինվորականները, այլև կատարված հանցագործության մասին իմացող ու չհայտնողները: «Եթէ յուրեր վրա հաստատի թէ թշնամին կամի յուելու. անարգ նախատանաբ պատուհասի, ոչ միայն ինքն այլ և որբ գիտացին զնոյն գործն», ասված էր այդ հոդվածում:

Ըստ Լուսիյան դավաճանություն էր դիտվում թագավորի նկատմամբ ոտնձգելը: Նման հանցագործության մեջ մեղավորները դատապարտվում էին մահապատժի, և նրանց հիշատակը անարգվում, նշավակվում էր: Հարցը հենց այսպես էլ լուծվում էր 21-րդ հոդվածում: «Որ որ մեղիք առ թագաւորն, մեռանիցի նշաւակելալ և յիշատակ նորա անարգանք մնասցէ մինչև իսպառ», ասված էր հոդվածում:

Դավաճանություն էր համարվում թշնամիների հետ զաղխելի մեջ մտնելը և իշխանությունը արավելու նպատակով դավաճարության կազմակերպումը: Դավաճանության տակ հասկացվում էր այն դավաճարությունը, որի զեպրում զինվորականը պատժվում էր կամ մահապատժով, կամ երկրի սահմաններից ամիշու վտարումով: 22-րդ և 24-րդ հոդվածները մասնանշում էին. «Եթև որ խորհի շարխիւն ընդ բարբարոս, կամ զնէ ուխտ ընդ նոսա, ի գլխաւորէն պատուհասի»: «Որ անպատշաճոյ սկիբրն լինի և զտողովորցն ամբոխէ վասն իւր իշխանութիւն յափշտակելոյ, կամ զզուխն հատանեն, և կամ ի գաւառէն տարագրեն»: 53-րդ հոդվածը որոշ առումով կրկնելով վերևում բերված 7-րդ և 22-րդ հոդվածների բովանդակությունը, մի ավելորդ անգամ ազդարարում էր, թե թշնամու հետ միանալու և բնդհանրապես հակառակորդի կողմն անցնելու զեպրում մեղավորները պետք է անողորբար հետապնդվեն ու անպայման պատժվեն հենց մահապատժով: «Որ խորհի զանձն իւր խառնել ընդ բարբարոսս, թէ յաշտիս գլխաւորէն պատուհասի. և եթէ ի թագաւորին կողմանէ ի հակառակն անցանէ, առանց պատճախի սպանանեն զնալ»:

Ինչպես տեսնում ենք, դավաճան զինվորականների նկատմամբ

կիկիական օրենքը անխնա էր և այդ խտտությունը, պատմական ասպակետով հարցին նայելով, միանգամայն արգարացի էր, բանի որ խտտը վերաբերում էր հայկական փոքրիկ պետության ինքնուրույն բազաբնական գոյության կամ շրջալսական հարցին:

Չինվորական ծառայությունից խուսափելը: Այս հանցագործության զրևերման տարբեր ձևերը նախատեսվում էին օրենքի 5-րդ, 12-րդ, 19-րդ, 23-րդ, 44-րդ և այլ հոդվածներում: 5-րդ հոդվածի համաձայն խաղաղ պայմաններում զինվորական ծառայությունից հրաժարվելը պատժվում էր անարգական, այսինքն նշավանվող պատիժներով: «Որ որ իշխել հրամարել զինուորութենէ մինչև ի զբլուխ ամեն որ սահմանած է. և ի զինուորական կարգէն ելանէ, որպէս զանարգ նախատի առանց ողորմութեանս, ասված էր այդ հոդվածում:

12-րդ հոդվածի համաձայն պատժվում էր նա, ով պատերազմ սկսվելու ղեկգրում հրաժարվում կամ խուսափում էր զինվորական ծառայության ներգրանջում: Եթէ չներկայանալը տեղի էր ունենում հարգելի պատճառով, պատիժը բացառվում էր, այսինքն չներկայացողը չէր պատժվում: Հոդվածի տեքստը պարզ չէ, հավանաբար ազդվածով, բայց իմաստը լիովին հասկանալի է. «Ե՛մ ժամանակի արքունական հարկին որ յազազ պատերազմին, հրամայեմք առանց ամենայն պատճառի զինուորացն ի սահմանեալ տեղին հասանել: Բայց թէ երևելի շրտիք պատճառի նոցա, կոմսին ցուցանեն զգիտմանը, և ինքն հրամանան մնա: Իսկ որք փախտական լինին և մնան ի գասէ իրենաց, ի գասէն զմինն սուզանի ինչչնցն: Իսկ որք ի կարգն իրենաց նետահարք լինին և մնան ի գասէն իրենան, և կամ հարուածս ի թշնամեացն ստնուն և խուսափեն ի գասեն, ազատ են յայն տուգնացո: Այսպես էր փախտականներին, այսինքն զինվորական ծառայությունը ինքնազույն կերպով թողնող անձանց պատժելիության հարցը լուծվում 12-րդ հոդվածում:

19-րդ հոդվածը նախատեսում էր՝ պատերազմի ժամանակ իրեն մարտնական մեղավոր պատճառելով, զինվորական ծառայությունից խուսափելու ղեկգրը: Մեղավորներին սեփական մասնազորությանը պատժում էր զորահրամանատարը կամ, ինչպես ասվում էր հոդվածում, զխաղաղը: «Եթէ որ ի յաէ մարտին ցուս մարմնոյ անձն իր ստնուն, զխուսուր պատժէ», բառացի կերպով ասված էր այդ հոդվածում, իսկ 23-րդ հոդվածը նախանշում էր նույն արարքի հասարակ տեսակը: Վերջինիս համաձայն, երբ զինվորը պարզապես թողնում էր զինվորական ծառայությունը և փախչում էր, նա պատժվում էր կամ մարմնական պատժով, կամ

զինվորական կոչումից զրկվելով: «Չինուոր և թէ զինուորութին թողու և փախչեալ կամ հարկանեն զնա կամ որպէս խորշնաց ի գինուորութենէն հանեն», ասված էր այնտեղ:

Օրենքի խտտությունը պատժվում էր նաև այն մարդը, որը պատերազմի ժամանակ միջամտում և զրանով իսկ արգելում էր սեփական որդուն զինվորության վերցնելու գործը: Այդպիսի հայրը դատապարտվում էր արտոյի և նրա ամբողջ զույրը բռնագրավվում էր հօգուտ պետական գանձարկի: «Եթէ որ զիբ որդին ի ժամանակ նակատուն խնայէ զինուորել ի պատերազմ, արտորացի և յնիշից իրոյ զրեալ խաշտապակեացի, նա թէ և որ զորդին իր յօր պատերազմի նախատ է կամ անյաշող առ ի զինուորութեան, արտորացի, նշված էր 33-րդ հոդվածում:

Հետաքրքիր էր 44-րդ հոդվածը, որով դատապարտվում էր զինվորականի կողմից պատերազմի ժամանակ զրևերված ծուլությունն ու մեղավորությունը, այլ կերպ ասած, դատապարտվում էր զինվորական անհոգությունն ու անփութությունը: Պատժամիջոցի ու պատժաչափի հարցը լուծելիս, այստեղ բացառապես հաշվի էր առնվում օրինականացի զրևերած մեղքի շարի, հենց այդպես էլ ասված էր օրենքում՝ պատժի ըստ մեղացն: Ի թիվս այլ ներառվող պատիժների, օրենքը մատնացուց էր անում պատմագրկումն ու հանցագործին զինվորական ստորին աստիճանի փոխադրելը: «Եթէ ումանց գտանին սկնտութիւն ի հեղձութիւն ի ժամ պատերազմին կամ հարկանեն զնտա կամ պատճառս պարտաւորեն ցտ շափոյ մեղացն: Եւ թէ կամա իրենաց զոգանան զգէմս կորուսանեն, զպարտիվ զինուորութեան և իրքն զամենապիղծս ի վերջին զինուորացն աստիճանս գանչափսի գարձուցեն», ա՛հ թէ ինչպես էր հարցը լուծվում վերառում հիշատակված ազդեցություն:

Մտառազուտ քողնելը: Մի շարք հոդվածներում օրենքը նախատեսում էր ինքնազույն կերպով մարտազուշտը թողնելու հանցակազմը: Մենք նկատի ունենք օրենքի 11-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 37-րդ և 49-րդ հոդվածները: 11-րդ հոդվածում ասվում էր, որ կերպով զինվորական նակատամարտի պահին լքելով զորամասը, փախչում է կամ ինքնազույն կերպով փոխում է իր տեղը, կամ առանց հրամանի հետապնդում է թշնամուտ և այլ նման գործողություններ է կատարում, նա դատապարտվում է մահապատժի և նրա ամբողջ զույրը բռնագրավվում ու տրվում է նակատի հրամանատարին՝ ի սեփականություն: Հոդվածը պատժում էր ոչ միայն արարքը կատարողներին, այլև նրանց բոլոր համախոհներին, այսինքն հանցակիցներին ընդհանրապես. «Եթէ որ ի զինուորաց ի ժամանա-

կի մարտի ճակատան յորում է՛նա ընդ միմեանն խառնելն թողուց զիր կարգն և փախստական լինել, կամ թէ վազել ի տեղողէն յարումն կայր, կամ թէ զՆեմտանս էլ թշնամոնը, աչազէն հրամայեմք. զի զգլուխն շահախեցել և դամնեայն ստացուածն իւր սացնն ի նախազգութիւն ճակատուն. զի զիր գունդն շփոթեաց. նաև զիր համախառն ընդ նմին պատճնեցնն»: Այսպես անողոր էր Կիլիկիան ճաչասանի զինվորական քրեական օրենքը մարտադաշտն ինքնազուխ կերպով թողնողներն նկատմամբ:

Այդ անողորութիւնը մենք տեսնում ենք օրենքի նաև այլ հոդվածներում: Այսպես, 13-րդ հոդվածում ազդարարվում էր, որ նրք զինվորականը մարտադաշտը լքում է առանց վիրավորված լինելու կամ մեկ այլ անհարգելի պատճառով, նա կլաւանվորվում է անողոր ժամանակով: Ա՛նա այդ հոդվածի կոտեճքատը. «Եթէ ոք փախել ի թշնամեացն առանց խոցումածոց կամ այլ պատճառի, հրամայեմք ի բանտ արկանել զնայ մինչ իմաստնասցի կամ արգելանքն կացցէ և քննեսցի»: Օրենքի 14-րդ հոդվածի համաձայն, մարտի դաշտում վիրավորւած զինվորականն իրավունք ունի այնտեղից անպատիժ կերպով հեռանալ: «Իսկ որ հարուածով խոցվի աղառ է յաչես պատուհասէ, քանզի ունի վկայութիւն արիութեան ի մարմինն», ասվում էր 14-րդ հոդվածում:

Օրենքը հեծյալ զորամասերի զինվորականներին պատժի սպանալիքով պարտավորեցնում էր չլքել զորամասը անգամ մարտերում պարտութիւն կրելու զնպգում: Օրինականների նկատմամբ կիրառվում էին անողոր մարմնական պատիժներ, որպէսզի ուրիշներ այդ տեսնելով խրատվին ու սաստվին: 15-րդ հոդվածում այդ ասովի՛մ ասված էր հետևյալը. «Եթէ դաս զարացն ի ժամ ճակատուն չազժահարի, ոչ լինի զունդ հեծնուցն փախստական, այլ խորհին առ իրեարս և իմանան զպատշաճն կամ մնալի տեղողն կամ յայլ տեղող փոխել, որ ոք ի ժամուն յաւնիլի երթիցէ այլ կողմ արտաքոյ իւրոյ զեղին և դասուն, հրամայեմք հարկանել զնա մինչև ալլոց հանճար ուցի»: Այս հոդվածի քովանդակութիւնը, ինչպես տեսնում ենք, սերտորեն անընդուն է օրենքի վերահիշյալ 13-րդ հոդվածի քովանդակութիւնը և հանդիսանում է դրա յուրահատուկ մեկնութիւնն ու կոնկրետացումը: Մարտի դաշտն ինքնազուխ կերպով լքելը համարվում է ծանրագույն զինվորական հանցագործութիւն և պատժվում է օրենքով: Ա՛նա զինվորական օրենքի 13-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածների հիմնական սկզբունքը:

Պատերազմի ժամանակ մարտադաշտը ինքնազուխ կերպով թողնելու առանձին հանցագործներ նախատեսված էին ուսումնա-

սիրվող զինվորական օրենքի նաև 37-րդ և 49-րդ հոդվածներում: 37-րդ հոդվածը պատժելի էր հայտարարում այն առաջամարտիկի արարքը, որը հարվածելով թշնամուն այնուհետև նա էր փախում, իսկ 49-րդ հոդվածը պատժում էր նրան, ով մարտի պահին լքելով իր հրամանատարներին՝ հեռանում էր մարտադաշտից: Երկու զեպւշում էլ պատժելու իրավունքը վերապահված էր զորամասի հրամանատարին: Ա՛նա այդ հոդվածների բնագրերը. «Ի յառաջամարտիցն ի ճակատն եթէ ոք հարու զթշնամին և ապա իւրն փախել սկնարև զինուորակցացն, ի զխաւորէն պատժի» (հոդ. 37-րդ): «Որ զիր ետարխաւան կամ զդինուորակցացն թողու յօր մարտին և ոչ լինի նցիցն ազնական, ի զխաւորէն պատժի» (հոդ. 49-րդ):

Այսպես էին պատժում մարտադաշտն ինքնազուխ կերպով թողնելու զեպքերը բոտ Կիլիկիայի հայկական պետութիւնն զինվորական օրենսդրութիւն:

Ճակատամարտից խուսափելը: Այս հանցագործութիւնը թեև ուղղակիորեն անընդուն էր մարտադաշտը թողնելու հանցակազմի հետ, բայց օրենքը դրա պատժելիութիւնն հարցին նվիրել էր նրեք ինքնուրույն հոդվածներ՝ 18-րդ, 25-րդ և 43-րդ հոդվածները: 18-րդ հոդվածում նշվում էր, թե երբ զինվորներից մեկն ու մեկը ճակատամարտից խուսափում կամ թողնում է հեծյալների շարքը, կամ մարտից առաջ փախստական է լինում, նա ենթակա է խստաբույն պատժի, այլ կերպ ասած մահապատժի: Միայն ներման զեպքում պատժը մեղմանում էր. մեղավորը զատապարտվում էր մարմնական պատիժների և հեռացվում էր զինվորութիւնից: «Եթէ ոք ի զինուորեսլ մարդկացնն ի դաս ճակատուն փախի կամ ի հեծնուցն ի դասն պակասի կամ յառաջի պատերազմէն փախստական լինի սկնարև զինուորակցացն, առաջի զխաւորէն պատժի մեծ պատուհասի. իսկ եթէ բոտ մարդասիրութեան բարեբախտեսցի, շարշարեն զնա և արտաքոյ ձգեն ի զինուորութեանն», ասված էր 18-րդ հոդվածում:

Այլևի զածան էր 25-րդ հոդվածը, որով ճակատամարտից խուսափող, այսինքն փախչող և առն վերադարձող զինվորականը զատապարտվում էր մահապատժի: Մահապատժի իրականացման ձևերն էին հանցագործին զազանների հոշորտման հանձնելը և կախազանը: «Որ ի մարտէն փախստական լինի և դառնայ ի առն իւր կամ զազանաց զկերակուր տան զնա կամ զփայտէ կախեսցի», բառացի կերպով ասված էր այդ հոդվածում:

Մարտից խուսափելու մի առանձին հանցակազմ նախատեսված էր օրենքի 43-րդ հոդվածում, բոտ որի կովի նախօրէին իր

կարգը խախտող, այսինքն՝ ճակատամարտից խուսափելու նկատառումներով որոշ վարքագծով դրսևորող զինվորականը պատժվում էր մտաբանական պատժով կամ նրա սեփական զենքի զբաղմամբ: Մարմնական պատժի իրականացման ձևը այս դեպքում խառանհարումն էր, այն էլ կաշվե հասուկի դրոսիներով մտրակահարումը: Ահա մեկ ինչ էր ասում հողվածի կոնսեքտոր. «Որ զկարգաւ իւրով յաւուր մարտի զանց անէլ, մահկնով ծնծեն զնայ կամ զգէնն իւր հաննն ի նմանէն»:

Վերոշարադրային պարզ կերպով երևում է, որ Կիլիկյան Հայաստանում ճակատամարտից խուսափելը հենց օրենքի ուժով համարվում էր ամենաձանր զինվորական հանցագործություններից մեկը:

Հրամանի շկատարումը: Բոլոր ժամանակներում և բոլոր պետություններում զինվորական ծառայության մեջ վերագրա զինվորականի կողմից տրված հրամանը կամ մարզադրությունը պարտադիր են եղել ստորագրա զինվորականների համար: Դրա շկատարման զեպրում ստորագրա զինվորականները ենթարկվել են խիստ պատիժների: Այդպես էր հարցը լուծվում նաև Կիլիկյան Հայաստանի զինվորական օրենքի կողմից, որի 17-րդ հողվածի համաձայն, երբ պատերազմի պահին ստորադրյալ զինվորականը չէր կատարում իր դորպակտի հրամանը կամ ի խախտումն տրված կարգադրության ու հրամանի այլ բան էր կատարում, նա որպես հանցագործ նույն պետի կողմից պատժվում էր: Հանցակազմի համար նշանակություն չունեցր այն, թե հրամանի շկատարմամբ օգտակար թե՛ զնանակար արդյունք էր ստացվում. «եթէ որ ի պատերազմի արև արտաբոյ այնմ ինչ գործէ զոր ի զուրպակտէն առ հրաման կամ թէ զիր սասցաւ ոչ կատարել, ի զխաւորէն պատուհաս կրեցէ, թէև բարուր գործն վճարեաց»: Թե ինչպիսի պատիժներով էր պատժվում հրամանը կամ կարգադրությունը շկատարող զինվորականը, այդ մասին օրենքը որոշակի ցուցում չի պարունակում, բայց նույն այդ զինվորական օրենքի մի շարք հողվածներից մեզ հայտնի է, որ այս հարցում պատժելու իրավունք ունեցող վերագրա զինվորականի իրավունքները սահմանափակված չէին և մեղավորների նկատմամբ նա կարող էր ցանկացած պատիժը կիրառել՝ սկսած զինվորական կոչումից զրկելուց մինչև մարմնական պատիժներն ու մահապատիժը:

Աճճնազանդարյուն: Հրամանի շկատարման հանցակազմին անմիջականորեն առնչվում էր անհնազանդություն հանցակազմը: Անհնազանդությունը գրանդրվում էր տրված հրամանին բացահայտ

կերպով շնծարկվելու, հրամանատարներին պարզապես լլնելու ձևով:

Օրենքն այդ ուղղությամբ կատարվող հանցագործությունների պատժելիության հարցը կարգավորում էր երեք հողվածներով, 2-րդ հողվածի արձանայն անհնազանդության մեջ մեղադրվող զինվորականներին պատժում էին նրանց անմիջական հրամանատարները՝ հնգապետները, տասնապետները, հարյուրապետները և այլն: Իսկ եթե վերջիններս էին բնդդիմադրում նախազուրիս հրամանատարի հրամաններին, նրանք ենթարկվում էին ամենախիստ պատիժների: «Զինուոր հնգապետ զիր հնազանդեալան եթէ ոչ ունկնդիր լինի իմաստացոյցանէ սաստիվ. այսպէս և տասնապետն պատժէ զիրսն, պատժուի և տասնապետն եթէ շնհանդնի հարիւրապետին: Եվ եթէ որ ի սոցանէ ընդ զեմ դառանչ նախազուրիս իշխանին, այսինքն կոմսին կամ տրիրունին, անարդ պատուհասի խրատուի», ասված էր այդ հողվածում: Այսպիսով, զխախտող հրամանատարին շնծարկվելու պատժվում էր ամենաձանր անարգական պատիժներով, նույնիսկ մահապատժով:

34-րդ հողվածը խոսում էր զինվորականի կողմից ինքնազուրիս կերպով գործելու, որպես առանձին հանցակազմ պարունակող աբարքի մասին: Պետք է ենթադրել, որ այս աբարքը նույնպես անհնազանդության գրեհորման գրեհորման շկատարման ժամանակ ինքնազուրիս կերպով գործել նշանակում էր անհնազանդ գտնվել, նշանակում էր արճամարհել տրված կարգադրություններն ու հրամանները: Ինքնազուրիս կերպով գործել նույնպես պատժվում էր դորպակտի հայցեղությանը: Մեղավորների նկատմամբ կիրառվում էին ցանկացած քրեական պատիժներ. «եթէ որ ի զինուորաց ձևն արեցէ ինքնահաճութեամբ չիր ինչ, ի զխաւորէն պատուիս: Ահա թէ ինչպես էր պատժվում զինվորականի կամայական և ինքնազուրիս գործունեությունը, այսինքն անհնազանդությունը, քստ վերոհիշյալ 34-րդ հողվածի:

Ի սարբերություն 2-րդ և 34-րդ հողվածների, զինվորական օրենքն իր 38-րդ հողվածում նախատեսում էր, եթե կարելի է այսպես անվանել, բացահայտ անհնազանդություն հանցակազմը: Սա մեկից ավելի զինվորականների կողմից ներքին զավադությանը նախապատրաստվող անհնազանդությունն էր, որը պատժվում էր ծանբազոյն պատիժներով՝ ի սաստ ու ի սարսափ ուրիշներին: Հողվածում սսվում էր. «եթէ որ զինուոր քաղտ խորհուրդ անէլ ընդ զինուորակիցան և ոչ զգացուցանէ զնոյնն նախընթաց վերագրա

զանք, այլ պատուէր տայ յինքնէ՛ ճակատաւելոց զոր որ նորա գիտան, ի գլխաւորէն պատժի ծանրագոյնն ի խրատ ալլոցն»։ Կասկածից զորս է, որ այստեղ էլ «ի գլխաւորէն պատժի ծանրագոյնն» արտահայտութիւնն ասում է, որ օրենքը բարձրաստիճան գինեղորականներին իրավունք էր տալիս հանդես գալ ու գործել որպէս դատավոր (դատարան) և օրինապահներին նկատմամբ կիրառել ցանկացած պատիժները, ընդհուպ մինչև մահապատիժը՝ իր որակյալ ձևերով։

Ռազմական գաղտնիքի ճրագրակիրը։ Օրենքի 54-րդ հոդգովում ազգայնացրվում էր, թէ պետութիւնն զինվորականներէից բաղաբախ պահակ հանդիսացող այն զինվորականը, ով՛ հակառակորդին պատժում է բաղաբախ գաղտնիքները, այլ կերպ ասած՝ ռազմական գաղտնիք հանդիսացող տեղեկութիւններ է հրատարակում, պատժվում է։ Պատժվում է նաև նա, ով՛ խտրվում է մարդկանց անզորութիւնն ու հանգիստը։ «Ով ի թրանք քաղաքին ի քաղաքի գինեղորակացն և պատմեն հակառակամարտիցն զազանի խորհուրդն, ի գլխաւորէն պատժին նույնպէս և որ պետազորութիւնն ամբոխէ»։ Մեկ այլ հոդգովում (3-րդ հոդգով) պատժի սպանախիթով պարտավորեցնում էր շարքային զինվորին որպէս զազանիք պահել տասնապետի, այսինքն՝ հրամանատարի հրամանը։ Երբ սա խախտում էր իր պարտականութիւնը՝ խտութիւնը պատժվում էր։ Հրամանի դիտավորութիւնը կատարված խախտումը համարվում էր՝ զավանջութիւն, անզորուցիւնը խախտելիս պատժվում էր նրա վերահացուն պետը այն պատճառարանութիւնով, որ ժամանակին նրան չէր նախազուշացրել, թէ չի կարելի ռազմական բնույթի գաղտնիք պարտանակող տեղեկութիւններն հրատարակել։ Ահա և այդ հոդգովի կոնկրետը։ «Որ լսէ բան գտասնապետին և ոչ թաղուցանէ, խրատի. ապա կ'ստիտութենէլ սաէ, իր վերահացուն պատուհասի վասն այնը, զի ոչ զզուշացուց զնա ի շտանն»։ Հեշտութիւնը կարելի է նկատել, որ օրենքի 54-րդ և 3-րդ հոդգովներում նախատեսված հանցագործութիւնները որոշակի իմաստով առնվում են զինվորական զավանջանութիւնը հանցակազմը սովող այն արարքների, օրինակ, թշնամու կողմն անցնելու, հակապետական զավագրութիւնն և այլնի հետ, որոնց մասին խոսվեց վերևում։

Դավաճանութիւնը հանցակազմը սովող ալը նույն արարքների հետ առնվում էին նաև ներքոհիշյալ հանցագործութիւնները։

Բարբառուների հետ ճարտրաբարձու ունենալը։ Արարքը նախատեսված էր օրենքի 51-րդ հոդգովում, ըստ որի նա, ով՛ միանում էր բարբառուներին, մասնավորապէս նրանց մոտ էր գնում զինքն և այլ

այսպիսիներն վաճառելու կամ զնելու, պատժվում էր խտագոյն պատիժներով, ընդհուպ մինչև մահապատժով։ «Որ առ բարբառուս միաբանի ի տար և առութի, — սպա՛մ էր այլ հողիվածում, — կամ ի պատճառն ազաշանաց զնայ ու նոցա և զէնս իր վաճառել կամ կատարել կամ անկատար կամ զին և իցել, յերկաթոյ, մինչև ի վախճան պատուհաս կրեցել»։ Բարբառուներն ասելով կիրիկյան հայերը հասկանում էին իրենց պետութիւնը թշնամիներին առհասարակ, լինելին զրանք արարքներ, մոնղոլներ, թաթարներ, թէ թուրքեր, միևնույնն էր։

Ամբոց կամ Բաղախ հանձնելը։ Խոսքը գնում էր ոչ թէ ամբոցը կամ քաղաքը թշնամուս ճանձնելու մասին. այլ այն դեպքերի մասին, երբ զինվորականը բուրբուսի այլ նկատառումներով, օրինակ, հետագայում պատասխանատուութիւն չենթարկվելու կամ իր անձնական հանգիստն ապահովելու նպատակով, զրանք հանձնում կամ թողնում էր մեկ ուրիշ և մեր կարծիքով յուրայինի պատասխանատուութիւնը։ Այս արարքը, որը նախատեսված էր 3-րդ հոդգովում, նույնպէս պատժվում էր խտագոյն պատժով՝ մահապատժով, որի իրականացման ձևն այս անգամ արդեն գլխատուցիւնն էր։ Ահա և այդ հոդգովի տեքստը։ «Յոր որ յանձն առնեն զերկր կամ զքաղաք և նա տայ այլ որ, թէ չէր կատար պահել, և արար գտայն առանց կամաց իւրոյ իշխանին հրամանաց կամ առանց նեղութեան վասն իւր հանգստեան, գլխահատութեամբ իրաւամբք դատապարտեցի»։

Մեծ և բռնութիւնը։ Կիրիկյան հայկական պետութիւնը զինվորական օրենսդրութիւնն մի շարք հոդգովներ նախատեսում էին զինվորականների՝ միմիայնց նկատմամբ գործադրված բռնութիւնն կամ ծեծի դեպքերը։ Այդ հուշարձանի հենց 1-ին հոդգովը ազգայնացրում էր, որ և թէ որեւ զինվորական հրամակում էր իր իշխանի վրայ, անկասկածաբան մասնաւոր շարժառիթներից, նա պետք է մեկ այլ մեծապատիւ իշխանի գլխավորութիւնը դատով ու դատապարտով։ Պատճառականն ու զուգի բնարթութիւնը, ըստ նրաութիւնի, թողնվում էր զինվորի, այսինքն բարձրաստիճան զինվորականի, հարավոր է նույնիսկ դատակորի կամ իշխանի հայեցողութիւնը։ Հողգովի ուժով պատժվում էր ոչ միայն կատարողն՝ ինքը, այլև պատժվում էին նրա բուրբանցակիցները կամ, ինչպէս օրենքի տեքստում սպա՛մ էր, նրա պատասխանատուները և բարբառուները։ «Զինուոր որ, թէ համարձակի վասն իւրոյ իշխանին, զինչ և զինչ պատճառաւ, առաջի այլ մեծապատիւ իշխանի դատաստանի բռնել, գլխատարն պատուհասել որպէս և կամի. ու զուրին անմատութեամբ. ընցմին և զորս եղին նորին դատարանի»։

սակիցը և լորդորիքը ի շար խորհուրդս», բառացի կերպով սովորած էր Հոգովածում:

39-րդ Հոգովածի համաձայն, եթե ծառայություն մեջ գտնվող զինվորականն իր զինվորակիցն, հավանաբար հրամանատարին օրհասարում էր, նա դատապարտվում էր մահապատժի: «Եթե հրամայող զինուոր զիջ զինուորակիցն սրով հարկանել, պիտանեացր», ազդարարում էր Հոգովածը: 35-րդ Հոգովածի ուժով իր ընկերուրը ծեծող կամ զանախոճող զինվորակա՞ր հնաացվում էր զինվորությունից, իսկ սրով վիրավորողը հրամանատարի կողմից ենթարկվում էր ծանրագույն պատիժների, այդ թվում, հասկանալի է, մահապատժի: «Եթե որ զգինուորակիցն իր հարկանել և գանել, քննեացի: Եթե էշմարտի, ի բաց կացցէ ի զինուորական կարգէն, ապա թէ սրով է գանն, զլիսուորն պատժէ ծանրագույնս, մատենանշվում էր 35-րդ Հոգովածում:

Հատուկ հետաքրքրություն էին ներկայացնում 48-րդ և 50-րդ Հոգովածները: Գրանցից առաջինի համաձայն, երբ շարքային զինվորներից մեկը զինազրկվում էր իշխանին, այլ կերպ ստած հրամանատարին՝ ձեռնելու նկատառումներով ձեռք էր բարձրացնում նրա վրա, դրա համար նա զանախոճվում և հետացվում էր զինվորությունից, իսկ երբ բրով կամ մեկ այլ բանով հարվածում էր, այդ զնգրում պետք կարող էր նրան ենթարկել սպիկի անողոր պատիժներին, նույնիսկ մահապատժի: «Եթե որ ի զինուորացն հակառակի իշխանին իբրոյ և ձգէ զձեռն առ ի հարկանալ իշխանս, թէ և իբր միայն է առ ի ձեռն, վասն այսր իրի հաննն ի նմանէ զգինուորութիւն: ապա թէ բեկանել աչողի ի ձեռն ի նա զձեռն բրովն, ի զլիսուորեն ծանր պատուհասի», բառացի կերպով սոված էր Հոգովածում:

Մյուս Հոգովածում՝ 50-րդ Հոգովածում, այն միտքն էր գործացվում, թե երբ զինվորականը սեփական ձեռքի անվերսպությունը փորձելու համար քարով խփում է իր զինվոր ընկերուրը կամ երբ տանջահարում, սպանելու նկատառումներով ոտնձգում է նրա զեմ, դրա համար նա հետացվում է զինվորությունից և խտուրխյամբ պատժվում է: Ահա Հոգովածի կոնկրետացը: «Որ քարով է՛հար զզինուորակիցն բառ կամաց և լաջողութան ձեռնի և կամ վասն շարջառանաց և կամ վասն մահու գայս զորժեաց, հարկանեն զեա և ի զինուորութենէն ի բաց կացուցանեն»: Ահա այսպես էին հետապնդվում ու պատժվում զինվորականների կողմից միմյանց նկատմամբ դործարված բռնություններն ու ծեծի զեպրերն բառ ուսումնասիրվող զինվորական օրենքի:

Չենք զողանալը: Հին աշխարհի ստրկատիրական պետություն-

ներում և բովանդակ միջնադարում զինվորից կատարվող զենքի դորությունը համարվում էր ծանրագույն հանցագործություն: Զենքից զրկված զինվորականը այլևս ի վիճակի չէր նոր զենք ձեռք բերել, ա՛վելին, նա զորքի համար մի տեսակ ավելորդ բեռ էր դառնում: Բացի այդ, զենքի զողությունը նախապայմաններ էին ստեղծվում, որ սրվալ պետություն կամ նվաճողի նկատմամբ թշնամաբար սրամազրկված մարդկանց խմբերը, այդ թվում թշնամու զորքերը իրենց ձեռք զենք սցեն և այլն: Եսա երկրներում միակ պատիժը, որ կիրառվում էր այդ արարքի զեպտում մահապատժին էր, որոշ երկրներում կիրառվում էին համեմատաբար թեթև պատիժներ:

Կիլիկյան Հայաստանում զինազրկության պատժելիության հարցը կարգավորված էր զինվորական օրենքի 27-րդ Հոգովածում, որի համաձայն, երբ որևէ զինվոր զողանում էր մեկ ուրիշ զինվորականի զենքը, նա անարգվում ու աստիճանազրկվելով հետացվում էր զինվորական ծառայությունից: «Զինուոր էթէ զողացցի զզենս այլուց», — ասված էր այդ Հոգովածում, — յաստիճանէ զինուորութենէ ի բաց կացուցեն»:

